

ԼՈՅՍ ՚Ի ԼՈՒՍՈՅ «Բ»



ԶԱՐԹՕՆԷ

ԼՈՅՍ Ի ԼՈՒՄՈՅ «Բ»

ԶԱՐԹՕՆԷ

ՎԱՀԷ ՍՎԱՃԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ

ՄԺԵ

2015

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivacyan

sivacyan@sympatico.ca

**Ազատ ղզացէք ձեր շրջանակին ղրկել, բազմացնել,
տպել ու բաժնել ձրիաբար:**

**Գրութիւնը որեւէ փոփոխութեան ենթարկել կամ
տպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիլուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

UNIT 6 - 366 BLOOR ST. EAST | TORONTO ON M4W1H4

TEL: 416 792 9394 • FAX: 416 733 9001 | WWW.THERELIABLEPRINTER.COM

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9^{AM} - 5^{PM}



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս նաեւ երախտագիտութեան զգացումները կը յայտնեմ, այս աշխատանքի պատրաստութեան ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով եւ թելադրութիւններով գործս դիւրացնող մի քանի բարեկամներու:

Աղօթարար եմ որ Աստուած իրենց պարգեւէ առողջութիւն եւ արեւշատութիւն:

*

Շնորհակալութիւն կը յայտնեմ՝ նաեւ բոլոր անոնց, որոնք գիրքիս մէջ գործածուած լրատվարները հայթայթած են:

Աղօթարար եմ,

որ Աստուծոյ օրհնութիւնները անոնցմէ անպակաս ըլլայ:



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

*Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
նաեւ եկեղեցական ժամերգովքիւններէ
մէջբերումները առնուած են
հետեւեալ աղբիւրներէ.*

ԱՍՏՈՒՎՈՒՄ ԵՎ ՄԱՏԵՄՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ

ԸՍՏ

**ՃՇԿԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՊՅԵՆԱՅ ՄԵՐՈՅ Ի ՀԵՎԵՆԿԱՎԱՆ
ՀԱՄԱՏԱՐՄԱՌՅՆ ԲԱԳՐԷ Ի ՀԱՅԿԱՎԱՆ ԲԱՐՔԱՌ
1805 Ի ՎԵՆԷՏԻԿ ՈՒՄԾԻ
Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ**



ՀԱՄԱՅՆՑԱՅԻՆ ԱՍՏՈՒՎՈՒՄ ԵՎ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ



ԱՂՕԹԱՄԱՏԵՄՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆԷՐ

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆԷՐ

ՇԱՐԱԿԱՆԷՐ

ԱՂՕԹԷ

ՏԱՂԷՐ

ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱՊԿԱՇԵՄՆ

Կ. ՊՈԼԻՍ

1929



ՉՐՈՅՑ ԳՐԻՉԻՍ ՀԵՏ

Գրի՛չ խանդավառ,
Որո՞ւ համար
Կը գրես անծայր՝
Էջեր հազար:

**Ժագ Ս.
Յակոբեան**

Գրի՛չ իմ յիմար,
Որո՞ւ համար
Կը տրոփես յար
Երգերո՞վ վառ:

Ո՞վ կը կարծես
Կ'ունկնդրէ քեզ՝
Սիրողի՛ պէս:

Մի՛ խաբեր գիս,
Մե՛ղք է սիրտիս.
Լսող չունի՛ս,

Ափսո՛ս, հոգի՛ս...



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ԷՋ
- 3- Հորհակալութին
- 4- Ծանօթութին
- 6- Բովանդակութին
- 9- Կենսագրական
- 10- Ծնողացս
- 12- Ձօն Արտային եւ յիշատակ
- 16- Նախաբան
- 19- - Յառաջաբան
- 28- - Ի՞նչ
- 31- Ա - Կրօնքը եւ Գիտութիւնը
- 80- - Մարդկային Բնութիւնը
- 90- - Առաւօտ Լուսոյ - Ոտանաւոր
- 91- Բ - Եօթը
- 95- - Ֆիզիքական Աշխարհը
- 100- - Զօրութեան Կեդրոններ
- 105- - Հայաստանեայց Եկեղեցի
- 106- - Մաշայու մեղքերը
- 108- - Եկեղեցւոյ Խորհուրդները
- 133- - Սուրբ Հոգիի Հորհները
- 134- - Յայտնութեան Գիրքը
- 142- - Չաստուածներ եւ Դէւեր
- 151- - Ամիսփոս
- 158- - Կաթիլ մը արցունք - Ոտանաւոր
- 159- Գ - Հիանդութիւն եւ Մաշ
- 161- - Հիանդութիւն
- 177- - Հիանդը - Ոտանաւոր
- 179- - Մաշը
- 186- - Երազը - Ոտանաւոր
- 189- Դ - Մարդը
- 193- - եւ ստեղծագործութիւնը
- 197- - Աստուածայայտնութեան միջոց

- 204- - Էւ կրօնքը
 215- - Էւ գիտութիւնը
 222- - Էւ իր կենցաղը
 238- - Էւ ճակատագիրը
 239- - Էւ մեղքն ու արաշխարութիւնը
 249- - Յուշեր Դրախտի - Ոտանաւոր
 251- Ե - Եկեղեցա- Կրօնա- թէ Աստուածասիրութիւն
 253- - Եկեղեցասիրութիւն
 259- - Կրօնասիրութիւն
 277- - Աստուածասիրութիւն
 287- - Յաւերուածական
 292- - Առ ոտս Վարդապետին - Ոտանաւոր
 295- Չ - Սողոմոնեան յորբոր
 305- Է - Աղէտը
 320- - Նուիրեալը - Ոտանաւոր
 321- Ը - Ի՞նչ է փրկութիւնը
 343- - Ինչպէ՞ս ծառայել Աստուածայայտնութեան
 350- - Վերադարձը - Ոտանաւոր
 353- - Վերջաբան Է Խորհուրդաժողովներ
 360- - Տեսիլքը - Ոտանաւոր
 361- - Կրօնք թէ Չարթօնք
 380- - Ի Խորոյ Սրտի Խօսք Ընդ Ածոյ - Ոտա.
 383- Թ - Յաւերուածական
 385- - Կրօնքը
 387- - Ջրհանը
 391- - Գաւաթ մը Պաղ Կաթ
 393- - Պարտեզէն Անուած Դասը
 395- - Սեւ կէտը
 397- - Մայրս - Ոտանաւոր
 400- - Բամբասանք ու Մտածումներ
 403- - Մի տիրիւր
 405- - Ո՞վ է Քրիստոնեան
 408- - Բնական Օրէնքը
 413- - Աստուած Է Բնութիւն



ՄԱՐԴԸ

Մարդկության մեծամասնությունը.

-կը վախնայ սիրելուն սիրածը կորսնցնելու վախէն:

-կը վախնայ մտածելուն՝ անկէ ծնանելի պատասխանատուութիւններու վախէն:

-կը վախնայ խօսելուն՝ քննադատուելու վախէն:

-կը վախնայ ծերանալուն՝ անտեղեակ յառաջացած տարիքի արժէքէն:

-կը վախնայ մոռացութեան ենթարկուելէ յիշուելու արժանի բան մը թողած չըլլալէն:

-նաեւ կը վախնայ մահէն՝ ապրիլը չգիտնալէն:

Վիլեամ Շէքսպիր

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է սեղոյն Արամեան-Ո՛նճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն ժօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ընտանեօք գաղթած են Թորոնթօ-Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**ին վրայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա Հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն ժօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Գասախօսած է թէ՛ սեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ հրատարակած է՝ արդիւնք իր Հետազօտութիւններուն եւ **2007**ին ալ դասագիրք մը՝ սիրտը քններու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:



Գպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թագաւոր Եկեղեցոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ: Ուրար կրէրու իրաւունք ստացած է Սիժն Արքեպիսկոպոսէն **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնդ Գաղերինսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մըն ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննախնդիր բնութիւնը զինք մղած է Հետազօտութեան՝ ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գետնի վրայ:





ԾՆՈՂՔԻՍ

Ո՛հ մայրն իմ քնքուշիկ
 Շտեմարան մը սիրոյ,
 Էութիւն մը անուշիկ,
 Պատկերը Աստուծոյ:

Քու կարեկից ոգիով
 Անմահն զոհողութեամբ
 Ու խանդաղատանքով
 Մնուցիր Համբերութեամբ:

Սորվեցուցիր ինձ աղօթել
 Ու փառք Աստուծոյ ըսել
 Պատշաճ կենցաղ կերտել
 Ու Աստուած միշտ պաշտել:

Ո՛հ Հայրն իմ սիրալիր
 Վաճան մը ամրութեան:
 Քու ձայնովն քաղցրալիր
 Փարոս մը ուղղութեան:


Սորվեցուցիր օրինակով
 Պարկէշտ ըլլալ կենցաղով
 Եւ զարգանալ ուսումով
 Ու Աստուծոյ ծառայելով:

Հանգիստդ չխորհեցար
 Երբ այս ափերը գաղթեցիր,
 Դժուարութեան մատնուեցար
 Գիտեմ՝ թէ ինձ Համար ըրիր:

Ծնողքն իմ թանկագին,
 Աստուածային տաճարներ:
 Կը խոնարհիմ ձեր առջին,
 Պաշտուելու արժանիներ:

Վ.Ս.





1911-1985



1904-1994



ՄԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
 ԺԻՐԱՅԻ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
 ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
 ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
 ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ



«ԴՈՒՔ ԱՂԵՂՆ ԵՂԱՔ, ՈՐԻԿԷ ՁԵՐ ՉԱՄԿԱՆԵՐԸ ԻՐ ԼՊՈՒՊԻ ԱՆՏԵՐ
 ԴՈՒՐԱ ԱՐՁԱԿՈՒԷՅԱՆ:

ԱՂԵՂԱՒՈՐԸ ԱՆՀՈՒՆԻ ՃԱՄՐՈՒՆ ԻՐ ԹԻՐԱՆԸ ԿԸ ՏԵՍԱԷ ԵՒ ԱՂԵՂԸ
 ՉՕՐԱՒՈՐ ԿԵՐՊՈՎ ԿԸ ԴՐԿԷ, ՈՐՊԷՍԺ ԻՐ ԱՆՏԸ ԱՐԱԳ ԵՒ ՀԵՊՈՒՆ
 ԵՐԹԱՅ:

ԱՂԵՂԱՒՈՐԻ ՁԵՄՔԵՆ՝ ՁԵՐ ԴՐԿՈՒՄԸ ՈՐԱՆՈՒԹԵԱՄՔ ԵՂԱՒ
 ՈՐԵԱՆ ՈՐ ԱՆ ԱԼՁՅՈՂԻ ԱՆՏԸ ԿԸ ՍԻՐԷ, ՆՈՂՆԵԱՆ ԱՂ ՀԱՍՏԱՏ ԱՂԵՂԸ:»
 (յարաստուած - Խալիլ Ճիպարան-ի «Մարգարէն» գրքէն)



ԱՅՏԱԾԻԿԻՄ



Շտորհալի դիմագիծդ երկնային փայլ մը ոճներ,
Իսկ քաղցր ձայնդ երկնային անուշ նուագ մըն էր,
Բերանիդ ժպիտը ուրախութեան հրաւեր մըն էր,
Իսկ վարակիչ խնդուքդ ցաւերու դարման մըն էր:

Ներկայութիւնդ Հմայական վիճակ մը կը ստեղծեր,
Հետեւաբար քեզ չսիրել անկարելի կը թուեր,
Քու ներկայութիւնդ Աստուծոյ մեծ մէկ նուերն էր,
Կեանքի ընկերդ ըլլալ ինձի Համար պատիւ մըն էր:

Անընդհատ գուրգուրանքդ քու սիրոյդ փաստն էր,
Չանազան նիւթերու մասին Հետդ խօսակցութիւններ
Ու սորված Հոգեբանութիւնս ալ թանկագին նուեր,
Որ առօրեայ գործիս մէջ ալ ոճնեցաւ օգտակար դեր:

Գիտեմ՝ թէ դուն կեանքը ամէն բանէ շատ կը սիրէիր,
Ինչո՞ւ մեծ աճապարանքով այս աշխարհը թողուցիր,
Չէի՞ր գիտեր թէ դուն զիս մինակ պիտի ձգէիր,
Գիտեմ՝ թէ դիւրին չէր, դուն չուզելով է որ գացիր:

Որոշումը քուկդ չէր, երբ դուն Հոգիդ աւանդեցիր,
Աստուածային կանչն էր, որուն կը Հնազանդէիր,
Պէտք չէ մոռնանք թէ Հոգին մի մասնիկն է Իր,
Ան Աստուածային Լոյսը, որ մեզի չի պատկանիր:

Բայց երբ Տէր պապան ըսաւ «առեալ ձեռն Եւայի,
Տուեալ ձեռն Ադամա» եղանք մի մարմին, մի Հոգի,
Մաշը իմ կէսս ալ առաւ տարաւ, զիս բաժնեց երկուքի,
Բայց քու կէսդ ալ Հոս ձգեց, որ ինձի Հետ ապրի:

Վ.Ս.



1955-2010



ՄՈՂՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԿԸ ԶՈՒՆԱ
ՎԱՂԱՄԵՌԻԿ ԿՈՂԱԿԻՅԻՄ՝
ԱՅՏԱ ՄՎԱՃԵԱՆ-Ի
ԱՌԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ:



ԱՅՏԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արեւը կը ծագի կը ծնի, եւ մայրամուտին կը մեռնի: Աս կը թուի բացարձակ իրողութիւն մը ըլլալ, քանի որ Համայն մարդկութիւնը ամէն օր ականատես կ'ըլլայ թէ արեւածագին եւ թէ արեւամուտին: Բայց անոնք որոնք անջրպէտ գացին, տեսան որ իսկական ճշմարտութիւնը ան է, որ արեւը ոչ կը ծագի եւ ոչ ալ մայրը կը մննէ, այլ իր լոյսը անդադար կը սփռէ ամենուրեք:

Մարդ արարած կը ծնի եւ կ'ապրի կ'ըսենք կեանք ո՞նի, կը մեռնի կ'ըսենք կեանքը աւանդեց: Մեր մարդկային տեսանկիւնէն կը թուի բացարձակ իրողութիւն մը ըլլալ, քանի որ կը տեսնենք մեռեալի անշարժ մարմինը: Ուրեմն կը Հետեւցնենք թէ Կեանքը եւ մահը իրարու Հակադիր են: Մահը ծնունդին Հակադիրն է, այո՛, բայց երբեք Կեանքին:

Քրիստոս ըսաւ «Ես եմ Կեանքը եւ Հճմարտութիւնը»: Քանի որ միակ ճշմարտութիւնը Աստուած է, ուրեմն Կեանքն ալ Աստուծմէ է եւ Աստուծոյ Հետ է եւ Հետեալքար յափտենական է ու անկարելի է որ մեռնի: Եթէ կը Հաւատանք Քրիստոսի խօսքին, ուրեմն մարդիկ կեանք չունին այլ Կեանք են, եւ չեն մեռնիր:

10 Նոյեմբեր **1955**ին, Կեանքը յարմար տեսաւ մարմնանալ մանուկի մը ծնունդով որը կոչուեցաւ Ստա Էօզզօրլուօլլու: Ինք ծնաւ Ֆիտան եւ Վարդան ծնողաց: Իր միջոցաւ, Կեանքը ուրախութիւն եւ խնդրութիւն սփռեց բոլորին, որ ճանչցան Ստան. նախ իր ծնողքին, յետոյ իր եղբօր Արմանին, որուն ինք շատ մօտ էր եւ շատ կը սիրէր. նաեւ անոր ընտանիքին՝ տիկնոջ Էլէնայի եւ զաւակներուն՝ Մատթէոսի եւ Նատեայի ու իր բոլոր ազգականներուն: Կեանքը որոշեց լուսաւորել իմ էութիւնս երբ մենք ամուսնացանք **21** Փետրուար **1987**ին:

Ստայի իմաստալից խօսքերով տեսակէտներով գաղափարներով եւ նամանաւանդ վարակիչ խնդրաձքով Կեանքը անգամ մը եւս երջանկութիւն եւ իմաստութիւն բերաւ ինձի, ազգականներուս նաեւ մեր բոլոր ընկերներուն:

Նոյն Կեանքը իր բացարձակ իմաստութեամբ եւ Աստուծոյ կամքով յարմար տեսաւ թողուլ Ստային մարմինը եւ վերադարձաւ իր աղբիւրին՝ Աստուծոյ, պատճառ ունենալով մէկ տարուայ քաղցկեղի հիւանդութիւնը:

Հայաստանեայց Եկեղեցին գիտակցաբար ամէն յուղարկաւորութեան կ'երգէ ուրախութեան երգ: Մենք ալ ուրախութեամբ երգենք «Ի Վերին Երուսաղէմը, Ստային միջոցաւ Կեանքին աշխարհ բերած երջանկութիւնը, ուրախութիւնը եւ իմաստութիւնը ա՛օնէլու Համար:

ՎԱԽԸ



ՎԱԽԿՈՏ ՄՈՒԿԸ

Մուկ մը կար, որ տան կատուէն շատ կը վախնար: Այդ պատճառով ալ իր կեանքը վախով կ'անցներ: Օր մը, իր պահապան հրեշտակը խղճաց անոր վրայ եւ որպէս օգնութիւն զայն կատուի վերածեց: Մուկը, կատուի փոխուելէ յետոյ, իր օրերը փոխանակ ուրախութեամբ անցներու, այս անգամ ալ կը սկսի շունէն վախնալ: Կեանքը իրեն համար դարձեալ անտանելի կը դառնայ:

Պահապան հրեշտակը դարձեալ կը գլծայ անոր ու այդ վախէն ազատելու համար զայն այս անգամ ալ վագրի կը վերածէ: Վախը վագրին մէջ վերջ չի գտներ: Ան, այս անգամ ալ կը սկսի որսորդներէն վախնալ:

Հրեշտակը տեսնելով, թէ ինչ որ ալ ընէ օգուտ չունի, զայն դարձեալ մուկի կը փոխէ ու կ'ըսէ. «Դուն քաջութիւն չունեցող վախկոտ մըն ես: Հոգեբանութիւնդ մուկի հոգեբանութիւն է, հետեւաբար ես քեզի չեմ կրնար օգնել»:

.....

ՆԱԽԱԲԱՆ



Իմ խորին շնորհակալութիւնները կը յայտնեմ Վերապատուելի Փրոֆ. Իոկո. Սողոմոն Նիկողոսեանի, գրքիս անտիպ օրինակը կարդարու բարեհաճութեան եւ կամեցողութեան, ինչպէս նաեւ յաջորդական էջին մէջ տեղագրուած իր գրած նախաբանին համար:

Վ. Ս.



ԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆՔԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Բժշ. Սվաճեան ոչ միայն կարող սրտաբան մըն է, այլ նաեւ տաղանդաւոր բանաստեղծ մը եւ հոգեւոր լուսաբանութեան տէր անձ մը: Իր այս ներկայ հատորը՝ «Ձարթօնք»ը, հետաքրքրութիւն եւ հիացում առթող, շատ գրաւիչ, ընդարձակ եւ սակայն դիրքմբռնելի գիրք մըն է: Ինք, թէ՛ գիտութեան եւ թէ՛ կրօնքին քաջատեղեակ, իր միտքը եւ տեսակէտը խորաթափանց հասկացողութեամբ մը կարողացած է ներկայացնել բոլոր անոնց, որոնք իրեն նման ճշմարտութիւնը կը փնտռեն: Խորհուրդածելու առաջնորդող իր ուշադրաւ քննութիւնները եւ մեկնաբանութիւնները, ներառեալ գեղեցիկ ոտանաւորները եւ պատկերազարդ ներկայացումները, ընթերցողը հոգեւոր կեանքի նկատմամբ դէպի նոր հասկացողութեան մը պիտի առաջնորդեն:

Գիրքին բովանդակութիւնը հետեւեալ ինը նիւթերու վերաբերեալ իր տեսակէտը կը ներկայացնէ. «Կրօնքը եւ Գիտութիւնը», «Եօթը», «Հիւանդութիւն եւ Մահ», «Մարդը», «Եկեղեցասիրութիւն- Կրօնասիրութիւն- թէ Աստուածասիրութիւն», «Սողոմոնեան Յորդոր», «Աղէտը», «Ի՞նչ է Փրկութիւնը» որոնք բաժնուած են նաեւ զանազան ենթամասերու:

Ընթերցողը անոր խորհելակերպին համամիտ կրնայ ըլլալ կամ ոչ, բայց եւ այնպէս գրութիւնը անհատը խորհելու կ'առաջնորդէ: Գրութիւնը պարզ եւ անկեղծ է, խորհելու մարտահրաւէրը բաւականին ազդեցիկ է եւ երբեմն ալ գրգռիչ: Այնուհանդերձ իր ներկայացուցած տեսակէտները կը յառաջացընեն արժէքաւոր հայեացք մը թէ՛ հին փոխաբերութիւնները պէտք է փոխուին, որոշ հաստատամտութիւնները պէտք է լուծուին եւ ինքնահաւանութիւններուն ալ վերջ տրուին:

Իր խորհելակերպին կորիզը առողջ է, ողջամիտ եւ կարեւոր:

Այս գիրքին պարունակութիւնը հմուտ եւ քաջատեղեակ մեկնաբանութեան մը արդիւնքն է. «magnum opus» մը:

Վեր. Դոկտ. Սոլո Նիկոսեան
Փրոֆ. Թորոնթոյի Համալսարան

ՃՀՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Ճշմարտութիւնը Աստուածն է:

Ճշմարտութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է:

Ճշմարտութիւնը Աստուածպաշտութիւնն է:

Ճշմարտութիւնը Աստուծոյ ճամբան է:

Ճշմարտութիւնը Աստուծոյ տաճարն է:

Ճշմարտութիւնը Աստուծոյ լոյսն է:

Ճշմարտութիւնը մտային խաղաղութիւնն է:

Ճշմարտութիւնը խղճի ձայնն է:

Ճշմարտութիւնը գեղեցկութիւնն է:

Ճշմարտութիւնը երանութիւնն է:

Ճշմարտութիւնը կարելի չէ խափանել:

Ճշմարտութիւնը կարելի չէ անտեսել:

Ճշմարտութիւնը քաջութեան ակն է:

Ճշմարտութիւնը երկու երեւոյթ ունի,
վստահութիւն եւ հաւատք:

Ճշմարտութիւնը այն է, թէ

Աստուած ստեղծած է ամէն ինչ:

Աստուած է միակ ճշմարտութիւնը:

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Ա

2013ին հրատարակեցի «Լոյս 'ի Լուսոյ» խորագրեալ գիրքս: Իսկ 2014ին ալ «Կենցաղալոյս»ը՝ ոտանաւորներու հատոր մը: Երկու գիրքերուն նիւթերն ալ մարդու աշխարհիկ կեանքի ընթացքին իր հոգեւոր ճամբորդութեան նկատմամբ իմ հասկացողութիւնս կը ներկայացնէին: Անոնք, նաեւ, սոյն նպատակին ծառայելու համար պատշաճ կենցաղ մը կերտելու անհրաժեշտութիւնը եւ միջոցը կը պարզէին: Թէեւ տարբեր-տարբեր կրօնքներու ուսուցմանց տեղեակ եմ, սակայն ուշագիտ եղած եմ, որպէսզի տեսակէտներս հիմնուած ըլլան եւ համապատասխան մեր Աստուածաշունչի տուեալներուն: Ճիշդ է թէ ներկայացուած որոշ տեսակէտները կը տարբերին ընդհանուրի հաւատացած ձեւէն, բայց չեմ կարծեր թէ անոնք կը տարբերին Յիսուսի սորվեցուցածներէն:

Կարելոր է որ ամէն անձ, փոխանակ նոյնութեամբ ընդունելու իրեն բերանացի տրուած մակերեսային հաւատալիքները, ինք պէտք է իր կրօնքին խորքը թափանցէ եւ աւելի կարելոր, պարտ է ապրի այդ կրօնքը, քան թէ պարզապէս միայն հաւատայ (believe): Անձի մը հաւատացածին ճիշդ կամ սխալ ըլլալը յայտնի կ'ըլլայ իր կենցաղէն: Երբ ակնհաստես կ'ըլլանք համայն աշխարհի ներկայ վիճակին, անկարելի է հարց չտալ, թէ արդեօք տակաւին Աստուծոյ հաւատացող անձ գոյութիւն ունի: Ար, վստահ եմ, անուանական հաւատացող շատ կայ: Աստուծոյ հաւատալ պարզապէս «կը հաւատամ» ըսել չէ, այլ զայն գործնականօրէն ցոյց տալ է: Միթէ Աւետարանին մէջ չէ՞ գրուած, թէ հաւատքը առանց

գործերու մեռած է.

«Ջրինչ օգոտի իցե...եթէ ասիցէ ո՞չ
 Հաւատոս ունել՝ եւ Գործս ո՛չ ունիցի.
 միթէ կարիցէ՞ն Հաւատին ապրեցոցանել
 պնաս, ...սոյնպէս եւ Հաւատի՛ եթէ Գործս
 ո՛չ ունիցին, մեռեա՛լ էն առանջինն...պի
 Հաւատի առանց Գործոց դատարկ էն:
 ...Տէսանէ՛լ՝ պի՛ ՚ի Գործոց արդարանայ
 մարդ՝ եւ ո՛չ ՚ի Հաւատոց միայն: ...
 Ջօրօրինակ մարմինն առանց Հոգոց մեռ-
 եալ է, սոյնպէս եւ Հաւատի առանց Գոր-
 ծոց մեռեա՛լ էն»: (Թոգլի Յակոբայ Բ:14-26)

«Ի՞նչ օգուտ է, ... եթէ մէկը ըսէ թէ Հաւատք ունի, ու
 գործ չունենայ. միթէ Հաւատքը կընայ՞ փրկել զանիկա:
 ... Այսպէս ալ Հաւատքը, եթէ իրեն հետ գործ չունենայ,
 առանձինն մեռած է: ... թէ Հաւատքը առանց գործերու
 մեռած է: ... Կը տեսնէ՞ք թէ մարդ գործերով
 կ'արդարանայ, ո՛չ թէ՛ միայն Հաւատքով: ... Քանզի
 ինչպէս մարմինը առանց հոգիի մեռած է, նոյնպէս ալ
 Հաւատքը առանց գործերու մեռած է»:

Առաջին գիրքս՝ «Լոյս ՚ի Լուսոյ»ն որոշ նիւթերու
 նկատմամբ պարզապէս բացատրական ներկայացում մըն
 էր: Իսկ «Կենցաղալոյս»ի ոտանաւորներուն մեծ մասը կը
 ներկայացնէր գործնականը, հետեաբար աւելի լրացուցիչ
 էր, քան թէ կրկնովի: Անհրաժեշտ նկատեցի այս
 վերջնոյն աւելի ընդարձակ բացատրականն ալ հրատարա-
 կել այս « Լոյս ՚ի Լուսոյ Բ. - ՉԱՐԹՈՒՔ» Հատորով:

Այս նիւթերու մասին իմ գրելու եւ հրատարակելու
 նպատակը ուրիշին սորվեցնել չէ, այլ ինքնաուսուցում՝

ինքնազարգացում՝ է: Բժշկական ասպարեզիս մեջ, յատկապես որպես դասախօս, սկիզբէն Հասկցայ, թէ ուրիշին սորվեցնելու Համար կատարուած պատրաստութիւնը սորվելու լաւագոյն ձեւն էր: Նոթագրութիւններ կատարելով ես շատ բան սորվեցայ: Եւ եթէ գրի առի, ինչո՞ւ չհրատարակել: Գուցէ ուրիշ անձ մըն ալ տարբեր տեսակէտ մը տեսնելով իր կրօնքը աւելի լաւ Հասկնալու Համար ինք ալ պրպտէ եւ խորքին թափանցէ: Ես այս նիւթերու մասնագետը ըլլալու յաւակնութիւնը չունիմ, պարզապէս տեսակէտ մըն է, որ կը ներկայացնեմ: Տեսակէտ մը, որ ինծի ազդու կերպով «խօսեցաւ»: Գուցէ ուրիշի մըն ալ նմանապէս ազդէ եւ օգնէ: Ինչ որ կը պատահի, Աստուծոյ կամքովն է որ կ'ըլլայ, ինչպէս Գերշ. Տէր Մեղրիկ Եպիսկոպոս Բարիքեան «Կենցաղալոյս»-իս Համար իր գրած նախաբանին մէջ կ'ըսէր. « ... որ առանց Աստուծոյ կամքին ոչ մէկ տերեւ կը շարժի այս աշխարհի վրայ»:

Երբ իմ առաջին երկու Հատորները ըյս տեսան, իմ բարեկամներէն ոմանք էլեկտրոնային թղթակցութեամբ ինծի Հետեւեալ մեջբերումները դրկեցին.

«Աղէկ Ուսումնասիրեցէք Ժողովուրդը.

Ինչ Որ Պիտի Գրէք,

Անոր Կեանքէն Թող Ըլլայ»:¹

«Որեւէ երկրի արժէք ներկայացնող գրականութիւն կապ պետք է ունենայ Համապատասխան Ժողովուրդի ապրած կեանքին Հետ՝ ըլլայ ան անցեալ ու յատկապէս ներկայ: Գրողին գործածած բառերն ու յայտնած գաղափարները պետք չէ թափառին անիրականութեան ու վերացականութեան անստոյգ ոլորտ-

Ներոնն մէջ, այլ անոնք պէտք է խօսին երկրի վրայ գոյութիւն ունեցող բնութեան, մարդոց ու իրենց ունեցած Հարցերուն մասին: Ապրուած կեանքի մասին: Մարդկային սերտ յարաբերական վիճակներու մասին: Ըստ իս, բանաստեղծութիւնն ալ պէտք է արտայայտուի այս սահմաններու ծիրին մէջ: Օրային անգոյ երեսոյթներէն հեռու պէտք է մնայ ան»:²

Վստահ չեմ, թէ իմ բարեկամներու նպատակը ի՞նչ էր: Արդեօք կը խորհէին թէ գրուածները շատ վերացական էին եւ մեր ժողովուրդին ներկայ կենցաղին Հարմար չէ՞ր, որով կ'ուզէին զիս զգուշացնել, կամ թէ գրուածներուն այժմեականութիւնը Հասկնալով կ'ուզէին զիս քաջալերել:

Վստահ եմ կան անձեր, որոնց Համար այս նիւթերը շատ վերացական են կամ առասպելներ: Ճիշդ է, թէ շատերու Համար կրօնական Հարցեր կրնան անստոյգ ըլլալ: Կան անձեր, որոնց Համար իրենց Հինգ զգայարաններով զգացուածը միակ փաստացին է: Աւելի բարձր գիտակցութեան մը տուած փորձառութիւն մըն ալ կայ, ուրկէ կը ծագի Հաւատքը, որ կարելի է իրենց յայտնի չըլլայ: Եթէ իրենց կենցաղը Համապատասխան չէ կերտելու բարձր գիտակցութիւն, այս Հարցերը ստուգացնող փորձառութիւնն ալ կարող չեն ունենալ: Քանի որ «ինչ որ ցանկնք ան կը Հսձենք»:

Արպէս առաջին քրիստոնեայ ազգ, ազգովին Հպարտ ենք: Մարդ արարած այն բանին որ չի Հաւատար, անով Հպարտ չի կրնար ըլլալ, որով մենք Հաւատացեալներ ենք: Իսկ եթէ կը Հաւատանք Յիսուսի սորվեցուցածներուն, ուրեմն Հոգեւոր ճանապարհն ալ Հարկ է որ այժմեական ըլլայ: Համամիտ եմ վերեւի մէջբերումներու թելադրութիւններուն: Ճիշդ այդ պատճառով ալ իմ սորվածները

Հրատարակելու քաջութիւնը ունեցայ, քանի որ ինծի Համար կարելոր ու անհրաժեշտ են նման նիւթեր, նաեւ նոյնը կրնան ըլլալ իմ ազգակիցներուն, եւ ինչու չէ՞ Համայն մարդկութեան: Անոնք, որոնք այս նիւթերը շատ վերացական կը Համարեն, իմ կարողութեան սահմաններուն ներքեւ, ջանացի մերձեցնել վերացականը Տիզիբականին՝ բնագիտութեան Հետ:

Աշխարհի ներկայ մութ միջնորդութիւն մէջ կայ նաեւ զարթօնք մը: Կարելոր է որ Հայերս ազգովին մաս կազմենք այդ զարթօնքին, եւ ինչու չէ, նաեւ ըլլանք դրօշակակիրը, ինչպէս քրիստոնէութեան սկզբնաւորութեան արքայապէս եւ ազգօրէն դրօշակակիր եղանք: Կը խորհիմ թէ այս շարժումը մեր ազգին մէջ արդէն իսկ սկսած ըլլայ: Որպէս ցայտուն օրինակ այս զարթօնքի, ստորեւ թարգմանաբար կը տեղադրեմ ԹԻՐԶԱՀԱՅՈՅ Պատրիարքարանի ներկայացուցիչ Հոգեւորականի մը ուղերձը՝ կատարուած «ՃԷՄ Հաստատութիւն»ի Հիմնադրութեան ԺԷ. տարեդարձի ճաշկերոյթին:

«... Սուրբ գիրքին մէջ Համար մը կայ, ուր գրուած է. «Գեանի Հողէն մարդը ստեղծեց եւ քիթէն կեանք փչեց եւ մարդը կենդանի Հոգի եղաւ: Իր պատկերին նման ստեղծեց մարդը եւ զինքը դրախտի մէջ դրաւ, որպէսզի ինամէ եւ պահպանէ:» Մեր այսօրուայ Հարցերու մէջ միւրճուած ըլլալուն պատճառը, մարդը ու բնութիւնը ինամելու եւ պահպանելու մեր պարտականութեան մէջ թերացումէն յառաջ եկած է: Առողջ միջնորդութիւն մը գոյութիւնը նախ կ'իրականանայ սիրոյ գոյութեամբ, վստահութեան գոյութեամբ եւ Հաւասարութեան գոյութեամբ: Այս պատասխանատուութիւնը միայն մարդոց տրուած պարտականութիւն մըն է: Միութեան

յարգելի նախագահը իր խօսքին մեջ «Երաշտի հետեւանք գաղթեր սկսան» ըսաւ: Այսօր այդ երաշտը՝ այդ չորութիւնը մարդոց «սիրտերուն» մեջ սկսած է: Այս չորութեան հետեւանք մարդիկ զիրար կ'անտեսեն, իրարամերժ դարձած են: Մարդու մը Հանգստավայրը եւ անդորրութեան զգացումը ուրիշ վայրերէ չի գար այլ միայն ուրիշ անձի մը սիրտէն: Հիշդ ասոր Համար ես օրէնքներուն ինձի տուած իրաւունքները չեմ ուզեր, եւ ձեր սիրտերուն մեջ տեղ կ'ուզեմ: Եթէ ես ձեր սիրտերուն մեջ ըլլամ, ձեզի պատկանող ամէն ինչ իմն ալ կ'ըլլայ, բայց եթէ ես ձեր սիրտերուն մեջ տեղ չունենամ, ոչինչ ինձի կը պատկանի: Ես ձեզմէ անջատուած կ'ըլլամ: Ժողովի մը ես ալ ներկայ էի եւ «Հաշտութիւն եւ սէր ինչո՞ւ գոյութիւն չունին» ըսի եւ ասոր երկու մարդկային պատճառներուն ալ կղերականներու եւ քաղաքագէտներուն ըլլալը ըսի: Որովհետեւ կղերականները իրենց տուած խոստումին եւ կոչումին Համաձայն չեն ապրիր եւ քաղաքագէտներն ալ իրենց տուած խոստումները չեն կատարեր (ի բաձառեալ ներկաներէ): Սիրելիներ այս ուղղութեամբ օրինակով մը պիտի խօսիմ եւ բացատրեմ: «Մարդուն մէկը դրախտ տարեր են, տեսեր է, որ ամէն կողմ շատ գեղեցիկ է եւ հրեշտակները ամենուն կը սպասարկեն: Մարդը գացեր հրեշտակին Հարցուցեր է թէ անոնք հոն ի՞նչ կը ծախեն: Հրեշտակը պատասխաններ է. «մենք հոս սէր, արդարութիւն, Հաշտութիւն եւ ողորմութիւն կը ծախենք»: Մարդը շատ խանդավառուէր է եւ Հարցուցեր է թէ ինք կարո՞ղ է ասոնցմէ առնել

ու տանիք: Հրեշտակը պատասխաններ է ըսելով: «ուզածիդ չափ առ եւ տար»: Մարդը ըսեր է: «ինձի 500.000 թօնօ արդարութիւն, 200.000 թօնօ սեր եւ գութ ու թօնօներով ապսպրանք կու տայ: Հրեշտակը իրեն սպասէ կ'ըսէ եւ կը հեռանայ: Մարդը կը սկսի խորհիլ. «մէկէն խանդավառուեցայ, քանի գիտէի անոնց չգոյութեան մասին աշխարհի վրայ եւ այսքան բան ապսպրեցի, ես այսքան ապրանք ինչպէ՞ս աշխարհ պիտի տանիմ»: Երբ ան տակաւին այս խորհուրդները կ'ունենար, Հրեշտակը, Հին Ժամանակներուն մէջը մանտրուք դրամ՝ դնելու Համար գործածուող փոքր տոպրակի մը նման տոպրակ մը սեղանին վրայ կը դնէ եւ «աՀա քու ապսպրանքդ» կ'ըսէ: Մարդը կը զարմանայ, մէջ մը Հրեշտակին կը նայի եւ մէջ մըն ալ տոպրակին եւ կ'ըսէ. «Թօնօներով սեր գութ եւ արդարութիւն ապսպրած էի, իսկ դուն փոքր տոպրակ մը բերիր»: Հրեշտակը կը խնդայ ու կ'ըսէ. «մէնք Հոս ձեր ուզածներուն միայն Հունտերը կը ծախենք եթէ անոնք առնես եւ սիրտերուն մէջ ցանես, Հոն թօնօներով կը շատնայ»: Քաղաքագէտները, Հրապարակներու վրայ եւ խորհրդարանի մէջ շատ լաւ խօսքեր կը խօսին, կղերականները մզկիթներու եւ եկեղեցիներու մէջ շատ լաւ բաներ կ'ըսեն, բայց քանի աշխարհը տակաւին չէ բարելաւուած, Հարկ է նման քաղաքագէտներ եւ կղերականներ հեռացնել: Պարտականութիւնը կատարող, դրական ազդեցութիւն ունեցող եւ աշխարհը բարելաւուող անձերու եւ Հոգիներու պէտք ունինք, այս ուղղութեամբ իմաստուն մարդոց

պետք ունինք: Միայն խելացի ըլլալ բաւարար չէ, անոր պարտ է նաեւ ընկերակցի սերով լի սիրտ մը, ապա թէ ոչ արդիւնքը Հարստահարիչ կ'ըլլայ: Օրէնքի մարդը եթէ իր մէջ սեր չունենայ անարդար կ'ըլլայ: Այս երեկոյ, ինչպէս ձեր ինծի պարգեւած պատիւին բաժնեկից եղայ ես ալ ուզեցի ձեզի բաժնեկից ընել իմ սրտիս մէջի մտահոգութիւններուն, քանի Ս. Գիրքին մէջ գրուած է. «Մարդ իր տեսած մարդը՝ եղբայրը եթէ չսիրէ, ինչպէ՞ս կրնայ Աստուած սիրել, Որուն չի տեսներ:» Աստուծոյ տանող ճամբան մզկիթէն, եկեղեցիէն, նամազէն եւ ծովապահութենէ չ'անցնիր, այլ ան ուրիշ մարդու մը սիրտին՝ հոգիին մէջէն կ'անցնի: Այդ ճամբան, ուրիշի ցաւերուն ընկերակցիլ եւ անոր արցունքները սրբելու ուղին է: Եթէ ես, աս իրականացնելու կարող չեմ, իմ կղերականութիւնս, Հաւատքս՝ բոլորը պարապ են: Սրտաբուխ սերով ձեզ կ'ողջունեմ եւ շնորհակալութիւն կը յայտնեմ»:³

Ինչպէս նաեւ 2014 տարուայ Դեկտեմբեր ամսուայ մէջ Օրթոգիւղի Ս. Աստուածածին Հայաստանեայց Եկեղեցոյ մէջ միասնական Հայ Քրիստոնէայ եւ Մաճմէտական Սուփիներու (Sufi) աննախընթաց Հաւաքոյթ մը տեղի ունեցած է, ուր Սուփիական շարական «Ալլահուէքպեր լա իլահէ իլլալլահ հու Ալլահուէքպեր Ալլահուէքպեր ...» երգուած է: Երգողները կիներ եղած են: Այդ Հաւաքոյթին Պոլսոյ Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերշ. Տէր Արամ Արք. Աթէշեան իր օրուայ պատգամին մէջ ըսած է, որ թէ՛ Յիսուսի եւ թէ՛ Մեկլանայի սորվեցուցածները ընդհանուր առմամբ՝ 90 առ Հարիւր, իրարու Համապատասխան են եւ օրինակներ տուած է:

Այս գիրքին նպատակին ալ այս զարթօնքին ծառայել է, զայն, իմ կարողութեանս սահմաններուն ներքեւ, Հանրութեան ներկայացնելով:

1:- Արփիար Արփիարեան

2:- Մարգար Հարապիանեան

3:- «Cem Vakfi»ի կազմակերպման 17-երորդ տարեդարձի առիթով Տէր Զավէն ՔՆ. Պալլքճըի ներկաներուն տուած ուղերձը յանուն Պոլսոյ պատրիարքութեան: (Թղթերէնէ թարգմանուած)

* * *

Բ

Ինչպէս Ա. մասին մէջ զրուցեցի, գիրքիս բովանդակութիւնը կը ներկայացնէ իմ այսօրուայ խորհելակերպը, մտածելակերպը: Նկատի ունենալով որ ամէն ինչ Հիմնուած է օրուայ փորձառութիւններուն վրայ, կարելի է յառաջիկային տարբեր ձեւով ալ արտայայտուիմ:

Այսքան էջերուն մէջ եթէ կան ուշադրութենէ վրիպած սխալներ, ընթերցողին ներողամտութեան կ'ապաւինիմ:

* * *

Գ

Գլուխ Զ - «Սողոմոնեան յորդոր»

Այս գլխուն մէջ կը ներկայացուի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գանատայի Թեմի Թորոնթօ քաղաքի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հոգ. Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի (այժմ՝ եպիսկոպոս) փափաքով պատրաստած եւ 2014 տարուոյ Մեծ Պահքի Հինգերորդ Կիրակի օր այդ եկեղեցւոյ մէջ, պատարագի աւարտին, տուած պատգամ-դասախօսութիւնս:

Գլուխ Թ - «Յաւելուածական» բաժնի մէջ տեղադրուած գրութիւնները իմն չեն, Համացանցէն աւնուած եւ իմ կողմէ Հայերէնի թարգմանուած գրութիւններէն որոնց մէկ մասին Հեղինակները յայտնի չեն:



Անձի մը վրայ, Ի՞նչ բան աշխարհէն աւելի ծանր կը կշռէ:

Իր մայրը

Անձի մը Համար, Ի՞նչ բան երկինքէն աւելի բարձր է:

Իր Հայրը

Ի՞նչ բան Հովէն, ձայնէն եւ լոյսէն աւելի արագ է:

Միտքը

Ի՞նչ բաներ ծառի մը ճիւղերէն աւելի բազմաթիւ են:

Մտահոգութիւնները

Ի՞նչ բան մահամերձ անձի մը ընկերն է:

Սէր եւ սղորմութիւնը

Ինչպէ՞ս կարելի է գտնել կրօնքը, յաջողութիւնը, դրախտը եւ երջանկութիւնը:

**Կրօնքը կարելի է գտնել գիտակցութեամբ
 Յաջողութիւնը կարելի է գտնել գլխասիրութեամբ
 Դրախտը կարելի է գտնել ճշմարտութեամբ
 Երջանկութիւնը կարելի է գտնել ինքնազսպումով**

Ի՞նչ է մարդու հոգին:

Ան որդին է Ամենակալին

Ի՞նչ բան աշխարհը ծածկած է:

Խաւարամտութիւնը

Ի՞նչ է ծուլութիւնը:
Կրօնքի անտեսումը

Ի՞նչ բան ճշմարիտ երջանկութիւն կուտայ:
Պարտական չըլլալը (տես Տէրունական աղօթքը)

Ի՞նչ է ճշմարիտ մաքրութիւնը:
Մտային մաքրութիւնը

Ի՞նչ բան սեւ ներկէն աւելի մութ է:
Անպատուութիւնը

Ի՞նչ է լաւագոյն կրօնքը:
Բարեպաշտութիւնը, երկիրդածութիւնը եւ մարդկայնականութիւնը

Ի՞նչ բան ողբերգութեան արգելք կրնայ ըլլալ:
Չսպուստ եւ Հսկուստ միտքը

Ինչպէ՞ս ամօթ զգալը կաշկանդէր:
Անպէտ բաներէ Հեռու մնալով

Ի՞նչ է բարեպաշտութիւնը:
Բողոքին Համար երջանկութիւն բաղձալն է

Ի՞նչ բան երկիր մը կը կործանէ:
Ստրկութիւնը (իր զանազան տեսակներով)

Ի՞նչ է նախանձը:
Յոխորտանքին մէկ երեսոյթը

Ի՞նչեր մեր թշնամիներն են:
Յանկութիւնը, բարկութիւնը, ագահութիւնը եւ պատրանքային Հարստութիւնը

Ի՞նչու՞յայտնի կ'ըլլայ իմաստուն մարդը
Իր Հաւատքով եւ Համբերութեամբ եւ Աստուածազատութեամբ

Ի՞նչ է եասիրութիւնը:
Խաւարամտութիւնը

Ի՞նչ է Հպարտությունը:

Տգիտությունը

**Ի՞նչ բան Հաւատքին արգելք կ'ըլլայ:
Հեղություն եւ խոնարհություն պակասը**

Ի՞նչ է իմաստութեան լծնամին:

Բարությունը

Ի՞նչ է բռնապետությունը:

Վախին մէկ երեսոյթը

**Ի՞նչ է մարդու վեհությունը լաւագոյնս ներկայացնող
յասակությունը:**

**Ոչ ժառանգականությունը, ոչ ուսուցումը կամ գիտությունը,
այլ միայն իր նկարագիրը**

Ի՞նչ բան երջանկություն կու տայ:

Խաղաղությունը

Ի՞նչ է երջանկությունը:

Խաղաղութեան մէջ Ս. Հոգիի զօրութեան յայտնությունը



Երջանկութիւնը
երջանկութիւն
չփնտռելու մէջն է:
Անոր համար ալ
մանուկները միշտ
երջանիկ են:

ԳՐԻԳՈՐ ԶՈՆՐԱՊ
(1861 - 1915)

www.hayagit.am/info



-Ա-

ԿՐՕՆՔԸ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ



ԿՐՕՆՔԸ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Անցեալին գիտութիւնը տարբեր երեւոյթ մը ունէր, քան թէ ներկայիս: Մարդիկ կրօնքով, աստղագիտութեամբ (astrology), թուագիտութեամբ (numerology), տարրախոլոգութեամբ (alchemy), բնագանցութեամբ (metaphysics) եւ դիւահարութեամբ (demonology/demon possession) զբաղած էին: Այսօր մարդու հասկացողութիւնը փոխուած է, ինչպէս նաեւ գիտութիւնը: Հետեւաբար կրօնքի տեղ հիմա փիլիսոփայոլութիւն կայ, եւ այս վերջինէն ալ ծագում առած են բնական գիտութիւնները (natural sciences), ինչպէս աստղագիտութեան տեղ՝ աստղաբաշխութիւն (astronomy), թուագիտութեան տեղ՝ թուաբանութիւն (mathematics), տարրախոլոգութեան տեղ՝ տարրաբանութիւն (chemistry), բնագանցութեան տեղ՝ բնագիտութիւն (physics) եւ դիւահարութեան տեղ հոգեբանութիւն եւ հոգեբուութիւն (psychology/psychiatry): Անշուշտ նման փոփոխութիւն մը մեծ յառաջդիմութիւն կը ներկայացնէ: Բայց ամբողջական բնագիտութեան (quantum physics) գիւտէն ետք, գիտուններ ներկայիս կամաց կամաց կ'անդրադառնան թէ հին գիտութիւնները ամբողջովին անտեսելով սխալած են: Գիտական օրէնքներու համաձայն կատարուած պրպտումներու հետեւանք փաստուած է, թէ Հրատ մոլորակը, իր ազդեցութեան շրջանին ծնող անձերու վրայ որոշ ներգործութիւն մը ունի եւ ատոր հետեւանք անոնք Ֆիզիքսպէս աւելի զօրաւոր կ'ըլլան եւ մարգասէր:

Ինչպէս անգլիական առածը կ'ըսէ «Don't throw away the baby with the bath-water» (դափուած լուացքի ջուրին հետ միասին մանուկն ալ դուրս մի նետեր), այժմ գիտունները կը խորհին, թէ հին գիտութիւնները ամբողջովին անտեսելով իրենք գիտութեան դաշտի

մէջ որոշ կորուստ մը ունեցած են: Նոյնիսկ կարգ մը գիտուններու կողմէ յետադարձի շարժում մը կայ: Աս կը ծագի այն իրողութենէն, թէ ամբողջական բնագիտութեան պրպտումներու արդիւնքներուն հետեւանք, իրենք ալ շուարած են: Ան, որ կը կարծէին թէ ճշմարտութիւն էր, ըստ արդիւնքներուն, կը թուի գոյութիւն չունենալ: Շատ մը մաթեմատիքական հաւասարութիւններու լուծումներու հետեւանք շուարած են եւ չեն գիտեր ինչպէս զանոնք բացատրել եւ հաշտեցնել այն բոլորին հետ, որոնց տեղեակ են: Անոնք այս իրենց ներկայացուած եւ գիրենք շփոթեցնող արդիւնքները գիտակցութեան (consciousness) հետ հաշտեցնելու համար նաեւ փորձեր կատարել կը խորհին: Իրենք այս գիտակցութեան ազդեցութիւնը արտաքին աշխարհի մէջ կը փնտռեն: Անտարակոյս, Աստուած հոն ալ է: Բայց Յիսուս զայն գտաւ իր ներքին աշխարհին՝ իր էութեան մէջ, առանց զանազան սուղ գործիքներու օգնութեան: Հոն ուր որ գիտութիւնը չի հասնիր, հոգեւոր կեանքը կը պարզէ:

Ըստ գիտուններու՝ բնագէտներու եւ տիեզերաբաններու, բոլոր տիեզերքի եւ բնութեան օրէնքները, որոնք կը թուին անխախտելի ըլլալ, ճշգրիտ մաթեմատիքական գործողութիւններով եւ հաւասարութիւններով կարելի է ներկայացնել: Այս իրողութիւնը, ինչպէս նաեւ բնութեան մէջ ամէն ինչի ներգաշնակ-օրէն իրարու հետ կապ ունենալու յատկութիւնը ու իրարմէ կախեալ ըլլալը, մեզի կը յայտնէ, թէ բնութիւնը բացարձակ իմաստութեամբ եւ իմացականութեամբ մը կարգաւորուած է: Աներեւակայելի պիտի ըլլար, նման բարդ կազմուածքի մը պատահական ըլլալը: Աստուածաշունչին մէջ ալ կը կարդանք, թէ ստեղծագործութենէ առաջ, առաջին բանը որ Հայր Աստուծոյ հետ էր՝ իմաստութիւնն էր: Առակաց գիրքէն

առնուած յաջորդ համարներուն մէջ իմաստութիւնն է որ կը խօսի:

«Ես իմաստութիւնն Բնակեցայ 'ի խորագիտութեան, զխորհուրդս եւ զգիտութիւնն կոշտի յիս» : (Լուսկայ Ը:12)

«Ես իմաստութիւնը, խորագիտութեան հետ կը բնակիմ, եւ մտախոհութեան գիտութիւնը կը յայտնաբերեմ»:

«Տէր Հաստատեաց զիս 'ի սկիզբն ճանապարհաց իւրոց 'ի գործս իւր. յառաջ ինչն զյառիցեանս Հաստատեաց զիս : Իսկ սկիզբն յառաջ ինչն զէրկիր առնել» : (Լուսկայ Ը:22-23)

«Տէրը զիս ստեղծեց իր ճանապարհին սկիզբը՝ իր գործերուն Համար, յախտենականութենէն ալ առաջ ստեղծեց զիս: Ան զիս ծնաւ սկիզբին, երկրին ստեղծումէն ալ առաջ»:

Ուրեմն բոլոր ստեղծագործութիւնը իմաստութեամբ ստեղծուած է: Միթէ ճիշդ այդ չէ՞, որ գիտուններն ալ գտած եւ հասկցած են: Ըստ գիտուններու այդ մատեմատիքական հաւասարութիւններու մէկ մասը իրենց մէջ նաեւ անորոշութեան նշոյլ մը կը պարունակեն եւ զայն կը յայտնեն: Ասիկա «անորոշութեան համաս» (uncertainty principle) կոչուած է: Այս վերջինը կը ներկայացնէ այն կացութիւնը, թէ անկարելի է ենթահիւլէական մասնիկի (sub-atomic particle) մը վայրը եւ խտութիւնը միաժամանակ չափել եւ հասկնալ: Եթէ մին կարենան հասկնալ, միւսը անորոշ կը մնայ: Աս կը թուի բացարձակ եւ անհրաժեշտ իրողութիւն մը ըլլալ: Աստուած, որ իր դրած բնագիտութեան եւ բնութեան օրէնքներուն դէմ չի գործեր, որպէսզի առանց մատեմատիքական

գործողութիւններու ճշգրտութիւնը եւ օրէնքները խախտելու, այդ «անորոշութեան համաս»ով զանոնք գերազանցելը արդեօք Իրե՞ն վերապահած է:

Տիեզերաբանական գիտունները նաեւ կ'ըսեն, թէ տիեզերքը մէկ կէտէ մը յառաջ եկած է, որ կը կոչեն «միականութիւն» (singularity): «Մեծ պայթում»ով մը (big bang) զօրութիւնը ամենուրեք սփռուած է, կազմելով տեսանելի եւ անտեսանելի ճառագայթումներ, ինչպէս նաեւ նիւթը: Այս «մեծ պայթում»ով նոյն ատեն յառաջ եկած են նաեւ «միջոց»ը (space) եւ «ժամանակ»ը (time): Անոնք անհրաժեշտ էին պարունակելու համար զօրութիւնը իր բոլոր երեւոյթներով եւ ծառայելու փոփոխութեան եւ բարեշրջման, որպէսզի ստեղծագործութիւնը կարենար ընթանալ:

Աստուածաշունչի առաջին համարը հետեւեալն է.

«Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ

զերկիր»: (Օննդոս Լ:1)

«Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց»:

«Ի սկզբանէ»ն կը ներկայացնէ «ժամանակ»ը: Քանի որ սկիզբ մը կայ, հարկ է որ այդ սկիզբը ունենայ իր շարունակականութիւնը, ինչպէս նաեւ վերջը:

«Երկինք»ը՝ տիեզերքի տարածութիւնն ալ հարկ է որ «միջոց»ը ներկայացնէ: Զօրութիւնը եւ միջոցը իրարմէ անբաժան են: Զարմանալիօրէն եւ կարծէք դիպուածով եղած ըլլար, հայերէնի մեջ «միջոց» բառը թէ «space» եւ թէ «means» այսինքն պատճառը կը ներկայացնէ: Այդ զօրութիւնն ալ միթէ ամէն ինչի պատճառը չէ՞:

«Երկիր»ն ալ նիւթի ստեղծութեան ակնարկումն է: Ուշագիւր պէտք է ըլլանք եւ սխալ չմեկնաբանենք: Շատեր կը խորհին թէ «երկիր» բառը աշխարհը կը ներկայացնէ: Համարը աշխարհը չ'ըսեր այլ՝ երկիրը:


Քոլորս ալ վստահաբար համամիտ ենք, թէ աշխարհի ստեղծագործութիւնը աստղերու, աստղախումբերու եւ մոլորակներու ստեղծագործութենէն առաջ անկարելի պիտի ըլլար: Ծննդոց գիրքի յաջորդող համարներուն մէջ կը կարդանք, թէ անոնք աւելի վերջ ստեղծուեցան:

Զարմանալիօրէն բնութեան գոյութեան նկատմամբ «ստեղծագործութեան» եւ «բարեշրջման» երկու տեսակէտները շատերու համար հարց եղած են: Անոնք, որոնք միայն իրենց հինգ զգայարանքներով ստացուած տուեալներու կը հաւատան, կամ Աստուծոյ չեն հաւատար, կը պնդեն թէ բնութիւնը բարեշրջման օրէնքներու համաձայն ի յայտ եկած է: Անոնք Տարուինեան բարեշրջման տեսութեան (Darwinian theory of evolution) կը հաւատան ու կը հետեւին: Իսկ անոնք, որոնք կրօնքին փարած են, բարեշրջման տեսութեան չեն հաւատար եւ կը պնդեն թէ Աստուած ամէն ինչ զատ զատ ստեղծած է: Այս բախումը այն աստիճանի հասած էր, որ քսաներորդ դարու առաջին կէսին, Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ նոյնիսկ դատ եւ դատավարութիւն տեղի ունեցած է: Դատին պատճառը՝ ուսուցչի մը բարեշրջման տեսութիւնը աշակերտներուն սորվեցնելուն պատճառաւ գործէ արձակուելը եղած է: Այդ դատը մեծ արձագանգ ունեցած եւ «կապիկի դատավարութիւն» (monkey trial) կոչուած էր: Այս անուանակոչումը երկու հակադիր տեսակէտներուն՝ «մարդիկ կապիկէ սեռած են», կամ «Աստուծմէ ստեղծուած են»ի ակնարկ մըն էր: Նման վիճաբանութիւն մը ինծի մեծ զարմանք կը պատճառէ: Արդեօք մարդիկ իսկապէս այդ աստիճանի տգէտ էին, որ զարգացած ըլլալով հանդերձ նման վիճաբանութիւններու տեղի տուած էին: Միայն իմացականութիւն (intellect) եւ իմաստութիւն չունեցողներն են որ նման վիճաբանութիւններու տեղի կու տան: Բայց

վստահ եմ բոլորն ալ բարձր իմացականութեան տէր անձեր էին, ապա թէ ոչ զարգացած՝ փաստաբան, դատաւոր, քաղաքապետ, կղերական եւ ուսուցիչ չէին ըլլար: Բայց պէտք է մոռնանք, թէ ինչպէս այս գիրքին «Մարդը» գլխուն մէջ գրուած է, հպարտութիւնը եւ յոխորտանքը մարդէն իր իմաստութիւնը, իմացականութիւնը եւ տրամաբանելու կարողութիւնը կը խլէ: Բարեշրջումն ալ, համահաւասար բնութեան բոլոր միւս օրէնքներուն կողքին, օրէնք մը չէ՞: Ինչպէս՞ կարելի է ընդունիլ բնութեան եւ բնագիտութեան միւս բոլոր օրէնքները եւ անտեսել այս մէկը: Տարւին միայն այս օրէնքին գոյութեան գիւտը ըրաւ եւ ոչ թէ ինք օրէնքը դրաւ: Միւս բոլոր օրէնքներու շարքին բարեշրջման օրէնքն ալ ստեղծագործութեան ծառայելու համար Աստուծոյ կողմէ դրուած օրէնք մըն է: Ուրեմն այս երկու տեսակէտներուն մէջ որեւէ հակասութիւն գոյութիւն չունի: Բարեշրջումը Աստուծոյ օրէնքներէն մին եւ ստեղծագործութեան ծառան՝ միջոցը եւ լրացուցիչն է, որ Աստուծոյ կամքը կը կատարէ:

Ինչպէս վերեւ յիշեցինք «մեծ պայթում»էն ետք նախ զօրութիւնն էր որ գոյութիւն ունեցաւ: Այս զօրութիւնը ընդհանուր տիեզերքի մէջ թափանցած է: Բնագիտութիւնը փաստած է թէ նիւթը զօրութենէ յառաջ եկած է: Նիւթը զանազան մասնիկներէ (molecules) կազմուած է: Մասնիկներն ալ զանազան հիւլէներէ (atoms) կազմուած են: (Տես ՊԵՏԿԵՐԵՐ ԹԻՐ: 1-Ա ԵՎ Բ)

Քիմիական տարրական ցուցակի մէջ 118 զանազան տարրեր (elements) նշուած են: Ամէն մի տարր իր յատուկ քիմիական եւ ֆիզիքական յատկութիւնները ունի: Այս յատկութիւնները ամէն տարրի կորիզին ունեցած փրոթոն եւ կորիզին բոլորտիքը շրջող ելեկտրոնի թիւերէն կախեալ են:



Hydrogen Atom (H)

ՊԱՏԿԵՐ ԹԻՒՆ: 1-Ա ՊԱՏԿԵՐ ԹԻՒՆ: 1-Բ

1-Ա Ջրածնի հիւլէ մէկ փրօթօն եւ մէկ էլէկտրոնով
1-Բ Թ՛ձուածնի հիւլէ ութ փրօթօն, ութ նիւթրօն եւ ութ էլէկտրոններով

Մինչեւ քսաներորդ դարու առաջին կէսը, գիտունները կը հաւատային, թէ նիւթը անհետացնել կամ նոր նիւթ գոյացնել կարելի չէր, միայն նիւթին երեւոյթը փոխել կարելի էր: Աս բնագիտութեան օրէնքներէն մին եղած էր: Հիւլէական ռումբի գիւտէն յետոյ յայտնի եղաւ, թէ նիւթն ալ միայն զօրութեան ալիքներէ կազմուած էր: Այս վերջին իրողութեան յայտնութենէն ետք վերոյիշեալ օրէնքը ջնջուած եւ տեղը նոր օրէնք մը դրուած է, որ կը յայտարարէ թէ նիւթի տեղ զօրութիւնը ստեղծել կամ անհետացնել կարելի չէ, այլ միայն անոր արտայայտութիւնները կարելի է փոխել: Վերջին յիսուն կամ վաթսուն տարուայ մէջ անոնք նաեւ փաստած են թէ «նիւթրօն» եւ «փրօթօն»ները նիւթի ամենափոքրագոյն մասերը չեն եւ անոնք ալ աւելի փոքր նիւթի մասերէ կազմուած են, որ «գուարքս» (quarks) կը կոչուին: Վեց տարբեր «գուարքս»ներ գոյութիւն ունին եւ անոնք ալ աւելի փոքր մասնիկներէ կազմուած են: Տակաւին մի քանի տարի առաջ Զուիցերիոյ մէջ հետազոտութիւններու հետեւանք անոնք նաեւ յաջողեցան շատ աւելի փոքր

նիւթի մաս մը ի յայտ բերել, որ յայտնաբերողի անունով զայն կոչեցին «Հիքս պոզոն» (Hicks bozon): Գիտունները կը խորհին թէ այս վերջինը նիւթի հիմնական կազմիչն է: Լրագրողները զայն «Աստուածային մասնիկ» (God particle) կոչած են: Պէտք չէ մոռնանք թէ լոյսին «Ֆոթոն»ը (photon) ինչպէս նաեւ «նիւթրինո»ն (neutrino), որոնք լոյսի արագութեամբ կ'ընթանան, թէ ալիքի եւ թէ որոշ մասնիկի՝ նիւթի (particle) յատկութիւնները ունենալը արդէն կը գիտցուէր: Տեսանելի լոյսը միայն թափանցիկ նիւթերէն կ'անցնի: Բայց «Նիւթրինո»ն առանց որեւէ ընդդիմութեան հանդիպելու ամէն տեսակ նիւթէ կ'անցնի:

Կը խորհիմ թէ այսօր ամբողջական բնագիտութիւնը (quantum physics) փաստած է, թէ Աստուած գոյութիւն ունի: Ինծի զարմանք կը պատճառէ թէ տակաւին Աստուծոյ գոյութեան չհաւատացող անձեր կան:

Այժմ բաղդատենք գիտութեան տուեալները կրօնքի տուեալներուն հետ եւ տեսնենք թէ անոնք իրարու հետ որքան հաշտ են:

Ինչպէս վերեւ յիշուեցաւ թէ գիտութիւնը փաստած է որ բոլոր տիեզերքը ոչնչութենէ յառաջ եկած է: Առաջին հերթին «միականութենէ» (singularity)՝ չափ չունեցող կէտէ մը, զօրութիւն սփռուած է: Այդ զօրութիւնը ելեկտրամագնիսային ճառագայթումն էր, «լոյս» էր, որուն մաս կը կազմէ նաեւ տեսանելի լոյսը:

«Եւ ասաց Աստուած, Եղբցի լոյս. եւ եղև լոյս»: (Ծննդոց Ա:3)

«Աստուած ըսաւ. «Լոյս ըլլայ», ու լույս եղաւ»:

«Եւ այս եմ ասեցի՜ զոր լոսա՜յ առ 'ի նմանէ՜՝ եւ պատմե՜նի՜ յեւ. զի Աստուած

լո՛յս է, ե- խա-ար ՚ի նմա շի՛շ, ե- ո՛չ մի» : (Լ. Թո-ղը Յովհաննոս Լ:5)

«Ասիկա է այն պատգամը որ իրմէ լսեցինք ու ձեզի կ'իմացնենք, թէ՛ Աստուած լոյս է ու անոր մէջ բնաւ խաւար չկայ»:

«...Ե՛ւ եմ լո՛յս աշխարհի. որ Գայ պննի իմ՝ ընդ խա-ար մի՛ Գնասցէ. այլ ընկալցի պլո՛յսն կենաց » : (Յովհաննոս Ը:12)

« ...Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետեւս կու գայ, խաւարի մէջ պիտի չքալէ , հապա կենաց լոյսը պիտի ունենայ»:

«Դ՛ո՛ւ՛՛՛՛՛ ի՛նչ լոյս աշխարհի. ... ե- ո՛չ լո-ցանեմ ճրագ՝ ե- դնեմ ընդ Գրո-անա-, այլ ՚ի վերայ աշտանակի. ե- լոյս Գայ ամենեցո-ն՝ որ ՚ի Գանն իցեն : Լ՛յնպէս լո-սա-որեացէ լոյս յեր ա-աջի մարդկան, որպէսպի Գեացեն պարթա յեր Բարիս, ե- փա-ա-որեացեն պ-այր յեր որ յերկնա է » : (Մարգէնոս Ե:14-16)

«Դո՛ք էք աշխարհի լոյսը. ... Ու ճրագը չեն վառեր եւ դներ գրուանի տակ, հապա աշտանակի վրայ որ լոյս սայ բոլոր տանը մէջ եղողներուն: Այնպէս թող լուսաւորուի ձեր լոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործքերը ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է»:

Վերոյիշեալ համարները փաստ են թէ ամէն ինչ միայն ու միայն այդ «լոյս»ին արտայայտութիւններն են:

Նիւթը լոյսի «Ֆոթոն»ներու (photon) միջոցալ յառաջ եկած է: Անոնք կը թուին մանր զօրութեան «ծրար»ներ ներկայացնել, որ իրար զարնուելով

հիւլէնները կազմող վերոյիշեալ մասնիկները յառաջ բերած են: Ասոնց բազմատեսակ փոխադարձ ազդեցութիւններու հետեւանք տիեզերքը իր բոլոր բազմապատիկ տուեալներով՝ երեւոյթներով ի յայտ եկած է: Ուրեմն այս տուեալներու հիման վրայ պէտք է հաւատանք թէ տիեզերքի մէջ ամէն ինչ, ներառեալ մենք, միայն լոյս ենք՝ բայց նուազ թրթռացումով եւ աւելի կամաց ընթացող:

Գիտունները նաեւ փաստած են, թէ տիեզերքը տակաւին կ'ընդլայնի, կը տարածուի, հետեւաբար կայուն չէ: Աս ալ փաստ է թէ կար ժամանակ մը, որ ան գոյութիւն չունէր, ուրեմն ստեղծուած է: Էյնշտէյնի յարաբերականութեան տեսութիւնը (Einstein's relativity theory) լոյսի բացառիկ յատկութիւնները ցոյց տուաւ եւ առաջին անգամ ըլլալով նիւթական աշխարհէ անդին գտնուածներու մասին մեզի որոշ հասկացողութիւն մը պարզեւեց: Ան ցոյց տուաւ թէ նիւթականէն անդին ինչ որ կայ անարատ, անխառն, եւ գլուտ է: Լոյսի արագութիւնը մէկ երկվայրկեանի մէջ 300,000քմ. է: Գիտունները փաստած են, թէ երբ որեւէ բանի մը արագութիւնը լոյսի արագութեան մօտենայ, այդ բանին համար ժամանակը աւելի դանդաղ կ'անցնի: Նոյնպէս երբ արագութիւնը լոյսի արագութեան հասնի, այլեւս այդ արագութեամբ ընթացողին համար ժամանակը չ'անցնիր, հետեւաբար իրեն համար գոյութիւն ունենալէ կը դադրի: Լոյսի ֆոթօնը որ լոյսի արագութեամբ կ'ընթանայ, այդ ֆոթօնին համար ժամանակը չ'անցնիր, հետեւաբար ֆոթօնը ժամանակի դրութենէ դուրս ըլլալով լաւիտենական է: Քանի որ ֆոթօնին համար ժամանակը գոյութիւն չունի եւ ժամանակը չ'անցնիր, այդ ֆոթօնը տիեզերքի մէջ կրնայ միաժամանակ զանազան վայրեր գտնուիլ, հետեւաբար ան ամենուրեք է: Քանի որ բոլոր նիւթերը

այդ «լոյս»էն յառաջ եկած են, ուրեմն այդ նիւթէն կազմուած ամէն ինչ այդ լոյսէն կախեալ է եւ անոր տարբեր երեւոյթներն է: Հետեւաբար այդ լոյսը նաեւ ամենակարող է: Քանի որ բոլոր գիտութիւնը, որ անցեալին գիտցուած էր, ներկային կը գիտցուի եւ ապագային ալ պիտի գիտցուի լոյսի զօրութեամբ կը պահուի եւ կը փոխանցուի, ուրեմն լոյսէն դուրս որեւէ գիտութիւն գոյութիւն չունի: Հետեւաբար լոյսը ամենագէտ է:

Ճշմարտութիւնը այն է, թէ լոյսը Ֆիզիքական մակարդակի վրայ գոյութիւն չունի, բայց զարմանալիօրէն մենք զայն «տեսնելու» կարող ենք: Ամէն նիւթ երրատարած միջոցի մէջ կը գոյատեւէ եւ ծաւալ մը ունի: Երբ այդ առարկային արագութիւնը լոյսի արագութեան կը մօտենայ, անոր ծաւալը որոշող երեք տարածութիւններէն (լայնութիւն, երկայնութիւն եւ բարձրութիւն) մին՝ առարկային ընթացած ուղղութեան կողմը, կը կարճնայ: Իսկ երբ լոյսի արագութեան հասնի այդ տարածութիւնն ալ գէրօ «0» կ'ըլլայ: Քանի որ առարկային ծաւալն ալ երեք տարածութիւններու բազմապատկութեամբ կ'որոշուի, ուրեմն բոլոր թիւերը եթէ «0»ով բազմապատկուին արդիւնքը «0» կ'ըլլայ, հետեւաբար առարկան ալ կ'անհետանայ: Ֆոթօնը լոյսի արագութեամբ կ'ընթանայ, հետեւաբար ծաւալ չունի: Ուրեմն Ֆիզիքական աշխարհի վրայ իսկութեան մէջ գոյութիւն չունի, սակայն եւ այնպէս կը թուի թէ գոյութիւն ունի: Միթէ չե՞նք ըսեր թէ մեր այս արթուն ըսած գիտակցութեան մակարդակը երազ մըն է, պատրանքային է եւ գոյութիւն չունի: Նաեւ չե՞նք ըսեր թէ միայն Աստուած ճշմարտութիւն է:

Ֆիզիքական աշխարհի մէջ ամէն նիւթ խտութիւն (mass) մը ունի: Առարկային արագութիւնը որքան լոյսի արագութեան հասնի, անոր խտութիւնն ալ

այնքան կ'աւելնայ ու երբ լոյսի արագութեան հասնի իր խտութիւնն ալ անհուն կ'ըլլայ: Հոգ չէ թէ որեւէ նիւթի մը խտութիւնը որքան ցած եղած ըլլայ, երբ անոր արագութիւնը լոյսի արագութեան հասնի իր խտութիւնն ալ անհուն՝ անսահման կ'ըլլայ: Բայց Ֆոթօնը որ լոյսի արագութեամբ կ'ընթանայ անհուն խտութիւն չունի: Ուրեմն Ֆոթօնի խտութիւնը ի սկզբանէ «0» պէտք է եղած ըլլար: Հետեւաբար լոյսը իրականութեան մէջ Ֆիզիքական աշխարհի մէջ գոյութիւն չունի:


Ֆիզիքական աշխարհը եւ իր մէջ գտնուող ամէն ինչ երկու բեւեռներու՝ բացարձակ գոյութեան եւ բացարձակ չգոյութեան միջեւ կը գտնուին իրենց բոլոր յատկութիւններով: Երբ պարագան Ֆիզիքական գոյութենէ դուրս է, բոլոր յատկութիւնները կամ գոյութիւն չունին, կամ ալ անհուն են:

Ամբողջական բնագիտութեան Ֆոթօնի մասին մեզի տուած վերոյիշեալ յատկութիւնները՝ անարատ եւ զուտ (այսինքն անբիծ, սուրբ), անհուն, յաւիտենական, ամենուրեք, ամենակարող եւ ամենագէտ, կրօնքին մեզի սորվեցուցած Աստուծոյ յատկութիւններուն հետ նոյնը չե՞ն:

Այս վերեւի բնագիտութեան համառօտ մէջբերումը մեզի ցոյց կու տայ, թէ տիեզերքը իր բոլոր բովանդակութեամբ, ներառեալ նիւթը, «լոյս»է՝ զօրութեան ալիքներէ կազմուած են: Այս զօրութեան ալիքները թրթռացում կը ներկայացնեն: Բնագիտութիւնն ալ միթէ չ'ըսե՞ր որ «լոյս»ը՝ Ֆոթօնը թէ՛ մասնիկ (particle) է, թէ՛ ալ՝ ալիք, որ թրթռացում ունի:

Երբ կը խօսինք ձայնի թրթռացումն է որ կը սփռենք, բայց այդ սփռումը օդի թրթռացումով կ'ըլլայ, ուրեմն օդը թրթռացումին ենթախաւն է որ կը թրթռայ (substrate that vibrates): Երբ ջուրի ալիքները

Ջուրին վրայ կ'ընթանան, այս պարագային ալ ջուրն է ալիքին ենթախաւը: Բայց ելեկտրամագնիսական ճառագայթումներու թրթռացումը կը թուի առանց ենթախաւի ըլլալ, այսինքն թրթռացող ենթախաւ մը գոյութիւն չունի եւ թրթռացումը պարապութեան մէջ կ'ըլլայ: Բայց այս ըմբռնումը սխալ է, քանի որ գիտունները կ'ենթադրեն թէ անոնք ալ ենթախաւ մը ունին եւ այդ ենթախաւը «մութ զօրութիւն»ն է: Իսկ տիեզերական զօրութիւնը՝ «մութ զօրութիւն»ն ալ իր կարգին թրթռացում ունի, որ կը թուի պարապութեան մէջ ըլլալ (Տես ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՒ: 2-Ա ԵՒ Բ):




ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 2-Ա ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 2-Բ

2-Ա- Կեդրոնէն ընթացող շրջանակաձեւ ալիքներու ենթախաւը ինչպէս նաեւ **2-Բ-** ի մէջ իրենք ալ ունին իրենց կարգին աւելի փոքր ալիքային չափով թրթռացում:

Գիտունները սկսած են այս ուղղութեամբ պրպտումներու (Zero point energy) անուան տակ: Իրենց նպատակը այդ զօրութեան օգտուիլն է, բայց զօրութեան բնոյթը անգամ չեն գիտեր: Կը գուշակեն թէ այդ զօրութիւնը կը պարունակէ զանազան յաճախականութեամբ


Թրթռացումներ՝ մէկ ալիքի երկարութիւնը բոլոր տիեզերքը շրջելու չափ երկար, կամ աներեւակայելի չափով փոքր եւ այս երկուքին միջեւ եղող միւս բոլոր յաճախականութիւնները:

Այսօր գիտութիւնը մեզի ելեկտրամագնիսական ճառագայթող ալիքներու թրթռացումի յաճախականութեան (frequency) համապատասխանող շարքաւորում մը տուած է: (Տես ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՒՔ: 3-Ա ԵՒ Բ) Տեսանելի լոյսն ալ իր եօթը գոյներով այս շարքաւորումին մաս կը կազմէ: Այս ալիքները (waves), համապատասխան իրենց զանազան թրթռացումի յաճախականութեան, զանազան յատկութիւններ ունին: Աւելորդ է ըսել թէ այս ալիքները իրենց թրթռացումի որակին համաձայն որոշ տեղեկութիւն (information) պարունակելու եւ տեղափոխելու կարող են:



ՊԱՏԿԵՐ ԹԻՒՔ: 3-Ա


Ներկայ գիտցուած ելեկտրամագնիսական ճառագայթներու շարքաւորումը, ներառեալ տեսանելի լոյսը իր եօթը գոյներով



ՊԱՏԿԵՐ ԹԻՒՒ: 3-Բ

Թիւ 3-Ա ի զանազան ճառագայթներուն ալիքային երկարութիւնները եւ մէկ երկվայրկեանի մէջ թրթռացումի յաճախականութեան թիւը

Ձայնասփիւռի եւ հեռատեսիլի ալիքներուն տարածած տեղեկութիւններէն այս իրողութեան շատ լաւ տեղեակ ենք: Ալիքներուն լայնութեան կամ յաճախականութեան եղանակաւորումով (*amplitude or frequency modulation*) կարելի է այս տեղեկութիւնը արձանագրել: (Տես ՊԱՏԿԵՐ ԹԻՒՒ: 4)




ՊԱՏԿԵՐ ԹԻՒՒ: 4

Վերի պատկերը թրթռացումին լայնութեան եղանակաւորումը կը ներկայացնէ, իսկ վարի պատկերը՝ յաճախականութեան եղանակաւորումը

Ամենաբարդ ալիքներն անգամ «Ֆուրիէ վերլուծութեամբ» (*Fourier analysis*) կարելի է իրենց զանազան հիմնական պարզ թրթռացումներուն (*sine wave*)

վերածել: (Տես ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 5)



Պատկերին վերի բարդ թրթռացումը կարելի է իր հիմնական պարզ թրթռացումներուն վերածել, որ ներկայացուած է վարի մասին երեք պարզ թրթռացումներով

ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 5

Բայց գիտունները տակաւին «մութ զօրութեան» թրթռացումի յաճախականութեան մասին ոչինչ գիտեն:


Գիտունները նաեւ կ'ըսեն թէ տիեզերքի մէջ գտնուող բոլոր մարմինները՝ նիւթը եւ ներառեալ բոլոր աստղախումբերը (galaxies), իրենց բոլոր աստղերով եւ մոլորակներով, որոնք տեսանելի են, տիեզերքի միայն 5%-ը կը կազմեն: Գիտունները անոնց ցուցաբերած քաշողական ուժէն կը հետեւցնեն թէ կայ նաեւ անտեսանալի նիւթ մը, որուն բնոյթը կարող չեն գիտնալ: Զայն «մութ մարմին» (dark matter) կոչած են, որ տիեզերքի 25%-ը կը կազմէ: Իսկ մնացեալ 70%-ը միայն զօրութիւն (energy) կը պարունակէ, պարապութիւն մը չէ: Բայց չեն գիտեր թէ այս զօրութեան բնութիւնը ինչ է: Ճիշդ այս պատճառով ալ զայն «մութ զօրութիւն» (dark energy) կոչած են: Քանի որ բոլոր զօրութիւնները ալիքային թրթռացում են, հարկ է որ «մութ զօրութիւն»ն ալ ալիքային թրթռացում ըլլայ եւ այս զօրութեամբ է որ միւս բոլոր զօրութիւնները եւ նիւթը յառաջ եկած ըլլան: Տիեզերքի գիտցուած եւ տակաւին չգիտցուած բոլոր օրէնքները այդ զօրութեան մէջ են: Ինչպէս մարդու ուղեղային բջիջները

Հաղորդակցութեան օղակիւք մը կը կազմեն, նմանապէս, այս զօրութիւնն ալ բոլոր տիեզեքի մէջ օղակիւք մըն է եւ տիեզերքի ուղեղը համարուած է: (Տես ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 6 եւ 7)



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 6


Ուղեղային բջիջներու ու ջիւղերու Հաղորդակցութեան օղակիւք



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 7

Վերեւի պատկերը կը ներկայացնէ Չուիցերիոյ գիտնոններէն մէկուն եզրակացութիւնը՝ նկատմամբ «մութ զօրութեան» բոլոր տիեզերքի մէջ կազմած օղակիւքին, թափանցած ամէն ինչի, որով ամէն բան իրարու Հետ Հաղորդակցութեան մէջ է:

Փրինսթընի (Princeton) մէջ յատուկ «երկրագունդային գիտակցութեան ծրագրութիւն» (global consciousness project) անուան տակ փորձ մը կը կատարեն: Աշխարհի 65-70 զանազան վայրերու մէջ դրուած որոշ յայտնակներ (sensors) պատահական թիւեր կ'արտադրեն (random number generator) եւ այդ թիւերը՝ տեղեկութիւնները Փրինսթընի համակարգիչը ամէն երկվայրկեան կը հաւաքէ: (Տես ՊԱՏԿԵՐ ԹԻՐ: 8) Ջարմանալին այն է, որ իրենք ալ չեն գիտեր, թէ այդ յայտնակները այդ թիւերը ի՞նչպէս կ'արտադրէին եւ այդ տեղեկութեան աղբիւրը ի՞նչ էր:



ՊԱՏԿԵՐ ԹԻՐ: 8

Փրինսթընի համակարգչի զանազան վայրերէն հաւաքուած թուային տեղեկութիւններու ներկայացումը

Իրենք վստահ չեն, բայց կը խորհին թէ այդ տեղեկութեան հիմքը կամ ալը բնագիտութեան գիտցուած որեւէ տեսակի զօրութիւններէն մին չէ: Իրենք նշմարած են թէ որեւէ լուրջ բնական կամ մարդկային մեծածաւալ աղէտէ մը առաջ, որու

ընթացքին բազմաթիւ մարդիկ կը մահանան, այդ տեղեկութեան՝ թիւերուն քանակը կ'աւելնայ, այսինքն եկած եւ իրարու վրայ դիզուած թիւերուն գումարը կը բարձրանայ:


Տեսակէտ մըն ալ կայ, թէ այս տուեալները մարդոց ենթագիտակցութենէն յառաջ կու գան եւ շատ հաւանական է որ անոնք ընդհանուր մարդկութեան խորհուրդները կը ցոլացնեն եւ ալ աւելի հաւանական է որ փոխանակ խորհուրդներու, անոնց զգացումները կը ցոլացնեն: Իրենց եզրակացութիւնը այն է, թէ ամէն ինչ իրարու հետ հաղորդակցութեան մէջ է եւ իրարու կապուած է: Այս թիւերն ալ կերպով մը ընկերային գիտակցութեան (social consciousness) կը համապատասխանեն: Անոնք նաեւ կը խորհին թէ տեղեկութեան ազդավայր (information field) մը կայ ուրիշ այդ թիւերը կու գան: Իրենց նպատակներէն մին, ապագային աղէտները տակաւին չպատահած, զանոնք կարենալ գուշակելն է:

Եթէ այս «մութ զօրութիւնը» տիեզերքի ուղեղը կը ներկայացնէ, ուրեմն հարկ է որ ամէն ինչ իրարու հետ կապ ունենայ եւ հաղորդակցութեան մէջ ըլլայ: Արդեօք կարելի՞ է որ մարդոց ընդհանուր կենցաղին համապատասխան, իրենց այդ միջավայրին մէջ զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը փոխուի եւ այդ փոխուած թրթռացումի մակարդակն ալ ազդէ բնութեան վրայ, տեղի տալով աղէտներուն: Եւ գիտուններն ալ անգիտակցաբար այդ յաճախականութեան փոփոխութեան արդիւնքներն են որ կ'արձանագրեն:

Ճափօնիոյ մէջ Մասարու Էմօթօ (Masaru Emoto) իր հետաքրքրական պրպտումներու հետեւանք ցոյց տուած է թէ երաժշտութեան եւ մարդկային թրթռացումի զօրութիւնը՝ խորհուրդ, խօսք, գաղափար, ինչպէս

կ'ազդեն ջուրի մասնիկներուն (molecules) վրայ: Պէտք է նկատի ունենալ, թէ աշխարհի եւ մարդու մարմնոյն 70%-ը ջուր է:

Էմօթօ ցոյց տուած է թէ ինչպէս կաթիլ մը սառած ջուրը կ'ազդուի մեր խօսակցութենէն, մեր հանած ձայներէն, ներիմացութենէն, եւ գիտակցութենէն: Ինք ջուրը զանազան կացութիւններու ենթարկելէ յետոյ այդ ջուրէն կաթիլ մը սառեցուցած է եւ սառած ջուրին կազմած բիւրեղը մասնաւոր մանրադիտակով (dark field microscopy) քննած եւ նկարած է: Ինք ցոյց տուած է բազմատեսակ բիւրեղի կազմուածքներ եւ անոնց վրայ միջավայրին ունեցած ազդեցութիւնը:




ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 9Ա-դ

Վերի կարգը (ձախ) Պախի (Bach), (աջ) Պէթովէնի (Beethoven) երաժշտութեան, իսկ վարի կարգը (ձախ) դարմանիչ եւ (աջ) աղմուկալի (Heavy metal) երաժշտութեան յառաջ բերած բիւրեղներու նկարներն են

Ինչպէս ձիւնի փաթիլներէն շատ լաւ գիտենք թէ երկու փաթիլ իրարու չեն նմանիր, նոյնպէս ալ ջուրը երբ սառի կարող է բազմատեսակ բիւրեղներ կազմել:


Ձիւնի եւ սառին տարբերութիւնը այն է, թէ ձիւնը սառած շոգի է, իսկ սառը՝ սառած ջուր: Պատկեր թիւ 9ա-ը նկարներուն մէջ ցոյց տրուած է անոր նկարած գանազան բիւրեղները: Ինք նկարած է ջուրի բիւրեղներ, որոնք ջուրին սառեցումէն առաջ ենթարկած էր գանազան երաժշտական նուազի (Տես ՊԱՏԿԵՐՆԵՐ: 9 ա-ը), ինչպէս նաեւ գանազան խորհուրդներու ազդեցութեան (Տես ՊԱՏԿԵՐՆԵՐ: 9 ե-ը): Ան, այս վերջինին նկարահանումէն առաջ, իր գաղափարը թուղթի մը վրայ գրած է ու գայն ջուրով լեցուն ամանի մը վրայ փակցուցած: Օր մը այդպէս ձգելէ յետոյ ջուրը սառեցուցած է:



ՊԱՏԿԵՐ Թ-Ի: 9Ե-ը

Վերի կարգը (ձախ) «Շորհակալ եմ», (աջ) «Սէր եւ գնահատանք», իսկ վարի կարգը կը բաղդատէ (ձախ) «Չիս Հիւանդ կ'ընես, քեզ պիտի սատկեցնես» եւ «Շորհակալ եմ» գրութիւններու յառաջ բերած բիւրեղներու նկարները


Ան նկարած է նաեւ խօսքին ազդեցութիւնը: Բաղդատութեան համար նախ նկարած է ապականած ջուրի եւ մաքուր ջուրի բիւրեղներ: Ապա, ապականած ջուրը Պոլտտայական ճգնաւորի մը աղօթքին ենթարկելէ յետոյ դարձեալ սառեցուցած է եւ նկարած: (ՏԵՍ ՊԱՏԿԵՐԱԵՐ: 9 Թ-Վ) Այս արդիւնքները ցոյց կու տան, թէ մեր ամենապարզ խորհուրդները, խօսքերը եւ նոյնիսկ արարքներն անգամ իրենց ազդեցութիւնները ունին, թէ՛ աշխարհի եւ թէ՛ անհատներու վրայ, քանի որ թէ՛ աշխարհի եւ թէ՛ մարդուն 70%-ը ջուր է:




ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 9Թ-Վ

Վերի կարգը (ձախ) մաքուր, եւ (աջ) ապականած ջուրերու կազմած բիւրեղներու նկարները, իսկ վարի կարգն ալ կը բաղդատէ (ձախ) ապականած ջուրը աղօթքէ առաջ եւ (աջ) նոյն ջուրէն աղօթքէ ետք յառաջ եկած բիւրեղներու նկարները

Գերմանիոյ Շտուտկարտ քաղաքի (Stuttgart) «էրօսփէյս» հիմնարկութեան (aerospace institute) մէջ ալ հետաքրքրական պրպտում մը տեղի ունեցած է: Կարգ մը աշակերտներ նոյն ամանի ջուրէն, նոյն վայրկեանին ջուր առած եւ կաթիլ մը կազմած ու զայն նկարած են: Զարմանալին այն է թէ իւրաքանչիւր աշակերտին ջուրի կաթիլին երեւոյթը միւսներէն տարբեր եղած է: Երբ նոյն աշակերտները յաջորդաբար մի քանի կաթիլներ եւս կազմած ու զանոնք նկարած են, իւրաքանչիւրին ստացած նկարը իր առաջին նկարին յար եւ նմանը եղած է: (Տես ՊԱՏԿԵՐԱԵՐ: 10 Ա ԵՒ Բ) Ուրեմն անձի մը իր ունեցած զորութեան յաճախականութիւնը նոյնիսկ ազդեցութիւն ունի ջուրին վրայ, ինչ որ կը տեսնուի կաթիլին յառաջ բերած երեւոյթէն:



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 10Ա
Ջուրի կաթիլները



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 10Բ

Չորս տարբեր աշակերտներու (վերէն վար), չորսական տարբեր (ձախէն աջ) ջուրի կաթիլներու նկարները

Ուստի աղօթքը, եկեղեցւոյ խորհուրդները, ջրօրհնէքը, ծիսակատարութիւնները բոլորն ալ մեր վրայ կ'ունենան որոշ դրական ազդեցութիւններ: Նոյնպէս ալ մեր խորհուրդները եւ զգացումները ունին իրենց համապատասխան ազդեցութիւնը թէ՛ միջավայրին եւ թէ՛ բնութեան վրայ:

Ան որ գիտութիւնը «մութ զօրութիւն» (dark energy) կոչած է, դարեր առաջ Յիսուս գայն Սուրբ Հոգի կոչած էր: Գիտութիւնը կ'ըսէ, թէ զօրութիւնը «միականութենէ» (singularity) բխած է: Միթէ կրօնքն ալ չ'ըսե՞ր թէ Ս. Հոգին Հօրմէն բխած է:

«... ո՞րչափ է» ասուել Ըսոյ Յեր յերկնից Գացէ Բարձր անոցիկ, որ խնդրեանն 'ի նմանէ»: (Ղուկասոս ԺԷ:13)

«... ո՞րչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգի՛ն պիտի ստչ անոնց՝ որ կը խնդրեն իրմէ»:

«Բայց յորժամ եկեացե մեծաբարեշն, զոր է՛ս
 առաքելացից յեւ ՚ի Ըօրե զԸօրե՛ն
 ճշմարտութեան որ է Ըօրե ելանե նա՛
 վկայեացե վասն իմ» : (Յովհաննոս ԺԵ:26)

«Բայց երբ Մխիթարիչը գայ՝ որ ես Հօրմէն պիտի
 ղրկեմ ձեզի, ճշմարտութեան Հոգին՝ որ կը բխի
 Հօրմէն, անիկա՛ պիտի վկայէ իմ մասիս»:

«Եյսոսուելոյեւ որ անարգե ո՛չ զմարտ
 անարգե այլ զԵսոսուած որ եւ եր զԸօրե՛ն
 սորբ ի յեւ» : (Լ. Թեոսագոնիկեցիս Դ:8)

«Ուստի ան որ կ'անարգէ՝ կ'անարգէ ո՛չ թէ մարդ մը,
 հասկ Աստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ սուսա մեզի»:

Մարդու միտքը Աստուած հասկնալու կարողութիւնը չունի: Նմանապէս գիտութիւնն ալ այդ զօրութեան ազդէ հասկցած եւ գայն «միականութիւն» (singularity) կոչած է: Աստուածաշունչն ալ միթէ նոյնը չ'ըսե՞ր: Աստուած մէկ է, առանց երկրորդի:

«... որեր Եսոսուած մեր՝ Տէր մի է» :
 (Երկրորդ օրինաց Զ:4)(Մարկոսի ԺԲ:29)
 «... Տէրը՝ մեր Աստուածը միակ Տէրն է»:

«... զի շի՛ն ո՛վ Եսոսուած բա՛ցի միոյն» :
 (Լ. Սորնիստիս Բ:4)
 «... եւ թէ ուրիշ ոեւէ Աստուած չկայ՝ մէկէն գատ»:

«Մի Եսոսուած եւ Հայր ամենեցոսն, որ ՚ի
 վերայ ամենայնի, եւ ընդ ամենեանն, եւ
 յամենեանն ՚ի մեւ» : (Եփեսոսցիս Դ:6)

«Մէկ է Աստուած եւ բոլորին Հայրը, որ բոլորէն վեր,
 բոլորին հետ եւ ձեր բոլորին մէջն է»:

« ... *զի Լարցասնէս զիս զԲարոսյ, մի է Բարի. ...* » : (Մարբէնոս ԺԹ:17)

« ... Ինչո՞ւ բարի կը կոչես զիս. մէկէն զատ բարի չկայ, որ Աստուած է ... » :

« ... *Զի՞ սսէս զիս Բարի, շի՛ն ո՛վ Բարի՝ Բայց մի Աստուած Լայր* » : (Մարկոս Ժ:18)

« ... Ինչո՞ւ բարի կը կոչես զիս. մէկէն զատ բարի չկայ, որ Աստուած է » :

Ինչպէս բնագիտութիւնը կ'ըսէ, թէ «մեծ պայթում»ով «մոլթ զօրութիւնը» ամենուրեք սփռուեցաւ եւ տիեզերքը իր բոլոր տուեալներով կազմուեցաւ, նմանապէս ալ կրօնքը կ'ըսէ, թէ Ս. Հոգին իր զօրութեամբ Հօրմէն ըզխաւ եւ նիւթական աշխարհն ալ իր բոլոր տուեալներով, ներառեալ մարդը, այդ զօրութեան արտայայտութիւնն է: Իսկ նիւթական աշխարհի մէջ Աստուծոյ արտայայտութիւնն ալ միթէ Քրիստոս՝ Աստուծոյ Որդին չէ՞: Այլապէս, Աստուածաշունչը դուք Աստուծոյ որդիներ էք պիտի չըսէր:

« *Սոյն ինչն Ըոգին վկայէ Ըոգոսյս մերոմ, եթէ եմէ որդի՞. սպա ե- ժառանգի՞. ժառանգի՞ Լստո-ժոյ՝ ե- ժառանգակիցի՞ Բրիստոսի. ...* » : (Հոգմայեցիս Ը:16-17)

«Նոյնինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգին հետ՝ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. եւ եթէ զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... » :

« *Տե՛սէ՛ն՝ որպիսի՛ սեր շնորհեաց մեզ Լայր, զի որդի՛ն Լստո-ժոյ կոչեացո՞ւն մե՛ն* » : (Ը. Յովհաննոս Գ:1)

«Տեսէ՛ք թէ Հայրը ինչպիսի՛ սէր շնորհեց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ զաւակներ կոչուինք. ...»:

Այդ զօրութիւնը մեր մէջն ալ չէ՞: Այդ զօրութիւնը մեր կեանքը չէ՞: Հարկաւ մեզմէ կախեալ է, թէ ինչ չափով կ'արտօնենք որ այդ զօրութիւնը մեր մէջ հոսի: Եթէ այս իրողութիւն մը չըլլար, Աւետարանը հետեւեալը չէր գրեր.

«Եթէ ո՞չ Գիտէ՛, զի մարմին չէր Կաճար
 Են Հոգւոյն որ է 'ի Յէզ' զոր ունիէն
 յԼսարո-Ժոյ: Եւ շէ՛տ անձանց Կեր ...
 Գաւա-արարէ՛ զԼսարո-աԺ 'ի մարմինս
 չէր Եւ յոգիս չէր»: (Լ Առնճապիս Գ:19-20)

«Ձէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին, որ ձեր մէջն է, որ Աստուծմէ առած էք ու դուք ձեր անձին տէրը չէք. ... ուստի փառաւորեցէ՛ք Աստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջ, որոնք Աստուծոյ կը պատկանին»:

Գիտունները կ'ընդունին թէ այդ զօրութեան յատկութիւնները եւ ազդեցութիւնները չեն գիտեր: Բայց գիտուններէն մին կը գուշակէ թէ մէկ մեթր խորանարդ միջոցի մէջ, աշխարհի բոլոր ովկիանոսներուն ջուրերը եփելիք եւ շոգիացնելիք բաւականաչափ զօրութիւն կայ:

Ինչպէս ձայնը թրթռացում մըն է, նմանապէս բոլոր ալիքներն ալ թրթռացում են: Երբ զօրութիւն կ'ըսենք պէտք է հասկնանք թէ ալիքային թրթռացումի մասին է որ կը զրուցենք: Տիեզերական զօրութիւնը՝ Ս. Հոգին ալ միթէ նոյնը չէ՞: Աւետարանն ալ արդեօք չ'ըսե՞ր թէ սկիզբէն «Բան»ը կար եւ Բանը Աստուծոյ խօսքը՝ ձայնն էր: Հետեւաբար թրթռացում էր եւ ամէն ինչ Անով եղաւ: Բանը նաեւ մարդոց Լոյսը՝ հոգին էր եւ «Բանը» մարմին եղաւ:

«Ի սկզբանէ էր Բանն, է- Բանն էր առ
 Աստուած է- Աստուած էր Բանն. Սա էր
 'ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ
 նովա- էղէ- է- առանց նորա էղէ- է-
 ոչինչ որ ինչ էղէ-ն: Սովա- կէանի էր է-
 կէանի էր լոյս մարտկան է- լոյսն 'ի խա-
 ւարի անոյ լո-սա-որէ է- խա-ւար մնա ոչ
 էղէ- Հաստ- . Էր լոյսն ճշմարիտ որ լո-սա-
 -որ առնէ պամենայն մարտ որ Գալոց է
 յաշխարհ, Յաշխարհի էր է- աշխարհ
 նովա- էղէ- է- աշխարհ պնա ոչ թան-
 էա-... Ե- Բանն մարմին էղէ- է- թնակ-
 էաց 'ի մէջ է- տեառի պիտո-ա նորա, պիտ-
 -ոքս իբրէ- պիտառնի առ 'ի Հօրէ, լի շնոր-
 Հօի է- ճշմարտութեան»: (Յովհաննոս Ա:1-14)
 «Սկիզբէն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բա-
 նը Աստուած էր: Ասիկա սկիզբէն Աստուծոյ քովն էր:
 Ամէն բան անով եղաւ եւ առանց անոր բան մը չեղաւ՝
 ինչ որ եղաւ: Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն
 էր Եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր ու խաւարը
 զանիկա չհասկըցաւ: Աստուծմէ զրկուած մարդ մը կար,
 որուն անունը Յովհաննէս էր: Ասիկա վկայութեան հա-
 մար եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ, որպէս զի
 ամէնքը անոր միջոցով հաւատան: Ինք չէր այն Լոյսը,
 հապա եկաւ որպէս զի Լոյսին համար վկայէ: Ճշմարիտ
 Լոյսը ան է, որ աշխարհ եկող բոլոր մարդիկը կը լու-
 սաւորէ: Ինք աշխարհի մէջ էր, եւ աշխարհ անով եղաւ,
 բայց աշխարհ զանիկա չճանչցաւ:... Բանը մարմին եղաւ
 ու մեր մէջ բնակեցաւ, (եւ անոր փառքը տեսանք, Հօրմէն
 միածնի փառքին պէս,) շնորհքով ու ճշմարտութիւնով
 լեցուն»:

Արեւելքի մէջ ալ «Առում»ը (AUM) կամ (OM) ուրեմն այդ Աստուածային ձայնը՝ «Բան»-ը՝ խօսքը թրթռացումը կը ներկայացնէ: Ասկէ կու գայ «Ամէն» բառը, որ Աստուած կը ներկայացնէ: (Տես Լոյս ի Լուսոյ գիրքիս Դ գլուխը)


Ինչո՞ւ համար եկեղեցական պաշտամունքի արարողութիւնները եղանակաւոր են: Պաշտամունքը՝ այսինքն Աստուած պաշտել, Աստուծոյ հանդէպ եղած սիրոյ արտայայտութիւնն է: Մարդ իր չսիրածը չի կրնար պաշտել: Սիրոյ արտայայտութեան լաւագոյն կերպը զայն երգով արտայայտելն է: Միթէ սիրահարուած մարդ մը իր սիրուհիին իր սէրը ցայգերգելով (serenading) չէ՞ որ լաւագոյնս կը յայտնէ: Բայց պաշտամունքի երգեցողութիւնը ունի նաեւ յաւելեալ նպատակ, որ է ստեղծել մասնաւոր թրթռացումի մթնոլորտ մը, ուր ներկաները այդ թրթռացումին ազդեցութեան տակ կարենան իրենց թրթռացումի որակը բարձրացնել: Երգը ձայնի թրթռացում է որ երգեցողութեան միջոցին կը սփռուի այդ մթնոլորտին մէջ: Ճիշդ ասոր համար երգուած եղանակները, երգուած ձեւը եւ եռանդը մեծ դեր կը խաղան այդ ազդեցիկ մթնոլորտի ստեղծման մէջ: Վստահաբար ամէն անձ հետեւեալ փորձառութիւնները ունեցած է: Երբեմն եկեղեցի կ'երթանք եւ մեր մէջ որեւէ փոփոխութիւն չենք զգար, իսկ ուրիշ անգամ ալ վերացած կը զգանք: Այս տարբերութիւնները հարկաւ կախեալ են անհատին հոգեկան վիճակէն, ինչպէս նաեւ ստեղծուած մթնոլորտէն, որ կը ներկայացնէ այդ վերոյիշեալ երգեցողութիւններուն ստեղծած թրթռացումը: Իսկ եթէ ժամերգութիւնները կը կատարուին առ ի սովորութիւն, կամ իբր միայն աւանդութիւն, չեն կրնար այդ թրթռացումի մթնոլորտը ստեղծել, որովհետեւ մասնակցողները չեն երգեր որպէս իրենց հոգիէն

բղխող սիրոյ արտայայտութիւն, այլ՝ պարզապէս իբր պարտականութիւն: Նմանապէս գրաբարէ աշխարհաբար փոփոխութիւնն ալ իր ժխտական ազդեցութիւնը կ'ունենայ այդ թրթռացումին վրայ: Բառերուն իմաստները այնքան կարեւոր չեն, որքան է պաշտամունքին որակը եւ անկեղծութիւնը, որ կ'որոշէ թրթռացումի որակը:

Բարեբախտաբար անձեր գտնուած են, որոնք բնութեան մէջ ալիքային թրթռացումի յաճախականութեան ազդեցութիւնը պրպտած են: Առաջին անգամ Գերմանացի «էրնսթ Քլատնի»ն՝ (Ernst Chladni), թէ բնագէտ եւ թէ երաժիշտ, մետաղէ ափսէի մը վրայ աւազ ցանած եւ իր ջութակին ճպոտը ափսէին եզերքը քսելով ափսէին որոշ յաճախականութեամբ մը թրթռալուն պատճառ եղած է: Ինք նշմարած է, թէ աւազի հատիկները տեղափոխուելով, թրթռացումի յաճախականութեան համաձայն զանազան ուրուագիծեր գոյացած են: Զարմանալին ան էր, թէ ամէն մի յաճախականութեան պատկերը միշտ նոյնը եղած էր, բայց տարբեր յաճախականութեան ուրուագիծերու պատկերները բոլորն ալ իրարմէ տարբերած էին:

Չուիցերեացի Հանս Ճէննի (Hans Jenny), մօտաւորապէս յիսուն տարի առաջ, աւելի զարգացնելով այս տեսակի պրպտումը, զանազան յաճախականութիւն ունեցող ձայնի թրթռացումներով աման մը ջուրի վրայ ջուրի ալիքներով զանազան բարդ ուրուագիծեր գոյացուցած է: Այս ուրուագիծերը ամենեւին պատահական չէին ըլլար եւ թրթռացումի նոյն յաճախականութիւնը օգտագործելով կարելի էր բոլորն ալ կրկին գոյացնել: Ինք նշմարած է, թէ ի յայտ եկած ուրուագիծերը բնութեան մէջ գտնուող շատ մը օրինակներուն՝ ինչպէս աստղախումբերու (galaxies) ձեւերը, ընձառիւծի մորթին օրինակը, ծաղիկներու ձեւերը կամ կրեայի

պատեանին վրայի գծագրութեան կը նմանէին: (Տես Պատկեր ԹԻԲ: 11)



Պատկեր ԹԻԲ: 11

Կրեայի պատեանին վրայի նկարը որ կը Համապատասխանէ թրթռացումով ջուրի վրայ յառաջ եկած ուրուագիծին

«Լոյս ի Լուսոյ» գիրքիս «Թուագիտութիւն» խորագրին տակ ալ (Գլուխ Ը-երկրորդ մաս) մանրամասն տեղեկութիւն տուած էի «ոսկեայ Համեմատութեան» (Golden ratio) կամ «Աստուածային Համեմատութեան» (Divine proportion) մասին, ինչպէս նաեւ Ֆիպոնաչչի թիւերու մասին, որ նաեւ «Ոսկեայ պարուրածեւ»ին (Golden Spiral) հետ սերտ կապ ունի: Այս վերջինները կարծէք բնութեան մէջ ամենուրեք՝ նոյնիսկ բջիջներու կորիզը կազմող «DNA»ներուն մէջ ներկայ են: (Տես Պատկեր ԹԻԲ: 12)



Պատկեր ԹԻԲ: 12
 «DNA»ի նշուած ձեւը, որ կը Համապատասխանէ բնութեան մէջ գտնուող «ոսկեայ պարուրածեւ»ին

Այս համեմատութիւններն ալ կը թուին ալիքային թրթռացումի որոշ յաճախականութեամբ կառավարուած ըլլալ, քանզի նոյն համեմատութիւնները ջուրի վրայ պարզապէս ձայնի թրթռացումի յաճախականութիւնը փոխելով կարելի էր ի յայտ բերել: Հանս ձէննի նաեւ ջուրին մէջ ալիւր խառնելով հեղուկը թանձրացուցած է եւ զարմանալի արդիւնքներ յառաջ բերած: Զանազան ձեւեր, ջուրի մակարդակէն շատ աւելի վեր բարձրացած, կարծէք ողջ էութիւններ, կը պարէին: Իսկ երբ ձայնը դադրեք, թանձր ալիւրոտ ջուրն ալ ամանին մէջ դարձեալ կը հանդարտէր: Հանս ձէննին այս գիտութիւնը «cymatics» կոչած է, որ յունարէնէ առնուած բառ մըն է եւ թրթռացում կը նշանակէ: Իրեն յաջորդող Ալէքսանտր Լաւդէրվասէր (Alexander Lauterwasser) գիրք մը հրատարակած է, որ այս յառաջ եկած ուրուագիծերու պատկերներուն հաւաքածոն է: Ինչպէս թանձր հեղուկը պարզ թրթռացումի հետեւանք ձեւեր յառաջ կը բերէ, արդեօք կարելի չէ՞ որ մենք ալ ստեղծագործութեան մէջ այդ Աստուածային զօրութեան թրթռացումին՝ Ս. Հոգիի զօրութեան մեր մէջ ներգործութեան արդիւնքն ենք: Միթէ մեր կեանքն ալ այդ թրթռացումին թանձրացած նիւթին մէջ յառաջ բերած պարը չէ՞: Միթէ Աստուածաշունչին մէջ «Աստուած մարդը հողէն շինեց» չէ՞ գրուած: Հողն ալ մեր թանձրացած նիւթը չէ՞:

«Եւ սրբուծ Տէր Աստուածս զմարդն Հող
յերկրէ. Եւ փշեաց յերեսս նորա շունչ
կենդանի, Եւ եղև մարդն յօգի
կենդանի»: (Օճոնոգի Բ: 7)

«Տէր Աստուած գեանի Հողէն ձեւակերպեց մարդը՝ անոր ուռնագերէն կեանքի շունչ փչեց. եւ մարդը ասլոող անձ եղաւ»:

«Եւ դարձցի Հողն յերկիր որպէս Եւ Էրն,
Եւ Հոգին դարձցի առ Լսարուստ որ Եր
պնա» : (Ժողովող ԺԲ:7)

«Այն ատեն Հողը գետինը պիտի վերադառնայ՝ ինչպէս
որ առաջ Հոն էր, Ու Հոգին Աստուծոյ պիտի
վերադառնայ, որ վայն տուաւ»:

Ամէն անձ, նոյնիսկ ամէն տեսակի կենդանի, պարզապէս այդ թրթռացումին յաճախականութեան տարբերութեան պատճառով իրարմէ կը տարբերին: Երբ այդ զօրութիւնը եւ հարկաւ զօրութեան հետ ալ իր թրթռացումը դադրի, մեր թանձր նիւթն ալ անշարժ կը մնայ: Մենք ասիկա մահ կը կոչենք, այդ զօրութեան եւ իր թրթռացումին անհատին թանձր նիւթին մէջ ներգործումին դադրումն ալ՝ հոգիի աւանդում: Մեզի համար իրողութիւնը այն կը թուի ըլլալ, թէ զօրութիւնը ամէն ինչի մէջ ամէն ժամանակ կը թափանցէ: Ուրեմն ան որ մենք մահ կը կոչենք միայն բարձր որակով թրթռացումի յաճախականութիւն ունեցող զօրութեան, այսինքն անհատին հոգիին, անձէն ներս ներգործութեան դադրիլը կը ներկայացնէ: Աս անձին զօրութեան մեծագոյն կամ հիմնական մասն է: Զօրութիւնը մասնիկներու եւ հիւլէներու համապատասխան թրթռացումի յաճախականութեամբ տակաւին մեռեալի մարմինին մէջ կը շարունակէ թափանցել, քանի որ գիտենք թէ երբ մարմինը կը տարբադադրուի մասնիկները (molecules) իրենց «պար»ը կը շարունակեն: Հայր Աստուած բոլոր ստեղծագործութեան մէջն է եւ բոլոր տիեզերքն ալ իր մարմինը կը ներկայացնէ: Աստուծոյ բարձրորակ զօրութեան մեր մէջ ներկայութիւնը մենք «հոգի» կը կոչենք: Իսկ իր այդ զօրութիւնն ալ «Ս. Հոգի» կը կոչենք: Իսկ այդ զօրութեան արտայայտութիւնն ալ նիւթական աշխարհի մէջ՝

Քրիստոս: Սուրբ Հոգիի զօրութիւնը իր բոլոր թրթռացումի յաճախականութիւններով տիեզերքի մէջ անխըտիր բոլորին համար առատօրէն կը հօսի: Մեզմէ կախեալ է, թէ իր զօրութեան թրթռացումին որ յաճախականութիւններէն մենք պիտի օգտուինք: Անասունները կը գործեն ըստ իրենց բնազդին, որովհետեւ կարողութիւնը չունին որոշելու եւ զատելու իրենց ներգործող զօրութեան որակը: Նոյնիսկ անասուններու մէջ անգամ կը տեսնենք բնոյթի տարբերութիւններ: Շատ հաւանական է, որ այս բնոյթի տարբերութիւնները զօրութեան թրթռացումի յաճախականութեան մանր տարբերութիւններ ներկայացնեն: Բայց Աստուած մարդը իր պատկերին համաձայն ստեղծեց, ուրեմն մարդը այդ զօրութեան բոլոր թրթռացումի յաճախականութիւններէն օգտուելու կարողութիւնը ունի: Բայց մարդը իր ազատ կամքով կ'որոշէ, թէ ինչ որակի զօրութեան իր մէջ ներգործութիւնը պիտի արտօնէ: Աս պարզապէս ուզելով կամ փափաքելով չ'ըլլար, այլ՝ իր կենցաղով: Եթէ բարձր որակով զօրութիւն կ'ուզէ, պարտ է համապատասխան կենցաղ ունենալ եւ իր խորհուրդ, խօսք ու գործքերով իր էութենէն՝ մարմինէն ներս այդ զօրութեան ներգործումը չխափանել: Անձի մը աշխարհիկ կեանքը՝ իր «պար»ը, իր բոլոր պատահարներով իր ունեցած կամ աւելի ճիշդ արտօնած զօրութեան որակին կը համապատասխանէ: Մարդ արարած այդ զօրութեան որակը մինչեւ Աստուածայայտնութիւն բարձրացնելու կարելութիւնը ունի: Միայն այն ատեն կրնայ ըսել.

«Ես եւ Հայր իմ մի եմք»: (Յովհաննոս Ժ:30)

«Ես եւ Հայրը մէկ ենք»:

Քանի որ մեր անհատական կեանքի բոլոր երեւոյթները այդ զօրութեան մեր անձերէն ներս ունեցած ազդեցութեան որակէն կախեալ են եւ այս զօրութեան

որակն ալ մեր կենցաղէն կախեալ է, հարկ է որ Ս. Հոգիի դէմ եղած հայհոյութիւնն ալ աններելի ըլլայ: Այս վերջինը տիեզերական անխախտելի օրէնքին՝ «ինչ որ ցանես ան կը հնձես»ին տարբեր մէկ արտայայտութիւնն է: Ինչպէս օրէնքը անխախտելի է, նոյնպէս ալ Ս. Հոգիի մեր անձերէն ներս ներգործումը չարտօնելը՝ հայհոյելն ալ, աններելի է:

Շատ յարմար է այս գիրքին մէջ գրուած «Ջրհան»ի պատմութեան տուած դասը հոս յիշենք. «Առատ ստանալէ առաջ, նախ պարտ ենք տալ: Ալ աւելի կարեւոր դաս մը եւս, որ հաւատքը տալուն մէջ մեծ դեր կը խաղայ»: Միթէ աս «ինչ որ ցանես ան կը հնձես» Աստուածային անխախտելի օրէնքին չի՞ համապատասխաներ:

Աշխարհի վրայի ամենամեծ տագնապը քաղաքականը չէ, այլ գիտակցութեան մակարդակի ցածութեան յառաջ բերած տագնապն է, որ տեղի կու տայ քաղաքական տագնապին: Մարդ իր զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը բարձրացնելու կարողութիւնը ունի: Աս ալ իր գիտակցութեան մակարդակի բարձրացման կը համապատասխանէ: Ս. Հոգին իր զօրութեամբ իր բոլոր շնորհները մեր վրայ տեղացնելու պատրաստ է, արդեօք ինչո՞ւ չենք արտօներ: Բնութեան մէջ ամէն ինչ իր ունեցած զօրութեան թրթռացումի յաճախականութեան համապատասխան ողջ է եւ ինքնութիւնը սահմանուած:

Գեղեցկութիւնը այս թաքուն օրէնքներուն արտայայտութիւնն է: Երբ միտքը խաղաղ ըլլայ, այսինքն ըստ Աւետարանի մաքուր սիրտ ունենայ, անձն ալ այդ զօրութեան իր մէջ ներգործութեան փորձառութիւնը ունենալու ալ աւելի պատրաստ կ'ըլլայ: Ինչպէս երբ ելեկտրականութեան թելերուն մէջ ընդդիմութիւնը (resistance) աւելնայ ելեկտրակա-

նութիւնը զօրութիւն (amperage) կը կորսնցնէ, նմանապէս Ս. Հոգիի զօրութիւնն ալ երբ մեր էութեան մէջ ընդդիմութիւններու կը հանդիպի, մեր մէջ ներգործող իր որակն ալ կը պակսի: Մենք ալ մեր զգայարանքներէն եկած տուեալներէ եւ աշխարհի շլացուցիչ «սա», «դա» եւ «նա»երէ պարտ ենք չազդուիլ եւ ներհայեցողութեամբ խորհուրդներու ողողումը հանդարտեցնել եւ կասեցնել, որպէսզի կարենանք այն զօրութեան հոսքին ընդդիմութիւնը վերցնել եւ զօրութեան որակը թէ՛ կարենալ բարձրացնել, թէ՛ ալ զայն զգալ:

«Երանի այնոցիկ՝ որ սորէ եւն սրտիւն, զի

նո՛խ զԼսարո՛ւս յի՛սցեն»: (Մարգէլուի Ե:8)


«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

Այսօր բժշկութիւնը փաստած է, թէ կրկնութիւնը ուղեղը եւ հետեւաբար միտքը կը մարզէ: Մտքի մարզումը ուղեղային բջիջներու միջեւ նոր հաղորդակցութեան կապեր (synapse) յառաջ բերելով եւ նաեւ նոր էլեկտրական, տարրաբանական եւ բջիջային շղթայումներ կազմելով կ'ըլլայ: Այդ շղթայումները անհատի կեանքի տեւողութեան ընթացքին կը գոյատեւեն: Ուղեղային այս յատկութիւնը ջղային ճկունութիւն (neuroplasticity) կը կոչուի: Անցեալին, նախակրթարանի եւ միջնակարգի մէջ, աշակերտներուն ոտանաւոր գոց՝ անգիր սորվիլ կը ստիպէին: Կարեւորը գոց սորվածը չէր, այլ գոց սորվիլն էր: Գոց սորվելու համար աշակերտը պարտ էր իր միտքը կարգացած նիւթին վրայ կեդրոնացնել, զայն քանիցս կրկնելով: Նմանապէս, մենք ալ, այն զօրութեան հոսքին դէմ եղած ընդդիմութիւնը պակսեցնելու համար պարտ ենք բազմաթիւ անգամներ կրկնելու ա՛ն, ինչ որ պիտոյ է: Պարտ ենք մեր բնոյթը փոխել: Ան մէկ օրէն չի փոխուիր, այլ բազմաթիւ կրկնութիւններու կը

կարօտի: Պարտ ենք միշտ ուղիղ գործել, նոյնիսկ երբ այդ արարքը մեր ներկայ բնոյթին հակառակ ըլլայ, սակայն եւ այնպէս զայն բազմաթիւ անգամներ կրկնելով պարտ ենք կամաց կամաց մեր բնոյթը փոխել: Աս եւ նման արարքներ, ինչպէս խոկումով միտքը հանդարտեցնել «Չղային ճկունութեան» ինքնուղղեաց օգտագործումը կը ներկայացնեն: Անձ մը զօրութեան մակարդակի վրայ պարտ է իր կեանքի բոլոր պատահարները, ներառեալ վիշտը, առանց նախապաշարումի ընդունիլ:


Բոլոր տիեզերքը թրթռացում մըն է: Մենք կը կարծենք թէ միայն ձայնը՝ լսողութիւնը, ինչպէս նաեւ լոյսը՝ տեսողութիւնը մարդկային զգացական թրթռացումի փորձառութիւններ են, բայց ոչ մնացեալ միւս զգայարանքները: Այսօր փաստուած է թէ բոլոր զգայարանքներէ ստացուած փորձառութիւնները, ներառեալ համտեսելը եւ հոտոտելը, թրթռացումներու միջոցաւ է որ կ'ըլլան: Առաջուց կը կարծուէր թէ համտեսելը եւ հոտոտելը միայն քիմիական արդիւնք մըն էր: Կան նաեւ քիչ թիւով անձեր որ ձայնը իբր գոյն կը տեսնեն եւ ձայնին թրթռացումի յաճախականութեան համեմատ տարբեր գոյներ կը տեսնեն: Աս «synesthesia» կը կոչուի: Տիեզերքի այդ թրթռացումը՝ զօրութիւնը տիեզերքի ուղեղն է: Ան նաեւ մեր ներքին աշխարհին եւ արտաքին աշխարհին միջեւ եղած կապն է: Խորհուրդները մեզ այդ զօրութեան գիտակցութենէն կը հեռացնեն: Օրինակի համար վախը եւ սէրը պատճառ կ'ըլլան որ ուղեղն ալ կացութեան համապատասխան երկու տարբեր տեսակի բջիջային կապեր հաստատէ: Այս կացութիւնները պատճառ կ'ըլլան որ տարբեր զօրութեան թրթռացումի յաճախականութիւններու ճամբան բանան: Զօրութիւնը ինքնին չէզոք, անսահման եւ յաւիտենական է:

Մօտաւորապէս 30 տարի առաջ «fractals»-ի գիւտը եղաւ: Ըստ այս գիւտին ամբողջութեան ամէն մի մասին մէջ կրկնուած է նաեւ ամբողջութիւնը: (ՏԵՍ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՒՔ: 13Ա ԵՒ Բ ԵՒ 14)



ՊԱՏԿԵՐ ԹԻՒՔ: 13Ա

«Fractals»-ի օրինակ մը. վերեւի պատկերին մէկ մասին մէջ կրկնուած է մեծ պատկերը, ինչպէս նաեւ այդ մասին մէկ մասին մէջ ալ դարձեալ ...



ՊԱՏԿԵՐ ԹԻՒՔ: 13Բ


Պատկեր 11Ա-ի նման տարբեր օրինակ մը



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 14

«Fractals»-ի օրինակ մը եւս. բնութեան մէջ ալ բուսական աշխարհէն տերեւ մը. լման տերեւին միայն մէկ մասը կը նմանի տերեւին ամբողջութեան եւ անոր ալ մէկ մասը դարձեալ կը նմանի տերեւին ամբողջութեան...

Բայց այդ իրողութիւնը ընդհանուր առմամբ բազմաթիւ անպէտ մասերով մեզմէ ծածկուած է: Այնքան հետաքրքրական գիւտ մըն էր, որ նոյնիսկ օրուայ օրաթերթերէն մին շաբաթը անգամ մը գունաւոր պատկեր մը կը հրատարակէր, որ բանի մը չէր նմաներ: Բայց եթէ անտեսելով բոլոր անպէտ մասերը, ուշադրութեամբ պատկերին վրայ կեդրոնանայինք, յանկարծ երրատարած (3 dimensional) պատկեր մը ի յայտ կուգար (Տես ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՒԷ: 15Ա ԵՒ Բ ՈՒ 16Ա ԵՒ Բ): Այս «fractals»-ի գիւտին համաձայն կը թուի թէ մեծաշխարհայինը (macrocosm) մանրաշխարհայինին մէջ (microcosm) ներկայացուած է եւ բոլոր ստեղծագործութեան պատճառն է: Միթէ արեւը իր մոլորակներով եւ հիւլէի մը կորիզը իր ելեկարոններով, մէկը մեծ եւ միւսն ալ փոքր, նոյն երեւոյթը չե՞ն ներկայացներ:




ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 15Ա

Ան որ կարելի է տեսնել պատկեր 15Բ-ի մեջ



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 15Բ

Ջուրին յատակի մասին մեջ նայուաքքի որոշ ձեռով մը, կարելի է թիւ 15Աի մեջի չորս ձուկերու երրատարած պատկերը տեսնել



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 16Ա

Ան որ կարելի է տեսնել պատկեր 16Բի մեջ



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 16Բ

Կանանչութեան մասին մեջ, նայուաքքի որոշ ձեւով մը, կարելի է թիւ16Աի մեջի երեք ծառերուն եւ ձիին երրատարած պատկերը տեսնել

Ուրեմն Աստուծոյ ամէն մի անհատի մէջ ներկայութիւնը զարմանք պէտք է պատճառէ: Ինչպէս Աստուած բոլոր տիեզերքի մէջ թափանցած է եւ անոր Հոգին է, նմանապէս մեր հոգին ալ մեր մարմինին բոլոր մասերուն մէջ թափանցած է^օ: Աստուծոյ պատկերին նման ստեղծուած ըլլալը աս է: Բայց այդ մեր հոգին Աստուծոյ Հոգին է, քանի որ մենք ալ ստեղծագործութեան մէջ ենք եւ Աստուծոյ Հոգին մեր մէջ ալ թափանցած է: Մեզի կը մնայ անտեսել այն բոլոր անպէտ տուեալները (խորհուրդները, զգացումները եւ ցանկութիւնները), որպէսզի տեսնենք Աստուծոյ ներկայութիւնը՝ Քրիստոս, ամէն մի անհատի մէջ:

Այսօր մարդիկ լոյսի միջոցով կարողացած են ողջագիր (hologram) ստեղծել: Որոշ խանութներ անձի ողջագիրեր կ'օգտագործեն: Անոնք իսկական մարդու պէս խանութին դուռը կը բանան եւ յաճախորդները ողջունելով զանոնք ներս կը հրաւիրեն: Կարգ մը յաճախորդներ զանոնք իսկական մարդ կարծելով խաբուած են:

Միթէ մենք ալ այս աշխարհի համար չենք ըսեր թէ պատրանքային է: Այս աշխարհն ալ մեծաշխարհային չափի վրայ ստեղծուած ողջագիր մը չէ^օ: Չենք ըսեր թէ միայն Աստուած ճշմարտութիւնն է: Արդեօք ասոնք միայն բառացի կ'ըսենք եւ մեր ըսածին չենք հաւատար: Միայն գիտակցութեամբ ճշմարտութիւնը կարելի է հասկնալ, քանզի գիտակցութիւն եւ ճշմարտութիւն նոյնն են: Միայն խաղաղ միտքով ճշմարտութիւնը կարելի է հասկնալ: Ստեղծիչը եւ ստեղծուածը մէկ են: Յիսուս այս հասկացողութիւնը եւ փորձառութիւնը ունէր, հետեւաբար ըսաւ.

«Ես եւ Հայր իմ մի եմ» : (Յովհաննէս Ժ:30)

«Ես եւ Հայրը մէկ ենք»:

Կեանքը եւ մահը, կամ անձը եւ ուրիշ անհատ մը բոլորն ալ նոյնն են եւ իրարմէ տարբերութիւն չունին: Երբ կ'երագենք, այդ երագին ստեղծիչը ո՞վ է: Երագը մեր մէջ ի յայտ կու գայ եւ մեր մէջ ալ վերջ կը գտնէ: Մենք ալ մեր բոլոր երագներուն մէջ չե՞նք: Բայց մեր երագներուն մէջ ներկայ ըլլալով եւ զգացումներ ունենալով հանդերձ, մենք զմեզ ամենեւին մեր երագներուն մէջ չենք տեսներ: Այս մեր «արթուն» կոչեալ կեանքն ալ երագ մըն է եւ մենք մեր ճշմարիտ հոլ-թիւնը՝ երագը երագողը, այս երագին մէջ չենք տեսներ, ոչ թէ տեսնելու կարողութիւնը կամ կարելիութիւնը չունինք, այլ մոռցած ենք, թէ տեսնելու եւ գտնելու արժանի բան մը կայ: Այս մոռացկոտութենէն եւ «քունէն»՝ երագէն պարտ ենք արթննալ: Ինչպէս վերոյիշեալ պատկերներուն (ԹԻՒՔ: 13 և 14) խառնակ գոյներուն մէջ պահուած պատկերը տեսնել մասնաւոր ճիգի (pattern recognition) կը կարօտէր, մենք ալ պարտ ենք անպէտ խոհուրդներու մէջէն մեր ճշմարիտ հոլթիւնը՝ Քրիստոս ճանաչել: Կրօնքի նպատակն ալ այս մասնաւոր ճիգը (pattern recognition) մեզի սորվեցնել է: Աս մեծաշխարհայինի եւ մանրաշխարհայինի միջեւ եղած կապը կը ներկայացնէ: Դրախտը «արթուն» ըլլալուն մէջն է: Աստուած մեր մէջն է, պէտք չէ Ձինք մեզմէ դուրս տեղ մը փնտռենք: Միտքը կեդրոնացնելով ներքին Քրիստոսի վրայ եւ անպէտ խորհուրդները եւ զգացումները, յուզումները եւ իղձերը զսպելով մեր մտային խաղաղութիւնը կարելի է գտնել: Աս այն խաղաղութիւնն է որ Յիսուս մեզի թողուց եւ ինք բացայայտ կ'ըսէ թէ պարտ ենք մեր միտքի խռովութիւնները եւ զանգիտութիւնները զսպել:

(«Միտք» բառը յաճախ «միտք»ի իմաստով գործածուած է Աւետարանին մէջ:)

«Խաղաղութիւնն ընդոսմ Յէս, պխաղաղութիւնն
 պիմ Գամ Յէս. ոչ որպէս աշխարհս Գայ՝ Գամ
 էս Յէս: մի խոռովեացինն ախրորէ Յէր, էս մի
 պանգիտեացէնն»: (Յովհաննոս ԺԴ:27)

«Ոսողաղութիւն կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս
 կու տամ ձեզի, ո՛չ թէ ինչպէս աշխարհս կու տայ՝ ես
 ձեզի կու տամ: Սրտերնիդ չխուովի ու չվախնայ»:

**Երբ կարենանք այդ խաղաղութեան տիրանալ, այն
 ատեն մենք ալ արժանի կ'ըլլանք Աստուծոյ որդիներ
 կոչուելու:**

«Երանի խաղաղարարաց, պի նո՛վա որդի՛
 Լսգոո՜շոյ կոչեացին» : (Մարգէնոս Ե:9)

«Երանի՛ խաղաղութիւն ընողներուն, վասն զի անոնք
 Աստուծոյ որդիներ պիտի կոչուին»:

**Հոս օգտակար կրնայ ըլլալ հետեւեալ փոխաբե-
 ռութիւնը (metaphore) ներկայացնել:**

**Ջուրը որպէս շոգի, հեղուկ կամ պինդ սառ
 վիճակի մէջ կրնայ գոյութիւն ունենալ: Երբ շոգի է
 չենք տեսներ եւ նոյնիսկ չենք գիտեր թէ օդին մէջ է:
 Երբեմն բամպակային ամպի ձեւով տեսարանին գե-
 դեցկութիւն կու տայ: Երբեմն ալ սեւ ու մութ ամպերու
 ձեւով փոթորիկի վախը կու տայ: Եթէ օդին խոնաւու-
 թիւնը զգայնօրէն աւելնայ, ան զգալի կը դառնայ եւ
 մեզ անհանգիստ կ'ընէ: Օդի մէջի շոգին երբ խտանայ,
 իբր անձրեւ կը տեղայ: Աս՝ կենսատու հեղուկ ջուրը
 կ'ըլլայ: Առանց ջուրի կեանք գոյութիւն չի կրնար
 ունենալ: Ջուրը նաեւ ամէն ինչ կը մաքրէ: Երբ զայն
 աւելի պաղեցնենք ան աւելի կը խտանայ եւ հաստա-
 տուն մարմնի կը վերածուի, որ սառ կը կոչենք: Սառը
 մէկ նպատակ ունի՝ հալիլ ջուր ըլլալ եւ յետոյ
 շոգիանալ եւ օդին մէջ լուծուիլ: Սառը որոշ օգտակար**

նպատակներու համար կը գործածենք, բայց ընդհանուր առմամբ կը ջանանք հայեցնել որպէսզի արկածներու եւ հետեւաբար վնասներու պատճառ չըլլայ: Ըստ բնագիտութեան օրէնքներուն, լաւ գիտենք, թէ երբ ջուրի մասնիկներուն թրթռացումի յաճախականութիւնը բարձրանայ ան կը շոգիանայ: Այդ յաճախականութիւնը որքան նուազի ջուրն ալ այնքան կը խտանայ: Նախ հեղուկ կ'ըլլայ, իսկ աւելի վերջ ալ պինդ սառ: Քանի ջերմութիւնը բարձրանայ թրթռացումի յաճախականութիւնն ալ կը բարձրանայ, իսկ քանի ջերմութիւնը նուազի՝ թրթռացման յաճախականութիւնն ալ կը նուազի:

Հարիւրամասն (centigrade) ջերմաչափի վրայ «0°»-ին տակը -273.15° կը ներկայացնէ «0°» Քելվինը (Kelvin), որ կը կոչուի բացարձակ (absolute) «0°»: Ըստ եղած փորձերու եւ պրպտումներու մարդիկ կարողացած են «0°» աստիճան Քելվին պաղութեան բաւական մօտենալ, բայց չեն կրցած «0°»-ին հասնիլ: Այդ մակարդակին, մասնիկները, իրենց թրթռացումներուն ծայրահեղ նուազման պատճառով, կը սկսին լուծուիլ եւ իրենց յատկութիւնները կորսնցնել: Հեղուկ կ'ըլլան յատուկ յատկութիւններով: Մին գերհաղորդիչ (superconductivity) ըլլալն է, այսինքն իրենց մէջ երեկտրականութիւնը կը հոսի առանց որեւէ ընդդիմութեան, միւսն ալ գերահոսանուտութիւնն (superfluidity) է, այսինքն հեղուկ մը որ բնաւ մածանութիւն (viscosity) չունի եւ աշխարհի ձգողական ուժին ենթակայ չըլլալ կը թուի: Ուրեմն այն ինչ որ գոյութիւն ունի թրթռացումի հետեւանք է եւ իրենց յատկութիւններն ալ նաեւ կը համապատասխանեն այդ թրթռացումին:

Այս ջուրի մէջբերումը օրինակ մըն է աւելի լաւ հասկնալու համար մարդու, ինչպէս նաեւ տիեզերքի Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւնը: Ան նաեւ

օգտակար կրնայ ըլլալ հասկնալու համար Երրորդու-
թեան գաղափարը: Այս փոխաբերութեան (metaphore)
մէջ շոգիացած ջուրը Հայր Աստուածը կը ներկայացնէ:
Զրաշոգին տեսանելի չէ, բայց հոն ներկայ է եւ բոլոր
օղին մէջ թափանցած: Թէեւ Աստուած ալ տեսանելի չէ,
սակայն բոլոր ստեղծագործութեան մէջ թափանցած է,
այսինքն բոլոր ստեղծագործութիւնը իր մարմինը կը
ներկայացնէ: Երբ ամպերը կը տեսնենք գիտենք թէ Ան
հոն է: Ուրեմն Ան իր մէջ ունի գիտակցութիւն,
գեղեցկութիւն, իմաստութիւն եւ ճշմարտութիւն:

Ինչպէս խոնաւութիւնը տեսանելի չէ, բայց երբեմն
զգալի, նոյնպէս ալ, երբեմն Աստուծոյ «հպում» ինչ է որ
կ'արժանանանք որ մեզ երկիւղի մէջ կը ձգէ: Ինչպէս
շոգին խտանալով ջուրի կը փոխուի եւ որպէս անձրեւ
երկիրը կը ջրէ ու թէ՛ բոյսերուն եւ թէ՛ շնչաւոր
էակներուն կեանք կը շնորհէ, նմանապէս Ս. Հոգին ալ՝
Հայր Աստուծոյ զօրութիւնը, տիեզերքի մէջ «կ'անձ-
րեւէ» կը հոսի կեանք շնորհելով բոլորին՝ ամենապարզ
հիւլէն մինչեւ ամենամեծ կենդանին: Երբ զօրութեան
թրթռացումին յաճախականութիւնը կը նուազի,
զօրութիւնը աւելի կը խտանայ եւ պինդ մարմինները
յառաջ կու գան: Նմանապէս Ս. Հոգիի զօրութեան
խտացումով աշխարհ իր բոլոր երեւոյթներով, ինչպէս
նաեւ միւս բոլոր տեսանելի տիեզերքի ստեղծագոր-
ծութիւնները յառաջ եկած են: Զօրութեան այս արտա-
յայտութիւնը Ֆիզիքական գետնի վրայ Քրիստոս կը
կոչենք, որ Ֆիզիքական աշխարհի մէջ Աստուծոյ
արտայայտութիւնն է: Բոլոր ստեղծագործութեան մէջ
Աստուած մարդուն տուած է բացառիկ կարողութիւն,
որպէսզի ան այդ կարողութեամբ գիտակցի Աստուծոյ
այս արտայայտութեան՝ Քրիստոսի ներկայութեան,
այդ յայտնութիւնը իրականացնելով իր անձին մէջ:
Ինչպէս սառը իր թրթռացման փոփոխութեան պատ-

ճառով կը շոգիանայ եւ օդին մէջ կը լուծուի, մեզի ալ պարտ է մեր թրթռացման յաճախականութիւնը ինչպէս նաեւ գիտակցութեան մակարդակը բարձրացնել, որպէսզի մենք ալ սրբանանք եւ Աստուծոյ մէջ լուծուինք: Այն ինչ որ շոգիին մէջն է, մէջն է նաեւ ջուրին եւ սառին: Աստուած ալ մեր մէջ ներկայ է: Ինչպէս ալեկոծ՝ թրթռացող, հոսող ջուրը չի սառիր, կամ դժուար կը սառի, մենք ալ պարտ ենք մեզ ներգործող զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը եւ հոսքը աւելցնել: Աս կարող ենք իրականացնել անոր հոսքին դէմ ընդդիմութիւնները անհետացնելով՝ Աստուածահաճոյ կենցաղ մը կերտելով:

Հոս յիշենք Վիլեամ Պլէյքի հետեւեալ խօսքը. «Աշխարհը տեսնել հատիկ մը աւազին մէջ եւ երկինքն ալ վայրի ծաղիկին մէջ: Մէկ ձեռքի ափին մէջ բռնել անսահմանութիւնը եւ մէկ ժամուայ մէջ ալյալտեսականութիւնը»:



ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Մարդը 24 տարրեր է յառաջ եկած է, որ կարելի է հետեւեալ ձեւով ներկայացնել.

Հինգ հիմնական տարրեր.

ա- Նիւթ,

բ- Ջուր,

գ- Օդ,

դ- Կրակ (ջերմութիւն)

ե- Եթեր (միջոց-space)

Հինգ աւելի նուրբ տարրեր՝ զգացումները

ա- Թանձր (Շօշափելով զգալ),

բ- Հեղուկ (համտեսել),

գ- Կազ (հոտոտել),

դ- Լոյս (տեսողութիւն)

ե- Ձայն (լսողութիւն)

Այս հինգ նուրբ տարրերուն համապատասխանող հինգ գործարաններ.

ա- Մորթ,

բ- Լեզու,

գ- Քիթ,

դ- Աչք

ե- Ականջ

Վերոյիշեալ հինգ գործարաններու առընթեր, յաւելեալ հինգ գործարան ու գործողութիւններ եւս կան .

ա- Խօսիլ (ձայնական լարերը (vocal chords),

բերանն ու շրթունքները:

բ- Շնչել (թոքերը)

գ- Մարսողութիւն (աղիքներու գործառնութիւն)

դ- Արտաքսում (երիկամունքներու գործառնութիւն-միզել)

ե- Ջտում (աղիքներէ արտաքսում)

Մնացեալ չորս տարրերն ալ հետեւեալներն են.

ա- Միտք (խորհելու կարողութիւն),

բ- Իմացականութիւն (տրամաբանելու կարողութիւն-intellect),

գ- Ազատ կամք - Ընտրողութիւն (զատելու ու դատելու կարողութիւն)

դ- Անհատականութիւն (Եսը)

Հինգ հիմնական տարրերը կը ներկայացնեն Զօրութեան հինգ յատկութիւնները.

ա- Նիւթը: Նիւթը որ կը ներկայացնէ մեր Ֆիզիքական մարմինը, մեր մօր կողմէ մեզի հայթայթուած է: Ուրեմն ան մօր մը սէրը կը ներկայացնէ: Երբ այս սէրը մեր մէջ ծլի ու բազմանայ եւ մեզմէ ալ մեր շուրջ սփռուի, մեզ Աստուծոյ հետ հաղորդուելու կ'առաջնորդէ, որ փրկութեան ճամբան է: Ինչպէս մեր մարմինը մեր մօրմէն կը ծնի, Ֆիզիքական տիեզերքն ալ Աստուծմէ ծնած է:

բ- Զուրը հեղուկ ըլլալով կը ներկայացնէ արիւնը, որ մեր մարմնոյն մէջ շրջելով անոր հաւասարակըշուոթիւնը կ'ապահովէ եւ կը պահէ: Արիւնը նաեւ կեանքը կը ներկայացնէ: Առանց արիւնի ապրիլ անկարելի է: Զուրը, արիւնը եւ Զօրութիւնը սերտօրէն իրարու շղթայուած են:

«Սո՛վա երե՛վին են որ վկայեն Ըոգին, ե-

ջուրն եւ արեւնն եւ երեվին մ'ի՛ են»:

(Լ. Յովհաննու Ե:8)

«Արդարեւ երե՛ք են՝ որ կը վկայեն երկինքի մէջ.-Հայրը, Խօսքը եւ Սուրբ Հոգին, ու այս երեքը մէկ են: Նաեւ երե՛ք են՝ որ կը վկայեն երկրի վրայ.- Հոգին, Զուրը եւ արիւնը, ու այս երեքը միաձայն են»:

(Ա. Յովհաննու Ե:7-8)

(Գրաբար Աւետարանին մէջ 7-երորդ Համարը չկայ):

Յովհաննէս մկրտիչ մեղքերու թողութեան համար ջուրով կը մկրտէր: Զուրը նաեւ կը մաքրէ եւ ջուրը կեանք է: Նմանապէս անձին կեանքի նպատակն ալ

ներհայեցողութեամբ, խոկումով, ապաշխարութեամբ
եւ պաշտամունքով ինքզինք մաքրելով պարտ է իր
հոգեկան հաւասարակչութիւնը պահել :

«Պարասխանի՛ եր Յիսոս»՝ եւ ասէ. Ամէն
ամէն ասե՛մ շեշ եթէ ոչ ո՛վ շնցի՛ ՚ի Ջրոյ
եւ ՚ի Հոգոյ ո՛չ կարէ մտանել
յարձայութիւն Ասորո-ժոյ» : (Յովհաննոս Գ:5)
«Յիսուս պատասխանեց, ձշմարտապէս, ճշմարտապէս կը
յայտարարեմ քեզի, եթէ մէկը ջուրէն ու Հոգիէն չծնի՛
չի կրնար մտնել Աստուծոյ թագաւորութիւնը»:

«Պարասխանի՛ եր նմա Յիսոս» եւ ասէ.
Ամէնայն որ ըմպէ՛ ՚ի Ջրոյ յայտմանէ,
մի-սանգամ շարասէ՛, Բայց որ ըմպէ՛ ՚ի
Ջրոյն զոր ես ցոյց մնա մի՛ շարասեպէ
յասիրեան: Այլ ջորն զոր ես ցոյց նմա
եղիցի աղբիւր Ջրոյ Բղիւտայ ՚ի կեանան
յասիրելնականա» : (Յովհաննոս Գ:13-14)

«Յիսուս պատասխանեց անոր. Ո՛վ որ խմէ այս ջուրէն՝
դարձեալ պիտի ծարաւնայ, բայց ո՛վ որ խմէ այն
ջուրէն՝ որ ես պիտի տամ անոր, յաւիտեան պիտի
չծարաւնայ: Հապա այն ջուրը՝ որ ես պիտի տամ անոր,
պիտի ըլլայ անոր մէջ ջուրի աղբիւր մը՝ որ կը բխի
յաւիտեանական կեանքի համար»:

«Որ Հասարայ յիս որպէս եւ ասէն Գիրշ,
Գե՛րշ յորովայնէ նորա Բղիւտայէն Ջրո՛յ
կենդանութեան» : (Յովհաննոս Է:38)

«Ա՛ն որ հաւատայ ինձի, կենարար ջուրի գետեր պիտի
բխին անոր փորէն, ինչպէս Գիւրքը կ'ըսէ»:

«... Եղէ՛ ես Ալիս՝ եւ Ո՛վ, «կի՛նչն եւ

կադրաբաշ, Էս Ժարա-Էլոյցն Կոմ յազբերէ

Ջրոյ կենաց շրջ» : (Յայտնութիւն ԻԼ:6)

«... Եղա՛ւ, ե՛ս եմ Ալֆան եւ Օմեղան, Սկիզբն ու Վախճանը՝ ես ծարաւին ձրի՛ պիտի տամ կեանքի ջուրին աղբիւրէն»:

դ- Օդը: Մարմինը իր ծնունդէն մինչեւ մահը գոյատեւելու ու ապրելու համար օդի կը կարօտի եւ աս անհրաժեշտութիւն մըն է: Ան պէտք է ապականած ըլլայ, որպէսզի հիւանդութիւններու պատճառ չըլլայ: Այսօր յաճախ անձերու կը հանդիպինք, որ ծխելով իրենց թոքերը ինչպէս նաեւ օդի ազդեցութիւնը կը տկարացնեն, հետեւաբար հիւանդութիւններու պատճառ կ'ըլլան: Հիւանդ մարդուն միտքը չի կրնար խաղաղ ըլլալ որ կարենայ Աստուածայայտնութեան ծառայել: Աւետարանին մէջ, որեւէ տեղ, Յիսուսի հիւանդանալուն մասին որեւէ գրութիւն կա՞յ:

դ- Կրակը (Լոյսը) կամ ջերմութիւնը: Ջերմութիւնը զօրութեան մէկ արտայայտութիւնն է: Մարդու մարմինը 37⁰ տաքութիւն ունի: Մեռած մարմինը իր ջերմութիւնը կը կորսնցնէ: Գիտութիւնը կ'ըսէ թէ ջերմութիւնը տարրաբանական ներգործութենէ (chemical reaction) յառաջ կուգայ, որ իրողութիւն մըն է: Պէտք է մոռնանք, թէ թէ՛ մասնիկներու (molecules) եւ թէ՛ հիւլէներու զօրութիւնն ալ նոյն տիեզերական զօրութենէ գոյացած են: Անոնք միայն մեր եւ զօրութեան միջեւ միջնորդներ են: Աչխարհի ջերմութիւնը արեւէն կու գայ: Արեւն ալ լոյսը կը ներկայացնէ: Ուրեմն մարդու ջերմութիւնն ալ իր Լոյսին՝ հոգիին արդիւնքն է, որ Քրիստոսը կը ներկայացնէ եւ Աստուծոյ մի մասնիկն է: Տիեզերական զօրութիւնը՝ Ս. Հոգիի զօրութիւնը, բոլոր գիտութեանց շտեմարանն է: Հետեւաբար Ան մեզի գիտակցութիւն ու գիտութիւն ինչպէս նաեւ

ինքնագիտակցութեան կարողութիւնը կու տայ: Այս վերջինը մեզի դէպի Աստուածայայտնութեան կ'առաջնորդէ, քանի որ մարդու մարմինը Աստուծոյ տաճարն է, մարդու հոգին ալ Աստուծոյ զօրութիւնը՝ Լոյսը՝ կրակն է: Երբ այդ հոգին կը խորասուզուի Աստուծոյ Հոգիին մէջ, անձն ալ կ'արժանանայ փրկութեան: Աչքն ալ լոյսը տեսնելու միջոցն է: Լոյսը պէտք է խափանենք եւ մարմինը՝ տաճարը խաւարի մէջ ձգենք:

«Ղրատ մարմնոյ ակն ելեւ ակն չո ասաց
 է, ամենայն մարմննո լոսասո՛ր եղիցի:
 Եպա թե ակն չո շա՛ր է՝ ամենայն
 մարմննո խասարին եղիցի: Իսկ արդ ելեւ
 լոյսո որ ՚ի չեւ է՝ խասար է. խասարն՝
 ո՞ր շափ էս» : (Մարթեոս .9 : 22-23)

«Մարմինն ճրագը աչքն է, ուրեմն եթէ աչքը պարզ է, ամբողջ մարմինը լուսաւոր կ'ըլլայ: Բայց եթէ աչքը չար է, ամբողջ մարմինը խաւարամած կ'ըլլայ. ուրեմն եթէ քու մէջը եղած լոյսը խաւար է, ա՛լ ո՛րքան է այդ խաւարը»:

«Ղրատ մարմնոյ ակն յորժամ ակն ասաց
 է, ամենայն մարմնն լոսասո՛ր եղիցի:
 Եւ երբ ակն շա՛ր է, էւ մարմնն խասարին
 եղիցի: Երդ՝ սո՛ր լեւ, Գոցէ՛ լոյսո
 որ ՚ի չեւ է՝ խասար իցէ: Երբ մարմննո
 չո ամենայն լոսասո՛ր է, էւ շԳոցէ
 մասն ինչ խասարին, եղիցի լոսասո՛ր ամե-
 նայն, որպէս յորժամ ճրագն նշուի-
 լոսասորիցէ սչեւ» : (Ղոկասոս ժԼ : 34-36)

«Մարմինն ճրագը աչքն է, ուրեմն երբ աչքը պարզ է՝ ամբողջ մարմինդ ալ լուսաւոր կ'ըլլայ, բայց երբ աչքը չար է՝ մարմինդ ալ խաւարամած կ'ըլլայ: Ուստի ուշադիր եղիր, որ քու մէջդ եղած լոյսը խաւար չըլլայ: Ուրեմն եթէ ամբողջ մարմինդ լուսաւոր է ու մութ մաս մը չունի, ամբողջովին լուսաւոր կ'ըլլայ, ինչպէս երբ ճրագ մը կը լուսաւորէ քեզ իր փայլով»:

ե- Եթեր (միջոց-space): Ամէն մարմին ծաւալ մը ունի, ուրեմն հարկ է որ միջոցին մէջ ըլլայ: Քանի որ միջոցը ամէն տեղ է եւ զօրութեամբ լի, որով ան մեր մտքին, իղճին եւ սրտին մէջ թափանցած է եւ մեզ կ'առաջնորդէ գնահատելու ու կերտելու Աստուածային յատկութիւնները՝ ողորմութիւն, գութ, ներողամտութիւն եւ խաղաղութիւն: Ան նաեւ մեզ խաւարամտութենէ դէպի գիտակցութեան Լոյսը կ'առաջնորդէ: Այն անձը որ կը յաղթէ եւ կը յաջողի պիտի արժանանայ յաւիտենական կեանքի:

«Որ ունի ականջս լսելոյ՝ լսեացէ՛ պինչ ասէ
Հոգին Սուրբ աս իկեղեցիս որ յաղթեն՝
յոս'ց նովա ուրեւ ՚ի փայտեն կենաց որ է ՚ի
մէջ Դրախտոյն Լսարանոյ»: (Յայտնութիւն Բ:7)
«Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ
եկեղեցիներուն: Ո՛վ որ յաղթէ՝ անոր ուտել պիտի տամ
կեանքի ծառէն, որ Աստուծոյ դրախտին մէջ է»:

«Որ յաղթէ՛ արարելոց պնա սինն արճարի
Լսարանոյ իմոյ, եւ արտաշա ալ մի եւս
եւրէ. եւ Գրեցից ՚ի վերայ նորա պանուն
Լսարանոյ իմոյ, ...»: (Յայտնութիւն Գ:12)
«Ան որ կը յաղթէ, գանիկա իմ Աստուծոյ տաճարին
մէջ սինն մը պիտի ընեմ ու ալ դուրս պիտի չելլէ:
Անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ ...»:

Երբ վերեւի հինգ հիմնական տարրերը ներդաշնակօրէն եւ համահասարակ կը գործեն, անձն ալ առողջ կ'ըլլայ: Ուտեստեղէնը, ըմպելիին, միջավայրը, մագնիսական ազդավայրը, խորհուրդները, խօսքերը եւ արարքները այս ներդաշնակութեան վրայ մեծ ազդեցութիւն ունին: Քանի որ մարդու խորհուրդները, որ ուղեղային երեկտրական հոսանքներու արդիւնք են, ունին նաեւ մագնիսային որոշ ազդավայր: Մագնիսային ազդեցութիւնները զօրութեան հոսքին հետ սերտ կապ ունին: Մարդը մագնիսային կեղերոններ ունի, որոնք խակրայ (chakra) կը կոչուին: Մարդու մարմինը հետեւաբար զօրութեան շտեմարան մըն է: Որոշ զօրութիւն կը ստանանք մեր կերած կերակուրէն ինչ որ քիմիական/տարրաբանական զօրութիւնն է: Մարդը նաեւ զօրութիւն կը ստանայ մարմինը կազմող ամէն մէկ հիւլէի զօրութենէն: Ան նաեւ զօրութիւն կը ստանայ խորհրդաւոր (mystic) զօրութենէ՝ Ս. Հոգիէն:

«Նա պարասխանի էր է- ասէ. Գրեալ է՝

Ինչ ոչ հացի- միայն կեցցէ մարդ, այլ
ամենայն բանի- որ էլանէ 'ի բերանոյ
Ասոր-Չոյ»: (Մարթէոս Գ:4)

«Ան ալ պտտախանեց. «գրուած է. Միայն հացով չէ որ մարդը պիտի ապրի՝ հապա ամէն խօսքով՝ որ կ'ելլէ Աստուծոյ բերանէն»:

Աստուծոյ բերանէն ելած խօսքը Ս. Հոգին է:

Մարդը եօթը զօրութիւններ ունի. Ֆիզիքական, կենսական, Ոգեկան (psychic), Խիղճ, Կամք, Մտային եւ Հոգեկան:


Երբ մարդ իր «Ես»ը կ'անտեսէ եւ զայն կը գերազանցէ՝ կը յաղթէ եւ ճշմարտութեան կը բաղձայ, իր հոգեկան զօրութիւնն ալ կ'աւելնայ եւ իբր լուսեպսակ բոլորին երեւելի կ'ըլլայ: Ինչպէս որ

պատահեցաւ Յիսուսին՝ այլակերպման պահուն: Բնութեան այդ դարմանիչ եւ կենսատու զօրութիւնը միայն մի քանի հոգիի առանձնաշնորհումը չէ, այլ անխտիր բոլորին համար կը հոսի: Բայց ամէն մի անհատէն կախեալ է անկէ օգտուիլը:

Աստուծային զօրութեան՝ Ս. Հոգիի միջոցաւ է որ նիւթը եւ բոլոր ստեղծագործութիւնը ի յայտ եկած է, ներառեալ մարդը: Այդ զօրութեամբ է որ մարդը իր բոլոր երեւոյթներով եւ յատկութիւններով կազմուած է եւ կենդանացած: Մարդուն մէջ այդ Աստուծային զօրութեան ներկայութիւնը, Աստուծոյ մէկ մասնիկը՝ մարդուն «հոգին»՝ Քրիստոսի ներկայութիւնն է: Մարդ նաեւ ունի անհատականութիւն մը: Ս. Հոգիի զօրութիւնը այդ անհատականութեան պրիսմակէն անցնելով կը պայմանաւորուի, հետեւաբար երբ անձին կը շնորհէ Փիզիքական մարմին հինգ զգայարանքներով, միտք մը եւ իմացականութիւն մը, անոնք համապատասխան կ'ըլլան մարդու անհատականութեան: Ասկէ կը ծագի մարդոց իրարմէ ունեցած տարբեր երեւոյթները: Այս երեք կազմածքներու միջոցաւ մարդ հետեւեալ յատկութիւնները կ'ունենայ. մարմինով՝ բոլոր աշխարհի հետ հաղորդակցող եւ փորձառութիւններ ունեցող, միտքով՝ զգացական, եւ իմացականութեամբ՝ տրամաբանող: Մարդու բոլոր կեանքը հետեւաբար կը ներկայացնէ այն ինչ որ մարդ արարած կ'ընէ այս երեքին միջոցաւ: Ան իր մարմինով աշխարհի մէջ կը գործէ, ուրեմն ասոնք կը ներկայացնեն իր բոլոր արարքները: Իր միտքով ան կ'ունենայ բազմաթիւ զգացումներ եւ յուզումներ: Մարդ նաեւ իր իմացականութեամբ ալ տէր կ'ըլլայ բազմաթիւ խորհուրդներու, որոնք տեղի կու տան ցանկութիւններու եւ իղձերու: (ՏԵՍ ՊԱՏԿԵՐ ԹԻ: 1)

Երբ անհատին ուշադրութիւնը դէպի իր մարմ-

նին, մտքին եւ իմացականութեան արտադրութիւններով զբաղ է եւ անոնց կապուած, չի կրնար Աստուած տեսնել: Աստուած միշտ անհատին կը նայի, բայց այդ տեսնելու եւ հետեւաբար այդ փորձառութիւնը ունենալու համար մենք ալ պարտ ենք իրեն նայիլ: Ապա թէ ոչ ի՞նչպէս պիտի գիտնանք թէ Ան մեզի կը նայի:



Պատկեր թիւ 1

«Բա՛յ մեզ Տէր. Բա՛յ մեզ Տէր. Բա՛յ մեզ Տէր
զբուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք
առ քեզ»: (Դանբացէի արարողութենէ)


«Ահա-ասիկ կամ էս աս դուրս է- թախեմ.
 Եթէ ո՛չ լուծեցէ շայնի իմո՛ւմ՝ է- թանայցէ
 պարտանան, մտրեց աս նա՛ է- ընթրեա
 արարեց աս նա, է- նա ընդ իս» :
 (Յայտնո-րիւն Գ:20)

«Ահա ես դուռը կայներ եմ ու կը վարնեմ. եթէ մէկը
 իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ
 եւ անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան ալ ինծի հետ»:


Ուրեմն մեզմէ կախեալ է դուռին բացուիլը:



«ԱՌԱՊՈՏ ԼՈՒԲՈՒՆ»




Արեգակն արշալոյսի
 Իր լեղակի շողերով
 Ազդակ մնն է կեանքի
 Արթնութեան հրաւերով:




Արեգակն առաւօտեան
 Իր ջերմագին շողերով
 Խթանը մարդկութեան
 Արթնութեան մղելով:



Արեգակն երեկոյեան
 Իր կարմրակ շողերով
 Հրածեշտը բնութեան
 Մթնոլորտը խաւարելով:



Արեգակը գիշերուան
 Լուսնի տեղաբ շողերով
 Յղացումն է միայն
 Անուղղակի ընթացքով:



Արեգակը ամէն մի օր
 Իր զանազան շողերով
 Մեր վրայ կ'ազդէ բոլոր
 Իր անվերջ դրդումով:

Արեգակը ի՞նչ կ'զգէ
 Առտուան լոյսը տեսնե՞նք
 Ազրա թէ ոչ Ան կ'ուզէ
 Լոյսին Առաւօտը տեսնենք:

Վ.Ս.



- Բ -

ԵՕԹԸ



ԵՕԹ-Ը

Առաջին գիրքիս «Լոյս ի Լուսոյ»ի թուագիտութեան բաժնին մէջ (Գլուխ Ը-երկրորդ մաս) զանազան թիւերու իմաստին մասին որոշ չափով տեղեկութիւն տուած էի: Անոնք հոս կրկնելու պէտք չկայ: Եօթը թիւը Աստուծոյ թիւը ըլլալով մարդկութեան համար մասնաւոր իմաստ մը ունի, քանի որ մարդու կեանքը իր բոլոր երեւոյթներուն մէջ այդ թիւին հետ շղթայուած է: Հետեւաբար աւելի ընդարձակօրէն այս նիւթին մասին պրպտել, տեղեկութիւն ունենալ եւ մեր կեանքին մէջ անոր ազդեցութիւնը հասկնալ մեր պարտականութիւնը կը թուի ըլլալ:

Հայաստանեայց բոլոր Եկեղեցիներու խորաններուն վրայ «է» գիրը կը տեսնենք: «է» գիրը Աստուած կը ներկայացնէ: «է» գիրը նաեւ հական բային ներկայ ժամանակի երրորդ դէմքն է: Հետեւաբար հարկ է որ Աստուած ներկայացնէ, որովհետեւ Աստուած յաւիտենական ըլլալով միշտ ներկային մէջն է եւ միայն ներկան է որ յաւիտենական է: Աստուած «չէր» եւ «պիտի չըլլայ», այլ միայն է: Անցեալը եւ ապագան գոյութիւն չունին: Անոնք պատրանքային են եւ միայն ներկան է որ գոյութիւն ունի: Թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարաններու մէջ ալ կը տեսնենք թէ Աստուծոյ համար միայն ներկայ ժամանակը օգտագործուած է:

«Է- ասէ Աստուած յՄովսէս Էս Էմ

Աստուած որ Էն» (Եւէ Գ: 14)

«Է Աստուած ըսաւ Մովսէսին. «Ես Էմ ՈՐ ԷՆ»

«Ասէ ցնոսայ Յիսուս. ամէն ամէն ասէմ

յԷս. յաստ զան պլինելն Աբրահամու Էմ

Էս»: (Յովհաննոս Ը:58)

Յիսուս ըստ անոնց. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
Աբրահամին ըլլալէն առաջ եմ ես»

Նոյն ժամանակ «է» տառը «Այբուբեն»ին եօթնե-
րորդ գիրն է եւ «7» թիւն ալ «Աստուծոյ թիւն» է:
Արեւմտեան նաեւ լատին լեզուներու մէջ իրենց
այբբենարանին եօթներորդը «G» գիրն է, որ դարձեալ
Աստուած կը ներկայացնէ:

Ինչո՞ւ եօթը թիւը այս պատիւին հասած է: Ասոր
պատասխանը, շատ հաւանաբար, հետեւեալ տուեալ-
ներուն մէջ կարելի է գտնել:

Հայերէնի մէջ «Աստուած» բառը եօթը գիրեր կը
պարունակէ:

Նախ ուսումնասիրենք Աստուածաշունչի առաջին
համարը: Զարմանալիօրէն ան կը պարունակէ եօթը
բառեր՝ թէ՛ եբրայերէն բնագրին մէջ, թէ՛ ալ հայերէն
գրաբարին մէջ:

«Ի սկսբանէ արար Աստուած զերկին եւ
զերկիր»: (Օննդոց Ա:)

«Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց»:

Ի տարբերութիւն Հայերէնի, եբրայերէն բնագրին մէջ
եօթը բառէ զատ կը պարունակէ յաւելեալ եօթը
տարբեր թուային եւ թուագիտական յատկութիւններ,
որոնք կը ներկայացնեն եօթը թիւը: Կարելի է խորհիլ
թէ աս զուգադիպութիւն մը եղած կրնար ըլլալ:
Վերոյիշեալ համարին եօթը թիւին հետ ունեցած
կապին մէկ յատկութեան զուգադիպութիւն ըլլալու
հաւանականութիւնը 7-էն 1 պիտի ըլլար, բայց բնագի-
րը 7 թիւին հետ ունի նաեւ եօթը տարբեր յատկու-
թիւններ, որոնց զուգադիպութիւն ըլլալու հաւանակա-
նութիւնը 823543-էն 1 է, ինչ որ կարելիութեան սահման-
ներէն դուրս կը թուի ըլլալ: Նոյնիսկ հայերէն թարգ-
մանութեան մէջ կան որոշ նման յատկութիւններ:
Ինչպէս վերեւ մատնանշուած է գրաբարի մէջ նախա-

դասութիւնը եօթը բառ կը պարունակէ: «Սկզբանէ» եւ «Աստուած» բառերը եօթնական գիր ունին: Նախադասութեան առարկան՝ «զերկին եւ զերկիր», 14 գիրեր կը պարունակէ, որ 2x7-ն է: Աշխարհաբար թարգմանութեան վեց բառէն չորսն ալ եօթը գիրերով կազմուած են:


Թիւ եօթը լրացում եւ կատարելութիւն կը ներկայացնէ, քանի որ Աստուած ստեղծագործութիւնը եօթը «օր»էն լրացուց եւ եօթներորդ «օր»ը սրբացուց ու հանգստացաւ: Ուրեմն զարմանք պէտք չէ պատճառէ եթէ եօթը թիւը սրբութիւն՝ Աստուած ներկայացնէ:

ՖԻԶԻԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Քանի որ Աստուած իր ստեղծագործութեան մէջն է եւ բոլոր ստեղծուածները իր մարմինն մաս կը կազմեն, հարկ է որ եօթը թիւն ալ մասնաւոր տեղ ունենայ ստեղծագործութեան մէջ, հետեւաբար մեր կեանքին մէջ: Հետեւեալները կը ներկայացնեն մասնակի ցանկ մը.


«Մեծ արջ» (Ursa major կամ Big dipper) համաստեղութիւնը (constellation), որ առաջնորդող եւ ուղղութիւն ցցնող «Բեւեռային աստղ»ը (North star) ցոյց կու տայ, ինք եօթը աստղեր ունի (Տես Պատկերներ ԹԻՄ: 1Ա ԵՒ Ք): Ինչո՞ւ այս համաստեղութեան կարեւորութիւն տար: Ուրիշ համաստեղութիւններ եւս կան, որոնց աստղերուն թիւը եօթէն տարբեր է: Հետեւաբար «Մեծ արջ»ին եօթը աստղեր ունենալը պարզ զուգադիպութիւն մը եղած կրնայ ըլլալ: Ճիշդ է թէ աստղերը Ֆիզիքական տիեզերքին մաս կը կազմեն, բայց այս աստղերու համախմբումով համաստեղութիւններու գաղափարը մարդու ենթագիտակցութենէն ծագում առած է: Հետեւաբար «Մեծ արջ»ը նաեւ վերացական իմաստ մը ունի: Վստահելի եւ փայլուն «Բեւեռային

աստղ»ը (North star) ուղեւորներուն ուղղութիւն ցոյց տուող աստղն է: Ան, վերացական իմաստով, մարդուն իր կենցաղին համար ճիշդ ուղղութիւն ցոյց տուող ներքին Աստուածային Լոյսը՝ Քրիստոսը կը ներկայացնէ:



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 1Ա

«Մեծ արջ» Համաստեղութիւնը՝ իր եօթ աստղերով



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 1Բ

«Մեծ արջ» Համաստեղութիւնը, որ ցոյց կուտայ բեւեռային աստղը

Իսկ մարդուն մէջ որպէսզի Քրիստոս ի յայտ գայ, անձը Ս. Հոգիի գորութիւնը, առանց որեւէ ընդդիմութեան, պարտ է եօթը խակրաներէն անցնելով մինչեւ եօթներորդը բարձրացնէ: Ուրեմն համաստեղութեան եօթը աստղերուն վերացական իմաստն ալ եօթը խակրաներն են: Եթէ արթուն ըլլանք կը տեսնենք թէ բնութեան մէջ զանազան օրինակներով մեզի ցոյց տրուած է Աստուածահաճոյ կենցաղ մը կերտելու անհրաժեշտութիւնը: Պարտ ենք անոնցմէ սորվիլ եւ մեր սորվածն ալ մեր կեանքին մէջ կիրարկել: (Խակրաներու մասին ստորեւ տեղեկութիւն տրուած է:)

Երկնակամարին վրայ արեւի դրութեան մէջ առանց որեւէ գործիքի՝ պարզ աչքով, կարելի է միայն եօթը երկնային մարմիններ («աստղեր») տեսնել: «Լոյս ի Լուսոյ» գիրքիս Աստղագիտութեան մասին մէջ այս «աստղերուն» մասին գրած էի: (Գլուխ Ը. Առաջին մաս) Ասոնք հետեւեալներն են. Արեւը, Լուսինը, Հրատը, Փայլածուն, Լուսնթագը, Արուսեակը եւ Երեւակը:

Դարձեալ, «Լոյս ի Լուսոյ գիրքիս թուագիտութեան մասին մէջ (Գլուխ Ը. Երկրորդ մաս) եօթը մետաղներու մասին գրած էի: Այս մետաղները հնադարեան ժամանակներուն քաղաքակրթութեան յառաջացման օժանդակած էին: Աստղագիտութեան եօթը «աստղերուն» համապատասխանող այս եօթը մետաղներուն հին հայկական անուններուն թիւերը մետաղներու հիւլէական թիւերուն հետ նոյնն են: (ՏԵՍ ՊԵՏԿԵՐ ԹԻ: 2) Պատկերին մէջ ներկայացուած մետաղներուն (նոր-հին անուններով) համապատասխանող «աստղեր»ը հետեւեալներն են, որոնք ներկայացուած են պատկերի մէջի նոյն կարգով. Արեւ (Ոսկի), Արուսեակ (Պղինձ-Մեղ), Լուսին (Արծաթ-Արծ), Հրատ (Երկաթ-Ալգաթ), Լուսնթագ (Անագ, Թիթեղ, Կլայեկ-Կլաէկ), Երեւակ (Կապար-Արճիճ) եւ Փայլածու (Սնդիկ-Սնդիկ):

Old Armenian Names of metals			
Ո Ս Կ Ի	– Gold	Au <u>79</u>	$\text{Ո}^{24} + \text{Ս}^{29} + \text{Կ}^{15} + \text{Ի}^{11} = \underline{79}$
Մ Ե Դ	– Copper	Cu <u>29</u>	$\text{Մ}^{20} + \text{Ե}^5 + \text{Դ}^4 = \underline{29}$
Ա Բ Ծ	– Silver	Ag <u>47</u>	$\text{Ա}^1 + \text{Բ}^{32} + \text{Ծ}^{14} = \underline{47}$
Ա Լ Գ Ս Թ	– Iron	Fe <u>26</u>	$\text{Ա}^1 + \text{Լ}^{12} + \text{Գ}^3 + \text{Ս}^1 + \text{Թ}^9 = \underline{26}$
Կ Լ Ա Է Կ	– Tin	Sn <u>50</u>	$\text{Կ}^{15} + \text{Լ}^{12} + \text{Ա}^1 + \text{Է}^7 + \text{Կ}^{15} = \underline{50}$
Ա Բ Ճ Ի Ճ	– Lead	Pb <u>82</u>	$\text{Ա}^1 + \text{Բ}^{32} + \text{Ճ}^{19} + \text{Ի}^{11} + \text{Ճ}^{19} = \underline{82}$
Ս Ն Գ Ի Կ	– Mercury	Hg <u>80</u>	$\text{Ս}^{29} + \text{Ն}^{22} + \text{Գ}^3 + \text{Ի}^{11} + \text{Կ}^{15} = \underline{80}$

(Առնուած լեզուաբան Գէորգ Կարապետեանի ներկայացումէն):

ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 2

Շաբաթը եօթը օր ունի եւ եօթերորդ օրը սուրբ կը համարուի: Աս կը համապատասխանէ ստեղծագործութեան եօթը «օր»երուն:

Աշխարհը եօթը հողամասեր ունի՝ Ասիա, Աւստրալեա, Ափրիկէ, Եւրոպա, Հակարջային հողամաս (Antarctic), Հարաւային Ամերիկա եւ Հիւսիսային Ամերիկա:

Աշխարհ նաեւ ունի եօթը ովկիանոսներ՝ Արջային (Arctic), Հարաւային ովկիանոս (հակարջային), Հարաւային Ադլանտեան, Հարաւային Խաղաղական, Հիւսիսային Ադլանտեան, Հիւսիսային Խաղաղական եւ Հնդկական:

Երաժշտութիւնը եօթը խազերու (նօթ) վրայ կազմուած է:

Տեսանելի լոյսն ալ եօթը գոյներ ունի:

Միջին հաշուով մարդու միտքը եօթը շարունակական թիւեր իր միտքը պահելու կարողութիւնը ունի, հետեւաբար հեռաձայնի թիւը եօթը հատը չ'անցնի:

Քիմիական տարրական ցուցակը որ 118 զանազան տարրեր (elements) կը ներկայացնէ, եօթը մակարդակէ կազմուած է: (Տես ՊԱՏԿԵՐԹԻՒԷ: 3)

Periodic Table of the Elements

Atomic Number
 Symbol
 Name
 Atomic Mass

Alkali Metal
 Alkaline Earth
 Transition Metal
 Basic Metal
 Semimetal
 Nonmetal
 Halogen
 Noble Gas
 Lanthanide
 Actinide

© 2013 IUPAC Periodic Table


ՊԱՏՄԵՐ ԹԻՒ: 3

Քիմիական տարրական ցուցակը իր եօթը մակարդակներով

Առողջութիւնը ապահովելու համար մարդ ամէն գիշեր պարտ է եօթը ժամ քնանայ:

Մարդ եօթը ներքնահոս անցնցող գեղձեր ունի. Մաղասային գեղձ (pituitary/hypothalamus), Վահանագեղձ (Thyroid), Կցալահանագեղձ (Parathyroid), Ուրցագեղձ (Thymus), Մակերիկամային գեղձ (Adrenal), Պանկրէաստ (Pancreas) եւ այր մարդոց Ամորձիք (Testicles) իսկ կիներու ալ Ձուարան (Ovaries):

Ըստ սովորական ուսուցման մարդ հինգ զգայարանքներ ունի. Շօշափելով զգալ-Մորթ, Համտեսել-Լեզու, Հոտոտել-Քիթ, Տեսողութիւն-Աչք, Լսողութիւն-Ականջ: Ըստ հին Փարաւոնեան եգիպտացիներուն «Խորհուրդ-Միտք»ն ալ վեցերորդ զգայարանք-գործարան կը նկատուէր (Տես Պատմութիւն: 4): Ասոնցմէ զատ կայ նաեւ «Մէր-Միրտ» զգացում-գործարանը: Հետեւաբար զգայարանքներուն թիւն ալ կ'ըլլայ եօթը: Այս վերջինը՝ սիրոյ զգացումը, Ս. Հոգիի զօրութեան մեր անձերէն ներս ներգործութեան եւ մեզմէ ալ դէպի ուրիշներուն ճառագայթումին զգացումն է:



ՊԱՏՎԵՐ ԹԻՒ: 4

Եգիպտական վեց զգայարանքներու ցանկը՝ իրենց նշաններով

ՉՕՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ

Մարդ նաեւ ունի եօթը խակրաներ (chakra) (տես Լոյսի Լուսոյ գիրքիս յաւելուածական մասը) (Տես Պատվեր ԹԻՒ: 5): Անոնք հետեւեալներն են. Հիմնական խակրա, Ընջակային խակրա, Ճառագայթածեւ (երբեմն արեւի) ջղահիւսքի խակրա, Սրտի խակրա, Կոկորդի խակրա, Ճակտի խակրա եւ Գանկի վերեւի խակրա: Եօթը խակրաները անձին գիտակցութեան եօթը մակարդակներուն կը համապատասխանեն: Ամէն մի խակրայ իրեն վերաբերեալ գիտակցութեան յատուկ մակարդակ մը ունի եւ ուրոյն նպատակի կը ծառայէ: Մովսիսական կրօնքի գրութիւններուն մէջ այս խակրաներուն նկատմամբ ակնարկ կայ: Անոնք որպէս երկինքի եօթը մակարդակներ եւ կամ դժոխքի եօթը մակարդակներ ըլլալով ներկայացուած են: Եթէ անձը ամէն մի խակրայի զօրութեան հոսքը խափանող մահացու մեղքը կարողանայ անհետացնել, իր գիտակցութեան մակարդակն ալ կը բարձրանայ եւ իրեն համար անոնք «երկինք»ը կը ներկայացնեն:



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 5

Մարդու եօթը
խակրաները (chakra) եւ
մարմնին վրայ անոնց
Համապատասխանող
վայրերը:

Անունները՝ վերէն վար.

Գանակի

Հակաի

Կոկորդի

Սրաի

Հառագայթաձեւ (երբեմն
արեւի) ջղաՀիւսքի

Ընջակային

Հիմնական

Միթէ Պողոս առաքեալ չէ՞ր, որ ըսաւ թէ մինչեւ երրորդ երկինք կարողացած էր բարձրանալ: Իսկ եթէ անձը իր մահացու մեղքերը չկարողանայ անհետացնել, այն ատեն ամէն մի խակրայի մակարդակն ալ դժոխքի եօթը մակարդակներէն մին կը ներկայացնէ:

«... երէ մարմնով՝ ո՛չ Գիտեմ եւ երէ

առաջնայ մարմնայ՝ ո՛չ Գիտեմ Լսյոսաժ
 Գիտեմ. յանիշարակեալ զայնադիտին մինչե-
 յերրորդը Երկնից» : (Բ. Կորնթացիս ԺԲ: 2)

«... արդեօք մարմնն՞ով էր, չեմ գիտեր. արդեօք
 մարմնէն զո՞ւրս էր, չեմ գիտեր. Աստուած՝ գիտէ,
 այդպիսի մէկը յափշտակուեցաւ մինչեւ երրորդ
 երկինքը»:

Մարդ նաեւ վերոյիշեալ եօթը խակրաներուն
 համապատասխան եօթը զօրութիւններ ունի: Պէտք է
 սխալ հասկցուի թէ եօթը տարբեր զօրութիւններ կան:
 Զօրութիւնը մէկ է եւ ան ալ Ս. Հոգիի զօրութիւնն է:
 Բայց այդ զօրութեան արտայայտութիւնը զանազան
 եօթը խակրաներէ անցնելէ յետոյ յառաջ կը բերէ
 ստորեւ ներկայացուած եօթը զօրութիւններու տարբե-
 րութիւնները: Ուրեմն տարբերութիւնները խակրա-
 ներուն եւ անոնց արտօնած զօրութեան թրթռացում-
 ներուն կը պատկանին: Այս զօրութիւններն են.

ա- Ֆիզիքական - Այս զօրութիւնը մարդու
 Ֆիզիքական ուժ եւ կարողութիւն կու տայ: Հիւանդ
 մարդը առ հասարակ Ֆիզիքապէս տկար կ'ըլլայ:
 Հիւանդութիւնը զօրութեան պակասի հետեւանք է,
 որով անձին Ֆիզիքապէս ալ տկար ըլլալը պէտք է
 զարմանք պատճառէ: Բաղդատմամբ կիներու, այր
 մարդիկ Ֆիզիքական գետնի վրայ յաւելեալ
 զօրութիւն օգտագործելու կարողութիւնը կը թուին
 ունենայ: Անոնք, օգտուելով իրենց այս առաւելու-
 թենէն, միշտ ջանացած են կանանց տիրապետել, քան
 թէ զանոնք մեծարել: Կինը ծնունդ տալով երախային
 Աստուածայայտնութեան կը ծառայէ, հետեւաբար
 պաշտուելու արժանի է: Սակայն աշխարհի վրայ
 ընկերութիւններուն (society) մեծամասնութիւնը նահա-
 պետական են: Նոյնիսկ այսօր, 21-երորդ դարուն, կը

կարծենք թէ մարդիկ այլևս քաղաքակրթուած են, բայց մահմետական երկիրներու մէջ վիճակը ինքնա-
յայտ է: Վրդովիչ լուրեր կը լսուին՝ կին ծեծել,
սպաննել: Նման լուրեր մեր հայրենիքէն՝ Հայաստանէն
ալ կ'իմանանք: Ասոնք բոլորն ալ խաւարամտութեան
հետեւանք են: Աստուած աս յաւելեալ կարողութիւնը
այր մարդուն տուած է, ոչ թէ անոր շնորհիւ
տիրապետէ, այլ որպէսզի անոր շնորհիւ ծառայէ՝ պահէ
եւ պաշտպանէ:

բ- Կենսական - Ինչպէս Աստուած այր մարդուն
յաւելեալ Ֆիզիքական գորութիւն տուած է, կիներուն
ալ յաւելեալ կենսական գորութիւն տուած է: Հաւանա-
կան է որ շատեր իրենց ընտանեկան կեանքի մէջ
նշմարած են, թէ տան մէջ այր մարդոցմէն մին եթէ
հիւանդանայ (նոյնիսկ եթէ պարզ տենդախառն
հարբուխ-influenza), ինքզինք կը «ձգէ», անկարող որեւէ
գործ մը ընելու, խնամքի կը կարօտի: Իսկ կին մը, նոյն
հիւանդութեամբ, իր բոլոր տնային գործերը կը
շարունակէ կատարել: Կինը, իր յղութեան շրջանին, թէ՛
իր արգանդի մէջի սաղմին գորութիւն կը հայթայթէ,
թէ՛ ալ կը շարունակէ կատարել իր բոլոր միւս
պարտականութիւնները: Եթէ կարելի ըլլար եւ այր
մարդ մը յղի մնար, հաւանաբար մինչեւ իր յղութեան
շրջանի վերջաւորութեան ան անկողինէն դուրս չէր
ելլեր:

գ- Ոգեկան (psychic) - Ճշդուած իրողութիւն է թէ
կիները այր մարդոցմէ աւելի զգայուն են: Ասոնք
աւելի շուտ կը յուզուին, բայց իրենց բարկութիւնը
աւելի լաւ կը զսպեն եւ չեն վատներ իրենց ունեցած
գորութիւնը: Բարկութիւնը բարձր որակով գորութեան
վատնում է: Հաւանաբար, ճիշդ ասոր համար ներգի-
տակցութիւնը (intuition) կիներու առանձնաշնորհումը
ըլլալ կը թուի: Աս ալ իրենց ունեցած յաւելեալ

ողեկան զօրութեան կը պարտին:

դ- Խիղճ - Ասիկա, սիրոյ զօրութիւնը կը ներկայացնէ: Անտարակոյս Աստուած այս զօրութիւնը կ'ինքնընդուն անատորէն պարզեւած է: Այդ տեսնելու եւ զգալու համար բաւ է իր նորածին զաւակը խնամող մայր մը դիտել: Ասիկա ըսել չէ թէ այր մարդիկ սէր չունին: Իր երկրին համար կեանքը տուող գինուորին գոհողութիւնը կարելի չէ չափել: Ան իր երկիրը եւ իր ժողովուրդը կը սիրէ, որով պատրաստ է անոնց համար գոհուելու: Խղճամտութիւն, գութ, ողորմութիւն, կարեկցութիւն եւ գոհողութիւն բոլորն ալ սիրոյ զօրութեան արտայայտութիւններն են:

ե- Կամք - Կամքի զօրութիւնը մեր բոլոր պատականութիւններուն մէջ յաջողելու համար անհրաժեշտ է: Ան բոլոր ընդդիմութիւններուն, որոնք յաջողութիւնը կը խափանեն, դիմադրելու եւ յաղթելու կարողութիւնը կու տայ: Ան վախը կը վանէ եւ յարատեւութիւն, հաւատք եւ համբերութիւն կը պարգեւէ:

զ- Մտային - Մտային զօրութիւնը մարդուն տրամաբանելու կարողութիւն, ինչպէս նաեւ իմացականութիւն, դատելու եւ գատելու կարողութիւն կը շնորհէ: Յաւելեալ մտային զօրութիւնը մարդուն նաեւ իմաստութիւն կը պարգեւէ, որ Աստուածային գիտութիւնն է: «Կրօնք եւ Գիտութիւն»՝ նախկին Գլուխ Ա.ին մէջ ներկայացուած էր թէ ամբոխներու մտային զօրութեան արդիւնքները կարելի էր անուղղակիօրէն չափել եւ հաւանաբար աղէտներն ալ գուշակել: Ռուսիոյ մէջ գիտուններ մտային զօրութեամբ առարկաներ տեղափոխելը (հեռաշարժութիւն-telekinesis) կարողացած են իրականացնել, բայց պարզ ու փոքր տեղափոխութիւն կատարող անձը այդ տեղափոխութեան հետեւանք շատ տկար մնացած է, յայտնելով թէ բարձր որակով զօրութիւն վատնած է: Միթէ

Յիսուս չըսա՞ւ. Ան որ հաւատք ունի կրնայ լեռները տեղափոխել:

«... Եթէ ունիցի՛ Շա-ադա խան պԼա՛դո մանանխոյ, ասասջի՛ լէրինա այա՛միկ՝ փոխեա՛ց ասորի անդր, ե- փոխեացի՛, ե- ո՛չինչ անՇնարին լիցի յե-վ»: (Մարշեոս ԺԷ:19)

«... Եթէ մանանխի հատիկի չափ հաւատք ունենաք, պիտի ըսէք այս լերան. «Փոխադրուէ՛ ասկէ հոն», ու պիտի փոխադրուի, եւ ոչինչ անկարելի պիտի ըլլայ ձեզի»:

Աս կամ նման արարքներ յաւելեալ մտային զօրութեամբ, որ անձը Ս. Հոգիի թաքուն գիտութեան գաղտնակից կ'ընէ, կարելի կ'ըլլան:

է- **Հոգեկան** - Հոգեկան զօրութեան արտայայտութիւնը անձը կը սրբացնէ: Շատ քիչեր կարողացած են իրենց ներգործած զօրութիւնը արտայայտել որպէս հոգեկան զօրութիւն: Այս իրականացնողներն ալ սուրբերն են: Ճիշդ այս պատճառով ալ սուրբեր շատ քիչ են: Իրենց ունեցած հոգեկան զօրութեամբ ամբոխներու վրայ մեծ ազդեցութիւններ ունեցած են եւ միջավայրը փոխած:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵՅԻ

Այս եօթը թիւի ազդեցութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ ալ բացայայտ է: Ան եօթը ժամերգութիւններ ունի՝ Երեկոյեան, Խաղաղական, Հանգստեան, Գիշերային, Առաւօտեան, Արեւազալի եւ Ճաշու: (Տես Լոյս ի Լուսոյ գիրքի Պատարագի մեկնաբանութիւնը-Գլուխ ԺԴ)

Մեծ պահքի ապաշխարութեան շրջանը եօթը շաբաթ կը տեւէ:

Ապաշխարութեան վերջին հանգրուաններէն մին ներկայացնող Դոնբացէքի արարողութենէն եօթը օր յետոյ ալ կ'արժանանանք Քրիստոսի Յարութեան:

ՄԱՀԱՅՈՒ ՄԵՂՔԵՐՈ

Խոստովանանքի ատեն եօթը մահացու մեղքերուն համար մեղայի կու գանք: Այս մեղքերը հետեւեալներն են. Հպարտութիւն, Ազահուութիւն, Որկրամոլութիւն, Նախանձ, Բարկութիւն, Բղջախոհութիւն (ցոփութիւն) եւ Ծուլութիւն: Աստուծոյ հետ հաղորդուելէ առաջ անհրաժեշտ է որ եօթը մահացու մեղքերը ապաշխարութեամբ եօթը առաքինութիւններու փոխուին: Անոնք են.

Ողորմածութիւն

Ժուժկալութիւն կամ գոհունակութիւն

Եղբայրսիրութիւն

Ներողամտութիւն

Ողջախոհութիւն

Ժրաջանութիւն կամ Աշխատասիրութիւն:

Եօթը մահացու մեղքերուն ամէն մէկը վերոյիշեալ եօթը խակրաներուն մէկուն կը համապատասխանէ եւ այդ խակրայէն Ս. Հոգիի զօրութեան հոսքը կը խափանէ կամ առաջուց ներգործած զօրութիւնը կը վատնէ: Բոլոր մահացու մեղքերը խաւարամտութեան արդիւնքն են: Աշխարհի մարդկութեան ներկայ ընթացքը ընդհանուր առմամբ կիրքերու եւ խաւարամտութեան վրայ հիմնուած կը թուի ըլլալ: Յոխորտանքը կիրքէ եւ եսասիրութենէ ծագում կ'առնէ: Մարդիկ ընդհանրապէս կը կարծեն թէ հպարտութիւնը եւ ցուցասէրութիւնը լաւ յատկութիւններ են: Երբ կ'արձանագրեն յաջողութիւն, կը ցուցաբերեն ուժ եւ կ'իշխեն իրենց ստորադասին, հպարտ կը զգան կարծելով թէ իրենց ունեցածը առաքինութիւն մըն է: Անոնք կը հաւատան թէ միայն հպարտ մարդիկ քաջ կրնան ըլլալ: Արդեօք կարելի է՞ որ պարկեշտ մարդ մը հպարտանայ իր ունեցած առաքինութեան համար: Հպարտութիւնը խաւարամտութենէ կը ծագի եւ

չ'արտօներ որ անձը խաւարամտութենէ դուրս դայ: Եթէ անձը հպարտանալով իր դիրքին տուած զօրութիւնը վատօրէն օգտագործէ պատիժի կ'ենթարկուի: Հպարտ մարդը չի կրնար Աստուծոյ վրայ հաւատք ունենալ: Եսասիրութիւնը՝ խաւարամտութեան արդիւնքը, բոլոր մահացու մեղքերուն ծնունդ կու տայ եւ այն բոլորին, որոնք անոնցմէ կը սերին: Ահա՛, ասոնք են մեր ճշմարիտ թշնամիները:

Ինչպէ՞ս զանազանել խաւարամիտ մարդ մը «արթուն» անձէ մը: Խաւարամիտը՝ մահու վախով եւ աշխարհիկ իղձ եւ փափաքներով լի, ինքզինքը անոնց թակարդէն չի կրնար ձերբազատել: Իսկ «արթուն» մարդը, գիտակից իր անմահութեան, որեւէ աշխարհիկ հետապնդում չ'ունենար: Անկարելի է որ մարդ մը իր բոլոր իղձ եւ փափաքները կարենայ իրականացնել, որովհետեւ իղձ եւ փափաք որքան իրականացուին, նոյնքան կը բազմանան: Մարդ միշտ աւելին կը փափաքի, կարծելով թէ անոնք իրեն երջանկութիւն կը բերեն: Միայն անոնք, որոնք իրենց իղձ եւ փափաքները կրնան զսպել՝ սանձել կը կարողանան իրենց խաղաղութիւնը գտնել: Երջանկութիւնն ալ խաղաղութենէն կը ծագի: Անոնք, որոնք ատելութեան եւ նախանձի առիթ կու տան, իրենք ալ ինքզինքնին նոյն կիրքերուն դատապարտած կ'ըլլան: Բռնապետութիւնը վախին տարբեր մէկ երեւոյթն է: Բարկութիւնը իմաստութեան թշնամի է եւ անձէն դրական եւ օգտակար խորհուրդներ ունենալու կարողութիւնը կը խլէ: Այս մեղքերը «մահացու մեղք» կոչուած են, որովհետեւ անոնք անձին մէջ հոգեկան կեանքը կը մեռցնեն: Իւրաքանչիւր մահացու մեղքի մասին, անոնց համապատասխանող չաստուածներու եւ դեւերուն երկայացման ատեն, ստորեւ աւելի մանրամասն տեղեկութիւն տրուած է:

ԵԿԵՂԵՑՈՅ ԽՈՐՀՈՐԴՆԵՐԸ

Եկեղեցւոյ խորհուրդներն (Sacraments) ալ եօթը հատ են. Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Պսակադրութիւն, Ձեռնադրութիւն, Կարգ հիւանդաց կամ վերջին օծում, Հաղորդութիւն:

Առ հասարակ կ'ըսուի թէ Յիսուս միայն երկու խորհուրդներու մասնակցած է՝ մկրտութիւն եւ հաղորդութիւն: Տիեզերական եւ ուղղափառ եկեղեցիները միւս հինգ խորհուրդները ժԲ. դարուն որդեգրած են: Միթէ Յիսուսին մկրտութենէն ետք աղանակերպ Ս. Հոգիին իր վրայ հանգչիլը Դրոշմի խորհուրդը չէ՞: Իր Ֆիզիքական մարմնոյն եւ «Ես»ին խաչին վրայի վերջնական մահը իր վերջին օծումը չէ՞ր, որմով ունեցած իր հրաշափառ յարութեան հետեւանք ինք յաւիտենական կեանք ստացաւ: Յիսուս նաեւ ձեռնադրուած էր: Ըստ Պօղոս առաքեալի Եբրայեցւոց գրած նամակի հետեւեալ համարին, յայտնի կ'ըլլայ թէ Աստուած ինք Յիսուսը իբր քահանայապետ ձեռնադրած էր:

«Սոյնպէս էւ Բրիստոս. ոչ էլէն անչին ինչ շոտ էր լինէ՛լ շահանայապետ. այլ որ խօսեցա՛ն առ նա, թէ որդի՛ իմ էս դոս. էս այսօր շնայ զ՛եւ: Որպէս էւ ՚ի միսսոմն ասէ. Դո՛ւ էւ շահանայ յառիպեա՛ն ըսք կարգին Մե՛լիխեդեկի»:

(Եբրայեցի Ե:5-6)

«... ո՛չ թէ Քրիստո՛ս փառաւորեց ինքզինք՝ քահանայապետ ըլլալու համար, հապա ան՝ որ ըսաւ իրեն. «Դուն իմ Որդիս ես՝ այսօր ծնայ քեզ»: Ինչպէս ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ. «Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ»:

Յիսուս իր քարոզչութեան սկսելէ առաջ քառասուն օր անապատին մէջ թէ՛ ծոմապահուածութեամբ աղօթեց եւ թէ՛ սատանայէն՝ իր «Ես»էն փորձուեցաւ: Երբ Յիսուս ըսաւ. «Երթ յետս իմ սատանայ» արդէն ինք Հօրմէն ապաշխարութեան խորհուրդը ստացած էր: Կանայի հարսանիքին ալ իր գործած հրաշքով ինք պսակի խորհուրդը վաւերացուց: Նաեւ իր փուռէ պսակն ալ երկու հոգիներու միութիւնը չէ՞ր ներկայացներ՝ իր եւ իր Հօրը, միանալով ամբողջութեան:

Հայերէնի մէջ, կարծէք դիպուածով եղած ըլլար, «Խորհուրդ» բառը երեք իմաստ ունի: Առաջինը վերել յիշուած եկեղեցւոյ եօթը խորհուրդներու (Sacraments) իմաստն է, երկրորդը՝ «Խորհուրդ խորին» երգին իմաստը (mystery): Այս երկուքը իրարու հետ սերտ կապ ունին: Իսկ երրորդ իմաստն ալ, մտքին խորհածն (thought) է: Անցեալին, վերի առաջին «խորհուրդ» բառի իմաստը «ձեւակերպել» էր: Իսկ «խորհուրդ» բառը նոր կտակարանի մէջ իր վերի երկրորդ՝ այսինքն «գաղտնի», «ծածկուած», «անծանօթ» կամ «թաքուն» իմաստով գործածուած է: Իսկ խորհուրդի երրորդ իմաստն ալ՝ խորհիլը խորհուրդ (mystery) մը չէ՞: Ոեւէ անձ չի գիտեր թէ ուրիշ մը ի՞նչ կը խորհի: Խորհող անձը ինքն ալ չի գիտեր թէ իր մտքին մէջ խորհուրդը ուրկէ կը ծագի: Խորհուրդը (mystery) հիմնական եօթը տուեալներու վրայ հիմնուած է:

ա- Մարդ թէ՛ «արտաքին» էութիւն մը եւ թէ՛ ալ «ներքին» էութիւն մը ունի:

բ- «Ներքին» էութիւնը յաւիտենական է:

գ- «Ներքին» էութիւնը «Խորհուրդ մեծ»ն է:

դ- «Ներքին» էութիւնը Աստուծոյ որդին է:

ե- Դժոխքը՝ արտաքին էութեան հետ նոյնանալուն մէջն է:

զ- Դրախտը՝ «ներքին» էութիւնը գտնելու եւ

զայն յայտնելու մէջն է:

է- Աստուծոյ Որդին՝ Քրիստոս մեր հոգին ըլլալով հանդերձ, Հօրը հետ մէկ է:

Եկեղեցւոյ եօթը խորհուրդներն ալ եօթը խակրաներուն կը համապատասխանեն: Անոնք, Աստուածային շնորհք պարգեւելով, անձը իր այս աշխարհիկ կեանքի մէջի հոգեկան ճամբորդութեան ընթացքին, Աստուածահաճոյ կենցաղի մը իրականացման կը պատրաստեն: Անձն ալ, իր ստացած Ս. Հոգիի զօրութեամբ, երբ այդ վեհ կենցաղը կերտել կը յաջողի եւ իր գիտակցութեան մակարդակն ալ կը բարձրացնէ, Աստուածայայտնութեան իրականացման ծառայած կ'ըլլայ:

Նման խորհուրդներ շատ մը կրօնքներու համար հասարակաց են: Գլուխ Ե. «Կրօնասիրութիւն» մասին մէջ Մկրտութեան խորհուրդին համար գրուած է թէ ան շատ մը ուրիշ կրօնքներու մէջ եւս գոյութիւն ունէր: Խորհուրդները երկու յատկութիւններու վրայ հիմնուած են: Առաջին յատկութիւնը արտաքին երեւոյթն է: Աս արարողութենէ՝ ծիսակատարութենէ մը կը բաղկանայ եւ որոշ առարկաներու՝ ջուրի, միւռոնի, հացի՝ նշխարքի, գինիի, խաչի, սկիհի ... գործածութեան կը կարօտի: Առարկաներու գործածութենէն զատ որոշ բառերու կամ նախադասութիւններու արտասանութիւններն ալ շատ կարեւոր են: Աս, հոգեկան աշխարհի մէջ տեղի ունեցած շատ խորունկ խորհուրդի (mystery) մը ֆիզիքական աշխարհի մէջ ներկայացումն է: Առանց այս արտաքին ծէսին ներկաները եղած խորհուրդին ճշմարտութիւնը պիտի չկարենային ըմբռնել: Երկրորդ յատկութիւնն ալ վերոյիշեալ հոգեկան գետնի վրայ եղած փոփոխութիւնն է: Այս խորհուրդները տեսանելի եւ անտեսանելի երկու աշխարհներու միջեւ եղած կապերն են: Օգոստինոս Երանելին եկեղեցւոյ խորհուրդներուն

համար ըսած է. «տեսանելի նշան անտեսանելի շնորհքի»: Անտեսանելի հոգեկան աշխարհը զօրութեան վայր մըն է եւ այս խորհուրդները այդ Ս. Հոգիի զօրութեան անձէն ներս ներգործման համար աղերսանքներ են: Անոնք անձին կեանքի տեւողութեան՝ ծնունդէ մինչեւ մահ, անձը սրբացման ճամբուն մէջ պահելու կը ծառայեն: Ամէն մի խորհուրդ որոշ խակրայի մը վրայ կ'ազդէ: Հարկաւ, խորհուրդին արտաքին երեւոյթէն՝ ծէսէն զատ, հոգեկան գետնի վրայ անոր յաջողութիւնը կախում ունի ծիսակատար կղերականի ունեցած հոգեկան արթնութենէն, նաեւ խորհուրդը ստացողին ընդունակութենէն: Ապա թէ ոչ, անոնք, անձին առանց որեւէ օգուտի, միայն արտաքին արարողութիւն մը եւ պարզ ականդութիւն մը կ'ըլլան: Զանոնք բծախնդրութեամբ եւ առանց կրճատելու կատարել անհրաժեշտ է: Խորհրդակատարութեան միջոցին արտասանուած բառերը զօրութեան բառեր են եւ երգեցողութեան հետ թրթռացումի որոշ յաճախականութեամբ զօրութեան վայր մը կը ստեղծեն: Հարկաւ ասոնց բոլորը խորհուրդը կատարողին ունեցած խորհրդապաշտութեան (mysticism) մակարդակէն կախում ունի: Ծշմարիտ խորհրդապաշտը գիտէ թէ միայն անձին ճշմարիտ էութիւնն է, որ ամէն ինչի գիտակից է: Ան, նաեւ ժամանակին գիտակից ըլլալով ժամանակը եւս կ'առարկայացնէ, հետեւաբար յաւիտենական է եւ ինք միայն ներկան կ'ապրի, այսինքն իր միտքը միայն իր ներկայ արարքին վրայ կեդրոնացած կ'ըլլայ: Ան, իր ճշմարիտ էութենէ զատ ամէն ինչ՝ ներառեալ իր փորձառական էութիւնը՝ անհատականութիւնը կ'առարկայացնէ: Ան շատ լաւ գիտէ թէ իր ճշմարիտ էութիւնը գիտնալը անկարելի է: Այդ էութիւնը Աստուծոյ Որդին՝ Քրիստոս ըլլալով մեր գիտցած սովորական մարդկային յատկութիւնները կը

գերազանց է և անոնց ենթակայ չէ: Հետեւաբար Ան ամենուն հասարակաց է, այսինքն Ինքզինք ամենուն մէջ կը տեսնէ: Խորհրդապաշտ (mystic) ըլլալը ամէն անհատի պարտականութիւնն է: Ան Աստուծոյ կանչին ընդառաջել է: Ան, տեսանելիին մէջ եւ տեսանելիին միջոցաւ Անտեսանելին հասկնալ է: Խորհրդապաշտերը անոնք են, որոնք Աստուածոյ բոլոր խորհուրդներուն (mysteries) մէջէն Զինք կը տեսնեն: Ամէն անձ իր առօրեայ կեանքը ապրելով եւ իր բոլոր աշխարհիկ պարտականութիւնները կատարելով հանդերձ, կրնայ նաեւ խորհրդապաշտ մը ըլլալ: Աս հոգեկան արթնութեամբ եւ խոկումով կարելի կ'ըլլայ: Այս վերջինը՝ խոկումը վաղանցիկ պարապ արարք մը չէ: Ան գիտականօրէն, գործնականօրէն եւ փորձառականօրէն փաստուած զարթօնքի միջոց մըն է: Բայց ան յաջողութեան համար հաւատքի, համբերութեան եւ յարատեւութեան կը կարօտի: Ս. Հոգիի շնորհները Աստուծոյ զօրութիւններն են, իսկ խորհրդապաշտ անձն ալ այդ զօրութիւնները շարժման ենթարկելու կարողութիւնը ունի: Ճիշդ ասոր համար անհրաժեշտ է, որ խորհուրդը (sacrament) կատարողը խորհրդապաշտ ըլլայ (տես Ձեռնադրութեան խորհուրդը): Ամէն անհատի կեանքի նպատակը ճշմարտութեան օրէնքներու համաձայն «գիտակցաբար ապրիլ» (տես Գլուխ Ը. երկրորդ մաս) եւ կատարելութեան ձգտիլ պէտք է ըլլայ: Ամէն մարդ Աստուած կը փնտռէ, բայց չ'ուզեր զԱյն գտնել, որովհետեւ գիտէ թէ երբ Աստուած գտնէ իր կեանքն ալ հիմնականօրէն պիտի փոխուի: Յաւելեալ գիտակցութեան հետ նաեւ պատասխանատուութիւնը կու գայ: Ճիշդ ասոր համար շատեր պարզ հաւատալով (belief) կը բաւականանան, որ կրաւորական (passive) է, իսկ հաւատքը (faith) գործնական (active) է: Այս հասկացողութեամբ եկեղեցւոյ եօթը խորհուրդները վերլուծենք:

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Մկրտելին 'ի նմանէ 'ի Յորդանան Գեղ, եւ խոստովան լինելին զմեղս իւրեանց» : (Մարշէնոս Գ:6)

«Կը մկրտուէին իրմէ՝ Յորդանանի մէջ, ու կը խոստովանէին իրենց մեղքերը»:

«Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ... եւ աւա քացան նմա երկինք, եւ եղես զՀօգին Աստուծոյ զի իջանէր իբրեւ զաղանի եւ Գայր 'ի վերայ նորա» : (Մարշէնոս Գ:16)

«Երբ Յիսուս մկրտուեցաւ, ... եւ ահա՛ երկինքը բացուեցաւ ու տեսաւ Աստուծոյ Հոգին, որ աղանիի պէս կ'իջնէր ու կու գար իր վրայ»:

«Եւ ես՝ ո՛չ Գիորէի զնա այլ որ արագեացն զիս մկրտել ջրով նա՛ ասաց ցիս . Յոյր վերայ ցեօանիցես զՀօգին, զի իջանիցէ եւ Հանգշիցի 'ի վերայ նորա նա՛ է՝ որ մկրտէ Հօգուովն Սրբով» : (Յովհաննէս Լ:33)

«Ես չէի ճանչնար զայն, բայց ա՛ն որ զրկեց զիս ջրով մկրտելու, ի՛նք ըսաւ ինծի . «որո՛ւն վրայ որ տեսնես թէ Հոգին կ'իջնէ ու կը մնայ, անիկա՛ է՝ որ Սուրբ Հոգիով կը մկրտէ»:

«Գնացէ՛ք այսոսուրէս՝ աշակերտեցէ՛ք զամենայն Հելլանոսս, մկրտեցէ՛ք զնոսս յանոսն Հօր՝ եւ Որդոսյ՝ եւ Հօգոսյ սրբոյ» : (Մարշէնոս ԻԲ:19)

«Ուրեմն գացէ՛ք, աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը, մկրտեցէ՛ք զանոնք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով»:

Մկրտութիւնը առաջին խորհուրդն է: Ընդհանուր

առմամբ կը խորհինք թէ ան քրիստոնէութեան յատուկ խորհուրդ մըն է եւ քրիստոնեայ ըլլալու համար ալ հիմնական պայման մը: Գլուխ Ե. Կրօնասիրութեան բաժնին մէջ գրած եմ հետեւեալ պարբերութիւնը:

Մկրտութիւնը նաեւ ոչ քրիստոնեայ կրօնքներու մէջ ալ գոյութիւն ունեցած է: Հրեաներու Եասէնեան (Essene) աղանդը մկրտութեան խորհուրդը կը կատարէր: Շատ հաւանական է, որ Յովհաննէս Մկրտիչ այդ աղանդին կը պատկանէր: Հրեաները տակաւին այսօր «Հոգեկան մաքրութեան» համար մկրտութեան արարողութիւն մը կը կատարեն, բայց իրենց մկրտութիւնը մէկ անգամուան համար չէ: Կեանքի ընթացքին բազմաթիւ անգամներ կարելի է կրկնել: Միհրապաշտութեան կրօնքն ալ (Mithraism) մկրտութեան արարողութիւն մը կը կատարէր: Ըստ հնաբանական պեղումներէ ստացուած տեղեկութեանց, Ն.Ք. 69-էն մինչեւ Յ.Ք. հինգերորդ դարու առաջին կէսը գոյութիւն ունեցած է եւ Պարսկական եւ Հռովմէական Կայսրութիւններու մէջ տարածուած: Մկրտութիւնը նաեւ Եգիպտոսի, Թիպէթի, Մէքսիքայի, Մոնկոլիոյ, Յունաստանի, Սկանտինաւիոյ եւ Փէրուի հին մշակոյթներու կրօնքներուն մաս կազմած է:

Մկրտութեան ծէսին հիմնական «առարկան» ջուրն է: Զուրը մաքրութեան նշանը եւ միջոցը ըլլալով Ֆիզիքական գետնի վրայ անձին մեղքերէ մաքրուելը կը ներկայացնէ: Անձի մը մեղքերէ մաքրուելը ինչո՞ւ Ֆիզիքական ծէսի մը կարօտի: Քանի որ այնուհետեւ անձին կեանքը՝ կենցաղը այս աշխարհի մէջ պարտ է փոխուի: Մկրտութիւնը «հաւատքի» խորհուրդն է:

Հետեւաբար հոգեկան գետնի վրայ, մկրտութիւնը անձէն ներս Ս. Հոգիի զօրութեան ներգործութեան ճամբան կը բանայ եւ անձը Ս. Հոգիի շնորհներուն կ'արժանանայ: Ուրեմն մկրտութիւնը անձին հոգեւոր ճամբորդութեան սկիզբը կ'ըլլայ: Ան ադամական մեղքը կը սրբէ: Ի՞նչ էր այդ Ադամական մեղքը: Ընդհանուր առմամբ կը խորհինք թէ Ադամի եւ Եւայի մեղքը իրենց անհնազանդութիւնը եւ գիտութեան ծառի պտուղէն ուտելն էր: Կարելի է չէ խորհիլ որ Աստուած գիտութեան հակառակ ըլլար, քանի որ ան որ Աստուծոյ հետ է բոլոր գիտութեանց գաղանակից կ'ըլլայ: Միթէ Յիսուս իր անձին մէջ Քրիստոս յայտնաբերելով բոլոր թաքուն գիտութիւններուն գիտակից չէ՞ր: Ինք այս գիտութեան հիման վրայ իր «հրաշքները» կը գործէր, կը բուժէր, մեռելները կը յարուցէր եւ հովերու ու ծովու փոթորիկները կը խաղաղեցնէր ...: Ադամ եւ Եւայի մահացու մեղքը իրենց «Ես»ին ենթարկուելով յառաջ եկած հպարտութիւնն էր, ուստի ուզեցին գրաւել «Աստուծոյ գահը»: Իրենց այս մեղքին հետեւանք դրախտէն վտարուեցան՝ իրենց մէջ Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնը կորսնցուցին: Իրենց կեանքի սանձերը ներքին Քրիստոսէ առած, իրենց «Ես»երուն տուած եղան: Իսկ դրախտին դռներուն գոցուիլն ալ, այդ երանութիւնը վերագտնելու միջոցին մոռացութեան ենթարկուելով իրենց յիշողութեան մէջ կորսուիլն է: Յիսուս զայն վերագտնելու մէջ յաջողեցաւ եւ իր ողորմածութեամբ մեզի ալ սորվեցուց, թէ ինչ պէտք է ընենք: Բայց, հակառակ մեզի տրուած ուսուցման, ընդհանուր առմամբ, մենք ալ Ադամ եւ Եւայի պէս մեր կեանքին սանձերը տուած ենք մեր «Ես»երուն: Մկրտութեան խորհուրդը այս հոգեկան ճամբորդութեան դուռը կը բանայ եւ անհատին նոր հոգեկան կեանք մը կու տայ:

Միթէ չէ՞նք ըսեր թէ ջուրը կենսատու է: Յիսուսի աշակերտներուն ժամանակ մկրտութիւնը չափահաս տարիքի կ'ըլլար եւ մկրտուողը պարտ էր յօժարաբար եւ հաւատքով ընտրել հոգեւոր ճամբան եւ մկրտուիլ: Աւելի վերջ մանկամկրտութիւնը սովորութիւն դարձաւ: Այս հասկացողութիւնը սխալ պէտք չէ ըլլայ, քանի որ ամէն մանուկ Աստուծոյ մէկ արտայայտութիւնն է: Ամէն մանուկ անմեղ է: Միթէ Յիսուս ինք չըսա՞ւ թէ Աստուծոյ թագաւորութիւնը մանուկներու պէս եղողներունն է: Մկրտութիւնը, մանկամկրտութեան պարագային, Հոգիին նոր մարմնին մէջ գալուն՝ «բարի գալուստի» տօնակատարութիւնն է: Հոգ չէ թէ պատիկը ինք գիտակից չէ, թէ ինչ կը պատահի եւ դատողութեան ու ընտրութեան կարողութիւնը չունի: Բայց երբ չափահաս ըլլայ, իրեն ճշմարտութեան ճամբան սորվեցնել իր կնքահօր պարտականութիւնը պիտի ըլլայ: Ճիշդ ասոր համար պատշաճ կնքահայր մը գտել շատ կարեւոր է: Շատեր կը կարծեն թէ կնքահօր պարտականութիւնը պատիկին նուէրներ, խաղալիքներ տալու մէջ կը կայանայ: Երախային ծնողքին վաղամեռիկ ըլլալու պարագային, կնքահայրը իր սանին Փիզիքական հոգատարութիւնն ալ պարտ է իր վրայ առնել: Ասոնք լաւ սովորութիւններ են եւ պէտք է շարունակուին, բայց կնքահօր մը բուն պարտականութիւնը կը սկսի երբ մկրտուողը չափահաս ըլլայ: Իսկ եթէ չափահաս եղողը, մկրտուած ըլլալով հանդերձ, իր «Ես»ին կապուած ըլլայ եւ չգտէ հոգեւոր ճանապարհը, Ս. Հոգիի զօրութենէն չ'օգտուիր: Մկրտութեան խորհուրդը Ս. Հոգիի զօրութեան ճամբան կը բանայ: Մկրտութեան խորհուրդը հիմնական խակրան կը բանայ, որպէսզի անձէն ներս ներգործած Ս. Հոգիի զօրութիւնը վարէն վեր բարձրանալ սկսի սկիզբ տալով հոգեւոր ճամբորդութեան:

ԴՐՈՇԱԻ ԽՈՐՀՈՒԴՈՒՆ

Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ դրոշմի խորհուրդի կատարումը մկրտութեան խորհուրդին անմիջապէս կը յաջորդէ: Երբեմն ժողովրդային բարբառով մկրտութիւն եւ կնունք բառերը նոյն իմաստով կը գործածուին: Բայց անոնք երկու տարբեր խորհուրդներ կը ներկայացնեն: Կնունքը՝ դրոշմի խորհուրդն է: Վերելի «Մկրտութեան Խորհուրդը»-ի մասին մէջ տեղագրուած աւետարանէն առնուած մէջբերումէն կը տեսնենք թէ Յիսուսի մկրտութենէն ետք Ս. Հոգին աղանակերպ Անոր վրայ իջաւ: Ասիկա Յիսուսին դրոշմուելուն խորհուրդն է: Դրոշմի խորհուրդը անձին Ս. Հոգիի զօրութիւնը՝ շնորհները կը պարգեւէ: Անհատին մկրտութեամբ բացուած զօրութեան ճամբան այլեւս Ս. Հոգիի անձէն ներս ներգործելուն համար պատրաստ եւ ընդունակ վիճակի հասած է: Հետեւաբար դրոշմը անձին մէջ յաւիտենական կեանքի «յոյսը» կ'արծարծէ: Այս խորհուրդին առարկան միւռոնն է: Երախան կ'ենթարկուի օծման հետեւեալ արարողութիւններուն.

ա- Գլուխը. «... կնիք երկնաւոր պարգեւացն անապականութեան»: - Միտքի խորհուրդներու (thoughts) անապականութիւն այսինքն սրբութիւն:

բ- Աչքերը. «... լուսաւորեսցէ զաչս քո. զի մի՛ երբեք ննջեսցես ի մահ»: - Զարթօնքի շնորհքն է որ կը արուի, որպէսզի անձին կեանքը հոգեկան քունի մէջ չանցնի եւ ինք հոգեկան մահէն պաշտպանուի:

գ- Ականջները. «... եղիցի քեզ ի լսելութիւն աստուածային պատուիրանացն»: - Այս խորհուրդը Յիսուսի սորվեցուցածներուն եւ տուած պատուէրներուն բուն՝ վերացական իմաստները հասկնալու կարողութիւնը կու տայ:

դ- Քիթ. «... եղիցի քեզ հոտ անուշութեան կենաց ի

կեանս»: - Այս օծումը անձին գոհունակութեան եւ համբերութեան շնորհները, ինչպէս նաեւ կեանքը զնահատելու շնորհքը կը պարգեւէ, որպէսզի կեանքի պատահարները, ինչ որ ալ ըլլան, իրեն համար կեանքը միշտ անուշահոտ ծաղիկի մը պէս ըլլայ:

ե- Բերանը. «... եղիցի քեզ պահպանութիւն բերանոյ եւ դուռն ամուր շրթանց քոց»: - Ինչպէս գլխու օծման միջոցին խորհուրդները զսպելու շնորհքը տրուեցաւ, հոս ալ խօսքը կարենալ զսպելու շնորհքն է որ կը տրուի, որպէսզի անձը միայն օգտակար, անվնաս եւ բարի խօսքեր խօսի:

զ- Ձեռքերը. «... եղիցի քեզ պատճառ բարեգործութեան ամենայն առաքինի գործոց եւ վարուց»: - Ինչպէս գլխու եւ բերնի օծումները անձին կը շնորհեն խորհուրդը եւ խօսքը ճիշդ գատելու կարողութիւնը, այս օծումն ալ ճիշդ գործելու զատողութիւնը կը շնորհէ, որպէսզի արարքները միայն բարեգործութիւն ըլլան:

է- Սիրտը. «... սիրտ սուրբ Հաստատեսցէ ի քեզ, եւ Հոգի ուղիղ նորոգեսցէ ի փորի քում»: - Այս օծումն ալ անձին բարեսիրտ եւ կարեկից ըլլալու, գուժ եւ ողորմութիւն ցոյց տալու շնորհքը կու տայ: Այս բոլորն ալ սիրոյ արտայայտութիւններն են:

Այս վերեւի եօթը օծումները, եօթը զգայարանքներու գործարաններուն կը համապատասխանեն:

Կան երկու օծումներ եւս.

ը- Կոնակը. «... եղիցի քեզ վաճան ամրութեան, որով կարասցես զամենայն նետս մուխս չարին շիջուցանել»: - Այս օծման շնորհքն ալ անձին, չարին՝ իր «Շս»ին դիմադրելու եւ անոր բոլոր ազդեցութիւնները չեզոքացնելու կարողութիւնը կու տայ:

թ- Ոտքերը. «... ուղղեսցէ զգնացս քո ի կեանսն

յաւիտենից. զի մի սասանեսցիս»: - Այս շնորհքն ալ անձին իր կեանքի տեւողութեան առանց վարանումի եւ առանց իր նպատակէն շեղելու յաւիտենական կեանքի՝ Աստուածայայտնութեան ծառայելու համար յարատեւութեան կարողութիւնը կու տայ:

«Եւ եղև Ըանկարթակի Ընշի՛նն յերկնից՝
Եկեալ իբրև սասոր՛կ Ըողմոյ. Եւ Ելի՛ց
չամէնայն Գոռնն յորում նստելն: Եւ
Երեւեցան նոցա Բաթանեա՛ւ լեզուով իբրև
'ի Ըրոյ Եւ նստա՛ւ իրաւանշիւր 'ի վերայ
նոցա: Եւ լցա՛ն ամենեկեան Հոգո՛ով

Սրբո՛վ ...»: (Գործի ստեղծում Բ:2-4)

«Յանկարծ շառաչ մը եղաւ երկիրքէն՝ սաստկաշունչ
Հովի մը ձայնին պէս, ու լեցուց ամբողջ տունը՝ ուր
նստած էին: Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց՝
որպէս թէ կրակէ, ու հանգչեցան անոնցմէ
Իւրաքանչիւրին վրայ: Բոլորն ալ լեցուցան Սուրբ
Հոգիով ...»:

**Աշակերտներուն դրոշմի խորհուրդն ալ Պենտակոստէի
օրը տրուեցաւ:**

ԱՊՍՏՆԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ:

Ապաշխարութեան խորհուրդը կը տրուի մեղաւորի մը, որ իր գործած մեղքերուն համար զղջացած է: Այսքան տարի Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ ծառայած ըլլալով հանդերձ նոյնիսկ մէկ անգամ չեմ տեսած Ապաշխարութեան խորհուրդի կատարումը հակառակ որ ան եկեղեցւոյ պարտադրիչ խորհուրդներէն միւն է: Միայն պսակադրութիւնը, ձեռնադրութիւնը եւ վերջին օծումը պարտադրիչ չեն: Չեմ տեսած որ Եկեղեցին ոեւէ անձի ապաշխարութեան պատիժ տայ: Երբ այս ուղղութեամբ քահանայի մը հարցուցի,

իր պատասխանը եղաւ. «Խորհուրդ մըն է որ գոյութիւն ունի բայց բնաւ չի գործադրուիր»:

Ան իր մէջ երեք մասեր կը պարունակէ: Առաջինը՝ անձին զղջումը եւ դարձի գալն է: Աս անկեղծութեամբ, գիտակցօրէն եւ ճշմարիտ զղջում պէտք է ըլլայ: Այս խորհուրդին առաջին իմաստը՝ «մաքրութիւնը» կը ներկայացնէ: Իր մտային ուշադրութեան առարկան այլեւս պէտք չէ աշխարհիկ հետապնդումները ըլլան, այլ հոգեկանը՝ այսինքն իր ներքին Քրիստոսը: Երկրորդ մասը խոստովանանքն է: Անձը իր «անառակ որդի» եղած ըլլալը պէտք է ընդունի եւ լրիւ անձնատուութեամբ Քրիստոսի եւ Անոր ողորմութեան յանձնուի: Իր կեանքին սանձերը պարտ է Քրիստոսին տալ, քան թէ իր «Ես»ին: Ասիկա անհատին ուսերուն վրայ մեծ պատասխանատուութիւն մը կը դնէ: Աս ալ բոլորի հանդէպ՝ նոյնիսկ իր թշնամիին ներողամիտ եւ ողորմած ըլլալն է: Այս խորհուրդի երրորդ մասն ալ եկեղեցւոյ տուած պատիժն է, որ անձը պարտ է կրել: Ապաշխարութեան խորհուրդին շնորհած Ս. Հոգիի զօրութեան հետեւանք անձը կ'արժանանայ պատիժը սիրով ընդունելու կարողութեան եւ հակառակ պատժը-լած ըլլալու կացութեան ինքզինք երջանիկ զգալ: Միեւնոյն ժամանակ պէտք չէ մոռնանք թէ ինչ որ ցանկենք ան կը հնձենք: Հետեւաբար անհատը նախապէս գործած մեղքերուն հունձքը՝ պատիժը, պարտ է քաղել: Նոյնիսկ Աստուած չի միջամտեր իր դրած տիեզերա-կան օրէնքին: Բայց Աստուծոյ ողորմութիւնը եւ ներողամտութիւնը իր շնորհած յաւելեալ զօրութեան ներգործումով յայտնի կ'ըլլայ: Այս զօրութիւնն ալ անձին իր քաղելիք հունձքերուն ժխտական ազդեցու-թիւններուն տոկալու կարողութիւնը եւ համբերու-թիւնը կու տայ: Վերեւ յիշեցինք ապաշխարութեան խորհուրդին առաջին իմաստը, այս վերջինն ալ անոր

երկրորդ իմաստը՝ «արդարութիւն»ը կը ներկայացնէ: Այլեւս կեանքի վատ պատահարները, ինչ որ ալ ըլլան, անձը համբերութեամբ, առանց գանգատելու բոլորին կը հանդուրժէ: Թէեւ այս խորհուրդը մեր եկեղեցւոյ մէջ հազուադիւրսէն կը կատարուի, սակայն անկէ մնացորդ երեւոյթներուն ամէն Կիրակի խոստովանանքի պահուն ակնատես կ'ըլլանք, բայց պէտք է հասկնանք թէ անոնք խորհուրդի տուուչութիւնը չեն:

Ապաշխարել բառը իր իմաստը իր մէջ կը պարունակէ: «Ապ» նախադաս մասնիկը տուեալ բառի մը հակառակ իմաստ կու տայ (օրինակ. երջանիկ եւ ապերջանիկ): Ապաշխարել բառն ալ ապաշխարէլ բառէն սերած է: Ուրեմն ապաշխարել բառն ալ աշխարհել բառին հակառակն է: Հետեւաբար երբ անձը կ'ապաշխարէ կը նշանակէ թէ ինք աշխարհիկ հետապնդումներէ՝ իղձերէ, ցանկութիւններէ, սովորութիւններէ, մոլութիւններէ եւ եօթը մահացու մեղքերէ կը հեռանայ: Ասոնք բոլորն ալ «Ես»էն ծագում կ'առնեն, ուրեմն ապաշխարելն ալ «Ես»էն հեռանալ եւ զայն անտեսելն է: Այս իմաստով ապաշխարելը միտքի ուղղութեան փոփոխութիւն մըն է արտաքին աշխարհիկ բաներէ դէպի ներքին Քրիստոսը: Այս խորհուրդը կը համապատասխանէ երրորդ ճառագայթածեւ խակրային, որ զգացումները կը կառավարէ: Առանց ապաշխարութեան Աստուծոյ հետ հաղորդուիլ անկարելի է: Աստուծոյ հետ հաղորդուիլ կը նշանակէ Աստուծոյ հետ մէկ ըլլալ:

Օրուայ պատարագէն առաջ, Գիշերային եւ Առաւօտեան երկու ժամերգութիւններ տեղի կ'ունենան: Գիշերայինը զարթօնքի առիթը կու տայ, իսկ Առաւօտեանն ալ՝ փառաբանութեան, որպէսզի Ս. Պատարագի վերջաւորութեան Աստուծոյ հետ կարենանք հաղորդուիլ: Ասոնք Ֆիզիքական գետնի վրայ եղած արտայայ-

տուր իւններ են, որ նաեւ հոգեկան զօրութեան դետնի վրայ ալ պէտք է իրականանան: Գիշերային ժամերգութեան սկսելէ առաջ, թէ՛ քահանան եւ թէ՛ ժողովուրդը դէպի արեւմուտք կը դառնան ու թէ՛ պատրանքային աշխարհէն, թէ՛ ալ սատանայէն՝ իրենց «Ես»էն եւ անոր պաշտօնեաներէն՝ դեւերէն՝ եօթը մահացու մեղքերէն կը հրաժարին: Այս հրաժարումը երեք անգամ կը կրկնուի եւ դէպի արեւելք՝ դէպի խորան, դէպի Աստուծոյ կը դարձուի: Աս, ներկաներուն ապաշխարելու խոստումն է:

«Հրաժարիմք ի սատանայէ եւ յամենայն խաբէութենէ նորա. ի պատրանաց նորա. ի խորհրդոց նորա. ի չար կամաց նորա. ի չար հրեշտակաց նորա. ի չար պաշտօնեից նորա. ի չար կամարարաց նորա. եւ յամենայն չար զօրութենէ նորա. հրաժարելով հրաժարիմք:

Եւ ապա դառնամք ի ըյս Աստուածգիտութեան»:

Այս տողերը ապաշխարութեան խորհուրդէն մնացած մաս մը կը ներկայացնեն:

Ի՞նչ է եկեղեցի երթալու եւ հաղորդութիւն առնելու իմաստը, եթէ Գիշերային ժամերգութեան սկիզբէն ներկայ չենք գտնուիր եւ այս ապաշխարութեան խոստումը չենք ըներ: Արդեօք կը խորհինք թէ մեր առած հաղորդութիւնը ընդունելի կ'ըլլա՞յ: Արդեօք ժամերգութիւնները զգուեցուցի՞չ կը գտնենք, որ սկիզբէն ներկայ չենք ըլլար կամ զանոնք կը կրճատենք: Ապաշխարութեան նկատմամբ արդեօք մեր հասկացողութիւնը ի՞նչ է:

Այս խորհուրդէն մնացորդ երկրորդ երեւոյթ մըն ալ խոստովանանքն է, որ ապաշխարութենէն առաջ, գործուած մեղքերուն համար զղջումի գալն է: Վերել յիշուած հրաժարականէ յետոյ, պատարագիչ քահանան,

գիշերային ժամերգութեան սկսելէ առաջ, իր խոստովանանքը կ'ընէ, ինչպէս նաեւ, երկրորդ անգամ, պատարագի սկիզբը՝ խորան բարձրանալէ առաջ, իսկ ժողովուրդն ալ՝ պատարագի վերջաւորութեան, ճիշդ հաղորդութենէ առաջ: Խոստովանանքին իմաստը մեղքերը ընդունելով զղջումի գալ եւ դարձեալ զանոնք չգործելու խոստումն է: Քահանան ալ, արձակման աղօթքով, խոստովանող հաւատացեալներուն համար Աստուծոյ ողորմութիւն կը խնդրէ:

Առանց ապաշխարութեան կարելի չէ Աստուծոյ հետ հաղորդուիլ: Մեծ պահքի ապաշխարութեան շրջանը եօթը շաբաթ կը տեւէ: Ամէն մի շաբաթ, կարգով ամէն մի խակրայէ զօրութեան ներգործումին ընդդիմութիւնը անհետացնելու առիթը կու տայ: Անձն ալ այդ ընդդիմադիր մահացու մեղքերը մէկ առ մէկ անհետացնելու առիթը կ'ունենայ: «Դունբացէք»ի ժամերգութիւնը ապաշխարութեան այն հանգրուանն է, ուր անհատը պէտք է յաղթած եւ վեց մահացու մեղքերը անհետացուցած ըլլայ: Վեց շաբաթները լրացուցած անձը մինչեւ վեցերորդ խակրայէ զօրութեան հոսքի բոլոր ընդդիմութիւնները չէզոքացուցած, զօրութեան բարձրացման ճամբան բացած, Աստուծոյ կ'աղերսէ իր խակրաներուն բացումը եւ զօրութեան իր մէջ առատօրէն հոսումը:

Խակրաները միայն ներքին Քրիստոս կարող է բանալ: Մենք միայն կրնանք զանոնք բացուելու պատրաստել: Միթէ Քրիստոս չըսա՞ւ. Ձեզի Ս. Հոգին պիտի զրկեմ:

«Եւ ահա ես առաջե՛մ պատարագս չօր իմոյ
 'ի եւ դո՛ւ՛ նստարո՛ւն 'ի լաղալս
 յԵրոսասղէմ մինչեւ պղեմնոցո՛ւն»

զօրոտելին ՚ի բարձանց» : (Գուգաս ԻԴ:49)

«Եւ ահա՛ եւս կը դրկեմ ձեր վրայ իմ Հօրս խոստումը, բայց դուք կեցե՛ք Երուսաղէմ քաղաքին մէջ, մինչեւ որ բարձրէն դրկուած զօրութիւն հազնիք»:

«Իսկ մեծիւնարիշն Հոգին Սուրբ՝ զոր առաջնայեւ Հայր յանուն իմ, նա՛ որոնուցե յեւ յեւ զամենայն որ ինչ ասացի յեւ եւ յիշեցորոցե՛ յեւ» : (Յովհաննոս ԺԴ:26)

«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը պիտի դրկէ իմ անունովս, անիկա՛ պիտի սորվեցնէ ձեզի ամէնը՝ եւ ինչ որ ըսի ձեզի՝ պիտի յիշեցնէ ձեզի»:

«Բայց յորժամ եկեացե մեծիւնարիշն, զոր է՛ս առաջնայից յեւ ՚ի Հօրէ զՀոգի՛ն Տշմարդոտելեան որ ՚ի Հօրէ ելանէ նա՛ զկայեացե զասն իմ» : (Յովհաննոս ԺԵ:26)

«Բայց երբ Մխիթարիչը գայ՝ որ ես Հօրմէն պիտի դրկեմ ձեզի, ձշմարտութեան Հոգին՝ որ կը բխի Հօրմէն, անիկա՛ պիտի վկայէ իմ մասիս»:

Ոչ թէ Ս. Հոգին ուրիշ տեղ մըն է եւ հիմա ալ մեր քով պիտի գայ, այլ Ս. Հոգիի զօրութիւնը միշտ ամենուրեք ներկայ է: Մենք ենք որ ընդունակ անօթներ չենք: Երբ ներքին Քրիստոս խակրաները բանայ, ընդունակ անօթներ կ'ըլլանք:

Հետեւեալը «Դոնբացէքի ժամերգութեան» մէջ մեր աղերսանքը կը ներկայացնէ.

«Բայց մեզ Տէր. Բայց մեզ Տէր. Բայց մեզ Տէր զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ քեզ»:

Այս աղերսանքը, զօրութեան մոտքին համար, այդ խակրաներուն բացման աղերսանքն է: «Դոնբացէք»ի

մէջ յիշուած դռները այդ խակրաները կը ներկայացնեն, որոնք Զօրութեան մուտքի դռներն են: Այս ապաշխարութեան շրջանէն վերջ անձին մէջ զօրութեան մինչեւ եօթներորդ խակրա բարձրացման եւ Աստուածայայտնութեան իրականացման միայն մէկ արգելք կը մնայ: Այդ արգելքն ալ վերջին մահացու մեղքը՝ հպարտութիւնն է, որ կարելի է անհետացնել միայն «Ես»ին խաչին վրայ մահուամբը: «Ես»ը շատ խորամանկ է: Պայքարը չկորսնցնելու համար իր վերջին յաղթուկը (trump card)՝ հպարտութիւնը կը գործածէ: Անձին կուտայ յաջողած ըլլալու հպարտութիւնը, ինչ որ Աստուածայայտնութեան արգելք կը հանդիսանայ, եւ անձին տակաւին իր «Ես»ին կապուածութիւնը ցոյց կու տայ: Մենք ալ պարտ ենք ըսել. «Երթ յետս իմ սատանայ», քան թէ հպարտանալ: Որով «Ես»ին վերջնական մահուամբը մեր անձերուն մէջ Քրիստոսի հրաշափառ յարութեան կ'արժանանանք: Հայաստանեայց Եկեղեցւոյ ապաշխարութեան յատուկ օրը Աւագ Հինգշաբթի օրն է, եւ անցեալին, այդ օրը, պատարագէ առաջ մասնաւոր «կարգ ապաշխարողաց» կը կատարուէր:

ՊԱՏԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Պսակի խորհուրդը երկու հոգիներու միութիւնն է: Ինչպէս այս գիրքին մէջ այլուր գրած եմ, ստեղծագործութիւնը երկուութեան վրայ (ինչպէս արու եւ հգ) հիմնուած է, պսակադրութիւնն ալ այս երկու կէսերուն միացումովը ամբողջութիւն մը ի յայտ բերել է: Ամբողջութիւնը կատարելութիւն է եւ Աստուած կը ներկայացնէ: Հետեւաբար ամբողջութիւնը ստեղծագործ է: Միթէ ընտանիքի մը մէջ զաւակի մը ծնունդով Աստուածայայտնութիւնը չ'իրականանա՞ր: Ամէն մանուկ Աստուծոյ մի արտայայտութիւնը չէ՞: Երբ ամբողջութիւնը Աստուած կը

ներկայացնել, ամուսնութիւնն ալ «սիրոյ» արտայայտութիւնը կ'ըլլայ: Սիրոյ հետ միասին ալ «ողջախոհութիւն» եւ «մաքուր կեանք» մը ապրիլն է: Նման սիրով լի ամուսնութեան մը մէջ անձը կը սորվի նաեւ սիրոյ բոլոր արտայայտութիւնները՝ յարգանք, վստահութիւն, գուլթ, կարեկցութիւն, գոհողութիւն, բարեսրտութիւն, ողորմածութիւն, օգնութիւն, ուրախացնել, երջանիկին հետ երջանկանալով կրկնապատկել անոր երջանկութիւնը, տխուրին ալ ցոյց տալ կարեկցութիւն եւ կիսել անոր տխրութիւնը: Միթէ ամէն ծնողք իր զաւակներուն հետ նոյն հայեացքով չի՞ վարուիր:

Թէեւ միասեռականներու ամուսնութիւնը, որ այսօր շատ մը տեղեր պաշտօնապէս կ'արտօնուի եւ ճանաչում գտած իրողութիւն մըն է, սխալ է: Նման ամուսնութիւն մը ամբողջութիւն մը չի կազմեր եւ չի կրնար Աստուածայայտնութեան ծառայել: Պէտք չէ անձերը դատել: Մեր մարդկային պարտականութիւնն է սիրել ամէն անձ, որովհետեւ Քրիստոս անոնց մէջն ալ է: Երկու նման սեռերու միջեւ եկեղեցական Պսակի խորհուրդը կատարել ու «մարդկային»՝ Ֆիզիքական կամ օրէնքին արտօնած ընտանեկան նիւթական (դրամական) շահերէ մղուած այդ խորհուրդը ցած մակարդակի իջեցնել Ս. Հոգիի զօրութեան անարգանք է: Եթէ այդ անձերը կը փափաքին միասին ապրիլ, պէտք չէ հակառակիլ, բայց ոչ իբր պսակեալ: Այն բոլոր հոգեւորականները որ նման պսակի խորհրդակատարութիւնը կը կատարեն, միթէ այս իրողութիւններուն տեղեակ չե՞ն:

ՁԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ձեռնադրութեան՝ իշխանութիւն տալու խորհուրդը Մովսէսի կողմէ հաստատուած է, ինչ որ քրիստոնէութեան մէջ եւս կը շարունակուի: Յիսուս ալ իր աշակերտներուն քարոզելու, բժշկելու, մեղքերու թո-

դուժիւն տալու, «դեւեր» հանելու... Իշխանութիւնը տուաւ: Առաքեալներն ալ հոգեգալստեան օրը իրենց ստացած շնորհները իրենց յաջորդներուն փոխանցեցին՝ անոնց տալով իշխանութիւն: Հետեւաբար այն բոլոր եկեղեցիները, որոնք կը հետեւին այդ առաքելական իշխանութեան տուչութեան շարունակականութեան կը կոչուին «առաքելական եկեղեցիներ»:

Ձեռնադրուող անձը պէտք է հոգեւոր կոչում ունենայ եւ ձեռնադրութեամբ ալ յաւելեալ Ս. Հոգու շնորհներ ինչպէս նաեւ իմաստութիւն ստանայ: Ձեռնադրութեան նպատակը անձին շնորհ եւ իմաստութիւն պարգեւելով եկեղեցիին ծառայելու իշխանութիւն տալ է: Ձեռնադրեալը ասոնց միջոցով միւս խորհուրդները կատարելու, քարոզելու, կարգալու եւ սորվեցնելու պատրաստ կ'ըլլայ: Ձեռնադրութեան խորհուրդը կը համապատասխանէ հինգերորդ խակրային՝ կոկորդի խակրային: Հինգերորդ խակրային ազդեցութիւնը խօսելու, սորվելու եւ սորվեցնելու վրայ է, որով պատշաճ է որ յաւելեալ Ս. Հոգիի զօրութեան ազդեցութիւնը այս խակրայէն, անձին Աւետարանը կարդալու, մեկնաբանելու եւ սորվեցնելու կարողութիւնը տայ: Որպէսզի զօրութիւնը այս կոկորդի խակրայէն պատշաճ կերպով հոսի, պէտք չէ որ ընդդիմութիւններու հանդիպի: Հետեւաբար այն որ պիտի ձեռնադրուի պարտ է իր առաջին չորս խակրաներուն ընդդիմութիւնները չեզոքացուցած ըլլայ:

ա- Անձը պէտք չէ ծոյլ ըլլայ: Կարեւոր է որ ինք բոլոր արարողութիւններուն սկիզբէն ներկայ գտնուի եւ ոչ թէ մասնակցի սկսելէ ետք: Ժամանակ հայթայթէ Աստուածաշունչը կարդալու, ուսումնասիրելու եւ սորվեցնելու:

բ- Անձը պէտք է ողջախոհ (chaste) ըլլայ եւ մաքուր կեանք մը ունենայ, ինչպէս նաեւ տիպար, խելացի,

բարի, ոչ ցուցամոլ, պարկեշտ, պատուաւոր եւ ուղղամիտ: Ողջախոհութիւնը անհրաժեշտ է, որովհետեւ սեռային յարաբերութիւնները պատճառ կ'ըլլան բարձր որակով զօրութեան վատնումի, նոյնիսկ ամուսնացեալ ձեռնադրեալները պարտ են արարողութիւններէ առաջ ինքնագսպումով ողջախոհ մնան: Սովորութիւն էր որ ամուսնացեալ պատարագիչ քահանաները շաբաթ գիշերը եկեղեցւոյ մէջ կը գիշերէին, քան թէ իրենց տունը՝ իրենց կնոջ մօտ:

դ- Անձը հոգեպէս եւ Ֆիզիքսպէս առողջ պէտք է ըլլայ: Հոգեպէս առողջ ըլլալ կը նշանակէ իր բոլոր զգացումները եւ յուզումները զսպելու կարող ըլլալ: Անձը պէտք է անոնցմէ տարուի: Իր մէջ բարկութիւն պէտք է գոյութիւն ունենայ: Ֆիզիքսպէս ալ առողջ ըլլալ անհրաժեշտ է: Մարմինը պակասաւոր պէտք է ըլլայ, այսինքն անդամներէն մին պակաս, նոյնիսկ այդ ըլլայ ճկոյթ մատը: Որովհետեւ որեւէ տեսակի հիւանդութիւն կամ անդամի պակասութիւն, հոգ է թէ այդ պատահի արկածի հետեւանք, զօրութեան պակասի նշան է, հետեւաբար անհատին զօրութեան մակարդակի վրայ այդ ձեռնադրութեան անարժանութեանը նշանը կ'ըլլայ:

դ- Անձը պարտ է իր ստացած Աստուածային սիրոյ զօրութիւնը կարողանայ ցոլացնել բոլորին: Մարդ իր չսիրած Աստուծոյն չի կրնար պաշտել: Պաշտելը սիրելէ կը ծագի: Աստուածասիրութիւնը իր մէջ իր գագաթնակէտին պէտք է հասած ըլլայ: Աս ալ յայտնի կ'ըլլայ բոլորին սէր ցոյց տալով՝ նոյնիսկ իր թշնամիին: Հարկաւ ասոր ինքնաբերաբար կը հետեւի սէրը հանդէպ իր կրօնքին եւ իր եկեղեցիին:

Ձեռնադրութեան միջոցին եպիսկոպոսը ընծայեալի մագը խաչաձեւ կը կտրէ: Աս ընծայեալին երկրային եւ մարմնաւոր ցանկութիւններէ հրաժարի-

լը կը խորհրդանշէ:

Հայաստանեայց Եկեղեցին ունի ձեռնադրութեան ինը աստիճաններ: Ընդհանրապէս առաջին չորսը միասին կը տրուին եւ կը կոչուին դպրութեան աստիճաններ: Այս չորս աստիճանները անձին հետեւեալ իրաւասութիւնները կու տան.

ա- Դռնապանութիւն

բ- Ընթերցողութիւն

գ- Երգմանեցուցչութիւն (exorcism)

դ- Ձահընկալութիւն (մոմակալութիւն)

Ընդհանրապէս յաջորդ երկու աստիճանները միասին կը տրուին, բայց ոչ անպայման:

ե- Կիսասարկաւագութիւն

զ- Սարկաւագութիւն

Մինչեւ վեցերորդ աստիճան «խոնարհ պաշտօնէութիւն» կը կոչուի: Յաջորդ երեք աստիճաններն ալ «բարձրաստիճան հոգեւորութիւն», որովհետեւ անոնք կը տրուին ձեռնադրութեամբ եւ օծումով:

է- Քահանայութեան աստիճան:

Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ քահանայութեան թեկնածուն, ձեռնադրութենէ առաջ, ամուսնացեալ կամ կուսակրօն քահանայութիւնը ընտրելու ազատութիւնը ունի: Երբ թեկնածուն կը փափաքի քահանայագործել որպէս ամուսնացեալ քահանայ, պարտ է ձեռնադրութենէ առաջ ամուսնանալ: Արդեօք ի՞նչ է այս օրէնքին դրդապատճառը: Պսակադրութեան խորհուրդը կը համապատասխանէ չորրորդ խակրային, իսկ ձեռնադրութիւնն ալ՝ հինգերորդին: Արդեօք աւելի բարձր խորհուրդ մը աւելի ցածէն առաջ ստանալ սխալ կ'ըլլա՞յ:

ը- Եպիսկոպոսութեան աստիճան:

Եպիսկոպոսական աստիճանը անձին ձեռնադրելու լիազօրութիւնը կու տայ:

Թ- Կաթողիկոսութեան աստիճան:

Կաթողիկոսութիւնը անձին կու տայ բոլոր տեսակի ձեռնադրութիւններու իրաւասութիւնը՝ յատկապէս եպիսկոպոսական ձեռնադրութեան:

ԿԱՐԳ ՀԻՄՆԱԿԱՅ ԿԱՄ ՎԵՐՁԻՆ ՕԾԱՆ ԽՈՐՀՈՐԴ:

Այս խորհուրդը ընդհանրապէս ծանր հիւանդներուն վրայ կը կատարուի: Հիւանդութիւնը ֆիզիքական ըլլալով հանդերձ զօրութեան գետնի վրայ գոյացած լուրջ պակասի կամ հոսքի՝ անհաւասարութեան մէկ արտայայտութիւնն է (տես Գլուխ Գ. «Հիւանդութիւն եւ մահ»): Խորհուրդին նպատակն ալ անձին յաւելեալ զօրութիւն տալ է, որպէսզի անձը այդ զօրութեան ազդեցութեամբ կարողանայ իր առողջութիւնը վերագտնել: Անշուշտ աւ ալ կախեալ է անձին ընդունակութենէն եւ իր հիւանդութենէն սորված դասէն: Այս խորհուրդին իմաստն ալ յաւիտենական կեանքի ժառանգութիւնը եւ հոգիի փրկութիւնն է: Իսկ անոր վերացական իմաստն ալ աւելի կարեւոր է: Հիւանդին հիւանդութեան բուն պատճառը իր եօթը մահացու մեղքերն են, որոնք զօրութեան հոսքը՝ անձէն ներս ներգործումը, կամ ներգործած զօրութեան ներդաշնակ եւ հաւասար տարածումը կը խափանեն: Իսկ մահն ալ այդ եօթը մահացու մեղքերուն մահն է: Որպէսզի այս մահը կարենայ իրականանալ յաւելեալ զօրութեան կը կարօտի: Կատարուած այս խորհուրդն ալ անհատին այդ զօրութիւնը կը պարգեւէ: Աս ալ «վիշապին»՝ «Շա»ին եօթը գլուխները կտրելն է (տես յաջորդող Յայտնութեան գիրքէն մէջբերումներու մասը): Աս Յիսուսի Նիկողեմոսին ըսած. «Եթէ ոչ ոք ծնցի ի վերստին, ո՛չ կարէ տեսնել զարքայութիւն Աստուծոյ:» պատգամին առաջին քայլը՝ սկիզբն է, որ «երկինք երթալու» ճամբան կը բանայ: Հարկաւ «երկինք երթալը», մեր մանկութեան կարծածը չէ՝ մահէն ետք ամպերէն վեր

տեղ մը անվերջ ժամանակ երջանիկ ապրիլ: Այլ, ան մտային խաղաղութիւն կերտելով կեանքին սանձերը իր ճշմարիտ հուլիան՝ Քրիստոսի յանձնելն է: Հետեւաբար Աստուծոյ ներկայութիւնը վայելել է եւ անձին իր կենցաղով ու հայեացքով «երկինք»ը՝ դրախտը հոս աշխարհի վրայ բերելն է:

ՀԱՊՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՐԴ:

Ինչպէս մկրտութիւնը հոգեւոր ճամբորդութեան սկիզբն է, հաղորդութիւնն ալ ճամբորդութեան վերջաւորութիւնն է: Հաղորդութեան խորհուրդը կը կատարուի պատարագի միջոցին, պատարագի վերջաւորութեան ստացուած հաղորդութեան միջոցաւ: Խաղաղութիւնը եւ սէրը այս խորհուրդին բուն իմաստը կը ներկայացնեն: Վերացական իմաստով, հաղորդութիւնը՝ Աստուծոյ հետ հաղորդուիլը, անձին իր սիրահարին՝ Աստուծոյ հետ միանալն է: Աս, ամէն մի անհատի համար իր մէջ Աստուածայայտութիւնը իրականացնելով կարելի կ'ըլլայ: Ասոր համար ալ մտային խաղաղութիւնը անհրաժեշտ է: Իսկ սէրը, Աստուծոյ հանդէպ անձին ունեցած անսահման սէրն է: Աստուածպաշտութիւնը միայն նման սիրոյ հետեւանք կրնայ բղխիլ: Այդ սիրոյ արտայայտութիւնն ալ բոլոր ստեղծագործութիւնը՝ բոլոր մարդկութիւնը եւ բոլոր բնութիւնը սիրելն է, եւ անոնց հետ այնպէս մը վարուիլ է, ինչպէս մայր մը իր նորածին զաւակը կը սիրէ եւ կը խնամէ:

Հաղորդութեան խորհուրդը շատ խոր իմաստ ունի: Ընդհանուր առմամբ կը կարծուի թէ հաղորդութիւն առնելով բոլոր մեղքերը ներուած եւ մոռցուած կ'ըլլան: Այս հասկացողութեամբ դարձեալ կը մեղանչուի եւ դարձեալ հաղորդութիւն կ'առնուի: Աստուած խաբել կարելի չէ: Որպէսզի հաղորդութիւնը իր պատշաճ շնորհքները անձին տայ, անձը անկեղծօրէն

ինքզինք պէտք է հաղորդութեան պատրաստէ: Ճշմարիտ հաղորդութեան համար անձը իր կենցաղով եւ հայեացքով փոխուած պէտք է ըլլայ:

Յիսուս ինք դեռաւ հաղորդութեան խորհուրդը, իր վերջին ընթրիքի միջոցին, հետեւեալ խօսքերով.

«Առէք կերէք այս է Մարմին իմ, որ վասն ձեր եւ բազմաց բաշխի, 'ի քաւութիւն եւ 'ի թողութիւն մեղաց» եւ «Արբէք 'ի սմանէ ամենեքեան, այս է արին իմ՝նորոյ ուխտի, որ յաղաքս ձեր եւ բազմաց հեղանէ, 'ի քաւութիւն եւ 'ի թողութիւն մեղաց»:

Ուրեմն հացը եւ գինին Քրիստոսի մարմինը եւ արիւնը կը ներկայացնեն եւ են: Միթէ մեր մարմիններն ալ Քրիստոսի մարմինները չե՞ն: Աւետարանը կ'ըսէ թէ մեր մարմինները Աստուծոյ տաճարներն են եւ Աստուծոյ հոգին մեր մէջ կը բնակի: Հացը Ֆիզիքական մարմինը սնուցանող ամենակենսական ուտեստեղէնն է եւ գինին ալ՝ կեանք տուող արիւնը: Յիսուս ըսաւ. «Աս ըրէք զիս յիշելու համար»: Ասոր իմաստը շատ պարզ է: «Աս ըրէք»ով ինք մեզի կ'ըսէ. ապրեցէք այս Ֆիզիքական կեանքը, իսկ «զիս յիշելու համար»ով ալ մեզի մեր կեանքին նպատակը կը յիշեցնէ: Մեր կեանքին նպատակը ամէն վայրկեան մեր ներքին Քրիստոսը յիշել, համապատասխան կենցաղ մը կերտել եւ կեանք մը ապրիլն է (տես նաեւ Լոյս ի Լուսոյ գիրքիս, պատարագի մեկնաբանութեան բաժինը):

Ընդհանուր առմամբ, հանրութիւնը կը խորհի թէ հացով եւ գինիով կատարուած հաղորդութեան խորհուրդը միայն քրիստոնէութեան կրօնքի առանձնաշնորհումն է:

«Եւ Մելիթեոյ եւ արշայ Շաղեմայ Եւան
Ըաց Եւ Գինի. խանգի խաւանայ Էր

Աստուծոյ Բարձրելոյ: Եւ օրհնեաց
 զԱբրամ եւ ասէ. Օրհնեալ է Աբրամ
 յԱստուծոյ Բարձրելոյ որ արար զԵրկինս եւ
 զԵրկիր. ...» (Մանդոյ ԺԷ:18-19)

«Եւ Սաղեմի թագաւորը՝ Մելքիսեղեկ՝ հաց ու զինի
 բերաւ - ան Ամենաբարձր Աստուծոյ քահանան էր - եւ
 օրհնեց զայն ու ըսաւ. «Օրհնեա՛լ ըլլայ Աբրամ՝
 երկինքի ու երկրի սեփականատէրը եղող Ամենաբարձր
 Աստուծմէն»:

Ինչպէս էջ 110ի մէջ Աստուածաշունչէն մէջբերում եղած է (Եբրայեցիս Ե:5-6), Յիսուս ալ Մելքիսեղեկի կարգէն քահանայապետ, օրհնելով հաց եւ զինին, օրհնութեան՝ հաղորդութեան խորհուրդը գործադրած էր: Ուրեմն այս խորհուրդը ընդհանուրին կարծածէն շատ աւելի հին խորհուրդ մըն է եւ կը թուի թէ այս խորհուրդի կատարումը Աստուծմէ տրուած ըլլայ միայն Մելքիսեղեկի կարգէն եղող քահանայապետներուն, ինչպէս Յիսուս էր:

ՍՈՒՐ ԶՈԳԻ ԸՆՈՐՀՆԵՐԸ

Պօղոս առաքեալ Ա. Կորնթացոց նամակին մէջ Ս. Հոգիի ինը շնորհներուն մասին գրած է: Հարկաւ աս չի նշանակեր թէ Ս. Հոգիի շնորհները միայն ինը հատ են: Պօղոս առաքեալ զանոնք իբր օրինակ տուած է, մատնանշելու համար թէ մարդոց ունեցած բոլոր յատկութիւնները Աստուծմէ տրուած շնորհներ են: Բայց հոգեւոր ճամբորդութեան մէջ մարդ արարած իր անձը փոփոխութեան ենթարկող Ս. Հոգիի եօթը յատուկ շնորհներուն կ'արժանանայ: Անոնք են.

ա- Իմաստութիւն՝ որպէսզի ճշմարտութեան ճամբան հետապնդուի:

բ- Հաւատք՝ հասկնալով ճշմարտութեան խորհուրդը, ապաւինիլ Անոր:

դ- Սոհակամուծիւն՝ դատելու եւ ճշմարտութիւնը գատելու կարողութիւնը ստանալ:

դ- Վճռականութիւն եւ քաջութիւն՝ որպէսզի կամքի զօրութիւն արծարծուի եւ ճշմարտութեան ճամբուն մէջ յարատեւուի:

ե- Գիտութիւն՝ ճշմարտութեան ուղիները հասկընալու համար մտային լուսաւորութեան պարզեւում եւ յաւելեալ շնորհներու արժանացում:

զ- Բարեպաշտութիւն՝ ամենուրեք ճշմարտութիւնը տեսնելով բոլորին հանդէպ սէր ունենալ:

է- Երկկեղածութիւն՝ Աստուածպաշտութիւն՝ ճշմարտութեան անհուն խորհուրդին առջեւ երկրպագել:

Վերոյիշեալ շնորհներուն մէկ մասը Պօղոս առաքեալի կողմէ ալ յիշուած է: Երբ անձը կը յաջողի ինքնափոփոխութեան, յաւելեալ շնորհներու ալ կ'արժանանայ, որոնք այդ փոփոխութեան հետեւանք, հանրութեան օգտակար ըլլալու համար տրուած կարողութիւններ են՝ ինչպէս մարգարէութիւն, բժշկութիւն, «հրաշագործութիւններ» եւայլն: Այս վերջինները վերոյիշեալ հինգերորդ՝ Գիտութեան շնորհքին արդիւնքներն են:

ՅԱՅՏԱՌԻՑԵԱՆ ԳԻՐԸ

Երբ եօթը թիւի մասին կը զրուցենք, անկարելի է Նոր Կտակարանի Յովհաննէսի Յայտնութեան գիրքը չյիշել: Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր արարողութիւններուն ընթացքին բնաւ Յայտնութեան գիրքէն չի կարգացուիր, որովհետեւ (ըստ եպիսկոպոսի մը տուած բացատրութեան) Յովհաննէսի ունեցած եւ ներկայացուցած տեսիլքը ճշգրիտ կերպով մեկնաբանել շատ դժուար է եւ սխալ հասկացողութեանց պատճառ կրնայ ըլլալ: Յովհաննէսի ներկայացուցած տեսիլքին ամէն մէկ հանգրուանը եօթը թիւը կը

ներկայացնէ: Իմ նպատակը եօթը թիւին մասին եղած բոլոր ակնարկութիւնները եւ որոշ անձնական մեկնաբանութիւն մը, կամ տեսակէտ մը ներկայացնել է: Անշուշտ կարելի չէ ըսել թէ այդ տեսակէտը անպայման ճշգրիտ մեկնաբանութիւնը կը ներկայացնէ: Կան զանազան մեկնաբանութիւններ մասնազէտներու եւ աստուածաբաններու կողմէ գրուած: Անոնք որոնք կը հետաքրքրուին կրնան գտնել ու կարդալ:

Յովհաննէսին տրուած պատուէրը իր տեսած տեսիլքը գրի առնել եւ զայն Ասիոյ եօթը եկեղեցիներուն ղրկել էր (Յայտնութիւն Ա:11): (Տես պատկեր թիւ 6)



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 6

Տեսիլքին մէջ եօթը աշտանակներ եւ անոնց մէջտեղն ալ Քրիստոս կը տեսնէ (Յայտնութիւն Ա:12-13): Քրիստոս իր ձեռքին մէջ եօթը աստղեր ունի (Յայտնութիւն Ա:16): Եօթը աշտանակները եօթը եկեղեցիները կը ներկայացնեն եւ եօթը աստղերն ալ եօթը եկեղեցիներու հրեշտակները (Յայտնութիւն Ա:20): եօթը պատգամներ կը տրուի եօթը եկեղեցիներուն

(Յայտնութիւն Բ եւ Գ):

Այս եօթը եկեղեցիները եւ անոնց տրուած
զգուշացում եւ պատգամները հետեւեալներն են:

ա- Եփեսոսի եկեղեցիին

Ձգուշացում - Առաջին սիրոյ՝ սէր առ
Աստուած, մոռցուած ըլլալը:

Պատգամը - Ապաշխարել

բ- Չմիւռնիայի եկեղեցիին

Ձգուշացում - Տառապանք եւ չարչարանք-
ներու հետեւանք վախ:

Պատգամը - Հաւատարմութիւն եւ համբե-
րութիւն:

գ- Պերգամոնի եկեղեցիին

Ձգուշացում - Ստանայի գահը՝ Եսասի-
րութիւն, անմաքրութիւն եւ պոռնիկութիւն:

Պատգամը - Ապաշխարել եւ յաղթել
որպէսզի ստանայ երկնային մանանայ՝ Ս. Հոգիի
զօրութիւնը:

դ- Թիւատիրի եկեղեցիին

Ձգուշացում - Չհետեւիլ սուտ մարգարէ-
ներու եւ «կռռք» չպաշտել:

Պատգամը - Ապաշխարել ապա թէ ոչ
հիւանդութիւններ պիտի ունենան: Ամէն անձ ինչ որ
ցանկ ան պիտի հնձէ:

ե- Սարգիկէի եկեղեցիին

Ձգուշացում - Խաւարամտութիւն՝ հոգեկան
մահ:

Պատգամը - Արթնութիւն

զ- Ֆիլատելֆիայի եկեղեցիին

Ձգուշացում - Քիչ զօրութիւն ունի, բայց
պահած է Աստուծոյ խօսքը:

Պատգամը - Անոնց համար զօրութեան
դուռը պիտի բանայ եւ փորձութեան ժամուն պիտի

պահէ:

է- Լաւոգրիկէի եկեղեցիին

Զգուշացում - Անունով կրօնասէր բայց
փարած աշխարհիկ հարստութեան՝ խաւարամտութիւն:

Պատգամը - Հարստանալ Ս. Հոգիի զօրու-
թեամբ:

Յովհաննէս կը տեսնէ երկինքը ուր կար Աստուծոյ
գահը եւ քսանչորս երէցներ: Գահին առջեւ եօթը
հրավառ ջահեր կային, որոնք Աստուծոյ եօթը
հոգիներն էին (Յայտնութիւն Դ:5): Աստուծոյ ձեռքին
մէջ գիրք մը կար, որ եօթը կնիքներով կնքուած էր
(Յայտնութիւն Ե:1): Յիսուս Քրիստոս իբր Առիւծ
ներկայացուած էր, ինչպէս նաեւ որպէս մորթուած
գառնուկ կայնած էր եւ ունէր (Տես պատկեր թիւ 7) եօթը
եղջիւր եւ եօթը աչք, որոնք բոլոր երկրին ղրկուած
Աստուծոյ եօթը հոգիներն են, (Յայտնութիւն Ե:5-6):



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ: 7

Մի՛ լար, ահաւասիկ յաղթեա՛ց առեւծս յազգէն Յուդայ
յարմատոյն Դավթի ... Եւ տեսի ... գառն կայր զենեալ ...

«Այդ մորթուած Գառնուկը զօրութիւն, հարստու-
թիւն, իմաստութիւն, ոյժ, պատիւ, փառք եւ օրհնաբա-
նութիւն ընդունեցող արժանի է»: Այս արժանիքները
եօթը հատ են (Յայտնութիւն Ե:12):

Կնքուած գիրքին եօթը կնիքները մէկ առ մէկ կը բացուին (Յայտնութիւն 2): Եօթերորդ կնիքը կը բացուի եւ Յովհաննէս եօթը հրեշտակներ կը տեսնէ, որոնց եօթը փողեր կը տրուի: Եօթը հրեշտակները մէկ առ մէկ եօթը փողերը կը հնչեցնեն (Յայտ. Ը-ԺԱ):

Յովհաննէս նաեւ կը տեսնէ եօթը գլուխներով վիշապ մը եւ եօթը գլուխներուն վրայ եօթը թագեր (Յայտնութիւն ԺԲ:3): Ան նաեւ կը տեսնէ ծովէն ելլող եօթը գլուխներով գազան մը (Յայտնութիւն ԺԳ:1):

Յովհաննէս դարձեալ եօթը հրեշտակներ կը տեսնէ, որոնք եօթը վերջին պատուհանները ունէին (Յայտնութիւն ԺԵ:1): Այս եօթը հրեշտակները եօթը ոսկիէ սկաւառակներ ստացան (Յայտնութիւն ԺԵ:7):

Յովհաննէս անապատին մէջ գազան մը կը տեսնէ որ դարձեալ եօթը գլուխներ ունէր (Յայտ. ԺԷ:3):

Չեմ խորհիր թէ Յայտնութեան գիրքին մէջ գրուածները բառացի իմաստով պէտք է հասկցուի: Նոյնիսկ եօթը եկեղեցիները իրենց բառացի իմաստէն զատ շատ հաւանական է որ տարբեր իմաստ ունենան, քանի որ այն ատեն ուրիշ եկեղեցիներ եւս կային, ինչպէս Երուսաղէմի եկեղեցին: Ինչո՞ւ միայն եօթը եկեղեցիի նամակ գրուած է: Եկեղեցին հաւատացեալներու հաւաքականութիւնն է: Հաւանաբար տրուած յորդորները հաւատացեալին՝ անհատին հոգեւոր ճամբորդութեան ընթացքին եօթը զանազան աստիճաններու հասնելու համար զգուշացումներ ըլլան, որոնք իր եօթը իսակրաններուն կը համապատասխանեն: Եօթը աշտանակները, որ գրուած է թէ եօթը եկեղեցիները կը ներկայացնեն, ինչպէս նաեւ եօթը հրավառ ջահերը հաւանական է որ եօթը իսակրանները ներկայացնեն, իսկ եօթը հրեշտակներն ալ անոնց իւրաքանչիւրին համապատասխանող վերեւ յիշուած եօթը առաքինութիւնները: Հաւանական է որ յիշուած 24 երէցները ներկա-

յացնեն մարդու բնութեան 24 տարրերը: Նաեւ հաւանական է որ եօթը կնիքներու բացուելը եօթը խակրաներու զօրութեան ազատ մուտքին համար լայն բացւելը ներկայացնէ: Ըստ գրուածին միայն Քրիստոս այդ գիրքը առնելու եւ անոր կնիքները բանալու կարող էր: Միթէ անձին մէջն ալ միայն իր ներքին Քրիստոսը չէ՞ որ այդ խակրաները բանալու կարող է, որպէսզի Ս. Հոգիի զօրութիւնը անձէն ներս ներգործէ:

«Իսկ մեխիթարիշն չորին Սուրբ՝ զոր
առաջեացե չայր յանուն իմ, նա՛
ոսոսացե յեւ զամենայն որ ինչ ասացի յեւ
եւ յիշեցոսացե՛ յեւ»: (Յովհաննոս ԺԴ:26)

«Բայց Միխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը պիտի զրկէ իմ անունովս, անիկա՛ պիտի սորվեցնէ ձեզի ամէնը՝ եւ ինչ որ ըսի ձեզի՛ պիտի յիշեցնէ ձեզի»:

«Բայց յորժամ եկեացե մեխիթարիշն, զոր է՛ս
առաջեցից յեւ ՚ի չորե զճորի՛ն
ճշմարտութեան որ ՚ի չորե ելանե նա՛
վկայեացե վասն իմ»: (Յովհաննոս ԺԵ:26)

«Բայց երբ Միխիթարիչը գայ՝ որ ես Հօրմէն պիտի զրկեմ ձեզի, ճշմարտութեան Հոգին՝ որ կը բղի Հօրմէն, անիկա՛ պիտի վկայէ իմ մասին»:

Վիշապը իր եօթը գլուխներով շատ հաւանական է մարդու անհատականութիւնը՝ «Ես»ը ներկայացնէ, իսկ թէ՛ ծովու եւ թէ՛ անապատի մէջի զազանները, որոնք եօթնական գլուխներ ունէին, շատ հաւանաբար Եսասիրութիւնը եւ իր զանազան երեւոյթները ներկայացնեն: Երբ անհատը հոգեւոր կեանք մը կը հետապնդէ ապաշխարութեամբ, իր կենցաղով եւ Աստուածապատուութեամբ, Քրիստոսի շնորհքով այդ խակրաներուն բացուելուն եւ յաւելեալ զօրութիւն ստանալուն

առիթը կը ստեղծէ: Բայց «Ես»ը՝ վիշապը չ'արտօներ որ անձը յաջողի: Եօթը խակրաններէն զօրութեան մուտքը խափանելու համար իր եօթը գլուխները կը բարձրացընէ: Ան այդ եօթը խակրաններու վրայ իր ունեցած իշխանութիւնը կորսնցնել չ'ուզեր: Իր եօթը գլուխներուն վրայի եօթը թագերն ալ իր ունեցած իշխանութիւնը կը ներկայացնեն: Ան անհատէն ներս Ս. Հոգիի զօրութեան ներգործումը խափանելու համար եօթը մահացու մեղքերը կը գործածէ: Ուրեմն եօթը գլուխները եօթը մահացու մեղքերը կը ներկայացնեն:

Եօթը հրեշտակները, որ աշխարհի զանազան պատուհասները պարունակող եօթը ոսկիէ սկաւառակները կը ստանան, շատ հաւանական է որ անհատին կենցաղին գործած աւերները եւ անոնց յառաջ բերած «պատիժ»ը ներկայացնեն: Այս պատիժը Աստուծմէ տրուած պատիժ մը չէ, քանի որ Աստուծ սէր է, այլ ան մարդուն իր ցանած հունտերուն հունձքն է: Եթէ անձը այս իրողութեան անդրադառնայ եւ զայն ընդունի ու առանց իր հաւատքը կորսնցնելու, միշտ Աստուծապաշտութեամբ եւ համբերութեամբ անոնց տուած չարչարանքներուն տոկայ, Աստուծոյ անունով կը դրոշմուի եւ 144.000ին մաս կը կազմէ որ փրկուեցան: Իսկ անոնք որոնք կը դժգոհին եւ իրենց հաւատքը կը կորսնցնեն եւ վիշապին անունով՝ թիւով (666) կը դրոշմուին, մահուան կը դատապարտուին: (Այս թիւերուն իմաստին համար տես Լոյս ի Լուսոյ գիրքիս թուագիտութեան մասը)

Տեղին է հոս նաեւ այդ եօթը պատուհասներուն մասին մատնանշել, քանի որ անոնք բոլորն ալ ընդհանուր մարդկութեան ունեցած կենցաղին կը համապատասխանեն եւ պիտի ըլլան այն «պարտքերը» որ մարդ արարած անոնց հետեւանք տառապելու պարտաւոր պիտի ըլլայ:

ա- «... գեշ եւ չարորակ պալար մը եղաւ»։ միթէ քաղցկեղը աշխարհի վրայ շատցած չէ^օ։ Ան այսօր մահուան առաջնակարգ պատճառը չէ^օ։

բ- «... ծովուն ջուրերը մեռած մարդու մը արինին պէս եղան, ու ծովուն մէջի բոլոր կենդանիները մեռան»։ ծովու ջուրերու ապականութիւնը արդեօք այսօր իրողութիւն մը չէ^օ։ Նոյնպէս ձուկերուն բոլոր ծովերուն մէջ զգալիօրէն նուազելը իրողութիւն մը չէ^օ։

գ- «... գետերու եւ ջուրերու աղբիւրները արին եղան»։ Միթէ բոլոր աշխարհի մէջ մաքուր եւ անուշ ջուրի պակասը զգալի չէ^օ։ Ինչո՞ւ կ'ըսեն թէ յաջորդ պատերազմը քարիւղի համար պիտի չըլլայ, այլ ըմպելի ջուրի համար։

դ- «... արեւին զօրութիւն տրուեցաւ որ կրակով սոթակեղ ընէ մարդիկ»։ միթէ օզոնի խաւի նօսրացման (ozon layer depletion) հետեւանք անդրմանիշակագոյն ճառագայթներուն (ultraviolet radiation) յառաջ բերած մորթի հիւանդութիւնները եւ աշխարհի ջերմութեան բարձրացումը (global warming) ասոր նշանները չե՞ն։

ե- «... գազանին թագաւորութիւնը խաւարեցաւ»։ ցանուած հունտերուն հունձքի ժամանակը եւ գալիք տառապանքները չե՞ն ներկայացներ։

զ- «... մեծ գետին ջուրերը ցամքեցան»։ աշխարհի վրայ գանազան տեղերէ յաճախ երաշտի լուրեր չե՞նք իմանար։

է- «... սկաւառակը պարպուեցաւ օդին մէջ եւ մեծ երկրաշարժ եւ կործանում եղաւ աշխարհի վրայ»։ միթէ օդը չէ^օ ապականած։ Իսկ աշխարհի մագնիսական ազդավայրի զօրութիւնը վերջին 150 տարուայ ընթացքին 15% պակասած է։ Ընդհանուր առմամբ այս նուազումը ամէն դար մօտաւորապէս 5% համեմատութեամբ կը շարունակուի, բայց վերջերս նշմարած են

Թէ այս նուագումը կ'ըլլայ տասը անգամ աւելի արագ՝ այսինքն 5% ամէն տասը տարին: Կը գուշակուի թէ աշխարհի բեւեռները փոխուին եւ ահռելի կործանումներ ու աշխարհագրութեան զգալի փոփոխութիւններ տեղի ունենան:

Այս պատուհասներուն բոլորն ալ մեր կենցաղին հետեւանքը չե՞ն: Անոնք բոլորն ալ մեր ցանած հունտերուն հունձքերն են, որոնք արդէն հասուննալ սկսած են եւ մենք ալ զանոնք քաղելու:

ՉԱՍՏՈՒԾՆԵՐ ԵՒ ԴԵԻՐ

Աստուածաշունչին մէջ մեզի նաեւ չաստուածներ կամ վատ հոգիներ՝ դեւեր ներկայացուած են: Այս դեւերը պատճառ եղած են որպէսզի մարդիկ աստուածահաճոյ ուղիէն խոտորին: Անոնց թիւն ալ եօթը հատ է: Շատեր կը կարծեն թէ անոնք արտաքին կուռքեր են որ մարդիկ կը պաշտեն, քանի որ այդպէս ներկայացուած են, կամ անձին դուրս «էութիւններ»՝ վատ հոգիներ՝ դեւեր են, որոնք անձին հոգեկան անկումին պատճառ կ'ըլլան: Մարդիկ կը կարծեն թէ այս էութիւնները իրենց մարմինները կը գրաւեն եւ կը գործածեն: Հետեւաբար իրենք զիրենք մեղաւոր չեն համարեր եւ այդ էութիւնները կը մեղադրեն: «Սատանան ընել տուաւ» կ'ըսեն: Այս տեսակէտը Աստուածաշունչի որոշ պատմութիւններէն ծնունդ կ'առնէ, երբ անշուշտ անոնք միայն իրենց բառացի իմաստով կը հասկցուին: Բայց անոնք բոլորն ալ նաեւ վերացական իմաստներ ունին, որ այդ պատմութեան կամ արարքին բուն նպատակն է: Եթէ անձը ինք ճիշդ ուղղութեամբ ընթանալու միտք չունի, վերացական իմաստն ալ իրեն յայտնի չ'ըլլար: Ժիշդ այս պատճառով ալ Յիսուս ըսաւ. «Կիտի տեսնեն բայց պիտի չտեսնեն, պիտի լսեն բայց պիտի չիմանան»: Հոս յարմար է կրկնել այն օրինակը

որ գրած էի «Լոյս ի Լուսոյ» գիրքիս մէջ՝

«Երբեմն մենք ալ մարդկութեան մէջ կը տեսնենք հովերու եւ փոթորիկներու հետեւանք կոտորած երեւցող ցոլացումներ, որոնք կը կոչենք մարդկային տկարութիւններ: Հովերը կը ներկայացնեն մեր խորհուրդներուն փոթորիկները, իսկ ալիքները՝ մեր զգացումներուն փոթորիկները: Անոնց ազդեցութեան տակ կոտորած կը թուինք ըլլալ եւ ընկղմելու վտանգի մէջ, նման Գալիլեայի ծովուն վրայի աշակերտներուն նաւուն: Բայց վախ պէտք չէ ունենանք՝ ... Քրիստոս նաւուն մէջ է, անկարելի է որ այդ նաւը ընկղմի: Միայն պէտք է Զինք արթնցնել, որպէսզի հանդարտեցնէ հովերը եւ ծովերը՝ այսինքն խորհուրդներու եւ զգացումներու փոթորիկները»:

Անտարակոյս Գալիլեայի ծովուն վրայ նման դէպք մը տեղի ունեցած է, բայց վստահաբար Յիսուս ինք նման դէպքի մը տեղի տուած է, որպէսզի այդ դէպքին վերացական իմաստով դաս մը՝ մտային խաղաղութեան եւ անդորրութեան միջոցը սորվեցնէ:

Հին կտակարանը հրեայ ազգին պատմութիւնը եւ իր Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւնը կը ներկայացնէ, իսկ վերացական իմաստով ալ ոեւէ անհատի մը կեանքը եւ իր Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւնը: Աստուած այս յարաբերութիւնը ցուցաբերելու համար հրեայ ազգը ընտրած է, որպէսզի անոնց պատմութեան մէջէն փրկութեան ուղիղ ճամբան հաւատացեալին հասկցնէ եւ սորվեցնէ: Նաեւ ցոյց տալ թէ անհատին ինչեր կրնան պատահիլ եթէ ան ճիշդ ուղիէն խոտորի: «Ընտրեալ ժողովուրդ» ասացուածքը չի նշանակեր թէ Աստուած գիրենք միւս

ազգերէն աւելի կը սիրէ: Աստուծոյ մօտ խտրութիւն բնաւ չկայ:

Նմանապէս զանազան դեւերու, չաստուածներու եւ վատ ոգիներու պատմուածքներն ալ պէտք է իրենց վերացական իմաստներով ընդունինք եւ հասկնանք, քան թէ զանոնք մեզմէ դուրս էութիւններ համարենք: Անոնց բոլորն ալ մեր «Յս»էն ծագում կ'առնեն եւ եօթը մահացու մեղքերուն կը համապատասխանեն: Եթէ կ'ողզենք Աստուծոյ հետ հաղորդուիլ, նախ այդ եօթը մահացու մեղքերուն համար պարտ ենք մեղայի գալ եւ զանոնք անհետացնել:

Հետեւեալները կը ներկայացնեն «չաստուած կամ դեւերու» ցանկը եւ համապատասխան մահացու մեղքը:

ա- Արուսեակ (Lucifer) կամ Սատանայ (Satan)
- Հպարտութիւն

«Զիա՞րդ անկա- յերկնից Արուսեակն՝ որ ընդ առա-օրն Ժաօլեր. անկա- յերկիր, խորհրակեցա՞ն՝ որ առաջէր առ ամենայն ապօր» : (Եսայայ ԺԴ:12)

«Ինչպէս երկինքէն ինկար, ով առտուն ծագող Արուսեակ, Մինչեւ գետին կործանեցար, Դո՛ւն որ ազգերը կը յաղթահարէիր»:

«Յայնժամ առէ Յիսուս. Երբ յետս իմ ասորանայ, զի Գրեալ Տեառն Ասորո-ժոյ խո՞մ էրկիր պափօցես, է- զնա միայն պաշտօնացես» : (Մարտեոս Դ:10)

«Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. «Ետե՛ւս գնա, Սատանայ, որովհետեւ գրուած է՝ Տէրո՛ջ՝ քու Աստուծոյդ երկրպագէ, ու միայն զի՛նք պաշտէ»:

Արուսեակը անձին անհատականութիւնը կը ներկայացնէ: Այդ անհատականութեան միջոցաւ մարդ

անասուններէն կը տարբերի եւ Աստուածայայտնութիւնը իրականացնելու կարողութիւնը կ'ունենայ: Ինչպէս Արուեսակ՝ առաջօրեան պայծառ աստղը, լոյսին՝ արեւին դալուստը կը յայտարարէ, Լուսաբեր հրեշտակը՝ անձին անհատականութիւնն ալ, Լոյսին՝ Քրիստոսի յայտնութիւնը կը յայտարարէ: Բայց իր անասուններէ յաւելեալ ունեցած այդ առաւելութիւնը իրեն հպարտութիւն տուաւ եւ ուզեց «Աստուծոյ աթոռը նստիլ»: Իր այս արարքը պատճառ եղաւ իր ուժգին անկումին՝ յառաջ բերելով սատանան: Ըստ վերեւի համարին նոյնիսկ Յիսուս իր «Ես»էն՝ սատանայէն փորձուեցաւ, բայց իր տեսութիւնը Աստուծոյ վրայ խարսխուած, առանց վարանումի, վճռականութեամբ ըսաւ. «Երբ յետս իմ սատանայ»: Աստուածաշունչի թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարաններու մէջ Սատանան ակնարկող բազմաթիւ համարներ կան: Հետեւեալ համարին մէջ «հակառակորդ»ը հարկաւ սատանան է:

«Հակառակորդն Հոյարքացեալ 'ի վերայ ամենայնի՝ որ անուանեալ իցէ Լսարուստ՝ կամ պաշտօն. մինչեւ նստել նմա 'ի քաճարին Լսարուստոյ եւ ցոցանել զանձն՝ թէ ասարուստ իցէ»: (Բ. Թեառնիկեցիս Բ: 4)

«Այն Հակառակորդը Հպարտացած ամենուն վրայ, որ աստուած պիտի կոչուի կամ պաշտուի, մինչեւ իսկ Աստուծոյ տաճարին մէջ պիտի նստի եւ ինքզինք ցուցնէ իբր աստուած»:

«Որոյ Գալուստն ըսոյ աչտեցոթեամբ ասորանայի եւ ամենայն զօրութեամբ եւ նշանով եւ արուեստիւնով ստոյգով.» (Բ. Թե Բ: 9)
 «Անօրէնին դալը Սատանային ազդեցութիւնովն է,

բոլոր գորութիւնով եւ նշաններով ու սուտ
հրաշքներով»։ (Բ. Թեաղոնիկեցիս Բ։ 9)

Բ- Վիհ (Abaddon) -Ագահութիւն

«Ռժողէ է- կորոսոյ յայտնի էն առաջի
Տեառնն զիս՝ որո՞ւս էն սիրոյն մարդկան» :
(Առաւելաց ԺԵ : 11)

«Դժողքն ու վիհը Տէրոջ առջեւն են, Ո՛րչափ աւելի՛
մարդոց որդիներուն սիրտերը»:

«Ռժողէ է- կորոսոյ՝ անյագ էն նոյնպէս
է- աշէ՛ ագահէ՛ մարդոց» : (Առաւելաց ԻԷ : 20)
«Դժողքն ու վիհը չեն կշտանար՝ Նոյնպէս մարդուն
աչքերը չեն կշտանար»:

Այսօր աշխարհի մէջ քիչ մը աւելի նիւթական շահ
ապահովելու համար մարդիկ պատրաստ են իրենց
մարդկայնականութիւնը զոհելու՝ ինչպէս նաեւ բնու-
թիւնը՝ ապականելով օդը, ջուրը եւ հողը: Խաբեքայութ-
թիւնը, անիղծութիւնը եւ անտարբերութիւնը, որոնք
տեղի կու տան պատերազմներու, բազմաթիւ մահերու
եւ տեղահանումներու, հասարակ եւ սովորական
ընթացք ըլլալ կը թուին: Դրամն ալ կարծես մարդոց
աստուածը եղած է: Ուրեմն մարդիկ ալ այդ դրամը կը
պաշտեն:

«Ասէ ցնա Յիսոսա. Երեւ կամիս կարարեա՛լ
լինել, է՛րբ վաճառեա՛ զինչս ի՞նչ է- րո-
տոյնացոյց, է- ունիցիս Գանձս յերկր՛նս, է-
է՛կ զինի իմ: Իբրեւ լոսա- պարասնին
զբանն, Գնաց արարեա՛լ, զի ունէր
սրտոցոսա՞ն թագոսմա» : (Մարիէոս ԺԹ : 21-22)
«Յիսուս ըսաւ անոր՝ «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ՝
զնա՛ ծախէ՛ ինչքը եւ տո՛ւր աղքատներուն՝ ու զանձ

պիտի ունենաս երկինքը՝ ապա հետեւէ՛ ինծի»։ Երբ երկրասարդը լսեց այս խօսքը՝ տրտմած դնաց՝ որովհետեւ շատ ստացուածք ունէր»։

«... որպէս զժողովրդիս որ ինչս ունիցին՝ մտանցեն յարձայոթիւն Լսրոցոց : Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ թակ ասղան անցանել, խան մեծասրան յարձայոթիւն Լսրոցոց մտանել» : (Ղուկասոս ժԸ : 24-25)

«Որչա՛փ դժուար է Աստուծոյ թագաւորութիւնը մտնել անոնց, որ Հարստութիւն ունին : Քանզի աւելի դիւրին է, որ ուղտը ասեղին ծակէն անցնի, քան թէ Հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ»։

Խնդրոյ առարկայ ազահուլթիւնը կամ Հարստութիւնը միայն դրամականը չէ, այլ է աշխարհիկ զանազան տեսակի ազահուլթիւն եւ անձին անոնց կապուածութիւնը :

դ- Բահադ (Baal of Peor or Beelphegor)

-Որկրամոլութիւն

«... պի ամենայն մարդ որ շոգաս պահեց Փէղթեգոփրայ՝ սասրակեաց տէր Լսրոցոց մէր ի յէնջ» : (Բ. Օրենաց Դ : 3)

«... Տէրը՝ քու Աստուածդ՝ Բահադ-Փէղթի հետեւող բոլոր մարդիկը ձեր մէջէն բնաջնջեց»։

«Պղծեցան նո՛վա ՚ի քէլթեգոփր, կերան պոտեալ եւ պտուղտի : Բարկացոցի նա ՚ի գործա իւրեանց, յաճախեաց ՚ի վերայ նոցա քէկոմն» : (Սաղմոս ՂԵ : 28-29)

«Յետոյ Բահադ-Փէղթի յարեցան, Մեռելներուն գոհերը կերան, եւ իրենց գործերով Տէրը գրգրեցին : Ուստի անոնց վրայ պատուհաս Հասաւ»։ (Սաղմոս ՃԶ : 28-29)

«Եյլ զի՛նչ ասէ նմա պարասխանին, Եւոզի
 ինչ ասէ Էթն Ըսալար այր որ ո՛չ կրկնեցին
 Զոսնր Բաւաղոս» : (Հոովմայեցիս ԺԷ:4)

«Բայց ի՞նչ կ'ըսէ անոր Աստուծոյ պատգամը. «Ինծի
 պահեցի եօթը հազար մարդ, որոնք Բահաղի
 չճնրողեցին»:

Միթէ որկրամոլութիւնն ալ տեսակ մը
 ագահութիւն չէ՞: Մարդ ընդհանրապէս կը կարծէ թէ
 որկրամոլութիւնը չափէն աւելի ուտելն է: Այնպէս կը
 թուի թէ մարդ արարած ուտելու համար կ'ապրի, քան
 թէ ապրելու համար կ'ուտէ: Հիւրասիրութիւններուն
 պատրաստուած ճոխ սեղանները պէտք չէ մոռնանք:
 Անտարակոյս շատ ուտելը որկրամոլութիւն է, բայց
 որկրամոլութիւնը միայն շատ ուտելը չէ: «Որկրամո-
 լութիւն» բառին մէջ կայ նաեւ «մոլութիւն» բառը:
 Ուրեմն բոլոր տեսակի աշխարհիկ մոլութիւնները
 որկրամոլութեան բառին՝ մեղքին մէջ ամփոփուած են՝
 ինչպէս ծխախոտը, թմրեցուցիչ դեղերը, արբեցուցիչ
 ըմպելիները, բախտախաղերը, խաղամոլութիւնը եւ
 սեռային նախազրաւութիւն եւայլն:

դ- Բէէզբեբուզ (Beelzebub) -Նախանձ

«Շատ իցէ աշակերտին՝ Էթէ Եղիցի իբրեւ-
 զվարդապետ եւր, Է- Զասային՝ իբրեւ-
 զսէ՛ր եւր: Եթէ զսանոսիւրն Բէէզբեբուզ
 կոչեցին, ո՛րչափ Է-ս ասատել զընդանին
 նորա» : (Մարթեոս Ժ:25)

«Բաւական է աշակերտին՝ իր վարդապետին պէս ըլլայ,
 ու ծառային՝ իր տիրոջ պէս: Եթէ տանուտերը կոչեցին
 Բէէզբեբուզ, ո՛րչափ աւելի՝ անոր տնեցիները»:

Մեր վարդապետը Յիսուս Քրիստոսն է: Ուրեմն
 մենք ալ պարտ ենք իրեն նման՝ հեզ եւ խոնարհ ըլլալ

եւ Աստուծոյ կամքին յանձնուիլ: Այս կը նշանակէ կեանքի բոլոր պայմանները, որոնց կ'ենթարկուինք, ընդունիլ, չդժգոհիլ եւ Աստուծոյ փառք տալ: Եթէ աս կարենանք իրականացնել նախանձն ալ մեր մէջ գոյութիւն չունենար: Նախանձը դժգոհութեան արդիւնքն է:

Ե- Լեւիաթան (Վիշապը)(Leviathan)-Բարկութիւն

«Յառաջ յայնմիկ ասոցէ Տէր պտուռն սուրբ
Ե- պէ՛տ Ե- պԼուօր 'ի վերայ վիշապ օջի՛ն
Ֆախոսցելոյ, Ե- 'ի վերայ վիշապ օջի՛ն
կամակորի, Ե- սոսանցէ պվիշապն 'ի մէջ
Զոօլոսն»: (Եսայայ ԻԷ:1)

«Այդ օրը Տէրը իր ամբակուռ, մեծ եւ ուժեղ սուրով Պիտի պատժէ Լեւիաթանը՝ փախչող օձը, Լեւիաթանը՝ այն դավարուող օձը, Ու պիտի մեռցնէ ծովուն մէջ եղող Վիշապը»:

Արեւմտեան դիցաբանութեան մէջ վիշապը միշտ գանձի մը մուտքը կը պաշտպանէ կամ կը խափանէ: Ան պայքար կամ պատերազմ կը ներկայացնէ: Հերոսը՝ անհատը վիշապին դէմ կը պատերազմի, զայն սպաննելով իր սիրահարին կը տիրանայ: Կը սպաննէ վիշապը, այսինքն իր «Ես»ը (ego)ն կը գոհէ, (ըստ Աւետարանի գրաբար տարբերակին «արձակէ զնա») եւ իր սիրահարին՝ Քրիստոսի կը տիրանայ: Նոյնպէս «Ես»ը կը խափանէ մուտքը այն գանձին, որ մարդու բարձրագոյն էութիւնն է՝ Քրիստոս (Higher Self): Առանց վիշապին, այսինքն «Ես»ին սպաննութեան, Քրիստոսի մեր մէջ յարութիւնը կարելի չ'ըլլար: Այս վերջինն ալ մեր զգացումներու եւ բազմաթիւ անտեղի եւ վատ խորհուրդներու զսպումով կարելի է: «Գլուխ Դ»ի մէջ բարկութեան մասին հետեւեալը գրած եմ.

«Բարկութեան հետեւանք ալ, անձը իր

իմաստութիւնը ինչպէս նաեւ տրամաբանելու, դատելու ու զատելու կարողութիւնը կը կորսնցնէ: Երբ իմացականութիւնն ալ կը խոտորի ինք խելքը կը կորսնցնէ, որ իր անկումին պատճառ կ'ըլլայ:»

զ- Ազմոզ (Asmodeus) -Բղջախոհութիւն (ցոփութիւն)(lust)

«... պի նախապէին պաղջինն աղանայի Ըօրն իւրոյ պոր եր Կո-եալ արանց է-նն. է- ապոդ' է'-ա դե-ն շար աղանանէ'ր պնոսա, մինչէ' մերջեցեալ էին 'ի նա ըսո օրինի արանց է- կանանց»: (Տոբիթ 9:8)

«...was reproached by her father's maids, because she had been given to seven husbands, and the evil demon Asmodeus had slain each of them before he had been with her as his wife». (Tobit 3:8)

Միթէ բղջախոհութիւնն ալ մոլութեան մէկ երեւոյթը չէ⁶: Ան ոչ թէ միայն մեր էութենէն ներս զօրութեան ներգործման արգելք կ'ըլլայ, այլ նաեւ այն զօրութիւնը, որ արդէն մեր էութենէն ներս ներգործած է, մեծ որակով կը վատնէ:

է- Մամոնա (Mammon) -Ծուլութիւն

«Ո՛չ ո՛վ կարէ երկուց Կերանց Չառայել, կամ պմին ադիցէ է- պե-ան արիցէ, կամ պմին մեթարիցէ՝ է- պե-ան արհամարիցէ, ո՛չ կարէ՛ ԼաԿո-Չոյ Չառայել է- մամոնային»: (Մաթեւոս 9:24)

«Ո՛չ մէկը կրնայ ծառայել երկու տիրոջ, որովհետեւ կամ պիտի ստէ մէկը եւ սիրէ միւսը՝ կամ պիտի յարի մէկուն ու արհամարի միւսը: Ձեք կրնար ծառայել

Աստուծոյ եւ մամոնային»:

«... Ո՛չ կարէ՛ք Աստուծո՛յ շահայել եւ մամոնայի»: (Ղուկաս ԺԶ:13)

«... Ձէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Անտարակոյս մենք ծուլութիւնը կ'ըմբռնենք իբր մեր առօրեայ կեանքի պարտականութիւններու կատարման մէջ թերացում: Բայց բուն ծուլութիւնը, որ մահացու մեղք կը նկատուի, մեր կրօնքի՝ Աստուծոյ խօսքին նկատմամբ ունեցած ծուլութիւնն է: Մեր անձերուն միջոցաւ Աստուած յայտնաբերելու մէջ մեր ունեցած ծուլութիւնն է: Յիսուսի սորվեցուցածները կիրարկելու մէջ մեր ծուլանալն է:

«Վաստօ՞ւթիւնն ունի պէանային. անչն

Գործարեաց՝ չաղցիցէ»: (Լուկաս ԺԺ:15)

«Ծուլութիւնը խորունկ քուն կը բերէ եւ թոյլ մարդը անօթի կը մնայ»:

Հոս «անօթի մնալը» կը նշանակէ Ս. Հոգիի զօրութիւնը չստանալ եւ հետեւաբար Աստուծոյ շնորհներէն չօգտուիլ կամ զրկուիլ: Այս շնորհներու պակասն ալ մեր առջեւ ինքնաբերաբար դժոխքին դուռը չի^օ բանար: Ծուլութիւնը խաւարամտութեան կ'առաջնորդէ:

Ասփոփուի

Վերոյիշեալ բոլոր եօթը թիւերուն մարդկային կեանքի վրայ ունեցած զանազան ազդեցութիւնները ներկայացնելէ ետք, հարկ է անոնց կարեւորութեան մասին եզրակացութեան մը յանգիլ: Կը թուի թէ եօթը թիւը Աստուծոյ եւ իր ստեղծագործութեան միջեւ եղած յարաբերութեան հետ սերտ կապ ունի՝ ինչպէս նաեւ Աստուծոյ եւ մարդու միջեւ եղած յարաբերութեան հետ: Ամէն անձի կեանքը Աստուծոյ մէկ մաս-

նիկն՝ որդին՝ Քրիստոս է: Մ. Հոգիի զօրութիւնը մեր անձերէն ներս անընդհատ կը ներգործէ, ապահովելով շարունակականութիւնը այդ կեանքին: Ինչ որակով զօրութեան ներգործում կ'արտօնենք կախեալ է մեր կենցաղէն՝ խորհուրդէն, խօսքէն եւ գործքէն: Զօրութիւնը վերոյիշեալ եօթը խակրաներու միջոցաւ կը ներգործէ: Մարդուն հոգին, հին կտակարանի մէջ յիշուած «արծաթեայ թել»ով, իր գանկի վերեւի խակրայէն Աստուծոյ հոգիին կապուած է:

«Մինչեւ կործանեալ իցէ լար արծաթոյն,
եւ խարսակեալ մանեակ ոսկոյն. եւ
մանրեալ սափորն յաղբէւրն, եւ ընկրկեալ
անիւն ՚ի դուրն: Եւ դարձցի Հողն յերկիր
որպէս եւ երն, եւ Հոգին դարձցի առ
Ասորոսա՞ որ էօր պնա»: (Ժողովող ԺԲ:6-7)

«Դեռ արծաթէ թելը չփրթած, Ոսկիէ բաժակը չկտրած, Սափորը աղբիւրին քով չփշրուած Ու Ջրհորին վրայի անիւր չկտրած: Այն ատեն Հողը երկիր պիտի դառնայ՝ առաջուան եղածին պէս Ու Հոգին Աստուծոյ պիտի դառնայ, որ գանկա տուաւ»:

Երբ «արծաթեայ թելը» փրթի Մ. Հոգիի զօրութեան ներգործութիւնն ալ մեծամասնութեամբ կը դադրի եւ անձն ալ մահաթմբիւրի (coma) մէջ կը մտնէ: Ըստ մեր հասկացողութեան, այլեւս գիտակցութիւն չ'ունենար: Գիտակցութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է: «Ոսկեայ բաժակը» եւ «սափորը» անձին սրտին ակնարկութիւններ են, իսկ «Ջրհորին վրայի անիւն» ալ՝ արեան շրջման: «Փշրուիլ» եւ «կտրուիլ»ն ալ անձին սրտին կենալուն եւ արեան շրջման դադրելուն, հետեւաբար մարմնին ալ մահուան ակնարկումներն են: Այս մահը Փրկիքական՝ այսինքն մարմնի մահուան ակնարկումն է, իսկ հետեւեալն ալ հոգեկան մահուան:

«Եւ եւանս պէրամ, եւ բնակեցոյց
յանդրեման դրախտին փափկութեան. եւ
Ըրամայեաց Վերոբեից որոյ շորջանակա-
պաւել պճանապարհս Ժառոյն կենաց» :
(Ծննդոց 9:24)

«Այսպէս վռնտեց Ադամը, Եդեմի պարտեզէն
արեւելեան կողմը քերովբէներ դրաւ եւ ամէն կողմ
դարձող բոցավառ սուրը՝ կեանքի ծառին ճամբան
պահելու համար»:

Ադամին դրախտէն վտարուելը իր ներքին Քրիստոսի
հետ ունեցած կապին խզումը կը ներկայացնէ: Իսկ բո-
ցավառ սուրով քերովբէներն ալ, որոնք կեանքի ծառին
ճամբան կը պահեն, մարդուն իր ներքին Քրիստոսի
հետ ունեցած կապը վերահաստատելու կարողութեան
եւ միջոցին մոռացութիւնը կը ներկայացնեն: Միթէ
չըսուի՞ր. «դժոխքը մարդուն Ադամ եւ Եւայի
անկումով տրուեցաւ, իսկ փրկութիւնը՝ դրախտն ալ՝
Յիսուս Քրիստոսով»: Յիսուս, ինք իր անձին մէջ,
«կեանքի ծառին պտուղէն ուտել»ը՝ անմահանալը
յաջողեցաւ իրականացնել եւ սորվեցուց, որպէսզի
համայն մարդկութիւնն ալ կարողանայ փրկուել: Ան որ
մոռցուած էր, Յիսուս այժմէականացուց, անշուշտ եթէ
իրեն հաւատանք եւ սորվեցուցածները կիրարկենք:

Ս. Հոգիի զօրութիւնը վերէն դէպի վար մեր հու-
թենէն ներս կը ներգործէ, մենք ալ այդ ներգործուած
զօրութիւնը, մինչեւ Աստուածայայտնութիւն, վարէն
վեր բարձրացնելու կարողութիւնը ունինք: Երբ Ան կը
հասնի դանկի վերեւի խակրային, ինչպէս Յիսուսի եղաւ
այլակերպութեան ատեն, Աստուածայայտնութիւնն ալ
մեր մէջ կ'իրականանայ: Բայց դժբախտաբար այդ
բարձրացող զօրութիւնը ընդդիմութիւններու կը
հանդիպի եւ կը վատնուի ու չ'արտօնուիր որ պատշաճ

կերպով բարձրանայ: Այս ընդդիմութիւնները եօթը մահացու մեղքերն են: Ամէն մէկը որոշ խակրայի մը կը համապատասխանէ: Ինչպէս անոնք զօրութեան ներգործութիւնը կ'արգիլեն, նմանապէս նաեւ ներգործուած զօրութիւնը կը վատնեն: Աստուածաշունչին մէջ մահացու մեղքերը նաեւ ներկայացուած են իբր չաստուածներ կամ դեւեր: Պատմուած դէպքերը այն տպաւորութիւնը կու տան թէ անոնք անձէն դուրս «ոգիներ» են, որ անձին կը տիրանան եւ անձն ալ դիւահար կ'ըլլայ: Այն ինչ որ միջնադարեան շրջանին դիւահարութիւն կը կարծուէր, այսօր գիտենք թէ մտային հիւանդութիւն է: Հետեւաբար ճշմարտութիւնը այն է թէ անոնք անձին ցանած վատ հունտերուն հունձքերն են: Երբ մահացու մեղքերուն ազդեցութեան տակ կը մնանք, այսինքն անոնց գերին կ'ըլլանք, կամ զանոնք որպէս կուռք կը պաշտենք, կը խափանենք զօրութեան հոսքը:

Ստեղծագործութեան եօթը օրերը շատ հաւանական է որ եօթը խակրաներուն համապատասխանեն: Այսինքն ստեղծագործութեան ամէն «օր»ը Ֆիզիքական արտայայտութեան մէջ խակրայի մը յաւելումն է: Ամէն մի խակրայ իր յատկութիւնները ունի եւ միայն իր թրթռացումին համապատասխան զօրութեան հոսքը՝ մոտքը կ'արտօնէ: Ամենավարի «հիմնական» խակրան ամենացած թրթռացումի յաճախականութիւնը ունի՝ իսկ «գանկի վերելի» խակրան՝ ամենաբարձր:

Առաջին օրը, մէկ խակրայով՝ այսինքն ցած թրթռացումի յաճախականութիւն ունեցող զօրութեան միջոցաւ կազմուած է նիւթը՝ հանքային աշխարհը եւ թերեւս ամենապարզ կեանքը՝ «վիրոս»ը, որ բազմանալու կարողութիւնն ունի: Ան կը բազմանայ ուրիշ բջիջներու բազմանալու կարողութիւնը գործածելով:

Երկրորդ խակրայով՝ աւելի բարձր թրթռացու-

մով, «կեանքի» բազմանալը կարելի եղած է՝ միաբջի-
ջային մանրէնէրէ, բոյսերէ մինչեւ ստնաւոր կենդանի-
ները, ներառեալ մարդը:

Երրորդ խակրան զգացումի եւ յուզումի կարողութիւնը կու տայ: Ինչպէս մարդիկ նոյնպէս ալ կ'ենդանիները զանազան յուզումներու՝ բարկութեան, տխրութեան, ուրախութեան ... ենթակայ են: Նոյնիսկ բոյսերը նախնական զգացում ունին, քանի որ արմատները դէպի ջուր, իսկ տերեւներն ալ դէպի լոյս դառնալ գիտեն:

Չորրորդ խակրան սիրոյ արտայայտութիւնը կ'արտօնէ եւ անոր հետ ալ գութը, ողորմութիւնը եւ զոհողութիւնը: Կենդանիներն ալ մարդոց պէս սիրելու կարողութիւնը ունին, ինչպէս մարդիկ, անոնք ալ իրենց ձագերը կը սիրեն եւ կը խնամեն: Շուներ երբեմն այնքան իրենց տէրերը կը սիրեն, որ զանոնք վտանգէ մը ազատելու համար ինքզինքնին կը զոհեն:

Հինգերորդ խակրան խօսելու կարողութիւնը կու տայ: Կը կարծուի թէ միայն մարդիկ կարող են խօսելով արտայայտուիլ: Այսօր, ըստ գիտուններու, որոշ անասուններ իւրայատուկ սահմանափակ բառացանկ ունին եւ իրարու հետ կը հաղորդակցին: Մեզի համար անոնք կը թուին ճիշեր ըլլալ: Արդեօք մեր խօսակցութեան մասին անասունները ի՞նչ կը խորհին:

Վեցերորդ խակրան իմացականութիւն կու տայ, նաեւ տրամաբանելու, դատելու եւ զատելու կարողութիւնը: Դարձեալ ըստ գիտուններու, որոշ անասուններ նաեւ դատելու, զատելու եւ գոնէ նախնական իմացականութեամբ խնդիր լուծելու կարողութիւնը ունին:

Եօթերորդը՝ մարդու առանձնաշնորհեալ խակրան է, որ Աստուած ստեղծագործութեան եօթերորդ օրը, մարդուն տուաւ անոր անհատականութեան հետ: Որովհետեւ մարդն ալ (Ադամ եւ Եւա) մինչեւ իրենց անկու-

մը «Աստուծոյ հետ էին», այսինքն լրիւ դիտակից, հետեւաբար միջոցը Աստուածայայտնութեան: Այսպէս սով ստեղծագործութիւնը իր աւարտին հասած էր եւ այդ օրն ալ սրբացած:

Բոլոր ստեղծագործութիւնը երկուութեան վրայ հիմնուած է՝ նիւթ եւ հականիւթ (matter & anti-matter), մազնիսի երկու բեւեռները, ելեկտրոնը իր ժխտական ելեկտրական լիցքով իսկ փրոթոնը՝ դրական, արու եւ էգ, մեծ եւ պզտիկ, հիւանդ եւ առողջ, սէր եւ ատելութիւն, կեանք եւ մահ եւայլն: Մարդն ալ երկու կառապաններ ունի՝ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս եւ իր անհատականութիւնը՝ «Ես»: Մարդ իր լրիւ կազմուած վեցերորդ խակրայի շնորհիւ դատելու եւ զատելու կարողութիւնը ունի, հետեւաբար իր կեանքին սանձերը, իր «Ես»ին՝ անհատականութեան, կամ Քրիստոսի՝ իր ճշմարիտ էութեան, տալը ինք կ'որոշէ: Ադամ եւ Եւայի օրերէն մինչեւ այսօր կը թուի թէ մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը իր կեանքի սանձերը իր «Ես»ին յանձնած է, քան թէ իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի:



Հետեւեալ ցանկերը, եօթը խակրաները եւ անոնց համապատասխանող թէ դրական եւ թէ ժխտական յատկութիւնները եւ ազդեցութիւնները պատշաճ կարգով մը կը ներկայացնեն:

ԽԱԿԱՐԱՆԵՐ	ՄԱՀԱՅՈՒ ՄԵՂԵՐԵՐ	ԴԵԿԵՐԵ ԿԱՄ ՉԱՍՏՈՒԹՅԱՆԵՐ
Գանկի վերելի	Հպարտութիւն	Սատանայ
Ճակտի	Ազահուցութիւն	Վիհ
Կոկորդի	Որկրամոլութիւն	Բահաղ
Սրտի	Նախանձ	Բէքեղեբուղ
Ճառագայթածեւ	Բարկութիւն	Լեւիաթան
Ընջակային	Բղջախոհութիւն	Ազմոդ
Հիմնական	Ծուլութիւն	Մամոնա

ԽԱԿԱՐԱՆԵՐ	ԵԿԵՂԵՅԻՆԵՐԸ	ԶԳՈՒԵԱՅՈՒՄ ԿԱՄ ՅՈՐԿՈՐԱՆԵՐԸ
Գանկի վերելի	Ֆիլատեյֆիայի	Բաց դուռ
Ճակտի	Սարգիկէի	Հոգեկան մահ
Կոկորդի	Թիւատիրի	Հիւանդութիւն
Սրտի	Եփեսոսի	Առաջին սէր
Ճառագայթածեւ	Զմիւռնիայի	Տառապանք, վախ
Ընջակային	Պերզամոնի	Սատանայի գահը
Հիմնական	Լաւոդիկէի	Անունով կրօնասէր

ԽԱԿԱՐԱՆԵՐ	ԱՌԱՔԱՆՈՒԹԻՒՄԸ	ԻՆԵՐԱՓՈՓՈՒՄԱՆ ՇԱՌՐԱՆԵՐԸ
Գանկի վերելի	Հեզութիւն	Հաւատք
Ճակտի	Ողորմածութիւն	Իմաստութիւն
Կոկորդի	Ժուժկալութիւն	Գիտութիւն
Սրտի	Եղբայրսիրութիւն	Բարեպաշտութիւն
Ճառագայթածեւ	Ներողամտութիւն	Վճռականութիւն
Ընջակային	Ողջախոհութիւն	Երկիւղածութիւն
Հիմնական	Ժրաջանութիւն	Խոհեմութիւն

ԽԱԿԱՐԱՆԵՐ	ԶՕՐՈՒԹԻՒՄՆԵՐԸ	ԽՈՐՀՈՒԿԱՆԵՐԸ
Գանկի վերելի	Հոգեկան	Հաղորդութիւն
Ճակտի	Մտային	Կարգ հիւանդաց
Կոկորդի	Կամք	Ձեռնադրութիւն
Սրտի	Խիղճ	Պսակադրութիւն
Ճառագայթածեւ	Ոգեկան (psychic)	Ապաշխարութիւն
Ընջակային	Կենսական	Դրոշմ
Հիմնական	Ֆիզիքական	Մկրտութիւն



ԿԱԹՒԼ ՄԸ ԱՐՅՈՒՆՔ

Աչքը հայելին է մարդկութեան,
Արցունքն ալ սրտաշածօրէն
Ըլլայ նշան մը հանրութեան
Չգացումներու խոր վայրէն:

Արցունքը կը հոսի առատ
Երբ մարդ ըլլայ յուզումով լի,
Կամ զինք գրաւէ կարօտախտ,
Անօգ վիճակ անդարմանելի:

Արցունքը նաեւ նշան մըն է
Ծայրայեղ ուրախութեան,
Տխրութեան արդիւնք մըն է
Եւ թէ սաստիկ բարկութեան:

Ստացուած լաւ ու վատ լուրեր
Կը բանան աչքի ծորակներ,
Նոյնպէս անձկութեան օրեր
Եւ շատ մը հիւանդութիւններ:

Երբ աչքերը դառնան արեւին
Անյապաղ արցունքը կը հոսի:
Երբ անձը դառնայ Քրիստոսին
Կաթիլը կը դառնայ մարգրիտի:

Արցունքի ամէն մէկ կաթիլը
Ճշմարիտ ապաշխարութեան,
Է ամենաթանկագին նուէրը
Նուիրուած Աստուածութեան:

Վ.Ս.



-Գ-

ՀԻՎԱՆԴՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՄԱՀ



ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՀ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

«Խոսարողան՝ն եղերոտն միմեանց պմեղս, ետ
աղօ՛րս արարելն ՚ի վերայ միմեանց, որպէս
պի թշշկեաջի» . (Յակոբոս Ե:16)

«Ոստովանեցէք իրարու ձեր յանցանքները, եւ
աղօթեցէ՛ք իրարու համար, որպէսզի բժշկուիք ...»:

«Յեթ աշտորիկ Գրանէ պնա Յիսոսա ՚ի
յոսճարին ետ ասէ ցնա . Ահա-ասիկ
ողջացար, մի՛ ետ մեղանշեր, պի մի՛ շար
ետ ինչ լինիցի իւզ» : (Յովհաննոս Ե:14)

«Անկէ ետք Յիսուս՝ գտնելով զայն տաճարին մէջ՝
ըստ անոր . «Ահա՛ բժշկուեցար . ա՛լ մի՛ մեղանչեր՝ որ
աւելի գէշ բան չպատահի քեզի»»:

«... Ե՛ր նոցա իշխանոթիւն աշտոց պղծոց
հանել պնոսա, ետ թշշկե՛լ պամեանայն ցատտ
ետ պամեանայն հիւանդոտթիւնա» : (Մարթեոս
Ժ:1)

«... իշխանութիւն սուս անոնց՝ անմաքուր ոգիներուն
վրայ, որպէսզի դուրս հանեն զանոնք՝ ու բուժեն ամէն
տեսակ ախտ եւ ամէն տեսակ վատ առողջութիւն»:

Այս համարներուն համաձայն կը թուի թէ
հիւանդութիւնները, որ մեզի կը պատահին, մեր
գործած մեղքերուն հետեւանքներն են: Հետեւաբար,
ըստ վերեւ գրուած առաջին համարին, բժշկութեան
յաջողութեան համար առաջին հանգրուանը մեղքերը
խոստովանիլ եւ ապաշխարելն է: Հարկաւ մեղքերը
չկրկնել շատ կարեւոր է: Ըստ երկրորդ համարին, եթէ
մեղքերը շարունակուին աւելի վատ հիւանդութիւն-
ներու կրնանք ենթարկուիլ: Դարձեալ երրորդ համարէն

ալ յայտնի կ'ըլլայ թէ հիւանդութիւններու պատճառները մեր մահացու մեղքերը ներկայացնող անմաքուր ոգիներն են: Յիսուս ալ երբ կը բժշկէր միշտ կ'ըսէր. «Մեղքերդ ներուած են» եւ անհատին մեղքին յառաջ բերած ժխտական «հունձքերը» ինք իր ողորմածութեամբ իր վրայ կ'առնէր: Միթէ չէ՞նք ըսեր. «Յիսուս մեր մեղքերուն համար մեռաւ»: Ան, նոյնիսկ իր յարութենէն եւ համբարձումէն ետք մեզի շնորհեց այս ողորմածութիւնը, պայմանաւ որ Աստուածահաճոյ կենցաղ մը ունենանք եւ իրեն հաւատալով իր սորվեցուցածները մեր կեանքերուն մէջ կիրարկենք ու իրականացնենք: Միայն «կը հաւատամ հետեւաբար փրկուած եմ» ըսելը բաւարար չէ:

Մեղքը ինչպէ՞ս հիւանդութեան մը պատճառ կրնայ ըլլալ: Հիւանդութիւնը Ֆիզիքական մարմնին կը պատկանի եւ անոր ներդաշնակութեան եւ հաւասարակշռութեան մէջ խանգարում մը կը ներկայացնէ: Իսկ մեղքը բարոյական գետնի վրայ կը գործէ եւ Ֆիզիքականին հետ կը թուի որեւէ կապ մը չունենալ: Հարկաւ կան որոշ մեղքեր որ ուղղակի Ֆիզիքականին վրայ կ'ազդեն, ինչպէս ծխելը, արբեցուցիչ ըմպելիները, թմրեցուցիչ դեղերը եւ որկրամոլութիւնը: Աւետարանին մէջ Յիսուսի հիւանդ ըլլալու մասին որեւէ ակնարկութիւն չկայ: Ապահովօրէն կրնանք եզրակացնել թէ աս իր անմեղութեան հետեւանքն էր: Իբր բժիշկ բազմաթիւ հիւանդներ դարմանելու առիթը ունեցած եմ: Ոմանք առաջին դարմանումէն եւ բուժումէն ետք երկար տարիներ առողջ ապրած են, իսկ ուրիշներու մէջ հիւանդութիւնը յաճախ կրկնուած է: Հարկաւ այսօրուայ բժշկական գիտութեան մակարդակին համաձայն այս տարբեր երեւոյթներուն նկատմամբ շատ դիւրաւ պատճառներ կրնանք տալ: Անձին իր հօրմէն եւ մօրմէն ստացած Ֆիզիքական ժառանգը

ասոնցմէ առաջնակարգն է: Բայց զարմանալի չէ՞, երբ նոյն ընտանիքի մէջ չորս կամ հինգ քոյր-եղբօր մէջէն միայն մին յաճախ կը հիւանդանայ, բայց ոչ միւսները, կամ ճիշդ հակառակը, բոլորը իրենց ծնողքէն ժառանգած հիւանդութիւններով կը տառապին (օրինակ՝ շաքարախտ), բայց անոնցմէ մին բնաւ չի հիւանդանար, հակառակ որ առատ շաքար կ'ուտէ: Մարդկայնօրէն կ'իմաստականացնենք ըսելով թէ այդ անձը բախտաւոր եղած է եւ իր ծնողքէն լաւ ծիներ (gene) ստացած է: Բայց արդեօք տիեզերքի մէջ անձէն անկախ ճակատագիր կամ բախտ ըսուած բան գոյութիւն ունի՞: Եթէ գոյութիւն ունենար Աստուած արդար պիտի չ'ըլլար: Բայց գիտենք թէ Աստուած արդար է, հետեւաբար այն ինչ որ մենք ճակատագիր կամ բախտ կը կոչենք մեր ցանած լաւ ու վատ հոլմտերուն հոլմձքն է: Եթէ նոյնիսկ այս տեսակէտը չափահասերու համար իրողութիւն ընդունինք, շատ իմաստալից, սովորական եւ իրաւացի պիտի ըլլար հարց տալ թէ ինչո՞ւ որոշ անձեր հիւանդ կը ծնին եւ ինչո՞ւ անմեղ երախաներ կը հիւանդանան:

Ուրեմն մեղքի եւ հիւանդութեան իրարու հետ ունեցած կապը ի՞նչ է: Այս գիրքին Ա. եւ Բ. գլուխներուն մէջ կարդացինք թէ բոլոր տիեզերքը կազմուած է Ս. Հոգիի զօրութեամբ եւ այդ զօրութիւնն է որ կը ներգործէ ամէն ինչի մէջ՝ հարկաւ նաեւ ամէն անհատի: Բոլոր ստեղծուած տեսանելի եւ չօշափելի տիեզերքը միայն այդ զօրութեան արդիւնքն է եւ որքան ալ խտացած՝ թանձրացած ըլլայ եւ նիւթը ներկայացնէ, դարձեալ միայն զօրութեան ազդավայր մըն է: Նաեւ Ա. գլխուն մէջ տեսած էինք թէ ինչպէս զօրութեան թրթռացումի յաճախականութեան համաձայն նիւթը զանազան ձեւեր կ'առնէր: Ամէն անհատի հոգին երբ Աստուծոյ վերադառնայ ուրեմն իր կենցաղին համե-

մաստ որոշ թրթռացումի յաճախականութեան զօրութիւն մը կը ներկայացնէ: Այս զօրութիւնը իր թրթռացումին հետեւանք իր մէջ տեղեկութիւն կը պարունակէ, ինչպէս ձայնասփիւռի զօրութեան ալիքները տեղեկութիւն կը պարունակեն եւ կը սփռեն: Այս տեղեկութիւնը մահէ առաջ անհատին ապրած կենցաղին՝ իր մեղքերուն եւ իր առաքինութիւններուն կը համապատասխանէ: Այս հոգին որ կը գոյատեւէ մարմնին մահէն յետոյ, Աստուածային զօրութեան մաս կը կազմէ եւ ըստ Աստուծոյ կամքին վերստին մարմնանալու կարողութիւնը կ'ունենայ: Ըստ հետեւեալ համարին դեռ Ղեւի չծնած՝ իր հօր մէջ տակաւին միայն սերմ, Մելքիսեղեկ, որ նաեւ կը թուի Քրիստոսութիւնը ներկայացնել, զինք դիմաւորած էր: Ուրեմն յստակ հոգիներ տակաւին չմարմնացած գոյութիւն ունին:

«Զի դէ՛ռեւս յերա՛նս Ըօր իւրոյ էր՝
 յորժամ ընդառա՛ջ էղեւ նմա

Մելքիսեղեկ»: (Եբրայեցիս Է:10)

«որովհետեւ տակաւին իր հօր մէջքն էր՝ երբ Մելքիսեղեկ դիմաւորեց զայն»:

Իւրաքանչիւր հոգիի զօրութիւնը իր մէջ տեղեկութիւն կը պարունակէ՝ մնացած անցեալի մարմնացումներէ եւ եթէ այդ հոգին դարձեալ մարմնանայ, այդ զօրութեան թրթռացումի որակին համաձայն անհատականութիւն մը կ'ունենայ եւ համապատասխան մարմին մը կը կազմէ: Աս ալ տարբերակ ծնունդներու պատճառ կ'ըլլայ, որոնց ականատես կ'ըլլանք: Ապա թէ ոչ Աստուած անարդար եղած կ'ըլլար: Ճիշդ է թէ մարդու անհատականութիւնը իր մարմնին հետ կը մեռնի եւ այդ անհատը այլեւս ետ չի դառնար: Բայց հոգին Աստուծոյ կը պատկանի եւ Աստուծոյ հոգին է,

որ մեր հոգին կ'ըլլայ, հետեւաբար հոգին կարող է նոր մարմին ըլլալ՝ առնել: Իսկ եթէ անհատը իր կենցաղով եւ Քրիստոսի շնորհքով փրկութեան արժանանայ, իր անհատականութիւնն ալ նոյնիսկ մարմնին մահէն ետք իր հոգիին հետ շղթայուած կը մնայ, որով այդ հոգին այլեւս վերամարմնանալու ազատութիւնը չ'ունենար, ի բաց առեալ այն պարագային, երբ իր շղթայուած անհատականութիւնը փափաքի վերամարմնանալ՝ ծառայելու Աստուծոյ կամ քին:

Ս. Հոգիի զօրութիւնը անընդհատ տիեզերքի մէջ կը հոսի՝ ինչպէս նաեւ մեր մէջ: Բայց ինչ որակով եւ ինչ թրթռացումի յաճախականութեամբ զօրութենէ պիտի օգտուինք կախեալ է մեզմէ՝ մեր կենցաղէն՝ մեր մեղքերէն եւ մեր առաքինութիւններէն: Զօրութեան ներգործութիւնը վերէն վար կ'ըլլայ եւ խակրաներու միջոցաւ մարմնին բոլոր մասերուն մէջ համահաւասար կը բաժնուի, որպէսզի մարմինն ալ իր հաւասարակըչութիւնը, ներդաշնակութիւնը եւ հետեւաբար առողջութիւնը պահէ: Եթէ խակրաներէն մին լաւ չաշխատի, որ կը նշանակէ զօրութեան հոսքին ընդդիմութիւն ներկայացնել, կամ ներգործած զօրութիւնը մեծ որակով վատնել, իր ազդավայրին մէջ պատշաճ զօրութիւն չի կրնար տալ: Ժամանակի ընթացքին այդ զօրութեան մակարդակի վրայ եղած պակասը Ֆիզիքական մակարդակի վրայ եւս իր աւերը կը գործէ, ինչ որ մենք հիւանդութիւն կը կոչենք: Ճիշդ այս իրողութեան համար, երբ Յիսուս կը բժշկէր, հիւանդութեան պատճառը եղող զօրութեան անհաւասարութիւնը անհետացնելու համար, իրմէ հիւանդին զօրութիւն կը փոխանցէր: Երբ զօրութեան մակարդակի վրայ այդ անհաւասարութիւնը կ'անհետանայ, Ֆիզիքականն ալ՝ հիւանդութիւնը ինքնաբերաբար կը բուժուի, երբեմն գարմանքի մատնելով բժիշկները: Բժշկու-

Թիւնը զայն «ինքնաբերական ապաքինում» (spontaneous cure) կը կոչէ: Պէտք է մոռնանք թէ մեր մարմիններուն ամէն մէկ բջիջը եւ ամէն մէկ բջիջի մանրէները եւ ամէն մէկ մանրէի բոլոր հիւլէները այդ զօրութեամբ կազմուած են: Միթէ շատ մը հիւանդութիւններ որոշ բջիջներու սխալ գործելուն հետեւանք չե՞ն: Ինչո՞ւ սխալ կը գործեն: Որովհետեւ գիրենք կազմող զօրութիւնը ճիշդ է եւ զօրութիւնն ալ ճիշդ է, որովհետեւ ճիշդ զօրութիւնը մենք չենք արտօներ որ մեր անձերէն՝ մարմիններէն ներս ներգործէ: Հետեւաբար բոլոր հիւանդութիւնները մեր հոգիի սկզբնական զօրութեան թրթռացումի որակին եւ մեր կենցաղին հետեւանքներն են: Մենք մեր կենցաղով զօրութեան որակը բարձրացնելու կարելիութիւնը ունինք, նոյնիսկ եթէ ան ի սկզբանէ ցած եղած ըլլայ: Ինչպէս անձի մը բնոյթը իր ժառանգականութենէն եւ իր միջավայրէն կախեալ է, նմանապէս հիւանդանալն ալ ժառանգականութենէ եւ բնոյթէ՝ կենցաղէ կախեալ է:

Հետեւեալ օրինակը ուսումնասիրութեան մը արդիւնքն է, որ կը ներկայացնէ թէ՛ ժառանգականութեան եւ թէ՛ անձին կենցաղին ունեցած ազդեցութիւնը հիւանդութեան կամ առողջութեան վրայ:

Հիւսիսային Ամերիկայի բնիկներու ցեղ մը կայ, որոնց ցեղին մէջ, դարերու ընթացքին բարեշրջման օրէնքներու համաձայն, մասնաւոր ծին (gene) մը յառաջացած է: Այս ծինը իրենց գոյատեւումը ապահոված է: Հարիւրհարիւրյիսուն տարի առաջ իրենց ապրելակերպը թափառականութիւն էր, իրենց կենսական սնունդի՝ գոմէշներու հօտերու ետեւէն ճամբորդել էր: Երբեմն, մանաւանդ ձմրան ձիւնոտ ամիսներուն, ստիպուած օրերով անօթի ճամբորդած են: Դարերու

ընթացքին յառաջացած ծինը անոնց տոկալու եւ սովամահ չըլլալու կարողութիւնը տուած էր: Այսօր, այս նոյն ցեղը, որ նստակեաց դարձած է, անդամները նոյնիսկ իրենց տան փողոցի անկիւնի խանութը մեքենայով կ'երթան: Անդամներուն մեծամասնութիւնը իրենց երիտասարդ տարիքին շաքարախտէ եւ սրտի տազնապէ կը տառապին եւ վաղամեռիկ կ'ըլլան:

Այս օրինակը ցոյց կուտայ, թէ անձի մը Ֆիզիքական ժառանգը եւ կենցաղը ինչպէս իրար կ'ազդեն: Վերոյիշեալ ուսումնասիրութեան մէջ յիշուած ծինը, որ իրենք իրենց ծնողքէն ժառանգած են, «Աստուծմէ տրուած» շնորհք մըն է՞ր՝ թէ անեծք: Պատասխանը շատ պարզ եւ յայտնի է. «կախում ունի անհատին կենցաղէն»: Նմանապէս հոգեկան՝ զօրութեան գետնի վրայ ալ ամէն ինչ որ մեզի կը պատահի կախեալ է մեր կենցաղէն: Այսօրուայ բժշկութիւնը, ան որ արդի բժշկութիւն կը կոչենք, շատ նախնական է եւ մարմինը կը ջանայ դարմանել հիւանդանալէն ետք: Աս կը նմանի անձի մը, որ նոր ինքնաշարժ մը կը գնէ, բայց որպէսզի ան չժանգոտի պէտք եղած նախազգուշութիւնները չի կատարեր եւ մի քանի տարի ետք կը ջանայ ժանգոտած մասերը նորոգել: Աւելի լաւ պիտի չ'ըլլա՞ր եթէ սկիզբէն զգոյշ ըլլար եւ ինքնաշարժը բնաւ չժանգոտէր: Պէտք է՞ որ բժիշկներն ալ նոյնը ընեն՝ հիւանդութեան առաջքը առնեն, քան թէ զայն գոյանալէն յետոյ դարմանեն: Յիսուս թէ բժիշկ էր եւ թէ վարդապետ: Արդեօք մեր վարդապետներն ալ պէտք է՞ որ այս հասկացողութեամբ կերպով մը «բժշկութեան» դերը կատարեն:

Այն ինչ որ հասարակութեան կողմէ որպէս «հրեաներու աստղ» կամ «Դաւիթի աստղ» ճանչցուած

է, շատ աւելի առաջուց Հայաստանի մէջ գոյութիւն ունեցած էր: Ասոր շատ մը օրինակները կան, բայց հոս պէտք չէ նիւթէն շեղինք: Այս «աստղը» իրարու հետ շղթայուած երկու եռանկիւններ կը ներկայացնէ՝ միոյն գագաթը վեր, իսկ միւսինն ալ վար: Ասիկա երկու իմաստ ունի: Առաջին իմաստը՝ գագաթը վար եռանկիւնը կը ներկայացնէ Աստուծոյ մարդեղութիւնը, իսկ գագաթը վեր եռանկիւնն ալ մարդու մէջ Աստուածայայտնութիւնը: Երկրորդ իմաստն ալ ինչպէս «վեր»ը, այնպէս ալ «վար»ն է: Հետեւաբար եթէ ուշադիր եւ ուշիմ ըլլանք, մեր միջավայրէն եւ բնութենէն շատ բան կարելի է սորվիլ: Պէտք չէ մեր կեանքը հարեւանցիօրէն ապրիլ: Նախ մեզի ամենածանօթը՝ մեր մարմինները ուսումնասիրենք: Երբ բջիջ մը կամ մարմնին մէկ մասը վատանայ, միթէ գայն չէ՞նք խնամեր եւ դարմաներ: Իսկ եթէ այդ բջիջին «մեղք»ը այնպիսի աստիճանի մը հասնի որ բոլոր մարմնին կը սպառնայ, գայն կը կտրենք եւ կը նետենք: Երբեմն դարմանը անախորժ կրնայ ըլլալ, բայց եւ այնպէս ատիկա ընդհանուր մարմնին օգտին համար է: Նմանապէս, ամէն մի անհատ Աստուծոյ մարմնին մաս կը կազմէ եւ Ասոր մարմնոյն բջիջներէն մին կը ներկայացնէ: Ուրեմն մեր կեանքի ժխտական պատահարները՝ պակասաւոր ծնունդները եւ հիւանդութիւնները, մեծաշխարհային չափի վրայ միթէ մեր օգտին համար եղած դարմանումի անախորժ դեղերը չէ՞ն: Եթէ հոգիին յաջորդ վերամարմնացման ժամանակ անոնց կրկնուիլը չենք փափաքիր, զանոնք պէտք է ուրախութեամբ ընդունինք: Այսպէսով է որ անուղղակիօրէն Աստուածայայտնութեան ծառայած կ'ըլլանք: Անախորժ պատահարը «վար»ին կը պատկանի, իսկ «վեր»ին համար ալ դարմանում է: Հետեւաբար պարտ ենք նաեւ մեր կենցաղը պատշաճ փոփոխութեան

ենթարկել: Մեր կենցաղն է որ կ'որոշէ թէ մեր էութենէն ներս ինչ որակով զօրութիւն պիտի ներգործէ: Այս զօրութեան հոսքը իրողութիւն մըն է: Թերեւս ոմանք կրնան խորհիլ թէ ատիկա երեւակայական է: Ձեզ կրնամ հաւաստիացնել թէ ան իսկական է: Ես անձնապէս, իմ անձիս վրայ, այդ զօրութեան բաբախումը շօշափելով զգացած եմ: Ես ալ շատերու պէս սկիզբը տարակուսելով զայն շնչերակային զարկ կարծեցի: Բայց զայն բաղդատելով սրտիս զարկին հետ, նշմարեցի թէ երկուքին յաճախականութիւնները իրարմէ հիմնականօրէն կը տարբերէին: Պատշաճ է հոս ակնյցնել թէ չինական եւ թիպէթական հին բժշկութիւնները այս զօրութեան բաբախումը զգալով եւ քննելով ախտաճանաչում կը կատարէին: Կը թուի թէ նոյնիսկ Չինաստանի մէջ ալ այս գիտութիւնը կամաց կամաց կը կորսուի: Դժբախտաբար այդ զօրութեան բաբախումով ախտաճանաչում ընելու գիտութիւնը չունիմ: Չինական բժշկութեան մէջ մարմինը մագնիսական միջօրէականներու (magnetic meridians) բաժնուած է: Անոնք մօտաւորապէս կը համապատասխանեն ջիղերու տարածութեան: Պէտք չէ մոռնանք որ ջիղերու գործառնութիւնը ելեկտրական հոսանքով տեղի կ'ունենայ: Շրջապատային տեղեկութիւնները ելեկտրական հաղորդակցութեամբ ուղեղին կը հասնին: Լաւ գիտենք թէ ամէն ելեկտրական հոսանք իր շուրջը մագնիսային ազդավայր մը կը ստեղծէ եւ ամէն բաբախուն մագնիսային ազդավայր մըն ալ ելեկտրական հոսանք յառաջ կը բերէ: Ելեկտրական հոսանքն ալ ելեկտրոններու շարժումը կը ներկայացնէ եւ ամէն մի ելեկտրոն խտացած զօրութիւն է:

Այս բոլորին ներկայացուելուն իմաստը ի՞նչ է: Յոյց տալու համար է թէ բոլորը՝ մեր կեանքի պատահարները եւ մեր առողջութիւնը զօրութեան հետ

սերտ կապ ունին եւ անոր արդիւնքն են: Քանի որ մենք մեր կենցաղով ներգործող զօրութեան որակը որոշելու կարողութիւնը ունինք, հետեւաբար մենք նաեւ հիւանդութիւնները խափանելու կամ անոնցմէ ազատելու կարողութիւնն ալ ունինք: Միթէ հիւանդին օժման խորհուրդն ալ նոյն նպատակին չի՞ ծառայեր: Միթէ նպատակը հիւանդին ապաքինման համար իրեն յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւն տալ չէ՞: Ամէն անհատ պարտ է քննել իր կեանքը եւ զայն պատշաճեցնել Աստուածահաճոյ կենցաղի մը:

Կենցաղ մը նման փոփոխութեան ինչպէ՞ս ենթարկել: Այս գիրքին նախորդ գլխուն մէջ մատնանշուած է թէ եկեղեցւոյ խորհուրդները կատարող քահանան պարտ է խորհրդապաշտ (mystic) ըլլալ: Հոն նաեւ գրուած է խորհրդապաշտութեան յատկութիւնները: Հոս յարմար է այդ պարբերութիւնը կրկնել եւ յաւելումներ կատարել: Ճշմարիտ խորհրդապաշտը գիտէ թէ միայն անձին ճշմարիտ էութիւնն է, որ ամէն ինչի գիտակից է: Ան, նաեւ ժամանակին գիտակից ըլլալով ժամանակը եւս կ'առարկայացնէ, հետեւաբար յաւիտենական է եւ ինք միայն ներկան կ'ապրի, այսինքն իր միտքը միայն իր ներկայ արարքին վրայ կեդրոնացած կ'ըլլայ: Ան, իր ճշմարիտ էութենէ գատ ամէն ինչ՝ ներառեալ իր փորձառական էութիւնը՝ անհատականութիւնը կ'առարկայացնէ: Ան շատ լաւ գիտէ թէ իր ճշմարիտ էութիւնը գիտնալը անկարելի է: Այդ էութիւնը Աստուծոյ Որդին՝ Քրիստոս ըլլալով մեր գիտցած սովորական մարդկային յատկութիւնները կը գերազանցէ եւ անոնց ենթակայ չէ: Հետեւաբար Ան ամենուն հասարակաց է, այսինքն ինքզինք ամենուն մէջ կը տեսնէ: Խորհրդապաշտ (mystic) ըլլալը ամէն անհատի պարտականութիւնն է: Ան Աստուծոյ կանչին ընդառաջել է: Ան, տեսանելիին մէջ եւ տեսանելիին

միջոցաւ Անտեսանելին հասկնալ է: Խորհրդապաշտերը անոնք են որոնք Աստուծոյ բոլոր խորհուրդներուն (mysteries) մէջէն Զինք կը տեսնեն: Ամէն անձ իր առօրեայ կեանքը ապրելով եւ իր բոլոր աշխարհիկ պարտականութիւնները կատարելով հանդերձ, կրնայ նաեւ խորհրդապաշտ մը ըլլալ: Աս հոգեկան արթնութեամբ եւ խոկումով կարելի կ'ըլլայ: Այս վերջինը՝ խոկումը վաղանցիկ պարապ արարք մը չէ: Ան գիտականօրէն, գործնականօրէն եւ փորձառականօրէն փաստուած զարթօնքի միջոց մըն է: Բայց ան յաջողութեան համար հաւատքի, համբերութեան եւ յարատեւութեան կը կարօտի: Ս. Հոգիի շնորհները Աստուծոյ զօրութիւններն են, իսկ խորհրդապաշտ անձն ալ այդ զօրութիւնները շարժման ենթարկելու կարողութիւնը ունի: Ծիշդ ասոր համար անհրաժեշտ է որ խորհուրդը (sacrament) կատարողը խորհրդապաշտ ըլլայ (տես Զեռնադրութեան խորհուրդը): Ամէն անհատի կեանքի նպատակը ձգմարտութեան օրէնքներու համաձայն «գիտակցաբար ապրիլ» (տես Գլուխ Ը. երկրորդ մաս) եւ կատարելութեան ձգտիլ պէտք է ըլլայ: Ամէն մարդ Աստուած կը փնտռէ, բայց չ'ուզեր զԱյն գտնել, որովհետեւ գիտէ թէ երբ Աստուած գտնէ իր կեանքն ալ հիմնականօրէն պիտի փոխուի: Յաւելեալ գիտակցութեան հետ նաեւ պատասխանատուութիւնը կու գայ: Ծիշդ ասոր համար շատեր պարզ հաւատալով (belief) կը բաւականանան, որ կրաւորական (passive) է, իսկ հաւատքը (faith) գործնական (active) է:

Ոմանք կը խորհին թէ խորհրդապաշտութեան համար պէտք է մեկուսանալ եւ ճգնաւորի նման կեանք ապրիլ, ինչ որ իրենց առօրեայ կեանքի պարտականութիւններուն հետ չեն կրնար հաշտեցնել: Մեկուսացումը մտքի ուղղութեան փոփոխութեամբ պէտք է ըլլայ եւ ոչ թէ Ֆիզիքապէս առանձնանալով: Ամէն անձ իր

բոլոր պարտականութիւնները՝ «գործ»ի, ընտանեկան եւ այլ, կատարելով հանդերձ կրնայ խորհրդապաշտ ալ ըլլալ: Այս ուղղութեամբ պարտ է հետեւեալ հարցումները լրջօրէն ինքն իրեն հարցնել եւ պատասխաններն ալ ինք անձնապէս գտնել, որովհետեւ անոնք իր անձնական կեանքին կը վերաբերին:

ա- Ինչո՞ւ ծնայ:

բ- Կեանքին իմաստը եւ նպատակը ի՞նչ է:

գ- Ինչպէ՞ս կրնամ ծառայել:

Այս հարցումներուն պատասխանը լրջօրէն գտնելու համար անձը որոշ ինքնափոփոխութեան մը կը կարօտի: Այս ինքնափոփոխութիւնը կարելի կ'ըլլայ միայն երբ ինք կը յաջողի հետեւեալները իւրացնել եւ կատարել:

ա- Ինքնաքննութիւն- Առանց ինքնաքննութեան կարելի չէ սխալները գտնել եւ զանոնք սրբագրել: Ինքնաքննութեան հետեւանք է որ անձը իր մէջ հետեւեալ յատկութիւնները՝ համեստութիւն, արժանապատուութիւն, ուղղամտութիւն, պատիւ, յարգանք, ներդաշնակութիւն կամ համաձայնութիւն, յարատեւութիւն եւ համբերութիւն պիտի կերտէ: Կը նշմարենք թէ բոլորն ալ Ս. Հոգիի շնորհներն են: Ինքնաքննութիւնը անձին իր Հոգիին՝ Քրիստոսին, համարատուութիւնն (accountability) է:

բ- Աղօթել- Աղօթքը անձին իր հոգիին՝ Քրիստոսին՝ Աստուծոյ, հետ հաղորդակցութեան բանալին է: Աղօթքը անձը զօրութեան ազդավայրին հետ հաղորդակցութեան մէջ կը դնէ: Աղօթքը առաջուց սորվուած բառերու թութակօրէն արտասանութիւնը չէ, այլ ան Աստուած ձանձնալու եւ ինքնաճանաչման սրտաբուխ տենջանքն ու միջոցն է: Աղօթքը պէտք է մեզ արտաքին ազդեցութիւններէ ձերբազատէ: Ան գիտակցութեան մակարդակի փոփոխութիւն մը պէտք է յառաջ բերէ:

Որպէսզի անձը ինքնամփոփուի պարտ է յարատեւ աղօթել՝ այսինքն իր բոլոր կեանքը աղօթք մը ըլլայ: Աղօթքը պէտք է իր մէջ անձին օրուայ ունեցած խորհուրդ, խօսք եւ գործքերուն անդրադարձը պարունակէ: Ճշմարիտ աղօթքը բարձրաձայն խօսելով խնդրել է, այլ ան կ'ըլլայ լռութեան մէջ: Միայն լռութեան եւ խաղաղութեան մէջ է որ անձը կը գիտակցի Աստուծոյ ստացած շնորհներուն եւ դարձեալ միայն այդ լռութեան մէջ է որ կը կարողանայ հաղորդուիլ՝ միանալ Անոր:

դ- Խոկում- Խոկում (տես նաեւ Լոյս ի Լուսոյ գիրքիս յաւելուածական մասին երրորդ բաժինը) մտքի կեդրոնացումն է իր ճշմարիտ էութեան՝ իր հոգիին՝ Քրիստոսի՝ Աստուծոյ վրայ: Այս ալ արդիւնքն է ապաշխարութեան (ապաշխարութեան համար տես նախկին գլուխը) եւ մտայնօրէն հեռացումը աշխարհիկ հետապնդումներէ: Ասիկա իր կեանքի բոլոր պարտականութիւնները անտեսել եւ ոտքերը ծալած նստիլ չի նշանակեր, այլ՝ պարտականութիւնները կատարել ամենալաւ կերպով, բայց կապուած չըլլալ անոնց արդիւնքներուն: Աստուծոյ վրայ կեդրոնանալ կը նշանակէ զինք տեսնել ամենուրեք եւ ամէն անձի մէջ եւ նման հայեացքով վարուիլ ամէն մի անհատի հետ: Այդ վարուելակերպը պէտք է ըլլայ այնպէս, ինչպէս պիտի ըլլար եթէ Յիսուս Քրիստոս ինք Փիզիքապէս ներկայ ըլլար մեր առջեւ (տես նաեւ նախորդ մի քանի էջերը):

դ- Կարգապահութիւն- Կարգապահութիւնը ամէն տեսակի արարքի յաջողութեան համար անհրաժեշտ է: Անձը նաեւ կարգապահ պէտք է ըլլայ իր հոգեկան կեանքի մէջ ալ: Կարգապահութիւնը կը պահանջէ որ անձը իր ցանկութիւնները, իղձերը եւ փափաքները զսպէ, քան թէ անոնց անմիջական գոհացում տայ: Առանց այդ կարգապահութեան ցանկութիւնները եւ

իղձերը շուտով կը բազմանան եւ անհատին միտքը գրաւելով յաջողութիւնը կը խափանեն:

Ե- **Աէր- Սէրը Աստուծոյ ներկայութիւնն է՝ ինչպէս նաեւ անձին միջոցաւ Անոր արտայայտութիւնը:** Միւրոյ արտայայտութիւնը յայտնի կ'ըլլայ անձին ցուցաբերած ծառայութենէն, գութ ու ողորմածութենէն, բարեպաշտութենէն, բարեսիրութենէն եւ Աստուածասիրութենէն ու Աստուածպաշտութենէն: Մանաւանդ այս երկու վերջինները միայն բոլոր ստեղծագործութիւնը, ներառեալ մեր թշնամիները, տարբեր կրօնքներու պատկանողները եւ մեղաւորները, սիրելով կարելի կ'ըլլայ: Աստուածասիրութիւնը ու Աստուածպաշտութիւնը պարզապէս «ես Յիսուս Քրիստոսը կը սիրեմ» ըսել է: Անտարակոյս Յիսուսը կը սիրենք, ի՞նչպէս չսիրել մեր վարդապետը: Անտարակոյս Յիսուս Քրիստոս մեր Աստուածն է, ինչպէս չսիրել մեր Աստուածը: Բայց եթէ նոյնիսկ մէկ հոգի մը՝ անձ մը չսիրենք, մեր Աստուածասիրութիւնը կեղծ կ'ըլլայ, քանի որ Քրիստոս այդ անձին ալ մէջն է:

«... Ամէն ասե՛մ յեւ, որովհետեւ արարել է միտքով յեղբայրացս այսոցիկ փոշրականց՝ ինչ արարել է»: (Մատթէոսի ԻԵ:40)

«... Քանի իմ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի՛ ըրիք»:

«... Ամէն ասե՛մ յեւ, որովհետեւ ո՛չ արարել է միտքով ի փոշրականցս յայսոցանէ, եւ ո՛չ ինչ արարել է»: (Մատթէոսի ԻԵ:45)

« ... Քանի ասոնց փոքրագոյններէն մէկուն չըրիք՝ ինծի՛ չըրիք»:

Այդ անձն ալ Աստուծոյ մարմնին մէջ «բջիջ» մըն է: Կարելի է՞ մարմնոյն մէկ բջիջը միւսէն աւելի սիրել,

կամ մին սիրել եւ միւսը ատել: Մարմնին բոլոր բջիջները զիրար կը սիրեն: Գիտենք թէ կը սիրեն: Գիտենք, որովհետեւ բոլորն ալ իրենց պարտականութիւնները կը կատարեն եւ իրարու օգտին համար կը գործեն: Մենք ալ որպէս մէկ մէկ բջիջներ Աստուածասիրութեան ու Աստուածպաշտութեան նկատմամբ ինքզինքնիս պէտք չէ խաբենք:

Յիսուս մեզի սորվեցուց, ուղղութիւն ցոյց տուաւ, «ինծի հաւատացէք եւ հետեւեցէք եւ իմ ըրածներէս աւելի մեծ բաներ պիտի ընէք» ըսաւ, բայց մարդ արարած Յիսուսի սորվեցուցածները կը վերլուծէ եւ կ'իմացականացնէ, փոխանակ զանոնք գործադրելու: Մարդը ճարպիկութեամբ ամէն ինչ ձեռարկելու (manipulate) մոլիութիւնը ունի: Ուրեմն իր այդ ունակութեամբ խեղաթիւրած է նաեւ Յիսուսի սորվեցուցածները: Զանոնք յարմարցուցած է իր վատ կենցաղին, փոխանակ ինք իր կենցաղը փոխելու եւ յարմարելու անոնց: Ան մոլորած, ճշմարտութիւն եւ փրկութիւն կը քարոզէ նաեւ մոլորեցնելով հանրութիւնը: Շատ աւելի լաւ է ճշմարտութիւնը ըլլալ, քան թէ զայն քարոզել, շատ աւելի լաւ է փրկուած ըլլալ քան թէ զայն քարոզել: Ինքնափոփոխութեան իրականացման համար անձը «ողնայար» եւ կամք պէտք է ունենայ: Անձին Հոգին՝ Քրիստոս միշտ կը յիշեցնէ, կը յորդորէ, բայց երբեք չի պարտադրեր: Իր յորդորներուն համաձայն ապրիլ՝ գիտակցութեամբ ապրիլն է: Մարդուն միտքը որ չէ կեդրոնացած, կամ շտա՝ փոփոխամիտ է, իսկ սիրտն ալ զգացումներով լի, հետեւաբար յորդորները իմանալու, հասկնալու, հետեւելու եւ գործադրելու կարող չէ: Մարդ արարած պարզ ստեղծութիւն մը չէ, այլ շատ բարդ է: Ան թէ՛ գիտակցութիւն եւ թէ՛ ենթագիտակցութիւն ունի: Ան նաեւ խիղճ ունի, որմէ կը ծագի յանցաւոր ըլլալու

զգացումը, ինչպէս նաեւ ամօթի զգացումը՝ խպնիլը: Անհատը ասոնց հետ դէմ-առ-դէմ գալէ կը խրտչի, հետեւաբար կը նախընտրէ ինքնաքննութիւն չկատարել: Ուրեմն ինքնաքննութեան արգելքներ կան, որոնցմէ մին վերեւ յիշեցինք: Կան նաեւ ուրիշ արգելքներ՝ ինչպէս եսասիրութիւնը: Անձը կապուած իր «Ես»ին, նոյնիսկ ինքնաքննութեան պէտք չի տեսներ: Անհամբերութիւնն ալ կրնայ արգելք հանդիսանալ: Անձին ձգտումը կրնայ լաւ ըլլալ, բայց յարատեւելու համբերութիւնը չ'ունենար: Ինքնաքննութիւնը անընդհատ պէտք է շարունակուի եւ անձը իր բոլոր կեանքի ընթացքին պարտ է արթուն, հսկող եւ աշալուրջ ըլլալ:

Երբ անձը յաջողի կատարեալ խորհրդապաշտ մը ըլլալ, իր միտքը Աստուծոյ վրայ կեդրոնացած եւ նիւթապաշտութենէ ձերբազատուած, Քրիստոսի շնորհքով զարթօնքի պարգեւին կ'արժանանայ: Այս զարթօնքի գիտութեան լոյսին տակ անձը Աստուած կը տեսնէ ամենուրեք եւ ամէն անձի մէջ: Նման անձ մը ամենեւին հիւանդ չ'ըլլար, որովհետեւ Ս. Հոգիի զօրութիւնը առատօրէն կը ներգործէ եւ կը հոսի իր էութենէն ներս: Եթէ նոյնիսկ հիւանդանայ, իր հիւանդութիւնը բազկատարած կ'ընդունի, որով գիտէ թէ ան անցեալէն մնացած պարտք մըն է, որ պէտք է «վճարէ»:

Ուրեմն երբ հիւանդանանք պարտ ենք հարց տալ. Ինչո՞ւ:





ՀԻՒԱՆԴԸ

Ո՛վ Աստուած իմ մարդասեր,
Դուն միշտ ուղորմած ես Տէր,
Գիտես թէ կը տառապիմ,
Լսէ՛ ով Տէր աղերսանքն իմ:

Հիանդանոցները թափառիլ
Բժիշկի ինամքի յանձնուիլ,
Քննութիւններն ալ անվերջ,
Բայց ցաւերու չկայ մի վերջ:

Վերջին յոյսս Դուն ես Տէր,
Յաւերուս դարման մը բեր,
Դեղ մը ասոր որ բժշկուիմ,
Եւ տառապանքէս ազատիմ:

* * *

Ներե գիս Տէր, այս յիմարին,
 Իմ գործած աններելի սխալին,
 Առ, տառապանքս պատշաճ է,
 Գործած մեղքիս Հետեւանքն է:

Երբ ես այդ մեղքը կը գործէի,
 Ես Քու կամքին մտիկ չըրի,
 Բայց Հիմա որ Հիւանդացայ,
 Իմ սխալին անդրադարձայ:


Եթէ Դուն յարմար նկատես,
 Եւ բան մը սորված եմ դասես,
 Համբերութիւն տուր սովալու,
 Կարողանամ պարտքս վճարելու:

Ամենակարող ես եւ ամենագէտ,
 Խոստումս պիտի պահեմ յաւետ,
 Այլեւս պիտի չի շեղիմ՝ ճամբէդ,
 Եւ ինձի ցոյց տուած ճիշդ ուղիէդ:

* * *

Փառք Քեզ Տէր՝ Որդի Աստուծոյ,
 Առողջ եմ ես Հիմա շնորհիւդ Քոյ,
 Դուն դարմանն ես բոլոր ցաւերու,
 Բնաւ պիտի չմոռնամ Քեզ պաշտելու:

Վ.Ս.



ՄԱՀԸ

Մարդ ինչո՞ւ մահէն կը վախնայ: Անոնք, որոնք մահը իբր վերջակէտ կը տեսնեն, հարկ է որ որոշ անձկութիւն մը զգան եւ մտահոգ ըլլան: Որովհետեւ մարդ իր անհատականութեան՝ «Ես»ին հետ նոյնացած է, կը կարծէ թէ իր «Ես»ին մահով ինք ալ կը վերջանայ: Ընդհանուր առմամբ բոլորս ալ մեր աշխարհիկ ինչքերուն հետ՝ ստացուածք, դրամ, հող, շէնքեր, գոյքեր, ինչպէս նաեւ ընտանիք՝ կին կամ ամուսին, զաւակներ, բարեկամներ, գործ եւ պատասխանատուութիւններ ..., կապ մը հաստատած ենք եւ ասոնցմէ բաժնուելու գաղափարը անձկութեան եւ հետեւաբար վախի պատճառ կ'ըլլայ:

Արդեօք կա՞ն անձեր որ երբ գիշերը քնանալու համար անկողին մտնեն կը սկսին քունէն վախնալ: Չեմ կարծեր: Ընդհակառակը անքնութենէ կը վախնան եւ որպէսզի քնանան նոյնիսկ դեղ կ'առնեն: Բնաւ ուշադրութիւն ըրած էք կամ խորհած էք, խորունկ քունի պահերը, մեր ամենահանգիստ եւ հանդարտեցուցիչ ժամերն են, որովհետեւ կազդուրուած եւ լաւ տրամադրութեամբ կ'արթննանք: Դարձեալ, երբ խորունկ քունի մէջ ենք, աշխարհի հետ մեր ունեցած բոլոր կապերը կը խզուին: Ոչ ընտանեկան անդամներէն լուր կ'ունենանք եւ ոչ ալ մեր հարստութենէն, պարտքերէն կամ պարտականութիւններէն: Խորունկ քունի մէջ ժամանակն ալ գոյութիւն չ'ունենար: Երբ կ'արթննանք չենք գիտեր թէ որքան քնացած ենք, որով արեւին կամ ժամացոյցին նայելով զայն կը ճշդենք: Հետեւաբար խորունկ քունի մէջ մենք այս աշխարհին համար մեռած չե՞նք: Վստահաբար շատեր պիտի ըսեն թէ գիտեն թէ առաւօտուն դարձեալ պիտի արթննան: Այս գիտութիւնն է որ քնանալու վախը կը փարատէ: Բայց կան անձեր որոնք քնանալէ կը վախնան: Անոնք

կը վախնան, որովհետեւ քունի մէջ վախազդու երազներ տեսած ըլլալու փորձառութիւնը ունին: Հետեւաբար քունի մէջ խորունկ քունի մակարդակէ գատ երազի մակարդակ մը եւս կայ: Երազները կրնան ուրախ եւ հաճելի ըլլալ, կամ՝ վախազդու: Գիտունները կ'ըսեն թէ մարդիկ քունի մէջ կ'երազեն, բայց երբ կ'արթննան քիչեր իրենց երազները կը յիշեն: Երբ կ'երազենք, միթէ երազին մէջի վայրերը, անձերը եւ պատահածները բոլորն ալ իրական չե՞ն: Վստահաբար շատեր պիտի ըսեն. «Ո՛չ, անոնք միայն երազ են»: Այս պատասխանը զարմանք կը պատճառէ: Եթէ այդ պատասխանը ճիշդ է, մարդ ինչո՞ւ իրողութիւն չեղած բանէ մը վախնայ: Ենթադրենք, որ երազիս մէջ, անտառը, զիս փարատելու եւ ուտելու համար հետապընդող վագրէ մը վազելով կը փախչիմ: Ճամբաս յանկարծ ձորի մը առջեւ կը վերջանայ: Վարը կոկորդիլոսներով լեցուն գետ մը կը տեսնեմ: Մէկ վար կը նայիմ եւ մէկ ալ ետեւէս մօտեցող վագրին: Կ'որոշեմ ջուր ցատքել: Ճիշդ երբ ինքզինքս վար կը նետեմ, անկողինէն իյնալով կ'արթննամ: Թէ՛ անկողինին սաւանը եւ թէ բոլոր հագուածներս քրտինքէս թափ-թաց եղած էին: Յոգնութեան եւ վախին յառաջ բերած սրտի բաբախումէն կուրծքս կը հեւար եւ սրտիս զարկին ձայները լսելի դարձած էին: Աստուծոյ փառք տուի որ տեսածս միայն երազ էր: Երազը իրողութիւն մը չէ, այլ՝ միայն պատրանք մը: Ուրեմն ես ինչո՞ւ իրողութիւն չեղած կացութեանէ մը վախցայ: Տարակոյս չկայ որ վախցայ: Հեւալս, սրտի բաբախումս, քրտինքս եւ նոյնիսկ անկողինէս վար ցատքելս՝ իյնալս բոլորն ալ փաստեր են, թէ երազիս մէջ բոլորն ալ ճշմարտութիւն էին: Երբ գիտակցութեան մակարդակս երազի մակարդակէն «արթնութեան» մակարդակի բարձրացաւ, այդ բոլորին իրականութիւն չըլլալը, այլ երազ

մը ըլլալը միայն այն ատեն հասկցայ: Ան որ արթուն գիտակցութեան մակարդակ կը համարենք նաեւ երազի տարբեր մակարդակ մըն է եւ ոչ իրողութիւն է եւ ոչ ալ ճշմարտութիւն: Ինչպէս երբ երազէն արթըննանք, երազին մէջի բոլոր լաւ ու վատ պատահարները երկվայրկեանապէս կ'անհետանան եւ անոնց համար չենք տիրիր, այլ կ'ըսենք. «Հոգ չէ, միայն երազ մըն էր», նմանապէս երբ մահը գայ կացութիւնը նոյնն է: Ան որ կը թուի փորձառութիւններով լի երկար կեանք մը ըլլալ, պիտի տեսնենք որ շատ կարճ ժամանակ մը տեւած է: Գիտուններն ալ երազներուն համար նոյնը չեն^օ ըսեր: Այն երազը որ կը կարծենք թէ տարիներ տեւած է, իսկութեան մէջ մէկ կամ երկու վայրկեանուան տեւողութիւն ունեցած է: Մեր արթուն կոչած այս կեանքն ալ իր բոլոր հաճոյքներով եւ դառնութիւններով, ճոխութիւններով եւ թշուառութիւններով նոյնպէս երազ մըն է եւ ոչ ճշմարտութիւն: Եթէ երազիս մէջ մէկը ինծի «Մի վագեր, վագրը իրական չէ» ըսէր, արդեօք մտիկ պիտի ընէի^օ: Չեմ կարծեր, բայց սխալս ըսուածը մտիկ չընելս պիտի ըլլար եւ ոչ թէ վախնալս: Բարեբախտաբար երազիս մէջ մէկը ինծի ճշմարտութիւնը չըսաւ, հետեւաբար ինքզինքս սխալած չեմ համարեր:

Յիսուսի նման վարդապետ մը ունենալու բարեբախտութիւնը ունինք: Ինք յաջողեցաւ իր գիտակցութեան մակարդակը բարձրացնել եւ հասկնալ, թէ այս աշխարհը միայն երազ մըն է եւ ուզեց այդ իրողութիւնը մեզի սորվեցնել: Հետեւեալ համարները ցոյց կու տան թէ Իր գիտակցութեան մակարդակը եւ մեր գիտակցութեան մակարդակները նոյնը չէին: Հետեւաբար մահը իրեն համար վերջաւորութիւն մը չէր ներկայացնել եւ յօժարաբար դէպի խաչ գնաց:

«Ես էւ Լայր իմ մի էմէ» : (Յովճաննոս Ժ:30)

«Ես եւ Հայրը մէկ ենք»:

«... էս՝ շեմ յայտմ աշխարհէ : »(Յովճաննոս Լ:23)

«... ես աս աշխարհէն չեմ»:

«Եւ ասէ ցնոսա . Դու՛ն է՛ ի ներշնչո՛ւսս

աստի է՛ն, էւ էս՝ ի՛ն վերո՛ւսս անտի էմ .

Դու՛ն է՛ յաշխարհէ՛ն աստի է՛ն էս՝ շեմ յայտմ

աշխարհէ » : (Յովճաննոս Լ:23)

«Ըսաւ անոնց : «Դուք վարէն էք՝ ես վերէն եմ . դուք այս աշխարհէն էք՝ ես այս աշխարհէն չեմ»:

Ինչպէս Յիսուս յաջողեցաւ, մենք ալ հետեւելով Իրեն, կրնանք մեր գիտակցութեան մակարդակը բարձրացնել եւ ներկայ երազին վերջ տալ: Ի՞նչ բան մեր երազներուն վերջ կու տայ. արթննալը կամ խոր քունի մուտքը: Երկուքն ալ գիտակցութեան մակարդակի փոփոխութիւն կը ներկայացնեն, մէկը դէպի «վեր», իսկ միւսն ալ դէպի «վար»: Կացութիւնը մեր այս «արթուն» կոչած գիտակցութեան մակարդակին համար ալ նոյնն է: Մեր այս «աշխարհիկ կեանք» կոչած երազը, «խորունկ քուն»ի մէջ մտնելով կրնայ վերջ գտնել: Բայց այս «խորունկ քուն»ին գիտակցութեան մակարդակը շատ աւելի ցած է, քան մեր առօրեայ խորունկ քունինը: Մարդիկ գիտակցութեան մակարդակը շատ աւելի ցած այս «խորունկ քուն»ը «մահ» կոչած են: Հոգին ամբողջովին մարմինէն քաշուած, մարմինն ալ այլեւս առանց հոգիին շնորհած կենսատու զօրութեան չի կրնար գոյատեւել: Մեր նախահայրերը այս իրողութիւնը լաւ գիտնալով «մեռեալները» ննջեցեալ կոչած են, որ քնացող կը նշանակէ: Նաեւ կարելի է այս «երազէն»՝ այսինքն մեր արթուն կոչած գիտակցութեան մակարդակէն աւելի բարձր գիտակցութեան

մակարդակի մը հասնելով արթննալ եւ նոյնիսկ մարմինէն գիտակցաբար եւ ուզելով հեռանալ:

Գիշերուան խորունկ քունը ինչո՞ւ համար թէ հաճելի է եւ թէ մեզ կը կազդուրէ: Ինչպէս վերեւ մատնանշեցինք երբ քունի մէջ ենք աշխարհի հետ մեր բոլոր կապերը կը խզենք: Ամէն ինչ որ առարկայական է կ'անհետանայ: Բոլոր առարկայականները ճամարտութիւն չեն եւ պատրանքային են, ներառեալ մեր «Ես»ը: Հետեւաբար խորունկ քունի մէջ մեր «Ես»ին հետ մեր նոյնացումն ալ վերջ կը գտնէ: Երբ բոլոր առարկայական պատրանքայինները կ'անհետանան, միայն ճամարտութիւնը կը մնայ, որ է մեր ներքին Քրիստոսը՝ բոլոր զօրութեանց ալը, որով կազդուրուած կ'արթննանք, ինչ որ պէտք է զարմանք պատճառէ: Միթէ մահն ալ նոյնը չէ՞: Ան ալ աւելի խորունկ քունի մակարդակ մը չէ՞: Սովորական խորունկ քունի միջոցին մեր հոգիին հետ կը նոյնանանք, իսկ մահուան խորունկ քունին մէջ ալ մեր հոգին Ս. Հոգիին հետ կը նոյնանայ: Ինչո՞ւ վախնանք մահէն, երբ այդ խորունկ քունէն դարձեալ արթննանք շատ աւելի հանգչած եւ կազդուրուած պիտի ըլլանք: Հարկաւ այսպէս կարելի է խորհիլ եթէ նոյնացած ենք մեր հոգիին՝ Քրիստոսի հետ: Բայց եթէ նոյնացած ենք մեր «Ես»ին հետ, այն ատեն է որ մահը սոսկում կը պատճառէ, որովհետեւ «Ես»ը մեղաւոր է եւ ըստ հետեւեալ համարին դատապարտուած է մահուան:

«Զի Խոշակն մեղաց մահ է»: (Հովհաննէս 9:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»:

Եթէ մեր գիտակցութեան մակարդակի բարձրացումով այս աշխարհի մէջ «աշխարհիկ կենցաղ»ին վերջ տանք, ինչպէս Յիսուս յաջողեցաւ ընել, մենք ալ փրկութեամբ կարելի է պարգեւատրուինք, որ անհատականութիւնը պահել է: Ապա թէ ոչ մեր անհատականութիւնն ալ մարմնին մահուան հետ կ'անհետանայ եւ կը մեռնի:

Ուրեմն մահը պէտք է մեզ խրտչեցնէ: Մահը «տուն»՝ մեր յաւիտենական տունը վերադառնալ է: Ան բոլոր դժուարութիւններու, չարչարանքներու, հարցերու, խռովութիւններու, անհամաձայնութիւններու, տառապանքներու, դժբախտութիւններու, երկսայրութիւններու եւ հիւանդութիւններու վերջ կու տայ: Մահը ծերացած եւ յոգնած մարմինը, որ հոգիին այլեւս ծառայելու կարողութիւնը չունի, իր լուծէն ազատ կ'արձակէ: Ան հոգիին հանգիստի միջոցն է: Ան ճամբորդութեան մը իր թիրախին հասնիլն է: Մարմինը միայն հոգիին կառքն է՝ այդ թիրախին հասնելու ճամբորդութեան միջոցը: Հոգիին ճամբորդութեան սկիզբը մարմնին ծնունդն է, իսկ վերջաւորութիւնն ալ՝ մահը: Երբ կը ճամբորդենք եւ նպատակակէտին հասնինք, մեր փոխադրական միջոցը ետին թողելով չե՞նք մեկնիր:

Ի՞նչ պէտք է ըլլանք: Ըլլանք հոգի՞ մը, որ մարմինը կը գործածէ, թէ ոչ մարմին՞ մը, որ հոգին կը գործածէ: Ի՞նչ կը խորհինք: Եթէ առաջինը ընտրենք մահէն պիտի չվախնանք, որովհետեւ գիտենք թէ հոգին անմահ է: Միթէ մեր հինցած վերարկուն կամ ինքնաշարժը չե՞նք փոխեր եւ նորը չե՞նք առներ: Բայց եթէ երկրորդը գատենք, մահը մեզի պէտք է սոսկում պատճառէ:

Երբ կ'երազենք, երազները հաճելի կամ վախազդու կ'ըլլան: Եթէ պիտի երազենք միշտ կը փափաքինք հաճելի քան թէ վախազդու երազներ տեսնել: Այս մեր արթուն կոչեալ կեանքը, որ երազ մըն է, կրնայ հաճելի կամ վախազդու ըլլալ: Աս ալ մեր կենցաղէն կախեալ կը թուի ըլլալ: Մահէն ոչ ոք պէտք է վախնայ: Բոլոր ստեղծագործութիւնը՝ տիեզերքը մահուան ենթակայ է: Նոյնիսկ աստղեր, աստղախումբեր կը ծնին եւ կը մեռնին: Միայն Աստուած անմահ է

ԵԼ յաւիտենական: Եթէ չենք ուզեր մեռնիլ պարտ ենք Յիսուսի նման Աստուածայայտնութիւնը մեր մէջ իրականացնել: Յիսուս ըսաւ, թէ մենք ալ այդ կարողութեան տէր ենք:



Եթէ մեծամասնութեան հաւատալիքներուն հետեւինք, մեր վախճանն ալ մեծամասնութեան վախճանին նոյնը կ'ըլլայ:



ԵՐԱԶԸ

Տեսայ շատ երկար մի երազ,
Կարծես կեսնք մըն էր ըման:
Ես ալ Հոն նուագեցի իմ սազ,
ԱնՀոգ թէ ուրիշներ իմանան:

Եղանակը շուտով ընթացաւ,
Բան մը կար որ ես չհասկեցայ.
Ժամանակը շուտ մը անցաւ,
Երբ ես Հոն նուագել սկսայ:

Իմաստուն մարդիկ ըսած են,
Թէ պէտք չէ անկէ տարուինք:
Քանի երազները պատրանք են,
Որով պէտք չէ նաեւ խաբուինք:

Հայրս ու մայրս ալ ինձ հետ
Նուագեցին տարբեր մի երգ:
Վերջանալով մեկնեցան յաւէտ,
Կինս օգնեց՝ երկարեց իր ձեռք:

Ան ալ մասնակցեցաւ եղանակին,
Անգին ճոխացաւ այդ երգը մերին,
Շուտով վերջ տուաւ իր նուագին,
Ըսաւ. «Հնազանդիմ՝ Հօրս կանչին»

Իսկ ես շարունակեցի իմ նուագին:
Չեմ գիտեր թէ անդրադարձան,
Արժանացա՞ւ գնահատանքին՝
Ան բոլորին որ երգս իմացան:

Ես նուագեցի ու ես ալ իմացայ,
Բայց մեծ զարմանք պատճառեց,
Ես ներկայ ըլլալով զիս չտեսայ,
Աս ալ զիս շա՛տ շատ խանդարեց:

Պարտ եմ այս քունէն արթննալ,
Չեմ գիտեր ինչպէս զայն կատարել,
Եւ այս իմ երազին ալ վերջ տալ:
Պարտ եմ նուագիս վերջը սպասել:

Երազին վերջը կու գայ երկու ձեռով,
Մին է խորունկ քունի մէջ մանեւրով,
Իսկ միան ալ քունէն արթննալով:
Պէտք է որոշեմ լաւ մը հասկնալով:

Եթէ վերջ տամ խորունկ քունով,
Պիտի չտեսնեմ ես զիս՝ երազողը:
Բայց եթէ վերջ տամ արթննալով,
Ես պիտի տեսնեմ զիս ստեղծողը:

Վ.Ս.



ԳԵՂԵՅԿՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Ծերունի տիկնոջ մը կը հարցնեն, թե ան ի՞նչ կը գործածէ իր դեմքը այդքան գեղեցիկ ու իր կեցուածքը այնքան առողջ ու գրաւիչ պահելու համար:

Ան կը պատասխանէ.

- « - Երթունքներու համար ճշմարտութիւն կը գործածեմ,
 - Չայնիս համար՝ քաղցրութիւն,
 - Աչքերու համար՝ գուլթ,
 - Չեռքերու համար՝ ողորմութիւն,
 - Կերպարանքիս համար՝ պարկեշտութիւն,
 - Սրտիս համար՝ սէր,
 - Եւ բոլոր անոնց համար, որոնք զիս չեն սիրեր՝ Աղօթք»:

Ուն



- Դ -

ՄԱՐԴԸ



ՄԱՐԴՈՒ

Բուն նիւթերուն չսկսած պիտի փափաքէի կարճ պատմութիւն մը ներկայացնել:

Նկարիչ մը կը փափաքի Յիսուսին դիմագիծը իւղաներկով նկարել: Իր երեւակայութեան օգնութեամբ մի քանի դիմանկարներ կը գծէ, սակայն անոնք իր փափաքած սրբութեան արտայայտութիւնը չեն ցոլացներ: Շատ յուսախաբ կ'ըլլայ:

Օր մը անմեղ դիմագիծով տղայ մը կը տեսնէ, որ ճիշդ իր փնտռած եւ նկարել փափաքած արտայայտութիւնը կը ցոլացնէր: Տղուն ծնողքին արտօնութեամբ անոր դիմագիծին արտայայտութիւնը կը նկարէ որպէս Յիսուսի դէմք: Իր ստեղծել ցանկացած նկարը վերջապէս կը յաջողի իրականացնել:

Նկարը տեսնող անձերէն ոմանք դիմագիծին ցոլցաբերած անմեղութեան կը զմայլին, ուրիշներ բերնի հրապուրիչ ժպիտին, կամ աչքերուն գեղեցկութեան: Շնորհիւ այլոց գնահատանքին ինք համբաւաւոր նկարիչ մը կը դառնայ: Յետ այսու իր բոլոր նկարները բարձր գիններով կը ծախուին:

Տարիները կ'անցնին եւ օր մը կ'որոշէ դարձեալ բաձառիկ նոր նկար մը ստեղծել՝ սատանան նկարել: Դարձեալ իր երեւակայութեամբ չորս-հինգ փորձեր կ'ընէ, բայց չի յաջողիր իր փափաքած վախազու արտայայտութիւնը պատահին վրայ իրականացնել:

Երբ օր մը ոստիկանատան մը առջեւէն կ'անցնէր, ձերբակալուած ոճրագործ մը կը տեսնէ, որուն դիմագիծին արտայայտութիւնը ճիշդ իր փնտռած արտայայտութիւնը կը ներկայացնէր: Բանտի կառավարիչներուն պատշաճ արտօնութեամբ եւ բանտարկեալին ալ հաւանութեամբ իր ուզած սատանայական վախազու արտայայտութիւնը կը կարողանայ պաս-

տառին վրայ իրականացներ:

Նկարիչը արդիւնքէն այն աստիճան գոհ կը մնայ որ կը փափաքի բանտարկեալին վճարում մը ընել: Բանտարկեալը կը մերժէ վճարում ստանալ եւ կ'ըսէ. «Տարիներ առաջ դուն պատիկ տղու մը դէմքը իբր Յիսուսի դիմագիծ նկարած էիր»: Նկարիչը մեծ զարմանքով. «Այո, այդպէս է, բայց դուն ինչպէ՞ս գիտես»: Բանտարկեալը կը պատասխանէ թէ խնդրոյ առարկայ տղան ինք էր եւ արտասուելով կը մեկնի:

Այս պատմութիւնը ցոյց կու տայ թէ համայն մարդկութեան ամէն մի անհատին մէջ միաժամանակ իրարու հակասական երկու տարբեր բնոյթներ՝ ուժեր գոյութիւն ունին: Անոնցմէ մին բարին է՝ Քրիստոսը, իսկ միւսն ալ չարը՝ անձին «Ես»ը: Անձին «Ես»ը իր կամքը կը պարտադրէ: Երբ անձը այդ պարտադրանքին չդիմադրէ եւ զայն կատարէ չարը բարին յաղթած կ'ըլլայ: Այսպէսով ի յայտ կու գայ սատանան: Անձն ալ իր խորհուրդներով, խօսքերով ու արարքներով կ'ըլլայ սատանայական: Իսկ եթէ բարին յաղթանակէ, այն ատեն անձին մէջ Քրիստոս ի յայտ կու գայ: Աստուած մարդուն ազատ կամք շնորհած է, հետեւաբար Քրիստոս իր կամքը չի պարտադրեր, այլ միայն կը յորդորէ: Իր յորդորները միշտ մեր օգտին համար են, բայց կը թուի թէ մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կը կարծէ թէ ինք Քրիստոսէ աւելի լաւ գիտէ իր անձին համար այն ինչ որ օգտակար է կամ վնասակար: Անձէն կախեալ է անտեսել «Ես»ին պարտադրանքները եւ հետեւիլ Քրիստոսի յորդորներուն:

Մենք ո՞ր մէկը պիտի փափաքէինք մեր անձերուն մէջ յայտնաբերել: Պէտք չէ՞ որ մեր ձեռքէն եկածը ընենք, որպէսզի բոլորս ալ Քրիստոս ի յայտ բերենք:

ՄԱՐԴԸ ԵՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործութիւնը երեք հիմնակէտեր ունի-

ա- Տիզիքականը

բ- Անհատական սահմանափակ հոգին

գ- Անսահման տիեզերական Աստուծոյ հոգին:

Առաջին երկուքը ստորադաս են երրորդին: Աստուածային հոգին հիմնականն է: Առաջին երկուքը կը թուին ճշմարտութիւն մը ըլլալ, բայց անոնք որովհետեւ ինքնաբաւ չեն, պատրանքային են: Անոնք ալ Աստուծոյ փառքին մաս կը կազմեն, բայց ենթակատակ են Անոր հոգիին: Սահմանափակ հոգիները բազմաթիւ են, թէեւ անոնք Աստուծոյ հոգիին մէկական փոքր մասնիկներն են, կը գոյատեւեն մարդու մարմինին մէջ՝ կեանք պարգեւելով այդ մարմնին: Անոնք նաեւ մարդու անհատականութեան հետ սերտ կապ ունին: Անոնք նիւթէն ծագում չեն առնել, յաւիտենական են եւ Քրիստոսը կը ներկայացնեն: Անոնք ունին Աստուածային գիտակցութիւնը, որով մարդուն ամէն ինչի գիտակից ըլլալու կարողութիւնը կու տան: Այս գիտակցութիւններու ամենակարեւորը մարդուն ինքնագիտակցութիւն ունենալն է:

Որովհետեւ Աստուած բոլոր ստեղծագործութեան մէջն է, ուստի բոլոր ստեղծագործութիւնն ալ՝ ամենափոքր հիւլէէն մինչեւ ամենահսկայ անասունը, որոշ չափով գիտակցութիւն (consciousness) մը ունի: Անասունները կը գործեն ըստ իրենց բնութեան: Մարդը անասուններու եւ Աստուծոյ միջեւ գոյութիւն ունեցող կապն է: Մարդը իր գիտակցութեան մակարդակը փոխելու կարողութիւնը ունի: Երբ ան իր կենցաղով իր գիտակցութեան մակարդակը կը պակսեցնէ, անասունէ տարբերութիւն չ'ունենար: Այսօր Միջին Արեւելքի մէջ գիտակցութեան մակարդակի կորուստին գործած աւերը բացայայտ է: Մարդ արարած իր գիտակցութեան

մակարդակը բարձրացնելով նաեւ Աստուածայայտնութեան ծառայելու կարողութիւնը կ'ունենայ: Ամենափոքր երջանկութենէն մինչեւ անսահման երանութիւնը այդ գիտակցութենէն եւ անոր շնորհած ճշմարտութեան գիտութենէն ծագում կ'առնեն: Ուրեմն մարդու էութեան բնոյթը գիտութիւն եւ երանութիւն է:

Մարդիկ, Ֆիզիքական եւ աշխարհիկ տեսանկիւնէ բոլորն ալ իրարմէ կը տարբերին եւ որեւէ հաւասարութիւն կը թուի գոյութիւն չունենալ, սակայն եւ այնպէս իրարու հաւասար են եւ անոնց միջեւ բացարձակապէս տարբերութիւն չկայ: Ամէն բան կը թուի քառս մը ներկայացնել, բայց իրականութեան մէջ ամէն ինչ կատարելապէս դասաւորուած է եւ աշխուժօրէն կը գործէ:

էութիւն մը առանց յատկութիւններու հակասութիւն մըն է եւ գոյութիւն չի կրնար ունենալ: Աստուած վերացական, բարոյական նաեւ գեղական յատկութիւններ ունի, որով հարկ է որ գոյութիւն ունեցող էութիւն մըն է: Իր յատկութիւններն են.

ա- Զօրութիւն եւ իշխանութիւն.

բ- Մէր եւ գութ.

գ- Գեղեցկութիւն եւ վսեմութիւն, հետեւաբար Ան թէ այժմէական է, թէ ալ գերազանց.

դ- Կատարեալ գիտութիւն, երանութիւն, գոյութիւն:

Աստուծոյ էութիւնը իր մէջ թէ յաւիտենականը եւ թէ ժամանակաւորը կը պարունակէ՝ վերջինը իր բոլոր թերութիւններով: Բայց Ինք ամենեւին անոնցմէ չ'ազդուիր:

Այն մարդը, որ հոգեկան ճանապարհը կը հետապնդէ, պարտ է ինքնագիտակցութիւն կերտել, որուն գագաթնակէտը Աստուծոյ հոգիին մէջ խորասուզուելն է: Ամէն մարդ այս աշխարհի մէջ

սորվելու, գործելու եւ բազմանալու պարտականութիւնները ունի: Ասոնց նպատակը ի վերջոյ մարդը փրկութեան առաջնորդել է: Սորվելով իր գիտութիւնը կ'աւելցնէ, որպէսզի լաւ եւ օգտակար կերպով գործէ: Իսկ ծննդագործութիւնն ալ ինքնին նորածինին միջոցաւ Աստուածայայտնութեան ծառայելն է:

Մարդ իր այս պարտականութիւնները ինչպէ՞ս պէտք է իրագործէ: Գործունէութիւնը զինք աշխարհին կը կապէ, որովհետեւ ընդհանրապէս մեր անձնական իղձ եւ փափաքները իրականացնելու համար կը գործենք: Գործունէութիւնը պէտք է ըլլայ իբր Աստուծոյ եւ մարդկութեան ծառայութիւն, որով պէտք չէ գործունէութեան արդիւնքներուն կապուած ըլլանք:

Գիտութիւնը միայն դպրոցներու եւ համալսարաններու մէջ մեզի սորվեցուած իմացական գիտութիւնը պէտք չէ ըլլայ: Ուսումը պէտք է շարունակէ կեանքի դպրոցի ընթացքին ալ, որպէսզի յաջողինք վերոյիշեալ ինքնագիտակցութիւնը իրականացնել: Ուստի պարտ ենք ուշիմ ըլլալ եւ կեանքի պատահարներէն մեր դասը սորվիլ: Բարձր գիտակցութեան մակարդակ մը շատ աւելի վերացական գիտութիւններու կ'առաջնորդէ, ինչոր որեւէ դպրոց կարող չէ սորվեցնել:

Ծննդագործութիւնն ալ, Աստուածայայտնութեան ծառայելու համար իմաստութեամբ պէտք է ըլլայ եւ պէտք չէ հաճոյքի արկած մը ըլլայ:

Մարդ ինքզինք չի կրնար փրկել, քանզի առանց Աստուծոյ շնորհքին ոչ ոք կրնայ փրկուիլ: Փրկութեան շնորհքն ալ անհատի կերտած հոգեկան որակէն եւ անոր պարգեւած արժանելիութենէն կախեալ է եւ ոչ թէ Աստուծոյ քմահաճոյքէն, որովհետեւ քմահաճոյքը Աստուծոյ յատկութիւններուն մաս չի կազմեր: Անձեր

կան, որ կը թուին կատարեալ կեանք մը ապրիլ, բայց եթէ այս կենցաղը արտաքին շահերէ ծագում կ'առնէ, անօգուտ է: Կատարեալ կենցաղը պէտք է ծագի ոչ թէ փրկութիւն ձեռք ձգելու նպատակով, այլ ան սէրէ եւ պաշտամունքէ պէտք է ծագի: Սէրը պէտք չէ անձին ինքզինքին՝ անհատականութեան վրայ կեդրոնանայ, այլ՝ Աստուծոյ վրայ: Ծիշդ հայեացքով գործել, ճշմարիտ պաշտամունքին ճամբան կը բանայ, որ իր կարգին անձնատուութեան ճամբան կը բանայ եւ այս վերջինն ալ՝ ճշմարիտ Աստուածապաշտութեան, որով մարդ Աստուծոյ շնորհքին կ'արժանանայ:



ՄԱՐԴԸ ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅ

Ընդհանուր առմամբ կը կարծենք թէ Աստուծոյ մարդեղութիւնը միայն Յիսուսի միջոցաւ եղած է: Ընդհակառակը, ամէն մի նորածին Աստուծոյ արտայայտութիւնը եւ մարդեղութիւնը կը ներկայացնէ: Եթէ այս տեսակէտը սխալ է ուրեմն Յիսուսի հետեւեալ ըսածը անտեղի պիտի չըլլա՞ր.

«Իբրեւ երեւ Յիսուս, բարկացեալ
աստիճանայ նոցա եւ ասէ. Թո՛ղլ ցո՛ւտ
մանկացո՛ցդ Գա՛լ աւ իս, եւ մի՛ արգելո՛ւ
չդո՞սա. զի այդպիսեացդ է արեւոյն-բիւն
Լսոցո՞շոյ»: (Մարկոս Ժ:14)

«Երբ Յիսուս տեսաւ՝ ընդվզելով ըսաւ անոնց. «Թո՛ղլ տուէք այդ մանուկներուն՝ որ գան ինծի՝ եւ մի՛ արգիլէք գանոնք՝ որովհետեւ Աստուծոյ թագաւորութիւնը այդպիսիներունն է»:

Եթէ այս տեսակէտը իրողութիւն մը չըլլար Յիսուս կնոջմէ մը չէր ծներ, այլ կրնար շատ դիւրաւ որպէս մարդ աշխարհի վրայ ի յայտ գալ: Ինչո՞ւ Մարիամ Աստուածածինը կը պաշտենք: Զինք կը պաշտենք որովհետեւ գիտակցութիւն, ներշնչում, սէր եւ գութ կնոջ մը՝ մօր մը յատկութիւններն են: Բաւարար է միայն մի քանի վայրկեան դիտել մայր մը, որ իր նորածին զաւակը կը խնամէ: Միթէ վերոյիշեալ յատկութիւնները Աստուծոյ յատկութիւններուն հետ նոյնը չե՞ն: Կին մը ծննդաբերութեամբ Աստուածայայտնութեան չի՞ ծառայեր: Հարկ է, որ զաւակ մը իր մայրը պաշտէ: Աս ալ Աստուածապաշտութեան մէկ ձեւն է: Անկարելի է որ ճշմարիտ մայրութիւնը իր մէջ որեւէ նենգութիւն, խարդախութիւն կամ խաբեբայութիւն ունենայ, այլ՝ միայն համակրանք ու սէր: Բոլոր

տրեզերքի մէջ չկայ զօրութիւն մը, որ աւելի լաւ ներկայացնէ Աստուծոյ մեզի հետ ունեցած յարաբերութիւնը, քան մօր մը իր զաւկին հետ ունեցած յարաբերութիւնը: Ինքնագոհողութիւնը սիրոյ եւ պաշտամունքի փաստն է: Մօր մը սիրտը եւ անոր սէրը երկինքի անհունութիւնը ունի եւ կը թափանցէ ամենուրեք: Ան նաեւ բնութեան առատաձեռնութիւնը եւ տոկալու կարողութիւնը ունի: Սէրը իր սիրտը նրբացուցած է: Նոյն նրբութիւնը եւ գթասրտութիւնը յատկութիւն մըն է նաեւ տրուած բոլոր ստեղծագործութեան: Բոլոր անոնց մէջ երբ այս հունտերը կը ծլին եւ կ'աճին, անոնք երբ կը տեսնեն ուրիշի մը չարչարանքը, կը տխրին: Երբ անձը վատ ժամանակներուն ընկճուած եւ տխրած ըլլայ, հաւատքն ալ փորձութեան կ'ենթարկուի: Մօր մը առաքելութիւնը արտաքին կացութիւններուն գերին ըլլալ չէ, այլ բոլոր դժուարութիւններուն դիմադրելով լաւ դաստիարակ մը ըլլալն է: Մայր մը ծաղիկի մը նման նուրբ ըլլալով հանդերձ անսահման զօրութեան տէր է, որովհետեւ Աստուծոյ զօրութիւնը իր հետ է: Մայր մը Աստուծոյ պայծառութիւնը կը ցոլացնէ:

Ամուսնութեան մէջ ամէն բանէ առաջ այր եւ կին իրարու հետ սերտ ընկեր պէտք է ըլլան: Կինը զոյգին «հոգին» է: Մարդուն պարտականութիւնը պաշտպանել է, իսկ կնոջ պարտականութիւնն ալ ներշնչել, արթնցնել եւ խանդավառել է: Այր եւ կնոջ իրարու հետ ունեցած յարաբերութիւնը՝ ծաղիկի մը եւ իր բոյրին, հաւատքին եւ պաշտամունքին ինչպէս նաեւ կեանքին եւ շունչին իրարու հետ ունեցած սերտ յարաբերութիւններուն կը նմանի:

Որո՞ն հրամանովն է, որ մենք աշխարհ եկանք եւ որո՞ն հրամանովն է, որ մենք այս ներկայ կեանքը կ'ապրինք: Ո՞վ մեզի տեսնել, լսել, հոտոտել, համտեսել

եւ զգալ կու տայ: Ճիշդ է թէ այս օրուայ գիտութեամբ կարելի է Ֆիզիքական բացատրութիւններ տալ: Տեսողութեան համար կրնանք ըսել, թէ լոյսը աչքի ցանցամաշկին վրայ կ'իյնայ եւ ելեկտրական հոսանք մը յառաջ կը բերէ, որ ջիղերու միջոցաւ ուղեղի տեսողութեան մասը կ'երթայ եւ մենք ալ կը տեսնենք: Բայց կան անձեր, որոնց աչքերը հիւանդ չեն, ջղային կապը չէ խզուած եւ ուղեղն ալ չէ վնասուած, բայց եւ այնպէս չեն տեսներ: Որովհետեւ այդ տեսողութեան գիտակցութիւնը Ֆիզիքականէն կախեալ չէ: Վերոյիշեալ տեսողութեան Ֆիզիքական մասը կարելի է գիրքերէն սորվիլ, բայց վերջին հանգրուանը, որ գիտակցութեան կը կարօտի, միայն փորձառութեամբ կարելի է գիտնալ եւ կարելի չէ գիրքերէն սորվիլ: Միթէ՞ Յիսուս չըսաւ.

«... յեւ Գոթեւ Է Գիտել Կարողութեամբ
 արեւոյն-Թեան Լսարանայ. Բայց այլոցն
 ասակոյ, Կի Գեացեն՝ Է մի Գեացեն, Է-
 Լուսեցեն՝ Է մի Իմաստցին»: (Ղուկասոս Ը:10)
 «...Ձեզի արուած է գիտնալ Աստուծոյ Թագաւորութեան
 խորհուրդը, բայց ուրիշներուն՝ առակներով կը խօսիմ.
 Որպէս զի նայելով՝ չտեսնեն՝ ու լսելով՝ չհասկնան»:

Գիտակցութիւնն է որ այս գիտութիւնը մեզի կը յայտնէ: Ինչպէս մեքենայ մը ինք իրեն չի կրնար գործել, մենք ալ առանց այդ գիտակցութեան ոչինչ կարող ենք ընել: Այդ գիտակցութիւնը Աստուծոյ այն լոյսն է, որ մարդկային, ինչպէս նաեւ բոլոր կեանքերը կ'ոգեւորէ: Միայն մարդն է որ իր միտքը հանդարտ եւ խաղաղ պահելով եւ զայն Աստուծոյ վրայ կեդրոնացընելով, աւելի բարձր գիտակցութեան մակարդակի մը հասնելու կարելիութիւնը ունի:

Մարդը 3+1 գիտակցութեան՝ արթուն, երագի եւ խորունկ քունի գիտակցութեան մակարդակներու կարելիութիւնը ունի: Ամէն օր անոնց փորձառութիւնը կ'ունենայ եւ ատիկա բոլորին համար սովորական է: Չորրորդը մահուան գիտակցութեան մակարդակն է, որ խորունկ քունէն ալ աւելի խորունկ քուն մըն է: Ճիշդ ասոր համար ալ եկեղեցին մեռեալներուն «ննջեցեալ» կ'ըսէ: Քանի որ այս գիրքը կը կարդանք կը նշանակէ թէ տակաւին այդ չորրորդ գիտակցութեան մակարդակի փորձառութիւնը չենք ունեցած:

Ամէն անձ կրնայ նշմարել, թէ իւրաքանչիւր անգամ որ գիտակցութեան մակարդակ կը փոխէ, անկէ առաջուան մակարդակի մէջ եղած ամէն ինչ կ'անհետանայ եւ ինք անոնց հետ որեւէ կապէ զուրկ ըլլալով, անոնք իրեն համար կարեւորութիւն մը չեն ունենար: Յաւելեալ վերոյիշեալ չորս գիտակցութեան մակարդակներուն, մարդ նաեւ իր գիտակցութեան մակարդակը բարձրացնելու, «արթուն» մակարդակէն ալ աւելի բարձր արթնութեան մակարդակի մը հասնելու կարելիութիւնը ունի: Միայն այդ պարագային է որ իր հոգին Աստուծոյ հոգիին հետ կը շղթայուի, հետեւաբար աշխարհի բոլոր հետապնդումները կ'անտեսէ ու կը մոռնայ եւ կը մոռնայ նաեւ իր «Ես»ը:

Կարենալ սորվելու համար անձը պէտք է արթուն ըլլայ: Ինչպէս քունի մէջ դաս սորվիլ կարելի չէ, նոյնպէս ալ, միայն մեր գիտցած պարզ արթուն մակարդակի մէջ այդ բարձր գիտակցութեան տուած գիտութիւնը գիտնալ կամ սորվիլ կարելի չէ: Ինչպէս քունի մէջ նոյնիսկ մեր Ֆիզիքական մարմնոյն գոյութենէն տեղեակ չենք, բայց երբ արթնանք, այդ գիտակցութիւնը մեզի անմիջապէս, առանց յաւելեալ ջանքի, կը յայտնուի, նմանապէս այս արթուն կեանքին մէջ ալ այդ Աստուածային փորձառութիւնը չունինք,

բայց երբ հասնինք այն բարձր գիտակցութեան, աշխարհը իր բոլոր տուեալներով կը մոռնանք եւ երանութիւնը մեր հութեան մէջ առանց յաւելեալ ջանքի մը կը ժայթքի, քանզի Աստուծոյ հետ կ'ըլլանք: Աս' է Աւետարանի մէջ գրուած «յափշտակութիւնը»: Այն ատեն մենք ալ Յիսուսի նման կրնանք ըսել:

«Ես եւ Ըայր իմ մի եմք»: (Յովհաննոս Ժ:30)

«Ես եւ Հայրը մէկ ենք»:

«... ես՝ շեմ յայսմ աշխարհէ»: (Յովհաննոս Բ:23)

«... ես աս աշխարհէն չեմ»:

Առանց իսղաղ մտքի, կեդրոնացման, նուիրումի եւ պաշտամունքի Աստուած գտնել անկարելի է: Մարմինը մեզի Աստուծոյ կողմէ տրուած է եւ միայն Ինքն է որ այս նպատակին հասնիլը մեզի պիտի սորվեցնէ, անշուշտ եթէ մտիկ ընենք եւ արտօնենք: Իմաստուն մարդը, երբ տակաւին ողջ է, Աստուծոյ շնորհքով այս գիտութեան կը հասնի եւ որպէսզի փրկութիւն գտնէ մահուան չ'սպասեր: Ան որ փրկուելու համար մեռնելու կը սպասէ, պիտի չ'փրկուի, քանի որ աշխարհի վրայ ինք թէ աշխարհի եւ թէ իր «Ես»ին կապուած է: Աշխարհի վրայ ամէն անձ ընդհանուր առմամբ սա, դա կամ նայի կապուած է: Ճշմարիտ ազատութիւն գոյութիւն չունի: Երբ տակաւին ողջ ենք, մեր նպատակը այս բոլոր յարումներէն, նամանաւանդ մեր «Ես»երէն ձերբազատուիլ պէտք է ըլլայ:

Միթէ Յիսուս չ'ըսա՞ւ:

«Ես ասէ ցնոսա. Դուք՝ ի ներդո՞ւսս աստի եմ,
եւ ես՝ ի վերո՞ւսս անտի եմ. Դուք՝
յաշխարհէ՛ աստի եմ եւս՝ շեմ յայսմ

աշխարհէ» : (Յովհաննոս - Բ : 23)

«Ըսաւ անոնց: «Դուք վարէն էք՝ ես վերէն եմ. դուք այս աշխարհէն էք՝ ես այս աշխարհէն չեմ»:

«Վարէն» եւ «վերէն»ը, գիտակցութեան մակարդակի ակնարկութիւններ են, իսկ «աշխարհէն ըլլալ»ն ալ աշխարհին կապուած ըլլալն է: Յիսուս այս աշխարհին կապուած չէր, հետեւաբար ըսաւ «ես չեմ յայսմ աշխարհէ»:

Ամէն անձ թէ հոգեկան եւ թէ հոգեբանական գորութիւն ունի, բայց եթէ այս գորութիւնները չարթնցնենք եւ չգործածենք մեզի օգուտ չեն ունենար: Այն ատեն կծծի հարուստ մարդու մը կը նմանինք, որ անօթութենէ կը մեռնի: Աստուծոյ կողմէ մարդուն տրուած միտքը անհուն կարողութիւն ունի, բայց ան մարդուն կը հնազանդի եւ մարդն ալ իր ազատ կամքով այդ միտքը կը ղեկավարէ: Ուրեմն ըստ մարդուն որոշումին կամ քմահաճոյքին այդ միտքը մարդը սրբացնելու կամ գայն սատանայացնելու կարողութիւնը ունի: Ճշմարիտ գիտութիւնը այն է, որ մեզ դէպի Աստուածայայտնութեան կ'առաջնորդէ որ փրկութեան միջոցն է: Միայն խաղաղ միտքն է որ աս իրականացնելու կարողութիւնը ունի: Հոգին միշտ ազատ է: Մեր բոլոր թերութիւնները հոգիին վրայ չեն կրնար որեւէ ազդեցութիւն ունենալ, որովհետեւ հոգիի տեսանկիւնէ բոլորն ալ պատրանքային են եւ ճշմարտութիւն չեն: Բայց միտքը իր յարումներով մեզ աշխարհի կը կապէ, հետեւաբար ամէն մարդ կերպով մը իր ստացուածքին, կամ իր հաւատալիքներուն գերին է: Այդ յարումները ընդհանրապէս ճշմարտութեան, իր պարտականութիւններուն, իր բարոյական արժանիքներուն, նոյնիսկ իր մահուան ու կենաց հարցին հետ կապ չունին: Երբ երկիրը մարդոց մեղքերուն ծանրութեան տակ շարժի, մարդ ալ այլեւս

հոգեւոր ճանապարհը հետապնդելու կարելիութիւնը պիտի հունենայ: Արդեօ՞ք այն ատեն Յիսուս դարձեալ պիտի մարդեղանայ:

Ուրեմն մարդուն կեանքի պարտականութիւնը բարձր գիտակցութեան հասնիլ է: Այդ բարձր գիտակցութիւնը իրեն Աստուածայայտնութեան տեսիլքը կու տայ: Այդ տեսիլքը ճշմարտութիւնը ցոլացնող հայելին է: Այս յայտնութիւնը մարդուն ենթագիտակցութեան ձայնն է եւ մարդուն միտքը կը բանայ: Մարդը կը գիտակցի ճիշդը սխալէն զանազանելը, ինչպէս նաեւ ընկերը՝ թշնամիէն: Յայտնութիւնը նաեւ իր գործած սխալները իրեն կը յայտնէ եւ զղջալ կու տայ: Ան նաեւ անձին ճիշդ կենցաղը ցոյց կու տայ եւ մարդուն ընթացքը կը փոխէ: Անհատին արցունքներով անոր միտքը եւ անձը կը լուայ ու կը մաքրէ: Անձն ալ անձնատուր կ'ըլլայ Աստուծոյ եւ կը հասկնայ թէ ինք ամենեւին առանձին չէ ու իր ամենամօտ եւ ամենալաւ ընկերը Աստուած ինք է: Յայտնութիւնը անձին նաեւ գիտութիւն կու տայ եւ տիեզերական թագուն գիտութիւնները կը յայտնէ:



Երբ պզտիկ մանուկ
մը օդը նետես, ան կը խնդայ,
որովհետեւ գիտէ թէ պիտի
չձգես որ իյնայ, այլ զինք
պիտի բռնես:
Ահա՛, աս է Վստահութիւնը:

ՄԱՐԴԵ ԵՒ ԿՐՕՒՔԸ

Արդեօք կրօնքը իմացականութեամբ հասկնալ կարելի՞ է: Կամ արդեօք զայն փիլիսոփայութեամբ հասկնալ կարելի՞ է: Երկու հարցումին պատասխաններն ալ պէտք է ժխտական ըլլան, քանի որ մէկը միևնույն կը տարբերի: Երկուքն ալ կարեւոր են, բայց լրիւ ճշմարտութիւնը չեն ներկայացնել: Ուրեմն ինչպէ՞ս եւ ո՞ւր գտնել ճշմարտութիւնը: Ճշմարտութիւնը հաւատացեալին սրտին մէջն է:

Աշխարհի ամենամեծ զարմանալիքը եւ հրաշքը ի՞նչ է: Աշխարհի հրաշքը այն է, թէ ամէն անձ գիտնալով թէ ինք օր մը պիտի մեռնի, կ'ապրի այնպէս կարծես երբեք պիտի չմեռնի: Կրօնքը մարդուն կը յիշեցնէ թէ այս կեանքը մշտնջենական չէ: Կրօնքը այն միջոցն է, որ մարդը կը հրաւիրէ եւ կը պատրաստէ արթնութեան մը՝ բարձր գիտակցութեան մակարդակի մը, որպէսզի ան Աստուծոյ հետ հաղորդուի, ինչ որ այս կեանքին նպատակն է: Երբ բոլոր աշխարհ կը «քնանայ» այդ մակարդակի հասնող անձ մը «արթուն» կ'ըլլայ եւ երբ բոլոր աշխարհ «արթուն» ըլլալ կը կարծէ ան կը «քնանայ»: Կրօնքը Աստուածայայտնութեան դասընթացք մըն է: Ան Աստուածայայտնութեան միջոցը կը սորվեցնէ, նաեւ կը սորվեցնէ թէ միակ ճշմարտութիւնը Աստուած է, իրմէ զատ ամէն ինչ պատրանքային է: Ամէն բանի «ալֆան» եւ «օմէգան»՝ սկիզբը եւ վերջը Աստուած է, եւ Աստուած նաեւ ամէն բանի «հոգին» է: Ան ինչպէս մարդուն հոգին է, նոյնպէս ալ անոր միտքն է: Ուրեմն այդ միտքին խորհուրդները Աստուծոյ վրայ կեդրոնացնել եւ Զինք պաշտել մեր պարտականութիւնն է: Քանի որ Աստուած նաեւ մեր զգացումներուն եւ գործունէութիւններուն մէջն ալ է, հարկ է որ մեր բոլոր գործունէութիւնները իրեն

նուիրենք: Աս է ճշմարիտ պաշտամունքը: Պաշտամունքը հաւատքէն կը բղխի, ուրեմն մեր Աստուծոյ վրայ ունեցած հաւատքը պէտք է անխախտ ըլլայ: Որեւէ շփոթութիւն կամ վարանում Աստուածապաշտութեան արգելք կ'ըլլայ: Նոյնիսկ անգիտակցաբար, որեւէ տարակոյս կամ կասկած, Աստուծոյ դէմ հաւատքի պակաս եւ անխելքութիւն է:

Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ երկուութեան վրայ հիմնուած է: Երբ Աստուած ոչնչութենէ նիւթը ստեղծեց, թէ նիւթը (matter) եւ թէ հականիւթը (anti-matter) յառաջ եկան: Երբ ասոնք իրար դան երկուքն ալ կ'անհետանան: Ինչպէս բոլոր ստեղծագործութեան մէջ, նոյնպէս ալ մարդու կեանքին մէջ երկուութիւն կը տիրէ: Մարդ կ'ըլլայ առողջ կամ հիւանդ, ուրախ կամ տխուր, երջանիկ կամ ապերջանիկ, հարուստ կամ աղքատ, սիրող կամ ատող ...: Ասոր պատճառը այն է, թէ մարդ իր մէջ թէ Աստուծային հոգին եւ թէ իր «Ես»ը ունի, երկու զօրութիւններ՝ Աստուծային եւ սատանայական: Ան իր ազատ կամքի դատողութեամբ եւ զատողութեամբ, կրնայ որոշել սուրբ մը կամ սատանայ մը ըլլալ: Ըստ Աւետարանի, ան գերազանցելով այդ երկուքը, կրնայ արժանանալ Աստուծոյ որդի կոչուելու, որով Քրիստոսի ժառանգակից ըլլալու կարողութիւնը ունի:

«Նոյն ինչն Ընդին Վկայէ Ընդ-ոյս մերոմ, եթէ եմէ որդի է. ապա եւ ժառանգ է. ժառանգ է Եսոս-ժոյ՝ եւ ժառանգակից է Քրիստոսի»: (Հոովմայեցեա Ը:16-17)
 «Նոյնիքն Հոգին վկայութիւն կու տայ մեր հոգիին հետ՝ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. Եւ եթէ զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... »:

Երբ մարդը իր զօրութիւնը ֆիզիքական աշխարհի շլացուցիչ «սա», «դա» (տա) «նա»երը հետապնդելու համար կը գործածէ, կ'ըլլայ սատանայ: Իսկ եթէ նոյն զօրութիւնը հոգեկան յառաջացման համար կը գործածէ, դէպի Աստուած կ'առաջնորդուի: Բոլոր տիեզերքի մէջ ամենաազդու զօրութիւնը սէրն է, որով տիեզերքի մաս կազմող աշխարհի մէջ ալ ամենաազդու զօրութիւնը պէտք է ըլլայ սէրը: Պաշտամունքը յառաջ կու գայ սէրէն: Սէր՝ հանդէպ զաւակի, սէր՝ հանդէպ ծնողաց, սէր՝ այր եւ կնոջ միջեւ, սէր՝ քոյր եւ եղբոր միջեւ, սէր՝ ուսուցչի հանդէպ, սէր՝ ընկերոջ հանդէպ, սէր՝ բնութեան հանդէպ, սէր՝ օտարին հանդէպ եւ սէր՝ թշնամիին հանդէպ: Քանի որ Աստուած ամէն տեղ է, վերեւ յիշուած բոլոր սէրերն ալ կը ներկայացնեն Աստուծոյ հանդէպ եղած սէրը: Ուրեմն վերոյիշեալ սէրերը Աստուածպաշտութեան զանազան երեւոյթներն են:

Վրէժխնդրութիւնը գութ, սէր, յարգանք եւ ուրիշին ցաւը զգալու մեր կարողութիւնը կը փճացնէ, հետեւաբար՝ պաշտամունքը: Աստուծոյ կամ քին անձնատուր ըլլալ ճշմարիտ գիտութեան եւ Աստուածպաշտութեան սկիզբն է: Մարդկային բնութեան մէջ ամէն տեսակի սայթաքումներ կարելի է գտնել: Այն անձը որ անոնց կը յաղթէ, Աստուծոյ հետ հաղորդուելու կարելիութիւնը կ'ունենայ: Իսկ անոնք որոնք պայքարը կը կորսնցնեն եւ անոնց գերին կը դառնան փրկութեան կարելիութիւնը կը կորսնցնեն: Մարդը իր ճակատագրին տէրն է: Մարդ պարտ է իր «Ես»ը յաղթահարել, որպէսզի ճշմարիտ Աստուածպաշտութիւնը իրականացընէ: Պէտք է Աստուած փնտռէ եւ գտնէ հաւատքով եւ պաշտամունքով՝ իր մէջ եւ ոչ իրմէ դուրս՝ հոս ու հոն: Քանի որ գեղեցկութիւնը եւ սէրը Աստուծային յատկութիւններ են, հարկ է որ մարդն ալ ջանայ

զանոնք ցույցնել: Գեղեցկուծիւնը կրնայ մտային ըլլալ կամ Ֆիզիքական: Վերջինը կը թուի մեզմէ կախեալ չըլլալ: Ընդհանրապէս Ֆիզիքականը մտային գեղեցկուծեան կը յաջորդէ:

Սէրը պէտք է աշխարհիկ ստացուածքներու հանդէպ ըլլայ, այլ՝ բոլոր ստեղծագործութեան: Եւ որովհետեւ սիրոյ արտայայտութիւնն ալ գութն է, բոլոր ստեղծագործութեան հանդէպ ալ պէտք է գթասիրտ ըլլանք: Այս երկուքէն յառաջ կու գայ Աստուծոյ քաջողական ուժը, որ կը հրապուրէ անձը, որպէսզի ան Ձինք փնտռէ: Աստուած տեսնելու փափաքը այն աստիճան զօրաւոր պէտք է ըլլայ, որ անհատին մոռցնէ իր բոլոր աշխարհիկ հետապնդումները եւ անձը Աստուծոյ մէջ ձուլուի ու կորսուի: Ահա՛, աս է ճշմարիտ սէրը:

Աստուած առատաձեռն է, բոլոր անոնք որոնք իրեն կ'ապաւինին երանութիւն, ուրախութիւն, խաղաղութիւն, անդորրութիւն եւ յաջողութիւն կը գտնեն: Կեանք մը առանց Աստուծոյ, կը նմանի առանց ծառերու անտառի մը կամ առանց ջուրի գետի մը: Առանց Աստուծային իմաստութեան, նոյնիսկ որոշ յաջողութիւն մը, առանց բոյրի ծաղիկի մը կը նմանի:

Այսօր, մարդ արարած, օրինակի համար, ծագումնաբանական չափագիտութեամբ (genetic engineering) պտուղները յառաջ բերած է: Այս յաջողութեամբ կը կարծէ թէ ինք ստեղծագործ եղած է: Այո, կարելի է այդ պտուղները աւելի երկար դիմանան, աւելի գեղեցիկ երեւնան, բայց համ ու հոտ չունին:

Ամէն անձ պարտ է իր կրօնքը լաւ մը ուսումնասիրել եւ միայն մակերեսային հասկացողութեամբ չբաւականանալ: Եթէ ինք իր պրպտումին մէջ անկեղծ է, հասկացողութեամբ եւ Աստուծայայտ գիտութեամբ է որ անխախտելի հաւատք մը պիտի

կերտէ: Այդպիսի հաւատքէ մըն է որ ծագում կ'առնէ ճշմարիտ Աստուածպաշտութիւնը: Նման Աստուածպաշտութիւնն ալ բոլոր ցաւերու դարմանն է: Ան մարդուն համբերութիւն եւ տոկալու կարողութիւնը կը շնորհէ: Նման պաշտամունք մը ամենեւին ձանձրացուցիչ չ'ըլլար: Մեր եկեղեցոյ ժամերգութիւններուն մէջ եղած կրճատումները արդեօք ի՞նչի նշան են: Արդեօք զանոնք ձանձրացուցիչ գտա՞ծ էինք ու տակաւին ալ ցանցրացուցիչ կը գտնե՞նք: Ուրեմն աս մեր Աստուածպաշտութեան նկատմամբ ի՞նչ կը նշանակէ: Հանրային, միասնական պաշտամունքի ամենալաւ կերպը պաշտամունքը երաժշտութեամբ կատարելն է, որովհետեւ այս վերջինը լաւագոյն միջոցն է արտայայտելու այն սէրը որ պէտք է ունենանք: Ճիշդ այս պատճառաւ ալ եկեղեցական արարողութիւնները՝ պաշտամունքները միշտ երգեցողութեամբ կ'ըլլան: Երաժշտութիւնը ձայնի թրթռացում կը սփռէ, որ համաձայն ու ներդաշնակ է ստեղծագործութեան թրթռացումին՝ սկզբնական «Բան»ին.

«Ի սկզբանէ էր Բանն, է- Բանն էր աս-
 Լսոյո-սա՞ծ է- Լսոյո-սա՞ծ էր Բանն. Սա էր
 'ի սկզբանէ աս- Լսոյո-սա՞ծ: Լմենայն ինչ
 նովա- էղէ-, է- ասանց նորա էղէ- է-
 ոչինչ որ ինչ էղէ-ն: Սովա- կեանք էր է-
 կեանքն էր լոյս մարդկան»:

«Սկիզբէն էր Խօսքը ու Խօսքը Աստուծոյ քով էր եւ Խօսքը Աստուած էր: Ան սկիզբէն Աստուծոյ քով էր: Ամէն ինչ եղաւ անով. եղածներէն ո՛չ մէկը եղաւ առանց անոր: Կեանքը անով էր՝ ու կեանքը մարդոց լոյսն էր»: (Յովհաննոս Լ:ԻԿ)

Այն պաշտամունքը որ ձեւակերպութիւն է, կամ

անձնական շահէ եւ ակնկալութենէ կը ծագի, բնաւ արդիւնաբեր չի կրնար ըլլալ:

Մարդ իր աշխարհիկ հասկացողութեամբ կը կարծէ թէ նման պաշտամունքներով կրնայ Աստուած տպաւորել, որով այս ուղղութեամբ ջանք կը թափէ: Մինչդեռ իր ջանքերը պէտք է կեդրոնանան հաւատքով կատարուած պաշտամունքի վրայ: Աստուած չի տպաւորուիր, հետեւաբար Աստուծոյ մօտեցումը ոչ թէ կարծեցեալ տպաւորութիւն ձեռք ձգելով կարելի կ'ըլլայ, այլ Ձինք պաշտելով: Աստուած Ձինք պաշտողին միջոցաւ կ'արտայայտուի: Ամէն մի անհատի կեանքի գլխաւոր պարտականութիւնն ալ աստուածայայտնութիւնը իրականացնել պէտք է ըլլայ: Որով անձի մը իր այս պարտականութեան վրայ ունեցած յարգանքն ալ իր կրօնքը կ'ըլլայ: Իսկ իր կրօնքին հանդէպ ունեցած յարգանքն ալ բարոյագիտութիւնն (ethics) է: Բարոյագիտութենէ ալ անձնատուութիւնը կը ծագի:

Ի՞նչ կը նշանակէ անձնատուութիւն:

Անձնատուութիւնը ամէն բանով Աստուծոյ ապաւինիլ է եւ իր կամքին համաձայն գործել: Աս միայն ներհայեցողութեամբ, ամէն անձի մէջ գոյութիւն ունեցող ներքին լուռ ձայնը իմանալով ու մտիկ ընելով կարելի կ'ըլլայ: Այս ձայնը կը ներկայացնէ Աստուծոյ կամքը, հետեւաբար գործուած արարքն ալ կ'ըլլայ ըստ իր կամքին:

Անձնատուութիւնը նաեւ կը պահանջէ որ «ներքին ձայն»ին ուշադիր ըլլանք եւ անոր նշած Աստուծոյ կամքին հակառակ չգործենք: Անձնուրաց մարդը պէտք է հաւատայ, թէ Աստուած զինք պիտի պահէ ու պաշտպանէ:

Անձնատուութիւնը նաեւ անընդհատ աղօթելու ձեւ մըն է, քանզի մեր բոլոր արարքները աղօթքի մը արտայայտութիւնը կ'ըլլան: Ան «Ես»ը անտեսելն է:

Բոլոր տիեզերքը՝ մոլորակները իրենց քաշողական ուժերով եւ բնութեան բոլոր երեւոյթները, հաւասարակշռութեան (equilibrium) մը վրայ հիմնուած է: Ուրեմն ճշմարիտ կրօնքն ալ իր քաշողական բնոյթով պէտք է համայն մարդկութիւնը միացնէ եւ ոչ թէ բաժնէ: Մարդկութեան մէջ պէտք է հաւասարակշռութիւնը ապահովէ: Պէտք է խտրականութեամբ գատորոշէ ոեւէ անձ, հաւաքականութիւն, ներառեալ զանազան տարբեր կրօնքներ: Ան պէտք է սիրտ կոտրէ, այլ պէտք է կոտրած սիրտերը միացնէ: Ինչպէս լոյսը խաւարը կ'անհետացնէ, նմանապէս կրօնքի գիտութեան լոյսն ալ պէտք է յոխորտանքը (arrogance) եւ խաւարամտութիւնը անհետացնէ: Երբ մարդը իր հոգիին հետ իր կապը կը խզէ, իր անկումն ալ անխուսափելի կ'ըլլայ: Երբ ան իր կեանքի սանձերը իր «Ես»ին կը յանձնէ, այլեւս չի կրնար իր միտքը կեդրոնացնել, քանի որ «Ես»ը բազմաթիւ խորհուրդներ կը ստեղծէ: «Ես»ը անձնասէր ըլլալով նաեւ մարդուն խիղճը կը ջնջէ: Առանց խղճի մարդն ալ ամէն տեսակի անիրաւութիւն, անարդարութիւն եւ անզգամութիւն կը գործէ: Աստուած որպէս իր թշնամին կը տեսնէ, ինչ որ իր կործանումին սկիզբը կ'ըլլայ: Աստուծոյ չհաւատալ, իրեն դէմ պատերազմ հռչակել է: Աստուծոյ հետ հաղորդութեան միջոցը Փիզիքական ծոմապահութիւնը է, քանզի անօթի մարդուն միտքը խաղաղ չի կրնար ըլլալ: Իսկ Աստուծոյ հետ հաղորդուելը հոգիին կշտանալն է: Աստուած միակ ճշմարտութիւնն է, բայց այդ ճշմարտութիւնը մեզմէ ծածկուած է: Ծշմարտութիւնը աներկիւղ է, վստահութեան եւ հաւատքի կ'ապաւինի:

Պաշտամունքը ունի երկու յատկութիւններ. յարգանք (սէր) եւ հաւատք:

Ամէն տեսակի տառապանք միայն մէկ դարման

ունի. յիշել Աստուած:

Հաւատացեալին երկու յատկութիւններ հարկաւոր են. հաւատք եւ համբերութիւն:

Երջանկութիւնն եւ տիրութիւնը կեանքի երկու երեսներն են: Մարդ իր բոլոր փափաքները իրականացնելու կարող չէ: Ան որքան յաջողի իր իղձերն ու փափաքները իրականացնել, անոնք ալ աւելի կ'աւելնան: Անոնք որոնք կը կարողանան իրենց իղձերը զսպել եւ անոնցմէ ձերբազատուիլ, մտային խաղաղութիւնը կը գտնեն: Խաղաղութիւնն ալ իրենց երջանկութիւնը կու տայ: Այս ուղղութեամբ հոգեւոր ճանապարհի մէջ յաջողութեան համար բացարձակ հաւատք, ամուր վճռականութիւն, մշտական յարատեւութիւն եւ համբերութիւն անհրաժեշտ են: Ամենամեծ զօրութիւնն ալ պաշտամունքին մէջն է: Երբ հաւատացեալ մը Աստուած կը պաշտէ յայտնաբերելով բացարձակ սէր եւ ճշմարիտ հաւատք, անկարելի է որ Աստուած զինք անտեսէ: Արդէն ինք Աստուծոյ հետ համերաշխ վիճակի մը հասած կ'ըլլայ:

Պաշտամունքը ստիպողութեամբ չ'ըլլար, ան պէտք է անձին սրտէն բղխի: Նման սրտաբուխ պաշտամունքի մը կարելի չէ արգելք ըլլալ՝ հաւատափոխութեամբ, բռնակալութեամբ, այլազան միջոցառումներով: Հոս անկարելի է չյիշել մեր իսլամացած հայքոյր եւ եղբայրները:

Ինչպէս Աստուած ճշմարիտ հաւատացեալին գանձն է, ճշմարիտ հաւատացեալն ալ Աստուծոյ գանձն է: Անոնք որոնք կը ջանան այս երկուքին իրարու հետ հաղորդութեան արգելք ըլլալ, պատիժի կ'ենթարկուին:

Պաշտամունքը վերացման միջոցն է: Կեանքը Աստուծոյ մէկ շնորհքն է, որ մեզի ծառայելու առիթը կու տայ: Ծառայութեամբ կատարուած Աստուածպաշտութիւնը մեզի ազնուութիւնը կը սորվեցնէ: Պաշտա-

մունքը ծիսակատարութիւն մը չէ: Ան ձեւակերպութիւն ալ չէ: Պաշտամունքը ուրիշի ցաւը զգալ է, վեհ եւ օգտակար խորհուրդներ եւ արարքներ ունենալ է: Պաշտամունքը զոհողութիւն եւ բարեսիրութիւն է: Հանրութեան օգտին համար ապրիլն է, ոչ թէ անձնական շահի համար: Պաշտամունքը ներողամիտ ըլլալ է: Աստուծոյ շնորհակալութիւն յայտնել է: Աստուծոյ համար ոչ դիրք, ոչ ցեղ, ոչ առաքինութիւն եւ ոչ ալ խորամանկութիւն արժէք մը կը ներկայացնեն, այլ Ան միայն ճշմարիտ Աստուածպաշտութիւնը կ'ընդունի:

Հետեւեալները ճշմարիտ Աստուածպաշտութեան հասնելու համար ամփոփ ցանկ մըն է:

ա- Հաղորդակցիլ վեհ անձնաւորութիւններու եւ սուրբերու հետ.

բ- Կարգալ Աւետարանը՝ սորվելու, գիտնալու ու կիրարկելու Յիսուսի քարոզչութիւնները.

գ- Ինքնագոհողութիւն եւ ծառայութիւն.

դ- Շարականներով Աստուած փառաբանել.

ե- Բացարձակ հաւատքով Իր անուան ապաւինիլ.

զ- Ինքնագսպում եւ ձերբազատում աշխարհիկ հետապնդումներէ.

է- Գոհանալ ներկայ վիճակէն, ան ինչ որ ալ ըլլայ եւ ապագայի համար ցանկութիւններ չերագել.

ը- Ուրիշներու վրայ թերութիւնները չփնտռել.

թ- Խորամանկ չըլլալ, այլ պարզութիւն եւ համեստութիւն կերտել.

ժ- Միշտ ծայրայեղութիւններէ խուսափիլ եւ անդորրամիտ ըլլալ:

Ինչպէս այլ կրօնքներու մէջ, մեր կրօնքին մէջ ալ ճգնաւորութիւնը աշխարհիկ հետապնդումներէ հեռանալով Աստուծոյ հետ հաղորդութիւնը դիւրացնելու միջոց մըն է: Այս հրաժարումը պէտք չէ կեանքի յառաջ բերած խնդիրներէն խուսափելով եւ մեկուսա-

նալով ըլլայ: Այս մեկուսացումը պէտք է մտային ըլլայ, առանց խուսափելու կեանքին ներկայացուցած բոլոր դժուարութիւնները դիմադրաւելի: Մաս մը ճգնաւորներ կը կարծեն թէ իրենք հանրութեան պէս պէտք չէ գործեն, որով գործունէութենէ կը հրաժարին: Ճշմարտութիւնը այն է, թէ հրաժարումը պէտք է ըլլայ բոլոր այն գործունէութիւններէն, որոնք եսասիրութենէ ծագում կ'առնեն: Իսկ ճշմարիտ ճգնաւորը շատ աւելի գործօն պէտք է ըլլայ, քան թէ պարզ ժողովուրդը, բայց իր գործունէութիւնները՝ ծառայութիւնները պէտք է յօգուտ հանրութեան ըլլան: Ասոր բացայայտ օրինակներէն մին մեր ժամանակակից երջանկայիշատակ Մայր Թերեզան է: Ճշմարիտ հրաժարումը գիտութեան ճամբան է, որ Աստուծոյ մէկ շնորհքն է: Ճշմարիտ ճգնաւորը մեկուսանալու պէտք չունի, քանի որ մեկուսացած, լերան գագաթը, առանձին, միտքը խորհուրդներու բազմութեան մէջ կրնայ խեղդուիլ: Եթէ իր միտքը Աստուծոյ վրայ կեդրոնացած ըլլայ, շուկայի բազմութեան մէջ իսկ ինքզինք մեկուսացած կրնայ զգալ:

Ընդհանրապէս մարդիկ երբ նեղ կացութեան մատնուին, կը սկսին աղօթել: Աս սխալ արարք մը չէ, բայց ճշմարիտ պաշտամունքը անընդհատ պէտք է ըլլայ: Աղօթքը եւ պաշտամունքը միայն Աստուծմէ աս-ան ուզել կամ խնդրել չէ, այլ աղօթքը՝ պաշտամունքը պէտք է սիրոյ արտայայտութիւն ըլլայ: Կրօնքին հիմքը պաշտամունքն է, իսկ պաշտամունքին հիմքն ալ՝ սէրը: Սէրը հոսող գետի մը կը նմանի: Գետին հոսքը կասեցնել սխալ է: Այդ գետը Աստուծմէ ամէն մի անհատի սրտին մէջ կը հոսի: Ամէն մի անձի պարտականութիւնն է այդ հոսքը չխափանել եւ իր կարգին զայն իր սրտէն դէպի բոլոր մարդկութեան եւ բնութեան հոսեցնել: Եթէ մարդուն ստեղծագործու-

Թիւնը Աստուծոյ մէկ նուէրն է աշխարհին, բնութեան ստեղծագործութիւնն ալ Աստուծոյ մէկ նուէրն է մարդուն: Բնութիւնը իր մայրական սէրով, բոլոր հաճելիութիւններով, իր բացարձակ զոհողութեամբ, համբերութեամբ, տոկունութեամբ, խոփոռութեամբ մարդկութեան կը ծառայէ: Արդեօք մենք ալ պէտք չէ՞ նոյն մօտեցումով բնութեան մօտենանք՝ օղբ, ջուրը եւ հողը չապականենք: Մարդ արարած պարտ է իր «Ես»ը եւ անոր ազահոութիւնները յաղթահարել, որպէսզի նման պաշտամունք մը կարենայ կատարել: Եկեղեցին մոմ կը վառենք: Մոմը, մեզի ճշգրիտ կենցաղը ցոյց տուող լաւ օրինակ մըն է: Վառուած մոմը, ինքզինք սպառելով, իր շրջակայքը կը լուսաւորէ: Մենք ալ մեր կեանքը հանրութեան օգտին եւ բարելաւման համար պէտք է սպառենք:

Իբր մէկական մոմ, որքան լուսաւորենք մեր շրջակայքը, այնքան ալ մենք կը լուսաւորուինք եւ այս լուսաւորումն է որ խաւարամտութիւնը կ'անհետացնէ:

Սէրը ամենավեհ զգացումն է, քանզի ան Աստուածային է:

Սէրը մօր եւ զաւկի միջեւ յօժարակամութիւն եւ խանդավառութիւն է:

Սէրը այր եւ կնոջ միջեւ յարգանք է:

Սէրը քոյր եւ եղբօր միջեւ հաւատք է:

Սէրը երկու ընկերներու միջեւ համակրանք է:

Սէրը աշակերտին իր ուսուցչին հանդէպ երախտագիտութիւնն է:

Սէրը անձին իր թշնամիին հանդէպ Աստուածասիրութիւն է:

Սէրը հաւատացեալի եւ Աստուծոյ միջեւ պաշտամունք է:

Սիրոյ զօրութիւնը անձնասէր չըլլալու մէջն է:



ՄԱՐԴՈՒ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Գիտութիւնը Աստուծոյ մէկ նուէրն է: Ան հունտի կը նմանի: Միտքը պէտք է պարարտ ըլլայ, որպէսզի ան հոն ծաղկի: Գիտութիւնը սերտօրէն գործունէութեան հետ կապուած է: Նոյնիսկ Աստուածպաշտութիւնը գործունէութիւն մըն է, որ փորձառական գիտութեամբ ձեռք կը ձգուի: Բոլոր գիտունները իրենց ըրած գիւտերուն համար երկար խոկումի ժամեր տրամադրած են, որ գործունէութիւն մըն է: Մինչեւ այսօր գիտցուած եւ տակաւին չգիտցուած բոլոր գիտութիւնները արդէն Աստուծոյ մէջ կը գոյատեւեն: Ս. Հոգին բոլոր գիտութիւններու շտեմարանն է: Մարդ արարած մինչեւ հիմա Ֆիզիքական աշխարհը կառավարող օրէնքները գտնելով զբաղած էր: Այժմ նոր կ'անդրադառնայ, թէ զօրութեան եզր մըն ալ կայ, որ կը գերազանցէ Ֆիզիքականը: Այս վերջինը այդ զօրութենէն կախեալ է: Այդ զօրութեան բնոյթը չեն հասկցած, զայն կառավարող օրէնքները չեն գիտեր: Ինչ որ իրենք նոր կը սկսին հասկնալ, կրօնքը դարեր առաջ Անոր մասին ակնարկած էր: Այն ինչ որ

բնագիտութիւնը «մուժ գորութիւն» կը կոչէ, կրօնքը զայն ճանչցած է որպէս Ս. Հոգի: Այն բանը որ բնագիտութիւնը չէ հասկցած եւ չի գիտեր, հոգեւոր կեանքն է որ զայն անհատին կը յայտնէ: Յիսուս մեր գիտցած բնագիտութեան օրէնքներէն շատ աւելին գիտէր, հետեւաբար բուժելու եւ նոյնիսկ մեռելները յարուցելու կարողութիւնը ունէր: Որովհետեւ մենք Անոր գործածած գորութեան այդ օրէնքները չենք գիտեր, կատարուածները մեզի համար հրաշքներ կը նկատուին, ինչպէս նախնական մարդը կայծակը իր մեղքերուն իբր պատիժ Աստուծոյ՝ ղրկուած կրակ կը նկատէր: Այսօր կայծակին պատճառը մեզի յայտնի դարձած է:

Եթէ այս տեսակէտը իրողութիւն մը չ'ըլլար Յիսուս չէր ըսեր.

«... Լմէն ամէն ասե՛մ թէ որ Լաւապոս՛յն յի՞ս գործ» զոր էս գործէմ, է- նա՛ գործեսցէ է- մեծամեծս է՛ս իան զնոյնս գործեսցէ ... »: (Յովհաննոս ԺԳ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը հաւատայ ինծի, ի՛նք ալ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր պիտի ընէ, ...»:

Գիտութիւնը մարդուն Ս. Հոգիէն կը տրուի, Որուն գորութիւնը տիեզերքի մէջ առանց խարութեան անընդհատ կը հոսի: Մենք, մեր եօթը մահացու մեղքերով, կը խափանենք Անոր հոսքը մեր էութենէ ներս, հետեւաբար իր շնորհներէն՝ ներառեալ գիտութիւնը, չենք օգտուիր:

Պօղոս առաքեալ կ'ըսէ.

«Ելծմ քեանեմէ եբրե- ընդ Լայելի՛

օրինակաւ, այլ յայնժամ ղէ՛մ յանդիման

...» : (Լ. Աորնշասցիս ժ.Գ:12)

«Հիմա կը տեսնենք հայելիի մէջէն՝ աղօտ կերպով, բայց այն ատեն՝ պիտի տեսնենք երէս առ երես: ...»:

Մենք ալ պարտ ենք մեր հայելին՝ մեր միտքը մաքրել: Մտքին Աստուծոյ վրայ կեդրոնացումով գիտութիւն կը ստանանք, իսկ գիտութիւնն ալ մեզի պարտաճանաչութիւն կու տայ, հետեւաբար մեր անձնասէր գործունէութիւնները կը դադրին: Սակայն հանրութեան օգուտին եւ բարօրութեան համար կատարուած գործունէութիւնները, առանց անոնց արդիւնքներուն կապուած ըլլալու եւ առանց անձնական ակնկալութիւններու, կը շարունակուին: Գիտութիւնը մարդը խաղաղութեան եւ փրկութեան կ'առաջնորդէ, քանզի գիտութիւնը ճշմարտութիւնն է: Դժբախտաբար մարդոց մեծամասնութեան կենցաղը իրենց խաւարամտութեան կը համապատասխանէ: Իսկ անոնք որոնք քիչ մը գիտութիւն ունին՝ Աւետարանի պատգամը իմացած են, իրենց կենցաղը իրենց յոխորտանքի (arrogance) մակարդակին կը համապատասխանէ: Յոխորտանքը մեզ կը կուրացնէ որպէսզի մեր բոլոր արժանիքները չկարողանանք տեսնել: Գիտութիւնը հպարտ մարդուն ձեռքը երկկողմանի սուրի մը կը նմանի: Եթէ մարդ, այդ գիտութիւնը սխալ գործածէ ինքզինքին ալ վնաս կը հասցնէ, ինչպէս հիւլէական զօրութեան գիւտը աւերիչ հիւլէական ռումբի պատրաստութեամբ մարդկութեան մեծ վնաս հասցուց: Հետեւաբար պարտ ենք գիտութիւնը հպարտ անձերէ հեռու պահել: Բարկութիւնն ալ ճշգրիտ դատողութեան եւ զատողութեան կարողութիւնները անհատէն կը խլէ:

Ան որ ուրիշի գիտութիւն կու տայ, ինք ալ աւելի գիտութիւն կը ստանայ: Անտարակոյս մեր բոլորին

Ուսուցիչը Յիսուս Գրիստոսն է, քանի որ գրուած է.

«Բայց դուք՝ մի գտնէ՛ք կոչե՛լ վարդապետք գտնէ՛ք մի է յեր ուսուցիչ... Եւ մի կոչեցի՛ք ուսուցիչ, գտնէ՛ք ուսուցիչ յեր Քրիստոսն է» : (Մարքէոս ԻԳ : 8,10)

«Բայց դուք Ռաբբի մի՛ կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Գրիստոս : ... Եւ դուք ուսուցիչներ մի՛ կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Գրիստոս» :

Ամէն անձ պէտք է իր ուսուցիչը մեծարէ, ուրեմն մեզի ալ կը պարտի Զինքը յարգել եւ պաշտել : Միայն Զինք պաշտելով է որ յայտնութեան կ'արժանանանք :

Յայտնութեան ճամբան կը բացուի երբ մենք.

ա- կը ստանանք իմաստութիւն, որ է Աստուածային գիտութիւն :

բ- կը կարողանանք ճիշտը կամ սխալը պատշաճ կերպով դատել եւ գատել :

գ- կ'անդրադառնանք մեր բոլոր գործած սխալներուն :

դ- կը զղջանք մեր բոլոր գործած սխալներուն համար :

ե- Ապաշխարութեամբ կը մաքրենք մեր սիրտերը եւ միտքերը :

զ- Այնուհետեւ կը վարենք Աստուածահաճոյ կենցաղ մը :

է- Միայն Աստուծոյ խօսքը լսելով չենք բաւականանար, այլ գայն գործադրելով կ'ապրինք :

Գիտութիւնը պարզապէս խօսքը՝ ըստածները գիտնալ չէ, այլ գանոնք գործադրելը գիտնալն է :

Ահա թէ ինչ գրուած է :

«Լինիջի՛ք առնելի՛ք Բանին է- մի՛ լսելի՛ք

միայն Համարեաջի՛ յանձնես : Զի ելել ո՛վ լսող միա՛յն իցէ Բանին՝ եւ ոչ առնելի նման է նա մարդոյ որ պշո-ցեալ Հայրցի՛ ընդ երեսս ի-ր՝ որ Ձնանիցին ՚ի Հայել-ոջ . պի Հայցեալ երեսս պինձն եւ պա՛նց արար , եւ անդէն մոռացաւ թէ որպիսի ո՛վ էր : Իսկ որ յառեալ ՚ի կարարեա՛լ օրէնս ապարո-թեանն Հայցի եւ ՚ի նմին կացցէ ո՛չ եղեւ նա լսող մոռացո-թեան , այլ առնելի՛ Գործոյն : Աս՝ յառնելն ի-րոմ լիցի երանելի՛ : Ելել ո՛վ կամիցի կրօնա-որ լինել , եւ ո՛չ սանձահարեացի պիւստ- ի-ր այլ պատշտո-ցանիցի պիւրոյն ի-ր այնպիս-ոյն վայրապա՛ր է կրօնա-որո-թիւնն : Կրօնա-որո-թիւնսս՝ որք եւ անարարսս ՚ի յԼարո-ծոյ եւ ՚ի Հօրէ՛ ա՛յս է այցելո- լինել որքոց եւ այրեաց ՚ի նեղո-թեանց անարա՛ր պահել պանձն յաշխարհէ » : (Թո-ղթ Յակոբայ Լ : 22-27)

« Սակայն խօսքը գործադրողներ եղէ՛ք, եւ ո՛չ միայն լսողներ՝ դուք ձեզ խաբելով : Արդարեւ, եթէ մէկը միայն լսէ խօսքը ու չգործադրէ, կը նմանի մարդու մը՝ որ հայելիի մէջ կը դիտէ իր բնական երեսը, որովհետեւ կը դիտէ ինքզինք ու կ'երթայ, եւ իսկոյն կը մոռնայ թէ ի՛նչպէս էր : Բայց ա՛ն որ ակնկառօյց կը նայի ազատութեան կատարեալ Օրէնքին ու կը կենայ անոր մէջ, - ո՛չ թէ մոռացկոտ լսող մը ըլլալով,

հապա՛ գործը կատարող մը,- երանելի պիտի ըլլայ իր ըրածին մէջ: Եթէ մէկը կը կարծէ կրօնասէր ըլլալ ու չի ասնձեր իր լեզուն, այլ կը խաբէ իր սիրտը, անոր կրօնասիրութիւնը փուճ է: Աստուծոյ եւ Հօրը առջեւ՝ մաքուր եւ անարատ կրօնասիրութիւնը սա՛ է,- այցելել որբերուն եւ այրիներուն՝ իրենց տառապանքին մէջ, ու ինքզինք անբիժ պահել աշխարհէն»:

Ընդհանուր առմամբ մարդ արարած մահէն կը վախնայ: Մահուան գաղափարին դիմաց մարդ պէտք չէ իր անդորրութիւնը կորսնցնէ: Ամէն անձ լաւ գիտէ թէ ուշ կամ կանուխ օր մը պիտի մեռնի: Պէտք է միտքը զսպել եւ Աստուծոյ վրայ կեդրոնացնել, քան թէ նման մտահոգութիւններով անդորրութիւնը կորսնցնել: Իմաստութիւնը պէտք է անհատը ձերբազատէ բոլոր զգացումներէն ու յուզումներէն, որպէսզի անձը Աստուծոյ հոգիին մէջ խորասուզուի: Թէեւ սա ըսելը դիւրին է, բայց իրականացնելը՝ դժուար: Բոլոր կեանքի մը տեւողութեան կատարուելիք պատրաստութեան մը կը կարօտի:

Ճշմարիտ Աստուածապաշտութիւնը կը նմանի անձի մը որ գետի դիմացի ափը անցնելու համար կը սկսի լողալ բայց Աստուծոյ հոգիին մէջ խորասուզուելով եւ նոյնանալով Անոր հետ, բնաւ հոն չի հասնիր:

Թէեւ գիտութիւնը Աստուծոյ հետ հաղորդուելու ճամբան կը բանայ, սակայն այն գիտութիւնը որ Աստուածահաճոյ արարքներու չ'առաջնորդեր անկատար է: Գիտութիւնը առանց Աստուածապաշտութեան իր փայլը կը կորսնցնէ: Մարդիկ կեանքը իրենց ունեցած գիտութեան մակարդակին համաձայն կ'ըմբռնեն եւ իրենց կենցաղն ալ այդ հասկացողութեան համապատասխան կ'ըլլայ: Մարդ Աստուածն ալ իր ունեցած գիտութեան մակարդակին համաձայն կ'ըմբռնէ: Անձը գիտութեան չտիրացած, պէտք է գիտութիւնը անոր

տիրանայ: Ճշմարիտ գիտութիւնը հեզութիւն կը յառաջացնէ եւ ճշմարիտ ազատութիւն կը շնորհէ: Մարդ զգացական էակ մըն է, ուրեմն բնական է, որ ինք զգացումներ ունենայ: Բայց իր պարտականութիւնն է, գիտութեան շուքին տակ, զանոնք զսպել: Պէտք չէ արտօնէ, որ զգացումները զինք կառավարեն: Զգացումները կարեւոր են եւ միշտ պիտի գոյատեւեն: Առանց զգացումի մարդ մը վայրի կենդանի է մը տարբերութիւն չ'ունենար: Աստուածային գիտութիւնը՝ իմաստութիւնը իր շնորհքներէն է, որ մեզի ժխտական զգացումները զսպելու եւ մեր սխալները ուղղելու կարողութիւնը կու տայ: Ըստ հին եգիպտական փարաւոններուն մարդ վեց զգայարանքներ ունէր: Իրենց համար միտքը՝ խորհուրդը կամ խորհելու կարողութիւնը վեցերորդ զգայարանքն էր, որ զուգահեռաբար միւս հինգ զգայարանքներու եւ անոնց յառաջ բերած զգացումներուն պէտք էր զսպուեր: Ժամանակի ընթացքին, կը թուի թէ մարդ արարած մտքին եւ խորհելու կարողութեան աւելի վեհ դիրք մը տալով զայն զգայարանքներու շարքէն դուրս հանած է:



ՄԱՐԴԸ ԵՒ ԻՐ ԿԵՆՓԱԴԸ

Առաջին գիրքիս՝ «Լոյս ի Լուսոյ»-ին մէջ ներկայացուցած էի մեր եկեղեցւոյ ժամերգութիւնները, որոնք կը ներկայացնեն մարդկային անկումը եւ վերադարձը առ Աստուած: Ինչպէս գրուած էր «Երեւոյեան ժամերգութիւն»ը այդ երանութեան կորուստին անդրադարձն է: «Խաղաղական եւ Հանգստեան ժամերգութիւններ»ը կը ներկայացնեն մեր աղերսանքը առ Աստուած, որպէսզի մեր խաւարամտութեան միջոցին մեզ պահէ, պաշտպանէ ու խաղաղութիւն պարգեւէ: «Գիշերային ժամերգութիւն»ը արթնութեան հրակէր մըն է: Անոր յաջորդող «Առաւօտեան, Արեւագալի եւ Ճաշու ժամերգութիւններ»ը եւ բոլորին գագաթը նկատուող Ս. Պատարագն ալ մեզ Աստուծոյ հետ հաղորդուելու կ'առաջնորդեն:

Վերոյիշեալ կրկնութեան նպատակը մեր կենցաղի փոփոխութեան անհրաժեշտութիւնը շեշտելու համար է, ինչ որ մեր եկեղեցւոյ ժամերգութիւններու մէջ բացառիկ տեղ կը գրուէ: Ինչպէս հաղորդութենէ առաջ զարթօնքը անհրաժեշտութիւն մըն է, նմանապէս զարթօնքէն առաջ ալ այս կենցաղի փոփոխութիւնը անհրաժեշտութիւն մըն է: Քանի որ «Գիշերային ժամերգութիւն»ը զարթօնքի հրակէր մըն է, հարկ է որ ժամերգութիւնը սկսի այս կենցաղի փոփոխութեան խոստումով: Այս խոստումը կ'ըլլայ «Գիշերային ժամերգութեան» չսկսած, երբ ժողովուրդը, ներառեալ քահանան, իրենց կոնակը խորանին՝ դէպի արեւմուտք դառցած կ'արտասանեն իրենց աշխարհէ հրաժարման ուխտը:

«Հրաժարիմք ի սատանայԷ եւ յամենայն խաբէութենէ նորա. ի պատրանաց նորա. ի խորհրդոց նորա. ի չար կամաց նորա. ի չար հրեշտակաց նորա. ի չար պաշտօնեից նորա. ի

չար կամարարաց նորա. եւ յամենայն չար
 զօրութենէ նորա. Հրաժարելով Հրաժարիմք: Եւ
 ապա դառնամք ի լոյս Աստուածդիտութեան»:

Այս խոստումը երեք անգամ կրկնելէ յետոյ կը
 դառնան դէպի արեւելք եւ դէպի Ս. Խորան: Այս
 խոստումը, որպէսզի Աստուծոյ հետ կարողանանք
 հաղորդուիլ, կենցաղի եւ հայեացքի փոփոխութեան
 անհրաժեշտութիւնը կը ներկայացնէ: Հոն բացայայտօ-
 րէն շեշտուած է թէ աշխարհի շլացուցիչ ամէն ինչ,
 որոնց կապուած կը թուինք ըլլալ, ծնունդ կ'առնեն չար
 կամքէ ու խորհուրդներէ եւ պատրանքային են:
 Ճշմարտութիւն չեն: Կամքն ու խորհուրդներն ալ չար
 են, որովհետեւ ծնունդ կ'առնեն սատանայէն՝ մեր
 «Ես»էն:

Մարդ իր կեանքի ընթացքին պարտ է իր
 հաւասարակչութիւնը պահել: Պէտք չէ որ երկու
 ծայրայեղութիւններէն՝ ինչպէս ուրախութենէն եւ
 տխրութենէն, յաղթանակէն եւ պարտութենէն, նոյնիսկ
 կեանքէն եւ մահէն տարուի: Մարդու կենցաղը պէտք է
 այս բոլորին գերազանցէ: Աս կարելի կ'ըլլայ երբ
 հարցերը միայն անհատական անկիւնէ չեն դիտուիր:
 Հարկ է որ ամէն անձ իր բոլոր պարտականութիւնները
 լիովին եւ ամենալաւ կերպով կատարէ, բայց պէտք չէ
 անոնց արդիւնքները սեփականացնէ: Մեզի կը թուի,
 թէ ընդհանուր առմամբ, արարքի մը պատճառը եւ
 ձեռք ձգուելիք արդիւնքն է որ մեզ գործունէութեան
 կը մղեն: Յաջողելու փափաքը նաեւ իր հետ ձախողու-
 թեան վախը կը բերէ: Մարդ միշտ գործելու կամ
 չգործելու ազատութիւնը ունի: Աստուածահաճոյ կեն-
 ցաղը փորձութեան տեղի չտալն է, զգացումները
 կարենալ զսպելն է, ճշմարտութենէ չհեղիլն է:

Մարդ իր կեանքի ընթացքին երեք գլխաւոր
 պարտականութիւններ ունի:

ա- Պարտականութիւն հանդէպ իր Աստուծոյն. Ամէն անձ որ կը ծնի, Աստուծմէ տրուած պարտականութիւն մը ունի: Բոլոր պարտականութիւնները ամենալաւ կերպով, բացարձակ ուրախութեամբ եւ առանց գործունէութեան արդիւնքին սեփատիրութեան պէտք է կատարուին: Այսինքն, Աստուծոյ ձեռքին մէջ լաւ գործիք մը պէտք է ըլլալ, որովհետեւ արդիւնքը Աստուծոյ կը պատկանի: Աս կը նշանակէ բարեսիրտ ըլլալ, ողորմութիւն տալ եւ բարեգութ ըլլալ:

բ- Պարտականութիւն հանդէպ իր վարդապետին. Իր ստացած գիտութեան եւ ուղղութեան համար իր վարդապետին՝ Յիսուս Քրիստոսի շնորհակալութիւն յայտնել եւ Ձինք պաշտել:

գ- Պարտականութիւն հանդէպ իր ծնողքին. Որդիական պարտականութիւն է անոնց հնազանդիլ եւ անոնց խոր ծերութեան օրերուն ալ զանոնք յարգել եւ խնամել:

դ- Պարտականութիւն հանդէպ ընկերութեան (society). Միւրեւ բոլորին, իրմէ տկարին օգնել եւ ընկերութեան բարելաւման համար աշխատիլ:

ե- Պարտականութիւն հանդէպ բնութեան. Խնամել բուսական եւ անասնական աշխարհի բոլոր կեանքերը: Աս կը կատարուի օգը, ջուրը եւ հողը չապականելով եւ կենդանիներու հանդէպ անգութ չըլլալով:

Ինչպէս ամէն մոլորակ իր ծիրը ունի, ամէն անձ ալ մարդկային ընկերութեան մէջ իր դիրքը, ճանապարհը եւ պարտականութիւնը ունի, որ իր կեանքի ծիրը կը նկատուի: Մարդ արարած պարտ է իրեն տրուած պարտականութիւնը լիովին կատարել: Կեանքը բախտին յառաջ բերած պատահարներու շարքաւորում մը չէ, այլ յառաջդիմութեան միջոց մըն է, արթնութեան առիթ մըն է:

Պարտ ենք մենք մեր աչքերով ստեղծագործու-

Թիւնը տեսնել եւ ստեղծագործութեան մէջն ալ՝ Աստուած, քանի որ Աստուած ալ այդ նոյն աչքերով է որ իր ստեղծագործութիւնը կը տեսնէ: Մեր կենցաղով պէտք չէ իր տեսողութիւնը խափանենք: Հարկ է ամէն անձ անցեալի փորձառութիւններէն սորվի, բայց պէտք չէ անոնց կառչի: Կեանքի ընթացքին մեզի բոլոր պատահածները մեր խորհուրդ ու արարքներուն արդիւնքներն են: Հոգեւոր ճանապարհին մէջ յաճախ քննութիւններու կ'ենթարկուինք, մեզի ցոյց տալու համար թէ արդեօք անձնասիրութենէ ձերբազատուած ե՞նք: Երբ մեր շուրջը դիտենք, կը տեսնենք թէ ընկերութեան (society) մէջ, գոհողութեան եւ սիրոյ տեղ, ընդհանուր առմամբ, խաբեբայութիւնը, անձնասիրութիւնը եւ ազահութիւնը կը թուին օրուայ օրէնքը ըլլալ:

Աշխարհի վրայ բացարձակ երջանկութիւն կամ բացարձակ վիշտ չկայ: Մարդ արարած միշտ երկուքին միջեւ կ'օրօրուի: Հաւատքը վիշտին տոկալու կարողութիւնը կուտայ, իսկ համբերութիւնն ալ վշտին վախճանը սպասելու քաջութիւնը: Դժուարութիւններու վախճանը իր պատշաճ ժամանակին կու գայ, որովհետեւ բոլոր լաւ ու վատ կացութիւնները, որոնց կը հանդիպինք, պատահական չեն եւ մեզի սորվեցնելիք դաս մը ունին: Որքան մեր դասը արագ սորվինք, այնքան արագ ալ պատահարները վերջ կը գտնեն:

Այն անձը որ ճշմարտութեան ճամբան ընտրած է, հարկ է որ արդար ըլլայ, բայց պարտ է նաեւ անարդարութեան դէմ պայքարիլ: Մարդկային կենցաղին գլխաւոր սկզբունքը աշխարհի՝ ընկերութեան (society) բարելաւումը պէտք է ըլլայ: Իմաստուն մարդը երբ դժուարութեան մը հետ դէմ-առ-դէմ կու գայ, ներաքննութեամբ (introspection) կը ջանայ դժուարութիւնները յաղթել: Իսկ խաւարամիտ մարդը, բարկու-

Թեան եւ բռնաբարութեան կը դիմէ: Անոնք, որոնք իրենց սրտին մէջ ատելութիւն եւ նախանձ կը պահեն, իրենք իրենց ակելի վնաս կը հասցնեն քան թէ ուրիշին: Ճշմարտութեան ճանապարհին յաջողութիւնը Աստուծո՛մէ կը տրուի անոնց, որոնք արժանի են: Ինչ որ մեզի կը պատահի՝ լաւ կամ վատ, պէտք է պատահի եւ պատահական չէ: Վատը մեզի զգուշացնելու ու սորվեցնելու համար դաս մըն է, իսկ լաւն ալ մեր մարդկայնականութիւնը փորձելու համար է: Առ հասարակ մարդ արարած իր համարութեան եւ հպարտութեան հետեւանք իր ձախողութեան պատճառը չի հասկնար կամ չի տեսներ: Իր «Ես»ը վիրաւորել չ'ուզեր: Հպարտութիւնը իմացականութիւնը եւ տրամաբանութիւնը կը խափանէ: Միայն մաքուր սիրտ՝ միտք ունեցողը ուրիշի մը ցաւը ու վիշտը կրնայ հասկնալ:

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւն, զի

նո՛ւա զԼսարուստ ցիտցեն»: (Մարգարէի 17:8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

Իբր Ս. Վարդանի թողները, մեր Աւարայրն ալ մեր աշխարհիկ կեանքն է: Մենք ալ իրեն նման «մաքուր սիրտով» եւ քաջութեամբ պարտ ենք այս մարտին մասնակցիլ: Մեր սայլին երկու անիւները պէտք է քաջութիւնը եւ յարատեւութիւնը ներկայացնեն. ճշմարտութիւնը եւ առաքինութիւնը՝ մեր դրօշակը. զօրութիւնը, ինքնագսպումը, բարեացակամութիւնը եւ անաչառութիւնը՝ չորս ձիերը. ներդրամտութիւնը, գութը ու անդորրութիւնը՝ սանցերը. Աստուածպաշտութիւնը՝ կառապանը. անյուզութիւնը՝ մեր վահանը. գոհունակութիւնը՝ մեր սուրը. բարեսիրութիւնը՝ մեր կացինը. տրամաբանութիւնը՝ մեր նիզակը. իմաստութիւնը՝ մեր աղեղը. խաղաղութիւնը,

պարտականութիւնը եւ վերհսկողութիւնն ալ՝ մեր նետերը. իսկ Յիսուս Քրիստոս ալ մեր անթափանցելի պաշտպանակը:

Ինչպէս Ը. գլխուն մէջ գրուած է, ամէն անձ ներքին լուռ ձայն մը ունի: Յոխորտանքը եւ շողոքորթութիւնը այդ ձայնը կը խափանեն եւ կ'ըսեն թէ բարոյականութիւնը տկարին կողմէ ստեղծուած թակարդ մըն է եւ պէտք է խաբուինք ու ծուղակը իյնանք: Անձի մը վերջնական անկումէն առաջ ընդհանրապէս իր խելքն ալ իր հաւասարակշռութիւնը կը կորսնցնէ: Թէ բարին եւ թէ չարը ամէն անձի մէջ գոյութիւն ունի: Մեզմէ կախեալ է անոնցմէ մին զատել: Քնացող մը կարելի է արթնցնել, բայց երբ արթուն մարդը կը քնանայ, ո՞վ կ'ընայ զինք արթնցնել:

Մարդ իր կեանքի ընթացքին զանազան դիրքեր եւ զանազան յարաբերութիւններ կ'ունենայ:

ա- Ասոնցմէ մին ընկերութիւնն է (friendship): Ճշմարիտ ընկերութիւնը նուիրական է, անձնական շահ չ'ակնկալէր, կասկած եւ վարանում չի գիտեր եւ բացարձակ վստահութիւն է:

բ- Երկրորդը ընտանեկան պարտականութիւնն է: Ընտանիքը փոքր կազմակերպութիւն մըն է: Իրենց ծնողքէն սէր եւ Աստուածահաճոյ կենցաղի մը ուղեցոյցը՝ վեհ բնոյթի մը կերտումը ստանալ ամէն զաւակի իրաւունքն է: Երբեմն սեւ ու մութ ամպեր արեւին ճառագայթները կը խափանեն: Բոլորս ալ անհաւատալի ընտանեկան կացութիւններու մասին կ'իմանանք՝ ճիշդ կենցաղէն պարզ շեղումէ, մինչեւ նոյնիսկ մանկասպանութիւն: Ընտանիքի մը մէջ, ամէն բանէ առաջ, համերաշխութիւնը, համաձայնութիւնը եւ վստահութիւնը անհրաժեշտութիւններ են:

Մանուկ մը տրամաբանելու կարողութիւնը չունի, որովհետեւ իր ուղեղը տակաւին լրիւ կազմուած չէ,

հետեւաբար մանուկները լաւագոյնս կը սորվին տեսնելով եւ օրինակներով: Նկատի ունենալով որ զաւակի մը առաջին դաստիարակները իր ծնողքն են, որով հօր եւ մօր պարտականութիւնն է միշտ իրարու հանդէպ սէր եւ յարգանք ցոյց տալ: Իրենց բոլոր խօսք եւ արարքներուն մէջ ճշմարտութեան ճամբայէն չչեղի՝ այսինքն երբեք սուտ չխօսիլ, բոլորի հանդէպ բարեացակամ ու գթասիրտ ըլլալ: Ի հարկէ բառացի յորդորներն ալ կարեւոր են եւ իրենց տեղը ունին, բայց պէտք է զանոնք անձնական օրինակներով ցոյց տալ, նա մանաւանդ անուղղակիօրէն: Ըստ Աստուածաշունչի երբեմն փոքր ծեծն ալ իր կարեւոր ազդեցութիւնը ունի: Մեծը մարմինը ցաւցնելու նպատակով պէտք չէ ըլլայ՝ այլ պզտիկին «Ես»ը: Մեծը, որ կու գայ իր ըրած վատ խօսքին կամ արարքին հետեւանք, մեծ դեր ունի պզտիկին ենթագիտակցականօրէն սորվեցնելու «ինչ որ ցանես ան կը հնձես» օրէնքը: Անտեղի ծեծն ալ սխալ է, քանի որ պզտիկը կը շուարի եւ պէտք եղած դասը չ'առնէր: Չափահաս զաւակը ծեծել սխալ է: Երբ անձը հասնի տրամաբանելու տարիքի, այլեւս ծեծի ժամանակն ալ անցած է: Տղուն չափահասութեան տարիքին ալ ծնողքին պարտականութիւնը սէրով յորդորել եւ «ինչ որ ցանէ ան պիտի հնձէ»ն իրեն յիշեցնել է: Բնաւ չղձգուհիլ, նամանաւանդ զաւակներուն երկայտութեան եւ միշտ փառք տալ Աստուծոյ, հոգ չէ թէ որքան որ ալ վատ ըլլան կեանքի պայմանները: Առանց ստիպողութեան մանուկին մէջ արծարծել Աստուածպաշտութեան գաղափարը՝ իր զանազան երեւոյթներով: Երբ այր եւ կնոջ միջեւ փոխյարաբերութիւնները կը վատթարանան եւ իրարու հանդէպ գոյուլթիւն ունեցող յարգանքն ալ կ'անհետանայ, անոնց մտային խաղաղութիւնը կը խանգարուի: Խաղաղութեան հետ երջանկութիւնը, իմաստութիւնը ինչպէս

նաեւ դատելու եւ զատելու կարողութիւններն ալ կը կորսուին: Անձն ալ ընկճուած, նոյնիսկ կրնայ մահուան հետ դէմ-առ-դէմ գալ: Բարեբախտաբար միայն քիչեր անձնասպանութեամբ մահը կ'ընտրեն: Կացութիւնը նոյնն է նաեւ երբ մարդ արարած իր ներքին Քրիստոսին հետ իր փոխ-յարաբերութիւնը խզէ: Իր անկումն ալ անխուսափելի կ'ըլլայ եւ ինքն ալ հոգեկան մահուան հետ դէմ-առ-դէմ կու գայ:

գ- Երրորդը աշակերտ եւ ուսուցիչի դերերն են: Ո՞վ աշակերտ է եւ ո՞վ ուսուցիչ: Այն անձը, որ իր «Ես»ը «կ'արձակէ», աշակերտ է: Առանց «Ես»ին անձը հեզ եւ խոնարհ կ'ըլլայ, հետեւաբար ընդունակ պատրաստ սորվելու: Իսկ այն անհատը, որուն ներկայութեան ինք իր «Ես»ը «կ'արձակէ», կ'ըլլայ իր ուսուցիչը: Իսկական ուսուցիչը միայն ճշմարտութեան ճամբան կը սորվեցնէ նաեւ վախը, մտահոգութիւնը եւ անձկութիւնը անձէն կը հեռացնէ: Ճշմարիտ ուսուցիչը աշակերտին մէջ իրեն հանդէպ հաւատք եւ յարգանք կ'արծարծէ: Անձի մը առաջին ուսուցիչին՝ իր ծնողքին, կը յաջորդեն դպրոցական կեանքի մէջ զայն դաստիարակողները, Փիզիքական յաջող կեանքի մը համար անհրաժեշտ տուեալները սորվեցնողները:

Բոլոր անոնք, որոնցմէ բան մը կը սորվինք մեր ուսուցիչները կ'ըլլան: Կան անձեր, որ ինքզինքնին ուսուցիչ կը համարեն, բայց աշակերտը ուսուցիչի մը կարողութիւնը շատ շուտ կը հասկնայ: Երբեմն պզտիկները ամենալաւ ուսուցիչները կ'ըլլան, որովհետեւ անոնց մէջ նենգութիւն չկայ եւ միշտ ճշմարտութիւնը կ'ըսեն: Բայց ընդհանրապէս չափահասները զիրենք կ'անտեսեն: Բնութիւնը ամենալաւ ուսուցիչն է: Մարդ արարած եթէ ուշիմ եւ ընդունակ ըլլայ եւ ուզէ բնութենէն դաս առնել, ուրիշ ուսուցիչի պէտք չ'ունենար: Բայց հարկ է որ բնութիւնը յարգէ եւ Աստուծոյ

վրայ հաւատք ունենայ, քանի որ բնութիւնը Աստուծոյ արտայայտութիւնն է: Պատշաճ է հոս պարզ օրինակ մը տալ: Երբ պտղատու ծառին քար նետենք, ծառը փոխարէնը մեզի պտուղ մը կը շնորհէ: Ասկէ կարելի է հետեւեալ դասը սորվիլ: Երբ մէկը մեզի դէմ վատ խօսք մը կամ վատ արարք մը ընէ, մենք ալ պէտք է զայն ազնիւ խօսքով կամ բարի արարքով փոխարինենք: Ճշմարիտ ուսուցիչը Աստուած՝ Քրիստոսն է: Ճիշտ ասոր համար Յիսուս ըսաւ.

«Բայց դու՛ն է՛ մի պէ՛տ կոչե՛լ վարդապետ պի մի է յեր ուսուցիչ... Եւ մի կոչեցի՛ ուսուցիչ, պի ուսուցիչ յեր Քրիստոսն է»: (Մարքէոս ԻԳ: 8,10)

«Բայց դուք Ռաբբի մի՛ կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս: ... Եւ դուք ուսուցիչներ մի՛ կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս:»

Քրիստոս իր ուսուցչութիւնը ոեւէ անձի չի պարտադրեր: Աշակերտը Ձինքը կը փնտռէ եւ իբր ուսուցիչ կը զատէ: Աս ալ պատշաճ կենցաղ, հեղութիւն, խոնարհութիւն, հաւատք եւ յարգանք կերտելով կ'ըլլայ: Մեր աւանդական սովորութիւնն ալ ասկէ ծագած է. մեր բոլոր ուսուցիչները մինչեւ մեր կեանքին վերջը յարգել: Այսօր ընդհանուր առմամբ, գոնէ արեւմուտքի մէջ, այս յարգանքը կը թուի կորսուած ըլլալ:

Ոսուցման մը յաջողութեան համար երկու անհրաժեշտութիւններ կան: Առաջինը, ոեւէ ուսուցիչի մը ուսուցումը որպէսզի արդիւնաբեր ըլլայ կարեւոր է որ աշակերտը զինք ընդունի իբր իր ուսուցիչը: Քրիստոս միշտ մեզի սորվեցնելու պատրաստ է, բայց մենք ընդհանուր առմամբ փարած ենք մեր «Ես»երուն քան թէ Ձինք զատելու իբր մեր ուսուցիչը: Իսկ

երկրորդն ալ՝ աշակերտը պէտք է բաց միտք մը ունենայ: Եթէ միտք մը գոց է, կամ հաւատալիքներով՝ խորհուրդներով լեցուն, չի կրնար նոր բան սորվիլ: Մարդ արարած ընդհանրապէս պատրաստ չէ նոր հայեացք մը, նոր տեսակէտ մը սորվելու: Ինք կը խորհի թէ իր հաւատացածը բացարձակ ճշմարտութիւն է: Ուրիշ ամէն ինչ սխալ է եւ այլեւս միտքն ալ գոցած, անկարելի է որ նոր բան մը սորվի: Բժշկական ասպարէզիս մէջ այս հայեցողութեան ականատես եղած եմ: Երբ կ'ուսուցանէի, կը նախընտրէի աշակերտ մը որ բնաւ չգիտնար, քան թէ աշակերտ մը որ սխալ բան սորված ըլլար: Այն որ սխալը սորված էր, անոր ճիշդը սորվեցնել շատ աւելի դժուար կ'ըլլար:

դ- Չորրորդը զինուորի մը պարտականութիւնն է: Ամէն անձ իր երկրին պաշտպանութեան պատասխանատուութիւնը եւ իրաւունքը ունի: Տիրապետելու կամ դրամի համար (վարձկան զինուոր) պատերազմիլ սխալ է: Եթէ աշխարհ կատարեալ ըլլար, ոչ բանակի եւ ոչ ալ զինուորի պէտք կ'ըլլար: Դժբախտաբար տակաւին այդ աստիճանին չենք հասած: Ուրեմն, երբեմն ինքնապաշտպանման համար պատերազմիլ անհրաժեշտութիւն կ'ըլլայ: Զինուորը պէտք չէ վախկոտ ըլլայ, քանզի վախը անհատէն անոր զօրութիւնը կը խլի: Զինուորը պէտք չէ դաւաճան ըլլայ: Զինուորի մը համար յոխորտանք եւ զօրութիւն ցոյց տալու նպատակով կռուիլ սխալ է: Զինուորը պարտ է պատերազմին մասնակցիլ, որովհետեւ այդ իր պարտականութիւնն է: Նպատակն ալ ի գին ամէն բանի իր լաւագոյնը ընել եւ յաղթանակել է: Ճշմարիտ յաղթանակը իրը կ'ըլլայ երբ ան կը կարողանայ արդարութիւնը զատել սխալ արարքներէն եւ պատշաճութեան սահմանը չանցնիլ: Պատերազմը շահելու համար երկու բանի պէտք կայ:

ա- Աստուծոյ վրայ հաւատք, բ- խանդավառանք:

Եթէ թշնամին ողորմութիւն խնդրէ, պէտք չէ անգութ ըլլալ: Անգէն թշնամին պէտք չէ վիրաւորել կամ մեռցնել: Զինուորը ինքզինք պէտք չէ հերոս հռչակէ, որովհետեւ առանց Աստուծոյ շնորհքին ոչինչ կրնար ընել: Հարկ է Գարեգին Ա. կաթողիկոսին Արցախի պատերազմին մասնակցող զինուորներուն տուած յորդորը գտնել ու մտիկ ընել:

ե- Հինգերորդը վարչական դիրքն է: Կառավարչական պաշտօն ունեցողները՝ թագաւոր, հանրապետութեան նախագահ, վարչապետ կամ պարզ կազմակերպութեան մը ատենապետ, երկրին կամ ընկերութեան վատ վիճակը պէտք չէ նախկին վարչականներուն վերագրել: Անցեալը չի կրնար ներկային հետ մրցիլ: Իրենց պարտականութիւնը կացութիւնը բարելաւել է: Ճշմարտութիւնը պարզ ծիսակատարութիւն մը չէ: Պարտականութիւն մըն է: Ուրիշի իրաւունքները ճանչնալ է: Քաղաքագէտեր միշտ կը խոստանան, բայց իրենց խոստումները չեն իրագործեր: Պէտք է ճշմարտութիւնը յարգեն: Իրենց դիրքին տուած զօրութիւնը ընդհանրապէս զիրենք կը կուրցնէ եւ ճշմարտութիւնը ալլեւս չեն տեսներ, հետեւաբար իմաստութիւնը եւ պաշտամունքն ալ կը թուին անհետանալ: Մարդ կը կարծէ թէ ինք զօրաւոր է, բայց կը մոռնայ թէ բոլոր զօրութիւնները Աստուծմէ տրուած են: Չանդրադառնար, թէ ժամանակը իրմէ շատ աւելի զօրաւոր է: Վարչականները պէտք է գիտնան իրենց սահմանը եւ զայն չանցնին, բայց զօրութիւնը (power) զիրենք կը խոտորեցնէ: Այն կառավարիչը որ զգայուն է եւ ժողովուրդին վիշտը կը զգայ, իր սահմանը չանցնիր եւ Աստուծոյ նախախնամութեան ապաւինելով իր պարտականութիւնը պարտաճանաչօրէն կը կատարէ: Երկիրը կամ կազմակերպութիւնը կը բարելաւէ: Իր

արարքները եթէ իբր հանրութեան ծառայութիւն, միշտ ինքնագսպումով, ներողամտութեամբ եւ բարեսիրութեամբ կատարուած են, Աստուծոյ շնորհքով միշտ կը յաջողի: Զօրութիւնը արդարութեան չափանիշը չէ, այլ արդարութիւնը պաշտպանելու համար է: Եթէ այդ զօրութիւնը արդար եւ վեհ նպատակներու համար գործածուի, ան նաեւ գործողը կը վերացնէ: Ան որ կը յաղթէ, պարտ է խոնարհ ըլլալ, քան թէ հպարտ: Երբ խաւարամտին զօրութիւն տրուի, ան, այդ զօրութեան սխալ գործածումով, ոչ միայն ուրիշներու, այլ նաեւ ինքզինքին մեծ վնասներ կը հասցնէ եւ աւերներ կը գործէ: Ի՞նչ եղաւ Հիթլէրի վախճանը: Ի՞նչ պիտի ըլլայ թուրքերուն վախճանը:

Երբեմն անձեր զանազան պատճառներով, կամ ակնկալութիւններով ճիշդ ճամբէն կը շեղին: Թոյնը անուշ է, բայց կը մեռցնէ: Առաջնորդներ՝ ընտանիքի մը, կազմակերպութեան մը, կամ երկրի մը, ոչ թէ միայն իրենց ժողովուրդը կը ներկայացնեն այլ նաեւ իրենք ալ այդ ժողովուրդին մաս կը կազմեն եւ անոր մէկ բաժինն են: Պարտ են այդ ընտանիքին կամ ժողովուրդին համար զոհուելու պատրաստ ըլլալ: Աշխարհ որքան փոխուած է: Անցեալին, երբ երկիր մը պատերազմի երթար, թագաւորը բանակին ամենէն առջեւէն կ'երթար, իսկ հիմա պատերազմի դաշտէն հեռու ամենապահօնով տեղը կը մնան:

Կառավարիչ մը պէտք չէ պատժէ, այլ պէտք է ըլլայ արդարամիտ եւ գթասիրտ: Կատարեալ կառավարիչ մը պէտք է ճգնաւորի մը պէս մեկուսանայ, բայց ոչ թէ Ֆիզիքապէս, այլ իր անձնական շահ եւ ակնկալութիւններէն: Ինչպէս ճգնաւոր մը ինքզինք Աստուծոյ կը նուիրէ, ան ալ ինքզինք պէտք է իր ժողովուրդին նուիրէ: Պէտք չէ կողմնակցութիւն ընէ եւ ոմանք ալ անտեսէ: Պարտ է բոլորն ալ հաւասար

տեսնել: Այսօր ականատես կ'ըլլանք, թէ երկիրներու մեծամասնութեան մէջ ընտրուողներ իրենց ընտրապայքարին նիւթապէս օժանդակողին կողմնակցութիւն կ'ընեն: Իրենք աւելի հաւատարիմ են իրենց կուսակցութիւններուն, քան թէ երկրին կամ ընդհանուր ժողովուրդին: Միթէ հարցը նոյնը չէ՞ր մեր հայ կուսակցութիւններու համար ալ: Փոխանակ ազգը միացնելու՝ բաժնեցին: Կը թուի թէ կազմակերպութիւններու, երկիրներու նոյնիսկ եկեղեցիներու կառավարիչները իրենց անձնական շահը կը խորհին, քան թէ ժողովուրդի բարելաւումը: Նման մօտեցումի վախճանը հաճելի պիտի չըլլայ: Արդեօք մենք ալ մեր ներկայ ազատ փոքր Հայաստանն ալ պիտի կորսնցնե՞նք:

Կառավարիչները նաեւ բնութիւնը պահելու եւ պաշտպանելու պարտականութիւնը ունին: Երբ ընկերութիւններ, քիչ մը աւելի շահ ապահովելու համար դժբախտաբար կ'ապականեն օղը, ջուրը եւ հողը կառավարիչները աչք կը գոցեն: Ահա՛ աս վերոյիշեալ կողմնակցութիւնն է: Նման ապականութիւններու արգելք հանդիսանալ իրենց պարտականութիւնն է: Իրենց այս թերութեան հետեւանք համայն մարդկութիւնը, կենդանական եւ բուսական աշխարհներն են որ պիտի տուժեն եւ կը տուժեն: Քաղցկեղը մահուան առաջնակարգ պատճառը եղած է: Մեր ճակատագիրը կերտողը մենք ենք:

Պարզ մահկանացուին խորհուրդը միշտ առարկայականին վրայ է, որով ինք անոնց հանդէպ որոշ հակում կամ կապուածութիւն մը կը կերտէ, ինչ որ իր մէջ անոնց տիրապետելու իղձ եւ փափաքը կ'արթնցնէ: Երբ ան կը ձախողի իր իղձն ու փափաքները իրականացնել, բարկութիւնը գինք կը գրաւէ: Բարկութեան հետեւանք ալ, ինք իմաստութիւնը ինչպէս նաեւ տրամաբանելու, դատելու ու գատելու կարողութիւնը

կը կորսնցնէ: Երբ իմացականութիւնն ալ կը խոտորի, ինք խելքը կը կորսնցնէ, ինչ որ իր անկումին պատճառ կ'ըլլայ: Փորձութիւնն ալ իմացականութիւնը կը խանգարէ: Առանց իմացականութեան մարդը իր խաղաղութիւնը կը կորսնցնէ: Կը կորսնցնէ նաեւ խաղաղութիւնը տաժանքէն զանազանելու կարողութիւնը: Աս ալ պատճառ կ'ըլլայ որ ինք ապերջանիկ ըլլայ, հետեւաբար դժբախտութիւնը միշտ իրեն կը հետեւի:

Անձը պարտ է իր զգայարանքներուն եւ զգացումներուն վրայ իշխանութիւն ունենալ: Անոնց, նաեւ իր վեցերորդ զգայարանքը՝ միտքը եւ խորհուրդները, պարտ է զսպել: Պէտք չէ որ իր զգացումները իշխանութիւնը ձեռք անցնեն ու ինք անոնց կողմէ կառավարուի: Պարզ մարդը միշտ փորձուելու վտանգի մէջ է, որովհետեւ ընդհանրապէս ան իր զգացումներուն կողմէ կը կառավարուի: Ուտելիք կ'ուզէ, որովհետեւ անօթի է, կամ ջուր՝ որովհետեւ ծարաւ է, կամ տուն՝ որպէսզի բնութեան փոթորիկներէն պաշտպանուի: Իր բոլոր խորհուրդները անձնակեդրոն են: Ճշգրիտ կենցաղը զատող մարդուն խորհուրդները անձնուրաց կ'ըլլան: Երբ խաւարամիտ մարդը վառելանիւթի պէտք ունենայ, ծառերը անխնայ կը կտրէ: Իսկ կատարեալ մարդը անտառին, ծառերուն եւ բնութեան օգուտը նկատի առնելով ծառերը ըստ այնմ կը կտրէ: Կատարեալ մարդն ալ դժուարութիւններու հետ դէմ-առ-դէմ կու գայ: Բայց ան բոլորին օգտին համար լուծում մը գտնել կը ջանայ: Ան ալ անօթի կը զգայ, բայց անօթութեան՝ սովին լուծում մը գտնել կը ջանայ: Զգացական մարդն ալ ինքզինք կատարեալ ընելու կարելիութիւնը ունի: Ինք կը նմանի գետի մը, որ առանց գիտնալու թէ ուր կ'երթայ, արագ արագ կը հոսի, եւ վերջապէս իր բոլոր ջուրը կը մսխէ եւ ծով թափելով կը վատնէ: Իսկ կատարեալ մարդը ծովու կը

նմանի, ան իր սահմանը գիտէ եւ այդ սահմանը չանցնիր: Իդձերու եւ փափաքներու ողողումը գետի նման մարդու մտքին մէջ կը հոսի եւ մարդ չի գիտեր թէ զինք ուր կը տանի: Իսկ կատարեալ մարդն ալ նման իդձ եւ փափաքներ կրնայ ունենալ, բայց ինք ծովու նման զանոնք կը կլլէ եւ անոնցմէ չ'ազդուիր եւ իր սահմանը չ'անցնիր:

Ուրախութիւն եւ տխրութիւն՝ երջանկութիւն ու վիշտ, մարդկային կեանքին երկու անիւններն են: Անտարակոյս ամէն անձ թէ՛ ուրախ եւ թէ՛ տխուր ժամեր կամ օրեր կ'ունենայ: Անոնց բոլորն ալ անձին անցեալի խորհուրդ, խօսք ու արարքներէն կախեալ են: Այն անձը, որ իր ամենադժուարին օրերուն ալ իր հաւատքին մէջ հաստատ կը մնայ, ան ճշմարիտ Աստուածապաշտը կ'ըլլայ:

Ընդհանուր առմամբ մարդ երեք տեսակ վիշտի ենթակայ է.

ա- Ֆիզիքական ցաւ. որ երեսի ժպիտը կը խլէ:

բ- Մտային վիշտ. Երբ մեր իդձ եւ փափաքները չենք կրնար իրականացնել, կը կորանցնենք մեր խաղաղութիւնը եւ երջանկութիւնը, հետեւաբար մեր անդորրութիւնը:

գ-Անհամաձայնութեան վիշտ. Երբ անձը իր ընտանեկան կամ ընկերային կեանքի մէջ իր սիրելիներուն հետ անհամաձայնութիւններ կ'ունենայ, ընտանեկան կամ ընկերական համերաշխութիւնն ալ այլեւս գոյութիւն չ'ունենար: Աս ալ անձէն կը խլէ խաղաղութիւնը եւ չ'արտօներ որ հետեւի հոգեւոր ճանապարհին: Ամէն մի անհատի, ի գին ամէն բանի, իր մտային խաղաղութիւնը պահելը կարեւոր է: Շատերու համար տազնապի եւ տառապանքի շրջանին հաւատքը եւ մտային խաղաղութիւնը պահել կը դժուարանայ: Այս իրողութեան նոյնիսկ պարզ անդրադարձն անգամ

իր հետ որոշ չափով խաղաղութիւն եւ երջանկութիւն կը բերէ: Մարդ միայն երկու յատկութիւններու պէտք ունի:

ա- Հաւատք: Հաւատքէն Աստուածպաշտութիւնը կը ծագի: Հաւատք, թէ ամէն ինչ կատարեալ է եւ ինչ որ կը պատահի պէտք է որ պատահի եւ ի վերջոյ մեր օգտին համար է որ կը պատահի: Ուրեմն փոխանակ վատ պատահարներէն զանգատելու, զանոնք իբր մէկական դաս տեսնել եւ ինչ որ պիտոյ է սորվիլը կարեւոր է: Նաեւ հաւատալ, թէ Քրիստոս իր պատշաճ ժամանակին՝ երբ մենք մեր դասը սորված ենք, ամէն ինչ պիտի լուծէ, ապա թէ ոչ մինչեւ դասը սորվինք պատահարները պիտի կրկնուին, ինչպէս դասարանը մնացող աշակերտ մը նոյն դասերը կը կրկնէ:

բ- Համբերութիւն: Երբ անձը համբերութիւն ունենայ, իր խաղաղութիւնը չի կորսնցներ: Ինք լաւ գիտէ թէ ամէն լաւ ու վատ կացութիւններ ժամանակաւոր են եւ ուշ կամ կանուխ վերջ պիտի գտնեն: Ինք համբերութեամբ եւ հաւատքին պարգեւած զօրութեամբ ճակատագրէն՝ Աստուծոյ, որոշուած նախախնամեալ օրուան ու ժամուն կը սպասէ: Բոլոր անոնք, որոնք հաւատք ունին եւ չեն շեղիր իրենց հաւատքէն ու համբերութեամբ կը սպասեն Աստուծոյ կամքին, անոնց համար ամէն ինչ կատարեալ կ'ըլլայ:



ՄԱՐԴԵ ԵՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Եթէ ամէն անձ, իր կամքէն անկախ, Աստուծմէ տրուած ճակատագրի մը ենթակայ է, որեւէ արարք որ կը պատահի իմաստ չ'ունենար: Հետեւաբար մարդ իր ճակատագրին պատասխանատու է: Ճակատագրին յատկանշականութիւնը այն է, թէ այն բոլոր փորձառութիւններուն որոնց պիտի ենթարկուինք միայն Աստուած գիտէ: Ամէն մի անհատ այս աշխարհի մէջ կը նմանի ովկիանոսի մէջի մէկ կաթիլին: Միայն Աստուած գիտէ թէ ովկիանոսին որեւէ մէկ տեղը ինչ պիտի պատահի: Մարդ կարող չէ հետեւցնել ու տեսնել իր խորհուրդներուն ու արարքներուն իր ճակատագրին հետ ունեցած կապը: Յոխորտանքը հասկացողութիւնը կը քանդէ եւ արգելք կը հանդիսանայ որ անձը այդ կապը չկարենայ տեսնել, բայց աս ըսել չէ թէ անձը իր ճակատագիրը չէ կերտած: Երբ մարդ իր խորհուրդներով եւ արարքներով իր ճակատագիրը կը կերտէ, Աստուած ամենեւին չ'արգիլեր, սակայն շատ անգամ կը զգուշացնէ որպէսզի ան չգործէ այն արարքները որ ապագային իրեն վնաս պիտի հասցնեն: Դժբախտաբար, շատ անգամ, այդ ձայնին մտիկ չենք ըներ եւ մեր ընթացքը չենք փոխեր: Մեր ապագան մեր ձեռքերուն մէջն է: Զարմանալիօրէն մարդ արարած իր կեանքի վատ պատահարները Աստուծմէ տրուած ճակատագիր կը կոչէ եւ նոյնիսկ երբեմն մատը երկինք երկարելով Աստուած կը մեղադրէ: Ինք չ'անդրադառնար թէ երբ մէկ մատը դէպի երկինք կ'երկարէ, միւս երեք մատներն ալ դէպի իրեն ուղղուած կ'ըլլան եւ զինք ցոյց կու տան:

«Զի զոր ինչ սերմանէ մարդ գնոյն եւ հնձեսցէ՛», որով մարդ արարած ինք իր բախտին աստուածն է: Ճակատագիրը փոխել անկարելի է, նոյնիսկ Աստուած չի միջամտեր, որովհետեւ գրուած է, թէ Ս. Հոգիի դէմ

եղած մեղքը աններելի է: Ուրեմն աւելի լաւ է վատ ճակատագիր մը չկերտել:

Մարդը, Մեղքն ու Արարչարարութիւնը

Մարդը ընկերային էակ մըն է: Ընկերութիւնը (society) մեզի մաս չի կազմեր, այլ մենք ընկերութեան մաս կը կազմենք: Ան որ ընկերութեան օգտակար է, մեզի ալ օգտակար է: Ընկերութեան մէջ ամէն անձի պարտականութիւն մը տրուած է: Հետեւաբար հանրութեան բարելաման համար, ամէն անձ պարտ է իր պարտականութիւնը լիովին կատարել: Միայն աս է փրկութեան ճամբան: Ահա թէ այս ուղղութեամբ ինչ կ'ըսէ Քրիստոս.

«... Լմէն ասե՛մ յեւ, որովհետեւ արարել է միտմամբ յեղբայրացս այսոցիկ փոշրականց՝ ինչ արարել է»: (Մատթէոսի ԻԵ:40)

«... Քանի իմ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի՛ ըրիք»:

«... Լմէն ասե՛մ յեւ, որովհետեւ ո՛չ արարել է միտմամբ ՚ի փոշրականցս յայսոցանէ, եւ ո՛չ ինչ արարել է»: (Մատթէոսի ԻԵ:45)

« ... Քանի ասոնց փոքրագոյններէն մէկուն չըրիք՝ ինծի՛ չըրիք»:

Անձնական ակնկալութիւններով եղած արարքներ եւ գործունէութիւններ մեզ փրկութեան ճանապարհէն կը հեռացնեն: Փորձութիւնը, կարծէք առանց խորհելու վերոյիշեալ գործունէութիւններու հետեւանքները, հարկադրիչօրէն մեզ աւելի ստացուածքներ դիզելու կը մղէ: Փորձութիւնը, ինչպէս նախապէս յիշուած էր, իմաստութիւնը եւ իմացականութիւնը կը քանդէ: Այն անհատը, որ անձնասէր կ'ըլլայ, մեղաւոր է:

Երբ չենք մասնակցիր կեանքի անիւին՝ բնութեան

գնացքին, կեանքը անիմաստ կ'ըլլայ: Ամէն անձ այդ ընդլծեան մէջ պարտ է գիտնալ եւ որոշել իր պարտականութիւնը ու համապատասխանօրէն գործել: Դժբախտաբար մարդուս եսասիրութիւնը զինք իր ըրածին վարձատրութիւնը փնտռելու կը մղէ: Այս տրամադրութիւնն է որ անհատը ընկերութենէն կը հեռացնէ եւ զինք աւելի խորունկ շահու եւ վնասի ծուղակին մէջ կը մղէ: Այն անձը որ եսասիրութեան մտածումներ ունի, նոյնիսկ առանց որեւէ արարքի, արդէն իսկ մեղք կը գործէ: Ամէն անգամ որ փորձութեան տեղի կու տանք եւ հանրութեան շահերը մեր «Ես»ի շահերէն աւելի բարձր չենք կրնար պահել, ճշմարտութիւնը կը խաչենք: Ըշմարտութեան պաշտպանութիւնը ամենեւին չար չի կրնար ըլլալ եւ վնաս հասցնել:

Այն անհատը որ հպարտութեամբ յոխորտալից հայեացք մը ունի հանդէպ իր ազգութեան, ցեղին, կրօնքին եւ նոյնիսկ իր սեռին, ամբարտաւան, խաւարամիտ եւ անմիտ անձ մըն է:

Գիտէ՞ք, սատանան ինչո՞ւ սեւ անհատի մը կերպարանքով, երկու կոտորով եւ ծայրը նետաւոր պոչով մը կը ներկայացուի: Անոր սեւ գոյնը անձին խաւարամտութիւնը կը ներկայացնէ: Երկու կոտորները, որ գլուխէն դէպի դուրս կը ցցուին, իր մտքի ուղղութիւնը ցոյց կուտան՝ դէպի դուրս աշխարհիկ շլացուցիչ «սա», «դա» (տա) եւ «նա»երը: Իսկ պոչին ծայրի նետն ալ, դէպի դուրս ցոյց տալով, աշխարհի սեռային հաճոյքները կը ներկայացնէ:

Սատանան անձէն դուրս անհատ մը չէ: Ան անձին «Ես»ն է, որ անձը հոգեւոր ճանապարհէն կը խոտորեցնէ: Մարդ, իրեն պատահած վատ պատահարներուն պատասխանատուութիւնը փոխանակ իր վրայ առնելու եւ իր ընթացքը շտկելու, արտաքին սատանայ մը

ստեղծած է եւ իր բոլոր վիշտերուն համար կը զբաղի զայն մեղադրելով:

Չար մարդուն բախտը միշտ վատ պիտի ըլլայ: Մարդուն հետապնդած եսասիրական չար կենցաղին հետեւանք, համայն ստեղծագործութիւնն ալ զանազան եւ բազմաթիւ ուղղութիւններով կ'ընթանայ, փոխանակ միայն մէկ ուղղութեան՝ դէպի Աստուածայայտնութիւն: Մարդու միտքն է որ իր մարդկայնականութենէն (humanism) շեղելուն պատճառը կ'ըլլայ: Մարդ իրմէ դուրս ոեւէ անձ, ցեղ կամ կրօնք պէտք չէ թշնամի համարէ: Իսկական եւ ամենամեծ թշնամին իր մէջն է՝ իր «Ես»ը: Երբ անձ մը ուրիշի մը ցաւ կամ վիշտ կը պատճառէ, արդէն մեղք կը գործէ: Անիրաւութիւնը միշտ մեղք գործելու տեղի կու տայ: Մեղքն ալ ամէն տեսակի ապականութեան պատճառ կ'ըլլայ: Այս վերջինն ալ թէ անհատին, թէ ալ ընկերութեան կեանքէն ներս բռնապետութեան ծագման պատճառ կ'ըլլայ: Մեղաւորին մեղքին մէջ իր կործանումի հունտը կը գտնուի: Փառասիրութիւնը բարգաւաճման, խաղաղութեան, անդորրութեան եւ երջանկութեան ամենամեծ արգելքն է:

Անձի մը կամ ընկերութեան կեանքին մէջ, եթէ որեւէ բարի արարքի մը որեւէ բան միշտ արգելք կը հանդիսանայ, կը նշանակէ թէ հիմնական փոփոխութեան մը կարիքը կայ:

Այն վայրկեանին որ անձ մը իր գործած սխալին՝ մեղքին կ'անդրադառնայ, արդէն Աստուածային ներողամտութեան դռները կը բացուին: Ապաշխարութիւնը, միտքը եւ հոգին աշխարհիկ «սա», «դա» (տա) եւ «նա»երու հետապնդումներէն հեռացնելն է: «Ապ» նախադաս մասնիկով տուեալ բառին հականիշ իմաստը տուող բառը կը շինուի: Աշխարհ(հ)ել՝ աշխարհի «սա», «դա» (տա) եւ «նա»երու՝ շլացուցիչ ընթացքներուն

հետեւելի կը նշանակէ, իսկ ապաշխարելն ալ ճիշդ հակառակը՝ անոնցմէ չհրապուրուելի եւ անոնցմէ ձերբազատուելն է: Ապաշխարութիւնը Աստուածապատկեան սկիզբն է: Ապաշխարութեան լուծեան մէջ անձը իր վիշտը եւ տխրութիւնը պաշտամունքի կը փոխէ եւ իր ամէն մէկ արցունքի կաթիլը պաշտամունքի մարգարիտ մը կ'ըլլայ:

Խաղաղութիւնը եւ փրկութիւնը իրարու հետ կապ ունին, բայց նոյն բանը չեն: Խաղաղութիւնը ճիշդ կենցաղին արդիւնքն է, իր պտուղը կու տայ եւ անձին մտքին կապուած է: Փրկութիւնն ալ Աստուածապատկեան հետեւանք Աստուածային պարգեւատուութիւն մըն է: Աս «Ես»էն ու աշխարհէն բացարձակապէս անջատմամբ եւ Աստուծոյ անձնատուութեամբ կարելի կ'ըլլայ: Միտքը Աստուծոյ վրայ կեդրոնացուցած Զինք որպէս մեր Տէրը, մեր Ընկերը եւ մեր Սիրահարը կը նկատենք: Պէտք է գործենք այնպիսի հայեացքով մը որ բոլոր արարքները Իրեն ընծայուած ըլլան: Պարտ ենք մինչեւ մեր վերջին շունչը Իրեն ծառայել: Մարդ արարած, իր անկման հետեւանք, Աստուծոյ իր մէջ ներկայութեան գիտակցութիւնը կորսնցուցած է: Այն անձը որուն միտքը անընդհատ Աստուծոյ վրայ կը կեդրոնանայ, միշտ Զինքը պիտի գտնէ: Անհատը ինչպիսի զգացումով որ Աստուծոյ կը մօտենայ, նոյն ձեւով ալ կը գտնէ եւ կը տեսնէ Զայն՝ իբր Տէր, Ընկեր ու Սիրահար: Որպէսզի աս պատահի «Ես»ին վերջնական եւ անթերի մահը անհրաժեշտութիւն է: Այդպէսով սէրը եւ երանութիւնը անձին էութեան մէջ ինքնաբերաբար կը յայտնուին, քանի որ անոնք արդէն անձին էութեան բնութիւնը եւ ճշմարտութիւնն են: Աստուած բոլորին նոյն ձեւով կը յայտնուի: Բայց մենք ըստ մեր հասկացողութեան Զինք տարբեր ձեւերով կը տեսնենք: Ան Մովսէսին երեւցաւ բոցավառ, բայց

չսպառող մորենիի ձեւով, Աբրահամին՝ իբրեւ երկնային ձայն մը, Բաղասամին՝ որպէս անոր խօսող հըը, Յիսուսի մկրտութեան ատեն՝ իբր աղանի, աշակերտներուն՝ պենտեկոստէի օրով որպէս հրեղէն լեզուներ, Պօղոսին՝ Դամասկոսի ճամբուն վրայ, փայլակի պէս երկինքէն լոյսի եւ ձայնի նման, իսկ Ստեփանոսին՝ իբր երկինքի թագաւորութեան պատկերացում՝ Հայրը նստած իր գահին վրայ եւ աջ կողմն ալ՝ Քրիստոս:

Պարտականութիւնը կրօնք մը կամ հաւատք մը չէ, բայց պէտք է բարեսիրական ըլլայ: Սխալ նպատակաւ կատարուած պարտականութիւնը կրնայ մեղքի տեղի տալ: Հարկ է չմոռնալ թէ ի վերջոյ ճշմարտութիւնը միշտ կը յաղթէ: Նկատի առնելով որ մարդկային ընդհանուր կենցաղը օրէ օր կը վատթարանայ, կը թուի թէ Աստուած եղած չարութիւններուն նկատմամբ անտարբեր է: Ոմանք, ի դիմաց այս կարծեցեալ անտարբերութեան, ինքզինքնին կը համոզեն թէ Աստուած գոյութիւն չունի: Աստուած գթասիրտ է եւ մարդկութիւնը կը սիրէ: Աստուած նաեւ շատ համբերատար է եւ մարդուն բազմաթիւ առիթներ կու տայ, որպէսզի ան ապաշխարէ, հետեւաբար իր միջամտութիւնը կ'ուշացնէ: Բայց մարդ փոխանակ ապաշխարելու, աւելի խաւարամտութեան մէջ կը մխրճուի եւ կ'ուզէ բռնապետութեամբ բոլորին իշխել: Աստուած ալ մարդեղանալով՝ ինչպէս Յիսուս, իր շուրջ սէր եւ ճշմարտութիւն կը սփռէ եւ զանոնք հաւատացեալներու սիրտերուն մէջ կը ցանէ:

Երբ մեղքի եւ ապաշխարութեան մասին քննարկենք, պատշաճ է որ հետեւեալ համարներուն իմաստին մասին լաւ եւ ճիշդ հասկացողութիւն մը ունենանք:

«Լմէն ասեմ յեզ, պի ամենայն թողցի

որդ-ոց մարդկան մեղէ՛լ է-
 Լայճոյո-թիւնէ՛ որչափ է- Լայճոյեացէն,
 Բայց որ Լայճոյեացէ պԼոճին սո-րԲ, ոչ
 ունիցի Թողո-թիւն յա-իտեան, այլ
 պարտապան լիցի յա-իտեանիցն մեղաց» :
 (Մարկոս Գ:28-29)

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ ամէն մեղք պիտի ներուի
 մարդոց որդիներուն եւ Հայճոյութիւնները՝ որչափ որ
 Հայճոյեն. Բայց ով որ Սուրբ Հոգիին դէմ Հայճոյէ,
 յաւիտեան թողութիւն պիտի չունենայ, Հապա
 յաւիտեանական դատատանին պարտաւոր պիտի ըլլայ»:

«Եւ ամենայն որ ասէ Բան պորդ-ոյ մար-
 դոյ, Թողցի նմա. Բայց որ պԼոճին սո-րԲ
 Լայճոյեցէ, մի Թողցի նմա» : (Դուկաս ԺԲ:10)

«Ամէն ով որ Որդի մարդոյ դէմ բան ըսէ, պիտի ներուի
 անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ Հայճոյութիւն
 ընէ, պիտի չներուի անոր»:

«... ամենայն մեղէլ է- Լայճոյո-թիւնէ՛
 Թողցին մարդկան, Բայց պԼոճ-ոյն
 Լայճոյո-թիւն մի Թողցի» : (Մարթէոս ԺԲ:31)

«... Ամէն մեղք ու Հայճոյութիւն պիտի ներուի մարդոց.
 բայց Սուրբ Հոգւոյն դէմ եղած Հայճոյութիւնը պիտի
 չներուի մարդոց»:

*Ընդհանուր առմամբ երեք տեսակ գլխաւոր
 մեղքեր կան որ մարդ արարած կը գործէ:*

*ա- Մեղք իր Հօր՝ Հայր Աստուծոյ դէմ. Անոնք,
 որոնք Աստուծոյ չեն հաւատար կամ կը հաւատան բայց
 իրեն կը բարկանան ու կը հայճոյեն, անոնք, որոնք
 ստեղծագործութեան մէջ իր գիտութիւնը, իր սէրը եւ
 իր գեղեցկութիւնը չեն տեսներ մեղանչած կ'ըլլան:*

Բայց երբ անձը անդրադառնայ իր մեղքին եւ ճշմարտապէս ապաշխարհէ, Աստուած ալ անձին այս մեղքերը կը ներէ եւ կը սրբէ: Աստուած ներողամիտ, գթասիրտ եւ ողորմած է: Անձը գրկաբաց կը դիմաւորէ, ինչպէս կը ներկայացուի Աւետարանի «Անառակ Որդի» առակին մէջ:

բ- Մեղք Իր Որդւոյն Քրիստոսի դէմ: Անոնք, որոնք չեն կիրարկեր այն ինչ որ Յիսուս Քրիստոս սորվեցուց կը մեղանչեն: Աս ի՞նչ կը նշանակէ: Քրիստոս նաեւ ամէն մի անհատի մէջ ներկայ է եւ անձին հոգին կը ներկայացնէ: Բոլորս ալ ուրեմն Աստուծոյ որդիներ ենք եւ իր «հաւնած որդին» ըլլալու կարողութիւնը ունինք: Ամէն մի անհատի հոգին Աստուծոյ մի մասնիկն է: Երբ մեր կեանքի սանձերը Քրիստոսէն առնելով մեր «Ես»երուն կու տանք, Որդւոյն դէմ մեղանչած կ'ըլլանք: Բայց այն վայրկեանին որ կ'անդրադառնանք մեր գործած մեղքին եւ կ'ապաշխարենք՝ մեր կեանքի սանձերը «Ես»էն կ'առնենք եւ մեր ներքին Քրիստոսին կը յանձնենք եւ Յիսուսի սորվեցուցածները կը կիրարկենք, մեր մեղքն ալ ներուած ու սրբուած կ'ըլլայ: Առաջինը՝ կեանքի սանձերուն Քրիստոսի տրուելը, առանց երկրորդին՝ Յիսուսի սորվեցուցածները կիրարկելու, կարելի չ'ըլլար:

գ- Մեղք Ս. Հոգիին դէմ: Ըստ վերոյիշեալ համարներու այս մեղքը աններելի է: Ս. Հոգիին դէմ գործուած մեղքը ի՞նչ կրնայ ըլլալ, որ աններելի կը նկատուի: «Գիտութիւն եւ Կրօնք» գլխուն մէջ տեսանք թէ ինչպէս բոլոր ստեղծագործութիւնը Ս. Հոգիի զօրութեամբ ի յայտ եկած էր: Ան ինչ որ գոյութիւն ունի Աստուծոյ զօրութեան՝ Ս. Հոգիին արտայայտութիւնն է:

Այս արտայայտութիւնը բոլոր տիեզերքի, բոլոր

բնութեան, բոլոր բոյսերուն ու կենդանիներուն եւ հարկաւ մարդկութեան ամբողջութիւնը կը ներկայացնէ: Ուրեմն, ասոնցմէ մէկուն դէմ գործուած որեւէ ժխտական արարք, Ս. Հոգիի դէմ գործուած մեղք մը կը համարուի: Հետեւաբար բոլորն ալ աններելի կ'ըլլան: Այս մեղքին աններելի ըլլալը Աւետարանին մէջ տարբեր ձեւով ալ մեզի ցոյց տրուած է: Հետեւեալ համարն ալ այդ տարբերակ զգուշացումն է, որ նման մեղք չգործենք:

«Մի՛ խաբի՛, Լսարուստ ո՛չ արհամարհի՛:

Զի՛ ցոր ինչ սերմանէ մարդ ցնոյն է-

Ննջեացէ՛»: (Գաղատացիս .9:7-8)

«Մի՛ խաբուիք՝ Աստուած չի ծաղրուիր, որովհետեւ ի՛նչ որ մարդ կը սերմանէ՝ գա՛յն ալ պիտի հնձէ»:

Քանի որ բոլոր ստեղծագործութիւնը Ս. Հոգիի զօրութիւնը կը ներկայացնէ, ուրեմն ստեղծագործութեան մէջ որեւէ «բանի» որեւէ տեսակի վնաս հասցնել, գայն կազմող զօրութեան վնաս հասցնել կը նշանակէ: Բայց պէտք չէ մոռնանք որ մենք ալ այդ նոյն զօրութեան արդիւնքն ենք: Ուրեմն ոեւէ անձի եւ բնութեան որեւէ մասին վնաս հասցնել, կը նշանակէ մեզ կազմող զօրութեան՝ մեր անձերուն վնաս հասցնել: Ասկէ ծնունդ կ'առնէ «ինչ որ ցանես ան կը հնձես» օրէնքը: Երբ կ'ըսուի. «նոյնիսկ Աստուած իր դրած այս օրէնքին դէմ չի գործեր», այն օրէնքին աններելի ըլլալն է որ կը մատնանշուի: Այս մեղքերը կ'ըլլան մեր «պարտք»երը: Մեր կեանքի բոլոր ժխտական պատահարներն ալ այս «պարտք»երուն հետեւանքն են: Ան որ մարդ խօսքով չի սորվիր, պարտ է փորձառութիւնով սորվիլ: Վերոյիշեալ համարներէն մէկուն մէջ նաեւ շեշտուած է. «Հապա յաւիտենական դատաստանին

պարտաւոր պիտի ըլլայ»: Ընդհանուր առմամբ մարդ կը կարծէ թէ յաւիտեան՝ անվերջ ժամանակ պիտի չարչարուի: Յաւիտեանականութիւնը անվերջ ժամանակ չէ, այլ ժամանակի դրութենէ դուրս ըլլալ է: Այո, այդ մեղքերը մեր պարտքերը պիտի ըլլան եւ նոյնիսկ մեր մահէն յետոյ այդ պարտքերը պիտի մնան մեր հոգիներուն մէջ, մինչեւ որ «վճարուին»: Երբ մարմինը կը մեռնի ժամանակն ալ կ'անհետանայ: Պէտք չէ մոռնանք, որ զօրութիւնը տեղեկութիւն կը պարունակէ: Երբ այդ հոգին դարձեալ մարմին մը առնէ, այդ մարմինը այդ պարտքերուն համապատասխան կ'ըլլայ: Տարբերակ ծնունդներուն պատճառն ալ աս է:

Մեր մարմիններն ալ այդ զօրութեամբ կազմուած են: Երբ մենք մեր մարմինն դէմ անխոհեմութեամբ կը վարուինք, օրինակ՝ ծխելով կամ որկրամոլութեամբ, այսինքն մեր մարմինն դէմ մեղք կը գործենք, նոյնիսկ երբ անդրադառնանք մեր գործած սխալին եւ կենցաղը շտկենք՝ այսինքն «ապաշխարենք», առաջուց գործած մեղքին պատիժը միթէ հիւանդանալով չէ՞ որ կը կրենք: Վերոյիշեալ «մեղք»երուն հետեւանք յառաջ եկած հիւանդութիւնները այսօրուայ բժշկութիւնը շատ լաւ դասաւորած է: Երակի խցումի հետեւանք՝ սրտի տագնապ կամ ուղեղային կաթուած, ծխելու հետեւանք՝ քաղցկեղի հիւանդութիւն, բոլորն ալ սերտ կապ ունին վերոյիշեալ մարդկային տկարութիւններուն հետ:

Հետեւաբար ինչ որ կ'ընենք, մենք մեզի կ'ընենք, մենք կը վնասուինք: Նաեւ ինչ որ ուրիշին վնաս կը հասցնենք, դարձեալ մենք մեզի կը վնասենք: Եւ ինչ չափով որ վնաս կը հասցնենք բնութեան, նոյն չափով ալ մենք մեզի կը վնասենք: Որովհետեւ ինչ որ կ'ընենք անոնց, զանոնք կազմող զօրութեան է որ կ'ընենք, որ Ս. Հոգին է եւ այս մեղքն ալ կ'ըլլայ աններելի: Աններելի

ըլլալը այնքան բացայայտ է որ, երբ Յիսուս հիւանդները դարմանեց, թէեւ անոնց մեղքերը ներեց, սակայն պարտքերը չանհետացան, այլ իր ողորմածութեամբ ինք զանոնք իր վրայ առաւ: Միթէ չե՞նք ըսեր, թէ Յիսուս մեր մեղքերուն համար մեռաւ:





ՅՈՒՇԵՐ ԴՐԱՄՏԻ



Երբ ետ ակնարկ մը ըրի իմ կեանքին,
 Շարժանկարի ժապաւենի մը նման
 Բազում պատաճարներ վատ ու անգին
 Անցան աչքիս առջեւէն շարան-շարան:

Մեծ զարմանքի պատճառ մըն էր ինձի
 Ուրախութեան զգացումը Հանդէպ բոլորի,
 Նաեւ դժուար ու վատ պաճերը կեանքի
 Չնկատեցի նոյնիսկ մէկ բոպէն փոխելի:

Անտարակոյս շատ վատ պատաճարներ
 Խանգարած էին անդորրութիւնն իմ,
 Բայց բոլորն ալ էին անհրաժեշտ պաճեր
 Չեակերպէրու անհատականութիւնն իմ:

Կեանքը դրախտ մըն է եթէ փափաքինք,
 Բայց շատ դիւրաւ դժոխքի կը վերածենք
 Եթէ խաւարամտութեամբ «Ես»ին փարինք,
 Եւ մեր բոլոր օրերը «քունի» մեջ անցնենք:



Աշխարհը՝ Աստուծոյ ստեղծագործութիւնը
 Կը ցոլացնէ աստուածային գեղեցկութիւնը,
 Մարդուն ալ տուաւ Իր գիտակցութիւնը,
 Որ ան Հին տեսնէ սիրոյ արտայայտութիւնը:

Գրաւիչ երաժշտութեան մէջ զԻնք իմանալ,
 Ծաղիկի մը բոյրին մէջ ալ զԻնք Հոտոտել,
 Մօր մը գգուանքին մէջ Իր Հպումը զգալ,
 Իսկ անուշ պտուղին մէջ ալ զԻնք Համտեսել:

Եթէ քունէն արթնանք ու բանանք աչքերը
 Պիտի տեսնենք, թէ՛ բնութիւն եւ թէ՛ մարդ,
 Կը ներկայացնեն զանազան պատկերները
 Իր գեղեցկութեան՝ որպէս աշխարհի զարդ:

Վ. Ս.





-Ե-

ԵԿԵՂԵՑԱ..., ԿՐՕՆԱ..., ԹԷ
ԱՍՏՈՒԱԾԱՍԻՐՈՒԹԻՒՆ



ԵԿԵՂԵՅԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ԿՐՕՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ԹԷ ԱՍՏՈՒԱԾԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՅԱՍԻՐՈՒԹԻՒՆ

«Աւելի քան 1700 տարի առաջ քրիստոնէութիւնը պաշտօնական կրօնք հռչակուելէ յետոյ Առաքելական Եկեղեցւոյ պատկանիլը դարձաւ պարտադիր պայման հայերու համար: Նոյնիսկ հեթանոսական քուրմերու մէկ մասը ընդունեցին հաւատքն ու դարձան քրիստոնէայ քահանաներ: Առաքելական եկեղեցւոյ դաւանիլը հայերու համար միս ու արիւն է եղեր երկար ու ձիգ այս դարերու ընթացքին»:¹

«Հայաստանեայց Եկեղեցին միշտ եղած է օճախը մեր ցեղին իմացական, հոգեկան եւ բարոյական ձգտումներուն: Ան եղած է գերզանցապէս մեր հաւատքի Տապանակ Ուխտին: Մեր Եկեղեցին, կրօնա-ազգային այս պատկառելի հաստատութիւնը, մեր ժողովուրդի մեծագոյն ստեղծագործութիւնն է, որ պատմական ու քաղաքական անյարիր պայմաններու մէջէն անցնելով Ձեւ եւ Նկարագիր առնելով հասած է մեզի ...»:²

Վերոյիշեալ մէջբերումները կարդալէ յետոյ ինչպէ՞ս չսիրել այս Եկեղեցին: Վահան Թէքէեան գրած է. «Եկեղեցին Հայկական՝ ծննդավայրն է հոգւոյս»: Այո՛, ան մեր բոլորին հոգիներուն ծննդավայրն է: Այս եկեղեցին ծոցէն բազմաթիւ սուրբեր ծնունդ առած են, յանձնուս՝ Գրիգոր Լուսաւորիչի, Ներսէս Շնորհալիի,

Գրիգոր Նարեկացիի, Հրիփսիմէ կոյսի եւայլն: Անոր ծէսերը դարաւոր խորհուրդներու (mystery) իրողութիւնը եւ ճշմարտութիւնը կը պարունակեն եւ կը ներկայացնեն: Ժամերգութիւնները եւ արարողութիւնները մարդկային կեանքը՝ անկումը եւ վերադարձը առ Աստուած կը ներկայացնեն, մեզի սորվեցնելով ճիշդ կենցաղը Աստուածայայտնութիւնը մեր անձերուն մէջ իրականացնելու համար: Երկար տարիներու խորանի ծառայութեան հետեւանք վերջապէս անձնապէս այս եզրակացութեան եւ հասկացողութեան հասայ: Չեմ գիտեր ինչո՞ւ փոքր տարիքէս ասոնք ինձի սորվեցնող չեղաւ: Եթէ սորվեցնող ըլլար, իմ կենցաղս շատ աւելի տարբեր կրնար ըլլալ: Արդեօք մեր կղերականներն ալ այս իրողութիւնները մոռցած են, որ չեն սորվեցներ, ապա թէ ոչ կը խորհին թէ զանոնք գիտնալու արժանի չենք: Շատ հաւանաբար, ես տակաւին պատրաստ չէի: Կը խորհիմ թէ անոնք հետեւած էին հետեւեալ հրահանգին.

«Բայց դու՛մ մի գո՛ւ կոչե՛լ վարդապետս գի
մի է յեր ուսուցիչ... Եւ մի կոչեցի՛լ
ուսուցիչ, գի ուսուցիչ յեր Քրիստոսն
է»: (Մարտէոս ԻԳ: 8,10)

«Բայց դուք Ռաբբի մի՛ կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս: ... Եւ դուք ուսուցիչներ մի՛ կոչուիք, վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է, այսինքն Քրիստոս»:

Միայն պրպտող, ընդունակ եւ լայնախոհ միտքը, որ այլազան խորհուրդներով զբաղ չէ եւ Աստուածային խորհուրդներու վրայ կեդրոնացած է, սոյն իրողութիւնները տեսնելու եւ իւրացնելու կարող կրնայ ըլլալ:

Մեր եկեղեցւոյ կղերականներուն հասցէին

համացանցային անբաղձալի տարածայնութիւնները արդեօք ինչի՞ նշան են:

Եկեղեցին ոչ շէնքերն են, ոչ ծէսերը եւ ոչ ալ կղերականութիւնը: Կը հաւատանք թէ Քրիստոս ինք Եկեղեցւոյ մէջ ներկայ է, որովհետեւ մեզի ըսուած է թէ պատարագի միջոցին նշխարը եւ գինին Քրիստոսի մարմինը եւ արիւնը կը ներկայացնեն եւ Անոր մարմնոյն ու արեան կը փոխուին: Բայց պատարագ չմատուցուած օրն ալ Քրիստոս եկեղեցւոյ մէջ ներկայ է, որովհետեւ Եկեղեցին հաւատացեալներու միութիւնն է: Աւետարանը մասնաւորաբար այս իրողութիւնը կը շեշտէ:

«Զի ուր իցեն էրկու կամ երեք հոգի յապրելու»

յանու իմ, անդ եմ ես՝ ի մէջ նոցա»:

(Մատթեոս ԺԷ: 2)

«Որովհետեւ ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուած ըլլան իմ անունովս՝ ես հոն եմ՝ անոնց մէջ»:

Եթէ Քրիստոս ինք եկեղեցւոյ մէջ ներկայ է, համերաշխութիւնն ալ անտարակոյս հոն պէտք է ըլլայ: Իսկ եթէ համերաշխութիւն չկայ, չեմ կարծեր որ Քրիստոս ինք հոն ներկայ ըլլայ: Իսկ եթէ Քրիստոս ինք եկեղեցւոյ մէջ ներկայ չէ, ծիսակատարութեան ներկայ գտնուելու իմաստն ու նպատակը ի՞նչ է: Եկեղեցիներուն ընդհանուր առմամբ պարապ ըլլալուն պատճառը արդեօք ա՞ն է: Տարիներու փորձառութիւնը շատ բան սորվեցուց: Եկեղեցւոյ ծխական խորհուրդի անդամ ընտրուած անձ մը ինծի խոստովանած է թէ ինք Աստուծոյ չի հաւատար: Տարիներու ընթացքին զանազան քաղաքներու եկեղեցիներուն մէջ սարկաւազութիւն ըրած եմ եւ հանդիպած սարկաւազի, որ խորանին ծառայելով հանդերձ, ըսած է թէ Աստուծոյ չի հաւատար: Բարեբախտաբար նման արտայայտու-

Թիւն ունեցող կղերականի չեմ հանդիպած: Ուրեմն նման անձերու եկեղեցիին փարելու, կամ «եկեղեցասիրութեան» պատճառը ի՞նչ է: Շատ հաւանաբար եկեղեցին իրենց համար մշակութային օճախ մըն է: Անկարելի է ուրանալ, թէ եկեղեցին ազգին դժուարին եւ մութ շրջանին լեզուին ու մշակոյթին տէր կանգնած՝ անոնց փրկիչը եղած է: Աս ալ Աստուծոյ մէկ շնորհքն էր: Բայց եկեղեցւոյ պարտականութիւնը միայն մշակոյթին եւ լեզուին տէր կանգնիլ չէ: Ան աւելի վեհ պարտականութիւն մը ունի: Եկեղեցին ամէն բանէ առաջ պէտք է Աստուածպաշտութեան միջոցը ըլլայ: Այն Աստուածպաշտութիւնը, որ եկեղեցւոյ մէջ կը սկսի, պէտք է նաեւ մեր առօրեայ կեանքին մէջ ալ շարունակուի, ապա թէ ոչ ամէն ինչ անիմաստ եւ ապարդիւն կ'ըլլայ: Այս գրութեան երրորդ մասին մէջ Աստուածպաշտութեան մասին պիտի անդրադառնամ: Արդեօք ժողովուրդի մեծամասնութիւնն ալ նոյն հայեացքով կ'ըմբռնէ՞ եկեղեցին: Եթէ մեր եկեղեցասիրութիւնը միայն մշակոյթէ ծագում կ'առնէ, կրնամ հաւաստիացնել թէ եկեղեցին կործանումի ճամբուն վրայ է: Արդեօք ճաշկերոյթներու ճոխ սեղանները, պարահանդէսները եւ երբեմնի անվայել ներկայացումները ու բախտախաղերը (bingo) եւ կրճատուած ժամերգութիւնները, այս իրողութեան արտացոլացումները չե՞ն: Սխալ հասկացողութիւն չըլլայ, սխալ չէ ճաշկերոյթներ ունենալը՝ նոյնիսկ օգտակար, քանի զաղութը միացնելու ընկերակցութեան միջոցով մը ստեղծելու մէջ մեծ դեր կրնայ ունենալ: Քրիստոնէութեան սկզբնական ժամանակներու, հաւատացեալները միասնաբար ճաշ կ'ուտէին, բայց պատշաճութեան սահմանները պէտք չէ անցնին: Ամէն մի անհատի հոգին Քրիստոս ինքն է: Եթէ նոյնիսկ քիչ մը Զայն արտայայտենք, ինք ալ


եկեղեցիին մէջ ներկայ կ'ըլլայ: Եկեղեցւոյ մէջ Իր ներկայութիւնը մեր հոգեւոր եւ մտային ներկայութեան որակին համապատասխան պիտի ըլլայ: Եթէ եկեղեցւոյ մէջ ճշմարիտ Աստուածպաշտութիւնը գոյութիւն չունենայ, ձեզ կրնամ վստահեցնել, թէ մշակոյթը եւ լեզուն ալ կ'անհետանան: Արդեօք չէ՞ք խորհիր թէ այս անյայտացումը արդէն իսկ սկսած է: Միթէ «UNESCO»-ն չէ՞ յայտարարած թէ արեւմտահայերէնը կորսուելու վտանգին հետ դէմ յանդիման է: Եթէ ներկայ վիճակը շարունակուի, արեւելահայերէնն ալ ետեւէն շուտով կը հասնի: Մեր մշակոյթին, արդէն իսկ այլ ազգերու մշակոյթները խառնուած է: Նոր սերունդը մեծամասնութեամբ, յատկապէս սփիւռքի մէջ, մեր պապենական ավանդութիւններէն տեղեակ իսկ չէ:

Որեւէ սխալ հասկացողութիւն չեմ ուզեր: Ես եկեղեցասիրութեան դէմ չեմ: Ինչպէ՞ս կրնամ դէմ ըլլալ երբ ես ինքս մեր եկեղեցին չափազանց կը սիրեմ: Ես հոն շատ բան սորվեցայ: Բայց եթէ եկեղեցասիրութիւնը Աստուածասիրութեան մէկ արտայայտութիւնը չըլլայ, անարժէք կ'ըլլայ:


Աշխարհի վրայ կայ հայեացք մը թէ մօտակայ ապագային բոլոր կազմակերպեալ եկեղեցիները վերջ պիտի գտնեն: Եթէ այս իրողութիւն մըն է, ինչո՞ւ մեր եկեղեցին բաձառութիւն մը չըլլայ:

1:- Տէր Գրիգոր Քհնյ. Աւետիսեան

2:- Գերշ. Նուրհան Արք. Մանուկեան-Պատրիարք Հայ Երուսաղէմի



ԱՍՏՈՒԾՆԻ ՅՏԿՈՒԹԻՒՆԵՐԸ ԸՍՏ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՐԻ



Ի ԽՈՐՈՅ ՄՐՏԻ ԽՍՕՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՆԻ

ԲԱՆ ԻԸ-Ե

Ամենաստե՛ղծ Հայր, որ հանդերձողն ես այսքան
 անբաւ հրաշքներու, Ահաւոր անուն, Սարսափելի
 ձայն, Ընտանի կոչում, Համբուրելի խօսք,
 Աքանջելի ազդում, Սոսկալի հրաման, Անքննելի
 ետիժին, Անճառելի գոյութիւն, Անբաւելի
 իսկութիւն, Անզննելի զօրութիւն, Ամենաբարի
 կամք, ԱսասՀմանելի տէրութիւն, Անչափելի
 մեծութիւն, Անբովանդակելի բարձրութիւն,
 Անկշռելի որքանութիւն, Անհասանելի առաւելու-
 թիւն, Պատճառ Որդիին՝ ...

ԿՐՕՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Բուն կրօնասիրութեան նիւթին մասին չարտայայտուած, հարկ է նախ ուսումնասիրել թէ կրօնքները ինչպէ՞ս յառաջ եկած են, ինչո՞ւ կրօնք եւ ի՞նչ է կրօնքը:

ԻՆՉՊԷ՛Ս ԿՐՕՆՔՆԵՐԸ ԵՆՈՒՄ ԵՎՈ՞Ց ԵՆ:

Ազամ եւ Եւա սկիզբէն կ'ապրէին դրախտին մէջ՝ երանութեան մէջ, քանզի Աստուծոյ ներկայութիւնը կը վայելէին: Իրենց ողբերգական անկումէն յետոյ, դրախտէն վտարուեցան՝ կորսնցնելով իրենց երանութեան գոյատեւումը: Մարդ արարած, որքան ալ իր «Ես»ին եւ անոր միջոցաւ ալ աշխարհի շլացուցիչ սա, դա եւ նա-երուն տարուած եւ կապուած ըլլայ, պէտք չէ մոռնանք, որ մարդուն ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է, մարդու հոգին Աստուծմէ է եւ Աստուծոյ մէկ մասնիկն է: Հետեւաբար մարդ հակառակ իր աշխարհիկ յարումներուն, միշտ այդ երանութեան բարձր գիտակցութիւնը փնտռած է: Այդ ինքնաճանաչումը, աւա՛ղ, միայն շատ քիչեր յաջողած են ունենալ: Անոնք, որոնք յաջողած են, նաեւ հասկցած են թէ իրենց կեանքի նպատակը հանրութեան օգտակար ըլլալ է, քան թէ իրենց «Ես»երուն ծառայել: Ճիշդ այս նպատակով ալ անոնք հանրութեան «փրկութեան ճանապարհը»՝ ճիշդ ապրելու կերպը՝ Աստուածահաճոյ կենցաղը սորվեցուցած են: Իրենք բնաւ «Կրօնք» մը չեն հիմնած, բայց զարմանալիօրէն իրենց աշակերտները նոր կրօնքներ հիմնած են:

Նկատի առնելով այս տեսակէտը, աշխարհի ներկայ գլխաւոր կրօնքները հակիրճ կերպով մը ուսումնասիրենք.

ա- Ըստ տուեալներու, կ'ենթադրուի որ Հնդկական

կրօնքը ամենահին կրօնքն է եւ սակայն անոր սկիզբը յայտնի չէ:

բ- Հրեաներու հաւատքը՝ միաստուածութիւնը նոյնիսկ իրենց ազգութեան կազմաւորման հետ՝ Աբրահամի օրերէն կը սկսի, բայց որովհետեւ իրենք իրենց հաւատքին մէջ միշտ կը խոտորէին, շատ աւելի վերջ, Մովսէսի միջոցաւ, կրօնքը օրէնքներով տրուեցաւ:

գ- Պուտտայականութիւնը իբր կրօնք սկսաւ իր աշակերտներուն կողմէ: Պուտտա ինք անձնապէս Հնդկական կրօնքին կը պատկանէր եւ բացայայտ ըսած էր թէ ինք կրօնք մը չէ որ կը քարոզէր՝ այլ միայն փրկութիւն եւ տառապանքէ ձերբազատում: Իր աշակերտները իր արձանը շինեցին եւ սկսան պաշտել: Այսպէսով է որ Պուտտայական կրօնքը սկսաւ:

դ- Յիսուս ինք հրեայ մը, Մովսիսական կրօնքին կը պատկանէր եւ ինք անձնապէս ըսած էր թէ օրէնքները փոխելու չէր եկած:

«Մի Համարիչ է՞նէ եկի լուծանել պօրէնս
կամ պարգարէս. ոչ եկի լուծանել այլ
լնո՛ւ»: (Մարտեոսի Ե:17)

«Մի կարծէք թէ եկայ արելու Օրէնքը կամ Մարգարե-
ները: Եկայ ոչ թէ արելու՝ հապա՛ գործադրելու»:

Ըստ այս համարին, Յիսուս նոր կրօնք մը՝ Քրիստոնէ-
ութիւնը չհիմնեց, այլ եկաւ Մովսիսական կրօնքի
օրէնքներուն հոգին գործնականօրէն կատարելու եւ
փրկութեան ճամբան ցոյց տալու համար՝ քան թէ
երեւութայինը: Բայց Յիսուսի աշակերտներուն քարոզ-
չութեան հետեւանք նոր կրօնք մը հիմնուեցաւ, որ
այսօր Քրիստոնէութիւն կը կոչուի: Եթէ կարգանք
«Գործք Առաքելոցը», պիտի տեսնենք թէ նոյնիսկ
հաւատացեալներու միջեւ վէճ ծագած է: Ոմանք ըսած
են թէ ոչ-հրեաները, որոնք կը փափաքէին նոր

կրօնքին պատկանիլ, պէտք էր նախ թլփատուէին եւ Մովսիսական կրօնքը ընդունէին եւ յետոյ փրկուէին: Պօղոս ալ հակառակը պնդած էր: Արդեօք նման հարց մը Յիսուսի համար որեւէ կարեւորութիւն պիտի ունենա՞ր:

Ե- Մահմետականութիւնը հաւանաբար միակ կրօնքն է որ Մուհամմէտ ինք անձնապէս հիմնած է: Ինք իր կեանքը ազատելու համար Մէքքայէն Մէտինա փախած է: Հոն, ինք պատիւ գտնելով, շատ հաւանաբար իր «Ես»էն փորձուած ըլլայ եւ կորսնցնելով այդ պայքարը ու չկարողանալով ինքզինք իր հաւատքին համար զոհել, որոշած է պատերազմիլ: Ինք եւ իր աշակարտներն ու հետեւորդները կրօնքը տարածելու համար միշտ պատերազմած են:

ԻՆՉՈՒՒ ԿՐՕՒԵ:

Կրօնքին նպատակը, ժողովուրդին մէջ, վեհ գիտակցութիւն մը արծարծել է: Նախ բոլոր ստեղծագործութեան հայրը եղող Աստուծոյ մը գոյութիւնը սորվեցնել է: Ապա, մարդուն Աստուծոյ հետ ունեցած կապին ու յարաբերութեան կարեւորութիւնը շեշտել է: Ան նաեւ մարդուն սկիզբէն կորսնցուցած երանութիւնը վերագտնելու կարելիութիւնը սորվեցնել է: Կրօնքին նպատակներէն է սորվեցնել թէ մարդու ճշմարիտ էութիւնը նոյն ինքն Քրիստոսն է եւ մարդ իր անձին մէջ Չայն լրիւ ի յայտ բերելու կարողութիւնը եւ պարտականութիւնը ունի:

Չարմանալիօրէն, մարդկութեան սկիզբէն սկսեալ, մարդ արարած միշտ կրօնքի մը հաւատացած եւ փարած է: Բարեշրջման օրէնքին համաձայն անօգուտը կամ վնասակարը ժամանակի ընթացքին կ'անհետանայ եւ չի գոյատեւեր: Կրօնքը, որ մինչեւ այսօր գոյատեւած է, պէտք է մարդուն առաւելութիւն մը պարգեւած եւ օգտակար եղած ըլլայ: Անասունները

կրօնք չունին: Միայն մարդիկ են որ կրօնքի մը կը հաւատան եւ կը հետեւին: Ուրեմն կրօնքը առանձնաշնորհում մըն է, որ մարդոց տրուած է, քանզի Աստուածայայտնութիւնը միայն մարդն է որ կրնայ իրականացնել:

Վստահ եմ բոլորս ալ հանդիպած ենք անձերու, որոնք կ'ըսեն թէ Աստուծոյ գոյութեան չեն հաւատար: Ձեզ կրնամ վստահեցնել, թէ անոնք ալ կրօնքի մը կը հետեւին: Անոնց կրօնքը կը տարբերի ընդհանուրին կրօնքներէն: Հաւանաբար իրենք վերացական խորհելու կարող չեն եւ բարձր գիտակցութեան տուած փորձառութիւններուն չեն ձգտիր: Իրենց կրօնքը պարզապէս բնագիտութիւնը կրնայ ըլլալ: Գիտցուած իրողութիւն է, թէ բնագիտութեան օրէնքները գտնող աշխարհահռչակ գիտնականներուն ջախջախիչ մեծամասնութիւնը Աստուծոյ գոյութեան կը հաւատայ: Գիտնականները լաւ հասկցած են թէ իրենց կատարած գիւտերը, ի պարգեւ իրենց այդ հարցին տրամադրած խոկման երկարատեւ ժամերուն, Աստուծմէ տրուած գիտութիւններ են: Շնորհիւ այդ խոկումին է որ իրենք աւելի բարձր գիտակցութեան մակարդակի մը կը հասնին եւ այդպէսով ալ Աստուածային պարգեւին կ'արժանանան:

ԻՆՁ Է ԿՐՕՆՔԸ:

Կրօնքը Աստուածահաճոյ վեհ կենցաղի մը ուղեցոյցն է: Համայն մարդկութեան տրուած քարտէս մըն է, որ պէսզի մարդն ալ իր կեանքի բուն նպատակը՝ Աստուածայայտնութիւնը կարողանայ իրականացնել: Հետեւաբար անուղղակիօրէն ան նաեւ անձին փրկութեան միջոցը՝ ուղեցոյցն է: Փրկութիւնը պէտք չէ կեանքին նպատակը ըլլայ:

Կրօնքը Աստուածպաշտութեան հրաւէր մըն է: Ան

նաեւ կը սորվեցնէ թէ ճշմարիտ Աստուածապաշտութիւնը ի՞նչ է: Կրօնքը մեզի Աստուծոյ գերիշխանութիւնը եւ մեր ալ իր ծառան ըլլալու հանգամանքը կը սորվեցնէ: Ան կը սորվեցնէ թէ ստեղծագործիչը՝ Աստուած իր ստեղծագործութեան մէջ ամենուրեք է, որով նաեւ մեր մէջ: Ինչպէս մեր աշխարհիկ հայրն ու մայրը մեր Փիզիքական մարմնոյն ծնունդ տուողն են, Աստուած ալ մեր հոգւոյն ծնողն է: Ստեղծագործութիւնը՝ բոլոր տիեզերքը Աստուծոյ մարմինը կը ներկայացնէ: Կրօնքը նաեւ կը սորվեցնէ, թէ Աստուած բոլոր գիտցուած եւ տակաւին չգիտցուած գիտութիւններու շտեմարանն է, ինչպէս նաեւ կը սորվեցնէ թէ ճշմարիտ երջանկութեան՝ երանութեան միայն Աստուծով կարելի է հասնիլ: Կրօնքը, Աստուծային տիեզերական օրէնքներու ճշմարտութիւնը կը յայտարարէ: Օրէնքներ անխախտելի են եւ նոյնիսկ Աստուած ինք այդ օրէնքներուն դէմ չի գործեր: Ասոնցմէ ամենակարեւորը «Ինչ որ ցանես ան կը հնձես»ն է, որ արեւելեան կրօնքներու մէջ «Գարմա»ի (Karma) օրէնք կը կոչուի: Շատեր գայն «ճակատագիր» կը կոչեն, որովհետեւ անգիտակից են, թէ այդ «ճակատագիր»ը իրենց ցանած հոնտերուն բերքերն են, գորս կը քաղեն: Ուստի իրենք են որ այդ ճակատագիրը կերտած են: Կրօնքը նաեւ հոգիին անմահութիւնը կը սորվեցնէ եւ մարմնին մահէն յետոյ վերագարձը առ Աստուած: Ուրեմն իբր եզրակացութիւն կրօնքը «դասագիրք» մըն է:

Կրօնքը նաեւ օրէնքներու հաւաքածոյ մըն է: Անտարակոյս ամէն կրօնք որոշակի օրէնքներ ունի, որ հաւատացեալները պարտ են յարգել եւ կիրարկել: Այս օրէնքները, վերոյիշեալ Աստուծային տիեզերական օրէնքներէն տարբեր են: Կան որոշ օրէնքներ, որ կը թուին բոլոր կրօնքներու հասարակաց ըլլալ: Ասոնք

ընդհանուր առմամբ բարոյագիտութեան եւ բարոյական կենցաղի վերաբերեալ օրէնքներն են, որ Աստուածահաճոյ կենցաղ մը ունենալու համար անհրաժեշտ ըլլալ կը թուին: Կան նաեւ երկրորդական օրէնքներ, որոնք բոլոր կրօնքներուն համար հասարակաց չեն, այլ իւրաքանչիւրին յատուկ են: Անոնք մարդոց կողմէ դրուած օրէնքներ են, մաս կազմած կրօնքին, որպէսզի մարդիկ անոնց հետեւին: Անոնց նպատակը միշտ օգտակար ըլլալ եղած է, բայց կարելի է որ դայթակղութեան ալ պատճառ ըլլան: Հարկ է անոնցմէ մի քանին հոս յիշել եւ վերլուծել:

Առաջին հերթին, հրեայ հաւատացեալներու Պօղոսի ու Պետրոսի հետ ունեցած վիճաբանութեան պատճառ եղող հարցը՝ վերեւ յիշուած թլփատութիւնը վերլուծենք (Գործք առաքելոց ԺԵ): Բոլորս ալ լաւ գիտենք թէ թլփատութիւնը թէ՛ Մովսիսական եւ թէ՛ Մահմետական կրօնքներուն կենսական մէկ մասը կը կազմէ: Ի՞նչ է իմաստը կամ կարեւորութիւնը: Եթէ անձը չթլփատուի փրկութեան արժանի չ'ըլլար: Իսկ եթէ այդ իրողութիւն մըն է ինչո՞ւ ուրիշ կրօնքներ ալ զայն չեն որդեգրած: Ինչո՞ւ Պօղոս, ինք հրեայ ըլլալով հանդերձ, թլփատութեան հակառակեցաւ: Պէտք չէ մոռնանք, որ հին ժամանակներուն թէ՛ հրեաները, թէ՛ ալ արաբները աւագոտ անապատի մէջ վրաններու տակ կ'ապրէին: Կ'ենթարկուէին աւագի փոթորիկներու, որով աւագի հատիկներ թլփատին տակ կը հաւաքուէին եւ բորբոքումի, հետեւաբար վէրքի պատճառ կ'ըլլային: Շատ հաւանական է, որ այս կացութիւնը նոյնիսկ ծնունդներու թիւին զգալիօրէն նուազման պատճառ եղած ըլլայ: Որով օրուայ ղեկավարները որպէս դարման այր մարդոց թլփատումը որոշած են: Որպէսզի ամէն այր մարդ ստիպողաբար թլփատուի, զայն կրօնքի օրէնքներու մէջ դրած են: Մովսիսական

կրօնքի մէջ թլփատումը փոքր տարիքէն, ծնունդէն կարճ ժամանակ յետոյ կը կատարեն, իսկ մահամետականները՝ երբ տղան արբունքի հասնի: Այսօրուայ ներկայ պայմաններու մէջ թլփատումը այլեւս ո՞րքան կարեւոր է: Որով թլփատման օրէնքը կրօնական օրէնքներու շարքէն պէտք է հանուի:

Մովսիսական կրօնքի մէջ, աստուածահաճոյ կենցաղի մը համար անհրաժեշտ տասը պատուիրաններէն զատ, օրէնքները այնքան բազմատեսակ են, որ անկարելի է անոնց մէջ չկորսուիլ եւ գուցէ անոնք ճշմարտութեան ճանապարհը խափանեն: Յիսուս այդ օրէնքներուն աւելորդապաշտութիւնը լաւ հասկցած ըլլալով, անոնց չէր հետեւեր: Միթէ իրենց փրկիչը՝ Մեսիան չկարողանալ ճանչնալու պատճառը այդ օրէնքները չէի՞ն:

Քանի որ օգտակարութենէ դադրած օրէնքի մը մասին արտայայտուեցանք, հոս յիշենք նաեւ գործադրութենէ դադրեցուած ուրիշ օրէնքի մը մասին: Ըստ Կաթողիկէ եկեղեցւոյ օրէնքներուն, իւրաքանչիւր անդամ, ամէն Ուրբաթ օր փոխան միսի պէտք է ձուկ ուտէր: Հռովմի պապը, միջնադարուն, ի նպաստ Փորթուկալի ձկնորսներուն այս օրէնքը դրած էր, որպէսզի անոնք գոնէ շաբաթը անգամ մը իրենց որսը ծախելով ապրուստ ապահովէին: Այսօր, երբ ովկիանոսներուն մէջ գրեթէ ձուկ չէ մնացած, օրէնքն ալ իր այժմէականութիւնը կորսնցուցած է եւ գործածութենէ դադրած:

Անտարակոյս նման որոշում մը ճիշդ է: Սակայն իրենց կրօնական հասկացողութիւնը մակերեսային անձերու համար նման արարքներ կրնան զայթակողութիւն նկատուիլ: Կը կարծեն թէ ձուկ չուտելով մեղք կը գործեն: Եթէ այս օրէնքը անհատին հոգեկան ու ֆիզիքական առողջութեան համար անհրաժեշտ չէր,

արդեօք ուրիշ անհական օրհնքներ ալ կարելի է՞ անտեսել եւ գործադրութենէ դադրեցնել: Բայց երբ մենք մեր դատողութեան մէջ ձախողինք, կրնանք մեր կենցաղին վնաս հասցնել:

Որեւէ կազմակերպութեան մաս կազմելու համար որոշ արարողութիւններ կան: Ընդհանուր առմամբ Քրիստոնէական կրօնքի պատկանելիութեան օրհնքն ալ «Մկրտութիւն»ն է, որ այդ կրօնքին եօթը խորհուրդներէն առաջինն է: Կը խորհինք թէ մկրտութիւնը քրիստոնեայ ըլլալու համար պայման մըն է եւ միայն Քրիստոնէութեան մէջ գոյութիւն ունի: Բայց այսօր կան քրիստոնէական յարանուանութիւններ եւ աղանդներ, որոնք մկրտութիւնը այլեւս անհրաժեշտ չեն նկատեր: Հարկաւ, աս առաքելական եկեղեցիներուն չի վերաբերիր: Մկրտութիւնը նաեւ ոչ քրիստոնեայ կրօնքներու մէջ ալ գոյութիւն ունի: Հրեաներու Եսսէնեան (Essene) աղանդը մկրտութեան խորհուրդը կը կատարէր: Շատ հաւանական է, որ Յովհաննէս Մկրտիչ այդ աղանդին կը պատկանէր: Հրեաները տակաւին այսօր մկրտութեան արարողութիւն մը կը կատարեն «հոգեկան մաքրութեան» համար, բայց իրենց մկրտութիւնը մէկ անգամուան համար չէ: Կեանքի ընթացքին կարելի է բազմաթիւ անգամներ կրկնել: Միհրապաշտութեան կրօնքը (Mithraism) մկրտութեան արարողութիւն մը կը կատարէր: Ըստ հնաբանական պեղումներէ ստացուած տեղեկութեանց, այդ կրօնքը գոյութիւն ունեցած էր Ն.Ք. 69-էն մինչեւ Յ.Ք. հինգերորդ դարու առաջին կէսը եւ տարածուած Պարսկական եւ Հռովմէեկան Կայսրութիւններուն մէջ: Մկրտութիւնը նաեւ Եգիպտոսի, Թիպէթի, Մէքսիքայի, Մոնկոլիոյ, Յունաստանի, Սկանտինաւիոյ եւ Փէրուի հին մշակոյթներու կրօնքներուն մաս կազմած էր:

Մկրտութեան օրհնքը մեզի համար չափազանց

իմաստալից է, որովհետեւ Յիսուս ըսաւ.

«Ղենացէ՛ք այսո՛ւնեցե՛ր, աշակերպեցէ՛ք
պամէնայն Հեթանոսս. մկրտեցէ՛ք պնոսա
յանո՛ւն Հօր՝ էս Որդո՛ւոյ՝ էս Հոգո՛ւոյ

սրբո՛յ» : (Մատթէոս ԻԸ :19)

«Ուրեմն գացէք՝ աշակերտեցէք բոլոր ազգերը՝
մկրտեցէք զանոնք Հօր՝ Որդիին եւ Սուրբ Հոգիին
անուամբ»:

Երբ Կաթողիկէ եւ Յունական Ուղղափառ
Եկեղեցիներէ ներս մտնենք, մուտքի դրան կողքին
օրհնուած ջուրի տաշտեր կը գտնուին: Հաւատացեալ-
ները իրենց մատները հոն թաթխելով իրենք զիրենք
կը խաչակնքեն, այսպէսով օրհնուած ջուրը իրենց
վրայ սփռած կ'ըլլան: Սա մկրտութեան խորհուրդը կը
ներկայացնէ: Այս մկրտութեան նպատակը Աստուծոյ
խորանին մօտենալէ առաջ մեղքերուն սրբուիլն է:
(Եօթը խորհուրդներու մասին Գլուխ Բի մէջ աւելի մանրամասն
արտայայտուած եմ):

Հարկ է նաեւ մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ
կրօնական՝ եկեղեցական օրէնքներէն ալ մի քանի
օրինակներ բերել: Քրիստոնէական կրօնքի մէջ ալ
աստուածահաճոյ կենցաղի մը համար ինքնազսպում եւ
եօթը մահացու մեղքերէ ձերբազատում կիրարկել
անհրաժեշտ է, ինչպէս նաեւ հետեւիլ մովսիսական
տասը պատուիրաններուն: Մեր եկեղեցին սիրելուս
պատճառներէն մին ալ անոր աւելորդապաշտական
բազմատեսակ օրէնքներ չունենալն է: Կրնամ ըսել թէ
ան ամենաազատամիտ եկեղեցին է եւ ունեցած
օրէնքներն ալ չի պարտադրեր: Որովհետեւ Աստուած-
պաշտութիւնը պարտադրանքով չ'ըլլար: Յիշենք մի
քանի օրէնքներ, որ այսօր այլեւս չեն կիրարկուիր:

ա- Եկեղեցիին մէջ, նամանականդ արարողութեան

միջոցին, ծնծղայէ եւ քչոցէ զատ որեւէ նուագի գործիքի գործածութիւնը արգիլուած էր: Այս գործիքներուն գործածութիւնն ալ, ըստ աւանդութեան, ճանճերը եւ այլազան միջատները վանելու համար էր: Սակայն ուշադրութենէ պէտք չէ վրիպի, թէ ըստ Հին Կտակարանի Աստուածապաշտութիւնը ծնծղաներով կ'ըլլար: Այսօր երգեհոնի գործածութիւնը սովորական երեւոյթ մ'ըն է:

բ- Այր մարդիկ եկեղեցւոյ աջ կողմը, իսկ կիներն ալ ձախ կողմը կը նստէին: Այսօր բոլորն ալ խառն կը նստին:

գ- Արարողութեան միջոցին լուսանկարել բացարձակապէս արգիլուած էր: Այսօր նոյնիսկ հեռատեսիլի կայաններ շարժանկար արձանագրելու կող գան:

դ- Արարողութիւններուն այր մարդիկ գլուխնին գոց, իսկ կիներն ալ գլուխնին բաց պէտք չէ որ մասնակցէին: Այսօր կիներու գլուխները ընդհանուր առմամբ բաց են (բացառութիւնները միշտ յարգելի), բայց բարեբախտաբար այր մարդիկ տակաւին գլխարկով եկեղեցի մտնել չեն սկսած:

ե- Եկեղեցիին մէջ ձեռքերը ետեւ տանիլ արգիլուած է: Այսօր ուշադրութիւն ընող չկայ:

զ- Սարկաւագին իւրաքանչիւր «Աստուծոյ երկրպագեսցուք» հրահանգին, ծնրադրելով երկրպագութիւն կ'ըլլար: Այսօր ոչ ոք այդպէս երկրպագութիւն կ'ընէ: Ոմանք թեթեւ մը մէջքերնին կը ծռեն եւ այդքան:

Վերոյիշեալ օրէնքները աւելորդապաշտութիւն չեն, բայց Աստուածահաճոյ կենցաղի համար անհրաժեշտութիւն ալ չեն: Որովհետեւ բոլորն ալ արարողութեան միջոցին հաւատացեալի ընթացքին կը վերաբերին: Անոնց նպատակը անձին կեդրոնացումը՝ խոկումը չխանգարել է եւ անոր խոնարհութիւնը ու հեզութիւնը

արտայայտել է: Երբ այս օրէնքները չեն գործադրուիր, արդեօք աղօթքի ընթացքին կեդրոնացած չըլլալու եւ փոխան հեզուլթեան ալ հպարտ ըլլալու յայտարարութիւններ ե՞ն:

է- Մոմ վառելու սովորութիւնը շատ գեղեցիկ ծէս մըն է, բայց արդեօք անոր խորհուրդը գիտե՞նք: Արեւը առանց խտրութեան իր ճառագայթները ամենուրեք կը սփռէ: Մենք ալ պարտինք ստանալ Աստուծոյ լոյսը եւ նման արեւին այդ մեր մէջ ի յայտ եկած Աստուածային լոյսը եւ գիտութիւնը բոլորին առանց խտրութեան բաժնել: Այս ուղղութեամբ պարտ ենք մեր բոլոր վատ խորհուրդները վանելով խաղաղ միտք մը կերտել, որպէսզի կարենանք մեր ճշմարիտ հուլթեան՝ Քրիստոսի մէջ խորասուզուիլ: Երբ մոմ մը կը վառենք եւ կ'աղօթենք, այդ Աստուծոյ տրուած մեր խոստումն է, թէ մեր անձերուն մէջ եւս իր լոյսը պիտի վառենք, որպէսզի այդ լոյսը մեր միջոցով նաեւ սփռուի ամենուրեք: Խոստում մըն է, որ հանրութիւնը լուսաւորելու համար մեր անձերն ալ «մոմ» մը՝ լոյս մը ըլլան: Այդ վառուած մոմը պէտք է միայն անձին երջանկութեան համար ըլլայ, այլ՝ հանրութեան օգուտին: Մոմը հանրութեան օգուտին համար վառուած կ'ըլլայ, երբ ուրիշին ցաւերուն եւ ուրախութիւններուն մասնակից կ'ըլլանք: Երբ ուրիշի մը համար այդ երջանկութեան լոյսը վառենք, նաեւ խաւարամտութիւնը մեր անձերէն կը վանենք: Լոյսի ներկայութեան, խաւարը չի կրնար գոյատեւել: Իսկ եթէ պատրաստ չենք նման վեհ կենցաղով մը վերոյիշեալը իրականացնել, մոմ վառելն ալ կ'ըլլայ պարապ ծէս մը՝ առանց որեւէ օգուտի: Օգտակարութիւնը կ'ըլլայ միայն Ֆիզիքական գործողութիւն մը՝ եկեղեցին լուսաւորել եւ գանձին հասոյթ ապահովել:

ը- Միսակատարներու՝ դպիր, սարկաւագ, կղեր,

որեւէ ատեն կօշիկով խորան բարձրանալ արգելւուած է, իսկ աշխարհականներու խորան բարձրանալը բոլորովին արգելւուած է: Խորանը բարձր բեմի վրայ կը գտնուի, որ գիտակցութեան աւելի բարձր մակարդակ մը կը ներկայացնէ: Մեր անձը որքան աշխարհիկ հետապնդումներէ անջատենք, այնքան աւելի գիտակցութեան մակարդակի բարձրացման կարելիութիւնը կ'ունենանք: Քանի որ աշխարհը ներկայացնող փողոցը կօշիկով կը քալենք, կօշիկը գիտակցութեան բարձր մակարդակի պակասը կը ներկայացնէ: Դպիրի, սարկալազի եւ կղերականի, կօշիկով խորան բարձրանալուն անձնապէս ականատես եղած եմ: Կարեւորը կօշիկը չէ՝ այլ անձին մտքի որակը՝ իր գիտակցութեան մակարդակը: Այն անձը, որ պատրաստ չէ, պէտք չէ խորան բարձրանայ: Կօշիկի օրէնքը պարզապէս Ֆիզիքական գետնի վրայ այս ճշմարտութեան մէկ արտայայտութիւնն է, բայց արարքը մտքի որակը չի՞ ցոլացներ:

Սարկալազը երբ խորան բարձրանայ, ի բաց առեալ ծիսակատարութեան արտօնած որոշ պահերուն, որ կը պատահի ընդհանրապէս խնկարկութեան միջոցին, պէտք չէ որ խորանին առջեւէն անցնի: Խորանին մէկ կողմէն միւս կողմ երթալու համար պէտք է ետեւէն դառնայ: Ասոր իմաստը այն է, թէ ոեւէ անձ պէտք չէ արգելք ըլլայ ժողովուրդին Աստուծոյ հետ հաղորդակցութեան: Հարկաւ, այս ձեւակերպութիւնը ծիսակատարութեան մէջ միայն արտաքին երեւոյթ մըն է, որ կը ներկայացնէ խոր եւ լուրջ ճշմարտութիւն մը:

Յիսուս ալ իր օրերու կրօնքի պաշտօնեաներուն ըսած էր.

«Ա.ա՛յ յեւ դպրաց եւ փարիսէացոց
 կեղծաւորաց. զի փակելի պարտայութիւնս

Երկնից առաջի մարդկան. դու՛ն է
 մտանել, Եւ որոց մտանէն՝ շարայէ թոյլ
 մտանել» : (Մատթէոս ԻԳ:13)

«Վա՛յ ձեզի՛ կեղծաւոր դպիրներ եւ Փարիսեցիներ՝ որ
 կը գոցէք երկիրքի թագաւորութիւնը մարդոց առջեւ.
 դո՛ւք չէք մտներ՝ ու մտնողներուն ալ թոյլ չէք տար՝
 որ մտնեն»:

Թ- Եկեղեցական արարողութիւններու օրէնքներ-
 ին գատ երկու օրէնքներ եւս կան. պահք եւ ծոմա-
 պահութիւն: Ամէն տաղաւար իր պահքի շրջանը ունի:
 Ամենաերկարը Չատիկէն առաջուան պահքն է, որ եօթը
 շաբաթ կը տեւէ: Այս օրէնքները երկու նպատակ ունին:
 Նախ հաւատացեալին ինքնագսպումի առիթը տալ:
 Անձը, մահացու մեղքերէն որկրամոլութեան դէմ
 ինքնագսպում գոյացնելով կարելի է որ յաջողի նաեւ
 միւս մահացու մեղքերուն ալ դէմ դնել: Բայց աս իր
 իմաստը կը կորսնցնէ, երբ անասունէ եկած ուտեստե-
 դէն չուտելով հանդերձ զանազան համեղ կերակուրներ
 (ինչպէս թօփիկը) կ'ուտուի: Պահքը իր նպատակէն
 չեղած կ'ըլլայ: Երկրորդ նպատակն ալ առողջապա-
 հականն է: Գոնէ տարուան հինգ պահքերուն
 անասուններէ եկած ուտեստեղէն չենք ուտեր, մեր
 մարմիններն ալ կը բարելաւուին: Քօլէսթէրոլի
 քանակը կը պակսի եւ շնչերակային առողջութիւն
 կ'ապահովէ, որպէսզի սրտի տազնապի եւ կաթուածի
 հետեւանք եղած վաղամահերը նուազին: Այս օրէնք-
 ները երբ դարեր առաջ դրուեցան, քօլէսթէրոլի մասին
 գաղափար չկար, բայց հասկցուած էր թէ անժամանակ
 մահերը կապ ունէին մարդոց կերածին հետ: Աս եւ
 նման օրէնքներ միայն արտաքին ցոլացումներն են
 այն ներքին գսպումներուն, որ պարտ ենք կերտել,
 որպէսզի հոգեւոր ճամբորդութեան մէջ յաջողինք:

Իսկ ծոմապահութիւնը աւելի զօրաւոր կերպով

ինքնագսպում կերտել է, նպատակ ունենալով բոլոր մահացու մեղքերէ ձերբազատում: Երբ անձը այս վերջինին մէջ կը յաջողի, իր կենցաղն ալ կը փոխուի եւ Աստուծոյ հետ հաղորդուելու պատրաստ կ'ըլլայ: Եսայիայ մարգարէ կ'ըսէ.

«Ո՛չ պանդխտի պահա ընդրեցի՝ ասէ Տէր: Ելլ լո՛յժ պէնճիռն անիրաւութեան. խնկեա՛ պիտրդախտութիւնն թունութեան վաճառաց խոց: Երչակեա՛ պնեղեալս թողութեամբ, եւ պամենայն մորհակա անիրաւութեան պատրաստա՛: Բրդեա՛ խաղցելոց պահաց խո, եւ պաղխարս անյարկս քա՛ր ՚ի քոռն խո. եթէ քեաննիցեա պմերկս՝ պղեցոցանիջն՛ր, եւ յընդհանեաց պասակի խոյ՝ պակն մի՛ արկաննիցեա: Յայնժամ ժաւալեացի կանոնս լոյս խո, եւ թշկութիւնն իւզ վաղվաղակի Ըսացէ. եւ Գնացէ ասաջի խո արդարութիւնն խո, եւ փա՛ռ ին Ըսքոռն խո պիւտե՛ փակեացին» : (Եսայեայ՝ՕԸ:6-8)

«Իմ ընդունած ծովապահութիւնս՝ Անիրաւութեան կապերը քակելը, Լուծին կապերը թուլցնելը, Հարստահարութիւն կրողները ազատ թողուլը, Ամէն լուծ կտրելը, Հացդ անօթիին բաժնելը, Թափառական տնանկները տունդ ընդունիլը, Մերկ մը հագուեցնելը Ու մարմինդ անտեսելն է: Այն ատեն քու լոյսդ առաւօտի պէս պիտի ծագի Ու բժշկութիւնդ շուտով պիտի յայտնուի: Քու արդարութիւնդ քու արջեւէդ պիտի երթայ Ու Տէրոջը փառքը քու ետեւէդ քեզ պիտի պաշտպանէ»: (Եսայեայ ՄԸ:6-8)

Ըստ այս համարին ճշմարիտ ծոմապահութիւնը անօթի մնալ չէ, այլ եսասիրութենէ ծոմ պահել եւ գթասիրտ ըլլալն է: Մեզի նման պարզ մարդոց համար, փորը անօթի անձին միտքը խաղաղ չի կրնար ըլլալ, հետեւաբար միտք մը որ խաղաղ չէ, Աստուծոյ պատկերը չի կրնար ցոլացնել: Այո, կան սուրբի պէս անձեր, որ «երկնային մանանայ»ով՝ Ս. Հոգիի զօրութեամբ կ'ապրին, ինչպէս Յիսուս 40 օր անապատին մէջ ծոմապահութեամբ ապրեցաւ: Սուրբ Հոգիով մկրտուած Յիսուս անգամ փորձուեցաւ: Նոյնիսկ ներկայիս կան անձեր, որոնք յաջողած են երկար ժամանակ՝ ամիսներ եւ նոյնիսկ տարիներ առանց ուտելիքի եւ խմելիքի ապրիլ, զարմանքի ենթարկելով բժշկական համայնքը (Breatharianism): Մարմինը գոյատեւելու համար զօրութեան պէտք ունի եւ այդ զօրութիւնը իր կերածը մարսելով անոր տարրաբանական՝ քիմիական հայթայթած զօրութենէն կը ստանայ: Բայց քանի որ Ս. Հոգիի զօրութիւնն է որ ամէն ինչի թափանցած է եւ ամէն ինչ Անով կազմուած է, հետեւաբար առանց տարրաբանական միջամտութեան ուղղակի այդ զօրութենէն օգտուիլ կարելի պէտք է ըլլայ՝ եթէ անշուշտ այդ գիտութեան գաղտնակից ըլլանք:

«Նա պարասխանի եր եւ ասէ. Գրեալ է՝

Ինչ ոչ Լացրեւ միայն կեցցէ մարդ, այլ
ամենայն բանիս որ ելանէ՝ ՚ի բերանոյ

Լացրեւ» : (Մարգեէոս Դ:4)

«Ան ալ պատասխանեց. «գրուած է. Միայն Լացով չէ որ մարդը պիտի ապրի՝ Լապա ամէն խօսքով՝ որ կ'ելլէ Աստուծոյ բերանէն»:

Կրօնքի նկատմամբ վերոյիշեալ տեղեկութիւններէ յետոյ կրօնասիրութեան մասին աւելի պատշաճ

կերպով կարելի է արտայայտուել:

Հարկ է որ ամէն անձ իր կրօնքը սիրէ եւ անոր հաւատարիմ ըլլայ: Անհրաժեշտ է յիշել, թէ մարդկութեան մեծամասնութիւնը կը հաւատայ եւ կը հետեւի այն կրօնքին, որուն մէջ ինք ծնած է եւ անոր մասին սորված իր ծնողքէն: Շատ քիչ անձեր իրենց ազատ կամքով կրօնափոխ կ'ըլլան: Անոնք ալ կը կարծեն, թէ այն ինչ որ իրենց կրօնքին մէջ չեն գտած, ուրիշ կրօնքի մը մէջ պիտի գտնեն: Ընդհանրապէս ճշմարտութիւնը այն է, թէ պահասաւորը կրօնքը չէ, այլ՝ անձին իր կրօնքին նկատմամբ ունեցած մակերեսային հասկացողութիւնը:

Քանի որ կը հաւատանք թէ ամէն անձի հոգին Աստուծոյ կողմէ տրուած է, ուրեմն Աստուած ինք երախային կեանք տալով արտօնած է, որ ան որեւէ տուեալ կրօնքի մը մէջ ծնի: Ըստ որոչ անձերու, նոյնիսկ կրօնքներու, եթէ անձ մը պատկանի եւ հաւատայ այդ անձին պատկանած կրօնքէն տարբեր կրօնքի մը, դժոխք երթալու դատապարտուած կ'ըլլայ: Այս տեսակէտը կարգ մը Քրիստոնեայ հարանուանութիւններու մօտ չափազանցութեան հասցուած է:

Ինչպէ՞ս կարելի է, որ տակաւին անձը չծնած Աստուած զայն դժոխք երթալու դատապարտած ըլլայ: Արդեօք կարելի՞ է նման գաղափար մը հաշտեցնել «Աստուած սէր է» տեսութեան հետ: Շատ հաւանական է, որ Աստուած կ'որոշէ թէ անձը որ կրօնքի մէջ պէտք է ծնի, հետեւաբար ալ այդ կրօնքին պատկանի, կրօնք մը որ անձին բնոյթին համապատասխան ըլլայ: Իսկ եթէ Աստուած տուեալ կրօնքը անձի մը համար յարմար կը նկատէ, ուրեմն անձը կրօնափոխութեան մղել սխալ է եւ յոխորտանք: Քանի որ Աստուած ընտրած է մեր կրօնքը, հարկ է որ զայն սիրենք:

«... Կի ինչ Բարի լինիցի, եւ Կի

Երկայնակեաց լինիցիս՝ ի վերայ երկրին
 Բարո-Բեան՝ զոր Տէր Ասորո-առ րացե
 վեպ» : (Ելից Ի:12)

«... որպէսզի օրերդ երկար ըլլան այն հողին վրայ՝ որ
 Տերը, քու Աստուածդ, քեզի կու տայ»:

Հարկ է որ անձին երկիրը, ազգութիւնը,
 մշակոյթը եւ կրօնքն ալ հողին համեմատ ըլլան:

Ուրեմն մեր կրօնքը սիրել՝ այսինքն կրօնասիրու-
 թիւնը ի՞նչ կը նշանակէ: Ինչպէս մայր մը իր զաւակը
 կը սիրէ եւ իր զաւկին բարօրութեան համար նոյնիսկ
 իր անձը զոհելու պատրաստ է, նոյնպէս մենք ալ բոլոր
 այն վեհ զաղափարներուն համար, որ կը ներկայացնեն
 մեր կրօնքը, մեր անձերը զոհելու պէտք է պատրաստ
 ըլլանք: Յիսուս իր կրօնքին՝ համայն մարդկութեան
 հանդէպ իր ունեցած սիրոյն համար իր կեանքը զոհեց:

Ինչպէս մայր մը ծննդաբերութենէ վերջ իր
 զաւակը լաւ մը կ'ուսումնասիրէ եւ անոր ամենափոքր
 ճիչէն եւ երեսի արտայայտութենէն զաւկին կարիքները
 հասկնալու մասնագէտը կ'ըլլայ, նմանապէս ամէն անձ
 ալ պարտի իր կրօնքը լիովին ուսումնասիրել, խորքին
 թափանձել, հասկնալ ու անոր մասնագէտը ըլլալ: Եթէ
 կրօնքին բուն կորիզը չգիտնայ, հետեւաբար կրօնքին
 սորվեցուցած կենցաղը եւ այդ կրօնքին հանդէպ իր
 ունեցած հաւատքը կ'ըլլայ մակերեսային: Այն անձը,
 որ աղօթքով, պրպտելով, համբերութեամբ ու յարատե-
 ւութեամբ եւ Աստուածային շնորհքով այդ գիտու-
 թիւնը ու գիտակցութիւնը կը գտնէ, ճշմարիտ կրօնա-
 սէրը կ'ըլլայ: Այդպիսի անձ մը ոեւէ մէկը կամ որեւէ
 ուրիշ կրօնք չ'ատեր: Նման անձ մը «Ճշմարտութիւն»ը
 այլ կրօնքներու մէջ ալ կը գտնէ: Ամէն կրօնք իր
 խորքին մէջ նոյն դասը կը սորվեցնէ, անշուշտ, եթէ
 անձը ուշիմ ըլլայ եւ տեսնէ: Կրօնքը կարելի է

գիրքերէ սորվիլ, բայց հոգեւոր ճանապարհը մեր վարդապետը՝ Քրիստոս, որ մեր էութիւնն է, մեզի ցոյց կու տայ, հարկաւ եթէ արտօնենք:

Բոլոր կրօնքները մակերեսային տեսակէտէ իրարմէ շատ կը տարբերին եւ կը թուի թէ իրարու հետ որեւէ կապ չունին: Մակերեսային հասկացողութեամբ հաւատք ունեցող անձեր ալ կարելի է որոշ կրօնասիրութիւն ցոյց տան, բայց անոնք ընդհանուր առմամբ տարբեր կրօնքներուն չեն հանդուրժեր, կարծելով թէ անոնք սատանայական են եւ ժողովուրդը ձախողութեան կ'առաջնորդեն: Արդեօք նման մակերեսային հասկացողութիւնը խաչակիրներու գործած աւերներուն պատճառ չէ՞ր եղած: Տակաւին այսօր ալ այդ մակերեսային հաւատքը «Ճիհատ» անուան տակ աւերներ կը գործէ: Նման մակերեսային հասկացողութեան հետեւանք նոյնիսկ նոյն կրօնքի՝ Քրիստոնէութեան մէջ, Մեծն Բրիտանիոյ Իրլանտացիներու կաթողիկէ եւ Աւետարանական հատուածներու միջեւ եղած կռիւներու հետեւանք հազարաւոր հոգիներ զոհուեցան: Մահմետականներու Սուլնի եւ Շիի դաւանանքներու միջեւ եղած անցեալի եւ ներկայի պատերազմներն ալ նոյնն են: Յիսուս իր կեանքը Մովսիսական կրօնքի օրէնքներուն համար չզոհեց, այլ զինք մահուան դատապարտողներն են որ օրէնքներուն յենելով այդ ոճիրը գործեցին: Նման կրօնասիրութիւն «Ես»էն ծագում կ'առնէ, հետեւաբար խաւարամտութիւն է եւ պարզապէս ականդապաշտութիւն՝ քան թէ Աստուածպաշտութիւն: Արդեօք կրօնասիրութիւնը ա՞ս պէտք է ըլլայ: Յուսանք ո՛չ: Իսկ եթէ մեր հայեացքն ալ այդպէս է, շատ ցաւալի:



ԱՍՏՈՒԱԾԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Աստուծոյ առաջին պատուիրանն է սիրել զԱստուած:

«Եւ սիրեացեաս զՏէր Աստուած ինչ որ յամենայն սրբէ ինչ-մմէ, եւ յամենայն անշնէ ինչ-մմէ, եւ յամենայն մտապ ինչ, եւ յամենայն զօրութենէ ինչ-մմէ: աս ի առաջին պատուիրանն»: (Մարկոս ԺԲ:30)

«Եւ քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ եւ քու բոլոր գորութիւնովդ: Ասիկա է առաջին պատուիրանքը»:

«Նա պատասխանի երբ եւ ասէ սիրեացեաս զՏէր Աստուած ինչ որ յամենայն սրբէ ինչ-մմէ, եւ յամենայն անշնէ ինչ-մմէ, եւ յամենայն զօրութենէ ինչ-մմէ եւ յամենայն մտապ ինչ, եւ զընկեր ինչ իբրեւ զանշն ինչ»: (Ղուկաս Ժ:27)

«Պատասխան տուաւ անիկա ու ըսաւ. «Բու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ ու քու բոլոր անձովդ եւ քու բոլոր գորութիւնովդ ու քու բոլոր մտքովդ, եւ քու ընկերդ քու անձիդ պէս»:

Ինչպէս ամէն անձ իր Ֆիզիքական մարմնին ծնունդ տուած եւ զինք խնամած, պահած եւ պաշտպանած հայրն ու մայրը կը սիրէ, հարկ է, որ նոյնպէս իրեն իր հոգին՝ կեանքը, հոսթիւնը եւ գիտակցութիւնը տուած Հայրը՝ Աստուածն ալ սիրէ: Միթէ Աւետարանը չ'ըսե՞ր, թէ մենք Աստուծոյ որդիներ ենք, անշուշտ եթէ Աստուածահաճոյ կենցաղ մը ունենանք:

«Տէսէ՛ ի՛ որպիսի՛ սէր շնորհեաց մեզ

Հայր, զի որդի՛ք Աստուծոյ Կոչեացու՛ն

մէ՛կ» : (Լ. Յովհաննոս Գ:1)

«Տեսէ՛ք թէ Հայրը ինչպիսի՛ սեր շնորհեց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ գաւակներ կոչուինք. ...»:

Աստուածպաշտութիւնը սէրէն յառաջ կուգայ: Անձ մը իր չսիրածը չի կրնար պաշտել: Ուրեմն Աստուածասիրութիւնը Աստուածպաշտութիւն է: Կարգ մը անձերու համար Աստուածպաշտութիւնը դժուար է. ինչպէ՞ս սիրել «Աստուած», որ չեն տեսած եւ չեն ճանչնար: Աստուծոյ գոյութեան կը հաւատանք, որովհետեւ ըստած է թէ Աստուած կայ: Քանի որ անձը ինք անձնական փորձառութիւնը չունի, այդ միայն պարզ հաւատալիք մը (belief) կ'ըլլայ, քան թէ հաւատք (faith):

Այս կացութեան առջեւ մի քանի հարցումներ ի մտի կու գան.

ա- «Ինչպէ՞ս սիրել Աստուած, որ անտեսանելի է»:

Կրօնքներ կան, ինչպիսին է Հնդկական կրօնքը, հասկնալով այս դժուարութիւնը, իրենց տաճարները Աստուծոյ զանազան յատկութիւնները ներկայացնող արձաններով եւ պատկերներով զարդարած են: Արտաքնապէս կը թուի թէ անոնք շատ մը չաստուածներ՝ կուռքեր կը պաշտեն, մինչդեռ անոնք Աստուծոյ այդ յատկութիւններն են որ կը պաշտեն: Նպատակը անոնց ներկայացուցած գաղափարը պաշտել է, քան թէ արձանը: Բայց անոնցմէ շատերուն համար գաղափարը կորստած է եւ արձանները մնացած: Մովսիսական եւ Մահմետական կրօնքներու մէջ, ոչ պատկեր եւ ոչ ալ արձաններ կան: Իսկ Պուտտայական կրօնքի միայն որոշ յարանուանութիւնները Պուտտան ներկայացնող արձան մը ունին: Քրիստոնէական եկեղեցիներու մէջ, համաձայն յարանուանութեան, միայն խաչ մը, մի քանի պատկեր, կամ նոյնիսկ բազմաթիւ արձաններ կան: Եկեղեցւոյ մէջ կարելի է անձի մը կամ անձերու

ականատեսս ըլլալ, որոնք պատկերի մը առջեւ աղօթելէ յետոյ իրենց ձեռքը պատկերին կը քսեն կամ պատկերը կը համբուրեն: Նման պաշտամունք մը սխալ է, եթէ նպատակը պատկերին ներկայացուցած սրբութիւնը, կամ Աստուծոյ գաղափարը պաշտել է, բայց ոչ պատկերը: Նոյնն է նաեւ Հնդկական կրօնքին մէջ:

Ի ուրի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիներու խորաններուն վրայ պատկեր մը զետեղուած է՝ Յիսուս մանուկ Մարիամ մօր գիրկը նստած: Աս պատկերը պաշտել է, ինչպէս մահմետականները կը վերագրեն եւ այդ պատճառով ալ Քրիստոնէութիւնը կը վարկաբեկեն: Նկարը մեզի Աստուծոյ մարդեղութիւնը կը յիշեցնէ: Ան կ'օգնէ որպէսզի կարենանք Զինք ամէն անձի էութեան մէջ տեսնել ու պաշտել: Երբ խաչի առջեւ կ'աղօթենք, խաչափայտը է որ կը պաշտենք, այլ խաչին ներկայացուցած՝ Յիսուսի ցուցաբերած զոհաբերութեան գաղափարն է որ կը պաշտենք: Եթէ մենք ալ մեր «եղբօր» բարեւաւման եւ անդորրութեան համար Յիսուսի նման զոհուելու պատրաստ չենք, ի՞նչ է խաչի առջեւ աղօթելուն իմաստը եւ արժէքը:

Որպէս Քրիստոնեայ Աստուածաշունչին հանդէպ մեծ յարգանք կը ցուցաբերենք: Յարգանքը գիրքին թուղթին, մեղանին համար է, այլ յարգանքը անոր պարունակութեան ներկայացուցած գաղափարին համար է: Աստուածաշունչը Աստուածայայտնութեան դասագիրք մըն է: Եթէ Աստուածաշունչը պատուանդանի մը վրայ դնենք, ամէն օր զայն համբուրենք եւ առջեւը երկրպագութիւն ընենք, բայց անոր սորվեցուցած կենցաղը չապրինք, մեր պաշտամունքը ի զուր կ'ըլլայ՝ անօգուտ ձեւակերպութիւն:

Ըսուած է եւ կը հաւատանք, թէ Աստուած ամէն տեղ է ու բոլոր ստեղծագործութիւնը իր մարմինը կը

ներկայացնէ: Ուրեմն Աստուած մեր բոլորին մէջն է եւ մենք իր մարմնոյն մաս կը կազմենք: Միթէ Աստուածաշունչի մէջ չէ՞ գրուած. «Ձեր մարմինները Աստուծոյ տաճարներն են»:

«Ո՞չ Գիտէ՞ ե՞րբ Կարո՞ւմ եմ լսել Երանայ,
եւ Ընդհանրապէս Կարո՞ւմ եմ լսել Երանայ»:

(Լ. Կորնթացիս Գ:16)

«Ձե՞ք գիտե՞ր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»:

«Երբեք ո՞չ Գիտէ՞, զի մարմին չե՞ր Կարո՞ւմ
եմ Ընդհանրապէս որ եւ լսել Երանայ՝ զոր ունի
Երանայ: Եւ չե՞մ անշահեց Կարո՞ւմ ...
Վերջապէս Կարո՞ւմ լսել մարմինս
Չե՞ր եւ յոգիս չե՞ր»:

(Լ. Կորնթացիս Գ:19-20)
«Ձե՞ք գիտե՞ր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ
Հոգիին, որ ձեր մէջն է, որ Աստուծոյ առած էք ու
դուք ձեր անձին տիրել չէք. ... ուստի փառաւորեցէ՛ք
Աստուած ձեր մարմիններուն ու Հոգիներուն մէջ, որոնք
Աստուծոյ կը պատկանին»:

Ան նաեւ անասունին մէջն է, ինչպէս նաեւ բոյսին:
Ան ամէն մէկ հիւլէի մէջն է, որովհետեւ կը հաւատանք
թէ Ան ամէն տեղ է, ապա թէ ոչ Աստուածաշունչին մէջ
գրուած պիտի չըլլար, թէ Ան ամէն տեղ է: (Յովհաննէս
Ա:3) Եթէ այս գաղափարին իսկապէս կը հաւատանք,
պէտք է ամէն ինչ՝ ներառեալ մեր թշնամիները
սիրենք ու պաշտենք: Միթէ ճիշդ ասոր համար չէ՞ր, որ
Յիսուս ըսաւ «սիրէ՛ք ու թշնամի՛ր» եւ գինք սպաննող-
ներուն համար աղօթեց: Նոյնը ըրաւ Ստեփաննոս երբ
կը քարկոծուէր, ու «Երկինք իր առջեւ բացուեցաւ»՝
(Գործք առաքելոց Է:55) Աստուածայայտնութեան
արժանացաւ: Մենք ալ նման կենցաղով մը կրնանք

Աստուածայայտնութեան արժանանալ:

«Լոսարոտէ ապաղէն զի ասացաւ. «Իրեացեա
զնկեր ի», եւ արեացեա զԲշնամին ի»: Այլ
եւ ասեմ յեզ. «Իրեցէի զԲշնամին յեր.
օրհնեցէի զանիթիշա յեր. Բարի արարէի
արելեաց յերոց. եւ աղօթա ՚ի վերայ
այնոցիկ՝ որ լլկեան զյեզ եւ Հալաթեան»:

(Մարտիրոս Ե: 43-44)

«Լսեր էք որ ըսուեցաւ. «Քու ընկերդ սիրես ու
թշնամիդ ատես»: Բայց եւ ձեզի կ'ըսեմ. «Սիրեցէք ձեր
թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարիք ըրէք
անոնց որ ձեզ կ'ատեն եւ աղօթք ըրէք անոնց Համար
որ ձեզ կը չարչարեն ու կը Հալածեն»:

Արդեօք կարելի է^o, որ անձ մը իր երեսին բջիջը
աւելի սիրէ քան իր մատին բջիջը: Մարդ իր մարմնոյն
բոլոր բջիջները նոյն համեմատութեամբ կը սիրէ եւ
կը խնամէ, որովհետեւ բոլորն ալ իր ամբողջութեան
մաս կը կազմեն: Երբեմն որոշ բջիջներ կը հիւանդանան
եւ նոյնիսկ անհատի կեանքին կը սպառնան:
Ենթադրենք թէ ոտքի մատներու փտախտ (gangrene)
գոյանայ: Երբ անձը ենթարկուի վիրաբուժական
հատումի եւ ոտքը կտրուի, միթէ կացութիւնը անձին
մեծ յուզում չի^o պատճառեր: Կեանքը փրկած ըլլալուն
համար կրնայ ուրախանալ, սակայն կորսնցուցած
ոտքին համար ալ կը տխրի: Ուրեմն ճշմարիտ
Աստուածպաշտութիւնը, առանց խտրութեան բոլոր
ստեղծագործութիւնը սիրել ու պաշտել է: Աս պէտք է
մեր կենցաղով ցոյց տանք եւ առանց անձնասիրու-
թեան ամենափոքր նշոյլի, բոլորին հետ զոհաբերական
յարաբերութիւն մշակենք: Ասիկա թէ՛ ընկերը եւ թէ՛
թշնամին սիրել կը նշանակէ, ինչպէս նաեւ ընդհանուր

բնութիւնը: Բնութեան հանդէպ եղած սէրէն ծնունդ կ'առնէ օդը, ջուրը եւ հողը չապականելու մտայնութիւնը, ինչպէս նաեւ գլխարտութիւնը թէ՛ մարդոց եւ թէ՛ ամենափոքր միջատէն մինչեւ ամենամեծ անասունը:

Միթէ բոլորն ալ Աստուծոյ մասնիկները չե՞ն: Աստուածպաշտութիւնը միայն խօսքով չըլլար, այլ նախ խորհուրդով, բայց աւելի կարեւորը գործքով: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Ան, որ զիս կը սիրէ, իմ խօսքերս կը պահէ»:

«... Եթէ ո՛չ սիրէ զիս զբանն իմ պահեացէ եւ Ըսյր իմ սիրեացէ զնա»: (Յովհաննոս ԺԴ: 23)

«... Եթէ մէկը սիրէ զիս՝ պիտի պահէ իմ խօսքս, ու իմ Հայրս պիտի սիրէ զայն»:

բ- «Ինչպէ՞ս վստահ ըլլալ թէ Աներեւոյթ Աստուած գոյութիւն ունի:»

«Լոյս 'ի Լուսոյ» գիրքիս մէջ «Աստուած կա՞յ թէ չկայ» խորագրեալ Դ. գլխուն մէջ Աստուծոյ գոյութեան մասին գրած էի, բայց ինչպէ՞ս գիտնանք թէ Աստուած ամէն տեղ է: Այսօր բնագիտութեան (physics & cosmology) գիտունները յստակօրէն փաստած են, թէ զօրութիւն մը կայ, որ բոլոր տիեզերքին թափանցած է: Տակաւին այդ զօրութեան բնոյթը չեն կրցած հասկնալ, որով զայն «Մութ զօրութիւն» կոչած են: Նաեւ բնագիտութեան օրէնքներուն համաձայն բացայայտօրէն փաստուած է, թէ ամէն ինչ, ներառեալ նիւթը, միայն խտացած զօրութեան ալիքներէ կազմուած է: Անցեալին, ըստ Նիւթընեան բնագիտութեան, անկարելի էր նիւթ ստեղծել կամ զայն փճացնել, այլ միայն կարելի էր անոր երեւոյթը փոխել: Իսկ հիւլէական ռումբի գիտէն յետոյ այս օրէնքը ջնջուած է: Ըստ նոր

օրէնքին զօրութիւնը (energy) ստեղծել կամ փճացնել անկարելի է: Ինչ որ բնագիտութիւնը տակաւին նոր կը սկսի հասկնալ, կրօնքը արդէն դարեր առաջ յայտարարած էր: Բնագիտութեան «Մութ զօրութիւն» կոչածը Ս. Հոգին է՝ Աստուծոյ զօրութիւնը: Եթէ այս նոյն զօրութիւնն է որ մեզ բոլորս կազմած է, ուրեմն ի՞նչ է մեր տարբերութիւնը: Իրարմէ կը տարբերինք, որովհետեւ երեւոյթով աչքի տարբեր կ'երեւի՞նք, կամ մեր ազատ կամքով տարբեր կը խորհի՞նք: Անոնք յատկութիւններ են որոնք ճշմարտութեան չեն պատկանիր: Ճշմարտութիւնը զօրութիւնն է, որ մեր իւրաքանչիւրին մէջն է: Այս ճշմարտութիւնը ի զօրու է նոյնիսկ անոնց համար, որ տակաւին միայն նիւթականին կը հաւատան: Հարկ է չմոռնալ, թէ երբ անձ մը թթուածին (oxygen) կը շնչէ եւ բնածխային թթու (carbon dioxide) կ'արտաշնչէ, իր արտադրած հիւլէները, որ իր մարմնոյն մասնիկներն էին, շատ հաւանական է, որ ժամանակի ընթացքին ուրիշի մը մարմինին մաս պիտի կազմեն: Շատ հաւանական է, որ այսօր մեր մարմիններուն մէջ գտնուող հիւլէներէն ոմանք անցեալին Յիսուսի մարմինին մաս կազմած էին: Հետեւաբար մեր մարմիններն ալ յաճախ փոփոխութեան ենթակայ են եւ նոյնիսկ նոյն հիւլէները իրարու հետ կը բաժնենք: Եթէ անձ մը ուրիշի մը վնաս կը հասցնէ, այդ զօրութիւնն է որ կը խանգարէ: Որովհետեւ երկուքն ալ այդ նոյն զօրութենէն յառաջ եկած են, ուրեմն անձը ինքզինքին է որ կը վնասէ: Այս հասկացողութեան հետեւանք մեզի տրուած է կրօնքի անխախտելի օրէնքը. «Ինչ որ ցանես, ան կը հնձես»:

«Մի՛ խաբի՛, Լսարուստ ո՛չ արճամարճի:

Զի գոր ինչ աւրմանէ մարդ գնոյն է-

Ընջեացէ՛ »: (Գաղաթաղիս Զ:7-8)

«Մի՛ խաբուիք՝ Աստուած չի ծաղրուելը, որովհետեւ ի՛նչ որ մարդ կը սերմանէ՝ գա՛յն ալ պիտի հնձէ»:

Այս զօրութեան ահը Հայր Աստուածն է, որ մենք հասկնալու կամ ըմբռնելու կարողութիւնը չունինք: Սուրբ Հոգին Անոր գործօն զօրութիւնն է, որ բխած է Հօրմէն: Սուրբ Հոգին բոլոր շնորհներուն ու բոլոր գիտութեանց շտեմարանն է: Ան ստեղծագործիչ է: Ան սիրոյ արտայայտութիւնն է: Որովհետեւ ամէն ինչ այդ զօրութեան միջոցով կազմուած է, վնասել անձի, անասունի կամ բոյսի եւ նոյնիսկ առարկայի, կը նշանակէ արհամարհել եւ հայհոյել հանդէպ Ս. Հոգիին, որ աններելի մեղքն է:

«Լճէն ասէմ յեւ, պի սմէնայն թողցի որդոց մարդկան մեղէ՛ եւ ԸայԸոյոթիւնէ՛ որչաօ՛ եւ ԸայԸոյեացէն, Բայց որ ԸայԸոյեացէ պԸոգիւն սուրբ, ոչ ունիցի թողոթիւն յաւիտեան, այլ պարգապան լիցի յաւիտեանիցն մեղաց» : (Մարկոս Գ: 28-29)

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ ամէն մեղք պիտի ներուի մարդոց որդիներուն եւ Հայհոյութիւնները՝ որչաօ որ Հայհոյեն. Բայց ով որ Սուրբ Հոգիին դէմ Հայհոյէ, յաւիտեան թողութիւն պիտի չունենայ, Հապա յաւիտեանական դատատանին պարտաւոր պիտի ըլլայ»:

«Եւ ամէնայն որ ասէ Բան պորդոց մարդոց, թողցի նմա. Բայց որ պԸոգիւն սուրբ ԸայԸոյիցէ, մի թողցի նմա» : (Ղուկաս ԺԲ: 10)

«Ամէն ով որ Որդի մարդոյ դէմ բան ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ Հայհոյութիւն ընէ, պիտի չներուի անոր»:

«... ամէնայն մեղէ՛ եւ ԸայԸոյոթիւնէ՛

Թողցին մարտկան, Բայց պահպան

Հայհոյութիւն մի Թողցի» : (Մարտեոս ԺԲ : 31)

«... Ամէն մեղք ու հայհոյութիւն պիտի ներուի մարդոց բայց Սուրբ Հոգւոյն դէմ եղած հայհոյութիւնը պիտի չներուի մարդոց»:

Աններելի մեղք ըսելով ի՞նչ կը հասկնանք: Աստուած մեզի պիտի պատժէ՞: Աս անկարելի է: Աստուած, որ սէր է, անկարելի է որ պատժէ: Բայց Աստուած իր դրած Աստուածային «Ինչ որ ցանես, ան կը հնձես» օրէնքին դէմ չի գործեր: Որովհետեւ Սուրբ Հոգիին դէմ եղած մեղքը աններելի է, մեզի պատահած բոլոր լաւ ու վատ պատահարները, մեր ցանած հունտերուն հոճքերն են: Միւրոյ արտայայտութիւնը ոչ թէ «կը սիրեմ» ըսել է, այլ գլխաւորապէս ըլլալ ու գոհուիլն է:

«Ժողովուրդս այս շրթանքով պատուէ պիտի տայ սիրոյ իրեանց հետապնդող մեկուսի՛ ելինքն: Զորս պաշտեն պիտի, ուսուցանեն վարդապետութիւնս՝ պարտկան պատուիրելալս» : (Մարտեոս ԺԷ : 7)

«Այս ժողովուրդը միայն շրթունքով կը պատուէ զիս՝ բայց իրենց սիրտը հեռու է ինձմէ: Եւ պարտապ տեղը կը պաշտեն զիս՝ մարդոց պատուէրները ստովեցնելով իբր վարդապետութիւն»:

Յիսուս վերի համարին մէջ գրուածները այդ օրուայ հրեաներուն համար ըսաւ: Միթէ այս խօսքը անուղղակիօրէն մեզի ալ ուղղուած չէ՞:

Ուրեմն ճշմարիտ Աստուածապաշտութիւնը, որ ճշմարիտ Աստուածասիրութենէ կը ծագի, կը նշանակէ բոլոր ստեղծագործութիւնը սիրել: Հետեւաբար կը նշանակէ բոլորին կարեկցութիւն եւ գուրթ ցոյց տալ ու ծառայել, նոյնիսկ ծառայողին մինչեւ իսկ խոցելի

վիճակի հասնիլը:

Աստուածպաշտութիւնը միայն աջ ու ձախ «Օրհնեալ է Տէր» ըսելով հանդերձ տարբեր կրօնքները ատել չէ: Անկարելի է ատել ոեւէ մէկը կամ որեւէ կրօնք, քանի որ Աստուած հոն ալ է: Եթէ կրօնասիրութիւնը եւ եկեղեցասիրութիւնը այսպիսի Աստուածասիրութենէ մը կը ծագին, հարկ է որ սիրենք մեր կրօնքն ու եկեղեցին եւ նոյնիսկ անոնց համար զոհուելու պատրաստ ըլլանք: Բայց եթէ Աստուածասիրութեան վայել կենցաղ մը չենք ապրիր, ծէսն ու ծիսակատարութիւնները, ինչպէս նաեւ կրօնքը եւ եկեղեցին անիմաստ կ'ըլլան: Այդպիսի կրօնասիրութիւն մը եւ եկեղեցասիրութիւն մը ի՞նչ կ'արժէ: Անոնք ատելութեան հետեւանք միայն ծայրահեղութիւններու եւ պատերազմներու պատճառ կ'ըլլան, ինչ որ խաւարամտութենէ եւ եսասիրութենէ կը ծագի:

Ուրեմն, լաւագոյն կրօնքը ո՞րն է: Կը խորհիմ թէ ամէն անձի համար, այն կրօնքը, որուն մէջ ինք ծնած է, լաւագոյնն է, քանի որ իրեն համար այդ կրօնքը Աստուած ընտրած է: Եթէ զանազան կրօնքներու պատկանող անձեր իրենց կրօնքներուն մէջ խորասուզուին եւ ճշմարիտ Աստուածասիրութիւնը ու Աստուածապաշտութիւնը գտնեն, պիտի տեսնեն, որ ճշմարիտ կրօնքը բոլորին համար ալ նոյնն է եւ այդ կրօնքը «Մարդկայնութիւն»ն է (Humanism): Այն ատեն բոլորին վարուելակերպն ալ մարդկայնական (Humanitarian) կ'ըլլայ:

«Լճէնայն ինչ ուղիղ է իմաստնոց. Էյարմարեալ է այնոցիկ ոյժ Գրասէն պարիտութիւն» : (Լուսկայ Լ:9)

«Բոլորն ալ յստակ են հասկցողին համար, եւ ուղիղ՝ դիտութիւն գտնող ներուն»:

ՅԱԲԵԼՈՒԱԾԱԿԱՆ

Այս գիրքին յառաջաբանը գրելէ յետոյ տեղեկացայ թէ Կ. Պոլսոյ Օրթոգոքսալի Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ Սուփիական (Սուֆի) արարողութիւն մը կատարուած էր: Յառաջաբանի վերջաւորութեան աւելցուցի այդ տեղեկութիւնը՝ իբր ցայտուն օրինակ այն զարթօնքին, որուն մասին կ'ակնարկէի:

Դժբախտաբար մի քանի օր վերջ երկու բաց նամակներ ուղարկութիւնս գրաւեցին, ուր եղածը «ոտնձգութիւն» կը նկատուէր ու քննադատութիւն եւ դժգոհութիւն կը յայտնուէր եւ այդ արարքը մեր աւանդութիւններուն դէմ «դաւաճանութիւն» կը համարուէր:

Ահաւասիկ այդ նամակներէն մէջբերումներ.
 «... սակայն Սուֆի Տերվիշ Արծնականներուն եւ «Դասավլուֆ Երգչախումբ»ի ընկերակցութեամբ Հայաստանեայց Եկեղեցիի մէջ աղօթք կատարելու համար հրաւիրուիլը ծայրաստիճան քննադատելի է, քանի որ այս ելոյթը ոչ թէ մշակութային բնոյթ ունի, այլ կրօնական բնոյթ մը ունի»:

«... Այս ելոյթը կը վայելէր Թուրքիոյ Հայոց Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդի բարձր Հանդիսապետութիւնը»:

«... Հայ Ժողովուրդը իրմէ կը պահանջէ իր առաջնաճերթ պարտականութիւնը կատարել որն է, նախ Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդութիւններուն ու սկզբունքներուն պաշտպանը ու պահապանը ըլլալ»:

«... արդեօք թուրքերը պիտի արածնէի՞ն, որ մզկիթներու մէջ հայերէն շարականներ

երգուին...»:

Վերոյիշեալ «բաց նամակ»ները ինծի մեծ զարմանք կը պատճառեն: Ըստ գրուածին եթէ այս ելոյթը մշակութային ձեռնարկ մը ըլլար, ընդունելի պիտի ըլլար: Տարբեր կրօնքի մը աղօթքն էր որ անյարմար նկատուած էր: Եկեղեցւոյ՝ եկեղեցական շէնքի մը գործածութեան առաջնահերթ նպատակը «աղօթավայր» ըլլալն է եւ ոչ թէ մշակութային օճախ: Ինչո՞ւ նեղուիլ, եթէ նոյն Աստուծոյն կ'աղօթուի: Ընդհակառակը ուրախ պէտք է ըլլանք, հոգ չէ թէ անոնց ծէսերը մեր ծէսերէն կը տարբերին: Ճիշդ է թէ սրբազան հայրը որպէս Հայաստանեայց Եկեղեցւոյ եպիսկոպոս օծուած է, բայց ան միայն հայ ժողովուրդի համար օծեալ մը չէ, այլ Աստուծոյ օծեալն է (եթէ կը հաւատանք քրիստոնէական եկեղեցւոյ եօթը խորհուրդներուն): Ուրեմն օծեալին «առաջնահերթ պարտականութիւնը» նախ իրեն յանձնուած հօտը եւ յետոյ ալ համայն մարդկութիւնը դէպի Աստուածահաճոյ կենցաղի մը՝ Աստուածապաշտութեան առաջնորդել է՝ առանց խտրութեան: Ամենուրեք եղբայրսիրութիւն եւ համերաշխութիւն տարածել է: Սրբազանին տուած որոշումն ալ ասոր ցայտուն մէկ օրինակն է:

Փոխանակ քննադատելու, պարտինք զինք քաջալերել եւ իրեն զօրավիզ կանգնիլ: Ո՞րն է կարեւորը՝ Աստուած թէ աւանդութիւնը: Սխալ չհասկնանք, ես ալ մեր աւանդութիւններուն եւ մեր եկեղեցւոյ ծէսերուն շատ կապուած եմ: Չանոնք ուրիշ որեւէ եկեղեցւոյ ծէսերուն հետ չեմ փոխեր: Բայց Աստուածասիրութիւնը աւանդութիւններէ եւ ծէսերէ աւելի վեհ է: Պէտք չէ երկերես ըլլանք եւ կեղծաւորութիւն ընենք: Եթէ իսկապէս մեր աւանդութիւններուն նկատմամբ բծախնդրութիւն ցոյց կու տանք, այն ատեն ինչո՞ւ կ'արտօնենք որ ժամերգութիւնները կրճատուին:

Ինչո՞ւ կ'արտօնենք որ մեր ծիսական լեզուն փոխանակ գրաբարի, աշխարհաբար ըլլայ: Պարտինք ուշադիր ըլլալ, որպէսզի աւանդապաշտութիւնը Աստուածապաշտութեան տեղը չգրաւէ: Ինչպէս վերեւ շեշտուած էր, եկեղեցասիրութիւնը, կրօնասիրութիւնը եւ, հոս ալ աւելցնեմ, աւանդապաշտութիւնը եթէ Աստուածասիրութենէ ու Աստուածապաշտութենէ չեն ծագիր, ձեւակերպութիւն են: «Ես»ին կը ծառայեն եւ մեր հոգեւոր կեանքին համար աւելի վնասակար են, քան թէ օգտակար: Արդե՞օք մեր ժողովուրդի մեծամասնութեան հայեացքն ալ նման կոյր աւանդապաշտութիւն է: Եթէ այդպէս է ճշմարտութիւնը, չեմ գարմանար թէ ինչո՞ւ հայ ազգը միշտ պատիժի կ'ենթարկուի:

Պատարագի ընթացքին դպիրները կ'երգեն.

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ. Որ է՛նն Աստուած աստ բազմեցաւ: Խաղաղութեան ձայն հրնչեցաւ. Սուրբ ողջունի հրամանն սուաւ, եկեղեցիս մի անձ եղել. Համբոյրս յօդ լրման սուաւ. Թշնամութիւնն Հեռացաւ, սէրն յընդանորրս սփռեցաւ: Արդ պաշտօնեա՛յք բարձեալ զձայն, տո՛ւք օրհնութիւն 'ի մի բերան. միասնական աստուածութեան որում՝ Սրովբէքն են սրբաբան»:

Պէտք է լաւ հասկնալ երգուածին իմաստը եւ զայն չմոռնալ: Այս երգը մեր անձերուն մէջ Աստուածայայտնութիւնը կը յայտարարէ: Քրիստոս մեր մէջ ի յայտ եկաւ կ'ըսէ: Աստուծոյ մեր անձերուն՝ մարմիններուն մէջ բազմիլը կը յայտարարէ, քան թէ մեր «Ես»երուն: Խաղաղութիւնն ալ ինքնաբերաբար կը յայտնուի: Աստուծոյ ներկայութիւնը ինքնաբերաբար խաղաղութիւն կը բերէ: Երբ ամենուրեք՝ ամէն անձի մէջ Աստուած տեսնենք, ինչպէս զիրար չե՞նք ողջուներ: Իրար ողջունել կը նշանակէ Աստուած ողջունել: Միթէ

պիտի չուզէի՞նք Աստուած ողջունել: Եթէ իւրաքանչիւր ներկայ անձ Աստուածային արտայայտութիւն մը ըլլալուն անդրադառնայ, ներկաներուն բոլորն ալ մէկ անձ կ'ըլլան: Եկեղեցին հաւատացեալներու հաւաքականութիւնը կը ներկայացնէ: Եթէ բոլորս Աստուծով մէկ ըլլանք, արդեօք որեւէ թշնամութիւն կը մնա՞յ: Անձ մը կ'ուզէ՞ ինքզինքին թշնամի ըլլալ: Այսպէսով սէրն ալ մեր միջոցով ամենուրեք կը սփռուի: Երգը կը յանձնարարէ որ երգի բառերուն արտայայտած գաղափարը մեր անձերուն՝ մեր կեանքին մէջ իսկապէս իրականանալու պարագային, որպէսզի բոլոր աշխարհ իմանայ եւ գիտնայ, միասնաբար եւ բարձր ձայնով օրհներգել եւ փառաբանել այդ Աստուածայայտնութիւնը՝ Աստուած:

«Բաց նամակ»ներէն մէկուն մէջ նաեւ հարց տրուած էր թէ արդեօք Մահմետականները մեզի պիտի արտօնէի՞ն մզկիթի մէջ քրիստոնէական կրօնքի արարողութիւն կատարել: Այս հարցումին դրական կամ բացասական պատասխան տալ տեղին չըլլար, նկատելով որ իրենց խորհելակերպը չենք գիտեր: Եթէ նման խնդրանք մը ներկայացուի ու մերժուի, այդ պարզապէս խաւարամտութեան հետեւանք գործուած սխալ մը կ'ըլլայ: Փափաքելի պիտի ըլլա՞ր խաւարամտութեան հետեւանք մեր սխալ գործելը:

Խաւարամտութիւնը սիրոյ պակասէն ծնունդ կ'առնէ: Յուսալից ենք, որ երբ մեր կողմէ մզկիթի մէջ արարողութիւն կատարելու դիմում մը ըլլայ, ժխտական արձագանգ չ'ունենար:

Ճշմարիտ Աստուածպաշտութիւնը ոչ աւանդութեան մէջ է եւ ոչ՝ ալ ծէսերուն, այլ ան սիրոյ արտայայտութեան գազաթնակէտն է, որ նոյնիսկ մօր մը իր զաւկին հանդէպ ունեցած սէրը կը գերազանցէ: Ամէն անձ իր ճգնաժամային պահերուն Աստուած կը

յիչէ, բայց ճշմարիտ աստուածապաշտը ան է, որ իր ուրախ եւ երջանիկ պահերուն ալ Աստուած կը յիշէ:

Չինական առածը կ'ըսէ. «Հազար մղոնի երկար ճամբորդութիւն մը առնուած առաջին քայլով կը սկսի»: Մենք առինք այդ առաջին քայլը եւ այդ ճամբորդութիւնն ալ մեզ դէպի Աստուած կ'առաջնորդէ:



«Որդեակ՝ եթէ ընկալեալ պարագամս պարտօնքանի իմոյ ժաշկեացես յանչին ինձմ. լո՛ւիցէ իմաստութեան ունկն ին. եւ առակեացես զսիրոյ ին՝ ի Հանճար. եւ առանդեացես զնա որդոսոյ ինձմ՝ ի խրատ: Զի եթէ զիմաստութիւնն կոշեացես ի ինչ եւ Հանճարոյ ցացես զանչն ին: Եւ եթէ խնդրեացես զնա իբրեւ զարժամ ընդիր. եւ իբրեւ զգանձս իննեացես զնա: Յայնժամ ՚ի միտ առցես զերկեւոջ Տեառն. եւ զբարութիւնն Լստո՞ւսոյ Գրցես: Զի Տէր ցաւ զիմաստութիւնն. եւ յերեսաց նորա Գիրտութիւնն եւ Հանճար: Գանչէ ուղոց զփրկութիւնն. զերակացոս լինի Գնացից նոցա: Պահել զճանապարհս իրաւանց. եւ զճանապարհս երկիւղածաց իւրոց ամբացոսացէ»: (Լուսկաց Բ: 1-8)

«Որդեակս, եթէ իմ խօսքերս ընդունիս եւ պատուիրաններս քովդ պահես, Որպէսզի ականջդ իմաստութեան ուշադիր ըլլայ ու սիրտդ Հանճարին բանաս, Եթէ դուն խելացութիւնը քեզի կանչես եւ ձայնդ Հանճարին ուղղես, Եթէ գայն արծաթի պէս փնտռես ու պահուած գանձերու պէս խնդրես, Այն ատեն Տէրոջ վախը պիտի Հասկնաս եւ Աստուծոյ գիտութիւնը պիտի գտնես: Արդարեւ իմաստութիւնը Տէ՛րը կու տայ, գիտութիւնը ու Հանճարը անոր բերանէն են: Ան ուղիղներուն խոհականութիւն կը վերապահէ. Ինք է պարկեշտութեամբ ընդացողներուն վաճանը, որպէսզի իրաւունքի ուղիները պաշտպանէ եւ իր բարեպաշտներուն ճամբան պահէ»:



ԱՌ ՈՏՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

*Տէր իմ՝ դուռն երջանկութեան
Դուն ես բոլոր ցաւերու դարման.
Վերջակէսն ալ տխրութեան
Ակր անհուն ողորմութեան:*

*Տէր իմ՝ դուռն յաջողութեան
Արժանի ըրէ մարդկութեան.
Քու շնորհներուդ բազմազան
Տոյց տուր նշոյլ մ' ողորմութեան:*

*Տէր իմ՝ դուռն բժշկութեան
Պարգեւէ բժշկութիւն հոգեկան.
Եթէ յարմար, նաեւ Տիգիբական
Կ'ապաւինինք Քու ողորմութեան:*

Տէր իմ՝ դուռն խաղաղութեան
 Սուրբ սիրտ շնորհէ Հանրութեան.
 Չսպուին խորհուրդներ բազմազան
 Անդրադառնալ Քու ողորմութեան:


Տէր իմ՝ դուռն սիրոյ անապական
 Բաժնէ սերոյ Համայն մարդկութեան.
 Միժողորրս մը եղբայրսիրութեան
 Է ապացոյցը Քու ողորմութեան:

Տէր իմ՝ դուռն գիտութեան
 Մակարդակ մը գիտակցութեան.
 Տուր Համայն մարդկութեան
 Որ գիտակցին Քու ողորմութեան:

Տէր իմ՝ Դուռն փրկութեան
 Յոյց սուխր խաչին ճամբան.
 Եւ եսասիրութեան մահուան
 Կարօտ ենք Քու ողորմութեան:

Վ.Ս.





ԵՈՒՆՈՒՄ ԷՄՐԷ

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ ԳԻՏԱԿ Է.
 ՃՇԱՄՐԻՑ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝
 ԻՆՔՆԱԳԻՏԱՆԱԿ Է
 ԵՅԷ ՍԱՐԴ ԻՆՔՉԻՆՔ ՉԳԻՏԱԿ
 ԳԻՏՅԱԾԸ ԻՆՉ ՕԳՈՒՑ
 Կ՝ՈՒՄԵՆԱԿ:



(ՄԷՐ ԱՅ ԱՍՏՈՒԾ)

ՍԵՐԳ զԻս իլեց նոյնիսկ ինձմէ
 Ցանկամ ըլլալ անբաժան քեզմէ
 Օր ու գիշեր սիրոյդ Համար կու լամ
 Միայն ու միայն քեզ է որ կը տենչամ:

Ո՛չ կեանքն է ինձ Համար գրաւիչ
 Ո՛չ ալ մահը ամենեւին վրդովիչ
 Միայն քո սէրն է միսիժարիչ
 Միայն ու միայն քեզ է որ կը տենչամ:

Թէ որ զիս մեռցնեն
 Հետքս անգամ անհետացնեն
 Վերադարձի կոչ իսկ գայ Հողէն
 Դարձեալ միայն քեզ է որ կը տենչամ:

Սիրահարուած Եռնուս կը կոչուիմ
 Ամէն մի օր կը բորբոքի կրակն իմ
 Երկրի վրայ, կամ երկինք գտնուիմ
 Միայն ու միայն քեզ է որ կը տենչամ:

Ազատ թարգմանութիւն



- 2 -

ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ՅՈՐԴՈՐ



ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ՅՈՐԴՈՐ

«Լուր որդեակ Հօրն որ թնասս սխեպս է-
մի արհամարհեր սջերոս-թիւն մօր լոյ» :
(Լուսկայ ԻԳ:22)

«Հնազանդէ՛ Հօրդ՝ որ քեզ ծնաներ է, ու մի՛
արհամարհեր մայրդ՝ երբ ծերանայ»:

Վերեւի տողերը Սողոմոն իմաստունին մեզի տուած յորդորն է՝ առնուած Առակաց գիրքէն: Ի՞նչ է այս յորդորին նպատակը: Ինչո՞ւ Հնազանդիլ մեր Հօր եւ Հարհամարհել, Հանտեսել մեր մայրը, նա մանաւանդ երբ ան ծերանայ եւ խնամքի կարօտի: Այս յորդորը շատ աւելի կարեւորութիւն կը ստանայ, երբ կը տեսնենք, թէ Աստուծոյ Մովսէսին տուած տասը պատուիրաններէն մին ալ նման է.

«Պատուեա՛ սխայր լո է- սմայր լո. սխ
լեպ Բարի լինիցի, է- սխ երկայնակեաց
լինիցի» ՚ի վերայ երկրին Բարո-թեան՝ սոր
Տէր Լսորո-աթ ցացէ լեպ» : (Ելից Ի:12)

«Պատուէ՛ Հայրդ ու մայրդ, որպէսզի օրերդ երկար
ըլլան այն հողին վրայ՝ որ Տէրը, քու Աստուածդ, քեզի
կու տայ»:

Ներկայ դարուս, ընդհանուր առմամբ չեշտը՝ կարեւորութիւնը աւելի անհատին վրայ է, քան թէ հաւաքականութեան՝ այսինքն ընտանիքին ամբողջութեան: Ասոր նպատակը, շատ հաւանաբար, անհատին վրայ շատ աւելի դիւրաւ ազդեցութիւն կարենալ գործելն է՝ զայն ղեկավարելու համար: Մինչդեռ ընտանեկան կեանքի մէջ անձեր գիրար կը յորդորեն, գիրար զգուշացնելով մէկզմէկու ոյժ կու տան, իրարու զօրավիգ կը կանգնին: Ընտանեկան այս միասնակա-

նութիւնը կը դժուարացնէ արտաքին ուժերու կողմէ անձի մը դեկավարութիւնը: Այսօրուայ անհատին վրայ շեշտ դնելու մօտեցման՝ անհատին կարեւորութիւն տալու տեսակէտին գործած ամենամեծ աւերը եսասիրութեան յառաջացումն է: Ընտանեկան սերտ միութիւնը անձին կ'ընծայէ եսասիրութիւնը անհետացնելու փորձառութեան առիթը:

Իւրաքանչիւր անձի նպատակը երջանիկ ապրիլ է: Անձի մը իսկական երջանկութիւնը կախում չունի իր անձնական իրաւունքները պահանջելէ եւ ստանալէ, այլ երջանկութիւնը կը կայանայ անձին իր բոլոր պարտականութիւնները լիովին կատարելու մէջ: Երջանկութիւնը ձեւով մը սիրոյ արտայայտութեան նշանն է: Երբ ընտանիքի մը մէջ համերաշխութիւն կը տիրէ, գեղեցկութիւնը՝ սիրոյ արտայայտութիւնն ալ ընտանիքի անդամներէն կը ցայտայ, այդ ալ բոլոր համայնքին վրայ իր ազդեցութիւնը կ'ունենայ:

Կեանքին նպատակը, մեր վարած Աստուածազանձոյ կենցաղով, մեր անձերուն մէջ Աստուածայայտնութիւնը իրականացնել է:

Մարդկային կեանքը մանրաշխարհային չափի վրայ (microcosm) կը ներկայացնէ ան, ինչ որ գոյութիւն ունի մեծաշխարհային չափի վրայ (macrocosm): Աստուածայայտնութիւնը մեծաշխարհային չափի վրայ տեղի կ'ունենայ ստեղծագործութեան միջոցաւ՝ այսինքն բոլոր տիեզերքի բովանդակութեամբ, իսկ մանրաշխարհային չափի վրայ ալ մեր՝ այսինքն մարդու միջոցաւ:

Արդեօք գիտե՞նք, թէ երբ Աստուած որոշեց ճշմարտութեան յայտնութիւնը ստեղծագործութեան միջոցաւ, ի՞նչ էր որ ամէն բանէ առաջ, գոյութիւն ունէր Հայր Աստուծոյ հետ:

Առական գիրքի ութերորդ գլուխը շատ

հետաքրքրական է:

«Տէր Լաստոսայեայ պիս 'ի ակնպէն
Ճանադարհայ իւրոց 'ի Գործս իւր. յառաջ
վան պատիպեանս Լաստոսայեայ պիս:
Իսկպէանէ յառաջ վան պէրկիր առնել»: (Լուսկայ Ը:22-23)

«Տէրը զիս ստեղծեց իր ճանապարհին սկիզբը՝ իր գործերուն համար, յաւիտենականութենէն ալ առաջ ստեղծեց զիս: Ան զիս ծնաւ սկիզբին, երկրին ստեղծումէն ալ առաջ»:

Այս համարին մէջ խօսողը իմաստութիւնն է: Որով, ըստ վերեւի համարին, ամէն բանէ առաջ իմաստութիւնը Հայր Աստուծոյ հետ էր, ուրեմն Աստուած իր ստեղծագործութեան իմաստութեամբ սկսաւ: Ստեղծեց բնութիւնը: Ինչպէս Եւան ստեղծեց Ադամի կողէն, նոյնպէս ալ բնութիւնը՝ իմաստութեան «կողէն»: Իմաստութեամբ յառաջ եկած ստեղծագործութեան հայրը Աստուածն է իսկ մայրն ալ բնութիւնը: Ճիշդ այս պատճառով ալ անգլերէնի մէջ կ'ըսուի «mother nature» (մայր բնութիւն): Միթէ Աստուած մարդուն չյայտնուեցա՞ւ Քրիստոսի մարդեղութեամբ՝ Յիսուսի միջոցաւ, որ ծնունդ առաւ բնութեան կատարեալ մայրը ներկայացնող Մարիամ Աստուածածինէն:

Երբ Սողոմոն իմաստուն կ'ըսէ «հնազանդէ՛ հօրդ», մեզի կը հրահանգէ իմաստութեամբ կերտել մեր կենցաղը: Մեր բոլոր խորհուրդները, խօսքերը եւ արարքները պէտք է իմաստութեամբ ըլլան, որպէսզի ծառայեն Աստուածայայտնութեան, այդ ալ մեր կեանքի նպատակը պէտք է ըլլայ: «Մի՛ արհամարհեր մայրդ» յորդորն ալ կը նշանակէ սիրել բոլոր բնութիւնը՝ բոլոր ստեղծագործութիւնը:

Մանրաշխարհային չափի վրայ ալ այր եւ կին՝

հայր ու մայր Աստուածայայտնութեան համար իրար լրացնող միջոցը պէտք է ըլլան:

Այսօր ահանատես կ'ըլլանք աշխարհի վրայ տեղի ունեցող ամէն տեսակի ապականութեան: Ժողովուրդներ, թէ՛ մտային թէ՛ ալ Ֆիզիքական գետնի վրայ, անընդհատ զիրար կ'ատեն, զանազան կրօնքներու հետեւորդներ իրարու հետ կը կռուին: Մարդիկ, ազահուլութեան հետեւանք, մի քիչ աւելի շահու ակնկալութեամբ, յառաջդիմութեան անուան տակ, ապականած են: Ոչ միայն իրենք ապականած են, այլ կ'ապականեն նաեւ հողը, ջուրը եւ օդը: Առ ի հետեւանք մարդ արարածն է որ կը տուժէ: Իր առողջութիւնը կը կորսնցնէ, քանզի ամէն ինչ որ կ'ուտէ, կը խմէ եւ կը շնչէ ապականած է: Անցեալին սրտի հիւանդութիւնը մահուան յառաջընթաց պատճառն էր: Վերջին հինգ-վեց տարիներու ընթացքին տրուած տեղեկութիւններուն համաձայն, աշխարհի վրայ մահուան առաջնակարգ պատճառը քաղցկեղն է:

Քրիստոս ներկայ է ամէն անձի մէջ: Ան, ամէն մի էակի կեանքն ու գիտակցութիւնն է: Ուրեմն, հայր եւ մայր զաւակ մը աշխարհ բերելով, կը մասնակցին բարեշրման՝ ծառայելով Աստուածայայտնութեան: Ինչ որ կը ներկայացնէ Անհունին յայնտուիլը սահմանափակին մէջ:

Աստուծոյ նախախնամութեան լաւագոյն արտայայտութիւնը Լիբանանցի Մարօնի փիլիսոփայ Խալիլ Ճիպրան իր «Մարգարէն» գիրքին մէջ հետեւեալ ձեւով կը ներկայացնէ .

«Դուք աղէղն էք, ուրկէ ձեր զաւակները իբր ապրող նետեր դուրս կ'արձակուին:

Աղէղնաւորը անհունի ճամբուն իր թիրախը կը տեսնէ եւ աղէղը զօրաւոր կերպով կը պրկէ, որպէսզի Իր նետը արագ եւ հեռուն երթայ:

Աղեղնաւորի ձեռքին՝ ձեր պրկումը
ուրախութեամբ թող ըլլայ.

Որքան որ Ան պլացող նետը կը սիրէ, նոյնքան
ալ Հաստատ աղեղը»:

Մեր հայ բանաստեղծներէն Տօքթ. Ղազար Պօղոսեանի
«Մայրս» խորագրով հիանալի երկար ոտանաւորէն ալ
միայն չորս տող պիտի մէջբերեմ:

«Լուսազարդ եղար երբ Դուն մայրացար,

Սէր գուրգուրանքով շա՛տ առատացար.

Լուսաշաւիղով իմ խորքս անցար,

Նրբաշունչ հեքով ինձ Հետ ձուլուեցար»:

Անձի մը կեանքը միայն այն ատեն կ'իմաս-
տաւորուի, երբ ան իր ստացած Աստուածային սէրը կը
կարողանայ ցոլացնել: Ամէն անձ ընդհանուր առմամբ
կը գործէ համաձայն իր բնութեան: Մարդու մը
պարտականութիւնը, ոչ թէ իր կատարելիք գործն է,
այլ իր պարտականութիւնը պէտք է ըլլայ իր դիրքը,
կեցուածքը եւ խորհելակերպը հանդէպ իր գործին եւ
աշխարհին: Պարտականութիւնը անձին պատիւն է:
Պարտականութիւն մը, որ ստիպողութեամբ կը
կատարուի, մեզ ալ աւելի կը կապէ աշխարհին,
այսպէսով մենք աշխարհին կառչած ու անոր յարած
կ'ըլլանք: Երբ նոյն գործը կատարուի որպէս սիրոյ
արտայայտութիւն, անձին կը պարգեւէ ճշմարիտ
ազատութիւնը: Յարիլ եւ սիրել իրարմէ շատ տարբեր
են, առաջինը կը կաշկանդէ եւ կը կապէ, իսկ երկրորդը
կ'արձակէ եւ ազատութիւն կու տայ: Ճշմարիտ
Աստուածպաշտութիւնը բոլորին սէր ցոյց տալ է,
ինչպէս նաեւ պարտականութիւններն ալ լիովին
կատարել՝ բացարձակ ուրախութեամբ, այնպէս ինչպէս
մայր մը իր նորածին մանուկը կը ինամէ:

Մեր հայերն ու մայրերը, ինքնագոհողութեամբ
եւ գուրգուրանքով, առանց որեւէ ակնկալութեան, մեզ

կը խնամեն, նոյնիսկ երբ չափահաս ենք: Անոնք մեզ ծննդաբերելով կը ծառայեն Աստուածայայտնութեան, որով արժանի են պաշտուելու: Անոնք, ծառայելով բարեշրջման, մանրաշխարհային չափի վրայ մարմնացումն են իմաստութեան եւ բնութեան: Ամէն նորածին մանուկի կեանքը Քրիստոսի ներկայութիւնն է: Միթէ Աւետարանին մէջ ալ այդպէս գրուած չէ՞. «Ձեր մարմինները Աստուծոյ տաճարներ են:» Քրիստոս ինք ներկայ է այդ տաճարներուն մէջ: Կարգ մը մշակոյթներու սովորութիւններուն հետեւող անձեր, ի յարգանս իրենց ծնողներուն, իրենց ձեռքերը աղօթքի կենալու ձեւով միացուցած, կը խոնարհին անոնց առջեւ: Մենք ալ ձեռք համբուրելու սովորութիւնը ունէինք, որ ներկայիս կը թուի կորսուած ըլլալ:

Ուրեմն, Սողոմոն իմաստունի յորդորին նշանակութիւնը ի՞նչ է:


Եթէ չենք հնազանդիր մեր հօր եւ կ'արհամարհենք մեր մայրը, որոնք մեր մարմնին ծնունդ տուած են, որոնք տեսանելի են եւ շօշափելի, որոնց խնամքը, գուրգուրանքը ու սէրը վայելած ենք ու կը վայելենք նոյնիսկ մեր չափահաս տարիքին, որոնք բացարձակ ինքնագոհողութեամբ մեզ պահած, պաշտպանած եւ դաստիարակած են, ինչպէ՞ս կրնանք հնազանդիլ ու սիրել Աստուած մը, որ մեր հինգ զգայարաններով չենք կրնար հասկնալ: Աստուած մը, որ մեր էութիւնը եւ մեր կեանքը մեզի տուած է, որուն բարիքները եւ շնորհքները ամէն վայրկեան կը վայելենք: Բաւարար չէ ըսել, կը սիրեմ, կը պաշտեմ, կը յարգեմ, կամ ես հաշտ եմ ծնողացս հետ, ալ աւելի կարեւորը, Աստուծոյ հետ: Եւ կամ ըսել ես փրկուած եմ: Համբարաշխութիւնը պէտք է յայտնաբերուի մեր կենցաղով: Աս ալ յայտնի կ'ըլլայ մեր ցոյց տուած իմաստութենէն, խաղաղութենէն, հասկացողութենէն, ներողամտութենէն, ցոյց

տուած գութէն, ծառայութեան ոգիէն եւ վեհ անձնաւորութենէն, որ կը ներկայացնէ բարձր գիտակցութեան մակարդակ մը:

Ուրեմն առաջին հերթին պարտ ենք հնազանդ ըլլալ մեր հօր եւ չարհամարհել մեր մայրը, մանաւանդ իր ծերութեան օրերուն:

Աս, մեր միջոցաւ, Աստուածայայտնութիւնը իրականացնելու մեր հոգեւոր ճամբորդութեան սկիզբն է:

Աստուծոյ սէրը, շնորհքը եւ խաղաղութիւնը մեր վրայէն անպակաս ըլլայ: Ամէն:





ՏԵՐՎԻՉՆ ԵՒ ԿԱՐԻՃՆ

Տերվիչ մը ջուր ինկած կարիճը կ'ուզէ ազատել: Երբ ձեռքը կ'երկարէ, կարիճը կը խայթէ: Տերվիչը երկրորդ անգամ կը փորձէ, կարիճը դարձեալ կը խայթէ...:

Կացութեան ականատես անձեր այլեւս չեն կրնար համբերել ու ցասումով կ'ըսեն. «Թէեւ դուն կը փափաքիս անոր օգնել, սակայն ան քեզի վնաս կը հասցնէ: Ինչո՞ւ տակաւին կը փորձես օգնել»:

Տերվիչը շատ իմաստալից պատասխան մը կու տայ. «Կարիճին բնոյթը խայթել է, իսկ իմ բնոյթս ալ ստեղծուածը սիրել եւ գուլթ ցոյց տալ է: Քանի որ կարիճը իր բնոյթին համաձայն կը փորձէ, ես ինչո՞ւ իմ բնոյթս փոխեմ»:



-Է-

ԱՂԷՏԸ



ԱՂԵՏՈ

Հստ ոռոսական կայքէջի մը տուած տեղեկութեան Հայ ազգը, այսօր տակաւին որպէս անկախ երկիր գոյատեւող աշխարհի ամենահին ազգերէն է: Հազիւ մի քանի տարի առաջ էր, որ տօնուեցաւ Երեւան (Էրեբունի) մայրաքաղաքի հիմնադրութեան 2750-ամեակը: Քաղաք մը, որ հիմնուած է Հռովմի հիմնարկութենէն (Ն.Ք.753) ալ առաջ՝ (Ն.Ք.782): Հոն կը նշուին նաեւ հինգ ուրիշ ազգերու անունները՝ Եգիպտական, Ճափոնական, Յունական, Չինական եւ Պարսկական:

Անտարկոյս ուրիշ հին ազգեր ալ գոյութիւն ունեցած են, սակայն այսօր անոնց հետքն անգամ չէ մնացած, կորսուած, անհետացած են:

Թէեւ հին ու ցարդ գոյատեւած ենք, սակայն Հայ ազգին ճակատագիրը, դժբախտաբար, ընդհանուր առմամբ ողբերգական եղած է: Այո՛, ունեցած ենք հզօր եւ մեծ թագաւորութիւններ՝ Մեծ Հայքը, Տիգրան Մեծի կայսրութիւնը, Բագրատունիներու թագաւորութիւնները, Կիլիկիոյ թագաւորութիւնը: Վերջին թագաւորը եղած է Լեւոն Ե. (ըստ ոմանց Լեւոն Զ.), որ իշխանութիւն ունէր Կիլիկիոյ, Կիպրոսի եւ Երուսաղէմի վրայ: Հայկական ինքնավարութիւնը եւ անկախութիւնը վերջ գտած է 1375ին:

Հայ ազգը դարերու ընթացքին բազմաթիւ հարուածներու ենթարկուած եւ ահռելի թիւով զոհեր տուած է: Հակառակ բաւականին հին անցեալի մը, այսօր թիւով շատ փոքր ազգ մըն է: Մօտաւորապէս 25 տարի առաջ (1991), երրորդ հանրապետութեան հիմնումով, դարձեալ վերանկախացաւ: Ներկայ տարածքը, բաղդատմամբ պատմական Հայաստանի, նոյնիսկ անոր 1/10-ը անգամ չէ: Երկրին բնակչութիւնը մօտաւորապէս 3.000.000 է եւ օր ըստ օրէ կը պակսի՝ ի հետեւանք արտագաղթի: Սփիւռքի տարածքին վրայ

ալ շուրջ 6-7 միլիոն հայ կը բնակի: Հաւանաբար աշխարհի վրայ չկայ երկիր մը ուր հայ մը չգտնուի:

Հայ ազգի այս աղիտալի վիճակը իր աշխարհագրական դիրքին կը վերագրենք: Ան, գտնուելով Ասիոյ եւ Եւրոպայի ճամբուն վրայ, երկու կողմէ եղած արշաւանքներու ընթացքին՝ Մեծն Ադեքսանդրի, Հռովմէյական, բազմաթիւ Պարսկական եւ Բիւզանդական, միշտ հարուածուած է: Նոյնիսկ խաչակիրները, որ Քրիստոնէական շարժում մըն էր, որոշ չափով վնաս հասցուցած են հայ ազգին: Անկասկած կարելի է մոռնալ Արաբական, նաեւ զանազան Թրքական ցեղերու բազմաթիւ յարձակումները: Պարսկական եւ Արաբական յարձակումներու դրդապատճառը մեծամասնութեամբ կրօնական եղած են: Ինչպիսին էր 451 թուականի Աւարայրի ճակատամարտը: Իսկ միւսները աւելի տիրապետական եւ նիւթական շահու հետեւանք էին:

Հրեայ ազգի ճակատագիրն ալ հայերու նման եղած է: Բաբելոն եւ Եգիպտոս գերի տարուած են: Հռովմի լուծին տակ մնացած են: Ի վերջոյ բոլորովին քանդուած, աշխարհով մէկ տարածուած եւ մշակութային կորուստներու ենթակայ եղած են: Ըստ իրենց, իրենք Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն են: Եթէ այս է Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին ճակատագիրը, ուրեմն մենք ալ նման ճակատագրի տէր, մենք եւս պէտք է ըլլանք Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը: Չեմ կարծեր, որ անձերու, ազգերու միջեւ խտրութիւն չընող Աստուած ունենայ ընտրեալ ժողովուրդ մը: Ամէն անձ կամ հաւաքականութիւն, որ կ'ապրի Աստուածայայտութեան համար կ'ըլլայ Անոր ընտրեալ անձը կամ ժողովուրդը: Ըստ հին կտակարանի ամէն անգամ, որ հրեայ ազգը Աստուծմէ կը հեռանար՝ կը խոտորէր իր Աստուածահաճոյ կենցաղէն, իբր Աստուծմէ տրուած պատիժ աղէտի մը կ'ենթարկուէր: Իսկ վերջին

2000 տարուայ աղէտալի եւ թափառական վիճակն ալ քրիստոնեաները միշտ վերագրած են անոնց գործած աններելի ոճիրին՝ Յիսուսի սպանութեան: Այս վերագրումը ծնունդէ կ'առնէ հրեաներուն իրենք իրենց տուած հետեւեալ անէծքէն.

«Երիւնդոս՝ ՚ի վերայ մեր եւ ՚ի վերայ

որդոս՝ մերոց»: (Մատթէոս Ի:25)

«Ատոր արինը թող ըլլայ մեր վրայ ու մեր գաւակներուն վրայ»:

Մօտաւորապէս 70 տարի առաջ ալ (1948) Հրեաները, 2000 տարի սպասելէ վերջ, ունեցան իրենց անկախ պետութիւնը: Երկրորդ համաշխարհային պատերազմին Եւրոպայի մեծ մասին մէջ ենթարկուեցան ցեղասպանութեան, մեծ կորուստ ունեցան՝ մօտաւորապէս 6.000.000 գոհ: Իրենց ենթարկուած այդ տաժանելի եւ վատ արարքներէն հարկ էր դաս առնել: Ինչո՞ւ նման վատ վարուելակերպ կը կիրարկեն իրենց երկրի արաքներուն դէմ: Եթէ բոլոր ճակատագիրերուն պատճառը «Ինչ որ ցանես, ան կը հնձես»ն է, իրենց ցանած ներկայ «հունտերն» ալ ապագային նման աղէտալի հունձքեր պիտի տան:

«Մի՛ խաբի՛, Եսդոսա՛ ո՛չ արճամարճի:

Զի՛ս զոր ինչ տերմանէ մարդ զնոյն եւ

ճնչեացէ՛»: (Գողոթայիս Զ:7-8)

«Մի՛ խաբուիք՝ Աստուած չի ծաղրուիր, որովհետեւ ի՛նչ որ մարդ կը սերմանէ՝ զայն ալ պիտի հնձէ»:

Հայ ազգն ալ իր գոյութեան ամենասոսկալի հարուածներէն մին ապրեցաւ 100 տարի առաջ: Ան տուաւ 1.500.000 գոհ: Զոհուեցան նաեւ անոր մշակոյթը, բարքերը, լեզուն եւ անհետացաւ երկիրը: Մաս մըն ալ բռնի կրօնափոխ ըրին, որպէսզի անոնք կորսնցնեն

իրենց ինքնուրթիւնը եւ ազգութիւնը: Մազապուրծներն ալ աշխարհի զանազան վայրերը ցրուեցան: Եթէ փարինք «Ինչ որ ցանես, ան կը հնձես» օրէնքին, դիւրին է պատճառը գտնել հրեաներուն համար, բայց ի՞նչ էր հայուն ցանած հունտերը, որ մենք ալ հնձեցինք «աղէտ»ը: Անցեալին մենք ալ վայրագութիւններ ըրած ենք: Կ'ըսուի, թէ Մեծն Տիգրանի օրով երկրին հրեաներուն լեզուները կտրած ենք: Արդեօք կարելի՞ է որ մեր հաւատքը եւ կենցաղը Աստուածահաճոյ չըլլայ:

Ճիշդ է թէ «Ինչ որ ցանես, ան կը հնձես» օրէնքը Աստուածային՝ տիեզերական անխախտելի օրէնք մըն է: Այս օրէնքը ի զօրու է թէ անհատի եւ թէ հաւաքականութեան՝ ազգերու նկատմամբ:

«ասե՛մ չե՛ս, ո՛չ էլանիցե՛ս անոր՝ մինչեւ
 Լապտ-ցանիցե՛ս զյեոր՛ն թե՛րոնն» : (Ղուկաս
 ԺԲ:59)

«Դուրս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին
 լուման»:

«Ցանելու» եւ «հնձելու» միջեւ կրնայ երկար տարիներ, նոյնիսկ դարեր ըլլալ, որով մեզի համար դժուար կ'ըլլայ կապը տեսնել եւ հետեւցնել: Շատեր «Մեր մեղքը ի՞նչ էր, որ Աստուած մեզ այսպէս պատժեց» բացազանչած են: Ուրիշներ, այս եղածներուն հետեւանք, Աստուծոյ գոյութիւնը ուրացած են:

Հետեւեալ համարներու մէջ ներկայացուած Յիսուսի խօսքերը կը թուին «Ինչ որ ցանես, ան կը հնձես» գաղափարին հետ հակասական ըլլալ:

«Եկին ոմանք ՚ի նմին Ժամանակի, եւ
 պարմեցին նմա վասն Գալիլեացոցն, որոց
 զարի՛նն Պեղարոս խառնեաց ընդ զուսն
 նոցա: Պարասխանի էր՝ եւ ասէ ցնոսս .

Համարել է թե ասն Գալիլեացիք է զէն մեղա-որք է ինն զամենայն Գալիլեացիս, զի այնպիսի անցս կրէցին: Ո՛չ, ասե՛մ յեւ, այլ թե ո՛չ աստաշխարհե՛լ՝ ամենե՛ղին նո՛յնպէս կորնշիջի՛ն: Կան նո՛գոս ուրու-տասանն յորոց վերայ աշտարակն անկա- ՚ի Սիլոլամ, է- ասանն զնոսս. Համարել թե նո՛գոս պարտապան է զէն ինն զամենայն մարտիկ՝ որ թնակեա՛լ էն յԵրուսաղէմ: Ո՛չ, ասե՛մ յեւ, այլ թե ո՛չ աստաշխարհե՛լ՝ ամենե՛ղեան նո՛յնպէս

կորնշիջի՛ն»: (Ղ.ս-կա Ժ.Գ:1-5)

«Այդ ատնն ներկայ եղողներէն ոմանք պատմեցին անոր այն Գալիլեացիներուն մասին՝ որոնց արեւը Պիղատոս խառնեց զոհերուն հետ: Յիսուս պատասխանեց անոնց. «Կը կարծէ՞ք թէ այդ Գալիլեացիները աւելի մեղաւոր էին բոլոր Գալիլեացիներէն՝ քանի որ այսպիսի չարչարանքներ կրեցին: Կ'ըսեմ ձեզի՛ ո՛չ: Հապա եթէ չապաշխարհե՛ք՝ բոլորդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: Կամ թէ այն տասնութ հոգիները՝ որոնց վրայ Սելուամի աշտարակը ինկաւ եւ սպաննեց զանոնք՝ կը կարծէ՞ք թէ անոնք Երուսաղէմ բնակող մարդոցմէ աւելի պարտաւոր (յանցաւոր) էին: Կ'ըսեմ ձեզի՛ ո՛չ: Հապա եթէ չապաշխարհե՛ք՝ բոլորդ ալ նմանապէս պիտի կորսուիք»:

«Եւ մինչդէռ անցանէր, էտեա այր մի կոյր ՚ի թնէ. է- Հարցին ցնա աշակերտդն նորա՛՝ է- ասնն. ուսքի՛ն ո՛յր վնաս է, ցորա՞ն թե Հօր է- մօր ի-րոյ՝ զի կոյր թնա-:

Պատասխանի էր Յիսուս. ոչ դորա վնաս է, է- ոչ Ըօր է- մօր ի-րոյ. այլ պէ յայտնի լիցին Գործին Լսար-ժոյ 'ի դմա» :
(Յովհաննոս Թ:1-3)

«Երբ կ'անցնէր, մարդ մը տեսաւ կոյր ծնած: Իր աշակերտները հարցուցին իրեն ու ըսին. «Ռաբբի, որո՞ւնն է մեղքը, ասո՞ր թէ իր ծնողքին, որ անիկա կոյր ծնաւ»: Պատասխան տուաւ Յիսուս. «Ո՛չ ատորն է մեղքը, ո՛չ ալ իր ծնողքին, հապա որպէս զի Աստուծոյ գործերը ատոր վրայ յայտնի ըլլան»:

Աստուծոյ ճամբաները մեր ճամբաներէն շատ տարբեր են: Դժուար է ամէն ինչ հասկնալ: Համաձայն վերոյիշեալ համարներուն, ըստ երեւոյթի, յանցաւոր չեղողներն ալ պատժուած էին: Աս, կը թուի հակասութեան մէջ ըլլալ «Ինչ որ ցանես, ան կը հնձես» օրէնքին հետ: Այս օրէնքը, որքան որ կը թուի ի զօրու ըլլալ անհատի մը կեանքին ընթացքին, շատ հաւանական է, որ ծառայէ շատ աւելի վեհ նպատակի մը՝ Աստուածայայտնութեան: «Լոյս 'ի Լուսոյ» գիրքիս «Ի՞նչ է Վերամարմնացումը» խորագրեալ Թ. գլխուն մէջ յատկօրէն գրած էի, թէ մենք նման արեւելեան կրօնքներու, վերամարմնացման չենք հաւատար: Ըստ անոնց, անհատը (իր անձնաւորութիւնը) բազմաթիւ անգամ վերամարմնանալով ինքզինք կը բարելաւէ: Ի բացառեալ ընտրեալ բացառութիւններէ, որ փրկութեամբ կը պարգեւատրուին, ամէն անհատի անձնաւորութիւնն ալ, իր մարմնին մահուան հետ կը մեռնի կ'երթայ: Բայց իր հոգին՝ այն զօրութիւնը, որ զինք կը կենդանացնէր, իր ապրած կենցաղին համապատասխան թրթռացումով ետ Աստուծոյ կը վերադառնայ: Հետեւաբար անձը կորսնցուցած ըլլալով իր անհատականութիւնը կարելիութիւնը չունի զայն բարելաւելու

ապագայ կեանքերու ընթացքին: Բայց Աստուածա-
յայտնութեան իրականացման համար զօրութեան
թրթռացումի որակի բարձրացումը անհրաժեշտ է:
Արդեօք կարելի՞ է, որ Աստուած ունենայ ընտրեալ
ժողովուրդներ, որոնց կենցաղը համապատասխան է
բարձրացնելու իրենց տրուած զօրութեան թրթռացու-
մի որակը: Աստուածայայտնութեան ծառայելու
համար Աստուած կ'ընտրէ այդ ժողովուրդները, անոնց
տալով վատ անձերէ վերադարձած ցած որակով
զօրութիւնները, որպէսզի անոնք բարելաւեն այդ
զօրութիւնները: Ասոր հետեւանքն է ծառայել
Աստուածայայտնութեան: «Ինչ որ ցանես, ան կը հնձես»
օրէնքը խախտած չ'ըլլար եւ այս օրէնքին համաձայն
անձը կամ ազգն ալ կ'ունենայ աղէտալի կեանք:
Ուրեմն ուրախ պէտք է ըլլանք, որ ազգովին կը
ծառայենք Աստուածայայտնութեան: Միթէ Յիսուս
ինք ալ չհարչարուեցաւ ուրիշները բուժելուն եւ անոնց
մեղքերը իր վրայ առնելուն համար: Ինք չէ՞ր ըսեր
«Մեղքերդ ներուած են» երբ կը բուժէր.

«Եւ ահա մարտոսիսն առ նա անդամալոյժ
մի որ դնէր 'ի մահիճս: Եւ Կիւսեալ
Յիսուսի պահապար նոցա՝ ասէ ցանդամա-
լոյժն. Թողեա՛լ լիցին մեղէ՛ ին: ... Զի՞նչ
դիւրին ասել՝ Թողեալ լիցին մեղէ՛ ին, Բե՛՛
ասել՛ արի՛ եւ շրջեաց»: (Մարթեոս Թ: 2-5)

«Եւ բերին իրեն անդամալոյժ մը՝ որ պառկած էր
մահիճի մէջ: Յիսուս՝ տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ
անդամալոյժին. «Քաջալերուէ՛՛ որդեա՛կ՝ մեղքերդ
ներուած են քեզի»: ... Ո՞րը ասելի դիւրին է՝ «մեղքերդ
ներուած են» ըսե՞լը, թէ՛ «Ոտքի՛ ելիր՝ ու քալէ՛» ըսելը:

Երբ «մեղքերդ ներուած են» կ'ըսէր, իրմէ
զօրութիւն կը փոխանցէր բուժուողին, զօրութեան

մակարդակի վրայ այդ մեղքերուն յառաջ բերած «պարտքերը» չէին անհետանար, այլ իր ողորմութեան հետեւանք այդ պարտքերը ինք իր վրայ կ'առնէր եւ ի վերջոյ ինք վճարեց այդ պարտքերը իր կրած չարչարանքներով եւ մահուամբ: Միթէ չէ՞ն ըսեր «Յիսուս մարդոց մեղքերուն թողութիւն տալու համար մեռաւ»:

«... պոր է- է'ան ընկալայ թէ է- Բրիստոս
մեռաւ՝ վասն մեղաց մերոց ըսոք Գրոց» :
(Լ. Կորնթացիս ԺԵ:3)

«... որ ես ալ ընդունեցի, թէ Քրիստոս մեռաւ մեր մեղքերուն համար, գիրքերուն համաձայն»:

Օսմանեան Կայսրութեան շրջանին սուլթանները իրենց քով ունէին անձ մը, որ «Շամար Օղլանը» (şamar oğlanı) «ապտակի տղայ» կը կոչուէր: Երբ սուլթանը մէկու մը բարկանար, իր բարկութիւնը առնելու կամ ցոյց տալու համար, փոխանակ այդ անձին զարնելու, այդ տղուն ապտակ մը կը զարնէր: Արդեօք հայ ազգն ալ Աստուծոյ «Շամար օղլան»ն է՞:

Եթէ այս հայեացքով մօտենանք ցեղասպանութեան, պէտք չէ ատենք «թշնամին», որ աղէտին պատճառ եղաւ: Անոնք կատարեցին ան, որ պէտք էր որ ըլլար: Նոյն ատեն արարքը չի դադրիր իրենց «պարտք» ըլլալէ: Հարցը նոյնը չէ՞ր Յիսուսի ատեն ալ: Յուդա մատնեց Յիսուսը եւ Յիսուս ըսաւ իրեն, որ իր պարտականութիւնը կատարէ:

«... Ե- ասէ ցնա Յիսուս. Լրդ՝ որ պինչ
ասնելո՞ցն է- արա՞ վաղվաղակի» :
(Յովհաննոս ԺԳ:27)

«... ուստի Յիսուս ըսաւ անոր. «Ինչ որ պիտի ընես՝ շուտով ըրէ»:

Բայց նոյն ատեն ալ գրուած է «վայ անոր, որուն ձեռքով կը մատնուի»:

«Որտի մարտոյ երեւոյ՛ն՝ որպէս Գրեալ է վասն նորա, Բայց վա՛յ մարտոյն այնմիկ՛ յոյր յեռս որտին մարտոյ մարնեացի ...» : (Մարտեոս ԻԶ : 24)

«Ի՛րապէս մարդու որդին կ'երթայ՝ ինչպէս գրուած է իր մասին, բայց վա՛յ այն մարդուն՝ որուն միջոցով մարդու որդին կը մատնուի: ...»:

Յուդան ալ, երբ անձնասպան եղաւ, իր պարտքը իր կեանքով չվճարե՞ց: Թուրքն ալ պիտի տուժէ իր գործած արարքին համար, ե՞րբ եւ ի՞նչ ձեւով, մենք չենք գիտեր: Միթէ մեր պարտականութիւնը չէ՞ իրենց օգնել, որ անոնց վրայ գալիք հարուածն ալ աւելի մեղմ ըլլայ: Պէտք չէ մոռնանք. «Վրէժխնդրութիւնը իմս է կ'ըսէ Տէրը» եւ պէտք չէ վրէժխնդիր ըլլանք:

«Մի՛ պանչանց վրէժխնդրէ՛լ աի՛րելի՛լ այլ ցո՛ւլի ցեղի՛ Բարկոմեան: Բանպի Գրեալ ի՛մ է վրէժխնդրո՞ւթեան էս էս Հասոցոցից՝ ասէ Տէր» : (Հրովմաէցիս ԺԳ : 19)

«Սիրելիներ, վրէժխնդիր մի՛ ըլլաք դուք ձեզի համար, հապա տե՛ղ տուէք Աստուծոյ բարկութեան՝ որովհետեւ գրուած է. «Վրէժխնդրութիւնը իմս է, ե՛ս պիտի Հասուցանեմ,- կ'ըսէ Տէրը»:

Եթէ թուրքերը արթնութիւնը ունենան եւ ընդունին իրենց գործած ոճիրը եւ հատուցում ընեն, շատ հաւանական է, որ իրենց վրայ գալիք հարուածն ալ որոշ չափով մեղմացնեն: Մեր պահանջները պէտք չէ ըլլան վրէժխնդրութեան համար կամ իբր իրաւունքներու պահանջք, վստահ եմ այս ուղղութեամբ

անկարելի կ'ըլլայ յաջողիլ: Նոյնիսկ թուրքեր, որոնք ընդունած են ցեղասպանութիւնը եւ դրած են գիրքեր այս ուղղութեամբ, դասախօսութեան մը ընթացքին ըսած են թէ «պահանջները» չեն տրուիր այլ կ'առնուին: Իսկ եթէ մեր սրտերուն մէջ իսկապէս պահանջներուն նպատակը իրենց օգնել է, որ գալիք հարուածը մեղմանայ, շատ հաւանական է, որ յաջողինք: Կարելի չէ Աստուած խաբել, Ան մեր էութիւնն ու գիտակցութիւնն է եւ գիտէ մեր ամէն խորհածը: Արդեօք կարելի՞ է, որ այն զօրութիւնները, որ կազմած էին այն ոճրագործ թուրքերը, որոնց ձեռքով գործուեցաւ ցեղասպանութիւնը, իրենց մահէն յետոյ վերադարձան Աստուծոյ եւ դարձեալ կազմեցին նոր անձեր եւ այս անգամ հայորդիներ, որպէսզի անոնց վատացուցած զօրութիւնը դարձեալ բարելաւուի:

Այսօր ցեղասպանութեան 100-ամեակի սեմին, մեր եկեղեցւոյ եպիսկոպոսական ժողովը որոշած է ցեղասպանութեան նահատակները սրբացնել: Եթէ վերոյիշեալ տեսակէտի համաձայն անոնք իրենց կրած չարչարանքներով վճարեցին տիեզերական բազմաթիւ «պարտքեր», ծառայելով Աստուածայայտնութեան նպատակին, ինչո՞ւ չէ:

Եթէ մեր կրօնքի հանդէպ ունեցած հպարտութիւնը արդիւնք է մեր Աստուածասիրութեան եւ Աստուածապաշտութեան պէտք չէ հարց տանք թէ ինչո՞ւ այս աղէտը մեզի պատահեցաւ, քանզի գրուած է.

«Յայնժամ մարնեացեն պէպ 'ի նեղութիւն,
 Եւ աղանանիցե՛ն պէպ, Եւ Էղբջիշ
 ասրեցեալէ յամենայն աշխարհ վասն անոնան
 իմոյ»: (Մարտիոս ԻԴ:9)

«Այն ատեն պիտի մատնեն ձեզ տառապանքներու, պիտի սպաննեն ձեզ, ու բոլոր ազգերուն ատելի պիտի

ըլլաք իմ անունիս համար»:

«Եւ շանիցեա ՚ի սրտի խոմ, ըն որպէս
այր ո՛վ՝ որ խրատէ զորդի իւր, այնպէս
դէր Աստուած ին խրատեացէ զիւր:» (Բ.
Օրինաց Ը:5)

«Նաեւ սիրտիդ մէջ գիտցի՛ր թէ ինչպէս մարդ մը իր
որդին կը խրատէ, նոյնպէս Տէրը՝ քու Աստուածդ՝ քեզ
կը խրատէ:»

«Որդեակ իմ՝ մի՛ շնորհիւ ին խրատու
Տեառն. եւ մի՛ վճարիցիս յանդիմանեալ ՚ի
նմանէ: Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ ցանձե՛ր՝
զամենայն որդի զոր ընդոռնի: ... իսկ նա՛
(խրատէ) վասն օգտի, առ ՚ի ընդոռնելո՛յ

զարբոսըն նորա»: (Եբրայեցիս ԺԲ:5-6 եւ 10)

«Որդեակ՛ս մի՛ անտեսեր Տէրոջ պատիժը, ու մի՛
պարտասիր՝ երբ կշտամբուիս իրմէ: Որովհետեւ Տէրը կը
պատժէ իր սիրածը, եւ կը խարազանէ ամէն որդի՝ որ
կ'ընդունի: ... բայց Աստուած՝ (կը պատժէ) մեր
օգուտին համար՝ որպէսզի բաժին ստանանք իր
սրբութենէն»:

**Արդեօք հայ ազգին պատահածներն ալ մեզ
սթափեցնելու խրատներ են:**

Նոյն ժամանակ հարց պէտք է տանք, թէ մեր
ազգին պատահածները արդօ՞ք հետեւանք են մեր
ցանած հունտերուն: Ի՞նչ կրնան ըլլալ այդ հունտերը,
որ նման ահռելի հունձքեր տան: Արդեօք մեր այսքան
զօրաւոր եկեղեցասիրութիւնը եւ կրօնասիրութիւնը
չե՞ն ծագած Աստուածասիրութենէ, եւ կը ծառայեն
խեղաթիւրուած հպարտութեան մը, եւ մեր ստացած
հարուածները մեզ այս քունէն արթնցնելո՞ւ համար են:
Երբ պատիկ էի եւ քրոջս հետ կը կռուէի, մայրս մեզի

փայտով կը ծեծէր եւ համերաշխութեամբ ապրիլը ծեծով կը սորվեցնէր: Արդեօք մեր ազգին մէջ անհամաձայնութիւնները, կուսակցական կռիւները, եկեղեցւոյ վարչական միասնականութեան տեղ բաժանումները, զանազան կառավարիչներու եւ վարչութիւններու իրենց պարտականութեան մէջ թերացումը մեր այսօրուայ ցանաժ հունտերն ե՞ն, որոնց հունձքերը պիտի քաղենք ապագային: Անցեալի աղէտէն արդեօք բան մը՝ դաս մը սորվեցա՞նք, ապա թէ ոչ ապագային դարձեալ նման աղէտներ պիտի կրկնուին, ինչպէս այսօր կը տեսնենք՝ Սուրիահայերու ներկայ վիճակը:

Անհատապէս կամ ազգովին ուշադիր պէտք է ըլլանք, որ չցանենք այնպիսի հունտեր, որոնց անբաղձալի հունձքը ապագային քաղել չենք ուզեր:





ԻՆՉ ՈՐ ՅԱՆԵՍ ԱՆ ԿԸ ՀՆՁԵՍ

Երբ թուշունը դեռ ողջ է մրջինն եւ որդ կ'ուտէ: Երբ թուշունը մեռնի, մրջիններն եւ որդերը թուշունը կ'ուտեն: Ժամանակը եւ կացութիւնները միշտ յարափոփոխ են: Կեանքիդ տեսողութեան ոեւէ մէկը մի անարգեր, մի՛ վարկաբեկեր եւ ոեւէ մէկուն ալ վնաս մի՛ հասցնէր: Այսօր զօրաւոր կրնաս ըլլալ, բայց միշտ յիշէ թէ ժամանակը քեզմէ աւելի զօրաւոր է: Մէկ ծառէն կարելի է միլիոն լուցկի շինել, բայց միայն մէկ լուցկի բաւ է միլիոն ծառ վառելու համար: Հետեւաբար բարի եղիր. բարի՛ խորհուրդներով, բարի՛ խօսքերով ու բարի՛ գործքերով:



ՆՈՒԻՐԵԱԼ



Երեսանց Աստուածապաշտը
 Չայն կը փնտռէ ամենուրեք,
 Ճշմարիտ Աստուածապաշտը
 Չայն կը տեսնէ ամենուրեք:

Գաղտնիքը տեսնելու Չայն
 Պաշուած է մէջ իր Էուլթեան,
 Նայիլ աչքովն իր սրտին միայն
 Միակ ճամբան է յաջողութեան:

Ինչպէ՛ ս նայիլ սրտի աչքով:
 Ան կը կարօտի նուիրումի,
 Յարատեւութեան մը երկիւղով,
 Եւ անխախտելի Հաւատքի:



Ամէն անձ պարտ է ճանչնալ
 Ճշմարտութիւնը իր Էուլթեան,
 Ապա թէ ոչ ինչպէ՛ ս գիտնալ
 Էութիւնը Ճշմարտութեան:

Դժուար օրեր անտարակոյս
 Պիտի պատաճին մէջ կեանքին,
 Բայց պէտք չէ կորսնցնելոյս
 Մնալ Հաստատ մէջը Հաւատքին:

Տխուր օրերը մեզ կը փորձեն
 Համբերութիւնը մեր Հաւատքին:
 Փոքր տատամնումը արդէն
 Կը փակէ աչքերը սրտին:

Վ.Ս.



-Ը-

ԻՆՉ Է ՓՐԿՈՒԹԻՒՆԸ



ԻՆՉ Է ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

«Լմենայն ինչ ուղիղ է իմաստնոց. եւ յարմարեալ է այնոցիկ ոյ՛՛ Քրիստոսին» : (Լուսկայ Բ:9)
 «Բոլորն ալ յստակ են հասկցողին համար, եւ ուղիղ՝ զխտութիւն գտնող ներուն»:

Համայն մարդկութիւնը, իր կեանքի տեւողութեան, փրկութեան համար անընդհատ կ'աղօթէ: Ըստ մեր փորձառութեան այս աշխարհիկ կեանքը ժամանակաւոր է եւ այս կեանքին տեւողութեան մեր ապրած կենցաղով կը կերտենք մեր ապագայի յաւիտենական կեանքը: Մարդ ունի մարմին մը, որ բնակարանն է իր հոգիին՝ իր ճշմարիտ էութեան, որ պիտի գոյատեւէ յետ մահու: Մեր յետ մահու կեանքը ժամանակաւոր չէ, ապա պիտի գոյատեւէ անվերջ ժամանակ՝ յաւիտեան: Այս աշխարհի վրայ մեր ապրած կեանքով պիտի որոշուի թէ ուր պիտի անցնենք այդ անվերջ ժամանակը. երկինքի մէջ՝ Աստուծոյ հետ երջանիկ, կամ դժոխքի մէջ՝ Աստուծմէ անջատ, սատանային հետ՝ չարչարանքով: Ըստ ընկալեալ սովորութեան փրկութիւնը կամ փրկուելը հոգիին երկինք երթալն է: Ինչպէս նաեւ, ըստ ընդհանուր կարծիքի, հոգին նոր մարմին պիտի առնէ: Աս, անմիջապէս մահէն վերջ չ'ըլլար, այլ մահկանացուն խորունկ քունի մէջ կը մտնէ: Այդ պատճառով ալ մեր եկեղեցին անոնց «ննջեցեալ» կ'ըսէ, այսինքն քնացող:

Ո՞ւր է երկինքը եւ ո՞ւր է դժոխքը:

Կայ նաեւ տեսակէտ մը եւս, ըստ որում ժամանակի վերջաւորութեան Քրիստոս իր զօրքերով պիտի գայ չարերը պատժելու եւ բարիները «վեր» երկինք

յափիշտակելու: Այդ պահուն ննջեցեալներն ալ պիտի արթննան եւ ողջերուն հետ միասին պիտի դատուին ու պատշաճ վայրը պիտի զրկուին:

Անտարակոյս, վերոյիշեալ բոլոր տեսակէտներն ալ հիմնուած են Ս. Գիրքի որոշ համարներուն վրայ: Հետեւեալները կը ներկայացնեն անոնցմէ մի քանին:

«Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարե-եւից՝
եւ երեւի մինչեւ յարե-մոտոս, այնպէս
եղիցի Գալուստն որդեայ մարդոյ: ... Եւ
ապա երեւեացի նշան որդեայ մարդոյ
յերկնա՝ եւ յայնժամ կոթեացին ամենայն
ապօղ երկրի: Եւ ցեպեմն պորդի մարդոյ
եկեալ ՚ի վերայ ամոպոյ երկնից պորո-թեամբ
եւ փառօղ բապօղ: Եւ առաջեացե
պարեշտակս իւր փողով մեծաւ, եւ
ժողովեացեմն պրնորեալս նորս ՚ի շորից
Ըողմոց՝ ՚ի Ժագաց երկնից մինչեւ ՚ի Ժագս
նոցա»: (Մատթեոս ԻԴ:27,30-31)

«Քանի որ ինչպէս փայլակը կ'ելլէ արեւելքէն ու կ'երեւնայ մինչեւ արեւմուտք՝ այնպէս պիտի ըլլայ մարդու Որդին գալուստը: ... Եւ այն ատեն մարդու Որդին նշանը պիտի երեւնայ երկինքի մէջ: Այն ատեն երկրի բոլոր սոհմերը պիտի հեծեծեն՝ ու պիտի տեսնեն մարդու Որդին՝ որ կու գայ երկինքի ամպերուն վրայ՝ զօրութեամբ ու մեծ փառքով: Եւ ան պիտի զրկէ իր հրեշտակները բարձրաձայն փողով՝ ու պիտի հաւաքեն իր ընտրեալները չորս հովերէն՝ երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը»:

«Եւ յայնժամ ցեպեմն պորդի մարդոյ

Եկեալ ամպովէ, Եւ զօրո՞րն Եւսմբ՝ Եւ
 ինտօ՞ղ Բասմով: Եւ յայնժամ ասալէսցե
 զԵրեշտակս իւր, Եւ ժողովէսցե զընդորեալս
 իւր 'ի շորից Ըողմոց՝ 'ի ԺաԳաց Երկրի
 մինչեւ 'ի ԺաԳա Երկնից»: (Մարկոս ԺԳ:26-
 27)

«Այն ատեն պիտի տեսնեն մարդու Որդին՝ ամպերու
 մէջ եկած՝ մեծ զօրութեամբ ու փառքով: Այն ատեն
 պիտի դրկէ իր հրեշտակները եւ պիտի հաւաքէ իր
 ընտրեալները չորս հովերէն՝ Երկրի ծայրէն մինչեւ
 Երկինքի ծայրը»:

«Եւ յայնժամ ցեպեան զորդի մարդոց
 Եկեալ՝ ամպովէ զօրո՞րն Եւսմբ՝ Եւ ինտօ՞ղ
 Բասմով»: (Ղուկաս ԻԸ:27)

«Այն ատեն պիտի տեսնեն մարդու Որդին ամպի մէջ
 եկած՝ զօրութեամբ ու մեծ փառքով»:

*Բայց, արդեօք, այդ համարները ճիշդ
 մեկնաբանուած են: Որովհետեւ կան ուրիշ համարներ,
 որ հակասական ըլլալ կը թուին եւ այդ համարները
 միշտ կ'անտեսուին:*

«... ոչ Գայ արժայո՞րն Եսորո՞շոյ
 խորանօղ. Եւ շասիցեան ըլլե անասնի ասոր
 է՝ կամ անոր, զի անա արժայո՞րն Եսորո՞շոյ
 Եսորո՞շոյ 'ի ներշա 'ի յեւ է»: (Ղուկասոս
 ԺԷ:20-21)

«... Աստուծոյ Թագաւորութիւնը չի գար դուրսէն
 Երեցած բաներով: Եւ պիտի չըսեն թէ 'Ահա հոս է',
 կամ 'Ահա՛ հոն', Որովհետեւ ահա Աստուծոյ
 Թագաւորութիւնը ձեր ներսն է»:

«Եւ ասէ ցնոսայ. յէւզ Կոտեալ է Գրիգէլ
 Վարդապետոս արժայոյութեան Աստուծոյ :
 Բայց նոցա որ արտաշինին՝ ամենայն
 ինչ ասակօղ լինի : Վի Կոտեալն լուր Կոտեալն՝
 Եւ մի Կոտեալն, Եւ լսելով լուրիցն՝ Եւ մի
 իմաստցին» : (Մարկոսի Դ:11-12)

«Յիսուս ըսաւ անոնց. «Ձեզի տրուած է գիտնալ
 Աստուծոյ Թագաւորութեան խորհուրդը, բայց անոնց՝ որ
 դուրսէն են, ամէն ինչ առեղծուած (առակներով)
 կ'ըլլայ. Որպէս զի շատ տեսներն բայց չըմբռնեն՝ շատ
 լսեն ու չհասկնան, ...»:

«... յէւզ Կոտեալ է Գրիգէլ Վարդապետոս
 արժայոյութեան Աստուծոյ. Բայց այլոցն
 ասակօղ, Վի Կոտեալն՝ Եւ մի Կոտեալն, Եւ
 լուրիցն՝ Եւ մի իմաստցին» : (Ղուկասոս Ը:10)

« ...Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ Թագաւորութեան
 խորհուրդը, բայց ուրիշներուն՝ առակներով կը խօսիմ.
 Որպէս զի նայելով՝ չտեսներն՝ ու լսելով՝ չհասկնան»:

«...Եւ մի ինչ իրօղ ...» (Բ.Թեոաղանիկեցիս Բ:3)
 « ...վասն զի այն օրը պիտի չգայ»:

«Եւ Բժշկէաջիտ որ 'ի նմա Հիւանդիցն իցեն.
 Եւ ասասջիտ նոցա, մեր յէալէ 'ի վերայ յեր
 արժայոյութեան Աստուծոյ» : (Ղուկասոս Ժ:9)

«Բուժեցէ՛ք անոր մէջի Հիւանդները եւ ըսէ՛ք անոնց.
 «Աստուծոյ Թագաւորութիւնը մօտեցած է ձեզի»:

«Բայց արդարեւ՝ ասեմ յէւզ, Եթէ Են
 ոմանէ 'ի դոցանէ որ այդր կան, որչ մի

Տաշակէացէն զմահ, մինչեւ Գեացէն
 զարձայո-բիւն Լադո-ճոյ» : (Ղուկասոս Թ: 27)
 «Բայց ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի: «Հոս
 կայնողներէն կան ոմանք՝ որ մահ պիտի չհամտեսեն՝
 մինչեւ որ տեսնեն Աստուծոյ թագաւորութիւնը»:

Եթէ Աստուծոյ թագաւորութիւնը տակաւին
 պիտի գայ, ինչպէ՞ս հաշտեցնել վերջի երկու
 համարները այդ գաղափարին հետ: Իրողութիւն մը չէ՞,
 թէ «Հոս կայնողներէն» բոլորն ալ մեռած են: Ինչպէ՞ս
 Աստուծոյ թագաւորութեան ականատես եղած կրնան
 ըլլալ: Միթէ Ստեփաննոս ալ իր մահէն առաջ
 Աստուծոյ թագաւորութիւնը չտեսա՞ւ, երբ երկինքը
 բացուեցաւ իր առջեւ: Հարկ է, որ Աստուծոյ
 թագաւորութեան գալուստը ըլլայ անհատական
 փորձառութիւն մը: Իսկ ժամանակին վերջն ալ՝
 անհատին մահուան պահը:

Բուն փրկութեան նիւթին մասին գրելէ առաջ,
 հարկ է ճշդել մի քանի սխալ հասկացողութիւններ կամ
 ըմբռնումներ.

ա- Ին՞չ է յաւիտենականութիւնը:

Յաւիտենականութիւնը վերջ չունեցող՝ անվերջ
 ժամանակ չէ: Յաւիտենականութիւնը ճշմարտութիւնն
 է, այսինքն՝ Աստուած: Միայն Աստուած յաւիտենական
 է: Ժամանակը ճշմարտութիւն մը չէ: Ժամանակը ունի
 իր անցեալը, ներկան եւ ապագան: Պահ մը խորհինք.
 մարդ իր կեանքի տեւողութեան միայն ներկային մէջ
 կ'ապրի: Ոեւէ անձի համար անցեալի կամ ապագայի
 մէջ ապրիլ անկարելի է: Այո, կը յիշենք արարքներ,
 որոնք անցեալին գործած էինք: Կը յիշենք, որովհետեւ
 յիշողութիւն ունինք եւ ոչ թէ ներկային մէջ անցեալը
 կ'ապրինք: Կ'ըսենք. «անցեալին ըրած էի»: Իսկ եթէ
 ունինք ցանկութիւններ, որ կը փափաքինք իրականա-

ցընեւ, կ'ըսենք: «ապագային պիտի ընեմ»: Բայց երբ մեր անցեալին յղացած ցանկութիւնը կ'իրականացընենք, այդ իրականացումը տեղի կ'ունենայ ներկային մէջ: Ցանկութիւնները ապագայի համար են, բայց անոնց իրականացումը միշտ ներկայի մէջ կ'ըլլայ:

Նոյնպէս, այն բոլոր արարքները, որոնք անցեալին կատարած էինք, անոնք բոլորն ալ կատարուած էին ներկային մէջ: Մարդ արարած միայն ներկան կ'ապրի, ուրեմն միայն ներկան յաւիտենական է: Ժամանակը իր անցեալով եւ ապագայով պատրանք մըն է, որ գոյութիւն չունի: Պատրանք ըլլալով յարաբերական է (relative): Էյնշտեյն (Einstein) փաստեց թէ ժամանակը մնայուն չէ: Ճիշդ այս պատճառով ալ, բոլոր անոնք, որոնք հոգեւոր ճանապարհը կ'ընտրեն, անոնց կը յանձնարարուի իրենց խորհուրդները զսպել եւ կեդրոնանալ միայն ներկայ գործունէութեան վրայ: Որեւէ արարքի մը կատարման ընթացքին ընդհանրապէս հազարումէկ անկապակից խորհուրդներ կու գան մեր միտքը, նամանաւանդ երբ կ'աղօթենք: Ամբողջական բնագիտութիւնը (quantum physics) նոյնիսկ կը գուշակէ, թէ անցեալին ինչ որ պատահած է, ներկային ինչ որ կը պատահի եւ ապագային ինչ որ պիտի պատահի, բոլորն ալ հիմա ներկային մէջ կ'ըլլան, միասնաբար: Ներկան է, որ միայն գոյութիւն ունի: Ս. Գիրքն ալ նոյնը կը գրէ:

«Որ ինչ էղէն այն ահա կայ, է- որ ինչ լինելոցն էր՝ ահա էղէ- է- Աստուած խնդրեացէ պահալալեան» : (ժողովոյ Գ:15)

«Ինչ որ եղած է հիմա ալ կայ, ինչ որ պիտի ըլլայ՝ արդէն եղած է, եւ Աստուած անցածը կը փնտռէ»:

Ուրեմն մեր գիտակցութեան ենթակայ անցեալն ու ապագան պատրանք են: Այս պատրանքը որպէս ճշմարտութիւն ընդունիլ, մեր գիտակցութեան ցած մակարդակին արդիւնքն է: Աստուածային երանութեան փորձառութիւնը ուրեմն միայն ներկայի վրայ կեդրոնանալով կարելի է ձեռք ձգել, որովհետեւ ներկան միայն յաւիտեան է: Քանի որ միայն Աստուած յաւիտենական է, ուստի յաւիտենականութեան փորձառութիւնը Աստուծոյ հետ ըլլալ է: Կան անձեր, որոնք ներկան անտեսելով կ'ապրին անցեալի յիշատակներով, կամ ապագայի երազներով: Նման կեանք մը միշտ դժբախտութիւն կը բերէ եւ ոչ երջանկութիւն: Աշխարհ կը գտնուի ժամանակի եւ միջոցի դրութեան մէջ, ուրեմն պատրանքային է: Յաւիտենականութիւնը ժամանակի դրութենէ դուրս ըլլալ է: Պատրանքային գոյատեւման գիտակցաբար վերջ տալ է: Եթէ յաջողինք, մենք ալ, նման Յիսուսի, կրնանք ըսել. «Ես այս աշխարհի մէջ եմ, բայց

«... ես՝ չեմ յայտն աշխարհէ»: (Յովհաննոս Լ: 23)

«... ես առ աշխարհէն չեմ»:

բ- Ո՞ւր է Աստուած, ո՞ւր է դրախտը՝ երկինքը եւ ո՞ւր է դժոխքը:

«Աստուած ամէն տեղ է» կ'ըսենք եւ կը հաւատանք որ այդպէս է: Բայց երբ հարցը «դժոխք երթալ» ըլլայ, «Աստուած հոն չէ» կ'ըսենք: Չենք խորհիլ, թէ այսպէսով Աստուած սահմանափակած կ'ըլլանք: Եթէ Աստուած դժոխքի մէջ չէ, կը նշանակէ որ Ան ամէն տեղ չէ: Աս մեր առջեւ կը դնէ երկասյրի դժուարութիւն մը: Ուրեմն ո՞ւր է դժոխքը եւ ո՞ւր է դրախտը՝ երկինքը: Թէ՛ դժոխքը, թէ՛ ալ երկինքը չեմ կարծեր որ որոշակի վայրեր ըլլան: Իմ կարծիքով անոնք մտային եւ հոգեկան վիճակներ են: Այն անձը, որ ինքզինք, իր

գիտակցութեամբ, Աստուծոյ կը հեռացնէ, կ'ըլլայ զժողովի մէջ:

Իսկ այն անձը, որ հաւատքով, յարատեւութեամբ եւ վճռականութեամբ ինքզինք կը պատրաստէ իր գիտակցութեան մակարդակը բարձրացնելու, որպէսզի կարենայ իրականացնել արտայայտութիւնը իր անսահման սիրոյն եւ իր Աստուծոյ հետ միանալու տենչանքը ու յոյսը, կ'ապրի երկիրքի մէջ:

Աստուած տեսնելու տենչանքը, երկու սիրահար երիտասարդներու, ի գին ամէն զժողովութեան, իրարու հետ գոնէ մի քանի վայրկեան ժամանակ անցընելու համար թափած ջանքէն եւ հանդիպման պահուն ալ զգացած սրտի բաբախումէն շատ աւելին պէտք է ըլլայ:

Աստուած տեսնել կ'իրականանայ միայն գիտակցութեան մակարդակի բարձրացումով: Թէ՛ երկիրք, թէ՛ ալ զժողով, երկուքն ալ հոս են, աշխարհի վրայ եւ ներկայիս: Քանի որ ազատ կամք ունինք, անոնցմէ մին ընտրել մեզմէ կախեալ է: Աստուած արդէն մեզի հետ է, մեզի կը մնայ այդ իրողութեան փորձառութիւնը ունենալ:

«Երբ ո՞չ Գիտէ՛, զի մարմին չէր դաճար
Են Հոգո՞ւն որ է 'ի յեզ' զոր ունի՛ն
յԼսորո՞շոյ: Եւ շէ՛տ անձանց որեր ...
Ֆառա՞սոր արարէ՛ զԼսորո՞ւս՝ 'ի մարմինս
Չէր Եւ յոգի՞ս չէր»: (Լ Կորնթացիս 9:19-20)

«Զէ՛ք գիտեր որ ձեր մարմինը տաճարն է Սուրբ Հոգիին՝ որ ձեր մէջն է, զայն Աստուծոյ ստացաք, եւ դուք ձեզի չէք պատկանիր. ... ուստի փառաւորեցէ՛ք Աստուած ձեր մարմինին ու ձեր Հոգիին մէջ, որոնք կը պատկանին Աստուծոյ »:

Ուրեմն ի՞նչ է փրկութիւնը:

«Եւ զարշօյի Հողն յերկիր որպէս Է- Էրն, Է- Հողին զարշօյի աւ- Աստուծոյ որ Էր պնա» : (Ժողովոյ ԺԲ:7)

«Այն ատեն Հողը գետինը պիտի վերադառնայ՝ ինչպէս որ առաջ Հոն էր, Ու Հողին Աստուծոյ պիտի վերադառնայ, որ զայն տուաւ»:

Ըստ այս համարին մահուընէ յետոյ, մարդու մարմինը, որ հողէ է, հողին պիտի վերադառնայ եւ հողին ալ, որ Աստուծոյ լոյսն է եւ Աստուծմէ տրուած, Աստուծոյ պիտի վերադառնայ: Յաջորդ համարները կը շեշտեն մարդու հողին Աստուծոյ լոյսը ըլլալը եւ հողին ալ՝ ճշմարտութիւն:

«Լոյս Տէարն շոնշ մարդկան, ...» :

(Լուսակայ Ի:27)

«Մարդուն ներշնչումը Տէրոջը ճրագն է. ...»:

«Մարդուն հողին Տէրոջը լոյսն է»:²

«... Է- Հողին Է որ վկայէ, զի Հողին իսկ

Է ճշմարտութիւն» : (Լ Յովհաննու- Ե:6)

«... ու Հողին է, որ կը վկայէ, որովհետեւ Հողին ճշմարտութիւն է»:

Եթէ ամէն մարդու մարմինը հողին եւ հողին ալ Աստուծոյ պիտի վերադառնայ, ինչո՞ւ աղօթել փրկութեան համար: Կը թուի որ թէ՛ սուրբին, թէ՛ ալ ոճրագործին վախճանը նոյնն է: Երկուքին մարմիններն ալ հող պիտի ըլլան եւ երկուքին հողիներն ալ պիտի վերադառնան Աստուծոյ՝ ուրկէ եկած էին: Եթէ փրկութիւնը մահէ յետոյ հողին Աստուծոյ միանալը եւ անոր ներկայութեան հետ գոյատեւելն է, ուրեմն ամէն անձ պիտի փրկուի: Եթէ այդպէս է, ինչո՞ւ վեհ

կենցաղի մը ձգտիլ: Անասունները վեհ կենցաղի մը չեն ձգտիր եւ կը գործեն միայն իրենց բնոյթին համաձայն: Ըստ յաջորդ համարին կը թուի թէ մարդն ալ իր բռնած ընթացքով անասուններէն տարբերութիւն մը չունի:

«Սակայն եւ ՚ի մէջ նոցա պատահար է որդոսոց մարդկան: Եւ պատահար է անասնոց, եւ պատահար յամենեւեմն ՚ի նոցա: Որպէս մահ սորա՝ նոյնպէս եւ մահ նորա: Եւ շոնշ է յամենեւեմն: Եւ պնշ աստեղութիւն եղեւ մարդոց լան պանասնոց, եւ ոշինշ. պի ամենայն ինշ ընդոնայն է: Լամենայն ՚ի մի պեղի երթայ. ամենայն եղեւ ՚ի Ըոցոյ, եւ ամենայն դասնայ ՚ի Ըոց»: (Ժողովոց Գ: 19-20)
«Արդարեւ ինչ որ մարդոց որդիներուն կը պատահի անասուններուն ալ կը պատահի. Նոյն բանը կը պատահի անոնց: Ինչպէս մէկը կը մեռնի, այնպէս ալ միւսն կը մեռնի: Բոլորը նոյն շունչը ունին: Մարդը անասունէն զերպանց չէ, Որովհետեւ ամէն ինչ ունայնութիւն է: Բոլորը նոյն տեղը կ'երթան: Ամէն ինչ հողէն եղաւ եւ ամէն ինչ հողին կը վերադառնայ»:

Եթէ աս է ճշմարտութիւնը, կրօնքի պէտք չունինք: Կրօնքին նպատակը մեզի փրկութեան ճամբան ցոյց տալ է: Հոս փրկութեան հաւանականութիւն կայ. կամ համայն մարդկութիւնը խաբուած է կրօնքի մը հետեւելով, կամ ալ փրկութիւնը պարզապէս մեր հոգիին Աստուծոյ հետ ըլլալը չէ:

Ուրեմն ի՞նչ է փրկութիւնը:

Նախ քննենք, թէ մարդոց եւ անասուններուն միջեւ տարբերութիւն մը կա՞յ: Եթէ չկայ, այն ատեն Աստուած ինչո՞ւ մարդը անասուններէն տարբեր ստեղծեց: Ծննդոց գիրքի Ա. գլխուն (համար 27 եւ 31) մէջ կը կարդանք թէ Աստուած մարդը ստեղծեց միւս բոլոր շնչաւոր կենդանիներուն հետ, ստեղծագործութեան վեցերորդ օրը: Մարդուն միւս բոլոր կենդանիներէ տարբերութիւնը այն էր որ Աստուած մարդը ստեղծեց իր պատկերին նման: Վստահ եմ բոլորս ալ համաձայն ենք որ աս չի նշանակեր թէ մարդ Ֆիզիքսապէս Աստուծոյ կը նմանի կամ Աստուած՝ մարդուն:

«Եւ ասաց Աստուած. արասցու՛ք մարդ ըստ պատկերի մերո՛ւմ եւ ըստ նմանութեան, եւ իշխեսցէն յկանց Ժողո՛ւ. եւ թռչնոց երկնից, եւ անասնոց, եւ ամենայն երկրի, եւ ամենայն սողնոց որ սողին 'ի վերայ երկրի»: (Ծննդի Ա:26)

«Աստուած ըսաւ. «Մեր պատկերով, մեր նմանութեան պէս մարդ ընենք, որ տիրապետեն ծովու ձուկերուն, երկիրքի թռչուններուն եւ անասուններուն, ամբողջ երկրին, ու երկրի վրայ սողացող բոլոր սողուններուն»:

Մարդը անասուններէն կը տարբերի իր ուղեղի որակովը: Շնորհիւ այդ ուղեղին մարդ ունի լրիւ կազմուած իմացականութիւն, (հարկաւ եթէ զայն գործածէ), հետեւաբար կարող է ընդունիլ եւ ունենալ Աստուածային իմաստութիւնը, եթէ անշուշտ իր ազատ կամքով այդ ուղղութեամբ ընթանայ եւ իմաստութեան արժանանայ: Շնորհիւ իր այդ ուղեղին մարդ

կարողութիւնը ունի ճիշդ ուղղութեամբ ընթանալու եւ ըստ վերելի (Մնունդք Ա:26) համարին, «տիրապետելու» իր անասնական բնոյթներուն: (Այս համարին սխալ մեկնաբանութեան հետեւանք մարդ կը կարծէ թէ ինք ստեղծագործութեան միւս բոլոր կենդանիներուն վրայ տիրապետելու իշխանութիւնը ունի): Շնորհիւ իր ազատ կամքին ան կարող է դատել ու գատել ճիշդ ընթացքը, քան թէ խորհիլ, խօսիլ եւ գործել միայն համաձայն իր բնոյթին, ինչպէս կ'ընեն կենդանիները: Այսօր գիտուններ մեզի կ'ըսեն, թէ նոյնիսկ կարգ մը կենդանիներ նաեւ ունին որոշ չափով իմացականութիւն:

Եօթերորդ օրը Աստուած լրացուց ստեղծագործութիւնը եւ սրբացուց եօթերորդ օրը եւ հանգստացաւ: Հանգստանալէ առաջ Աստուծոյ վերջին արարքը ի՞նչ էր:

«Եւ սրբեց Տէր Աստուած զմարդն Հող
յերկրէ. եւ փշեաց յերեսս նորա շունչ
կենդանի, եւ եղեւ մարդն յօգի
կենդանի»: (Մնունդք Բ: 7)

«Տէր Աստուած գեանի Հողէն ձեւակերպեց մարդը՝ անոր ուռնգերէն կեանքի շունչ փչեց. եւ մարդը ապրող անձ եղաւ»:

Երբայերէնի մէջ «շունչ» բառին համար «նէֆ» բառը գործածուած է, որ երկու իմաստ ունի. «շունչ» եւ «անհատականութիւն»: Միւս բոլոր կենդանի արարածները, միայն մարդ արարածին տրուած, յաւիտենական կեանքի մը անհատականութեան գիտակցութիւնը չունին: Տարբեր թարգմանութեան մը մէջ նոյն համարը թարգմանուած է հետեւեալ ձեւով:

«Տէր Աստուած գեանին Հողէն շինեց մարդը եւ անոր ուռնգութեան կենդանութեան շունչ փչեց ու մարդը

կենդանի հոգի եղաւ»:²

Բայց գրաբարը «հոգի» չի գրեր՝ այլ «ոգի»:

Ուրեմն եօթերորդ օրը, Աստուած հանգստանալէ առաջ, մարդուն նաեւ տուաւ ինքնութիւն մը՝ անհատականութիւն մը: Մարդ արարած շնորհիւ իր Փրկիչքական մարմնոյն զգայարանքներուն եւ զգացական մարմնին կը նշմարէ, տեղեակ կ'ըլլայ եւ կը գիտնայ (awareness) իր միջավայրը եւ անոնց տուած զգացումները, նման միւս բոլոր շնչաւոր կենդանիներուն: Ան, շնորհիւ այդ անհատականութեան, նաեւ գիտակից կ'ըլլայ (conscious) այդ բոլորին: Այս երկուքին միջեւ՝ տեղեակ ըլլալ (awareness) եւ գիտակցութիւն ունենալ (consciousness), տարբերութիւն կայ: Որով մարդ արարած, անասուններէ յաւելեալ, ունի գիտակցութեան աւելի բարձր մակարդակ մը: Մարդ նաեւ ունի իր այդ գիտակցութեան մակարդակը բարձրացնելու կարողութիւնը եւ կարելիութիւնը, մինչեւ որ Աստուածայայտնութիւնը իրականանայ, ինչ որ է յայտնութիւնը այն «Պատկերին», որուն նման ստեղծուեցաւ:

Ստեղծագործութեան նպատակն է իրականացնել Աստուածայայտնութիւնը: Միթէ Աստուած ինք չըսա՞լ թէ բոլոր ստեղծուածները բարի են:

«Եւ երբեք Լապտաւիս զամենայն զոր արար, եւ ահա Բարի էն յոյժ, եւ եղև զաղորդայն, օր զեցերորդ» : (Ծնունդի Լ: 31)
«Աստուած իր ամբողջ ըրածին նայեցաւ, ու ահա՛ շատ բարի էր: Իրիկուն եւ առտու ըլլալով՝ վեցերորդ օրը եղաւ»:

Միթէ Յիսուս ինք չըսաւ թէ միայն Աստուած «բարի» է:

« ... զի Ըարցանեա զիս զբարոյ, մի է

Բարի. ...» : (Մարգէն ԺԹ:17)

« ... Ինչո՞ւ բարի կը կոչես զիս. մէկէն գատ բարի չկայ, որ Աստուած է ...»:

Հետեւաբար ստեղծագործութիւնը իր ամբողջութեամբ կը ներկայացնէ Աստուած: Մարդ արարած, որպէս գազաթը այդ ստեղծագործութեան, շնորհիւ իր անհատականութեան տուած գիտակցութեան, այդ յայտնութեան իրականացման միջոցը եղաւ: Հետեւաբար իր կեանքի նպատակը եւ պարտականութիւնն ալ այդ պէտք է ըլլայ: Ուրեմն, երբ մարդ արարած կը խոտորի իր պարտականութեան մէջ, Աստուծոյ եւ իր ստեղծուած նպատակին չի ծառայեր:

Փրկութիւնը Աստուծոյ պարգեւն է բոլոր անոնց, որոնք չարին յաղթելով, կ'ապրին եւ կ'իրականացնեն իրենց կեանքի նպատակը՝ Աստուածայայտնութիւնը: Եւ ով է՞ չարը, եթէ ոչ մարդուն իր «Ես»ը: Աստուած մարդու տուած անհատականութեան համար «բարի» է չըսաւ:

Համայն մարդկութիւնը փրկութեան համար անընդհատ կ'աղօթէ: Այսպէսով իրենց կեանքի նպատակը կ'ըլլայ մահէ յետոյ այդ փրկութիւնը ձեռք ձգել: Զարմանալին այն է, որ երբ տակաւին այս աշխարհի վրայ ենք եւ ողջ, այդ փրկութիւնը չենք ուզեր: Չենք ուզեր, որովհետեւ կապուած ենք մեր «Ես»ին եւ «Ես»ն ալ՝ աշխարհի պատրանքային շլացուցիչ ամէն ինչին: Հետեւաբար շատ դիւրին է ըսել «կը հաւատամ, հետեւաբար փրկուած եմ»: Աս մեր ուսերուն վրայ որեւէ պատասխանատուութիւն չի դնէր, բացի պարզ հաւատալէ (belief), որ ճշմարիտ հաւատք (faith) ունենալէ շատ տարբեր է եւ անոր հետ կապակցութիւն չունի: Իսկ, ըստ հետեւեալ համարին մեր ուսերուն վրայ դրուած պարտականութիւնը չափազանց ծանր է:

«Եւ ամենայն որ ո՛վ ելնող պտուռն, կամ
 պեղձայրս, կամ պէ՛ռյրս, կամ պճայր, կամ
 պմայր, կամ պկի՛ն, կամ պորտիս, կամ
 պաճարակս զասն անուան իմոյ,
 Ըարի-րասպարիկ ասցէ՛ եւ պկեանսն
 յաւթընեականս ժառանգեսցէ» : (Մատթէոս
 ԺԹ : 29)

«Ով որ թողուցած ըլլայ տուներ, եղբայրներ, քոյրեր,
 հայր, մայր, կի՛ն, զաւակներ կամ արտեր՝ իմ անունիս
 համար, պիտի ստանայ հարիւրապատիկը եւ ժառանգէ
 յաւիտենական կեանքը»:

*Անոնք, որոնք փրկութեան համար կ'աղօթեն, բնաւ
 փրկութիւն պիտի չտեսնեն, քանզի փրկութիւնը
 կեանքի նպատակը չէ եւ պէտք չէ ալ ըլլայ: Փրկու-
 թիւնը կեանքին նպատակը՝ Աստուածայայտնութիւնը
 իրականացնողին համար պարգեւ մըն է: Յիսուս «զիս
 փրկէ» չըսաւ, այլ «Քու կամքդ ըլլայ» ըսաւ եւ ինք
 իրականացուց Աստուածայայտնութիւնը իր անձին
 մէջ: Ճիշդ ասոր համար ալ, այսօր մենք Յիսուսին
 համար կրնանք ըսել Յիսուս Քրիստոս:*

«Նոյն ինչն Ըոգին զկայէ Ըոգոյս
 մերոմ, ելել եմէ որդի՛. ապա եւ
 ժառանգի՛. ժառանգի՛ Ըսրո-ժոյ՝ եւ
 ժառանգակիցի՛ Քրիստոսի. ... » :
 (Հոովմայեցիս Ը : 16-17)

«Նոյնինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգիին
 հետ՝ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. եւ եթէ
 զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ
 ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... »:

Ըստ այս համարին մենք ալ Աստուծոյ որդիներ ենք, բայց Յիսուս Աստուծոյ՝ Հօրը հաւնած որդին էր: Երբ անձը փրկութեան համար կ'աղօթէ իր նպատակը մահէ յետոյ իր «Ես»ը պահել է: Երբ մարդ կը մեռնի, անտարակոյս իր հոգին, որ Աստուծմէ եկած էր, Աստուծոյ կը վերադառնայ, բայց իր «Ես»ը՝ անհատականութիւնն ալ իր մարմինին հետ կը մեռնի եւ կ'անհետանայ: Քանզի գրուած է.

«Զի խոշակն մեղաց մահ է»: (Հովհաննէս 9:23)
 «Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»:

Մինչդեռ փրկութիւնը մահէ ետք այդ անհատականութիւնը կարենալ պահելն է: Եթէ մենք ալ յաջողինք, կ'ըլլանք Աստուծոյ հաւնած որդիներէն, որոնց մասին գրուած է հետեւեալ համարին մէջ.

«Յորժամ եղէն աստուծոյ թերէ, ամենայն
 Ըրեշտակէ աստուծոյ օրհնեցին զիս
 մեծաշայն է ամենայն Ըրեշտակէ իմ
 Գոյնցին»: (Յոբայ 1, Ը:7)

«Երբ առտուան աստղերը միասին կ'օրհներգէին, եւ Աստուծոյ բոլոր որդիները ցնծութեամբ կը գոչէին»:

Աստուածաշունչի վերեւ տեղադրուած Համարի աշխարհաբար թարգմանութիւնը, աւնուած այս գիրքի մէջ գործածուած բոլոր աշխարհաբար Համարներու Համար օգտագործուած թարգմանութեան, գրաբար բնագրի նկատմամբ ունի որոշ տարբերութիւններ: Այդ պատճառաւ յարմար նկատեցի ուրիշ աշխարհաբար թարգմանութիւններ ալ ստորեւ ներկայացնել: Նկատի ունենալով որ գրաբարը թարգմանուած է յունարէն եւ ոչ թէ բնագրէն՝ եբրայերէն, ուղեցի ներկայացնել նաեւ թէ՛ եբրայերէն եւ թէ՛ յունարէն օրինակներէն օգտուելով թարգմանուած անգլերէն տարբերակները: Վստահ չեմ թէ ո՞ր մէկ թարգմանութիւնը ճշգրիտ թարգմանութիւնն է: Վճիւր կը թողում ձեր դատողութեան:

«Երբ աստղերը ցլրուցան եղան, աստղերի բոլոր հրեշտակները մեծաձայն օրհնեցին ինձ, իմ բոլոր հրեշտակներն էլ գովեցին»:¹

«Երբ առաւօտեան աստղերը մեկտեղ վառաբանութիւն կ'ընէին, երբ Աստուծոյ բոլոր որդիները ցնծութեամբ կ'աղաղակէին»:²

*“When the morning stars sang together, and all the sons of God shouted for joy?”*³

*“when the morning stars sang together and all the sons of Elohim shouted for joy?”*⁴

*“When the kokhvei boker sang together, and all the Bnei Elohim shouted for joy?”*⁵

*“while the morning stars sang together and all the angels [sons of god] shouted with joy?”*⁶

*“while the morning stars sang together and all the angels shouted for joy?”*⁷

*“when the morning stars sang together, and all the sons of God shouted for joy?”*⁸

Երբ անձ մը յետ մահու փրկութիւն ձեռք ձգելը որպէս կեանքի նպատակ ընտրած է եւ ոչ թէ իր կեանքի ընթացքին Աստուածայայտնութեան իրազոր-ծումը, յայտնի կ'ընէ թէ ան իր «Ես»ին կապուած է:

«Ոչ ո՛վ կարէ երկո՞ց Կերանց Ժառանգել. կամ պմին ասրիցէ եւ պմեանն սիրիցէ՞ կամ պմին մեծարիցէ՛ եւ պմեանն արհամարիցէ. ոչ կարէ՛լ Աստուծոյ Ժառանգել եւ մամոնայի»: (Մատթէոսի .9 : 24)

«Ոչ մէկը կրնայ ծառայել երկու տերոջ. որովհետեւ կամ պիտի ատէ մէկը եւ սիրէ միւսը. կամ պիտի յարի մէկուն ու արհամարէ միւսը: Չէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Այն անձը, որ իր «Շս»ին փարած է չի կրնար իր կեանքին նպատակը եւ պարտականութիւնը եղող Աստուածայայտնութեան ծառայել:

Յիսուս գործնականօրէն ցոյց տուաւ թէ ինչ պէտք է ընենք: Մենք ալ պէտք է մեր «Շս»ը մահուան դատապարտենք, խաչենք, անտեսենք ու կորսնցնենք զայն, ինչպէս որ գրուած է.

«Որ խնդրիցէ պանչն իւր ասրէցո-ցանել,
կորո-սցէ պնա . եւ որ կորո-սցէ,
ասրէցո-սցէ պնա»: (Ղո-հասո- ժԷ:33)

«Ով որ ջանայ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն. իսկ ով որ կորսնցնէ իր անձը՝ պիտի սպրեկնէ զայն»:

Որ «իբէ պանչն իւր՝ արշակէ պնա . եւ որ ասրէայ պանչն իւր յաշխարհիս յայտմիկ, ՚ի կէանան յա-իթենականս պաւեացէ պնա»:
(Յովհաննոս- ժԲ:25)

«Ան որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն՝ եւ ա՛ն որ կ'ատէ իր անձը այս աշխարհի մէջ՝ յաւիտեանական կեանքին համար պիտի պահէ զայն»:

Փրկութիւնը, զայն Աստուծմէ խնդրելով կարելի է չէ ստանալ, այլ փրկութիւնը կող զայ երբ մենք զայն մոռցած կ'ըլլանք եւ անտեսած:

Երբ պատիկ էի ու օր մը դաշտը կը խաղայի, թիթեռնիկ մը տեսայ եւ փափաքեցայ բռնել: Որքան ետեւէն վազեցի, այնքան աւելի բարձրացաւ: Չկարողացայ բռնել: Երբ նստած էի՝ ուտելով զբաղ եւ թիթեռնիկը մոռցած, թիթեռնիկը եկաւ եւ ուսիս վրայ կեցաւ:

Նմանապէս, երբ փրկութեան ետեւէն երթանք, անկարելի կ'ըլլայ զայն ձեռք ձգել: Իսկ եթէ զայն

մոռնանք եւ մեր կենցաղով ծառայենք մեր կեանքին ճշմարիտ նպատակին՝ Աստուածայայտնութեան, փրկութեամբ կը պարգեւատրուինք: Ի դին բոլոր դժուարութիւններու համբերութեամբ պէտք է յարատեւենք եւ չչեղինք մեր կեանքի նպատակէն եւ մեր ընտրած վեհ կենցաղէն՝ մինչեւ մեր մահը: Այդ վեհ կենցաղը մեր կապն է հաստատուած Աստուծոյ հետ, ինչպէս կը պատահի մեր աղօթքի պահերուն: Որով այդ վեհ կենցաղն ալ կ'ըլլայ մեր առօրեայ աղօթքը:

«Բայց որ Համբերեացն 'ի սպաս, նա կեցցել'»: (Մատթէոս ԻԳ:13)

«Բայց ո՛վ որ տոկայ մինչեւ վախճանը՝ անիկա՛ պիտի փրկուի»:

«... առ այն՝ Թե որո՞րք է յամենայն ժամ կա՛լ նոցա յաղօթա՛ լու մի՛ շանցրանալ»:
(Ղուկաս ԺԲ:1)

«... որ դիտնան թէ պէտք է ամէ՛ն ատեն աղօթել՝ առանց ձանցրանալու»:

* * *

1 - Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների - Արեւելահայերէն նոր թարգմանութիւն

2 - Աստուածաշունչ գիրք Հին եւ Նոր Կտակարանաց - Մերձաւոր արեւելքի Աստուածաշունչի ընկերութիւն

3 - Միացեալ Նահանգներու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Վաչէ Արք. Յովսէփեանի արտօնութեամբ անգլերէն լեզուով 1977ին հրատարակուած Աստուածաշունչէն առնուած: (The new OXFORD annotated BIBLE with the Apocrypha-Revised Standard Version.) (This quotation is also verbatim the same as the King James Version)

4 - Name of God Bible

5 - Orthodox Jewish Bible


6 - Expanded Bible

7 - New International Version

8 - The Revised Standard Version of the Bible: Catholic Edition

«... Երանելի էն՝ որ պճանապահու իմ
 պաճիցեն: ... Երանելալ է այր որ լուծիցե
 ինչ, եւ մարդ որ պճանապահու իմ
 պաճիցե: Գլխիցի առ զբոնու իմ
 Հանապապ. եւ պաճիցե պետեմ մորից իմոց:
 Զի ելի իմ էն ելի կենաց. եւ պարտապիշն
 կամի իմ ՚ի Տեառնէ»: (Լուսկաց Ը:32-35)

«... Որովհետեւ իմ ճամբաներս պահողները երանելի
 կ'ըլլան: ... Երանելի է այն մարդը՝ որ ինձի մտիկ
 կ'ընէ, Ամէն օր իմ դռներուս քով հսկելով եւ իմ
 դրանդիքներս պահպանելով: Արդարեւ զիս գտնողը
 կեանք կը գտնէ Ու Տերջ բարեհաճութիւնը կը
 ստանայ»:





ԻՆՉՊԷՍ ԾԱՌ-ԱՅԵԼ ԱՍՏՈՒԹՎԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Բնութեան մէջ ամէն բանի համար մեզի օրինակ մը տրուած է, որով հարկ է որ մենք ալ այդ օրինակներէն օգտուինք եւ սորվինք:

Ինչպէս հանդարտ եւ խաղաղ լիճի մը ջուրը, նման հայելիի, կը ցոլացնէ իր միջավայրը, նոյնպէս ալ հանդարտ եւ խաղաղ միտք մը կը ցոլացնէ իր միջավայրը: Ուստի ի՞նչ է այդ միջավայրը: Քանի որ Աստուած ամէն տեղ է, ուրեմն մենք շրջապատուած ենք Աստուծոյով: Գրուած է, թէ Աստուած մարդը իր պատկերին նման ստեղծեց, ուրեմն հարկ է որ մարդու միտքն ալ այդ պատկերը ցոլացնէ:

Առ հասարակ մարդ կը կարծէ, թէ ինք իր Փրփրփական մարմինն է, կամ իր խորհուրդներն է եւ

զանազան յատկութիւնները: Մինչդեռ այս բոլորը կը պատկանին իր «Ես»ին: Այն բոլորը, որ կը կարծենք թէ մենք ենք, բոլորն ալ առարկայական են եւ չեն ներկայացնելու ենթական՝ ինքը, որ է տեսնող, գիտցող եւ զգացող գիտակցութիւնը՝ ճշմարիտ էութիւնը: Կարելի չէ զայն գիտնալ, քանի որ ան է ենթական եւ գիտցողը: Որպէսզի ան գիտցուի, պէտք է առարկայական ըլլայ: Ենթական երբեք առարկայական չի կրնար ըլլալ: Ամէն անհատի ենթական նոյնն է եւ Աստուծոյ էութեան՝ Քրիստոսի հետ նոյնն է: Մեր հասկացողութեամբ զայն գիտնալ անկարելի է, բայց անոր մէջ խորասուզուիլ եւ ձուլուիլ կարելի է: Գիտենք թէ կարելի է: Գիտենք որովհետեւ Յիսուս յաջողեցաւ եւ յայտարարեց.

«Ես եւ Հայր իմ մի էմք»: (Յովհաննոս Ժ:30)

«Ես եւ Հայրը մէկ ենք»:

Աս կարելի կ'ըլլայ այն ատեն, երբ մեր առարկայական «էութիւնները», որոնց հետ կը թուինք նոյնացած ըլլալ, մէկ-առ-մէկ մէկդի կը թողունք: Ինչպէս լիճը իր շրջակայքը նոյնութեամբ կը ցոլացնէ, բայց չի կրնար ցոլացնել ինքզինք՝ ջուրը, մենք ալ չենք կրնար գիտնալ մեր ենթական՝ ճշմարիտ էութիւնը, որ ականատես է ամէն ինչի:

Եթէ լիճը փափաքի իր ջուրն ալ ցոլացնել, պարտ է անոր մէկ մասը իր մակերեսի մակարդակէն վեր բարձրացնել, ալիք յառաջ բերել, ինչ-որ ալեկոծութեան պատճառ կ'ըլլայ: Երբ լիճը ալեկոծի ոչ միջավայրը կրնայ ցոլացնել եւ ոչ ալ ինքզինք՝ ալիքը:

Նոյնպէս, մարդիկ խորհելով թէ պիտի ցոլացնեն իրենց էութիւնը եւ կարծելով թէ իրենց անհատականութիւնն ալ իրենց էութիւնն է, անգիտակցաբար կը դիմեն այդ անհատականութեան:

«Ես»-ն ալ կ'ուզէ ինքզինք յայտնաբերել, հետեւաբար մ'իտքը «կ'ալեկոծէ»՝ խորհուրդներով, ցանկութիւններով, իղձերով, ակնկալութիւններով, զգացումներով եւ անոնց յառաջ բերած հակազդեցութիւններով եւ յուզումներով: Անձը ո՛չ կարող կ'ըլլայ անհատականութիւնը, ո՛չ ալ Ենթական՝ ճշմարիտ էութիւնը յայտնաբերել, նոյն ատեն խափանելով այդ Աստուածային պատկերը, որ հանդարտ մ'իտքը մ'իայն կարող էր ցոլացնել: Եւ աս է դատապարտութիւնը եւ դժոխքը:

«Ես այս իսկ է դասաստան. պի լոյս եկն յաշխարհ ես սիրեցին մարդիկ պիսաս'ը ասասել ինն պլոյս պի էին Բորժի իրեանց շարութեան»: (Յովհաննոս Գ:19)

«Աս' է դատապարտութիւնը՝ որ լոյսը աշխարհ եկաւ՝ բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին՝ քանի որ իրենց գործերը չար էին»:

«Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր աս- Լսորոտած եւ Լսորոտած էր Բանն. Սա էր 'ի սկզբանէ աս- Լսորոտած: Լմենայն ինչ նովաւ եղէ, եւ ասանց նորա եղէ եւ ոչինչ որ ինչ եղէն: Սովաւ կեանի էր եւ կեանի էր լոյս մարդկան եւ լոյսն 'ի խաւարի անդ լոսասորէ եւ խաւար մեա ոչ եղէ Լասոտ... Էր լոյսն ճշմարտի որ լոսասոր ասնէ պամենայն մարդ որ ասոց է յաշխարհ, Յաշխարհի էր եւ աշխարհ նովաւ եղէ եւ աշխարհ պնա ոչ ծանեաւ:

... Եւ Բանն մարմինն եղէ- եւ թնակեաց 'ի մեզ եւ որեւէ պիտոս նորա, պիտոս իբրեւ պիտանի առ 'ի Հօրէ, լի շնորհօ՛ղ եւ ճշմարտութեան» : (Յովհաննոս Լ:1 14)

«Սկիզբէն էր Խօսքը ու Խօսքը Աստուծոյ քով էր եւ Խօսքը Աստուած էր: Ան սկիզբէն Աստուծոյ քով էր: Ամէն ինչ եղաւ ան'վ. եղածներէն ո՛չ մէկը եղաւ առանց անոր: Կեանքը անով էր՝ ու կեանքը մարդոց լոյսն էր. լոյսը կը փայլէր խաւարի մէջ՝ բայց խաւարը չճանչցաւ զայն: ... Ճշմարիտ Լոյսը ան էր՝ որ կը լուսաւորէ աշխարհ եկող ամէն մարդ: Ինք աշխարհի մէջ էր՝ եւ աշխարհը եղաւ իրմով՝ բայց աշխարհը չճանչցաւ զինք: ... Եւ Խօսքը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ՝ (եւ դիտեցինք անոր փառքը՝ Հօրը միածինի փառքին պէս)՝ շնորհքով ու ճշմարտութեամբ լեցուն»:

Իսկ դրախտը ի յայտ կու գայ երբ միտքը խաղաղ ու հանդարտ է: Առարկայականները մէկ-առ-մէկ կ'անհետանան, կը մնայ միայն ենթական, այն ատեն անհատականութիւնը կը հասկնայ ճշմարտութիւնը, թէ միայն հոգին ճշմարտութիւն է եւ նոյն հոգին է, որ կը գործէ ամենուն մէջ եւ ամենուրեք: Կը մոռնայ ինքնութիւնը՝ անհատականութիւնը, կը լուծուի հոգիին՝ Աստուծոյ մէջ եւ կը յայտարարէ «Ես եւ հայր իմ մի եմք»: Երանութիւնը կը ժայթքի իր մէջ եւ կ'ապրի միայն ներկան, որ է յաւիտենականութիւնը: Երջանկութիւնը՝ երանութիւնը արտաքին առարկաներէն, ցանկութիւններու իրականացումէն չէ որ յառաջ կու գայ, այլ ան անձին հոգիէն է որ կը բղխի եւ առարկայականին հետ կապ չունի: Ան միայն կը կարօտի խաղաղ եւ հանդարտ մտքի, որպէսզի ինքնաբերաբար անոր միջոցաւ արտայայտուի:

Շատեր երբ կ'իրականացնեն իրենց ցանկութիւններէն մին, իրենք զիրենք երջանիկ կը զգան,

կարծելով թէ այդ իրականացումն է, որ իրենց այդ երջանկութիւնը կու տայ: Ճշմարտութիւնը ան է, թէ տակաւին այդ ցանկութիւնը չիրականացած իրենց միտքը այդ ցանկութիւնը իրականացնելու մտահոգութեամբ զբաղ էր: Հետեւաբար երջանկութիւնը կարողութիւնը չունէր արտայայտուելու: Բայց երբ ցանկութիւնը կ'իրականանայ, այդ մտահոգութիւնը վերջ կը գտնէ, միտքն ալ իր խաղաղութիւնը կը գտնէ, որով երջանկութիւնը ինքնաբերաբար ի յայտ կու գայ: Երջանկութիւնը ոչ թէ առարկայէն կու գայ, այլ՝ մտքի խաղաղութենէն: Մեր կեանքի նպատակն է յայտնաբերել եւ ցոլացնել այդ Աստուածային գեղեցկութիւնը եւ սէրը, որ իր ներկայութեամբ մեզ կը շրջապատէ: Աս է Աստուածայայտնութիւնը. յայտնաբերել իր պատկերը մեր անձերուն մէջ եւ ոչ թէ Աստուած Ինք: Աստուած արդէն Ինք բոլոր ստեղծագործութիւնն է՝ մեծաշխարհային (macrocosm) չափի վրայ: Մեր կեանքի նպատակն ալ զայն յայտնաբերել է փոքրաշխարհային (microcosm) չափի վրայ: Մենք ոչ կարողութիւնը ունինք Աստուած հասկնալու եւ ոչ ալ զինք յայտնաբերելու: Մեր կարողութեան ներքեւ մենք միայն կրնանք յայտնաբերել անոր պատկերը՝ գեղեցկութիւնը ու սէրը, որ է եւ պէտք է ըլլայ մեր կեանքի նպատակը: Այս նպատակին՝ յաջողութեան հասնելու միակ միջոցը գիտակցութեամբ (consciously) ապրիլն է:

Ի՞նչ կը նշանակէ «գիտակցութեամբ ապրիլ»:

Մարդիկ կը կարծեն թէ իրենց բոլոր արարքներուն գիտակից են, բայց ճշմարտութիւնը այն է, թէ ընդհանրապէս բոլորս ալ կը գործենք մեր բնոյթին համաձայն: Այո՛, արարքը գործելէն յետոյ է որ գիտակից կ'ըլլանք մեր ըրածին: Մեր խորհուրդները, խօսքերը եւ արարքները համապատասխան են մեր բնոյթին, ինչպէս նաեւ ընդհանուրի կենցաղին: Ասիկա

ինքնապաշտպանութեան համար անհրաժեշտ ըլլալ կը թուի: Միթէ մեր բնոյթն ալ այդ միջավայրին արդիւնքը չէ՞: Երբ մեր յարաբերութեան մէջ եղած մարդիկ անձնասէր կենցաղ մը ունին եւ մեզ խաբելով կը շահագործեն, մեր հակազդեցութիւնն ալ կ'ըլլայ ինքնապաշտպանութիւն:

Նման խաւար միջնորդարի մը մէջ երբեմն ներքին լուռ ձայն մը մեզ կը զգուշացնէ: Բայց յաճախ, մեր իմացականութիւնը իր տրամաբանութեամբ, կը ջանայ մեզ համոզել, թէ մեր ընթացքին մեր բնոյթին համապատասխան ըլլալը արդարացուցիչ է: Այդ ներքին լուռ ձայնը կը բղխի մեր ծշմարիտ էութենէն՝ Քրիստոսէ, ինչ որ Աստուծոյ կամքն է: Աստուածային այդ կամքը ի յայտ կու գայ առանց տրամաբանելու: Ուրեմն «գիտակցութեամբ ապրիլ» կը նշանակէ այդ ձայնը չանտեսել եւ այդ ձայնին համաձայն ապրիլ, նոյնիսկ եթէ գիտենք թէ պիտի շահագործուինք: Նման կենցաղ մը ապրիլ կը թուի շատ դժուար ըլլալ: Հաւանական է, որ ուրիշներ նոյնիսկ մեզ ապուշ համարեն: Որպէսզի նման կենցաղի մը հետեւանք մեր անդորրութիւնը չխանգարենք, հարկ է անընդհատ մեր բնոյթը փոխելու աշխատիլ, որ կերտուած է մեր մանկութեան շրջանին: Երբ մեր բնոյթը այնպիսի համեմատութեամբ մը փոխուի որ մեր խորհուրդները, խօսքերը եւ արարքներն ըլլան համապատասխան այդ ձայնին՝ Աստուծոյ կամքին, միայն այն ատեն է որ մենք մեր մտային խաղաղութիւնը կը գտնենք: Խաղաղ միտքն ալ պատրաստ է ինքնաբերաբար ցոլացնելու Աստուծոյ պատկերը:

Փոխան Աստուածայայտնութեան ծառայող կենցաղ մը հետապնդելու, եթէ մեր կեանքը յանձնենք մեր «Ես»ին՝ սատանային, մենք ալ հետեւեալ համարով ներկայացուած Յորի նման կ'ողբանք:

«Զի երկե-ղն յորմէ խոշոյնն եկն 'ի վերայ իմ, եւ յորմէ կասկածելին պարտեաց ինչ: Ոչ խաղաղեցայ ոչ Հանդարտեցի' ոչ Հանգեայ, չանպի եկն 'ի վերայ իմ քարկոթիւն»: (Յոբայ Գ:25-26)

«Արդարեւ ի՛նչ բանէ որ շատ կը վախնայի՝ ա՛ն ինծի հանդիպեցաւ, եւ ի՛նչ բանէ որ երկիւղ ունէի՝ ինծի հասաւ: Ո՛չ խաղաղութիւն ունիմ, ո՛չ հանգստութիւն, Ո՛չ ալ հանդարտութիւն: Հապա վրդովումը եկած է իմ վրաս:»:





ՎԵՐԱԴԱՐՁԸ

Մեծ երանդով տունէն մեկնեցայ
Արկածախնդրութեան մեծ յոյսով:
Չանազան անձերու Հանդիպեցայ,
Ոմանք անտարբեր, ոմանք լի սիրով:

Տակաւին կը ճամբորդեմ այսօր.
Բոլոր այն անձերը, որոնք ճանչցայ
Ետ կը վերադառնան իրենց Հօր:
Իմ պտոյսն ալ պիտի վերջանայ:

Ճամբորդութիւնը շատ Հաճելի է,
Բայց որքան ալ ան զուարթ ըլլայ
Տան Հանգիստն ալ բաձարիկ է:
Հոգնեցայ քալելէ երկար ճամբայ:

Երբ տունէն կը մեկնէի Հայրս ըսաւ.
 «Չուարճացիր եւ մի վսիմնար բնաւ,
 Ես քեզի Հես պիտի ըլլամ Հարկաւ,
 Թէ՛ քու վատ օրերուդ, եւ թէ՛ լաւ»:

Հօրս յորդորն էր. «Մի ըլլար բիրա,
 Եթէ կը փափաքիս երջանկութիւն,
 Սիրէ բոլորին, նաեւ եղիր գթասիրտ
 Եւ դուն ալ կը գտնես առողջութիւն:

Բնաւ մի մոռնար Հօրդ տունը
 Օր մը պիտի վերադառնաս ետ
 ԱնՀամբեր պիտի սպասեմ դուռը
 Մինչեւ ողջագուրուիմ քեզի Հես»:

Իր բոլոր Հաճելի պատահարներով
 Երջանկութիւն է ճամբորդութիւնը:
 Հօրս տունն ալ Իր սիրտիչ Հոգիով
 Բոլորին կու տայ Իր երանութիւնը:

Վ.Ս.





ՀՐԱԺԵՇՏԸ

Երբ ես հոսկե այլեւ մեկնիմ՝
Աս ըլլայ Հրաժեշտի խօսքն իմ

Ան որ տեսայ, է Անգերազանցելին
Համտեսեցի թագուն Հիւժը այս ծաղիկին
Որ ծլած է մէջ Լոյսի ովկիանոսին
Արժանացայ այս Աստուածային օրհնութիւնին
Աս ըլլայ խօսքը իմ Հրաժեշտին:

Այս բեմադրութեան մէջ իր անհամար ձեւերով
Ես ալ մաննակցեցայ յատուկ խաղը խաղարով
Եւ Հրճուեցայ այն Անտեսանելին տեսնելով
Եւ ամբողջ մարմինս իր բոլոր անդամներով
Սարսուռ մը զգաց Անդաչէլիին Հարամով:

Եթէ գալիք է, թող Հիմա գայ վերջն իմ՝
Եւ աս ըլլայ Հրաժեշտի խօսքն իմ:

Թօսկոր

(Ազատ թարգմանութիւն)

ՎԵՐՁԱԲԱՆ

ԵՒ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Աւետարանին մէջ ներկայացուած Յիսուսի տուած պատգամներէն եւ իր կեանքի օրինակներէն, ինչպէս նաեւ մեր Ս. Եկեղեցւոյ ծէս եւ ծիսակատարութիւններուն մեզի ցոյց տուած ուղիէն, այն ինչ որ ես սորվեցայ, այս գիրքին մէջ ներկայացուցի: Հետեւաբար մարդկային կեանքին նպատակը եւ փրկութեան ճանապարհին ամենակարեւոր ազդակները, որոնք մարդկային կենցաղը եւ Աստուածպաշտութիւնն են, ջանացի հոս ներկայացնել: Նոյնպէս ջանացի ճշմարիտ կրօնքին իսկութիւնը, ինչպէս նաեւ ճշմարիտ Աստուածպաշտութիւնը ընդարձակօրէն, բայց պարզ եւ հասկնալի կերպով ներկայացնել: Իմ սահմանափակ կարողութեամբ նաեւ ջանացի, որոշ չափով, այս օրուայ գիտական տեղեկութիւններուն եւ կրօնքի դարաւոր տուեալներուն իրարու հետ ունեցած նմանութիւնը ցոյց տալ: Որոշ չափով, անուղղակիօրէն, նաեւ ակնարկեցի բազմաթիւ բնագիտական օրէնքներու գոյութեան մասին, որոնք տակաւին գիտնալէ ու հասկնալէ շատ հեռու ենք: Գիտունները կը ջանան այս օրէնքները գտնել, բայց իրենք զանոնք արտաքին աշխարհի մէջ կը փնտռեն: Անտարակոյս անոնք հոն ալ են, բայց այդ գիտութիւնները շատ աւելի դիւրութեամբ կարելի պիտի ըլլայ գտնել, երբ եւ եթէ մենք զանոնք մեր ներքին աշխարհի մէջ փնտռենք: Յիսուս ոչ գիտական աշխատանոց ունէր, ոչ ալ գործիքներ, ինչպիսին Զուլիցերիոյ մէջի ելեկտրոմագնիսական գործիքը (cyclotron), բայց ինք գիտէր այդ օրէնքները եւ զանոնք օգտագործելով թէ՛ բուժեց եւ թէ՛ ալ

մեռելիները յարուցանեց:

Ջարդէ ազատած մօրս եւ միլիոնաւոր նահատակներու յիշատակին ի յարգանս, այսօր, ցեղասպանութեան հարիւրամեակի առիթով, ինծի եւ ազգակիցներուս համար այժմէական եղող աղէտին մասին ալ խորհրդածութիւններս գրեցի: Շատ հաւանական է որ ոմանք գրուածներուն համաձայն չըլլան: Պիտի չզարմանամ, որովհետեւ ցաւը մեծ է եւ յուզում պատճառող հարց մըն է: Ինչպէս գիրքին մէջ գրած եմ, երբ զգացումներէ տարուինք տրամաբանելու եւ ճիշդը ընտրելու կարողութիւնը կը կորսնցնենք:

Գիրքը կարդացողը անտարակոյս պիտի նշմարէ թէ շատ մը կրկնութիւններ կան: Այս կրկնութիւնները նպատակաւոր են: Ճշմարտութիւնը այն է թէ վերեւ յիշուած կեանքի նպատակը՝ ճիշդ կենցաղը, Աստուածպաշտութիւնը եւ փրկութիւնը, բոլորն ալ շատ պարզ հարցեր են: Վստահ եմ այդ բոլորը կարելի է միայն մէկ էջով ներկայացնել: Բայց աս չի նշանակեր թէ զանոնք կիրարկելը դիւրին է: Ընդհակարակը, կը խորհիմ թէ ճիշդ կենցաղը, Աստուածպաշտութիւնը թէ՛ մարդու մը կեանքին ամենակարեւոր ստանձնութիւնն է եւ թէ ամենադժուարինը: Ճիշդ այս պատճառով ալ շատ քիչեր յաջողած են: Ինչո՞ւ իսկական սուրբերը թիւով շատ քիչ են, ապա թէ ոչ աշխարհ անհամար սուրբերով լեցուն պիտի ըլլար: Գիրքիս մէջի կրկնութիւններուն նպատակը, հարցը զանազան տարբեր անկիւններէ դիտել եւ ներկայացնել է: Քանի որ ներկայացուածները նոյն կէտին՝ կեանքի նպատակին վրայ կը վերջանան, կրկնութիւնն ալ անխուսափելի կ'ըլլայ: Կրկնութիւնը իր առաւելութիւնները ունի: Երբ նախակրթարան կը յաճախէինք ոտանաւորներ գոց կը սորվէինք, զանոնք բազմիցս կրկնելով: Ուրեմն կը խորհիմ թէ կրկնութիւնը գրուածները

աւելի լաւ հասկնալու, ըմբռնելու եւ յիշելու ու անոնցմէ տպաւորուելու համար օգտակար պիտի ըլլայ: Ինչպէս նախաբանին մէջ գրած եմ, այս հարցերուն կամ նիւթերուն մասնագէտը ըլլալու յաւակնութիւնը չունիմ: Չեմ ակնկալեր որ ամէն ընթերցող գրածներուս համամիտ ըլլայ: Կրօնքի եւ փրկութեան նկատմամբ, նոյնիսկ նոյն կրօնքին մէջ, իրարմէ շատ տարբեր հաւատալիքներ եւ տեսակէտներ կան: Վստահ եմ կան անձեր, որ նոյնիսկ գիրքս կարդալը մերժեն եւ փարին իրենց հաւատալիքներուն: Անոնց վախը այն է թէ արտաքին սատանայ մը կրնայ իրենց միտքը խանգարել: Ինձ այնպէս կը թուի թէ «սատանան-Եսը» անոնց միտքը գոցելով զայն արդէն խանգարած է, որպէսզի հոգեւոր գետնի վրայ յառաջացում չըլլայ, քանի որ նման յառաջացում մը «Ես»ին մահուան ճամբան կը բանայ: Շատ լաւ գիտենք թէ «Ես»ը ի գին ամէն բանի կը ջանայ իր բռնապետութեան շարունակականութիւնը ապահովել, գործածելով այն ինչ որ պիտոյ է: Ան նաեւ անհատին մէջ իր ունեցած հաւատալիքը (belief) կորսնցնելու վախը կ'արծարծէ: Շատ լաւ գիտենք թէ վախն ալ անհատին գործելու բոլոր գօրութիւնը եւ տրամաբանելու կարողութիւնը կը խլէ: Յիսուս իր խաչելութեան մասին շատ լաւ գիտէր եւ փախելու առիթն ալ ունէր, բայց իր մէջ վախ չունէր եւ Աստուծոյ կամքը յօժարաբար ընդունեց:

Մեր ճշմարիտ ուսուցիչը մեր ներքին Քրիստոսն է: Եթէ մենք պատրաստ ենք սորվելու, Քրիստոս ալ պատրաստ է մեզի սորվեցնելու: Կարեւորութիւն չունի թէ ինչ կը կարդանք: Քրիստոս նոյնիսկ սատանայապաշտերու գրութիւններէն կրնայ մեզի «ինչպէս չըլլալ»ը սորվեցնել: Սխալ հասկացողութիւն չըլլայ, ես չեմ յանձնարարեր նման գրութիւններ կարդալ:

Ասիկա պարզապէս ծայրայեղ օրինակ մըն էր որ տուի: Որպէսզի Քրիստոս կարենայ սորվեցնել, մեզի կը վիճակի միայն մէկ բան՝ ունենալ բաց միտք: Միտք մը որ ընդունակ է եւ նաեւ ճշմարտութիւնը սրտանց փնտռող: Ըստ Աւետարանի համարներուն, Յիսուս այս իրողութիւնը մատնանշելու համար քանիցս «պարարտ հող» աստութիւնը գործածած է: Պարարտ հողը բաց միտքն է, այն միտքը որ սորվելու պատրաստ է: Արեւմուտքի ավետարանական եկեղեցիներու պատուելիներէն ոմանք, նամանաւանդ անոնք որոնք հեռատեսիլէն եւ ձայնասփիւռէն քարոզչութիւններ կ'ընեն, տարուած են աշակերտներու որոշ խօսքերու սխալ մեկնաբանութենէն: Իրենք մոլորած, կը մոլորեցնեն նաեւ իրենց հետեւող խեղճ ժողովուրդը: Ինչո՞ւ համար Յիսուս ըսաւ հետեւեալները.

«Թո՛ւյլ Կո՛ւնսս, կո՛յրէ Էն՛ կո՛րաց ասաջնո՛րդէ: Կոյր կո՛րի յորժամ ասաջնորդէ՝ սխալէ՛, Է- երկու-ձի՛ն ՚ի խորխորաց անկանի՛ն»: (Մատթէոսի ժԷ:14)

«Թողուցէ՛ք զանոնք, իրենք կոյր են, ու կոյրերու առաջնորդ: Եթէ կոյրը առաջնորդէ կոյրը, երկուքն ալ փոսը պիտի իյնան»:

«... Իսկ որդի մարդոյ եկեալ, Գրասնիցէ՛ արդեւ-է Լաւ-ա՛յոս յերկրի»: (Ղո՛ւսաո՛ւ ժԼ:8)

«... բայց երբ մարդու Որդին գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Անոնք կ'անտեսեն շատ մը համարներ որ իրենց քարոզչութեան հակառակը կը ներկայացնեն: Շատ գիւրբին է ըսել. «կը հաւատամ, հետեւաբար փրկուած եմ» կամ «Յիսուս իր արիւնը թափեց իմ մեղքերուս համար, հետեւաբար փրկուած եմ»: Այս տեսակի

հաւատք պարզապէս «կը հաւատամ» ըսելէ զատ որեւէ պատասխանատուութիւն չի դնէր հաւատացեալներուն ուսերուն վրայ եւ անոնք կը շարունակեն իրենց սովորական կենցաղը: Թերեւս հասարակ ժողովուրդէն քիչ մը աւելի «բարի» ըլլան: Կը ճանչնամ զոյգ մը: Կինը նման խմբակի մը հետեւելով ամէն օր Ս. Գիրքի սերտողութեան կ'երթայ ու կ'անտեսէ իր ընտանիքը, այն աստիճան, որ «յանուն Աստուծոյ» այր եւ կնոջ բաժանման պատճառ կ'ըլլայ: Չեմ խորհիր որ նման արարք մը Աստուծոյ կամքը կրնար ըլլալ եւ կնոջ հետեւած «կրօնք»ն ալ, քրիստոնէութեան մէկ հատուածը ըլլալով հանդերձ, ճիշդ վարդապետութիւն մը ըլլար: Կաթողիկէ եւ Ուղղափառ եկեղեցիները ինչո՞ւ երկու հազար տարի է որ նման քարոզչութիւններ չըրին: Միթէ անոր համար որ չէի՞ն գիտեր: Բացարձակապէս ոչ: Ընդհակառակը: Անոնք աւելի լաւը եւ ճիշդը գիտէին: Զարմանալիօրէն այսօր մեր խորաններէն կը լսենք քարոզներ, որոնք կ'արձագանգեն վերոյիշեալ արեւմուտքի պատուելիներու քարոզչութիւնները: Արդեօք աս ինչի՞ նշան է: Կարելի է՞ թէ մոռցած են իրենց ունեցած գանձը, կամ ժողովուրդէն որոշ անհատներու փափաքներո՞ւն կ'ընդառաջեն: Մեր եկեղեցիներուն մէջ նման քարոզչութիւններ ծիսակատարութիւններու լեզուին գրաբարէ աշխարհաբարի փոխուելուն զուգահէր սկսան: Արդեօք մեր ուղղափառ եկեղեցին այլեւս ուղղափառ չէ՞ եւ խաւարամտութեան կը հետեւի: Պէտք չէ՞ որ ան հաւատարիմ մնայ իր ուղղափառութեան եւ որպէս փարոս խաւարամիտերը առաջնորդէ: Աւելի լաւ պիտի ըլլար եթէ քարոզներու բովանդակութիւնը օրուայ Աւետարանին ուղղափառ մեկնաբանութիւնը ցոլացնէր: Ուղղափառ եկեղեցիներու համար Յիսուսի խօսքերը աշակերտներուն գրած նամակներէն շատ աւելի կարե-

ւոր են: Պատարագի միջոցին չորս Աւետարաններէն ընթերցումը, ինչո՞ւ համար խորանի բարձունքէն եւ երկու մոմակալներու ներկայութեամբ կը կարդացուի: Բնաւ խորհած է՞ք: Մոմերուն լոյսը կը ներկայացնէ Յիսուսի խօսքերուն սփռած Լոյսը՝ գիտութիւնը: Աւետարանը կարդացողը սարկաւազ կամ քահանայ պէտք է ըլլայ: Իսկ Հին Կտակարանը կամ Պօղոսի եւ այլ նամակներ, վարէն՝ դասի մէջէն առանց մոմակալներու կը կարդացուին, զորս ոեւէ անձ կրնայ կարդալ: Դասը՝ ցած մակարդակի վրայ երկրայինը կը ներկայացնէ, իսկ խորանի բարձրութիւնը՝ երկնայինը: Յիսուսի խօսքերը երկնային են, իսկ աշակերտներունը՝ երկրային: Ո՞ր մէկուն պիտի ուզէիք հետեւիլ: Դարձեալ, սխալ հասկացողութիւն չըլլայ: Ես հակառակ չեմ աշակերտներուն գրած նամակներուն պարունակութեան: Անոնք ալ իրենց գիտութիւնը Յիսուսէն սորվեցան եւ Ս. Հոգիէն ալ ներշնչուեցան: Սակայն անոնք այդ նամակները այդ օրուայ ժողովուրդին գիտակցութեան մակարդակին համապատասխան գրեցին: Յիսուս ըսաւ. «պիտի լսեն բայց պիտի չիմանան, պիտի տեսնեն բայց պիտի չտեսնեն (այսինքն տեսածներնուն բուն իմաստը չհասկնան)»: Արդեօք աշակերտները, ի մտի ունենալով ժողովուրդին գիտակցութեան մակարդակը, աւելի մակերեսային, անոնց համա՞ր հասկնալի ձեւով մը գրեցին իրենց նամակները: Ինծի զարմանք պատճարողը այն է թէ 12 առաքեալներէն մեզի հասած շատ քիչ նամակներ կան եւ անոնք ալ շատ կարճ են: Մօտաւորապէս 70 տարի առաջ Թովմաս առաքեալի աւետարանը գտնուեցաւ, որ ընդունուած չորս Աւետարաններուն մաս չի կազմեր: Շատ զարմանալի է թէ Թովմասի Աւետարանին մէջ Յիսուսի կեանքին կամ ժամանակի պատահարներուն մասին բնաւ տեղեկութիւն չէ գրուած, այլ կան 117


համարներ՝ բոլորն ալ միայն Յիսուսի խօսքերը: Իսկ Նոր Կտակարանի մէջ դրուած չորս աւետարաններու կողքին գտնուող նամակներուն մեծամասնութիւնը Պօղոս գրած է, որ Յիսուսի հետ բնաւ միասին չէր եղած: Ճիշդ է թէ Քրիստոս Դամասկոսի ճամբուն վրայ իրեն յայտնուեցաւ եւ զարթօնք տուաւ եւ ան ալ դարձի եկաւ:

Ինչպէս Գլուխ Դ-ի վերջին մասին մէջ գրած էի, Աստուած բոլորին կը յայտնուի, բայց անձը Ջայն ըստ իր հասկացողութեան կամ հաւատացածին համեմատ կը տեսնէ: Նոյնպէս Աւետարանի պատգամներն ալ ամէն անձ իր հասկացողութեան, հաւատացածին եւ գիտակցութեան մակարդակին համեմատ կը հասկնայ եւ կ'ըմբռնէ: Բոլորին համար իրենց հաւատացածը իրենց համար ճիշդ է եւ համապատասխան իրենց կենցաղին եւ գիտակցութեան մակարդակին:

Բայց պէտք չէ՞ որ մեր գիտակցութեան մակարդակը բարձրացնելու աշխատինք:

«Ողորմեա ինչ Լսրո-աժ,
 ըսր մեժի ողորմո-թեան խոմ,
 ըսր Բազում Գթո-թեան խոմ,
 խաւեա պանօրէնո-թիւնա իմ»
 (Սաղմոս Կ:1)





ՏԵՍԻԼՔԸ

Տեսիլքը անձին էութեան հայելին է,
 Եւ Աստուծոյ մէկ յայտնութիւնն է:
 Մեր ենթագիտակցութեան ձայնն է,
 Ճշմարտութեան յայտնի ցոլացումն է:

Անձը Ճշմարտութեան կ'առաջնորդէ,
 Եւ միտքը կը բանայ եւ կը լուսաւորէ:
 Տիեզերքի հետ մեր կապը կը ցուցնէ,
 Աստուծոյ մեզի հետ ըլլալը կը յայտնէ:

Ան Աստուածագաշտութեան հրաւեր մըն է,
 Անձը որոշ ինքնաքննութեան կը մղէ,
 Եւ անոր գործած սխալները կը յայտնէ:
 Սիրտը անձին արցունքներովը կը մաքրէ:

Անձին ապաշխարութեան մէկ նշանն է,
 Բարձր գիտակցութեան մակարդակն է,
 Թագուն գիտութեան գիտակից կ'ընէ:
 Եւ Աստուծոյ բացառիկ մէկ նուերն է:

Վ.Ս.



ԿՐՕՆՔ ԹԷ ԶԱՐԹՕՆՔ



Աստուած մէկ է եւ մարդն ալ իր պատկերին նման ստեղծեց՝ միայն մէկ տեսակ: Բայց զարմանալիօրէն մարդիկ զանազան սովորութիւններով եւ լեզուներով իրենք զիրենք զանազան ազգերու եւ մշակոյթներու բաժնեցին: Այս բաժանումներուն ամենէն վնասակարը եւ ցաւալին մարդոց զանազան կրօնքներու բաժնուիլն է, որովհետեւ այս արարքով անոնք, գոնէ իրենց միտքերուն մէջ, Աստուած ալ զանազան մասերու բաժնած են:

Հակառակ մարդոց յանուն Աստուծոյ ստեղծած կռիւններուն եւ պատերազմներուն, հակառակութիւններուն եւ ատելութիւններուն, Աստուած դարձեալ «Մէկ» կը մնայ: Աստուծոյ յատկութիւններէն մին ալ իր «ամենուրեք» ըլլալն է:

Հակառակ մարդոց անհամաձայնութեան եւ ընտրած կրօնքներու տարբերութեան, աշխարհի ամէն կողմը՝ «ամենուրեք» միթէ նոյն Աստուծոյն չէ՞ որ կը պաշտենք: Արդեօք միայն անունները չէ՞ն որ կը տարբերին:

Աստուծոյ ուրիշ մէկ յատկութիւնն ալ «Գեղեցկութիւնն» է: Ուրեմն պէտք չէ՞ նաեւ իր պատկերին՝ մարդուն մէջ եւս ջանանք այդ գեղեցկութիւնը տեսնել: Եւ ասիկա պէտք չէ՞ որ առանց ազգ, մշակոյթ, լեզու եւ կրօնք նկատի առնուելու ըլլայ:

Աշխարհի վրայ գոյութիւն ունեցող ամէն մի անհատ, իր հոգիին միջոցաւ, Աստուծոյ սերտօրէն կապուած է, հոգ չէ թէ Ձինք ինչ անունով կոչէ: Բոլորս

ալ իր ստեղծածներն ենք, որով իրեն կը պատկանինք՝ այո՛ նոյնիսկ մեր միջեւ գտնուող «չար»երով եւ «անհաւատ»ներով: Իւրաքանչիւր անհատի տենչանքը պէտք է ըլլայ Աստուած տեսնել եւ ճանչնալ: Աս կարելի կ'ըլլայ երբ մենք, մեր իրարու հանդէպ տածած սէրով այս աշխարհը դրախտի կը վերածենք: Բոլորս ալ կը փափաքինք երջանիկ ըլլալ, վախի թակարդէն ազատիլ, իր շնորհները ստանալ: Ասիկա միայն իրեն ապաւինելով եւ զինք պաշտելով կարելի կ'ըլլայ: Պաշտել անկարելի է, եթէ Ձինք չենք սիրեր: Իսկ եթէ Ձինք կը սիրենք, պէտք է այս սէրը ո՛չ խօսքով, այլ գործքով ցոյց տանք: Գործքով ցոյց տալն ալ Անոր ստեղծագործութիւնը, ոչ մասնակի այլ իր ամբողջութեամբը, սիրել է: Ամէն մի անհատ պէտք է իր սիրտը Աստուծոյ նուիրէ, որպէսզի այդ սիրտէն Աստուծոյ սէրը բոլորին հոսի:

Յիսուս որ Մովսիսական կրօնքին կը պատկանէր «գացէք հեթանոսները Մովսիսական կրօնքին դարձուցէք» չըսաւ: Ան «գացէք զանոնք քրիստոնեայ ըրէք» ալ չըսաւ, որովհետեւ ան նոր կրօնք մը չէր քարոզեր: Անոր նպատակը Աստուծմէ հեռացած Մովսիսականութիւնը Աստուծոյ մօտեցնել էր: Անոր նպատակը պարզապէս փրկութեան ճամբան ցոյց տալ էր եւ այդ պատճառով ալ հետեւեալ պատգամը տուաւ:

«Երթա՛յք յաշխարհ ամենայն, եւ քարոզեցէ՛ք զաւետարանն ամենայն արարածոց: որ հաւատա՛յ եւ մկրտի՛ կեցցէ՛, եւ որ ո՛չն հաւատայ՝ դատապարտեսցի՛»: (Մարկոս ԺԶ: 15-16)

«Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս. մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հօր՝ եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյ սրբոյ: Ուսուցէ՛ք նոցա պահե՛լ զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ»: (Մատթէոս ԻԸ:19-20)

Յամայն մարդկութեան ամէն մի անհատին հոգին Աստուծոյ որդին է: Իր կանչը բոլորիս համար է: Ինչո՞ւ կ'անտեսենք այդ կանչը: Աս ի՞նչ խաւարամտութիւն է, որ մեզ թէ՛ խոլ եւ թէ՛ կոյր ըրած է: Ո՛հ սիրելի ազգակիցներս, գիտեմ թէ աշխարհիկ՝ քաղաքական հարցերը, նամանաւանդ հարիւրամեակի առիթով, առաջագոյն նիւթն է որ մեզ կը զբաղեցնէ, բայց պէտք չէ մոռնանք, որ Աստուծոյ սէրը բոլոր դժուարութիւնները կը լուծէ: Զարթօնքի ժամը հասած է: (Կարդալ Մատթէոս Ե: 38-48)

Յարմար կը նկատեմ գրութիւնս վերջացնել յօդուածով մը՝ Ս. Նազարեանցի գրութիւնը հրատարակուած Մոսկուա, «Հիւսիսափայլ օրագիր»ին մէջ 1864ին¹: Վերջաբանիս այս երկրորդ մասի խորագրին «Կրօնք թէ Զարթօնք» երկու բառերը ինք ալ մատնանշած է: Վերեւի խորագրին «Կրօնք»ը ինք կոչած է «արտաքին կրօն», իսկ «Զարթօնք»ը՝ «Յիսուս Քրիստոսի կրօնը»:

«ԿՐՕՆԸ ԵՒ ԵԿԵՂԵՅԻՆ»

«Մեսիան իւր գործը աշխարհի վերայ լցուցել էր: Մի նոր, քաջութեան հոգի ստանալով զօրութեամբ Հոգւոյն սրբոյ, որ Հոգեգալստի օրին թափուել էր աշակերտների վերայ, սոքա դուրս գնացին ամենայն աշխարհ եւ քարոզեցին ազգերին խաչելեալը եւ Աւետարանը, կամ ուրախաբեր լուրը Աստուծոյ արքայութեան մասին աշխարհի վերայ: Այնուհետեւ հաւատացեալ Հրէայք եւ հեթանոսք, շատ անգամ ծանր հալածանքի տակ, դարձան դէպ ի Տէրը եւ նորա ուսումը: Քաղաքներում եւ գիւղերում յառաջացան փոքրիկ քրիստոնէական հասարակութիւնք, որ լցուցանում էին իւրեանց աստուածաշտութիւնքը եւ դոցա

մէջ հետեւումէին Փրկչի նախկին բարեկամներինց եւ խոստովանողներինց գրած ծէսերին եւ արարողութիւններին: Այսպէս կազմուեցաւ այն սուրբ հասարակութիւնը հաւատացեալներին եւ երկիւղածներին, որ յետոյ օրէ օր աւելի ընդարձակուեցաւ, իւր աստուածպատական կարգադրութիւնքը բազմացրեց եւ միաբան էր նոցա հետ, որ տակաւին խոտորվումէին նորանից - այն հասարակութիւնը որ յետոյ աշխարհի մէջ յայտնի դարձաւ քրիստոնէական եկեղեցու անուամբ:

Ուսմունքը որ ինչն Յիսուսը տուել էր, շատ պարզ էին եղած: Նոցա երանացուցիչ ճշմարտութիւնը հասկանալի էր եւ անուս մարդուն, այո՛ եւ երեխաներին: Այդ պատճառով եւս նոքա շուտով տարածուեցան աշխարհի վերայ եւ չէին ուսումնական ու խորամանկ քննութիւնների եւ մեկնութիւնների նիւթ: Յիսուսը ցոյց էր տուել մահկանացուներին միակ կենդանի Աստուածը, տիեզերքի տէրը, իբրեւ նոցա հայրը: Նա ցոյց էր տուել նոցա, յաւիտենական կեանքը իբրեւ նոցա նպատակ: Նոցա սրբագործութիւնը, նոցա մեղքերի եւ ախտերի յաղթահարութեան ճանապարհը, ձգտողութիւնը դէպ ի կատարելութիւն մարդասիրական գործերով եւ խորհուրդներով, իբրեւ այն կոչումը, որ նոքա կոչուած էին: Նորա կեանքը պիտի դառնար նոցա կեանքի օրինակ, եւ միաւորութիւն Աստուծոյ հետ նոցա ամենավերին բարին: Սորա հակառակ քարոզել էր նա, որ մի մոլորական առ ի ցոյց բարեգործութիւն, մի լոկ պահպանութիւն արտաքին ծէսերի եւ եկեղեցական արարո-

ղուլթիւնների, կարող չէ տանել դէպ ի յաւիտենական երանութիւնը: Այս պատճառով խօսեց նա իւր աշակերտ Յովհաննու բերանով. Օրէնքը Մովսէսի ձեռով տրուեցան, շնորհքը եւ ճշմարտութիւնը Յիսուսի Քրիստոսի ձեռով եղան եւ նորա առատութենից ասել ենք մեք շնորհք փոխանակ շնորհքի:

Ուրեմն ոչ թէ արարողութիւնների արտաքինքն են նոր կրօնը, որ Մեսիան բերել է եւ պատուիրել է մարդկային ազգին, այլ ներքին, աստուածահաճոյ ուղղագործութիւնը սրտի: Այդ արտաքինքը (ղուրսի բաները) որպէս մովսիսական օրէնքը, են մարդու գործ, բայց շնորհքը եւ ճշմարտութիւնը, սուրբը եւ կատարեալը, որ պիտի բնակէ մարդկային սրտի մէջ, է աստուածեղէնը:

Այս պատճառով, առաջին քրիստոնէական հասարակութիւնքը ունէին եւ միայն սակաւաթիւ եկեղեցական արարողութիւնք, եւ սոյն իսկ սակաւաթիւ արարողութիւնքը շատ պարզ էին: Սկզբումը տակաւին մի քանիքը հրէական եկեղեցու արարողութիւններից յետ պահուեցան, եւ նոյն իսկ առաքեալք ընդդէմ չէին այն բանին, որ, զոր օրինակ, այս եւ այն հաւատացեալ Հրէայք իւրեանց սովորաբար պահած պահքի վերայ հաստատ կային կամ թէ այս եւ այն կերակուրքը պիղծ էին համարում: Պատճառ, այս բոլորս համարվումէր երկրորդական բան. բայց ուղղագործութիւն սրտի, հաւատ եւ վստահութիւն դէպ ի Մեսիան, էր նոցա համար ամենից գլխաւորը: Միակ, նոյն իսկ Քրիստոսի ձեռով սահմանադրած հանդիսաւոր արա-

րողութիւնքը էին Մկրտութիւնը չափահասներէ, որ խոստովանում էին Յիսուսի Քրիստոսի ուսումը եւ վերջին ընթրիքը կամ Հաղորդութիւնը: Ծուտով դոցա վերայ յաւելացուցին եւ սիրոյ սեղանքը (Ազապէ ասուածք յունական բառով) ուր հարուստք եւ աղքատք եղբայրական հաւասարութեամբ՝ միմեանց հետ վայելում էին ինչ որ ունէին:

Առաջին ուսուցիչքը քրիստոնէական եկեղեցու տակաւին չէին միմիանցից բաժանուած, ինչպէս այժմ, թէ իւրեանց պաշտօնակատարութեան մէջ եւ թէ իւրեանց անուններով: Նոքա ասվում էին հասարակութիւններէ մէջ Երիցանէ (աւելի հասակաւորք), որովհետեւ այդպիսիք էին նոքա, կամ թէ Երիցանէ, որ կամի ասել վերակացուք, վերատեսուչք: Նոքա չունէին այնպիսի իշխանութիւնք եւ ոչ այնպիսի ճոխ եկամուտք, որպէս յետոյ ժամանակներում: Նոքա էին օրինակ երկիւղած խոնարհութեան եւ այդ բանի մէջ հետեւում էին առաքեալներին, որ չէին ոչինչ առանձին հասարակութեան առաջնորդք, այլ տեղից տեղ ճանապարհորդում էին, իւրեանց ձեռքի աշխատութեամբ ապրում էին եւ մարդասիրական տուրքեր ընդունում էին հարուստ քրիստոնէաներից:

Բայց երբ որ առ փոքր փոքր բազմացաւ հաւատացեալներէ թիւը մի հասարակութեան մէջ եւ քրիստոնէական հասարակութիւնների թիւը աշխարհի մէջ եւ քրիստոնէական հասարակութիւնների թիւը աշխարհներէ մէջ, այնուհետեւ բազմացան եւ ուսուցիչքը եւ վերակացուքը, զանազան հասարա-

կուլթիւնների վերայ կարգուեցան վերակացուք, գործերը աւելի հեշտ հոգալու, նոցա շատութիւնը մասն մասն բաժանելու եւ առհասարակ աւելի լաւ կարգ պահպանելու համար: Սկսան, հրէական սովորութեանը հետեւելով, ուսուցիչքը եւ քահանայքը համարել աշխարհականներից որոշուած մի դասակարգ. նուիրել նորանց ծէսերով, ինչպէս Հրէից ու հեթանոսների մէջ սովորուածիւն էր. տուեցին նոցա առանձին իշխանութիւնք հասարակութենից արտաքսելու յանցաւորքը կամ թէ ապաշխարանք դնելու նոցա վերայ: Ներս բերեցին հիւանդների եւ մեռանողների օժոմը. նուիրական իւղը (մեռոնը), Դրոշմը եւ նմանապիսի բաներ: Արարողութիւնների թիւը, որպէս եւ նոցա փառահեղութիւնը եւ քահանաների իշխանութիւնը քրիստոնէական եկեղեցու մէջ աճեցաւ մանաւանդ, երբ որ Յիսուսի Քրիստոսի կրօնը այլ եւս հալածվում չէր, եւ նոյն իսկ կայսրներ եւ թագաւորներ սկսան խոստովանել նորան: Այնուհետեւ շատացան եւ տօները, մինչ սկզբում կիւրակէն միայն սահմանուած էր մանաւանդ Աստուծոյ պաշտօնի համար: Զատիկը եւ Հոգեգալուստը, երեւումէ, թէ եղած են առաջին տօնքը քրիստոնէական եկեղեցու. բայց շուտով սկսան տօնել եւ Յիսուսի Քրիստոսի ծննդեան տօնը եւ դորա հետ միասին տարեմուտքը:

Այսպէս Քրիստոս եղած է հիմնադիրը մեր հաւատի, բայց ոչ բոլոր, յետոյ յառաջացած եկեղեցական կարգերի, օրէնքների, պատուէրների եւ ուսմունքի: Այս

յետինքս յառաջացան, ինչպէս դոքա, միտ
դնելով հանգամանքին, հարկաւոր կամ թէ
հանգամանքից յաջողուած էին: Աստուածե-
ղէն ծագումն ունի Հաւատը, բայց մարդկե-
ղէն ծագմամբ յառաջացած են զանազան
եկեղեցիների կարգերը: Անփոփոխ մնացել է
ուսումը Յիսուսի Քրիստոսի: Նա Առաքեալ-
ների ձեռով գրաւորապէս աւանդուած է մեզ,
եւ Փրկչի խօսքերը գրուած են Աւետարա-
նիչների կամ թէ Քրիստոսի վարքագիրների
ձեռով: Բայց եկեղեցին դարերի ընթացքում
չատ անգամ փոխել է իւր կերպարանքը, իւր
կարգը եւ վարդապետական սկզբունքը:
Քրիստոնեայ ենք մեք ամենեքեանքս, որ
հաւատումենք Քրիստոս, նորա անունով
մկրտուած ենք եւ յոյս ունինք զալ առ
Աստուած, ապրելով նորա ուսմանը համա-
ձայն, առնելով կամքը մեր երկնաւոր Հօր
երկնքում, որ մեզ յայտնել է Յիսուս
Քրիստոս: Բայց ոչ ամենայն քրիստոնեայք
պատկանումեն մի եւ նոյն եկեղեցու. որով-
հետեւ նորա մէջ յառաջացել են բաժիններ եւ
հերձուածք, որ միմեանցից խոտորվումեն
աստուածպաշտութեան ձեւերով, արարողու-
թեամբք եւ զանազամ միւս կարծիքներով:
Յաւելի է ասել, որ այդպիսի խոտորմունք
երեւեցան արդէն Առաքեալների օրերում,
երբ ոմանք կամէին լինել պաւղոսեան, միւս-
երը ապաւղոսեան, եւ այլ միւսերը կեփաս-
եան (պետրոսեան): Դորա ընդդէմ ծանրու-
թեամբ վեր կացաւ Պաւղոս առաքեալը
ասելով. իսկ արդ ո՞վ է Պաւղոսը, կամ ո՞վ է
Ապաւղոսը. պաշտօնեայք են նոքա որոց

ձեռով Դուք դարձել էք հաւատացեալք: Ես տնկեցի, Ապաւղոսը ջուր տուեց, բայց Աստուած աճեցրեց. մի այլ հիմք ոչ ոք կարող չէ դնել, քան թէ դրածն է, որ է Յիսուս Քրիստոս: (1. Կորնթ. 3, 5-11.)- Բայց մարդիկ մնում են մարդիկ. պատահականի վերայ շատ անգամ մոռացուեցաւ հարկաւորը, զգեստի վերայ շատ անգամ մարմինը, եկեղեցու վերայ սուրբ հաւատը եւ հաւատի սուրբ պտուղը, Սէրը: Մինչեւ այժմ իսկ է միայն մի քրիստոնէական կրօն, բայց կան շատ, քրիստոնեայ եկեղեցիք: Բայց բոլորեքեան, ինչ եկեղեցում եւս աղօթէին դոքա, եթէ խոստովանում են Յիսուս Քրիստոսը ոչ լոկ շրթամբք, այլեւ սրտով, այսինքն, եթէ նոքա Քրիստոսի հոգով ընթանում են եւ գործում են, քրիստոնեայ են: Եւ արդէն Պետրոս առաքեալը ասել է թէ հրեաների եւ թէ հեթանոսների մասին. Ես ճշմարտութեամբ վերահասու եմ եղած, որ ոչինչ ակնառութիւն (երեսպաշտութիւն) չկայ Աստուծոյ առաջեւ. այլ ամենայն ազգերի մէջ ով որ երկնչում է նորանից եւ գործում է արդարութիւն, ընդունելի է նորան: (Գործք Առաքելոց. 10, 34, 35.) Եւ մեզ համարձակ է հաւատալ, որ Աստուած ակնառու չէ անձին, նոցա մէջ, որ ամենեքեան մկրտուած են Քրիստոսի անունով, այլ իւրաքանչիւր եկեղեցում ով որ նորանից երկնչում է եւ գործում է արդարութիւն, նա է նորա ընդունելի:

Ուրեմն մի էական տարբերութիւն կայ կրօնի կամ քրիստոսեան ուսման եւ քրիստոսեան հաւատի, մի կողմից, եւ եկեղեցու

մէջ մ'իւս կողմից: Կրօնը ներքին բանն է, մեր սրտի յարաբերութիւնը առ Աստուած. եկեղեցին է արտաքինը, համաձայնութիւնը, հաղորդակցութիւնը համամիտ քրիստոնեաների ընդունելու եւ գործադրելու հաւատը եւ պաշտելու Աստուած ամենայն յարաբերութեամբք որ դա ունէր դէպ ի մարդկային ազգը երկրիս վերայ: Կրօնը է անտեսանելին, իսկ եկեղեցին է դորա երկրաւոր զգեստը:

Բայց, թէպէտեւ Յիսուսի Քրիստոսի կրօնը աւելի կարեւոր է աշխարհի ու յաւիտենական կեանքի համար, քան թէ եկեղեցին իւր սահմանադրութեամբք եւ արարողութեամբք կամ թէ դաւանաբանութեամբք. այնու ամենայնիւ եկեղեցին մնում է քրիստոնէի համար մի արժանամեծար հիմնարկութիւն, մի հարկաւորութիւն: Ինչպէս մարդս բաղկանում է հոգուց եւ մարմնից եւ նա կարօտ է նիւթականին իբրեւ գործի կամ նեցուկ հոգու համար. սոյնպէս կրօն ու եկեղեցի բաղկացնում են մի ամբողջութիւն, եւ շատ միմեանց հետ կապակից բաներ, որ արդարեւ առանց վտանգի կարելի չէ բաժանել մինը մ'իւսից: Եթէ կրօնը գրաւում է իմ հոգին, ցոյց տալով թէ ինչպէս դա պիտի բարձրանար դէպ ի յաւիտենականը եւ աստուածեղենը, եւ պիտի օգնական եւ ձեռնտու լինէր հոգեղէնին իմ մէջ:

Մի մոլորութիւն է, եթէ քրիստոնեայք, ինչ հաւատական բաժնից եւս լինէին, կամ էին ասել. ինձ պիտոյ չէ եկեղեցի. ինձ պիտոյ չեն նորա կարգերը, պատուէրները եւ արարողութիւնքը: Ես առանց դոցա եւս կարող եմ բարի

քրիստոնեայ լինել եւ երանութիւն գտանել:

Բա՛րեկամ, ես կամէի ասել այդպիսուն, բոլոր միլիոնաւոր մարդերից, որ ապրումեն աշխարհի վերայ եւ ապրել են հազարաւոր տարիներ յառաջ, դո՞ւ ես այն միակ մահկանացուն, որ իւր սիրտը դէպ ի վեր ուղղելու համար, կարօտ չէր ոչինչ զգալի տպաւորութեան եւ օգնականութեան: Դո՞ւ ես այն միակ մարդը, որոյ յիշողութիւնը կարօտ չէր ոչինչ ուշաբերութեան եւ զգաստացուման: Դո՞ւ ես այն մի հատ մարդը, որ ամենայն օր եւ ամենայն ժամ հաւասարապէս յօժարամիտ էր դէպ ի երկիւղած խորհուրդներ, դէպ ի յաղթահարութիւն իւր անձին, երբ որ զարթնումէին ախտերը, դէպ ի կատարելագործութիւն ամենայն լաւ բանի մէջ, երբ որ հազարաւոր փոքրիկ փորձանք դէպ ի չարը պաշարումեն եւ հրապուրումեն քեզ: - Ոչ, ոչ: Այդ քո հպարտութիւնը ապացուցանումէ արդէն, որ դու ոչ այն բարին եւ ամուրն ես, որ դու երեւակայումես քեզ թէ էիր, եւ ոչ իսկ կարող ես առանց արտաքին ազդեցութիւնների քո սիրտը պահել այն վերուղղութեան մէջ, որ դու ինքդ քեզանից պահանջումես: Հոգին յօժար է, բայց մարմինը տկար:

Կրօնը եւ եկեղեցին կանգնած են միաւորուած, ներքին մարդը ազնուացնելու համար: Ոչ թէ եկեղեցին է պարզեւում երանութիւն, այլ սուրբ, պողաբեր հաւատը. բայց եկեղեցին է հաւատի զաւազանը եւ նեցուկը այս երկրաւոր աշխարհի մէջ:

Եւ Յիսուս Քրիստոսը, երբ որ այս սուրբ

հաւատը տալիս էր աշխարհին, շատ լաւ գիտէր այս բանը: Նա տեղեակ էր մարդկային ազգի տկարութիւններին եւ թէ այո՛ նոյն իսկ շատ իմաստունին ժողովուրդի մէջ հարկաւոր էին այս եւ այն տեսանելի նկարագիրքը անտեսանելուն, այս եւ այն յիշեցուցիչ նշանակները եւ զարթուցիչ հնարները: Ո՞չ ապաքէն այս խորհուրդով նա ինքն կարգել է մկրտութիւնը, այս արտաքին նշանակաւոր գործողութիւնը նոցա համար, որ կամենում են նուիրել իւրեանց անձը նորա ուսման խոստովանութեանը, նորա առաքինի, մարդկութեանը երանութիւն պարգեւող վարքի հետեւողութեանը: Դոքա, ինչպէս որ ջուրը արտաքուստ (դուրսից) մաքրում է մկրտութեան մէջ, պիտի վկայեն, որ նորա խօսքով իւրեանց սիրտը կամ էին մաքրել ամենայն մեղաւոր ցանկութիւնների ապականութենից: Այս ներքին սրբագործութիւնը էր էականը, արտաքին լուսցումը էր մի նշանաւոր վկայութիւն, մի արտաքին նուիրանք խոստովանողների հասարակութեան մէջ, բայց ոչ արդէն նոյն իսկ հնազանդութիւնը եւ լուսաւորութիւնը սրտի:

Ո՛րպիսի քնքուշ սիրով Յիսուս Քրիստոսը սիրել է իւր աշակերտները, ո՛րպիսի քնքուշ սիրով սիրուած է նա իւր աշակերտներից դարձեալ: Արդարեւ նա գիտէր նոցա սիրտերը, որ ինքը դաստիարակել էր. նա գիտէր արդա՛րեւ նոցա հոգին: Այնու ամենայնիւ նա երբէք աւելորդ չհամարեց տալ նոցա եւ զգալի օգնական հնարներ, որպէս զի նոքա, երբ որ ինքը այլ եւս լինելու

չէր նոցա մէջ, յաճախ միտ բերէին նորան, յիշէին յաճախ նորա ուսմունքը եւ ինքեանք իւրեանց մէջ, որպէս եւ բոլոր միւսերը, եղբայրօրէն իբրեւ նորա հաւատարիմ բարեկամք եւ մասնակիցք Աստուծոյ արքայութեան, ճանաչէին իւրեանց անձը: Այդ պատճառով ահա սահմանադրեց նա սուրբ ընթրիքը (սուրբ երեկոյեան սեղանը) եւ հրամայեց Աշակերտներին պահպանել դորան: Այս հացը իմ մարմինս է, այս գինին իմ արիւնս է, խօսեց նա: Դուք ճաշակելով դորան, խոստովանեցէք, որ դուք ամենեւին մի էք իմ հետ, որ ես Ձեր մէջ եմ, որ դուք իմ հետ ամենամօտ կերպով հաղորդակից էք դէպ ի Աստուած, հայրն մեր:

Մկրտութեամբ եւ սուրբ ընթրիքով միանգամայն հիմնուած էր տեսանելի եկեղեցին, մի ցոլացումն որով ամենասուրբը պատկերացել է երկրաւորի մէջ:

Եթէ յետոյ եւ այլ միւս ծէսք եւ արարողութիւնք, պատուէրք եւ գործողութիւնք յաւելացան, միտ զնելով մարդերի եւ հանգամանքի որպիսութեանը եւ պահանջողութեանը. սակայն այդ բոլորը ոչինչ այլ խորհուրդ չունին, քան թէ յաջողեցնելու սրտի սրբագործութիւնը Յիսուսով Քրիստոսով. դոքա բոլորեքեան իւրեանց խորին հնութեամբ դարձել են պատուելի եւ մեծարելի: Եթէ յետոյ ժամանակում եւ ուսուցիչներ թիւը, նորա անուանակոչութիւնքը, նոցա պաշտօնքը, նոցա իշխանութիւնը, նոյն իսկ առաւելութիւնը մինի միւսից, աստիճանով, բազմացան. բայց դա հարկաւորապէս

պիտի լինէր, երբ որ քրիստոնէական հասարակութիւնների թիւը աւելի մեծացաւ. դա պիտի լինէր, ամեն մի մասնաւորի ծախքը, կարգը եւ կատարելութիւնը իւր գործի մէջ յառաջ տանելու: Քանի որ մի փոքրաթիւ գերդաստան ապրում է միասին, հարկաւոր չէ նորա վերայ թագաւոր. տանուտէրը միայն կարող էր կառավարել ամենայն բան, որ պատկանում էր արտաքին սաստին եւ կարգին: Բայց երբ որ շատ գերդաստաններ, երբ ամբողջ ազգեր մտանում են մօտ յարակցութիւն միմիանց հետ, այնուհետեւ գործերի հետ միասին պիտի բազմանան եւ առաջնորդները եւ որոշ որոշ մեծաւորները վերայ - եւ որ դոքա ամենեքեան հաւասար կերպով ընթանային եւ իւրեանց պարտականութիւնքը լցուցանէին - պիտի կարգուէին եւս աւելի բարձր առաջնորդներ: Բայց թէ Առաջնորդներին, իբրեւ ոտքի վերայ եղած օրէնքի գործադրողներին, իբրեւ հասարակաց կամքի ծանուցարարներին պիտի ցուցանուէր պատիւ եւ մեծարանք - այդ դրած է իրերի բնական կարգի մէջ: Վերջապէս որ մի աստիճանակարգ եկեղեցու զանազան պաշտօնեաների մէջ սահմանուած է, ինչպէս ազգերի աշխարհական կեանքի մէջ սովոր է լինել, այդ անհրաժարելիէր: Թող այդ ասուի մի աշխարհական բան. բայց նոյն ինքն եկեղեցին է երկրաւոր կերպարանը կրօնի, եւ մանաւանդ մարդկային բնութեան երկրաւոր պիտոյքի, եւ այդպէս միայն նորա անմահ հոգու համար ներկայ է:

Թէպէտ եւ քրիստոնէական եկեղեցու

աւելի յետագայ օրերում խոտորուած են առաջին ժամանակների պարզութենից. բայց մի՞թէ նոյն իսկ մարդիկ առ հասարակ չեն կորուսել շատ բան իւրեանց առաջին պարզութենից: Ո՞չ ապաքէն բազմացել են ամենայն պիտոյքը, կատարելագործած են եւ նոր ուղղութիւնք են ստացել բոլոր ճարտարութիւնքը, գիւտերը եւ քաղաքական որպիսութիւնքը: Արդեօք եկեղեցին, որ մարդո՛ւս համար է, չպիտի՞ շատ կամ սակաւ ստանայ իւր ժամանակի կերպարանքը, որ ներգործէ մարդու վերայ, որ, իբրեւ զի, ամենայն հանգամանքի մէջ ազգակից եւ մերձաւոր մնայ նորան: Թո՛ղ ճշմարիտ լինի, որ սեղանի սպասաւորքը շատ անգամ, այլանդակուած ու վայրենացած ժամանակներում, մոռացել են իւրեանց սեփական կոչումը եւ արժանաւորութիւնը. որ նոքա ծառայել են իւրեանց ախտերին, կամեցել են յագուրդ տալ իւրեանց չափազանց փառասիրութեանը, պատուասիրութեանը եւ գահասիրութեանը, որպէս եւ դէպ ի չարն են գործ դրել ժողովուրդի պատիւ ու մեծարանքը. բայց ինչ որ ինքն ըստ ինքեան վատ ու դատապարտելի է, կարող չէր ոտքի վերայ մնալ. դա կործանուեցաւ բոլորովին կամ թէ ըստ մասին: Ամենայն անարժան բան եւ յետոյ ոտքի վերայ մնալու չէ. դա եւ յետոյ կրկործանուի, երբ որ մարդերի մեծագոյն մասը կը զօրանայ մտքով եւ վերահասու կը լինի դորան, որ կարողանայ արհամարհել դորան: Բայց ինչ որ մեղաւոր մարդիկ մեղանչել են, կարելի չէ եկեղեցու վերայ

դնել: Նորա խորհուրդը մնում է սուրբ եւ նորա հնարները անմեղ: Ո՞չ ապաքէն հրէական եկեղեցին խոտորուած էր իւր սկզբնական պարզութենից եւ Երուսաղէմի տաճարը նորա սպասաւորների ձեռով շատ ու շատ պղծուած: Այնու ամենայնիւ Քրիստոս իւր աշակերտներով յաճախում էր դէպ ի այդ տաճարը: Նա աղօթում էր այդ տեղ, նա ուսուցանում էր այդ տեղ: Նա տօնում էր տօնական օրերը միւսերի հետ, ինչպէս մովսիսական օրէնքը պատուիրել էր դորանց: Նա չկամ էր միանգամ ներս բերած եկեղեցական կարգերը շփոթուած տեսանել եւ ոչ իսկ ինքը լուծանել դորանց: Նա գիտէր մարդերի առաւել մեծ մասը, գիտէր, որ դոքա նիւթականով միայն կարող էին առաջնորդուիլ դէպ ի իմանալին, արտաքին սաստով դէպ ի ներքին կարգը եւ եկեղեցու ձեռնածութեամբ դէպ ի կրօնասիրութիւն:

Բայց միւս կողմից երբէք հարկաւոր չէ անտես առնել այն մեծակշիռ տարբերութիւնը կրօնի եւ եկեղեցու մէջ. մեզ արժան չէ մոռանալ, որ Յիսուսի Քրիստոսի կրօնը գլխաւոր բանն է: Օրէնքը տուած է Մովսէսի ձեռով, բայց շնորհք եւ ճշմարտութիւն Յիսուսի Քրիստոսի ձեռով է եղած: Ինչ որ Յիսուսի եւ նորա աշակերտների ժամանակում Տիրոջ շատ խոստովանողների համար էր տակաւին մովսիսական օրէնքը, այդ բանը այս եւ այն մտքով դարձել է մեր համար եկեղեցին: Եւ նա սահմանադրել է տօնի օրեր, զոհեր, հանդիսաւորութիւնք, սուրբ գործողութիւնք եւ աստուածպաշտական արարող

ղուծիւնք: Բայց սոցա մէջ չէ բովանդակուած նոյն ինքը կրօնը: Եւ սպանողք խաչակնքումեն իւրեանց երեսը, եւ պոռնիկներ երթումեն դէպ ի Տիրոջ սեղանը: Եւ գողեր դնումեն իւրեանց նուէրքը սեղանի վերայ, եւ խաբեբայ վաշխառուք ձգումեն իւրեանց լուման աղքատների գանձանակի մէջ: Եւ կեղծաւորներ երթումեն լսելու Աստուծոյ բանը, եւ ժամերգութիւնքը, եւ պատուամոլներ, ազահներ եւ կռուասէրներ խոնարհեցնումեն իւրեանց ծունրը աղօթելով տաճարի մէջ: Մի՞թէ դոքա, ըստ որում ճշգրութեամբ լցուցանումեն բոլոր եկեղեցական հրամանները, աղօթքները անգիր գիտեն, յոյս ունին Քրիստոսի փրկագործութեան կամ թէ սուրբերի բարեխօսութեան վերայ, հաւատումեն քաւարան, կամ թէ շնորհի ընտրութիւն, ուխտ են գնում, կամ թէ եկեղեցիներում իւրեանց համար աղօթել են տալիս - մի՞թէ դոքա իւրեանց բոլոր արատներով Յիսուսի Քրիստոսի հետեւողք էին, կամ թէ Աստուծոյ արքայութեան մասնակիցք: - Ո՛վ կը համարձակուէր պնդել մի այդպիսի զարհուրելի բան:

Բոլոր պահեցողութիւնը եկեղեցական կարգերի եւ սուրբ արարողութիւնների, այն առ ի ցոյց բարեգործութիւնը, որ կարծումէ թէ աղօթքով, պահքով, եկեղեցական խորհուրդների լցուցմամբ եւ այդպիսի բաներով կարող էր աւարտել իւր քրիստոնէական պարտականութիւնը, մի ունայն եւ անօգուտ բան է մեր երանութեան համար, եթէ դա չէ զարդուցանում մեր մէջ մի աստուածեղէն,

մարդասիրական, դէպ ի ամենայն բարի եւ երանաւէտ բաներ ձգտող հոգի եւ սիրտ: Վասն զի աստուածսիրութիւն եւ մարդասիրութիւն է հաւատի պտուղը: «Դորանով ամենայն մարդ կը ճանաչէ Ձեզ», ասել է ինքը Յիսուսը, «որ Դուք իմ աշակերտ էք, եթէ Դուք կը սիրէք միմեանց: Բայց Դուք պիտի սիրէք Ձեր ընկերը իբրեւ Ձեր անձը: Ոչ նոքա, որ ասումեն, Տէր, Տէր, կը մտանեն իմ արքայութեան մէջ, այլ նոքա որ լցուցանումեն կամքը իմ հօրս երկնքում: Նոցա պտուղներից կը ճանաչէք նորանց: Հաւատը, որ չունի գործեր, մեռած է»: Ի՞նչ օգուտ, սիրելի եղբայրներ, եթէ մինը ասէր, թէ ունի հաւատք, բայց գործեր չունի: Մի՞թէ հաւատը միայն կարող է ապրեցնել: (Յակովբ. 2, 14-17)


Եւ եթէ ես մարդերի եւ հրեշտակների լեզուով խօսէի, բայց սէր չունէի, ապա լինելու էի մի պղինձ որ հնչումէ, մի ծնծղայ որ զնկզնկումէ: Եւ եթէ ունենայի մարգարէութեան շնորհ եւ ամենայն ծածուկ բաներին տեղեակ լինէի եւ ունենայի ամենայն հաւատ, այնպէս որ կարող էի սարեր իւրեանց տեղից փոխել, բայց սէր չունենայի, ապա ոչի՛նչ եմ: Եւ եթէ իմ բոլոր գոյքը եւ ստացուածքը բաժանէի աղքատներուն, եւ տայի իմ անձը այրելու, բայց չունենայի սէր, ապա անօգուտ էր ինձ այդ բոլորը (1. Կորնթ. 13. 11-3.): Ուրեմն թո՛ղ եւ մեք ամենեքեանքս ձգտէինք դէպ ի այս գեղեցիկ քրիստոնէական նպատակը:»

Ս. Նազարեանց

1- «Հիւսիսափայլ»ի հրատարակութեան նախաձեռնած է Ստեփանոս Նազարեանց, որ փայլուն հրապարակագիր էր եւ հանդիսացաւ ոչ միայն արեւելահայ աշխարհաբարի մշակման եւ կատարելագործման դրօշակիրը, այլեւ՝ անվեհեր պաշտպանը հայ ժողովուրդին մէջ «հոգեդէն շարժողութիւն» առաջացնելու առաջադրանքին՝ իր հիմնած թերթին գլխաւոր առաքելութիւնը հռչակելով «իւրացնել եւրոպական մշակոյթը եւ զայն տարածել Ասիոյ մէջ, լինել Ասիայի համար մի լուսաւոր ճրագ»:

«Հիւսիսափայլ» թերթի անունին կցուած «Օրագիր ընդհանուր ազգային լուսաւորութեան եւ դաստիարակութեան» վերտառութիւնը լաւագոյնս կը խտացնէ բնաբանը, առաջադրանքն ու առաքելութիւնը Մոսկուայի մէջ հրատարակուած այս ամսաթերթին:

1858էն սկսեալ մինչեւ 1862 անխափան հրատարակուելէ ետք, «Հիւսիսափայլ» երկու տարի լոյս չէ տեսած, 1864ին վերահրատարակուած է եւ այնուհետեւ վերջնականապէս դադրած է:





Ի ԽորոՅ ՄԻՏԻ ԽՕՍԷ ԸՆԴ ԱՍՏԻՐՈՅ



Հայր իմ երկնաւոր, Բնութիւնը ստեղծեցիր Իմաստութեամբ.
Իմաստութեանդ Հայրութեամբ եւ Բնութեանդ մայրութեամբ,
Ծնունդ տուիր աշխարհի Քու Աստուածային յղութեամբ
Ու անձնապէս մարմնացար Դուն Հին մանկական ծնութեամբ:

Դուն պարգեւեցիր մի մանուկին անհատականութիւնն իմ,
Որպէսզի Քու ներկայութեանդ ու շնորհներուդ գիտակցիմ
Ու ծառայեմ յայտնութեանդ օրինակելի կենցաղովս իմ,
Սփռելով ամենուրեք այն լոյսը զետեղուած մէջ Հոգւոյն իմ:

Մանկութեանս օրերուն զիս ինամեցիր մօրս կերպարանքով,
Երբ դեռ տկար էի պաշտպանեցիր զիս սիրալիր Հօրս կերպով:
Իբր դարոցի ուսուցիչներս դաստիարակեցիր զիս սորվեցնելով,
Ուղղեցիր զիս Ս. Խորանիդ, որ ուրախանամ Քեզ ծառայելով:

Ս. Խորանին վրայ Դուն իջար մէջ այդ անապական Ս. Սկիւհին
Ու յիշեցուցիր, Քեզ ճանչնալու նպատակը այս մահացու կեանքին:
Աչք տուիր ինձ, որպէսզի Քեզ տեսնեմ ամենուրեք, բայց փակ էին,
Ականջ տուիր ինձ, որ իմանամ Քու կանչը, բայց կարծես խուլ էին:

Դուն չքեցիր զիս, յաջողութիւն պարգեւեցիր, որ բժիշկ ըլլամ,
Ներկայացար ինձի իբր Հիւանդ, որպէսզի ես գթասիրտ ըլլամ,
Ցոյց տուիր տառապանքն ու մահը, որպէսզի կեանքը գնահատող ըլլամ
Եւ նաեւ գիտնամ առողջութեան արժէքը եւ զայն պղծող չըլլամ:

Գործականսօրէն սորվեցուցիր, թէ այս կեանքը չէ մնայուն ապրելու:
Փորձառութիւնը տուիր Հանգիստելու անձնասէր ու վատ անձերու
Ցոյց տարու Համար վախճանը, եթէ ապրինք առանց Քեզ ապաւինելու:
Փորձեցիր անընդհատ, որպէսզի սորվինք ապրիլ առանց փորձուելու:

Պատշաճ ժամանակին, իբր կինս սիրալիր, ամուսնացար ինձի Հես, Որպեսզի շարունակես Քու գուրգուրանքդ անյապաղ ու յաւէտ Ու սորվեցուցիր այս ծառայիդ զընդունակները նաեւ սիրոյ Հես: Երջանակութեան այս փոքր նմոյշով, Հասկցայ երանութիւնը Քեզ Հես:

Երբ ես խոտորած շատ կապուեցայ Քու այդ պատկերիդ քնքուշիկ, Մտնարով թէ Դուն ես նաեւ այն միւս բոլոր պատկերները գեղեցիկ: Վերցուցիր այդ գրաւիչ պատկերը Քու իմ մերձակայ վայրիկ: Տնայեցիր զիս իմ խորքէն, որպէսզի բացուին ականջք իմ ու աչիկ:

Բայց չքեցիր զիս ճակատագրին՝ մինակ, անտէր ու թափառական, Ընկերներու անտան տակ, շարունակեցիր ինձամբ կարեկցական: Չինայեցիր այս խղճալի ծառայիդ գուրգուրանքդ շարունակական, Որպէսզի գիտնամ, թէ միայն-ու-միայն Դուն ես յաւերժական:

Արթուն եմ ես Հիմա, ու գիտեմ, թէ իմ բոլոր կեանքի ընթացքին, Դուն էիր միայն ինձամոլ եւ պաշտանիչ իմ՝ նետած ամէն մի քայլին: Փորձառութիւններով սորվեցուցիր ինձ նպատակը այս կեանքին, Որպէսզի այլեւս չշուարիմ իմ ճամբաս, մնայեալ կարճ ժամանակին:

Խաւարամտութեանս Հետեւանք էթէ շեղեցայ Քու ցոյց տուած ուղիէն, Խոտորեցայ Աստուածաճանց կենցաղէն ու չքալեցի Քու ճամբէն, Կ'ապաւինիմ Քու սիրոյդ ու կը յուսամ, թէ Քու ողորմութենէն Մասնիկ մ'ալ ինձ բաժին Հանես, որ օգտուիմ Քու ներողամտութենէն:

Երբոր Դուն յարմար նկատես թողուլ այս մարմինը մահկանացու, Պատրաստ եմ մեռնելու ու մոռնալու բոլոր կեանք մը փորձառու: Իսկ էթէ ներես այս յիմարին, որ չգիտցաւ կանուխէն արթննալու, Համարձակութիւնը պիտի ունենամ Հետեւեալը Քեզմէ ինդրելու:

Կ'աղաչեմ եւ կը ինդրեմ, կ'աղօթեմ ու կ'աղերսեմ մի փափաքն իմ, Չփակած աչքերս այս աշխարհի, իրականացուր այս տենջանքն իմ, Տեսնել Քեզ՝ Քու Փառքովն բոլոր, որ է Նշմարտութիւնը Հոգւոյն իմ Եւ արտօնէ, որ Քեզ միշտ պաշտեմ ու միայն Քեզ յակտեսան յիշեմ:

Վ.Ս.




ՀԱՌՈՇՔ ՊԱՏՐԻԱՐԷ ԳԱՂՈՒՍՏԵԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՆՄՈՈՋԱՆԱՂԻ ԽՕՍԵՐԻՆ

Քաշանայութիւնը եկեղեցիին աղօթող բերանն է:

*Քրիստոսի աշակերտի նշանը - Սէրը - երբեք ձեռքէ մի
ձգէք եւ սրտէ մի՛ հանէք:*

*Քրիստոնէական Հասկացողութեամբ իրական մեծութիւնը
ոչ նիւթական Հարստութեան մէջ է, ոչ իսկ՝ մեծամեծ
ձիրքերու մէջ, այլ՝ զանոնք ընկերութեան օգտին ի սպաս
դնելու մէջն է:*

*Եկեղեցին թէ՛ Աստուծոյ տունն է թէ՛ մեր Հոգիներուն,
Հետեաբար սրբազան վայր մըն է: Եկեղեցիներու
նիւթական շէնքերը Հայելիներ են, որոնք կ'արտացոլացնեն
իսկական նկարագիրը ոգեղէն եկեղեցիին, որ մեր
Հաւատացեալ ժողովուրդն է:*



-Թ-

ՅԱԲԵԼՈՒԱԾԱԿԱՆ

*

Ա - ԿՐՕՒԵՐ

Բ - ՋՐՀԱՆ

Գ - ԳԱԽԹ ՍԵ ՊԱՂ ԿԱԹ

Դ - ՊԱՐՏԵՁԷՆ ԱՆՆՈՒԱԾ ԴԱՍԸ

Ե - ՍԵՒ ԿԷՏԸ

Զ - ՄԱՅՐԱ

Է - ԲԱՄԲԱՍԱՆԸ ԵՒ ՄՏԱԾՈՒԿԱՆԵՐ

Ը - ՄԻ ՏՈՐԻՐ

Թ - ԲԱԿԱՆ ՕՐԷՆԸ

Ժ - ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԲՆՈՒԹԻՒՆ



ԿՐՕՆՔԸ

Ապա ծերունի քահանայ մը ըսաւ. «Կրօնքի մասին խօսէ մեզի»:

Ան ըսաւ.

Արդեօք մինչեւ այսօր ուրիշ բանի մասին խօսեցա՞յ:

Բոլոր արարքները եւ ցոլացումները կրօնք չե՞ն:

Ան որ արարք եւ ցոլացում չէ, բայց ձեռքով քար կը կտարէ կամ գործասեղանին կ'աշխատի, Հոգիին մէջ ծնունդ առնող Հրաշալիք մը կամ անակնկալ մըն է:

Ո՛վ կրնայ իր Հաւատքը՝ իր արարքէն կամ իր Համոզումը՝ իր գործէն բաժնել:

Ո՛վ կրնայ իր ժամերը բաժնել եւ ըսել. «Այսքան ժամ Աստուծոյ եւ այսքան ալ ինձի. այս Հոգեկան կեանքիս եւ այս մնացեալը՝ մարմնիս պէտքերուն»:

Բոլոր ժամերդ թեւեր են, որոնք անձէ անձ կը թեւածեն:

* * *

Ան որ իր բարոյականը իբր զգեստ կը Հագնի, աւելի լաւ է որ մերկ պտըտի:

Հովը եւ արեւը իր մարմնին՝ ծակեր պիտի չբանան:

Ան որ բարոյագիտութեամբ իր ընթացքը կը սահմանէ, իր երգող թռչունը վանդակի մէջ բանտարկած կ'ըլլայ:

Ազատ երգը, ձողերէն եւ մետաղեայ թելերէն յառաջ չի գար:

Ան որուն աղօթքը բացուող գոցուող պատուհան մըն է, իր Հոգիին տունը տակաւին չէ այցելած, քանի որ անոր պատուհանները արեւածագէ արեւածագ բաց են:

* * *

Չեր առօրեայ կեանքը, ձեր տաճարը եւ կրօնքն է:

Հոն ձեր ամբողջութեամբ ներս մտէք:

Առէք ձեր հետ արօրը, հնոցը, թախը եւ վին,

Եւ ի վերջոյ այն բոլորը՝ որոնք դուք անհրաժեշտութիւն կամ ուրախութիւն կը նկատէք:

Որովհետեւ իբր ջնտրանք, չէք կրնար ձեր կատարելութեան կատարը բարձրանալ եւ ոչ ալ ձեր անյաջողութեան փոսը իջնել:

Բոլոր մարդիկ ձեզ հետ առէք.

Որովհետեւ պաշտամունքի ընթացքին, անոնց յոյսերէն աւելի բարձր չէք կրնար թռչիլ եւ ոչ ալ համեստ ըլլալով զձեզ, անոնց յուսահատութենէն աւելի խոր կրնաք իջնել:

* * *

Գիտցէ՞ որ Աստուած Հանելուկներ լուծողը չէ:

Նայեցէք ձեր շուրջը եւ պիտի տեսնէք թէ Ան՝ ձեր զաւակներուն հետ կը խաղայ:

Նայեցէք տիեզերքին. ամպերու մէջ Իր քալուածքը, որօտումին մէջ իր տարածուն թեւերը եւ անձրեւին հետ Իր վար իջնելը, ծաղիկներուն մէջէն Իր Ժպիտը եւ դէպի ծառեր բարձրացող Իր ձեռքի շարժումները պիտի տեսնէք:

Խալիլ ձիպլարանի «ՄԱՐԳԱՐԷՆ» գիրքէն առնուած

Հայացուց Գարեգին Արքեպս. Գազանճեան





ՋՐՀԱՆՈՒ

Մարդ մը անապատի մը մեջ իր ճամբան կը կորսնցնէ: Իր քովի անօթին ջուրը արդէն երկու օր առաջ վերջացած, ծարաւ, պապակած եւ ուժաթմափ, այլեւս սպրեւը յոյսը կորսնցուցած, Հեռուէն խորճիթ մը կը տեսնէ: Նախ զայն կրկնէրեւոյթ (mirage) մը կը կարծէ: Ուրիշ ելք մը չունենալով, ճարահատ, իր բոլոր ուժերը կը Հաւաքէ եւ սողալով դէպի այդ խորճիթը կ'երթայ: Որքան խորճիթին կը մօտենայ, այնքան աւելի վստահ կ'ըլլայ, թէ ան պատրանքային չէ, այլ է իրողութիւն: Վերջապէս Հոն ջուր գտնելու մեծ յոյսով, ինքզինք դժուարաւ դուրէն ներս կը նետէ:

Ամիջապէս յայտնի կ'ըլլայ, թէ Հոն բնակող չկայ եւ խորճիթը երկար ժամանակէ ի վեր պարսպ մնացած է: Երբ խորճիթին մէկ անկիւնը ջրՀան մը կը տեսնէ, իր վրայ անՀասկնալի ուժ մը կու գայ: Կը խորՀի թէ պիտի կարենայ գետնի խորքերէն ջուր Հայթայթել: Իր բոլոր ուժերը Հաւաքելով ջրՀանելու կը սկսի, բայց դժբախտաբար ջուր չ'եղեր: Քիչ ետք դարձեալ կը փորձէ, սակայն դարձեալ ապարդիւն: Վերջապէս յուսահատ եւ ուժաթմափ իր վախճանը կը սպասէ: Յանկարծ, աչքին ծայրովը, խորճիթին մէկ անկիւնը, գետինը, որպէսզի մեջի ջուրը չչոփանայ, կափարիչը գոց շիշ մը կը տեսնէ: Աւերորդ է ըսել, թէ կ'ուրախանայ: Շիշը կ'առնէ, կափարիչը կը բանայ եւ երբ իրեն կեանք տալիք այդ ջուրը խմելու պիտի սկսի, Հոն թուղթ մը կը տեսնէ, որուն վրայ ձեռագիրով գրուած է. «այս ջուրով խանձարկէ (prime) ջրՀանը»:

Ինք երկասյրի դժուարութեան մեջ կը մնայ, ինչ ընելը չի գիտեր. ջուրը խմել թէ շիշը ջրՀանին մեջ

պարպե: Իր միտքը Հազարումէկ Հարցումներ կու գան. «արդեօք ջրհանը արուած է՝ կամ ջրհանին խողովակը ծակած է եւ ջուրը դուրս պիտի վազէ՞. արդեօք գեանին տակի ջուրը այլեւ չորցած է՝ եւ անհետացած»: Բայց եթէ տրուած տեղեկութիւնը ճիշդ էր, ինք առատ ջուր կրնար ունենալ: Իսկ եթէ ջուր չեղեր, ինք իր ապրելու վերջին յոյսին իր ձեռքով վերջ տուած պիտի ըլլար:

Վերջապէս, ձեռքերը դողդղալով ջուրը ջրհանին մէջ կը պարպէ եւ դարձեալ ջրհանելու կը սկսի: Այս անգամ ջրհանի խողովակէն պղպջակի ձայներ կու գան եւ զով ջուրը կը սկսի առատօրէն հոսիլ: Մինչեւ որ յագեանայ կը խմէ, նոյնիսկ ինքզինք վերէն վար կը թրջէ: Այլեւս մահուան վախը անհետացած էր: Իր ջուրի անօթն ալ կը լեցնէ: Երբ իր շուրջը քիչ մը աւելի ուշագրութեամբ կը քննէ, սեղանի մը վրայ մատիտ մը եւ քարտէս մը կը տեսնէ, որուն վրայ իր գտնուած տեղը նշուած էր: Ասպետով ինք կը ստուգէ թէ քաղաքակրթութենէ տակաւին բաւական հեռու կը գտնուէր: Ինք շիշը դարձեալ ջուրով կը լեցնէ եւ կափարիչն ալ կը գոցէ: Թուղթին վրայ ալ այդ մատիտով կ'աւելցնէ. «Փորձեցէք պիտի յաջողիք»:

Այս պատմութիւնը, կեանքի պատմութիւնն է: Մեզի շատ կարեւոր դաս մը կը սորվեցնէ: Առատօրէն ստանալէ առաջ նախ պարտ էնք տալ: Ալ աւելի կարեւոր դաս մը եւս. Հաւատքը տալու մէջ մեծ դեր մը ունի: Մարդը չէր գիտեր թէ իր արարքը արդիւնաբեր պիտի ըլլար թէ ոչ, բայց Հակառակ այս վարանումին, իր Հաւատքի զօրութեամբ ընդառաջեց: Ահա՛, ա՛ս է Հաւատքը:

Այս պատմութեան մէջ ջուրը կեանքի բարիքները՝ դրական պատահարները, դրական զօրութիւնը կը ներկայացնէ, այն բոլորը ինչ որ մեզ կ'ուրախացնէ: Անոնք կրնան նիւթական կամ վերացական արժանիքներ ըլլալ

ինչպես դրամ, սեր, ընկերություն, յարգանք, երջանկություն կամ ուրիշ որեւէ բան, որ մեզի համար կարելոր է եւ արժէք մը կը ներկայացնէ:

Չրհանը Աստուածային տիեզերական անխախտելի «ինչ որ ցանես ան կը հսձես» օրէնքը կը ներկայացնէ: Անոր քիչ մը ջուր պէտք է տանք, որպէսզի ան ալ մեզի համար գործել սկսի: Ան մեր տուածէն շատ աւելին կը վերադարձնէ: Այս միջոցառումը հսկայ ծիր մը կը գծէ եւ օր մը, պատահականօրէն, շատ աւելի զօրացած եւ ընդլայնած իր ակը՝ մեզի ետ կը վերադառնայ:

Եթէ լաւ արարք մը գործած ըլլանք, որ ոեւէ ուրիշ անձ մը չի գիտեր, կը կարծենք թէ այդ արարքէն մենք որեւէ արդիւնք մը ձեռք պիտի չձգենք: Ճշմարտութիւնը այն է թէ հոգեւոր գեսնի վրայ վերոյիշեալ օրէնքը շարժման ենթարկած էնք: Ան տեսանելի չէ, բայց ճշմարտութիւն մըն է եւ, աւելի զօրութիւն հաւաքելով, օր մը ետ մեզի պիտի վերադառնայ: Ինչպէս ջրհանի պատմութեան մեջ կարդացինք մարդը երբ ջուրը ջրհանին մեջ լեցուց, չէր գիտեր թէ ինք պիտի վարձատրուէր: Նմանապէս, երբ մենք ալ ողորմութիւն կու տանք եւ գթասիրտ կ'ըլլանք պէտք չէ որեւէ շահ ակնկալենք:

Այս սկզբունքը միայն դրամի համար չէ, այլ ամէն ինչի համար ի զօրու է: Օրինակի համար, եթէ ուրիշներէ յարգուիլ կ'ուզենք, նախ պէտք է մենք առանց խուսափելու ուրիշները յարգենք: Եթէ կ'ուզենք մեր ըրած գործերուն համար գնահատուիլ, մենք ալ պարտ էնք ուրիշներու ըրած գործերը գնահատել: Եթէ մենք ուրիշները իրենց յաջողութիւններուն համար անկեղծօրէն մեծարենք, մենք ալ մեր յաջողութիւններուն համար աւելիովը կը մեծարուինք: Եթէ կ'ուզենք լաւ ու անկեղծ ընկերներ ունենալ, մենք ալ առանց որեւէ փոխադարձ ակնկալութեան պարտ էնք լաւ ընկեր ըլլալ: Երբ մենք չակնկալուած

բարեմաղթովժեան եւ ընկերովժեան հետ դէմ Հանդիման գանք, այդ մեզի մեծ զարմանք եւ հրճուանք պիտի պատճառէ: Եթէ կ'ուզէք որ ուրիշներ մեր մէջ գեղեցկութիւն տեսնեն, մենք ալ պարտ ենք գեղեցկութիւնը ուրիշներու մէջ տեսնել: Եթէ ուշագիւր ըլլանք շատ դիւրութեամբ անձի մը ներքին գեղեցկութիւնը կը կարողանանք տեսնել, որովհետեւ անձը ով որ ալ ըլլայ, որոշ ներքին գեղեցկութիւն մը ունի, ինչ որ կը գերազանցէ ֆիզիքականը: Երբ կը կարողանանք Հիացումով եւ գնահատանքով այդ գեղեցկութիւնը տեսնել, մենք ալ մեր մէջ բարեշրջում մը կը նշմարենք եւ մեր կարգին ճշմարտապէս գեղեցիկ կ'ըլլանք: Պետք չէ մոռնանք թէ այդ գեղեցկութեան ակը մարդու հոգին՝ Քրիստոս ինքն է:


Ընդհանուր առմամբ այն բոլոր բաները որոնց մենք կը բաղձանք, պարտ ենք նախ ուրիշին Համար բաղձալ եւ տալ եւ աս ալ պետք է ըլլայ կամաւոր, առանց վարանումի եւ առանց մեր շահը կամ վնասը Հաշուելու:

«Ինչ որ ցանես, ան կը Հսձես» օրէնքը ամենեւին չի խախտիր եւ չի ձախտողի: Երբ Հոնտո մը կը ցանենք բոլոր ընթացք մը կը զօրաշարժենք, եւ եթէ Հողը պարարտ է մէկ Հոնտը ժամանակի ընթացքին բազում արդիւնս կու տայ: Չենք գիտեր թէ Հոնտը երբ պիտի ծլի ու բոյս մը պիտի ըլլայ, երբ ծաղիկ պիտի տայ ու երբ բերք պիտի տայ, սակայն աս մեզի ընդունելի է: Նոյնն է նաեւ մեր կենցաղով մեր ցանած Հոնտերը, կարելոր եղողը «Հող»ին պարարտ ըլլալն է, բերքը իր ժամանակին կը Հասնի: Հոնտերն ալ պարտ են բարի Հոնտեր ըլլալ:

Մեզի կը մնայ միայն ջրհանը խանձարկելու քաջութիւնը ունենալ:

«Փորձեցէք պիտի յաջողիք»:

Կարդալ նաեւ: (Մատթէոս ԺԳ:4-9)



ԳԱԲԱԹ ՄԸ ՊԱՂ ԿԱԹ

Ամառուան արձակուրդին՝ բժշկութիւն ուսանող երիտասարդ մը իր քաղաքին արուարձանները պտըտելով իր կրթաթոշակը Հոգալու Համար գիրքեր կը ծախէր: Ագարակի մը առջեւ կեցաւ, դրան առջեւ նստող երիտասարդ աղջկան մտնեալով Հարցոց, թէ կը փափաքէ՞ր գիրք մը գնել: Աղջիկը պատասխանեց՝ թէ մայրը որբեւարի էր, եւ դրամ չունէր գիրքեր գնելու: Ասոր վրայ երիտասարդը ինդրեց աղջիկէն, որ գաւաթ մը ջուր բերէր իրեն, որովհետեւ շատ ծարաւ էր: Օրիորդը ըսաւ, որ մառանին մէջ պաղ կաթ ունէին, արդեօք կը փափաքէ՞ր գաւաթ մը պաղ կաթ խմել:

Երիտասարդը գոհացումով խմեց պաղ կաթը, եւ ուզեց արժէքը վճարել, բայց աղջիկը ըսաւ որ մայրը իրեն պատուիրած էր, որ հիւրասէր ըլլար օտարականներուն: Երիտասարդը շնորհակալութիւն յայտնեց ու իր ճամբան շարունակեց:

Անցան տարիներ:

Օր մը կին մը բերուեցաւ Հիւանդանոց, որուն առողջական վիճակը շատ վատ էր, եւ անմիջական գործողութեան կարօտ էր: Եւ լուրջ պարագան յանձնուեցաւ Հիւանդանոցին գլխաւոր վիրաբոյժին: Ան ամենայն բժախնդրութեամբ եւ յաջողութեամբ կատարեց գործողութիւնը: Հիւանդը անձնական սենեակ մը դրուեցաւ, եւ Հիւանդապահուհիներու մասնաւոր ինստիտուտ յանձնուեցաւ:

Անցան շաբաթներ: Առտու մը Հիւանդապահուհին եկաւ, եւ լուր տուաւ տիկնոջ, որ ապաքինումը կատարեալ էր եւ վաղը տուն պիտի երթար: «Շատ ուրախ եմ, բայց

Հիւանդամտոցին Հաշիւը զիս կը մտահոգէ», պատասխանեց կինը: Հիւանդապահուհին ըսաւ, թէ Հաշիւը պատրաստ էր ու պիտի երթար զայն բերեր: Քանի մը վայրկեան ետք, ներս մտաւ ու Հաշիւը յանձնեց կնոջ:

Բայց երբ կինը տեսաւ պահանջուած գումարը՝ վրան մարելիք եկաւ ու սկսաւ դառնօրէն արտասուել: Երբ ինքզինքը Հաւաքեց եւ աչքերը սրբեց, տեսաւ որ Հաշիւին տակը նախադասութիւն մը կար, որ սապէս կ'ըսէր. «Այս Հաշիւը վճարուած է գաւաթ մը պաղ կաթով»: Բժշկական Համալսարանի ուսանողը, Ժամանակի ընթացքին, եղած էր «Դոկտ. Հաուրրա Ս. Քելի»ն եւ իրեն գաւաթ մը պաղ կաթ հրամայնող աղջիկը՝ տարիներ ետք կը ստանար իր հերասիրութեան վարձատրութիւնը:

«Լա-ափէ-ա դո- պահայ ի» 'ի վերայ ջրոց,
պի 'ի Բապան-Թեան ա-ո-րց իոց Գրոցեա
պնա» : (Ժողովողին ԺԼ:1)

«Նետէ՛ Հացդ ջուրերու մակերեսին վրայ, որովհետեւ շատ օրերէն ետք զայն պիտի գտնես»:

«Տո՛ւ-ի է- րացի՛ շափ Բար-ո-ի Թաթաղո-ն
շարժո-ն պէղո-ն՝ րացե՛ն 'ի Գոգա յեր,
նովին շափով որով շափէ-ի՛ շափեացի՛ յեւ» :
(Ղուկաս .9 :38)

«Տուէ՛ք՝ եւ պիտի տրուի ձեզի, լաւ չափով՝ կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի տրուի ձեր գոգը. քանի որ պիտի չափուի ձեցի ա՛յն չափով՝ որով դուք կը չափէք»:





ՊԱՐՏԵՋԷՆ ԱՌՆՈՒՄԾ ԴԱՍԸ

Հետեւեալ գրութիւնը հիւանդներէս միտն զրկած շտրհատորական բացիկին մէջ ներփակուած էր:

ՏԱՆԻՔԻՍ ՎՐԱՅԻ ՊԱՐՏԵՋԸ

Մենք, մեր տան տափակ տանիքին վրայ պարտէզ ունինք: Քսան-եւ-հինգ տարիներէ ի վեր տղաս, կամ աշակերտներէս մին, ամէն ամառ Հոն ինծի Համար ծաղիկ կը սնկեն: Անցեալ ամառ այդ պարտէզը ինծի լաւ դաս մը սորվեցուց: Կը խորհիմ թէ նման դաս մը ուրիշներու ալ կրնայ օգտակար ըլլալ:

Տղաս, ըստ սովորութեան, անցեալ Մայիս ամսուայ վերջատորութեան, անգամ մը եւս ծաղիկներ սնկեց եւ պարտէզս պատրաստեց: Հոն կան տասը մեծ թաղարներ եւ երկու մեկական մէթր երկարութեամբ ծաղկամաններ: Տղաս, ասոնց մէջ զանազան գոյներով շատ գեղեցիկ ծաղիկներ սնկեց: Ամէն առաւօտ պարտէզս կը դիտեմ, ծաղիկներուն գեղեցկութեան կը զմայլիմ եւ ինքզինքս երջանիկ կը զգամ, քանի որ ծաղիկը կը ներկայացնէ

բնութեան բացարձակ գեղեցկութիւնը: Ճիշդ այս պատճառով ալ անձ մը մեծարելու Համար անոր փունջ մը ծաղիկ կու տանք: Ծաղիկը նաեւ սիրոյ արտայայտութիւնն է: Երբ երիտասարդ մը, իր սիրած աղջկան փունջ մը ծաղիկ կու տայ, իր սերն է որ կը յայտարարէ:

Երբ սուրբ ծաղիկները սնկեց, անոնց Հետ ոչ վնասակար խոտեր սնկեց, ոչ ալ ցանեց, բայց ժամանակէ մը ետք անոնք ինքնաբերաբար բուսան: Դժբախտաբար ես զանոնք ժամանակին չխոտատեցի՝ սեղերը չմաքրեցի եւ երեք ամսուայ մէջ խեղճ ծաղիկներս այս խոտերուն մէջ խեղդուեցան: Այ՛ր, պարտեղս կանանչ կ'երեւի, բայց գեղեցկութիւնը փախաւ:

Այս փորձառութիւնը ինձի սորվեցուց, թէ մեր լաւ եւ բարի խորհուրդները կը նմանին գեղեցիկ ծաղիկներուն: Նման խորհուրդներ ունենալու Համար մասնաւոր ջանք պէտք է, բայց անպէտ եւ վատ խորհուրդներ մեր միտքերուն մէջ ինքնաբերաբար, առանց ջանքի կը ծագին: Երբ նման վատ խորհուրդներ ի յայտ գան, պարտ ենք զանոնք անմիջապէս վանել մեր միտքէն, ապա թէ ոչ անոնք շուտով կը բազմանան եւ լաւ ու բարի խորհուրդները կը խափանեն, ինչպէս անպէտ խոտերը կը խափանեն ծաղիկներու գեղեցկութիւնը:

Ուրեմն ուշագիւր ըլլանք մեր խորհուրդներուն եւ երբ վատ եւ ժխտական խորհուրդներ ի յայտ գան զանոնք անմիջապէս վանենք: Միայն այդպիսի Հասկացողութեամբ կարող պիտի ըլլանք դրական, օգտակար, գեղեցիկ, ուժգին եւ լուսաւորիչ խորհուրդներ ունենալ: Այդ ալ մեզի կը պարգեւէ տիպար կենցաղ մը՝ ոսկեայ կենցաղ մը:

Դրական, օգտակար, գեղեցիկ, ուժգին եւ լուսաւորիչ խորհուրդները ծաղիկներն են, իսկ վատ եւ ժխտական խորհուրդները՝ անպէտ խոտերը:

Ժ. Շարտա



ՄԵՒ ԿԷՏՆ

Օր մը ուսուցիչը դասարան կը մտնէ եւ աշակերտներուն կը յայտարարէ թէ անակնկալ քննութեան մը պիտի ենթարկուին: Աշակերտները մտաւոյ քննութեան կը սպասեն:

Ուսուցիչը ամէն աշակերտի սեղանին վրայ քննութեան թուղթը հակադարձ կը դնէ: Երբ բոլոր աշակերտները իրենց թուղթերը կը ստանան, զանոնք դարձսել կը հրահանուի:

Աշակերտները զարմանքով կը նշմարեն թէ թուղթին վրայ որեւէ հարցում չկար, միայն թուղթին մէջտեղը սեւ կէտ մը կար:

Ուսուցիչը իրենց զարմանքի արտայայտութիւնը տեսնելով կը շարունակէ ըսելով. «Քնչ որ ձեր առջեւ կը տեսնեք, անոր մասին շարադրութիւն մը գրեցէք»:

Աշակերտները շուարած այս անհասկնալի ձեւնարկին կը սկսին:

Քննութեան վերջաւորութեան, ուսուցիչը բոլոր շարադրութիւնները կը հաւաքէ եւ ամէն մէկը բոլոր աշակերտներուն ներկայութեան բարձրաձայն կարդալ կը սկսի:

Ուսանց բացատրութեան, բոլոր աշակերտները թուղթին մէջտեղը գտնուող սեւ կէտը բացատրող տեղեկութիւններու մասին գրած էին:

Երբ ուսուցիչը բոլոր շարադրութիւնները կարդալը կը լրացնէ, դասարանին մէջ գոյացած երկարատեւ լուռութենէ մը վերջ կը բացատրէ. «Այս քննութեան համար ձեզի որեւէ նիշ պիտի չտամ, իսկ նպատակը ձեզի դաս մը տալ էր եւ խորհիլ տալ էր: Ձեր մէջէն ոեւէ աշակերտ թուղթին ճերմակ մասին նկատմամբ բառ մը անգամ չգրեց, այլ բոլորդ ալ թուղթին մէջտեղի սեւ կէտին վրայ կեդրոնացաք: - Ահա՛ մեր կեանքերն ալ նոյնն են»:

«Բոլորս ալ տեսնելիք ճերմակ թուղթ մը ունինք, բայց

միշտ սեւ կետին վրայ կը կեդրոնանանք»:

«Մեր կեանքը Աստուծով սերով եւ գուրգուրանքով սորուած նուէր մըն է, եւ միշտ ուրախութեամբ այս իրողութիւնը տօնելու Հազարամէկ պատճառ ունինք՝ բնութիւնը անընդհատ ինքզինք կը նորոգէ, մեր ընկերները որոնց խանդավառանքը կը վայելնք, մեր արհեստը որ մեր ապրուստը կ'ապահովէ, եւ ամէն տեսակի հրաշքներ որոնց ամէն օր ականատես կ'ըլլանք...»:

«Բայց ընդհակառակը մենք կը սնդեմք միայն սեւ կետին վրայ կ'եդրոնանալ - առողջապահական հարցերը, նիւթական անցուկ վիճակները, ընտանեկան բարդ յարաբերութիւնները, ընկերէ մը յուսախաբ ըլլալը եւայլն»:

«Երբ Աստուծոյ տուած շնորհներուն Հեա բաղբատենք «սեւ կետերը» փոքր ոչնչութիւններ են, բայց մեր միտքերը կ'ապականեն»:

«Չեր կեանքերուն մէջ, ձեր աչքերը ձեր կեանքի «սեւ կետերէն Հեռացուցէք»: Չեզի տուած շնորհներուն եւ ամէն ձեր ապրած վայրկեանին Համար Աստուծոյ փառք սուտք: Միշտ երջանիկ եղէք եւ միշտ սերով լի կեանք մը ապրեցէք»:





ՄԱՅՐՍ

Երբ ձայնակցեցայ ձայնին աշխարհի
 Աչքերդ բացիր ժպիտով բարի
 Ցաւդ մեղմացաւ նայեցար ինձի,
 Յուշիկ սահեցաւ կաթիլն արցունքի:

Բարի իղձ, աղօթք ինձ շնչացիր,
 Առողջ երջանիկ կեանք մը մաղթեցիր,
 Քարին թող չգայ, Աստուած պաշտպանէ
 Վիշտ ու ցաւ երբէք-երբէք չտեսնէ:

Լուսազարդ եղար երբ Դուն մայրացար,
 Սէր գուրգուրանքով շահ տ առատացար.
 Լուսաշաւիղով իմ խորքս անցար,
 Նրբաշունչ հեքով ինձ հետ ձուլուեցար:

Նայեցայ խորճճ նկ իսկոյն հասկցայ՝
 Թէ սրտիդ զարկէն ես ճիշդ երկնեցայ
 Ու նաեւ վճիտ քու խղճիդ ձայնէն
 Եւ երազներուդ անմեղ գումարէն:

Այդ է երեւի, որ մինչեւ հիմա
 Իմ մէջն է մայրս իր հոգւով առկայ.
 Դասեր ես տեսայ որքան՝ շահ տ ու շահ տ
 Բայց մօրս դասն էր՝ աննման խրատ:

Մօրս Հայեացքն էր, որ եղաւ միակ
 Ջինջ-վերերկրային, անեղծ-սպիտակ,
 Նրբաշունչ-քնքուշ մեղմ կոպերուն տակ
 Անեղբ-վճիտ, անչափ անյատակ:

Ճերմակ շուքիդ տակ՝ ես պլպլացի
 Ուրախ խայտացի, ճիշդը փնտուցի,
 Չարէն Հեռացայ, վատը ատեցի,
 Միշտ բարի ու լաւ մարդկանց սիրեցի:

Ե՛ւ մայրաբարոյ Հայեացքիդ ներքոյ,
 Մեծ Համբերութեամբ ամէն երեկոյ,
 Ջինջ բարութիւնդ նշխարի ձեւով
 Կը բաշխէիր մեզ քնքշանքի թեւով:

Հաշիւը կու տամ առաջին Հերթին,
 Ու կը Հաւատամ մօրս Հայեացքին,
 Իր ճերմակ անմեղ, անբիծ նայուածքին,
 Մեղմ-գորովագութ՝ խանդաղատանքին:

Որքա՛ն ծով վշտեր տեսած էր մայրս,
 Խո՛ր ընդերքին մէջ պահած էր մայրս,
 Որքա՛ն տառապած ապրած էր մայրս,
 Բազր՛ւմ ցաւերով վառուած էր մայրս:

Երկնի աստղերէն վառ ճառագող էր,
 Խնկածաղկի պէս աղօթքի սող էր,
 Երկինքէն իջնող փաթիլներուն պէս
 Պարզ ու անմեղ էր մայրս լուսերես:

Ախ մայրս ինչո՞ւ այդպէս թողուցիր,
Սիրուն աչքերդ ինչո՞ւ փակեցիր.
Բողորիս տրտում սերտ հաւաքեցիր
Բաժանումով այս մեզ մորմոքեցիր:

Վիշտ ու ցաւերու՜ դեղ ու դեղորայք
Կ'ապաքինէիր դեղերէն արագ.
Սմէն մէկ ցաւիս կ'ուզէիր սոսկամ'
Քնքո՞ւշ կ'ըսէիր՝ հիմա ես կու գամ:

Հիմա երբ չկաս մայրն իմ աննաման,
Երբ դո՞ւն էիր միշտ ցաւերուս դարման.
Այս ծանր բեռս որո՞ւն պէտք է տամ,
Մահացու ցաւիս որո՞ւն ես երթամ:

Լուսահոգի մայր ես գիտեմ ո՛ր ւր ես,
Հոգեղէն կերպով վերերկրային ես.
Լուսապսակով մորմոքող վերք ես,
Աստուածահաճոյ սաղմոսաներգ ես:

Ննջէ՛ Դուն Հանգիստ, Հողը թող թէթեւ
Աճինդ ծածկէ, թող ծագի արեւ
Մեղմաշունչ զեփիւռ ու գարնան անձրեւ
Ծաղիկներ աճին, մասունքիդ վերեւ:

Չաւակդ՝
Տոբթ. Ղազար Պօղոսեան



ԲԱՄԲԱՍԱՆՔ



Հին Յունաստանի մէջ իր իմաստութեան համար Սոկրատ (Socrates ՆՔ 469-399) համբաւաւոր ճանչցուած անձ մըն էր : Օր մը իր բարեկամներէն մին գրգռուած աճապարանքով մը իրեն կը մօտենայ ու կ'ըսէ. «Լուր ունի՞ս, իմացար Դիոգինէսի (Diogenes ՆՔ 412-323) մասին ինչ կ'ըսեն»:

Սոկրատ անմիջապէս «Վայրկեան մը» կ'ըսէ եւ յետոյ կը շարունակէ. «Լուրը ինծի չտուած պէտք է հետեւեալ երեք քննութիւններէն դոնէ մէկ հատը անցնի:

Բարեկամը զարմացած «քննութի՞ւն» ըսելով կը հարցնէ:

«Այո՛», կը պատասխանէ Սոկրատ եւ կը շարունակէ. «Լուրը ինծի չըսած ան պէտք է երեք գտիչ քննութեաններէ անցնի: Առաջինը՝ ճշմարտութիւնն է: Ան ինչ որ ինծի պիտի ըսես, դուն լուրին բացարձակ ճշգրիտ ըլլալը անձնապէս ստուգեցի՞ր, վստահ ե՞ս թէ ճշմարտութիւն մըն է»:

Բարեկամը կը պատասխանէ. «Չէ, դեռ նոր, ուրիշէ մը իմացայ»:

Սոկրատ «չատ լաւ» կ'ըսէ ու կը շարունակէ. «ուրեմն չես գիտեր թէ լուրը ճշմարտութիւն մըն է կամ սուտ: Փորձենք երկրորդ քննութիւնը: Երկրորդը բարիութիւնն է: Ան ինչ որ պիտի ըսես բարի՞ լուր մըն է»:

Բարեկամը «ոչ, ընդհակառակը» կը պատասխանէ: «Ուրեմն» կ'ըսէ Սոկրատ «Դիոգինէսի մասին ինծի վատ լուր մը պիտի տաս եւ չես գիտեր թէ ճշմարտութիւն է թէ ոչ»:

Բարեկամը քիչ մը ամօզնալով ուսը կը թոթոկէ:

Սովորատ կը շարունակէ ըսելով. «տակաւին կարելի է որ երրորդ քննութիւնը յաջող անցնի: Երրորդը՝ օգտակարութիւնն է: Ան ինչ որ ինծի պիտի ըսես, ինծի որեւէ օգուտ մը պիտի ունենա՞յ»:

Բարեկամը կ'ըսէ. «Իրականութեան մէջ ոչ»:

Սովորատ կ'եզրակացնէ. «Ան ինչ որ պիտի ըսես, ոչ ճշմարտութիւնն է, ոչ բարի լուր մըն է եւ ոչ ալ օգտակար է, ուրեմն զայն ինչո՞ւ տարածել»:

Բարեկամը թէ զարմացած եւ թէ ամօթով կը մեկնի:

Հարկ է որ մենք ալ ջանանք Սովորատի պէս իմաստուն ըլլալ:



ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Յառաջացած տարիքի մէջ՝ աւելի իմաստուն, կ'անդրադառնանք թէ \$3000-նոց ժամացոյցը եւ \$30-նոցը, երկուքն ալ նոյն ժամը կը ցուցնեն:

Իսկ եթէ մեր կրած դրամապանակը կամ պայուսակը \$3000-նոց կամ \$30-նոց ըլլայ, մէջի դրամը դարձեալ նոյնն է:

Եթէ լման շիշ մը գինի մէկ անգամէն խմենք, հոգ չէ թէ անոր գինը \$3000 կամ \$30 ըլլայ, փսխելը նոյնը կ'ըլլայ:

Մեր մէջը բնական տունը 3000 կամ 30 մէթր քառակուսի տարածութիւն ունենայ, առանձնութիւնը նոյնն է:

Յուսալից ենք, որ օր մը անդրադառնանք թէ երջանկութիւնը առարկայական աշխարհիկ ինչքերէ չի գար:

Երբ օդանաւով ճամբորդութիւնը առաջին կամ երկրորդ դասակարգով ընենք, տարբերութիւն մը չ'ընեն երբ օդանաւը իյնայ. երկուքին ալ վախճանը

մէկ է:

Իսկ եթէ ունիք կեանքի ընկեր, բարեկամներ, քոյր եւ եղբայրներ յաճախ խօսեցէք իրենց հետ, խօսեցէք արեւելքէն, արեւմուտքէն, հիւսիսէն կամ հարաւէն, խօսեցէք երկինքէն եւ երկրէն բայց խօսեցէք, միասին երգ երգեցէք, կամ դուք անոնց երգ երգեցէք: Երջանկութիւնը ասոր մէջն է:



ԿԵԱՆՔԻ ՀԻՍՊ ԱՆՀԵՐՔԵԼԻ ՏՈՒԵԱԼՆԵՐ

ա- Ձեր գաւաղները մի դաստիարակէք հարուստ ըլլալ՝ այլ երջանիկ ըլլալ, որպէսզի երբ մեծնան որեւէ բանի մը արժէքը գիտնան քան թէ գիներ:

բ- Կերակուրդ կեր իբր դեղ, ապա թէ ոչ դեղերը կ'ուտես իբր կերակուր:

գ- Ան որ քեզ կը սիրէ, բնաւ քեզ չի լքեր, նոյնիսկ եթէ լքելու համար հազար-ու-մէկ պատճառ ունենայ: Քեզ չլքելու համար մէկ պատճառ մը կը գտնէ:

դ- Մարդ արարած ըլլալու եւ մարդկայնական ըլլալու մէջ մեծ տարբերութիւն կայ: Քիչեր կը հասկնան այս տարբերութիւնը:

ե- Կը սիրուինք երբ կը ծնինք եւ պիտի սիրուինք եւ մեռնինք (գնա՛ մեռիր, եկուր սիրեմ), իսկ այս երկուքին միջեւ Աստուած հետդ ըլլայ:



Եթէ կ'ուզես արագ քալել առանձին քալէ, բայց եթէ կ'ուզես երկար քալել միասին քալեցէք:





ՄԻ ՏԽԻԻՐ

Մի տխրիր, որովհետեւ տխրութիւնդ թշնամիդ
կ' ուրախացնէ եւ բարեկամդ ալ կը տխրեցնէ:

Նաեւ քեզ ասող եւ նախանձողին բերնի ծամոց կ' ըլլաս:

Մի տխրիր, որովհետեւ տխրութիւնդ կորսուածը էա չի
բերեր, մեռնողը չի յարուցեր, որեւէ օգուտ չ' ունենար:

Մի տխրիր, որովհետեւ տխրութիւնը ջիղերդ կը խանգարէ,
սիրտդ կը յոգնեցնէ եւ գիշերուան քունդ կը խլէ:

Մի տխրիր: Եթէ մեղք գործեցիր, դարձի եկուր եւ
ապաշխարէ, սխալդ շտկէ:

Աստուծոյ ողորմութիւնը անհուն է եւ դուռը միշտ բաց:

Մի տխրիր կորանցուցածիդ համար, քանզի շատ մը ուրիշ
չնորհներու տէր էա: Աստուծոյ տուած միւս բոլոր
չնորհները խորհէ եւ փառք տուր: Անոնք այնքան
բազմաթիւ են, որ զանոնք համբերու կարող չենք:

Մի տխրիր այլոց սուտ խօսքերուն եւ
քննադատութիւններուն համար: Մի մոռնար, ինչ չափով
որ հանդուրժես եւ համբերութիւն ցոյց տաս, նոյն չափով
ալ պիտի վարձատրուիս:

Մի տխրիր: Այնքան ատեն որ մարդոց հետ
բարեսիրութեամբ կը վարուիս մի տխրիր, որովհետեւ
երջանկութեան դուռը բարեսիրութիւնն է:

Մի՛ տխրիր: Լաւ արարքի մը պարգեւը տամնէն մինչեւ եօթնհարիւր անգամ աւելցած քեզի ետ կը վերադառնայ, իսկ վատ արարքի մը պատիժը միայն մէկ անգամ:

Մի՛ տխրիր: Աշխարհ ոչ ցանկալի եւ ոչ ալ մնայուն է, այլ այսօր կայ եւ վաղը չկայ, միայն քննութեան շրջան մըն է:

Մի՛ տխրիր: Ճակատագրի վատ պատահարները, ճշմարիտ Աստուածապաշտը կ' ուրախայնէ:

Մի՛ տխրիր: Ոսկին կրակով իսկ Աստուծոյ ծառան ալ աղէտով եւ դժբախտութեամբ կը փորձուին:

Մի՛ տխրիր: Եթէ մեր վատ պատահարները աւելի վատ պատահարներու հետ բաղդատենք, անոնց մեծ մասը հաճոյքով կ' ընդունինք:

Մի՛ տխրիր: Երբ կացութեան մը հետ դէմառ-դէմ գտնուիս, հարց տուր թէ ամենավատ հետեանքը ինչ կրնայ ըլլալ. յետոյ ինքզինքդ անոր վարժեցուր եւ դիմանալու պատրաստէ: Հաւատքդ եւ յոյսդ Աստուծոյ վրայ կեդրոնացած միայն իրեն ապաւինէ եւ ջանք ըրէ կացութիւնը քեզի համար առաւելութեան մը փոխելու, քանզի Աստուած բոլոր հարցերը լաւագոյնս կը լուծէ:

Մի՛ տխրիր: Մի՛ մոռնար որ եթէ ներկայ օրուայ սահմաններուն մէջ չապրիս, նեղութիւններդ ալ պիտի բազմանան: Երբ առաւօտուն արթննաս, երեկոյեան մի սպասեր, իսկ երբ իրիկուն հասնիս առաւօտը մի սպասեր: Ո՛չ անցեալին մէջ ապրէ, ո՛չ ալ ապագային:

Այսինքն, միայն ներկան ապրէ:

Մի՛ տխրիր: Բոլոր դժուարութիւններուն մէջ եք մը կը գտնուի: Ելքը դժուարութեան մէջ պահուած է:

Ան որ դժուարութիւն կը կարծենք՝ ելքն է:

Մի՛ տխրիր:

Մեկնանա



Հետեւեալ գրութիւնը անցեալին Երուսաղէմի Պատրիարքութեան «Սինն» պարբերաթերթին մէջ հրատարակուած էր:

**ԳԵՐԱՇՆՈՐՀ ՆՈՐԱՅՐ ԱՐԵ. ՊՕՊԱՐԵԱՆԻ
Ո՛Վ Է ՔՐԻՍՏՈՆԵԱՆ**

*Քրիստոնեայ է այն մարդը,
Որ արդարամիտ է ամէնուն Հանդէպ,
Որ անիրաւութիւն չ'ըներ,
Որ ագահութիւն չ'ըներ,
Որ մէկ չորցած ճիւղի Համար ծառը արմատէն չի կտրեր,
Որ վարդը չ'արհամարեր անոր ունեցած փուշերուն
պատճառաւ,
Որ բարձրագոյնը նուաստագոյնին չի գոհեր,
Որ իր կեանքին Համար կ'ընտրէ լայնահորիզոն վերելքի
ճամբան,
Որ գողութիւն չ'ըներ,
Որ իրեն վստահուած գաղտնիքը չի հրապարակեր,
Որ իր Հոգիի քաղցր գինին չի փոխեր դառն քացախի,
Որ ծառան չի դառնար դրամի, այլ տիրաբար կը գործածէ
զայն բարի նպատակներու,
Որ իրեն տրուած բարիքներուն Հանդէպ
Երախտագիտութիւնը կը ցուցնէ,
Որ անմեղը չի զրպարտեր,
Որ տիեզերքի վեհութեան Հանդէպ Հիացում եւ բնութեան*

գեղեցկութեան Հանդէպ սեր ունի,
 Որ նուիրական բաները թեթեւութեամբ չ'անարգեր,
 Որ գիտէ իր ժամերը առաւելագոյն չափով օգտակար ու
 Հաճելի դարձնել,
 Որ պատկառանքով կը կենայ բնութիւնը վարող
 օրէնքներուն ցուցադրած իմաստութեան դիմաց,
 Որ միշտ դէպի լաւագոյնը կը ձգտի,
 Որ իր լեզուով մարդ չի վիրաւորեր,
 Որ մարդ չի խաբեր,
 Որ կը յարգէ իր խոստումը,
 Որ խարդախութիւն չ'ըներ,
 Որ իր խղճին ձայնը ընդթեան չի դատապարտեր,
 Որ ուրիշներուն իրմէ առաջ անկաճ արդիւնաւէտ ծառերը
 կը իննամէ,
 Որ խղճամիտ է,
 Որ կը ծառայէ իր ընկեր մարդուն,
 Որ չարամիտ ծաղրանքով իր նմանները չի վշտացներ,
 Որ իր օրերը ծովութեամբ ի գուր չի վասններ,
 Որ իրաւունքը կաշառքին չի զոհեր,
 Որ կեղծաւորութիւն չ'ըներ,
 Որ չի փակեր իր աչքերը փաստելու Համար, թէ աշխարհի
 մէջ ըյս գոյութիւն չունի,
 Որ հրաշքի կարօտ չէ,
 Որ Հանրութեան շահը կը գերադասէ իր անձնական
 շահէն,
 Որ Համբերատար է,
 Որ Հաւատարիմ է,
 Որ իր հոգին իր մարմինին ծառայ չ'ըներ,
 Որ ուրիշներու գործին անտեղի միջամտութիւն չի
 կատարեր,
 Որ չի Հայհոյեր,
 Որ իր նեղ օրերուն չի յուսահատիր,

Որ կ'ընդունի իր յանցանքը,
 Որ ուրիշներու յանցանքներուն ետին չ'ապաստանիր,
 Որ յոռետես չէ,
 Որ յօնք շինելու յաւակնութեամբ աչք հանելու սխալը չի
 գործեր,
 Որ իր սրտին մէջ նախանձ չի սնուցաներ,
 Որ առատութեան մէջ չի շուայտանար,
 Որ ուրիշներու բարեյաջող գործերը տեսնելով
 կ'ուրախանայ,
 Որ որկրամոլութիւն չ'ըներ,
 Որ կը նախընտրէ ուղիղ քանակը ծուռ քանակէն,
 Որ չարախօսութիւն չ'ըներ մարդոց մասին,
 Որ իր ականջները չի բանար բամբասանքի առջեւ,
 Որ կը խորշի ամէն տեսակ չափազանցութիւններէ,
 Որ իր ոռնեցածէն բաժին կը հանէ չոռնեցողներուն,
 Որ չարագործներուն չի միանար,
 Որ չքմեղանքներ չի կատարեր իր յանցանքները վրայէն
 նետելու համար,
 Որ երկու չափ եւ երկու կշիռ չի գործածեր,
 Որ իր պարտականութիւնները չ'անտեսեր,
 Որ պատիւը չի փոխեր փառքի հետ,
 Որ ստախօսութիւնը կ'ատէ,
 Որ կը ջանայ սփոփել լացողը,
 Որ վնասակար մարդերը չի քաջալերեր,
 Որ իր ոռնեցած տաղանդը կ'արժեւորէ լիովի,
 Որ չի տրանջար տաղանդին տարողութեան դէմ,
 Որ լոկ ի ցոյց մարդկան չի կատարեր իր գործերը,
 Որ չար ցանկութիւններ չի սնուցաներ,
 Որ քսութեան խօսքերով մէկը միւսին դէմ չի
 թշնամացներ,
 Որ կ'օգնէ իր ընկեր մարդուն,
 Որ իր բերանը օրհնութեամբ կը բանայ:

**ՀԵՏԵԻՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԱԷԶՐԵՐՈՒՄՆԵՐՈՒ
ՄԱՇՏՈՅ ՔԱՀԱՆԱԿ ԳԱՎՓԱՔԲՃԵԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐ 2, 2015 ԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐ 12, 2015Ի
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ:
ԻՍԹԱՆԳՈՒԼ**

ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ

Մարդ կը մասնակցի իմաստութեան եւ բարութեան Արարչին, որ կու տայ անոր իր արարքներուն տիրապետելու եւ ինքզինք կառավարելու կարողութիւնը, ճշմարտութեան եւ բարիին հասնելու համար:

Այս իմաստով «բնական օրէնք»ը կ'արտայայտէ սկզբնական բարոյական նշանակութիւնը՝ որ թոյլ կու տայ մարդուն իր բանականութեամբ զանազանելու ի՛նչ որ բարի է եւ չար, ի՛նչ որ ճշմարտութիւն է եւ սուտ: Ուրեմն «բնական օրէնք»ը բարոյական օրէնքին մէկ արտայայտութիւնն է, ինչպէս՝ յափտենական օրէնքը, յայտնուած օրէնքը, քաղաքացիական օրէնքը, եկեղեցական օրէնքը, բոլորն ալ համազօգուած իրարու: Բնական օրէնքը գրուած ու փորագրուած է հոգիին մէջ բոլոր մարդոց եւ մարդոց իրաքանչիւրին, քանի որ ան «մարդկային բանականութիւն»ն է, որ կը հրամայէ գործել բարին եւ կ'արգիլէ մեղանչել: Բայց մարդկային բանականութեան այս պատուերը չի կրնար օրէնքի զօրութիւն ունենալ, եթէ ան միանգամայն չըլլայ ձայնն ու թարգմանը աւելի բարձր իմացականութեան մը՝ որուն հպատակելու են մարդկային միտքն ու մարդկային ազատութիւնը: Բնական օրէնքը՝ որ աստուածային է միանգամայն, ցոյց կու տայ մարդուն այն ճամբան՝ որուն ան պիտի հետեւի, գործելու համար «բարի»ն եւ հասնելու համար իր վախճանին:

«Բնական օրէնք»ը ցոյց կու տայ առաջին եւ ետեան

պատուէրները՝ որոնք կը կառավարեն բարոյական կեանքը:

«Քնական օրէնք»ը իբրեւ առանցք ունի Աստուծոյ տէնչը եւ Հնազանդութիւնը, աղբիւր եւ դատաւոր ամէն «բարի»ի, ինչպէս նաեւ ըմբռնումը «ուրիշ»ին կամ՝ իր ճաման»ին՝ իբրեւ Համահասար իր «անձ»ին: Ան ցոլցակագրուած է Տաննաբանեային մէջ իր գլխաւոր պատուէրներուն տակ:

«Քնական օրէնք» կոչուած է ան եւ բնական է ո՛չ թէ անբան արարածներուն Հետ, անոնց բնութեան Հետ առնչութիւն ունենալուն Համար, այլ որովհետեւ զայն հրահանգող բանականութիւնը կը պատկանի մարդկային բնութեան իբրեւ անոր սեփական:՝

Սուրբ Օգոստինոս կ'ըսէ.

«Ուրեմն ո՛ր արձանագրուած էն այս կանոնները, եթէ ո՛չ այն լոյսի մատեանին մէջ զոր կը կոչեն ճշմարտութիւն: Հոն է որ արձանագրուած է ամէն արդար օրէնք, անկէ է որ ան կ'անցնի արդարութիւն գործող մարդուն սրտին մէջ, ո՛չ թէ Հոն գաղթելով, Հապա Հաստատելով անոր մէջ իր դրոշմը, նման կնիքի մը՝ որ մատանիէն կ'անցնի մովին առանց քերու մատանին:»

Իսկ Սուրբ Թովմաս Աբուինացի կ'ըսէ.

«Քնական օրէնքը ուրիշ բան չէ եթէ ոչ՝ լոյսը բանականութեան՝ որ դրուած է մեր մէջ Աստուծմէ, անով կը ճանչնանք ի՛նչ որ պէտք է կատարենք եւ ի՛նչ որ չկատարենք, ի՛նչ բանէ պէտք է զգուշանանք, Հեռու պահենք մենք զմեզ: Այս լոյսը կամ այս օրէնքը Աստուած մարդուն տուած է արարչագործութեան պահուն:»:

Քնական օրէնքը որ ներկայ է իւրաքանչիւր անձի սրտին մէջ եւ վերահաստատուած անոր բանականութեան կողմէ, ընդհանրական է իր պատուէրներուն մէջ. իսկ իր իշխանութիւնն ալ կը տարածուի բոլոր մարդոց վրայ: Աս կ'արտայայտէ անձին արժանապատուութիւնը եւ կը

սաՀմանէ Հիմն անոր իրաւունքներուն եւ անոր Հիմնական պարտականութիւններուն:

Մարկոս Թուլիուս Չիչերո կ'ըսէ.

«Անշուշտ ճշմարիտ օրէնք մը գոյութիւն ունի, անիկա ուղիղ իմացականութիւնն է. ան Համաձեւ է բնութեան Հետ, սփռուած բոլոր մարդոց մօտ, ան անսփոփոխելի եւ յաւիտենական է: Անոր Հրահանքները պարտականութեան կո՛չ մըն են: Անոր դրած արգելքները կը զգուշացնեն յանցանքէն: Սրբապղծութիւն է ներհակ օրէնքով փոխարինել զայն: Արգիւրած է չգործադրել անոր որեւէ մէկ սնօրինումը իսկ զայն ամբողջութեամբ յետսկոչելը, ո՛չ որին տրուած է»:

«Բնական օրէնք»ին գործադրութիւնը բազմատեսակ է. ան կրնայ, կեանքի պայմաններուն բազմազանութեան Հետ յարմարցուած, խորհրդածութիւն պահանջել ըստ վայրերու, ժամանակաշրջաններու եւ պարագաներու: Սակայն մշակոյթներուն զանազանութեան պարագային բնական օրէնքը կը մնայ իբրեւ «կանոն» մը՝ որ մարդիկը իրարու կը զօգէ եւ անխուսափելի տարբերութիւններէն անդին, Հասարակաց սկզբունքներ կը պարտադրէ անոնց:

Արդարեւ բնական օրէնքը անյեղի եւ յարակայ կը մնայ պատմութեան յեղաշրջումներուն մէջ, ան կը գոյատեւէ գաղափարներու եւ բարբերուն մակընթացութեան տակ եւ թիկունք կը կանգնի անոր յառաջդիմութեան: Չայն արտայայտող կանոնները կը մնան ըստ իրենց էութեան վաւերական: Նոյնիսկ եթէ մարդ ժխտէ մինչեւ իսկ անոր սկզբունքները, սակայն չի՛ կրնար զայն քանդել եւ ոչ ալ զայն Հանել մարդուն սրտէն: Ան միշտ կը վերընձիւղէ անհասնելուն եւ ընկերութիւններուն կեանքին մէջ:

Եւ դարձեալ Սուրբ Օգոստինոսն է որ կ'ըսէ.

«Գողութիւնը ստուգապէս պատժուած է Բու

Օրէնքիդ կողմէ, Տէ՛ր, բայց նաեւ այն օրէնքին կողմէ, որ գրուած է մարդուն սրտին մէջ եւ զոր ամբարշտութիւնն անգամ չի ջնջեր:»

Արարչին շատ բարի գործն է բնական օրէնքը՝ որ կը հայթայթէ ամուր հիմերը՝ որոնց վրայ մարդը կրնայ կառուցանել բարոյական օրէնքին ու կանոններուն շէնքը, որոնք պիտի առաջնորդեն անոր ընտրանքները:

Ան կը դնէ նաեւ բարոյական անհրաժեշտ հիմը մարդոց Հասարակութեան կերտումին, վերջապէս կը հայթայթէ անհրաժեշտ հիմը «քաղաքացիական օրէնք»ին՝ որ անոր կը զօրուի, ըլլա՛յ խորհրդածութեամբ մը, որ անոր սկզբունքներէն եզրակացութիւններ կը քաղէ, ըլլա՛յ նաեւ դրական եւ իրական յաւելումներով:

«Բնական օրէնք»ին պատուերները յստակ ու անմիջական կերպով չեն իմացուած բոլորէն:

Ներկայ կացութեան մէջ, յայտնութիւնը եւ շնորհքը անհրաժե՛շտ են «մեղաւոր մարդ»ուն Համար՝ որպէսզի կրօնական եւ բարոյական ճշմարտութիւնները կարենան ճանչցուիլ բոլորէն եւ առանց դժուարութեան, Հաստատ ստուգութեամբ եւ սխալի խառնուրդէ զէ՛րծ: Բնական օրէնքը յայտնեալ օրէնքին եւ շնորհքին կը հայթայթէ Հի՛ մ մը, որ Աստուծոյ կողմէ պատրաստուած է եւ յարմարցուած Սուրբ Հոգիին ներգործութեամբ:

Սուրբ Օգոստինոսն է որ դարձեալ կ'ըսէ.

«Աստուած Օրէնքին տախտակներուն վրայ դրոշմեց ի՛նչ որ մարդիկ չէին կարգար իրենց սրտերուն մէջ:» Ուստի Տասնաբանեան ամէն մարդու խղճմտանքին ընծայուած ը՛յս մըն է, յայտնելու Համար անոր՝ Աստուծոյ կոչը եւ ճանապարհները, եւ պաշտպանելու Համար զինք չարին դէմ:

Քրիստոնեայ աւանդութեան Համաձայն, սուրբ, բարի եւ Հոգեւոր Օրէնքը տակաւին անկատար է:

Ան որպես դաստիարակ ցոյց կու տայ ի՛նչ որ պետք է ընել բայց ինքնին չի տար Սուրբ Հոգիին ուժը, շնորհքը գործադրելու համար զայն ...:

Արդարեւ անոնք որ իշխանութիւն կը վարեն, պարտին հազանդի՛լ «բնական օրէնք»ի տրամադրութեան:

Իշխանութիւն վարողներ պարտին իբրեւ ծառայութիւն վարել զայն: Ուստի իշխանութեան մը կիրարկումը բարոյապէս չափուած է իր տրամաբանական ու բանական բնութեան եւ աստուածային ծագումին եւ յատկապէս կոչուած առարկային համեմատ: Ո՛չ որ կրնայ հրամայել կամ կարգել բան մը՝ որ հակառակ է անձերու արժանապատուութեան եւ բնական օրէնքին: Այլապէս մարդ ի խղճէ պարտաւոր է չհետեւիլ այն հրահանգներուն՝ որոնք հակառակ են բարոյական կարգի պահանջներուն, անձերու հիմնական իրաւունքներուն, ազատութիւններուն եւ մանաւանդ արժանապատուութեան, բարոյական ուսուցումներուն եւ մէկ խօսքով՝ բարոյական օրէնքի՛ն: Անայլայելի եւ մշտնջենական սկզբունքն է Կեսարինը տալ Կեսարին եւ Աստուծունը՝ Աստուծոյ (ՄԱՏԹ. ԻԲ: 21)

Արդարեւ այն վարչաձեւերը որոնց բնութիւնը հակառակ է «բնական օրէնք»ին, հակառակ է Հանրային կարգին եւ անձերուն հիմնական իրաւունքին ու արժանապատուութեան, անոնք չէ՛ն կրնար իրագործել հասարակաց բարիքը ժողովուրդին եւ ազգերուն՝ որոնց վրայ պարտադրած են իրենք զիրենք: Վարչաձեւերուն բազմութիւնը բարոյապէս ընդունելի է, պայմանաւ որ անոնք գործակցին իրաւական բարիքին եւ բնական օրէնքին ...:

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԲՆՈՒԹԻՒՆ

«Աստուած» եւ «Բնութիւն»՝ այս երկուքը միշտ զբաղեցուցած է մարդկային միտքը: Մանաւանդ՝ ֆրանսական յեղափոխութեան գաղափարականը մերձիմաստ Համարեց զանոնք:

Ուստի իմաստասէրներ՝ Lock, Descartes, Henry Bergson, Gottfried Wilhelm Leibniz, Etienne Bonnot de Condillac, եւ ուրիշներ զբաղած եւ միտք յոգնեցուցած են այս մասին, ուսումնասիրած եւ գաղափար յայտնած են այս նիւթին վրայ: Անշուշտ մեր սահմանաւոր պարունակութեամբ ամէն մէկը ներկայացնելու եւ ծանօթացնելու կարելիութիւնը չունինք, բայց սա իրականութիւն մըն է թէ միտքեր միշտ զբաղած են այս երկու ճշմարտութիւններու իրողութեամբ եւ երկբայութեամբ:

Սա անուրանալի է որ բնութիւնը ամբողջութեամբ արդիւնքն է աստուածային իմաստութեան:

Դիտեցէ՛ք, սիրելի՛ բարեկամներ, բնութիւնը, ձեր ամբողջ շրջապատը, զոր օրինակ, առաւօտեան կանուխ ժամերուն՝ թէ արեւու ճառագայթներ չետզչետէ կը բարձրանան եւ կը կենդանացնեն խաւարի մէջ ննջած բնութիւնը՝ երկիրը եւ բնակիչները՝ մարդի՛կ: Հրա՛ջք մըն է ատիկա՝ խաւարէն լոյսի գալը Համնիլը քունէն ելլել՝ արթննալ, սթափիլ, եւ այս կը պատահի ամէն օր, անխափան՝ առանց մարդկային որեւէ միջամտութեան...:

Իմաստութեամբ ծրագրուած եւ գործադրուած նախորոշումի մը, մտադրութեան մը արդիւնքը միայն կրնայ ըլլալ այսպիսի անհասկնալի, անիմանալի երեւոյթ մը:

Եւ սա, անուրանալի իրողութիւն մըն է, թէ առանց պատճառի արդիւնք չի գոյանար: Եւ ուրեմն բնութեան հրաշալիքներն ալ պէ՛տք է ունենան «Պատճա՛ռ» մը:

Այն երեւոյթը, զոր կը զարմացնէ, կը հրապուրէ մարդը, ան արդիւնք է իմաստութեան, իմաստութեամբ

պատրաստուած «ծրագիր»ի մը՝ նախագիծի մը: Եւ ամէն երեւոյթ, ամէն պատահար, ամէն միջադէպ ունի նախապատրաստական պատճառ մը, եւ ամէն բանի նախապատճառը, ակը եւ սկզբնակէտը Աստուած է, ամէն բանի Ստեղծիչը եւ Նախահնար մը: Եւ քանի որ բնութիւնն ալ ամբողջութեամբ եւ գործունէութեամբ մաս կը կազմէ աստուածային ստեղծագործութեան ընդհանուր ծրագրին՝ որպէս տարածք, միջավայր անոր կիրառութիւններուն, իրագործութեան ու գործադրութեան:

Բնութիւնը այն ընդարձակ դասն է ուր ազատօրէն կը գործադրուի ստեղծագործութեան ծրագիրը:

Ուստի Բնութիւնը Աստուծոյ գործն է ստեղծագործութեան անբաժան մէկ մասը՝ ուր կը գործադրուի ստեղծագործութեան ծրագրին մանրամասնութիւնները, որոնք կը կատարուին, կը կատարեղագործուին, կը լիանան ու կը զօրանան: Բնութիւնը միջավայր մըն է, անդաստան մը, մարզ մը, ասպարէզ մը՝ ուր կը գործէ Աստուած ըստ իր ծրագրին պայմաններուն:

Ուրեմն Աստուած-Բնութիւն կապը՝ պատճառ եւ արդիւնքի, ստեղծող եւ ստեղծուածի յարաբերութիւն մը, Հաղորդակցութիւն մըն է: Աստուած ստեղծիչն է եւ տէրը Բնութեան: Սիրելի՛ներ, դիտեցէք բնութիւնը, հոն այդ հրաշալիքները ո՛վ կրնայ ստեղծել, եթէ ոչ Աստուած, եւ այդ հրաշք երեւոյթները ինչպէ՛ս կը կատարուին, եթէ ոչ աստուածային իմաստութեան շնորհիւ: Եթէ ի՛նչպէս ամէն արժէքի բացարձակը՝ ամբողջը եւ անսկիզբի, գազախնակէտը եւ զենիթը, նո՛յնպէս իմաստութեան լիացումը՝ Աստուած Ինքն է:

Բնութիւնը ո՛չ միայն «տեսարան» մը, այլ նաե՛ւ գործարան մը, գործերու եւ գործադրելու լայն, տարածուն «վայր» մըն է: Բնութիւնը միջոցն է աստուածային հրաշալիքներու իրականացման եւ իրագործման, կատար-

ման ու կիրարկման: Բնութեան մէջ եւ բնութեան միջոցով է, որ Աստուած կը յայտնէ Ինքզինք մարդկութեան: Եւ ինչպիսի՞ տեսարան է այն, ինչպիսի՞ վայր, ուր մարդ կը տեսնէ իր Արարչին անտեսանելի ձեռքը, կը Հիանայ ու կը Հաւատայ: Բնութիւնը արդարեւ, Հսկայ, վիթխարի «գիրք» մըն է բացուած կարդալու եւ Հասկնալու Համար աստուածային իմաստութիւնը:

Սակայն անտարբեր մարդը չի տեսներ զԱյն, Հանդրադառնար Անոր ճշմարտութեան լոյսին: Անտարբեր մարդը, անփոյթ ու անզգայ մարդը՝ իր բխամտութեամբ կը մնայ միշտ խաւարին մէջ: Եւ երբ քիչ մը Հետաքրքրուի «բնութեան գիրք»ին մէջը նայելու՝ անոր պարունակած դասերը սորվելու կը դժուարանայ, քանի որ անոնք բոլորովին օտար են եւ անծանօթ: Ուրիշ առիթներով ալ ըսած ենք, թէ ճանչնալ, ծանօթանալ պայման է սիրելու, Համակրելու Համար որեւէ իրի կամ իրողութեան:

Ուստի եւ Աստուած սիրելու Համար պէտք է նախ ճանչնալ զԱյն, եւ զԱյն ճանչնալու Համար, մարդ պէտք է լսու կարգայ «բնութեան գիրք»ը, ըստ ուսանի անոր պարունակած դասերը եւ անդրադառնայ անոնց ճառագայթած լոյսին: Ո՛վ «իմաստուն» մարդ, ո՛վ «գիտուն» մարդ: Երբեք խորհած ես, թէ ո՛ր կէ է քու իմաստութիւնդ, ո՛ր կէ է քու գիտութիւնդ: Մտածած ես, Հետաքրքրուած ես բնաւ, թէ ո՛ր է քու իմաստութեան ակը, ո՛ր է գիտութեան սկիզբը: Սիրելի՛ներ, ամէն իմաստութիւն, ամէն գիտութիւն ո՞նի սկզբնակէտ մը, ակ մը, աղբիւր մը՝ որ է Աստուած, որ կը յայտնուի բնութեան մէջէն՝ իմաստութեան եւ գիտութեան միջոցով: Ուրեմն Բնութիւնը միջոց մըն է ճշմարտութեան յայտնութեան եւ ճանաչողութեան:

Երանի՛ անոնց՝ որ կ'անդրադառնան բնութեան, կ'անդրադառնան եւ անտարբեր չեն գտնուիր անոր

գործունեութեան, պաշտօնին ու ստեղծման նպատակին:

Մարդ եթէ Հայեացք մը նետէ իր գիտութեանը վրայ, տեղեկութիւններու եւ ծանօթութիւններու լայն դաշտին, բնականաբար ինքնաՀաճ գոՀոնակութիւն կը զգայ, գուցէ կը Հպարտանայ ինքնիրմով եւ սիրտը կը լեցուի իր մտային «գանձ»երուն մասին բարձր գաղափարներով, եւ ինքիրեն կ'ըսէ. «Իմաստութիւնը ի՛մն է, անով կը բարձրանամ եւ միւս բոլոր մահկանացուներէ վէ՛ր: Իմ իմաստութիւնով կ'իշխեմ բնութեան անեզր, անսահման տարածութեան վրայ»: Խեղճ մարդ, գիտե՛ արդեօք իր իմաստութեան ակն ու աղբիւրը, գիտե՛ թէ ո՛ր է իր սեփականութիւնը կարծած իմաստութեան իսկական Տէրը...:

Աստուած-Բնութիւն եւ բնութեան մէջ մա՛րդը:

Ինչպէս ըսինք՝ Աստուած, բնութեան միջոցով է, որ կը փոխանցէ իր իմաստութենէն մաս մը, մարդուն, եւ մարդ, ընդՀանրապէս կը կարծէ եւ կը սխալի կարծելով, թէ ոնեցած իմաստութիւնը իրմէ է եւ կատարեալ է: Մինչդեռ բնութիւնը ճանչցողը՝ կը ծանօթանայ Աստուծոյ գերագոյն Իմաստութեան Հետ եւ այն ատեն կը Հասկնայ, թէ ո՛րքան թերի եւ անկատար է իր իմաստութիւնը եւ կարծեալ գիտութիւնը:

Չոր օրինակ, ո՛վ գիտէ թիւը ծովու մէջ գտնուող աւազի Հատիկներուն, օգին մէջ պարող փոշիներուն, ջուրի կաթիլներուն, լոյսի ճառագայթներուն:

Կարելի է ըսել, թէ ինչո՞ւ մարդ գիտնայ ասոնց թիւը, ի՛նչ օգուտ ունի տեղեկութիւն ոնենալ անոնց մասին: Բայց բոլոր ասոնք բնական երեւոյթներ, իրողութիւններ են եւ անոնց գոյութիւնը անտեսել կամ ուրանալ կարելի չէ՛, եւ եթէ մարդ ինքզինք կատարեալ իմաստուն եւ ամենագէտ կը կարծէ, պէտք չէ՛ որ անոնց մասին ալ տեղեկութիւն ոնենայ: Բնութիւնը անՀոն է, իսկ մարդկային միտքը՝ սահմանաւոր...:

**ՏԷՐ ՀՈՎՈՒՆԱԾԷ ԶԻԱ, ԵՒ ԻՆՁ
ԻՆՁ ՈՉ ՊԱԿԱՍԵԱԾԷ:**



**ԹԷՊԷՏ ԵՒ ԳԱԱԾԻՅ ԵԱ Ի ՄԷՉ
ԱՏՈՒԵՐԱԾ ՄԱՀՈՒ, ՈՉ ԵՐԿԵԱՅԾ
Ի ՉԱՐԷ ԶԻ ԴՈՒ ՏԷՐ ԸՆԴ ԻԱ ԵԱ:**

